



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԸՆՅՈՑ  
ԼԵԶՈՒ

Համալսարանի  
Գրադարան

ԵՐԵՎԱՆ • 1982


Ա. Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(Հնչյունաբանություն, բառագիտություն,  
բառակազմություն)

Քույրաբավձ է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մաս-  
նագիտական կրթության մեթոդաբանական կողմից օրգեն  
տատմնական ձեռնարկ բանասիրական ֆակուլտետների ուսու-  
նողների համար

30.201



Խմբագիր՝ բանասիր. գիտ. թեկն., գրքենտ Ս. Ա. Գալստյան  
Գրախոս՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պրոֆ. Է. Ք. Ազայան

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է: Նրանով է խոսում կամ գրում Հայկական ՍՍՀ-ում, Սովետական Միության մյուս հանրապետություններում բնակվող և աշխարհի համարյա բոլոր մայրցամաքներում սփռված ավելի քան 6 միլիոն հայուհիներ:

Որպես հաղորդակցման կարևոր միջոց և մշակույթի ձև՝ հայոց լեզուն հայ ժողովրդի ամենահին և ամենանվիրական ժառանգությունն է, նրա կյանքի կենդանի հիշատակարանը: Նրանում արտացոլված է մեր ժողովրդի հազարամյա պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Իր դարավոր գոյության ընթացքում հայերենը թեև շփվել է տարբեր քաղաքակրթությունների, շատ ժողովուրդների, բազմաթիվ լեզուների հետ, բայց պահպանել է իր ինքնուրույնությունը, քերականական կառուցվածքի և բառապաշարի (բառային ֆոնդի) անկախությունն ու ինքնատիպությունը:

Հայերենով ստեղծվել է մեծ գրականություն: Գրաբարով է ավանդված հայ հին պատմագրությունը, գիտափիլիսոփայական, մաթեմատիկական, բժշկագիտական, աստվածաբանական-գաղափարաբանական գրականությունը: Միջին գրական հայերենով են մեզ հասել միջնադարյան հայ քնարերգության գլուխգործոցները, բրժշկագիտական, իրավագիտական մեծարժեք աշխատությունները: Գրական նոր հայերենով՝ արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներով ստեղծվել է գեղարվեստական, հրապարակախոսական և գիտական բազմաառիպ և բազմաբնույթ հարուստ գրականություն:

Հայերենը հայ ժողովրդի, իբրև պատմականորեն կազմավորված հանրության, ազգային լեզուն է: Հայերենը որպես ազգային լեզու՝ ամբողջ հայ ազգի ընդհանուր լեզուն է և ամփոփում է հայ ժողովրդի լեզվական միջոցների ամբողջությունը՝ արդի լեզվի բոլոր դրսևորումները, ժամանակակից հայոց գրական լեզվի եր-

Սուփասյան, Ա. Մ.

0982 Ժամանակակից հայոց լեզու: (Հնչյունաբան., բառագիտ., բառակազմ.): Ուս. ձեռնարկ բանասիր. ֆակ. համար/խմբ. Ս. Ա. Գալստյան.— Եր.: Երևանի համալս-հրատ., 1982.— 440 էջ.

Ձեռնարկը կազմված է ժամանակակից հայոց լեզու դաս-ընթացի նոր ծրագրին համապատասխան և ընդգրկում է ներածու-թյուն, հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, դարձվածաբանություն և բառարանագրություն բաժինները: Ավան-դական հայերենագիտության և արդի լեզվաբանության նվաճում-ների հիման վրա ցնեվում են ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի համապատասխան իրակությունները:

4602010000—11  
U 764(02)—82 21—82

ԳՄԴ 81.22  
4 Ad

СУКИАСЯН АШОТ МУРАДОВИЧ  
СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК

(На армянском языке)  
Издательство Ереванского университета  
Ереван — 1982



կու տարբերակները՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, հայերեն տամնյակ բարբառներն ու խոսվածքները: Ժամանակակից հայոց լեզուն իր հնչյունական, բառային և քերականական համակարգով գիտական ուսումնասիրության առարկա է: Հայերենի գիտական համակողմանի ուսումնասիրությունն ունի տեսական ու գործնական նշանակություն և նպաստում է նրա օրինաչափությունների բացահայտմանն ու անսպառ զանձների յուրացմանը:

Հայ ազգային լեզվի բարձրագույն ձևը հայոց գրական լեզուն է: Հայոց գրական լեզուն կազմավորվել է համաժողովրդական լեզվի հիման վրա և ներկայացնում է նրա հետագա զարգացումը: Համաժողովրդական լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում, ժողովրդի լեզվից ազգային լեզու դառնալու ընթացքում գրական լեզվի հասարակական գործառույթյան փոփոխման և ընդլայնման, ինչպես և լեզվի ներքին զարգացման կապակցությամբ փոփոխվել է նաև գրական լեզու հասկացության բովանդակությունը:

Հայ ժողովրդի պատմական բախտի բերումով հայ գրական նոր լեզվի՝ աշխարհաբարի հիման վրա ինքնուրույնաբար ձևավորվել և զարգացել են գրական լեզվի երկու տարբերակներ՝ արևելակալերենը և արևմտակալերենը:

Հայ գրական լեզվի այդ երկու տարբերակները գրաբարի և հայերեն բարբառների մեխանիկական համադրությունը չեն, բայց և իրենց մշակման գործընթացում նրանք զգալիորեն հեռացել են նաև հիմք-բարբառներից. մյուս կողմից, իրականում առաջանալով խոսակցական հիմքի վրա, հայոց գրական լեզուն մշակման ընթացքում ներառել է իր մեջ հին գրական լեզվի՝ գրաբարի տարրերը:

Արդի գրական լեզվի արևելահայ տարբերակը Սովետական Հայաստանի, ինչպես նաև ՍՍՀՄ-ում բնակվող հայախոս հայ բնակչության (այլև իրանահայության) գրական լեզուն է:

Արդի հայերեն գրական լեզվի արևելահայ տարբերակը, որ պայմանականորեն ընդունված է կոչել ժամանակակից հայոց լեզու, իբրև գրական լեզու նորմավորված է և սպասարկում է այդ լեզվով խոսող հանրության՝ ժողովրդի հաղորդակցման, մշակութային և գիտական պահանջմունքները: Նորմավորումն արտահայտված է նրանով, որ գրական լեզվում կանոնակարգված են բառարանային կազմը՝ բառապաշարը, բառերի իմաստներն ու գործածությունը, արտասանությունը (ուղղախոսությունը) և ուղղագրությունը: Ընդունված կանոններին են ենթարկվում նաև բա-

ռակազմությունը; բառերի քերականական ձևերը՝ ձևաբանությունը, ինչպես նաև շարահյուսությունը:

Արդի հայերեն գրական լեզուն իբրև մշակված և նորմավորված համաժողովրդական լեզվի դրսևորում՝ հակադրում է հայերեն մոտ 50 բարբառներին, որոնք բառ աշխարհագրական, ձևաբանական, հնչյունաբանական և այլ հատկանիշների ստորաբաժանվում են առանձին խմբերի և ենթախմբերի:

Գրական լեզուն նույնպես ենթակա է փոփոխությունների, թեև այն որպես նորմավորված լեզու ավելի կայուն է, բոլորի կողմից ընդունելի, ընտիր և օրինակելի: Գրական լեզվի օրինաչափությունները օրինականացվում և միօրինակացվում են քերականությամբ, բառարաններով, որով և նրանում կատարվող փոփոխությունները ավելի դանդաղ են կատարվում: Մյուս կողմից՝ բարբառները լեզվի զարգացման որոշ փուլերում ազդում են գրական լեզվի վրա: Բարբառախոսները, օգտագործելով գրական լեզուն իբրև ընդհանուր լեզու՝ նրա մեջ մտցնում են մայրենի բարբառի բառեր, դարձվածքներ, բառերի նոր իմաստներ, քերականական ձևեր, որոնք գրական լեզվի միջոցով ընդհանրանում են: Գրական լեզուն սովորաբար ազդվում է նաև հին գրական լեզվից, ինչպես և օտար լեզուներից<sup>1</sup>:

Ժամանակակից հայոց գրական լեզուն ունի երկու ձև՝ գրավոր և բանավոր: Գրական լեզվի այդ երկու ձևերը բնորոշվում են ինչպես բառային կազմի և քերականական համակարգի, այնպես էլ հնչյունաբանական (արտասանության և գրության) առանձնահատկություններով: Գրական լեզվի գրավոր տարբերակը բանավոր տարբերակից տարբերվում է, նախ, շարահյուսական կառուցվածքի բարդությամբ, գրավոր խոսքում համեմատաբար մեծ քանակությամբ վերացական բառերի, ինչպես նաև տերմինաբանական բառապաշարի առկայությամբ և դործածությամբ:

Ժամանակակից հայոց լեզուն նաև պետական լեզու է, ՍՍՀՄ կազմի մեջ մտնող Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական լեզուն և գրական լեզվի նրա գործառույթյուններին գումարվում են նաև պետական լեզվի իրավական բոլոր գործառույթյունները:

Ժամանակակից հայերենն իբրև գրական և պետական լեզու, իր գրավոր և բանավոր դրսևորումներով, պետական, վարչական, դատական մարմինների զանազան գրագրությունների և գործավարության, ռադիոհեռուստատեսության, թատրոնի; միջնակարգ

<sup>1</sup> Մ. Արևյան, Հայոց լեզվի տեսություն, Կ. Զ, Երևան, 1974, էջ 50—54:

և բարձրագույն դպրոցի, գեղարվեստական գրականության, հրապարակախոսության, պարբերական մամուլի և, վերջապես, ընտանիքի լեզուն է:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո մեծացել է նաև հայոց լեզվի հասարակական դերն ու կշիռը: Այն դարձել է նաև մարքսիզմ-լենինիզմի գաղափարների արտահայտման, սովետական շինարարության, բազմաճյուղ արդյունաբերության, բարձր զարգացած գյուղատնտեսության լեզու, իսկ արդի գիտատեխնիկական հեղաշրջման դարում՝ ժամանակակից գիտության և տեխնիկայի լեզու: Հաղթահարելով իր ներքին որոշ թերությունները, կարգավորելով իր քերականական կառուցվածքը, հարստացնելով իր բառապանակը, հայոց լեզուն հիրավի ստանձնել է հայ ժողովրդի հազորակցման կարևորագույն միջոցի իր հիմնական դերը կյանքի բոլոր բնագավառներում:

Լեզվական տարրերի կատարելությամբ, կյանքի բոլոր բնագավառները ներթափանցելու և ներկայացնելու կարողությամբ, իր հասարակական և մշակութային դերով ժամանակակից հայոց լեզուն քայլում է աշխարհի խոշոր լեզուների հետ համընթաց:

Ժամանակակից հայերենի հիմնական միտումներն արդի փուլում ընթանում են նրա տարրերի կատարելագործման, ուղղագրության, ուղղախոսության, ձևաբանական որոշ իրակությունների (հոլովման, խոնարհման համակարգի որոշ զուգաձևությունների) միօրինակացման, միասնականացման և կարգավորման ուղղությամբ: Լեզվի զարգացման արդի փուլում կարգավորվում է բառարանային կազմը, ավելի են ընդգծվում և հստականում բառապաշարային շերտերը, ձևավորվում և կայունանում է տերմինաբանական բառապաշարը, գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացման պայմաններում անընդհատ հարստանում է գիտության լեզուն, ստեղծվում կամ փոխ են առնվում գիտական նոր համակարգերի և ճյուղերի համար նորանոր տերմիններ ու բառեր: Լեզվաշինարարական մեծ աշխատանքներ են տարվում ազգային լեզուների ծաղկման, զարգացման և մերձեցման վերաբերյալ կոմունիստական կուսակցության և սովետական պետության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման ուղղությամբ: Ղեկավարվելով լեզվի մաքրության վերաբերյալ լենինյան դրույթներով՝ հետևողական պայքար է մղվում նաև հայոց լեզվի մաքրության, մայրենի լեզվի անաղարտության, խոսքի մշակույթի բարձրացման համար:

Ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց հ ա յ ո ց լ ե զ վ ի կ ա զ մ ա վ ո Ր մ ա ն

պ ա տ մ ա կ ա ն հ ա մ ա ռ ա ա կ ն ա Ր կ: Իր կազմավորման շրջանից, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը հայերենն անցել է որակական զարգացման տարբեր փուլեր: Իր պատմության ընթացքում անցնելով զարգացման հաջորդական այդ փուլերը, հայերենը երևան է եկել տարբեր դրսևորումներով՝ գրաբար, միջին գրական հայերեն, բարբառներ, աշխարհաբար՝ գրական լեզվի երկու տարբերակներով՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Որակական այդ փոփոխությունները տեղի են ունեցել հայ ժողովրդի պատմության ընթացքում, աստիճանաբար, լեզվական նոր որակի տարրերի աստիճանական կուտակման և հին որակի տարրերի աստիճանական մահացման շնորհիվ:

Համեմատական լեզվաբանությունը հաստատել է<sup>2</sup>, որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որը գիտությանը հայտնի է նեղեվրոպական լեզվաընտանիք անունով: Հնդեվրոպական լեզվաընտանիքին են պատկանում Հնդկաստանի արևելյան մասից մինչև Եվրոպայի արևմտյան ծայրը տարածված բազմաթիվ լեզուներ: Այժմ հնդեվրոպական լեզուների տարածման սահմաններն ընդգրկում են արդեն բոլոր մայրցամաքները:

Հնդեվրոպական նախալեզվով (կամ հիմք լեզվով) խոսող ցեղերը հնագույն ժամանակներում ունեցել են իրենց տարածման շրջանը՝ հայերենից, կամ, ինչպես ընդունված է ասել, նեղեվրոպական նախաճյուղների, որի ստույգ տեղը առայժմ վերջնականապես դեռ որոշված չէ, բայց ենթադրվում է Փոքր Ասիայի (մոտավորապես Հայկական բարձրավանդակի), Դանուբի ավազանի կամ Հարավային Ռուսաստանի տարածքներում: Գիտական վերջին ավյալներով հաստատվում է հնդեվրոպական նախահայերենի փոքրասիական վարկածը:

Տասնյակ մեռած և կենդանի լեզուներ ըստ լեզվի աղգակցական մերձավորության աստիճանի կաղմում են հնդեվրոպական լեզուների առանձին ճյուղեր, ինչպես՝ հնդիրանական կամ արիական, բալթ-սլավական, իտալական, գերմանական, հունական, կելտական, խեթական և այլն:

Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում հանդես է գալիս առանձնաբար, իբրև ինքնուրույն ճյուղ և գրավում է միջին դիրք արիական (հնդիրանական), սլավոնական և հունական լեզուների միջև: Որպես հնդեվրոպական լեզու՝ հայոց լեզվի քերականական կառուցվածքը, բառային հիմնական ֆոնդը, աշխինքն՝

<sup>2</sup> Հ. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Երևան, 1940, էջ 7—9:

լեզվի հիմքը եղել և մնում է հնդեվրոպական: Այդ նշանակում է, որ հայերենի բառային կազմի (առավելապես բառապաշարի հիմնական կարևոր մասի) և հատկապես քերականական կառուցվածքի մեջ նախասկզբնականն ու հնագույնը այն է, ինչ ժառանգել է նա հնդեվրոպական նախալեզվից (կամ հիմք-լեզվից): Հայերենի հետագա վիճակները (որակական դրսևորումները) արդյունք են հիմնականում նրա ինքնուրույն, ներքին զարգացման և, մյուս կողմից, մշակութային-քաղաքական շփման, հայ ժողովրդի կազմավորման ընթացքում հայկական էթնիկական կազմի մեջ մտած մի շարք միավորների՝ ժողովուրդների ու ցեղերի (հայասցիներ, խեթեր, ֆուրիներ, ուրարտացիներ և այլն) լեզուների ձուլման (որոնց լեզվական իրողությունները հայերենում ենթաշերտ են կազմում), իսկ հետագայում նաև ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից կատարված փոխառությունների և այլ գործոնների:

Հայերենի պատմությունն անցել է զարգացման երեք շրջան՝ հին (5—11-րդ դդ.), միջին (12—16-րդ դդ.) և նոր (17—20-րդ դդ.)<sup>3</sup>:

Հին շրջան (5—11-րդ դդ.): Հայոց լեզվի մասին որոշակի գաղափար ենք կազմում, և հայերենը դիտական հատուկ ուսումնասիրության նյութ է դառնում այն ժամանակաշրջանից, երբ այն գրի է առնվում:

Հայոց լեզվի հնագույն հուշարձանները հասնում են հայ գրերի գյուտին անմիջապես հաջորդող շրջանին, այսինքն՝ 5-րդ դարի սկզբներին, երբ գրի է առնվում այդ ժամանակաշրջանի համաժողովրդական լեզուն՝ գրաբարը: Հայոց լեզվի զարգացման նախագրաբարյան փուլերը, նրա վիճակները մեզ ծանոթ չեն: Լեզվի որակական այդ դրսևորումների մասին գրավոր որևէ վկայություն բացակայության պատճառով, բնականաբար, գաղափար չունենք նախագրաբարյան հայերենի կամ նախահայերենի մասին: Բայց նրա նախնական, մոտավոր պատկերը հնարավոր է մասամբ վերականգնել միայն պատմահամեմատական ուսումնասիրության շնորհիվ:

Մինչև մեր թվ. 5-րդ դարը գրի առնված գրաբարին նախորդած լեզուն պայմանականորեն կարելի է կոչել նախագրային հայերեն, որը հայ ժողովրդի կազմավորման հետ, ցեղաէթնիկական լեզվից վեր է ածվում հայ միասնական ժողովրդի համաժողո-

<sup>3</sup> Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 192—193; Նույնի, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969, էջ 28—49:

վերջական լեզվի: Գրաբարի համեմատությամբ նախագրային հայերենը աղքատիկ է, ավելի քիչ փոխառություններ կատարած, հիմնականում հնդեվրոպական լեզվից ժառանգած բառապաշարով: Հետագայում նախագրաբարյան կամ նախագրային հայերենի բառային կազմը համալրվում է ի հաշիվ խեթական, խուրտա-ուրարտական, իրանյան (հին պարսկական) բառերի, որոնց լեզուները կրող ժողովուրդները կամ ցեղերը մասնակցել են հայ ժողովրդի կազմավորմանը: Այդ կարգի լեզվական տարրերի մուտքը հայերենում կարելի է համարել ինչպես ենթաշերտային երևույթ՝ հայերենի մեջ ձուլված իբրև խեթական, ուրարտա-խուրտական և իրանյան լեզվատարրեր, այնպես էլ այդ լեզուներից կատարված փոխառություններ:

Հայոց լեզվի պատմական զարգացման հին շրջանի գրական լեզուն գրաբարն է: 5-րդ դարում գրի առնված գրաբարը՝ որպես հայ ժողովրդի համաժողովրդական գրական լեզու, ունեցել է, անշուշտ, մի քանի հարյուր տարվա զարգացման նախորդող շրջան: 2. Աճառայան<sup>4</sup> գրաբարը բաժանում է երկու շրջանների. ա) Ոսկեդարյան կամ Մեսրոպյան շրջան, որն ընդգրկում է 5-րդ դարի սկզբից (գրերի գյուտից) մինչև 460 թ.:

բ) Ծառակեդարյան կամ Ծամեսրոպյան շրջան, որն ընդգրկում է 461 թ. հետո ընկած շրջանը:

Գրաբարի այդ երկու շրջաններն իրենց հերթին բաժանվում են առանձին դասերի (ըստ հեղինակների), որոնց միջև մասնագետները տեսնում են միայն ոճական որոշ տարբերություններ:

Գրաբարի խոսակցական լեզու լինելու վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ եղել են տարբեր կարծիքներ:

Հիմնականում ընդունվում է, որ 5-րդ դարում գրի առնված լեզուն՝ գրաբարը եղել է ժամանակի ժողովրդախոսակցական լեզուն: Ոմանք, սակայն, ավելացնում են, որ թեև 5-րդ դարից ավանդված հայերենը ժամանակի խոսակցական լեզուն էր, բայց այն Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և ուրիշների կողմից հղկվել և գրական մշակման է ենթարկվել:

Որոշ մասնագետներ այն սխալ կարծիքն են հայտնել նաև, որ գրաբարը երբեք էլ համաժողովրդական խոսակցական լեզու չի եղել. այն արհեստական լեզու է, որ իբր հորինել են Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները և որ այն գործածվել է պալա-

<sup>4</sup> 2. Աճառյան, նշվ. աշխատ., էջ 65—75:  
<sup>5</sup> 2. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, Երևան, 1951, էջ 76—77:

տական մի նեղ շրջանում, որպես պալատական, կաստայական լեզու:

Այդ վերջին վարկածը հեշտությամբ հերքվում է այն հանրահայտ իրողություններ, որ պատմության ընթացքում, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ ստեղծվող ոչ մի արհեստական լեզու կյանք չի ունեցել: Ինչ վերաբերում է գրաբարին, ապա 5-րդ դարում ստեղծված հայոց գիրն ու գրականությունը միայն մեկ նպատակ են հետապնդել՝ հասկանալի լեզվով ծառայելու ժողովրդին: Ինչ վերաբերում է 5-րդ դարի տարբեր հեղինակների մոտ հանդիպող լեզվական որոշ զանազանություններին, ինչպես և բարբառային տարբերություններին, ապա դրանք գրաբարի կառուցվածքի տեսակետից էական ոչ մի նշանակություն չունեն և չեն փոխում գրաբարի ո՛չ բնույթը և ո՛չ էլ համակարգը:

Այսպիսով, ավանդված լեզվական հարուստ հուշարձանները վկայում են, որ հայերի հնագույն գրական լեզուն եղել է գրաբարը, որով 5-րդ դարից սկսած գրվել են ժամանակի սեփական և թարգմանական, գիտական, պատմական գրականություն, կրոնական հեղինակական, դպրոցական-ուսումնական երկերը, կատարվել են պաշտոնական գրագրությունները:

Հետևաբար, պետք է ընդունել, որ 5-րդ դարում առաջին անգամ գրի առնված լեզուն, որ հետագայում գրաբար է կոչվում, նույն ժամանակի ժողովրդական-խոսակցական և գրական լեզուն էր, և գրական ու ժողովրդախոսակցական լեզուների այն որոշակի տարբերությունները, որ այժմ գոյություն ունեն, գրաբարում այն ժամանակ ուժեղ չէին արտահայտված:

Միջին շրջան (12—16-րդ դդ.): Հայոց լեզվի պատմական զարգացման որակական փոփոխման հաջորդ փուլը միջին հայերենի շրջանն է, որ ընդգրկում է 12—16-րդ դարերը: 7-րդ դարից հետո գրաբար գրական և գրավոր լեզվին դուրսնալու խոսակցական՝ բանավոր լեզվի զարգացման հետևանքով արդեն 11-րդ դարում գրաբարը դարձրվում է ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի լինելուց, որին գալիս է փոխարինելու նրա իսկ ընդերքում ծնունդ առած նոր լեզուն, որ ստացել է միջին հայերեն անունը:

Միջին հայերենը գտնվում է գրաբարի և աշխարհաբարի միջև՝ որպես այդ երկուսի միացնող օղակ: Այն ոչ միայն այդ ժամանակաշրջանի գրական լեզուն է, այլև ժողովրդի խոսակցական լեզուն: Իբրև գրական լեզու՝ միջին հայերենը նորմավորված չի եղել, չի ունեցել կայունացած որոշակի նորմա և հանդես է եկել գրական տարբերակներով:

Միջին հայերենն ասելով սովորաբար հասկացվում է միջնադարյան հայ գրականության լեզուն, որով գրված են գեղարվեստական գրականության (Կոստանտին Երզնկացի, Հովհաննես Երզնկացի, Հ. Թլկուրանցի, Հ. Իմաստասեր, Տրիկ, Ն. Քուչակ և ուրիշներ), բժշկության (Մխիթար Հերացի, Ամիր-Գովլաթ Ամասիացի), իրավագիտության (Մխիթար Գոշի, Ամբատ Գունդստաբլի Դատաստանագրերը) և գիտության ու գրականության այլևայլ բնագավառներին վերաբերող բազմաթիվ գործեր:

Ոմանք միջին հայերեն տերմինը ավելի նեղացնելով՝ անվանում են Կիլիկյան հայերեն, որ, սակայն, չի համապատասխանում իր բովանդակությանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին հայերենը միատարր և միասնական չի եղել: Այդ դարերում Հայաստանում և հայկական գաղթօջախներում գործում էին միջին հայերենի մի քանի տարբերակներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն է՝ Կիլիկիայի հայկական պետության պաշտոնական լեզուն: Կիլիկյան հայկական թագավորության վերացումը (16-րդ դ.), ըստ երևույթին, սկիզբ դարձավ միջին հայերենի անկման և աշխարհաբարի՝ հայերենի նոր որակի սկզբնավորմանը, ինչպես որ միջին գրական հայերենը փոխարինել է ժողովրդին արդեն անհասկանալի գրաբարին, այնպես էլ միջին հայերենի ընդերքում սկզբնավորված և զարգացած աշխարհաբարը եկավ փոխարինելու միջին գրական հայերենին:

**Հայերենի բարբառները:** Ժամանակակից հայ բարբառները, որոնց թիվը անցնում է 50-ից, իրենց հնչյունական, բառապաշարային և քերականական առանձնահատկություններով տարբերվում են հին և միջին գրական հայերենից, թեև նրանց նշված լեզվական իրակությունների մեծ մասը հիմնականում բխում է գրաբարից: Ակնհայտ է նաև, որ բարբառների լեզվական որոշ երևույթներ և իրողություններ ավելի հին են գրաբարից:

Ճիշտ է այն դրույթը, ըստ որի ժամանակակից հայ բարբառներն առաջացել են գրաբարից հետո, իբրև գրաբարի տարածքային ճյուղավորումներ: Բայց այդ բնավ էլ չի նշանակում, որ հայոց լեզվի զարգացման գրաբարյան շրջանում, 5-րդ դարում և նրանից առաջ ընդհանրապես ժխտվում է հայ բարբառների գոյության փաստը:

<sup>6</sup> Հ. Անտոյան, նույն տեղում, էջ 226—254; Ա. Այտրնյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 147, 165; Գ. Զամոյսյան, նույն տեղում, 192—193:

Վերջին շրջանում լեզվական փաստերի բազմակողմանի ուսումնասիրությունը բերել է այն եզրակացություն<sup>7</sup>, որ 5-րդ դարում անառակելիորեն եղել են բարբառային տարբերություններ, հետևապես՝ բարբառներ կամ ենթաբարբառներ: Այդ դարում բարբառային հատկանիշների առանձնացումը փաստորեն հանգում է այդ դարի համար հաստատվող զուգաձևությունների նշմանը:

5-րդ դարի բարբառների հնչյունա-քերականական հատկանիշներն արտահայտվում են ավելի քան հարյուր (հարյուր հրեսուն) զուգաձևությունների միջոցով, որոնք Գ. Զահուկյանը մի քանի խմբերի է բաժանում:

ա) Մի շարք դեպքերում այդ ձևերը հակադրվում են իրեն նորմավորված գրաբարյան և բարբառային հակադրություններ:

բ) Որոշ դեպքերում այդ ձևերը հակադրվում են իրեն նորմավորված գրաբարյան և սկզբնավորվող աշխարհաբարյան ձևեր:

5-րդ դարում կային գրաբարին համեմատաբար մոտ և համեմատաբար հեռու տարածքային շրջաններ, որոնց տարբերությունները բարբառային արժեք էին ներկայացնում: Մյուս կողմից, գրաբարի ընդերքում սաղմնավորվող աշխարհաբարյան ձևվերում արդեն առկա էին որոշ հակադրություններ, որոնք հետագայում 'խորանալով' հասցրին ժամանակակից բարբառային տարբերություններին:

գ) Մի շարք դեպքերում այդ զուգահեռ ձևերը ներկայացնում են նորմավորված գրաբարյան և հնացած (ավելի հին) կամ մնացուկային ձևերի հակադրություններ, որոնք ունենալով տարածքային հիմք, ստեղծում են բարբառային որոշակի տարբերություններ:

դ) Եվ վերջապես կան դեպքեր էլ, երբ զուգահեռ ձևերը ներկայացնում են նույն տարածքը, երբեմն նաև կարող են հանդես գալ իրեն անհատական տարբերություններ, որ կարող են արդյունք լինել ինչպես տարբեր խոսակցական միջավայրերի, այնպես էլ կարող էին ժամանակի ընթացքում որոշ տարածական հիմք ունենալ:

Հատկանշական է այն իրողությունը, որ հին շրջանի բարբառային բաժանումների սահմանները համընկնում են Պատմական Հայաստանի վարչաֆեոդալական հին բաժանումների սահմաններին, այսինքն՝ բարբառային այդ տարբերությունները պայմանա-

փորված են նաև Հայաստանի վարչական-քաղաքական պայմաններով:

Բարբառային այդ տարբերությունները, որոնք նկատվում են հայոց լեզվի զարգացման հին շրջանում, հետագայում խորանում են մի կողմից՝ այդ շրջանում նկատվող մի շարք լեզվական իրավությունների հետագա ծավալման ու տարածման, մյուս կողմից՝ լեզվական նոր երևույթների առաջացման ճանապարհով:

Բարբառների վրա գործած ազդեցության տեսակետից ժամանակի ընթացքում աստիճանաբար փոխվում և մեծանում է նաև արտաքին ազդեցության՝ օտար լեզուների դերը<sup>8</sup>: Հին շրջանում բարբառային տարբերությունների առաջացման գործընթացում, ըստ երևույթին, մեծ դեր են խաղացել նախագրային հայերենի լեզվական ենթաշերտերը (ուղարտա-խուռխտական, խեթական, իրանա-պահլավական, կովկասյան և այլն), գրաբարյան շրջանում՝ հին պարսկական, ինչպես նաև ասորական, հունալատինական և ավելի ուշ՝ արաբական ազդեցությունները: Միջին և նոր շրջաններում արդեն տիրապետող է դառնում թուրքական և նոր պարսկական, հետագայում՝ որոշ շափով եվրոպական և ռուսական ազդեցությունը: Արտաքին լեզվական ազդեցությունների արդյունք պետք է համարել, օրինակ՝ ր և ռ ձայնորդների շփոթումը, ֆ և դ (ղկ) բաղաձայնների, քմային ձայնավորների և բաղաձայնների, ձայնավորների ներդաշնակության երևույթի, շարունակական ներկայի տարածումը, նախկին ցուցական հոդերի ստացական գործածությունը և այլն:

Մյուս կողմից, մի շարք նոր իրավություններ իրենց հիմքն ունենալով հնում, զարգացման ներքին օրինաչափություններով հետագայում համընդհանուր բնույթ են ստանում կամ տարածվում են ավելի լայն շափերով: Օրինակ՝ ալ > օ, եա > Ե հնչյունափոխությունը, գործիականի -ով վերջավորությունը, -եր, -ներ հոգնակերտի միօրինակացումն ու տարածումը և այլն: Կու և պիտի բայական մասնիկները տարածվելով հայոց լեզվի գրեթե բոլոր տարածքային տարբերակներում, ստանում են քերականական տարբեր արժեքներ. արևմտյան բարբառներում կու-ն ստանում է ներկայի և անկատարի, արևելյան բարբառներում՝ սահմանական (հաստատական) ապառնիի և պայմանականի արտահայտման գործառություն: Պիտի մասնիկը արևմտահայ բարբառներում ստանում է սովորական ապառնիի արտահայտման, իսկ արևելահայերենում՝ միայն հարկադրականի արժեք:

<sup>7</sup> Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 166—179:

<sup>8</sup> Գ. Զահուկյան, Նշվ. աշխատ., էջ 180—192:



Հին՝ գրաբարյան շրջանում գոյություն ունեցող կամ ձևավորվող բարբառային տարբերությունների հետագա խորացման համար կարևոր դեր են խաղում այդ շրջանի վերջերում որոշակիորեն արտահայտված երկու երևույթ՝ հայ ժողովրդի քաղաքական մասնատվածությունը և զանգվածային գաղթերը: Հատկապես Բագրատունիների անկումից հետո (11-րդ դար) հայ ժողովրդի զանգվածային գաղթերի հետևանքով մեծապես փոխվում է հայ բարբառների աշխարհագրական տեղաբաշխումը: Նախկին բարբառային կենտրոնների կողքին հանդես են գալիս նորերը, հատկապես Փոքր Ասիայի՝ Մեծ Հայքին սահմանակից շրջաններում:

Այսպիսով, ժամանակակից բարբառների հնչյունական և ձևաբանական խմբերը սկսում են գծագրվել գրաբարյան շրջանի վերջերից և միջին գրական հայերենի սկզբներից<sup>9</sup>:

Ն ո Ր Շ Ը Զ Ա Ն (17—20-րդ դդ.): Գրական նոր հայերենը կամ աշխարհաբարը Հայաստանի և հայկական գաղթօջախների գրավոր և խոսակցական հայկական լեզուն էր, որին զուգահեռաբար այդ շրջանում գործում էին հայերեն տասնյակ բարբառները: Աշխարհաբարի երկու գրական լեզուները, ժամանակակից գրական լեզվի երկու տարբերակները՝ արևելահայերենը և արևմտահայերենը կազմավորվել են երկու տարբեր բարբառների հիման վրա: Արևելահայ գրական լեզվի հիմքում ընկած է Արարատյան բարբառը, որ պատկանում է հայ բարբառների ՈՒՄ ճյուղին, գրաբարին մոտ է հնչյունաբանությամբ և բառապաշարով: Արևմտահայ գրական լեզվի հիմքն է կազմում ԿԸ ճյուղին պատկանող Պոլսի բարբառը: Այն միջին հայերենի անմիջական ժառանգորդն է, ավելի մոտ է գրաբարին բառապաշարով և ձևաբանությամբ, հեռու է գրաբարից հնչյունաբանությամբ (արտասանությամբ): Մինչև 20-րդ դարի հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգությունը, 1915 թ. ցեղասպանությունը, այն Արևմտյան Հայաստանի գրական լեզուն էր, այժմ Սփյուռքի հայության գրական լեզուն, որով ստեղծված է գեղարվեստական և գիտական ճոխ գրականություն:

Նոր գրական հայերենի՝ աշխարհաբարի այս երկու տարբերակները իբրև առանձին գրական լեզուներ իրարից որոշ չափով տարբերվում են մասամբ հնչյունաբանությամբ (արտասանություն, ուղղագրություն), ուղղագրությամբ (արևմտահայ տարբերակն օգտվում է գրաբարյան, արևելահայերեն տարբերակը՝ նոր, գրաբարի բարեփոխված ուղղագրությունից), բնգհանուր հա-

<sup>9</sup> Գ. Զահուկյան, նշվ. աշխատ., էջ 180—192:

լիքեն բառապաշարի օգտագործման շափերով, հիմնականում՝ ձևաբանությամբ, հոլովման և խոնարհման համակարգերով:

Չնայած որոշ տարբերություններին, այդ լեզուները, իբրև միասնական հայ ազգության համաժողովրդական գրական լեզվի տարբերակներ, հավասարապես հասկանալի են հայ ժողովրդի երկու հատվածներին և հաջողությամբ կատարում են հաղորդակցման կարևոր միջոցի և մշակութային ձևի իրենց հիմնական գործառնությունները:

Աշխարհաբարի մասին առաջին վկայությունները կամ նմուշները հասնում են մինչև 14-րդ դար: Աշխարհաբարի հնագույն նմուշ է համարվում Բջինի 1358 թ. արձանագրությունը:

17-րդ դարը համարվում է աշխարհաբարի կազմավորման շրջան, երբ արդեն այդ լեզվով ստեղծվում են տարբեր բնույթի և նշանակության գրավոր այնպիսի հուշարձաններ, ինչպես՝ Զաքարիա Ազուլեցու «Ուղեգրությունը», «Արհեստ համարողութեան», «Արհեստ թուական է սայ», Ղ. Վանանդեցու «Գանձ շափոյ, կշտոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» թվաբանական-վաճառական-կան ձեռնարկները, Կ. Զուղայեցու թվաբանական-հաշվապահական խնդրագիրքը և այլն:

Նոր ուսումնասիրությունները հավաստում են, որ աշխարհաբարը իր կազմավորման առաջին փուլում միասնական է եղել և՛ արևելահայության, և՛ արևմտահայության համար: Անցնելով մեկ դարյա ձևավորման շրջան, 18-րդ դարից սկսած, միասնական աշխարհաբարը Ում և Կը ճյուղերի բարբառների ազդեցությամբ աստիճանաբար երկփեղկվում է արևելահայ և արևմտահայ տարբերակների<sup>10</sup>:

18-րդ դարում լույս են տեսնում աշխարհաբարի առաջին քերականական աշխատություններն ու ուսումնասիրությունները՝ Շրոդերի «Գանձ Արամեան լեզուի» (Ամստերդամ, 1711 թ.), Մխիթար Աբբայի (Սեբաստացու) «Թուոն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» (Վենետիկ, 1727 թ.), աշխարհաբարյան բառապաշարը պարունակող այնպիսի բառարաններ, ինչպես՝ Կ. Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» (ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանները, 1786 թ.), Մխ. Աբբայի «Բառգիրք հայկազգեան լեզուի» 2-րդ հատորը (1769 թ.), որտեղ

<sup>10</sup> Գ. Զահուկյան, նշվ. աշխատ., էջ 49—68:

<sup>9</sup> Սևակ, ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 5—116: Նույնի, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, էջ 57—67:

Ռ. Խշառյան, նոր գրական հայերենը 17—18-րդ դդ., Երևան, 1979:

վնտեղված են աշխարհաբարից—գրաբար և գրաբարից—աշխարհաբար բառարաններ, յուրաքանչյուրը 30—35 հազար բառով և այլն:

19-րդ դարի սկզբից սկսվում է աշխարհաբարի տիրապետության շրջանը: 19-րդ դարի առաջին երեսնամյակին արդեն արեւելեյան աշխարհաբարով լույս է տեսնում ավելի քան 40 անուն զանազան գրականութուն: Նույն դարի առաջին քառորդում ըստեղծվում են մշակութային երկու խոշոր օջախներ, Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը, որոնք մեծ դեր են խաղացել արևելահայ աշխարհաբարի մշակման և տարածման գործում:

Աշխարհաբարի մշակման և պրոպագանդման ուղղությամբ հսկայական է եղել նաև գրավոր խոսքի դերը: Այդ շրջանում տարբեր տարիներին լույս են տեսնում «Բազմավեպ», «Մեղու Հայաստանի», «Մասյաց աղավնի», «Արարատ» պարբերականները, որոնք ամբողջապես կամ մասամբ իրենց էջերը նվիրում են աշխարհաբարին, և վերջապես «Հյուսիսափայլը» (1858—1864), որի գերը առանձնահատուկ է ոչ միայն արևելահայ աշխարհաբարի մշակման և տարածման, այլև գրաբարի դեմ մղված պայքարի բնագավառում գրական նոր լեզվի հաղթանակի գործում: Հանուն աշխարհաբարի օրինականացման, գրաբարի դեմ մղված պայքարում ծավալված բանավեճում, որ հայտնի է գրապայքար անունով, աշխարհաբարի պաշտպանության նշանաբանով 19-րդ դարի 40-ական թվականներին իր գործունեությունը ծավալեց հայ մտավորականությունը:

Արևմտահայ իրականության մեջ գրապայքարը սկսվեց 19-րդ դարի 40-ական թվականներին և ավարտվեց միայն դարավերջին: Արևմտահայ գրական լեզվի վերջնական հաղթանակի գործում կարևոր ծառայություններ են մատուցել Մխիթարյանները, Նահապետ Ռուսինյանը, Ստեփան Ոսկանը, Գր. Օտյանը և ուրիշներ:

Արևելահայ գրական լեզվի մշակման և տարածման ուղղությամբ հսկայական է հայ մեծ լուսավորիչ Խ. Արուստյանի դերը: Նա իր գրչով և հասարակական-մանկավարժական գործունեությամբ դարձավ աշխարհաբարի հաղթանակի համար մղվող պայքարի առաջամարտիկը: Աշխարհաբարի տարածման և տիրապետության համար պայքարի նրա որդեգրած գործին իրենց նպաստը բերեցին աշխարհաբարով գրված կամ աշխարհաբարի պաշտպանությանը նվիրված այնպիսի աշխատություններ, ինչպես՝ նշանավոր «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանը, «Աշխարհաբարի քերականությունը» և այլն:

Արևելահայ աշխարհաբարի մշակման, տարածման և օրի-

նականացման համար մղված պայքարում նրա վերջնական հաղթանակին իրենց նվիրեցին ակամավոր գիտնական, հրապարակախոս և հասարակական գործիչ Ստ. Նազարյանը, հայ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը և ուրիշներ:

Ստ. Նազարյանը դեռ «Հյուսիսափայլի» (1858 թ.) հրատարակությունից առաջ, 40—50-ական թվականներին հայ գրականության պատմությանը նվիրված ռուսերեն աշխատություններում (Կազան, 1844, 1848 թթ.) աշխարհաբարով գրված «Վարդապետարան կրոնի», «Առաջին հոգեղեն կերակուր» (1853 թ.), «Հանդես նոր հայաստանության» (1857 թ.) և աշխարհաբար թարգմանված «Պալոս և Վիրգինիա» վեպով իր գործուն մասնակցությունը բերեց աշխարհաբարի մշակմանն ու տարածմանը: Աշխարհաբարի համար մղվող պայքարին «Հյուսիսափայլի» էջերում Ստ. Նազարյանին է միանում Մ. Նալբանդյանը և շարունակում նրա հետ այդ գործը մինչև վերջնական հաղթանակ:

Աշխարհաբարի մշակման և օրինականացման հարցում Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանը գտնում էին, որ՝

- 1) Հայ ժողովուրդը հասարակական նոր հարաբերությունների շնորհիվ դարձել է ազգ և որպես այդպիսին պետք է ունենա իր ազգային գրական լեզուն:
- 2) Գրաբարն այլևս չէր կարող դառնալ արդեն ձևավորված հայ ազգի համաժողովրդական ազգային լեզուն, որովհետև այն հասկանալի չէր հայ ազգը կազմող անհատներին: Այդ նոր կյանքին, հասարակական նոր հարաբերություններին, պատմականորեն ձևավորված այդ նոր հանրությունը՝ հայ ազգին անհրաժեշտ էր նոր գրական լեզու:
- 3) Ստ. Նազարյանը անհրաժեշտ էր համարում համաժողովրդական մի լեզու, որին հիմք պետք է դառնար Արարատյան բարբառը, այդ նոր լեզուն միաժամանակ պետք է օգտագործեր նաև մյուս բարբառների բոլոր ազնիվ տարրերը:
- 4) Մ. Նալբանդյանը գտնում էր, որ ազգային լեզու չէր կարող դառնալ որևէ բարբառ կամ «բարբառի լծի տակ» զարգացած լեզու: Նոր գրական լեզուն պետք է զարգանա ինքնուրույնաբար, զարգացման իր ներքին, սեփական օրինաչափություններով, առանց «ստրկանալու» գրաբարին կամ բարբառներին: Բայց աշխարհաբարը պետք է օգտագործի ինչպես գրաբարի, այնպես էլ բարբառների ազնիվ տարրերը: «Տեղական բարբառն ընդհանուրի համար գործածական արժեք չունի,— գրում է նա,— և նոր լեզուն այս կամ այն բարբառի լծի տակ դրականապես մշակելու գաղափարը նույնպես ամուլ է և անգործառնելի, ինչպես հին լեզվի

30.207

գաղափարը: Այդ պատճառով նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խպնելու և թունց այս կամ այն գավառական բարբառին ստրիանալու: Մյուս կողմից, նա գտնում է նաև, որ նոր լեզուն պետք է գիտակցաբար մշակվի՝ և գրվի որոշ համակարգի տակ՝ հավատարիմ մնալով լեզվի ժողովրդականությանը:

Հաղթանակով դուրս գալով «Գրապայքարից», «Հյուսիսփայլ»-ից հետո հայ գրական լեզվի արևելահայ տարբերակը աստիճանաբար լայնացնում է իր գործածության շրջանակները, հանդես է գալիս գրական լեզվի համարյա բոլոր գործառնություններով: 60-ական թվականներից սկսած՝ սկսվում է գրական լեզվի հետագա մշակումն ու հզլումը: Գրական լեզուն աստիճանաբար հաղթահարում է ինչպես հյուսիսփայլյան և հատկապես նազարյանական լեզվի արհեստականությունները, այնպես էլ ժայռահեղ բարբառայնությունները: Առաջին պլան է մղվում միասնական գրական նորմայի ստեղծման գաղափարը: Գրական լեզվի զարգացումն ու հզլումը այս շրջանում ընթանում է բարբառայնությունների և գրաբարայնությունների հաղթահարման, անհարկի փոխառությունների՝ հատկապես մասնագիտական հայերեն բառերի ստեղծման արմատավորման ճանապարհով<sup>11</sup>, ուղղագրության և ուղղախոսության մի շարք հարցերի, քերականական որոշ իրողությունների կարգավորման ուղղություններ: Դարասկզբին նախասովետական շրջանում հայոց լեզվի արևելահայ տարբերակը իր հնչյունական և քերականական համակարգով, բառապաշարով, ուղղագրությամբ և ուղղախոսությամբ ներկայանում էր արդեն իբրև որոշակիորեն նորմավորված գրական լեզու: Սովետական շրջանում արևելահայ գրական լեզվի զարգացումը հիմնականում ընթանում է արդեն նրա տարրերի կատարելագործման, լեզվական իրողությունների միօրինակացման, գրական լեզվի գործառնությունների ընդարձակման ճանապարհով:

Փ ա մ ա ն ա կ ա կ ի յ ց հ ա յ ո յ լ ե զ վ ի հ ա մ ա կ ա ռ գ ը:  
Արդի գրական լեզվի արևելահայ տարբերակի՝ ժամանակակից հայոց լեզվի հիմքում հիմնականում ընկած է Արարատյան բարբառը: Այդ նշանակում է՝ հնչյունաբանության, բառապաշարի, ձևվաբանության ու շարահյուսության հիմնական իրակություններն իրենց էական կողմերով բարբառից փոխանցվել են ժամանակակից հայերենին: Մշակման և հետագա զարգացման ընթացքում,

ասակայն, գրական լեզուն որոշ շափով հեռացել է իր ծնող բարբառից, ներառելով իր մեջ հին գրական լեզվի՝ գրաբարի տարրերը:

Ժամանակակից հայերենի համակարգը բնորոշվում է հետեվյալ առանձնահատկություններով<sup>12</sup>.

ա) Հնչյունային (հնչույթային) համակարգն իր հիմնական գծերով, ինչպես նաև շեշտադրությունը գրաբարյան է, որ գրական լեզվին է փոխանցվել հիմնականում Արարատյան բարբառի միջոցով: Ի դեպ, շատ դեպքերում ժամանակակից հայերենի՝ արևելահայ լեզվի և գրաբարի նյութական կողմի նույնությունը ոչ թե անմիջական է, այլ միջնորդավորված է բարբառով:

Բնչյունային (հնչույթային) համակարգը բնութագրվում է պայթականների հոաստիճանությամբ, շփականների երկաստիճանությամբ: Ի տարբերություն գրաբարի՝ նկատելի է ձայնավորների մենաբարբառության միտումը, գրաբարյան երկբարբառների և եռաբարբառների պարզեցումը, երկբարբառների վերածումը երկհնչյունների:

բ) Հնչյունափոխության հիմնական օրինաչափությունները նույնպես գրաբարյան՝ ժառանգորդական են, որն արտահայտվում է պատմական հնչյունափոխությամբ՝ գրաբարից փոխանցված բառերում և բառաձևերում (իբրև վերապրուկային ձևեր) և հատկապես դիրքային՝ շեշտից կախված հնչյունափոխությամբ՝ ինչպես գրաբարից փոխանցված բառերում և բառաձևերում, այնպես էլ նորակազմություններում՝ իբրև գործող հնչյունափոխական օրինաչափություններ կամ համաբանությամբ կատարվող երևույթներ (իրակություններ):

գ) Բառերի ուղղագրությունը և արտասանությունը հիմնականում գրաբարյան է: Լեզվի զարգացման արդի փուլի առանձնահատկությունների, ժամանակակից հայերենի հնչույթային համակարգի օրինաչափությունների հաշվառումով՝ գրաբարի ուղղագրությունը ենթարկվել է որոշ բարեփոխության:

դ) Բառային կազմի՝ բառապաշարի հիմնական մասը իր կարևոր իմաստներով, ինչպես և բառային հիմնական ֆոնդը գրաբարյան ժառանգությունն է: Գրաբարից են ժառանգված նաև բա-

<sup>12</sup> 2. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, Երևան, 1951, էջ 475—476, 498; Մ. Ասատրյան, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի ձայնափոխական համակարգի փոխհարաբերությունները, Բանբեր Երևանի համալսարանի 2(35), 1978, էջ 184—186: Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969, էջ 28—32: Գ. Սեակ, Ժամանակակից հայոց լեզվի գաղափար, Երևան, 1955, էջ 67—70:

<sup>11</sup> Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, 1980, էջ 30—36:

ուսակազմության հիմնական միջոցներն ու եղանակները՝ հայա-  
դրական և վերլուծական բարդությունները (հողակապով իսկական  
բարդությունների, հարադրությունների կազմությունը), ինչպես  
նաև ածանցումը՝ ածանցների գերակշիռ մասը: Բարբառային-ժո-  
ղովրդական ծագում ունեն, սակայն, անհողակապ բարդություն-  
ները, կրկնավորները, հարադրավոր բայերի և դարձվածքների  
գերակշիռ մասը:

Հայերենի զարգացման արդի փուլում նկատելի է նախա-  
ծանցների կիրառության որոշ աշխուժացում՝ հատկապես տերմի-  
նակազմության մեջ, ինչպես նաև նորակազմությունների առա-  
տություն՝ մասնագիտական-տերմինաբանական բառաբաշխում,  
ինչպես և զգալի թվով փոխառություններ՝ ռուսերենից և ռուսերե-  
նի միջոցով:

Ե) Ժամանակակից հայերենի ձևաբանությունը, հոլովման և  
խոնարհման համակարգն իբրև գրաբարյան ձևերի հետագա զար-  
գացման արդյունք, միաժամանակ, խարսխված լինելով Արարատ-  
յան բարբառի վրա, իր էությունը ժողովրդա-բարբառային բնույթ  
է կրում:

Տիպաբանական կառուցվածքի տեսակետից ժամանակակից  
հայոց լեզվում թեքականության որոշ գրսևորումներով հանդերձ,  
ի տարբերություն գրաբարի, ավելի շեշտված է կցականությունը,  
որն արտահայտված է խոնարհման և հոլովման համակարգերում  
վերլուծական ձևերի գերակշռությամբ համադրական ձևերի նը-  
կատմամբ:

Ժամանակակից հայ գրական լեզվի արևելահայ տարբերակն  
աչքի է ընկնում հոլովման համակարգի պարզեցմամբ և կրճատ-  
մամբ, առանձին հոլովների գործառությունների ընդարձակման  
շնորհիվ հինգ հոլովների առկայությամբ: Նկատվում է նաև հո-  
լովների միօրինակացում՝ Վ հոլովման նախապատվության մի-  
տումով, ձևային և իմաստային հոլովումների տարբերակմամբ:

զ) Շարահյուսական համակարգը, ի հակադրություն գրաբա-  
րի, բնորոշվում է հատկապես որոշիչների և հատկացուցիչների  
առաջադաս գործածությամբ, որոշիչ-որոշյալների, հատկացուցիչ-  
հատկացյալների անհամաձայնությամբ, անջատական և միացա-  
կան շաղկապների տարբերակված համակարգով, կապերի և կա-  
պական բառերի նոր նրբերանգների ձևաբանմամբ, նախդիրների  
զգալի մասի իբրև հտադիրների կիրառմամբ, գոյականների խընդ-  
բառության որոշակի միտումով և այլն:

Գրական լեզուների և բարբառների փոխնադարձության և մեծավարձության  
հարցը: Հետաքրքրական է ի վերջո քննել ժամանակակից հայոց գրական լեզու-

ների՝ արևելահայերենի և արևմտահայերենի հարաբերությունը ինչպես իրար,  
այնպես էլ՝ գրաբարի, միջին գրական հայերենի և բարբառների նկատմամբ:

Նշյունական-քերականական հարյուր հատկանիշների գնահատմամբ<sup>31</sup> հայ  
գրական լեզուների ու բարբառների փոխնադարձությունն ունի հետևյալ պատ-  
կերը.

ա) Արդի գրական լեզուները՝ արևելահայերենը և արևմտահայերենը գրա-  
բարից տարբերվում են գրեթե նույնքան հատկանիշներով, որքան միջին գրական  
հայերենը: Այդ բացատրվում է մասամբ միջին գրական հայերենի խալաթագե-  
նությունը, նրա ոչ լրիվ նորմավորվածությամբ, որը չափով գրաբարի և միջին  
գրական հայերենի բարբառային հիմքերի տարբերությամբ, մասամբ էլ արդի  
գրական լեզուների մշակման գործընթացում գրաբարին նրանց զգալի մերձեց-  
մամբ:

բ) Միջին գրական հայերենը և արևմտահայ գրական լեզուն մեծ չափով  
տարբերվում են արևելահայ գրական լեզվից՝ գրաբարից ունեցած իրենց տար-  
բերությունների բաշխմամբ: Արևելահայ գրական լեզուն միջին գրական հայե-  
րենի և արևմտահայ գրական լեզվի համեմատությամբ գրաբարին ավելի մոտ է  
հնչյունաբանությամբ և ավելի հեռու՝ քերականությամբ:

գ) Արևմտահայ գրական լեզուն երկու անգամ ավելի մոտ է միջին գրա-  
կան հայերենին, քան արևելահայ գրական լեզվին: Այստեղ նույնպես ավելի որո-  
շակի են արևելահայերենի քերականական տարբերությունները: Այդ առումով  
արևմտահայ գրական լեզուն ավելի մոտ է միջին գրական հայերենին, հետևաբար  
և նրա անմիջական ժառանգն է: Արևելահայ գրական լեզուն ավելի է հեռու մի-  
ջին գրական հայերենից, քան գրաբարից, որ բացատրվում է արևելահայերենի և  
միջին հայերենի բարբառային հիմքերի տարբերությամբ:

Գրական լեզուների և բարբառների համեմատությունը վերոհիշյալ հնչյու-  
նաբանականական 100 հատկանիշների գնահատմամբ տալիս է հետևյալ  
պատկերը

ա) Գրական լեզուներից (գրաբարը, միջին հայերենը, արևելահայերենը և  
արևմտահայերենը) իր հնչյունական և քերականական հատկանիշներով չի նույ-  
նանում որևէ բարբառի կամ խոսվածքի հետ: Այդ հետևանք է այն բանի, որ  
գրական լեզուները մշակման ընթացքում զգալիորեն հեռացել են իրենց բար-  
բառային հիմքերից և ձևաբար ընդհանրացնող գծեր՝ ենթարկվելով նաև այդ  
բարբառների ազդեցությանը:

բ) Հիմ գրական լեզուներից գրաբարը ավելի հեռու է իր հիմքում ընկած  
խոսվածքներից և բարբառներից, քան միջին գրական հայերենը. վերջինս իր  
բարբառային հիմքից ավելի քիչ է հեռացել և ընդհանրապես նրա մշակման  
ու միօրինակացման գործընթացն ընդհանրապես մինչև վերջ ինտենսիվորեն չի  
ընթացել:

գ) Նոր գրական լեզուներից արևմտահայերենը համեմատաբար ավելի մոտ  
է իր հիմքում ընկած Պոլսի բարբառին, քան արևելահայերենը՝ Արաբատյան  
բարբառին, որը բացատրվում է այդ երկու գրական լեզուների մշակման և դար-  
գացման ուղիների տարբերությամբ:

Ըստ հնչյունա-ձևաբանական 40 հատկանիշների հաշվառման՝ գրաբարի,  
միջին գրական հայերենի և արևելահայ ու արևմտահայ գրական լեզուների և  
նրանց հիմք բարբառների հետ ունեցած հարաբերությունը ներկայացնում է  
հետևյալ պատկերը:

<sup>31</sup> Գ. Զահուկյան, նշվ. աշխատ., էջ 216—219: Նույնությամբ տրվում են  
Թ. Զահուկյանի նորակազմությունները:

ա) Գրաբարը 5-րդ դարում հայտնի և ճշտորեն տեղայնացվող խոսվածքներից ամենից մոտ է Տուրուբերանի և նրան հյուսիս-արևմուտքից և հյուսիսից հարող՝ Բարձր Հայքի և Ալթարատի խոսվածքներին: 5-րդ դարում /Մեծ Հայքում շահալիսյանցով խոսվածքներից գրաբարն ամենից ավելի մոտ է: Տրապիզոնի և Օրդուի միջին քարաբարձների, Ամասիայի և Ադիալի ենթաբարձրանների խոսվածքներին:

Քանի որ 5-րդ դարի բարբառային տարբերությունները այնքան մեծ չեն եղել, որքան արդի տարբերությունները, Տետեարար, գրաբարը իր տարբերակներով (բարբառներով կամ ենթաբարձրաներով, կամ է՝ խոսվածքներով) հանդես էր գալիս իբրև ընդհանուր հասկանալի, միաժամանակ պրական և նաև խոսակցական լեզու:

բ) Միջին գրական (Կիլիկյան) հայերենին ամենից մոտ են ոչ թե Արևելյան Կիլիկիայի կամ, այսպես կոչված, Անտիոքահայ խոսվածքները, այլ առաջին հերթին Հյուսիսային Արձնիքի կամ Սասունի ենթաբարձրանի խոսվածքները, այսպես և գրաբարին մոտ և գրաբարի հիմքում ընկած խոսվածքները: Այդ ցույց է տալիս, որ.

1) Կիլիկյան գրաբարում այն ժամանակվա վիճակը չի համընկնում արդի բարբառագիտական աշխատություններում տրված վիճակի հետ, այն շատ ավելի լայն ընդգրկում է անեցել և զգալիորեն տարբերվել է եզրային՝ Արևելյան Կիլիկիայի և Անտիոքի խոսվածքներից:

2) Կիլիկիայի միջին գրական հայերենի խոսակցական հիմքը կազմել են ոչ միայն բուն Կիլիկիայի, այլև Պատմական Հայաստանի արևմտյան վայրերի հիմնական խոսվածքները՝ ոչ շատ մեծ տարբերություններով:

Այսպիսով, Կիլիկյան միջին գրական հայերենը եղել է Հայաստանի արևմտյան շրջանների համար ընդհանուր հասկանալի լեզու՝ լայն խոսակցական հիմքով:

3) Արևմտահայ գրական լեզվին ամենից ավելի մոտ են Պոլսի միջաբարբառի, Ղրիմ—Նոր-Նախիջևանի, Կարինի, Մարզվանի, այլև Ադրեանի, Եղեւսիայի բարբառների խոսվածքները: Արևմտահայ գրական լեզվի հիմքում ընկած են առաջին հերթին Պոլսի միջաբարբառի խոսվածքները:

4) Արևելահայ գրական լեզվին ամենից ավելի մոտ են Արարատյան բարբառի խոսվածքները, ինչպես նաև հյուսիսարևելյան բարբառախմբի մյուս բարբառների խոսվածքները: Արևելահայ գրական լեզվի հիմքում ընկած են առաջին հերթին Արարատյան բարբառի, ավելի լայն առումով՝ հյուսիսարևելյան բարբառախմբի խոսվածքները:

Գ. Հասակայանի բառափնտանակագրական լեզվաբանական գրությունն մեթոդով բառապաշարային համեմատական քննությունը գրական լեզուների և բարբառների հարաբերության հարցում բացահայտում է մտափոքրապես նույն պատկերը, ինչ որ հնչյունա-քերականական հատկանիշների քննությունը:

1) Ժամանակակից բարբառների՝ իրարից ունեցած բառային առավելագույն տարբերությունները զիջում են նրանց՝ գրաբարից ունեցած առավելագույն տարբերությունների քանակին: Դա բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

ա) ժամանակակից բարբառների՝ գրաբարի շրջանում ունեցած տարբերությունները փոքր են եղել, որոնք առաջացել են մեծ մասամբ գրաբարյան շրջանից հետո:

բ) Գրաբարի ցուցադրում տեղ են գտել այնպիսի բառեր, որոնք ընդհանրապես չեն պահպանվել բարբառներում. դրանք, ըստ հրևույթին, կամ ժամանակին եղել են գրական սրարձր ուղի բառեր, կամ նախքան բարբառների խիստ

տարբերակումը, դուրս են մղվել հոմանիշ այլ բառերի կողմից: Այսպիսով, որոշ կարգի տարբերությունների հիմքերը (բարբառային, ոճական, իմաստային) գալիս են գրաբարյան շրջանից, և գրաբարի բառացանկի համար հոմանիշներից միայն մեկի ընտրությունը որոշ պայմանականություն ունի:

2) Գրաբարից՝ ժամանակակից գրական լեզուների ունեցած բառային տարբերություններն ավելի փոքր են, քան բարբառների ունեցած տարբերությունները: Արդ հանգամանքը պայմանավորված է նաև արդի գրական լեզվից թուրքապարսկական նոր փոխառությունների արտամղմամբ և գրաբարի բառային կազմից օգտվելու մեծ լսփերից:

«Ժամանակակից հայոց լեզու» դասերացի բաժինները.

«Ժամանակակից հայոց լեզու» դասընթացը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ հնչյունաբանություն, բառագիտություն և բառակազմություն, ձևաբանություն և շարահյուսություն:

Հնչյունաբանությունը նկարագրում է ժամանակակից հայոց լեզվի հնչյունական կազմը, լեզվում կատարվող հնչյունական հիմնական գործընթացները: Հնչյունաբանության մեջ մտնում են՝ ուղղախոսությունը, որ ուսումնասիրում է ժամանակակից լեզվի արտասանական երևույթները, ուղղագրությունը, որ ուսուցանում է գրելիքի հիմնական կանոնները, զարմանությունը, որ ծանոթացնում է հայերեն այբուբենին, հնչյունների և տառերի հարաբերակցությունը:

Բառագիտությունը ուսումնասիրում է բառը, լեզվի բառային համակարգը, բառային կազմը, բառապաշարային շերտերը: Բառագիտության մեջ մտնում են՝ իմաստաբանությունը, որ ուսումնասիրում է բառի իմաստները, իմաստի և ձևի հարաբերությանը բառերի տեսակները:

Ստուգաբանությունը, որ ծանոթացնում է բառի ստուգաբանական վերլուծությանը:

Բառագիտության մեջ են մտնում նաև դարձվածաբանությունը, որ նկարագրում է արդի լեզվի դարձվածային համակարգը, բառաբանագրությունը, որ ուսումնասիրում է հայերեն տարբեր տիպի կարևոր բառարանները:

Բառակազմությունը ուսումնասիրում է բառերի ձևային կազմը, բառերի կազմության հիմնական տիպերն ու տեսակները:

Ձևաբանությունը բառերի քերականական կարգերի ու քերականական ձևերի ուսմունքն է. այն ուսումնասիրում է բառերի բառաքերականական կարգերը, լեզվում քերականական իմաստների արտահայտման միջոցները:

Շարահյուսությունը բառերի կապակցության և նախադասության ուսմունքն է: Այն ուսումնասիրում է շարահյուսական հիմնական միավորները՝ բառերի կապակցությունն ու նախադասությունը, շարահյուսական կապերի տեսակները, նախադասության տիպերն ու կառուցվածքը: Շարահյուսության հիման վրա էլ ստեղծվում է կենսադրությունը, որպես կենսադրական նշանների գործածության կանոնների ամբողջություն:



## ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ Հնչյունաբանության՝ ուսումնասիրության առարկան Հնչյուններն են՝ լեզվի նյութական նվազագույն միավորները: Լեզվի Հնչյունները նյութական միավորներ են, որովհետև հնարավոր չէ բաժանել ավելի փոքր, ինքնուրույն միավորների:

Վ Հնչյունաբանությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզվի Հնչյունական կազմը, Հնչյունական համակարգը: Վ Հնչյունաբանությունը զբաղվում է նաև խոսքային ավելի մեծ միավորների՝ վանկի, հնչաբառի, հնչաշարույթի, հնչանախադասության (հնչադասության), ինչպես նաև Հնչյունական շղթայի վերհատույթային միավորների՝ շեշտի և հնչերանգի ուսումնասիրությամբ:

Այսպիսով, հնչյունաբանությունը զբաղվում է լեզվի բոլոր հնչյունական միջոցների ուսումնասիրմամբ, նկարագրությամբ ու դասակարգմամբ ինչպես հնչյունների արտաբերման ու հնչման, այնպես էլ լեզվական գործառնության ընթացքում նրանց կատարած դերի տեսակետից:

Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությունը նկարագրում և դասակարգում է հայոց լեզվի արդի փուլի հնչյունական համակարգը, բացահայտում լեզվում կատարվող հնչյունական գործընթացները (պրոցեսները), հնչյունների զանազան կարգի փոփոխությունները, նրանց առաջացման պատճառներն ու օրինաչափությունները:

Լեզվի հնչյունների ուսումնասիրությունն ունի և՛ լեզվաբա-

նական-տեսական, և՛ կիրառական-գործնական արժեք ու նշանակություն:

Հնչյունների ուսումնասիրության լեզվաբանական-տեսական արժեքն այն է, որ իբրև լեզվի նյութական նվազագույն միավորներ նրանք կազմում են նրա «բնական նյութը», որն ընկած է ինչպես հնչյունական, այնպես էլ բառային միավորների և քերականության մի շարք օրինաչափությունների բազմազան հարցերի բացատրման և պարզաբանման հիմքում: Մյուս կողմից, առանց հնչյունական տվյալների հնարավոր չէ պատկերացնել լեզուների պատմահամեմատական ուսումնասիրությունը, նրանց ցեղակցական-ծագումնաբանական կապերի, փոխադարձ ազդեցության բացահայտումը, ինչպես և, առհասարակ, ստուգաբանության բնագավառում կատարվող սրևէ աշխատանք:

Հնչյունների ուսումնասիրության գործնական-կիրառական արժեքն այն է, որ նպաստում է լեզվի ուղղագրության և ուղղախոսության ուսուցմանը՝ ճիշտ գրելու և խոսելու սկզբունքների ու կանոնների յուրացմանը, անգամ՝ արտաբերական-արտասանական խանգարումների վերացմանը: Այն մեծապես կարող է նպաստել օտար լեզու սովորելու, ինչպես նաև օգնել մեկ լեզվից մի այլ լեզվով կինոնկարների հնչյունական խոսքը կրկնօրինակելու գործին և այլն:

Հնչյունը մարդու խոսողական և լսողական գործարանների աշխատանքի արդյունքը լինելով՝ ոչ միայն լեզվի նյութական նվազագույն, այլևս անբաժանելի միավոր է, այլև հանրորեն գիտակցված, արժեքավորված և ընդունված միավոր:

† Հնչյուն և հնչույթ տերմինները լեզվաբանության մեջ տարբերակվում են իբրև միեկույն երևույթի ընդհանուր և մասնավոր (կոնկրետ) հասկացություններով: Հնչույթը իմաստատարբերակիչ դեր կատարող հնչյունն է՝ հնչյունը հնչույթի արտասանական և դիրքային տարբերակն է՝ հնչույթի դրսևորումն է խոսքում: Պարզապես հնչյունը և հնչույթ տերմինները հաճախ նույնացվում են: }

Վ Հնչյունների ուսումնասիրությունը կատարվում է բնախոսական (Ֆիզիոլոգիական) — ֆիզիկական տեսանկյունով և հասարակական-պատմական կողմով:

Վ Հնչյունների բնախոսական ուսումնասիրության նպատակն է պարզել և նկարագրել արտաբերական-արտասանական առանձին գործարանների դերը այս կամ այն հնչյունը արտաբերելիս՝ Հնչյունների ֆիզիկական ուսումնասիրությամբ երևան են հանվում նրանց ձայնաբանական հատկանիշները՝ (ձայն, աղմուկ, երանգ,

1 Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, հ. 2, Երևան, 1974, էջ 61—82:  
Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 123—190:  
Գ. Ջառուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմնաքննիչը, Երևան, 1974, էջ 57—118: Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 79—90: Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Երևան, 1979, էջ 5—124:

երկարություն և այլն): Հնչյունների վերոհիշյալ բնախոսական և ֆիզիկական-հատկանիշների ուսումնասիրությունը գրադպրոց բաժինը կուղղվում է հնչյունախոսություն:

Հնչյունների հասարակական-պատմական ուսումնասիրության նպատակն է քննել լեզվի հնչյունական (հնչյունաբան) համակարգը նրա հասարակական գնահատման և լեզվական դերի հիման վրա, բացահայտել հնչյունների փոփոխության պատմական օրինակափոխությունները:

Հնչյունների (հնչյունների) համաժամանակյա օրինակափոխություններով, հնչյունաբան-համակարգի գաղափարով, հնչյունների փոփոխման հարցերով, այսինքն՝ նրանց գործառական հատկանիշների քննությամբ զբաղվում է հնչյունաբանությունը:

Հնչյունների (հնչյունների) տարածամասնակյա ուսումնասիրությամբ, նրանց փոփոխման պատճառների ու օրինակափոխականների պատմական գործընթացների բացահայտման ու պարզաբանման հարցերով զբաղվում է պատմական հնչյունաբանությունը:

### ԱՐՏԱՍԱՆՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի արտահայտության պլանը նյութական մասն է, լեզվական դրսևորման միջոցները, բովանդակության պլանը՝ լեզվական բոլոր տիպի իմաստները, ավելի լայն՝ լեզվի արտահայտության պլանը նյութական աշխարհի դրսևորումն է, բովանդակայինը՝ նյութական աշխարհի արտացոլումը:

Հնչյունների (հնչյունների) իբրև լեզվի նյութական նվազագույն միավորների ուսումնասիրությունը նպատակահարմար է կատարել՝ սկսելով խոսքի առավել մեծ միավորից և աստիճանաբար հասնել նվազագույն միավորին, թեև հնարավոր է նաև հակառակ կարգի ուսումնասիրությունը, այսինքն՝ նվազագույն միավորից աստիճանաբար բարձրանալ դեպի ամենամեծ, առավելագույն միավորը:

Արտասանվածի վերլուծությանն անցնելուց առաջ անհրաժեշտ է տարբերակել լեզու և խոսք հասկացությունները:

Լեզուն և խոսքը փոխհաջորդում են միմյանց: Խոսքն իրականանում է լեզվական միջոցներով: Լեզու բառը միատարր չէ և իբրև հաղորդակցման հիմնական միջոց և մտածողության ձև՝ արտահայտում է մի քանի իմաստ. ա) մարդկային լեզու՝ իբրև բարձր զարգացած մատերիալի՝ մարդուն հատուկ խոսողական կարողություն. բ) իբրև ժողովրդի (կամ նրա մի հատվածի) հաղորդակց-

ման միջոց. գ) իբրև անհատական լեզու՝ տվյալ անհատի հաղորդակցման միջոց:

Լեզու և խոսք: Լեզուն մի կուռ համակարգ է, միասնական միամբողջություն, որի մեջ բոլոր միավորները փոխադարձ կապի մեջ են գտնվում միմյանց հետ ու փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Մյուս կողմից՝ լեզուն անընդհատ գործընթաց (պրոցես) է, գտնվում է անընդհատ զարգացման մեջ:

Լեզուն յուրաքանչյուրի մոտ մի ներքին ունակություն է, որ նրան հնարավորություն է տալիս հաղորդակցվելու մի ուրիշի հետ: Այդ ունակությունը կյանք է ստանում, իրական վիճակի վերածվում այն ժամանակ միայն, երբ մարդ գործադրում է այն, այսինքն՝ մեկի հետ հաղորդակցվում, խոսում է: Լեզվական պատեհից կարողության այդ գործադրությունը կոչվում է խոսողություն: Այդ առումով լեզուն հանդես է գալիս իբրև տվյալ հանրության կարողությունը, լեզվական մի այնպիսի ունակություն, որ յուր ընդհանուր կողմերով գրեթե նույնությամբ գոյություն ունի ժողովրդի՝ այդ հանրության յուրաքանչյուր անդամի մոտ և ամփոփվում է տվյալ լեզվի քերականության և բառարանի մեջ, մինչդեռ խոսողությունը այդ կարողության դրսևորումն է, նրա գործադրումը:

Խոսողության լեզվական այդ ունակության գործադրման արդյունքը խոսքն է, այսինքն՝ այն միտքը (մտածությունը), որ համապատասխան լեզվական ձևավորումով (նախադասություն, նախադասության անդամներ և այլն) հաղորդվում է մեկից մյուսին: Խոսքն, այսպիսով, լեզվի իսկական գոյավիճակն է, լեզվի կյանքը: Խոսքի մեջ կոնկրետանում, միս ու արյուն է առնում մեր լեզվական ունակությունը (պոտենցիան): Խոսքը, մյուս կողմից, գոյություն է ստանում ինչպես խոսելու և գրելու, այնպես էլ կարգալու և լուռ, ինքնին մտածելու ժամանակ: Խոսքի մեջ չկա որևէ միավոր՝ նախադասություն, բառ, քերականական ձև, որ սերտ հարաբերության մեջ չլինի նույն խոսքի մյուս միավորների հետ: Խոսքը կազմող բոլոր միավորները մի անբաժանելի միասնություն են կազմում և, այս տեսակետից, առանձին նախադասությունները, նրանց վերլուծությունն ու առանձին տարրերի բաժանելը գիտական վերացարկում է, որն անհրաժեշտ է այդ խոսքը ճիշտ և բազմակողմանիորեն վերլուծելու համար<sup>2</sup>:

<sup>2</sup> Է. Ազայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, 89-271:

Լեզվի և խոսքի տարբերակումը, սովորաբար, համադրվում է դիտակցության և մտածողության հետ: Լեզվի ու խոսքի և դիտակցության ու մտածողության զուգահեռ համեմատության մեջ համապատասխանաբար առնչվում են լեզուն ու դիտակցությունը, խոսքն ու մտածողությունը: Ըստ որում, մտածողությունը (ինչպես և խոսքը) գործընթաց է, դիտակցությունը (ինչպես և լեզուն)՝ որոշակի գոյություն ունեցող վիճակ: Մտածողության յուրաքանչյուր գործողություն հենվելով դիտակցության վրա, վեր է ածվում դիտակցության փաստի:

Խոսքը դրսևորվում է հնչյունական շղթայի (հնչաշղթայի) միջոցով: Հնչաշղթան արտասանության ամենամեծ, առավելագույն միավորն է, վանկը՝ նվազագույն:

Խոսքի միավորների տարբերակումը կատարվում է արտասանվածի հատույթավորման միջոցով: Արտասանվածի հատույթավորումը կատարելով իմաստային հիմքի վրա, ստացվում են երկու կարգի անվանումներ՝ նախադասություն և հնչյունական նախադասություն (կամ հնչանախադասություն, հնչադասություն), շարույթ և հնչյունական շարույթ (կամ հնչաշարույթ), բառ և հրնչյունական բառ (կամ հնչաբառ):

Հնչական լեզուն՝ խոսքն ունի միայն իրեն հատուկ հնչյունական միջոցները, որոնք ուղղակիորեն առնչվում են լեզվի բովանդակության արտահայտմանը: Հնչական լեզվի միջոցներն են՝ հնչանախադասությունը, հնչերանգը, հնչաշարույթը (կամ խոսքային տակտը), հնչաբառը, վանկը և շեշտը: Հնչաշղթայի առանձին օղակները՝ հնչանախադասությունը, հնչաշարույթը (խոսքային տակտը), հնչաբառը, վանկը և հնչույթը առավելագույնից նվազագույնը իջնող աստիճանականությամբ առանձին միավորներ են: Արտասանվածի հատույթավորման առանձին միավորները միմյանցից, նախ, տարբերվում են իրենց հնչման տևողությամբ, և ըստ այդմ էլ՝ հնչանախադասությունն իրեն առավելագույն միավոր ունի հնչման ամենամեծ տևողությունը, իսկ հնչույթն, ընդհակառակը, ներկայացնելով ամենափոքր հատույթը, համապատասխանաբար օժտված է հնչման ամենանվազագույն տևողությամբ:

Հնչաշղթան բաժանվում է որոշակի հատվածների, որոնք բնութագրվում են սկզբնային և վերջնական տևական դադարներով, ավարտային էլեկտրոնով: Արտասանվածի հատույթավորման մեջ մեծ է հատկապես դադարի դերը: Նրա անհրաժեշտությունը բխում է հնչաշղթան ըստ իմաստների հատույթավորման պահանջից: Անհրաժեշտ է նշել նաև, որ շարահյուսական նախա-

դասությունը և հնչանախադասությունը խոսքում կամ հնչաշղթայում միշտ չէ, որ համընկնում են: Շարահյուսական նախադասությունը իբրև բովանդակության պլանի միավոր, առաջին հերթին շարահյուսական միավոր է և որպես կառուցվածքային սխեմա՝ զուրկ է հնչերանգից: Հնչանախադասությունն իբրև արտահայտության պլանի միավոր, նախադասության նյութական դրսևորումն է և ձևավորվում է հնչերանգի շնորհիվ: Շարահյուսական և հնչական նախադասությունների ակնհայտ տարբերությունները բխում են նրանց փնահաստման մեկնակետից: Վերջին հաշվով, առաջին դեպքում, նախադասությունը հանդես է գալիս իբրև քերականական (շարահյուսական) միավոր, հնչանախադասությունը՝ հնչյունական միավոր: Շարահյուսական նախադասությունն ու հնչանախադասությունը ձևով նույնը լինելու կամ համընկնելու դեպքում անգամ, դրանք քննվում են տարբեր տեսանկյունով:

Խոսքի հիշյալ միավորներն ստանալու համար անհրաժեշտ է կատարել արտասանվածի հատույթավորում. այսպես, օրինակ՝ Ծախմ անուշ Հայաստանի արևանամ բառն եմ սիրում, Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում, Արեանման ծաղիկներին ու վարդերի բույրը վառման, Ու Նաիրյան աղբիկների հեզանդ կուն պարն եմ սիրում— հնչաշղթան կազմված է մի քանի (չորս) հնչանախադասություններից, որոնք ձևավորվում են հնչերանգի միջոցով. հնչանախադասությունները և այնուհետև ավելի փոքր միավորները տարբերակվում են դադարներով, համապատասխան շեշտերի շնորհիվ: Բերված հնչաշղթայի առանձին միավոր է՝ Ծախմ անուշ Հայաստանի արևանամ բառն եմ սիրում հնչանախադասությունը: Այն իբրև հնչական առավելագույն միավոր՝ ավարտուն միտք արտահայտող ասուրյուն է, որ միավորված է հատուկ հնչերանգով և այդ հնչաշղթայի նման միավորներից առանձնանում է զազարով:

Այսպիսով, հնչանախադասությունը արտասանվածի այն միավորն է, որ ամբողջանում և ձևավորվում է հնչերանգի միջոցով: Մյուս կողմից, քերականորեն իբրև մտքի ավարտուն կազմություն՝ այն ունի խթնուրույն, անկախ գործածություն: Հնչանախադասության համար հնչման տեսակետից հատկանշականը երկու համեմատաբար մեծ դադարների միջև գտնվող հնչերանգային միասնությունն է: Հնչերանգային այդ միասնությամբ է, որ Ծ. Զա-

<sup>3</sup> Հմմտ. Հեյբանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 130, 146—148, 177:

րենցից բերված օրինակում տարբերակվում, առանձնանում են՝  
ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում և Մեր հին  
սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում հնչանախադա-  
սությունները:

Հնչեռանգը սերտորեն կապված լինելով նախադասության  
նպատակային բովանդակության հետ՝ բնութագրում է ինչպես ամ-  
բողջ հնչանախադասությունը, այնպես էլ նրա առանձին մա-  
սերը (հնչաշարությունը, հնչաբառերը և այլն): Հնչերանգը հան-  
դես է գալիս որպես հնչաշղթայի վերհնչություն կամ վերհա-  
սույթային հատկանիշների որոշ հարաբերություն, որ ուժգնու-  
թյան, տևողության և բարձրության տարբերությունների պարբե-  
րականության դեպքում դրսևորվում է որպես ութիմ: Հնչերանգը  
քերականական ձևավորման միջոց է, ինքնուրույն հնչական միա-  
վոր, որը թեև առնչվում է քերականությանը, բայց չի ստորադաս-  
վում նրան: Այն ավելի կապված է հաղորդակցման նպատակա-  
դրման, քան թե նախադասության կառուցվածքի հետ: Հնչերանգը  
կատարում է մի շարք կարևոր գործառնություններ. այն ոչ միայն  
ձևավորում է հնչանախադասությունը, զանազան շարահյուսական  
կառուցվածքներ (հնչական միավորներ), այլև մասնակցում է  
մտքի, գեղարվեստների, կամքի արտահայտմանը: Հնչական խոս-  
քի, հնչաշղթայի միևնույն հատվածը, նայած ինչպես և ինչ հրնչ-  
երանգով է արտաբերվում, կարող է ունենալ տարբեր իմաստներ,  
օրինակ՝ Արմենը եկավ, Արմենը եկավ, Արմենը եկավ և այլն:  
Պատմողական խոսքի հնչերանգը բնութագրվում է հնչանախա-  
դասության սկզբում տոնի բարձրացմամբ և վերջում՝ իջեցմամբ:  
Հարցական հնչանախադասությանը բնորոշ է տոնի կտրուկ բարձ-  
րացում վերջում, բացականչական նախադասությանը՝ հավասար  
բարձր հնչերանգ:

Հնչերանգի կարևոր գործառնություններից մեկն էլ այն է, որ նրա  
օգնությամբ է կատարվում հնչանախադասության հատույթավոր-  
ումը (մասնատումը) հնչերանգա-իմաստային հատվածների՝ շա-  
րույթների և հնչաշարույթների:

Հնչաշղթայի հաջորդ միավորը հնչաշարույթն է: Հնչաշարույ-  
թը կամ խոսքային տակտը հնչանախադասության առանձին միա-  
վոր է, երբ հնչանախադասության ներսում կատարվող դադարի  
հետևանքով առաջանում են մեկից ավելի հատվածներ: Օրինակ՝  
ես իմ անուշ /Հայաստանի/ արևահամ բառն եմ /սիրում հնչանա-  
խադասությունը կազմված է չորս խոսքային տակտից կամ հնչա-  
շարույթից, որոնք անջատվում են դադարներով և բնութագրվում  
են անավարտվածության հնչերանգով: Հնչաշարույթում կամ խոս-

քային տակտում դադարները ավելի կարճ են, քան հնչաշղթայի  
ավելի մեծ միավորների՝ հնչանախադասությունների դադարները:  
Կառուցվածքային տեսակետից հնչաշարույթները կամ հնչատակ-  
տերը հնչաբառերի այնպիսի կապակցություններ են, որոնք հըն-  
չանախադասությունների համեմատությամբ արտահայտվում են  
սկզբնային և վերջնային ավելի փոքր դադարներով և ելևէջային  
որոշակի բնութագրով:

Փորձառական ուսումնասիրության ավյալներով<sup>4</sup> հնչաշարույ-  
թի արտասանման ժամանակ (ինչպես և բառերի) արտաբերու-  
թյունն սկսվում է հնչման ուժի որոշակի ուժգնությամբ, որն աս-  
տիճանաբար նվազում է մինչև շարույթը եզրափակող միավոր-  
ները: Հնչման ուժի որոշակիություն է նկատվում հնչաշղթայի  
այն հատվածներում, որտեղ առկա են իմաստի բնդգծում ունեցող  
միավորներ: Այդ նույն ավյալներով, լսողական մակարդակում  
հնչաշարույթները միմյանցից որպես կանոն բաժանվում են դա-  
դարով, որը կարող է երբեմն հնչման իրական ընդհատում չունե-  
նալ: Առանձին դեպքերում շարույթները հատույթավորվում են  
հնչանախադասություններից՝ արտասանության տեմպի փոփոխ-  
մամբ, որի տարբերությունները նկատելի են դառնում երկու շա-  
րույթների սահմանագծում: Պետք է հաշվի առնել նաև այն հան-  
գամանքը, որ հնչյունական շղթայում շարույթները պատրաստի  
տրված միավորներ չեն, այլ կազմվում են խոսքային գործունեու-  
թյան ընթացքում, և խոսողի կողմից շարույթների հատույթավոր-  
ումը կատարվում է այդ միավորների իմաստների ամբողջակա-  
նության գիտակցման շնորհիվ: Շարույթի կազմավորմանը մաս-  
նակցում են՝ շարույթային շեշտը (որ գրվում է հնչաշղթայի այդ  
հատվածի առավել կարևոր գիտակցվող բառի վրա), ինչպես  
նաև տոնն ու դադարը:

Հնչաշարույթն իր կառուցվածքով շատ կողմերով կարող է  
համեմատվել քերականական-շարահյուսական միավորի՝ բառա-  
կապակցության հետ: Հնչաշարույթն ու բառակապակցությունը  
հնչաշղթայում հաճախ չեն նույնանում նախ և առաջ այն պատ-  
ճառով, որ առանձին հնչաշարույթ կարող է կազմել երբեմն մեկ  
հնչաբառ. ինչպես օրինակ, բերվող հնչանախադասության մեջ՝  
ես իմ անուշ /Հայաստանի/ արևահամ բառն եմ /սիրում: Այնու-  
հետև՝ հաճախ բառակապակցությունը կարող է լինել ինչպես մեկ

<sup>4</sup> Հմտ. Հնչեռանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ  
205—206:

շարույթի կազմում (օրինակ՝ Ես իմ զուգ /արևանալ բառն եմ/),  
այնպես էլ բաժանվել տարրեր շարույթների վրա:

Հնչաշարույթի հիմնական առանձնահատկությունն այն է, որ  
նրանում ընդհանրապես միավորվում են մեկ և մեկից ավելի հըն-  
չարառեր: Հնչաշարույթն իրրև հնչանախադասության մեկ հատ-  
ված, ինչպես նաև հնչյունային համակարգի հասկացություն, ուղ-  
ղակի կապ ունի լեզվի բովանդակության արտահայտման հետ:  
Հնչաշարույթի փոփոխմամբ հաճախ փոխվում է նաև ամբողջ  
հնչանախադասության բովանդակությունը: Օրինակ՝ Քա՛ղ /զեա  
բողոքի, բող գեա /բողոքի՝, բող գեա՛ /բողոքի:

Հնչանախադասության հատույթավորմամբ ստացվող հաջորդ  
միավորը հնչաբառն է: Հնչաշարույթը կամ խոսքային տակառը  
տրոհվում է հնչական ավելի փոքր միավորների՝ հնչաբառերի:  
Հնչաբառը հնչաշարույթի մեկ հատվածն է, որը միավորված է  
միասնական մեկ շեշտով:

Հիշյալ հնչանախադասությունը հատույթավորվում է՝ Ես /իմ/  
անույ/Հայաստանի/արևանալ/բառն /եմ/սիրում հնչաբառերի:

Հնչաբառի առանձնացման կամ տարրերակման համար հիմք է  
ծառայում նրա շեշտակրությունը: Հայերենի բառային հիմնական  
շեշտի կայուն վերջնավանկային լինելու պատճառով արտասանու-  
թյան ընթացքում ազդարարվում է բառերի սահմանների մասին,  
որով և հնչաբառերը տարրերակվում կամ առանձնանում են հըն-  
չաղթալում կամ սվյալ հնչանախադասության մեջ: Հնչաբառին՝  
իրրև խոսքի հնչյունական համակարգի կամ արտահայտության  
պլանի միավորի, համապատասխանում է լեզվական համակարգի,  
բովանդակության պլանի միավոր՝ բառը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ որոշ դեպքերում մեկ հնչաբառը  
կարող է պարունակել մեկից ավելի բառեր, որոնք իրենց շեշտա-  
զրկության պատճառով միանում են շեշտակրի բառերին, օրինակ՝  
գալիս եմ, երգում եմ, մի կողմ /զեալ/ և այլն: Մյուս կողմից,  
հնչաբառերը կարող են լինել ինչպես բառի ուղիղ, այնպես էլ  
թեքված ձևեր, այսինքն՝ բառեր և բառաձևեր: Հնչանախադասու-  
թյան մեջ հնչաբառերի քանակը փաստորեն որոշվում է բառային  
հիմնական շեշտերի քանակով: Յուրաքանչյուր հնչախախադասու-  
թյուն կունենա շեշտերի քանակությանը համապատասխան հըն-  
չաբառեր: Հնչանախադասության հատույթավորման ժամանակ  
բոտ ստորակարգության հնչաբառին հաջորդող մյուս միավորը  
վանկն է:

Վ Հայերենում վանկը ինքնուրույն իմաստակիր միավոր չէ՞  
Բնախոսական (ֆիզիոլոգիական) տեսանկյունով վանկը հնչաբա-  
ռի մաս է համարվում: Այն կազմված է մեկ և ավելի հնչույթներից  
և արտաբերվում է օդի հոսանքի մեկ արտամղումով: Չայնա-  
բանական տեսանկյունով վանկը բառ է կամ բառի մի մասն է՝  
կազմված մեկ և ավելի հնչյուններից և բնորոշվում է հնչման  
ուժգնությամբ (ուժով):

Վվանկի մեջ հնչյուններից մեկը ավելի հնչուն է մյուսների  
համեմատությամբ Այդ վերջինս էլ կոչվում է վանկարար հնչյուն  
և վանկ է կազմում: Մյուսները ոչ-վանկարար հնչյուններ են:  
Իրրև վանկարար հնչյուններ ժամանակակից հայերենում հանդես  
են գալիս ձայնավորները, որոնց շուրջը խմբվում են ոչ-վանկա-  
րար հնչյունները՝ բաղաձայնները: Օրինակ՝ աբ-տա-հա-նել, բա-  
ցա-տը-րել, գա-րուն, ա-մառ, լը-սա-րան և այլն:

Հնչաբառում վանկերի քանակը կախված է ձայնավորների  
քանակից: Հայերենում առանց ձայնավորի վանկ չի կազմվում,  
մինչդեռ բառի մեջ մեկ ձայնավորը առանց բաղաձայնի կարող  
է վանկ կազմել: օրինակ՝ ա-մառ, ա-տել և այլն: Վ Հայերենում  
վանկ կարող է կազմվել մեկ ձայնավորից՝ ինչպես նաև մեկ ձայ-  
նավորից և մեկ կամ ավելի բաղաձայններից: Վվանկը փակ է կոչ-  
վում, երբ վերջանում է բաղաձայնով (օրինակ՝ տուն, պարտք, գե-  
րան, սե-ղան, զրկ-վել, սե-յակ): Վվանկը բաց է կոչվում, երբ  
վերջանում է ձայնավորով (օրինակ՝ այ-գի, ա-նու, ա-պա):

Վ Բառերը կարող են կազմված լինել մեկ վանկից (օրինակ՝ է  
/սասված, էակ/, առդ, մարդ, գառ, լեռ, հող, քար, շուն, գալլ և  
այլն) և մեկից ավելի վանկերից (անտրամադրվածություն, այ-  
գեպտղաբանչաբարություն և այլն):

Վ Հայերենում կան բառեր, որոնք կազմված են մեկ և կես  
վանկից (գաղտնավանկից). այդ դեպքում գրության ժամանակ  
գաղտնավանկ է ձայնավորը չի գրվում, բայց արտաբերվում է՝  
օրինակ՝ սկիզբ—ըս-կիզբ, սկսել—ըս-կը-սել, սպանդ—ըս-պանդ,  
տխմար—տրխ-մար, տգետ—տը-գետ, տախլ—տը-տիլ և այլն:

Վանկը տարրալուծվում է հնչյունների (հնչույթների): Հընչ-  
յունների առանձնահատկությունն այն է, որ նրանք մեկուսացած  
հանդես չեն գալիս և որպես լեզվի նյութական նվազագույն միա-  
վորներ՝ այլևս անբաժանելի են:



ա) Երկու ձայնավորի միջև գտնվող մեկ բաղաձայնը անցնում է երկրորդին, ինչպես՝ ա-սել, կա-րել, տե-րու-նի, բե-րան:

բ) Երկու ձայնավորի միջև գտնվող երկու բաղաձայնները (այդ թվում և ձայնորդ բաղաձայնները) բաժանվում են երկու վանկի վրա, ինչպես՝ ամ-րոց, կար-գել, ար-դեն, կան-գուն:

Գաղաձայնակա ը-ի դեպքում գործում են հետևյալ կանոնները.

ա) Բառասկզբում գրվող երկու բաղաձայնների միջև երբ արտասանվում է ը, այդ երկու բաղաձայնները բաժանվում են երկու վանկերի վրա, ինչպես՝ զը-ծում, կը-ղեւ, տը-ղա, ժը-րա-շան:

բ) Առանձին են մնում ս, դ, շ + պայթական կապակցությունները, որոնք եթե ձայնավորի սղումով չեն ստացվել, ր-ն ստանում են առջևից՝ դարձյալ բաժանվելով երկու վանկի վրա, ինչպես՝ ըս-տա-նալ, ըս-պառ-նալ, ըս-կիգր, ըշ-տա-պել, ըս-կը-սել:

գ) Բառասկզբում գրվող երեք բաղաձայններից առաջին երկուսը մեկ վանկ են կազմում, եթե նախորդում հիշված ս, դ, շ + պայթական կապակցություն չեն, իսկ երրորդն անցնում է հաջորդ վանկին. զըզ-ջալ, կըը-կին, դըը-դել, զըն-դան, դըս-րոց, դըծ-վար, մըկ-րատ, զըր-բաց:

դ) Բառասկզբում գրվող շորս բաղաձայններից առաջին երեքը կազմում են մեկ վանկ՝ առաջինից հետո արտասանվող ր ձայնավորով, իսկ շորորդն անցնում է երկրորդ վանկին, եթե երկրորդ և երրորդ բաղաձայնների կապակցությամբ կարող է վերջանալ բառը, ինչպես՝ շըրթ-նատ, կըրկ-նութուն, լըրշ-միա: տըրտ-մութուն, թըմը-կա-նար:

դ) Բառասկզբում գրվող շորս բաղաձայնները բաժանվում են երեք վանկի վրա, արտասանվող ը ձայնավորով, եթե երկրորդ և երրորդ բաղաձայնների կապակցությամբ բառերը չեն կարող հանգել, ըստ որում, ը ձայնավորն արտասանվում է առաջին բաղաձայնից հետո և երկրորդի ու երրորդի միջև, եթե առաջին երկուսը ս, դ, շ + պայթական կապակցություն չեն ներկայացնում, և բառասկզբում և երկրորդի ու երրորդի միջև, եթե ս, դ, շ + պայթական կապակցություն է, ինչպես՝ դը-դըր-դյուն, սը-ըըս-կել, բը-ըըն-կել, շը-ըըն-շան, նը-կըր-տել, կը-ըըն-չել, մը-կըր-տել, զը-մըռ-սել, զը-ըըմ-փալ, դը-ըըն-բաց: Բայց՝ ըս-պըր-դել, ըս-կըզ-բունք, ըս-տըն-տու:

ե) Բառասկզբում գրվող հինգ բաղաձայններից առաջին երկուսը կազմում են մեկ վանկ, երրորդն ու չորրորդը՝ երկրորդ վանկը, իսկ հինգերորդը անցնում է երրորդ վանկին. ինչպես՝

մըշ-տըն-ըե-նա-վար, թըր-թըն-ջուկ, կըն-տըն-տոց, տըր-տըն-շալ, ֆըր-խըն-ջալ:

Երբեմն առաջին բաղաձայնն է կազմում մեկ վանկ, երկրորդ, չորրորդ և չորրորդ բաղաձայնները՝ երկրորդ վանկը, և հինգերորդն անցնում է երրորդ վանկին, ինչպես՝ ըս-կըզը-նական, բը-ըընց-խամարտ, բը-ըընկ-վել:

Բառամիջում գործում են հետևյալ կանոնները.

ա) Երեք բաղաձայններից բազկացած կապակցություններից, եթե առաջին երկուսը սովորաբար այնպիսիներն են, որոնցով բառերը կարող են հանգել, առաջին երկուսն անցնում են նախորդող, իսկ երրորդը՝ հաջորդող ձայնավորին. ինչպես՝ բարձ-բա-րեւ, կարձ-բա-նյաւթ, բեղմ-նա-վոր, արբ-շիռ:

բ) Չորս բաղաձայններից բազկացած կապակցություններից առաջինն անցնում է նախորդ վանկին, երկրորդն ու երրորդը կազմում են մեկ վանկ՝ ը ձայնավորով, չորրորդն անցնում է հաջորդ վանկին. ինչպես՝ եր-կըն-չել, մար-տըն-չել, րն-կըր-կել, ան-կըր-բու-քյուն, րնդ-գըր-կել, րնդ-նըշ-մարել:

գ) Հինգ բաղաձայնների բառակապակցություններով բառերը քիչ են և այն էլ՝ նախածանցներով կազմված, ինչպես՝ ան-կըրկ-նելի, ան-տըրտ-մա-բար:

Վերջավանկի բաժանումը պայմանավորված է հետևյալ կանոններով.

ա) Եթե երկու բաղաձայններն այնպիսի կապակցություններն են կազմում, որոնցով կարող են հանգել բառերը, ապա նրանք նախորդ ձայնավորի հետ մեկ վանկի են պատկանում. ինչպես՝ բարձ, կարն, բը-միջի, իսկ եթե այդպիսին չեն, ապա երկուսը միասին մեկ վանկ են կազմում՝ ը ձայնավորով, տա-բըր, ան-դո-բըր:

բ) Երեք բաղաձայններից վերջահար երկուսը մեկ վանկ են կազմում՝ ը ձայնավորով, իսկ առաջինն անցնում է նախորդ վանկին. ինչպես՝ աս-տըլ, կար-ծըր, դուս-տըր:

գ) Վերջահար ս, դ, ն հոդերը բաղաձայնից հետո՝ նախորդ բաղաձայնի հետ ը-ով կազմում են մեկ վանկ. ինչպես՝ բար-ծըն, բը-միջ-կըն, բարձ-բըն, տաբ-բըն, ա-տամ-նե-բըն, ան-դոբ-բըն՝:

ՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԸ

Հայերենում բառասկզբի և բառամիջի վանկերի համեմատությամբ առանձին արտասանվող բառի վերջին վանկը կամ բա-

Ե. Աղայան, Գրքարի քերականություն, Երևան, 1964, էջ 252-256:

զագրիչն ունի համեմատաբար երկար տեղություն: Սովորաբար շեշտավոր վանկը արտասանվում է ավելի մեծ ուժգնությամբ: Ուժգնության շեշտն արտահայտվում է օդի հոսանքի առավել ուժեղ արտամղումով, հետևաբար և բառի վերջավանկի վանկաբար ձայնավորի ավելի ուժեղ արտասանությամբ: Շեշտավոր վանկը ձայնաբանորեն տարբերակվում է ձայնի բարձրությամբ, բնախոսորեն (ֆիզիոլոգիական տեսակետից) մկանային լարվածության և արտաշնչման ուժեղությամբ: Շեշտավոր վանկը որակական տեսակետից էլ է տարբերվում ոչ շեշտավորից: Շեշտավոր վանկի արտասանությունն ավելի հստակ է, մինչդեռ անշեշտ վանկերը թուլանում և հստակ չեն արտասանվում<sup>6</sup>:

Շեշտը լինում է բառային և տրամաբանական կամ իմաստային:

Շեշտը բառային է կոչվում այն դեպքում, երբ այն դրվում է վանկի վրա, բառի մեջ շեշտվում, առանձնացվում է առանձին վանկը: Շեշտը կարող է լինել տրամաբանական կամ իմաստային, երբ հնչանախադասության մեջ առանձնացվում, շեշտվում է առանձին, ամբողջական բառը, և որոշակի իմաստային երանգավորում է ստանում նախադասությունը: Տրամաբանական շեշտի դեպքում հիմնական դերը պատկանում է հնչերանգին, երբ խոսողը ձայնի տարբեր ելևէջներով բարձրացումով կամ իջեցումով ցանկանում է ընդգծել, թե մտքի տեսակետից նախադասության որ բառի (կամ բառերի) իմաստն է կարևոր:

Հայերենի շեշտը կայուն է և, որպես օրենք, ընկնում է վերջին վանկի վրա: Միաժամանակ այն կայուն-շարժական է. այսինքն՝ բառի աճման, նորանոր վանկերի առաջացման դեպքում շեշտն անցնում է միշտ վերջին վանկին. ինչպես, օրինակ՝ քաղա՛վ-հաղախի՛, հաղախնե՛րի՛, հաղախբնա՛կ, հաղախբնակնե՛ր, հաղախբնակնե՛րի՛ և այլն:

Եթե բառն ավարտվում է գաղտնավանկով, շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա. օրինակ՝ ուրե՛մն, երբե՛մն, բստ ա՛յլմ և այլն:

Նախդիրները, բաղադրյալ շաղկապները, սովորական շարադասության դրական խոնարհման օժանդակ բայերը, հարադրավոր բայերի բայական բաղադրիչը և այլն շեշտ չեն ընդունում և հարում են շեշտակիր բառերին. ինչպես, օրինակ՝ առ ա՛յժմ, ի

<sup>6</sup> Է. Ալայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 158—159, Թ. Ղարազուլյան, ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսությունը, Երևան, 1974, էջ 218—224:

գիտություն, ցնա՛ր (հանդիպում), ըստ երևույթի՛ն, ընդ առա՛մ, բստ ա՛յլմ, այնպե՛ս որ, մինչև՛ իսկ, պա՛ր գալ, զո՛ւլս տալ, կրա՛կ ալ, գրո՛ւմ եմ, տեսե՛լ եմ (բայց՝ չե՛մ գրում, չե՛մ տեսել):

Որպես կանոն հայերենում բառն ունենում է մեկ հիմնական շեշտ: Որոշ բառեր և հատկապես բաղադրյալ՝ երեք և ավելի բաղադրիչներով կազմված բարդությունները, ինչպես նաև համա, հակ/ալ, վեր/ալ, գեք և այլ նախածանցներով կազմված որոշ բառեր, ունենում են նաև երկրորդ շեշտը, ինչպես, օրինակ՝ չե՛ր-մախկնորակենտո՛ւն, ո՛ւլտումանուրակագո՛ւյն, վե՛րեերյա՛, վե՛րաբա՛րձ, նա՛կախառավարակա՛ն, գե՛րհոգնածուրքո՛ւն, մա՛կ-ընթացություն, հե՛ծանվավա՛զգ, հե՛ծանվագրաա՛նք, հուշա՛կրծ-հանջա՛ն և այլն:

Այդ կրկնակ շեշտերը տարբերվում են իրենց ուժգնությամբ. մեկն ավելի ուժեղ է, մյուսը՝ համեմատաբար թույլ: Ուժեղ շեշտն ընկնում է բառի վերջին վանկի վրա և կոչվում է հիմնական կամ գլխավոր շեշտ, թույլն ընկնում է բառի առաջին բաղադրիչի առաջին կամ վերջին վանկի վրա և կոչվում է երկրորդական կամ կողմնակի շեշտ:

Հայերենի փոխառյալ բառերում նույնպես, որպես կանոն, շեշտն ընկնում է վերջին վանկի վրա՝ որը բխում է արտասանության (շեշտադրության) աղգային-բնախոսական առանձնահատկություններից: Այդ տեսակետից շեշտը նույնքան պահպանողական է, որքան մայրենի լեզվի հնչյունական համակարգը և քերականությունը:

Հայերենում շեշտադրման ընդհանուր կանոնից բացառություն են կազմում մի քանի կցական բարդություններ, որոնցում շեշտն ընկնում է առաջին վանկի վրա. ըստ երևույթին, դրանք նախկինում լինելով հարադրական բարդություններ, վերջապես՝ երկրորդ բաղադրիչը շեշտ չի ընդունել և հարել է շեշտակիր՝ առաջին բաղադրիչին, ինչպես, օրինակ՝ մի՛թե, նո՛ւյնիսկ, նո՛ւյնպես, նո՛ւյնչափ, Ե՛րբէ, Ե՛րբիցե և այլն: Այս կարգի բառերում նկատվում է շեշտի վերջին վանկի տեղափոխման որոշակի միտում:

Շեշտադրման անկանոնություն է նկատվում նաև -երորդ բաղադրիչով կազմված մի շարք դասական թվականներում և դերանուններում. ինչպես՝ ին՛նգերորդ, վե՛ցերորդ, ո՛րերորդ, քա՛նգերորդ. կամ՝ քա՛նսունվե՛ցերորդ, տասնյո՛թերորդ, քա՛ննի՛նգերորդ և այլն:

Արտասահմանի վերլուծության ընթացքում պարզվեց, որ հնչյունը խոսքի նվազագույն միավորները հնչյուններն են: Գրանք իբրև նյութական նվազագույն, հնչման տեսակետից ազևս անբաժանելի միավորներ հանրորեն գիտակցվում և արժեքավորվում են:

Ինքավարանական գիտակետով հնչյունները լեզվում որոշակի գործառույթ են կատարում: Նրանք ոչ միայն բառի նյութական պատյանն են, այլև տարբերակում են բառերն ու բառաձևերը, հետևաբար և նրանց իմաստները: Հնչյունները լեզվում ունեն բառատարբերակիչ և իմաստատարբերակիչ նշանակություն: Այսպես, օրինակ՝ բարդ և բուրդ, բար և բոր, բեր և բոր զույգերն իբրև պոանձին բառեր կամ բառաձևեր՝ տարբերվում են ձայնավորներով, ես և եզ, պատ և բառ, բեր և բեր, դուս և տաս զույգերը՝ բաղաձայններով:

Բնության մեջ հանդիպող բոլոր հնչյուններից լեզվաբանական գիտակետը տարբերում է միայն մարդկային խոսքի հնչյունները, ավելի ճիշտ՝ հնչույթները, որոնք ընդունակ են կատարելու սոցիալական գործառույթ՝ հաղորդակցման ընթացքում տարբերակելով լեզվի իմաստակիր միավորները: Այդ առումով էլ հնչույթը դիտվում է իբրև լեզվի հնչյունական համակարգի հիմնական միավոր:

Հնչյունների ձևավորումը, արտաբերումն ու ընկալումը ֆիզիկական-բնախոսական (ֆիզիոլոգիական) երևույթ է: Հնչյուններն ստեղծվում են օդի տատանման և խոսողական՝ հնչարտաբերական գործարանների որոշակի գործունեության շնորհիվ: Այդ առումով էլ հնչյունը կարելի է դիտել իբրև մարդու արտասահական (արտաբերական) գործունեության և ընկալման արդյունք:

Հնչյունների բնախոսական (ֆիզիոլոգիական) էությունը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ մարդու հնչարտաբերական գործարաններին և պարզել դրանց յուրաքանչյուրի դերը այս կամ այն հնչյունի ձևավորման (կազմավորման), ստեղծման և արտաբերման ժամանակ:

Հնչարտաբերական գործարաններ

Մարդկային (խոսքի) հնչյունների արտաբերման գործարաններն են՝ թոքերը, շնչափողը, կոկորդը (խռչակը), ձայնալարերը, կոկորդի խուփը՝ մակալիզոն, բերանի խոռոչը, լեզուն, կոշտ և

փափուկ ջիմբերը, փոքր լեզվակը, վերին և ներքին առամնաշարերը, շրթունքները, ջքի խոռոչը:

Այդ գործարաններից յուրաքանչյուրն իր որոշակի դերն ունի այս կամ այն հնչյունի ձևավորման և արտաբերման գործում: Խոսողական գործարանների աշխատանքը ղեկավարվում է ուղեղի հատուկ կենտրոնի կողմից:

Թոքերը, կոկորդը, շնչափողը, բերանի և ջքի խոռոչները մարդու կենսագործունեության համար կոչված են կատարելու իրենց բնախոսական (ֆիզիոլոգիական) հիմնական դերը՝ շնչառությունն ու մարսողությունը:

Նշված օրգանների համար խոսողական-արտասահական գործողությունը հիմնական չէ, այլ՝ երկրորդական: Թոքերի հիմնական դերը օդի հոսքի մատակարարումն է: Միակ գործարանները, որոնք մարդու էվոլյուցիոն զարգացման ընթացքում հարմարվել և ծառայում են հատկապես խոսողության-արտասահական պահանջներին՝ խռչակն ու ձայնալարերն են: Խռչակը գտնվում է շնչափողի վերջնամասում, բաղկացած է վահանաձև և մատնաձև կոճիկներից: Վահանաձև կոճիկի վերևում գտնվում է մակկոկորդը (կոկորդախուփը), որը սնունդ ընդունելիս փակում է շնչափողի ճանապարհը: Մատնաձև կոճիկին միացած են երկու շարժական շերտիաձև կոճիկներ, որոնց ամրացած են ձայնալարերը: Ձայնալարերը երկու շարժուն և ձգված մկաններ են, որոնք կարող են մոտենալ իրար՝ փակելով օդի անցքը, կարող են իրարից հեռանալ՝ առաջացնելով ճեղք, որ կոչվում է ձայնածեղք:

Մարդու խոսողական գործարանները հնչյուններն առանձնացնելու և որոշակի հաճախականությամբ ուժեղացնելու համար բնականի, բերանի տարբեր մասերում և ջքի խոռոչում կազմում են հնչարաններ: Հնչարաններում առաջանում են լրացուցիչ ձայներ, որոնք շերտավորվելով հիմնական ձայնի վրա՝ հնչյունին տալիս են հատուկ երանգավորում:

Ըմպանային հնչարանը կազմված է ետին կողմից երախի պատից, վերեկից՝ փափուկ ջիմբից, առջևից՝ լեզվի արմատից: Ըմպանի հնչարանում կատարվում է ձայնի բանալի նախնական մշակում: Հնչյունի վերջնական ձևավորումը տեղի է ունենում բերանի և ջքի հնչարաններում: Հնչյունի ձևավորման համար անհրաժեշտ է ընդհանուր կատարում է բերանի խոռոչը:

Հնչյունի արտաբերման ժամանակ բերանի խոռոչը լեզվի ընդունած տարբեր դիրքերի շնորհիվ տարբեր ձևեր է ընդունում՝ կազմելով տարբեր շափերի և ձևերի հնչարաններ: Հնչարանական հետազոտությունների նկատառումներով լեզուն

նում են մի քանի մասերի՝ լեզվի ծայր, լեզվի առջևի, միջին և ետին մասեր, ինչպես նաև լեզվի կոթ: Բերանում լեզուն կարող է շարժվել առաջ և ետ, իջնել ու բարձրանալ, փոխելով բերանի խոռոչի ծավալն ու չափերը:

Բերանի խոռոչը կազմված է կոշտ և փափուկ քիմքերից, ըստորին ծնոտից, ատամներից (վերին և ներքին ատամնաշարեր), երակի պատից և լեզվից: Կոշտ քիմքի շարունակությունը կազմում է փափուկ քիմքը և ավարտվում է փոքր լեզվակով, որով բերանի խոռոչը կապվում է քթի խոռոչի հետ: Վարագույրի գերկատարող փոքր լեզվակը իջած դիրքում բացում է քթի խոռոչի անցքը, և ստեղծված բերանի ու քթի միացյալ հնչարանների շնորհիվ ձևավորվում է առանձին հնչյունների որակը: Այդ եղանակով, օրինակ, մ, ն ձայնորդները քթի խոռոչի ակտիվ մասնակցությամբ ստանում են լրացուցիչ ռնգային երանգ:

Բերանի խոռոչի խոսողական գործարանները բաժանվում են երկու խմբի՝ ակտիվ և պասիվ: Ակտիվ են կոչվում արտաբերության այն գործարանները, որոնք հնչյունների ձևավորման ու արտաբերության ժամանակ շարժման մեջ են գտնվում. այդպիսիք են՝ լեզուն, շրթունքները, ներքին ծնոտը, փոքր լեզվակը: Պասիվ են կոչվում այն գործարանները, որոնք շարժում չեն և հնչյունների ձևավորմանն ու արտաբերմանը մասնակցում են ակտիվ գործարանների շնորհիվ:

### Հնչյունների ֆիզիոլոգիան (ձայնաբանական) րևոլյուցիոնալը

Ֆիզիոլոգիան տեսակետից հնչյունը օդի տատանողական շարժման արդյունք է: Մարդկային հնչյուն ձևավորելիս՝ թոքերից դուրս մղված օդի հոսքը մի դեպքում տատանման մեջ է դնում ձայնալարերը, մյուս դեպքում տատանումներ է առաջացնում՝ շփվելով խոսողական գործարանների պատերին:

Հնչյունի ֆիզիկական (ձայնաբանական) հատկանիշներն են՝ հնչյունի ուժը, բարձրությունը, երկարությունը և երանգը:

Մարդու ականջը ընկալում է այն հնչյունները, որոնց տատանումները վայրկյանում հասնում են մինչև 16—20 հազարի: Ավելի բարձր տատանումների դեպքում անհնարին է դառնում հնչյունի ընկալումը, և ականջներում ցավ է զգացվում:

ա) Հնչյունի ուժը կախված է ալիքի տատանումների (թրթռումների) թափից. որքան մեծ է տատանումների թափը, այնքան ուժեղ է հնչյունը:

բ) Հնչյունի բարձրությունը կախված է տատանումների քանակից. վայրկյանում որքան շատ են տատանումները, այնքան

բարձր է հնչյունը: Ավելի լավ, հստակորեն ընկալվում են վայրկյանում 1500—3000-ի հասնող տատանումները:

գ) Հնչյունի երկարությունը կախված է նրանից, թե որքան են տևում այդ տատանումները:

դ) Հնչյունի երանգը կախված է հիմնական և ոչ հիմնական ձայների փոխհարաբերությունից:

Մարդկային (հնչական) խոսքի տեսակետից ապացուցված է, որ.

ա) խոսքի հնչյունների մեծ մասը մաքուր ձայն չի պարունակում, այլ աղմկավոր է:

բ) Հնչյունի ուժը որոշվում է արտաշնչվող օդի շիթի ձայնալարերի (կամ այլ խոչընդոտների՝ արգելքների) վրա գործադրած ճնշման ուժով:

գ) Հնչյունի բարձրությունը որոշվում է ձայնալարերի երկարությամբ և պրկվածությամբ:

դ) Ձայնավորի տևողությունը ավելի մեծ է, քան բաղաձայնների, բաղաձայններն էլ իրարից տարբերվում են տևողությամբ:

ե) Հնչյունի երանգը (տեմբր) որոշվում է բերանի և քթի խոռոչների ծավալով և ձևով, ինչպես նաև քիմքի գործունեությամբ:

Հնչյունի ձայնաբանական (ֆիզիկական) հատկանիշները որոշվում են տատանումների բնույթով՝ սիթմիկ տատանումներն առաջացնում են ձայն, ոչ-սիթմիկ տատանումները՝ աղմուկ: Հայերենում գերազանցապես ձայն են պարունակում ձայնավորները: Զգալի ձայն կա նաև ձայնորդ և ձայնեղ բաղաձայններում: Միայն աղմուկ են պարունակում հայերենի խուլ բաղաձայնները:

Ձայնալարերի՝ պիրկ (ձգված) վիճակում գտնված դիրքում, թոքերից դեպի կոկորդ (խուչակ) մղված օդի հոսքի շնորհիվ նրանք սկսում են տատանվել, առաջացնելով ձայն (երաժշտական տոն), որն անհրաժեշտ է ձայնավոր (ա, ի, է, ը, օ, ու), ձայնորդ (բ, ռ, լ, յ, մ, ն) և ձայնեղ (բ, գ, դ, վ, զ, գ, ժ, շ, ծ) հնչյուններ արտաբերելու համար:

Ձայնալարերի շնորհիվ առաջին անգամ մշակման ենթարկված ձայնը (երաժշտական տոնը) բարդ կազմություն ունի, բաղկացած է տատանման խիստ տարբեր հաճախականություն ունեցող բազմաթիվ բաղադրիչներից: Որոշակի ձև տալիս ձայնի հնչարանը կարող է այդ բաղադրիչներից մեկն առանձնացնել և ուժեղացնել, մյուսները՝ ոչ: Բերանի խոռոչում լեզվի գրաված տարբեր դիրքերի շնորհիվ ուժեղացվում է համապատասխան հաճախականության բաղադրիչը, որի շնորհիվ ձևավորվում են հայերենի տարբեր ձայնավորները:

Աղմկավոր, խուլ բաղաձայն հնչյունների ձևավորումը կատարվում է հետևյալ կերպ: Չայնալարերը իրարից հեռացած վիճակում դանկաթ դիրքում օդի հոսքը ազատ՝ անարգել անցնելով խուչակից չի շարժում, գործողության մեջ չի դնում ձայնալարերը: Այդ դեպքում վերջիններս ձայն (երաժշտական տոն) չեն ստեղծում. նրանց այդ դիրքն անհրաժեշտ է խուլ բաղաձայններ արտաբերելու համար: Խուլ բաղաձայնները ձևավորվում են ոչ թե ձայնի, այլ աղմուկի շնորհիվ: Աղմուկի որակը նույնպես ձևավորվում է բերանի խոռոչում: Չայնի (երաժշտական տոնի) նման աղմուկը նույնպես կազմված է տարբեր տատանման հաճախականության բաղադրիչներից: Գրանցից մի քանիսը հնչարանը առանձնացնում և ուժեղացնում է, մյուսները՝ մարում: Բերանի խոռոչում ստեղծված տարբեր փակվածքներում և նեղվածքներում, հնչարանի ընդունած տարբեր ձևերում ձևավորվում և արտաբերվում են խուլ բաղաձայն հնչյունները (ալ, ա, կ, ֆ, խ, ս, դ, ծ, ճ) և այլն:

Այսպիսով, հնչյունների որոշ մասը պարունակում է միայն ձայն, մյուսները՝ և՛ ձայն, և՛ աղմուկ, երրորդները՝ միայն աղմուկ: Չայնի և աղմուկի պարունակության և հարաբերության հաշվառումով էլ հնչյունները բաժանվում են ձայնավորների և բաղաձայնների:

Չայնավորները ձևավորվում են բացառապես ձայնի առկայությամբ, բաղաձայնների համար պարտադիր է աղմուկի առկայությունը:

Բոլոր հնչյունների բաժանումը ձայնավորների և բաղաձայնների պայմանավորված է արտաբերման և ձայնարանական հետևյալ առանձնահատկություններով.

ա) Չայնավորներին հատուկ է ձայնը (երաժշտական տոնը)՝ աննշան աղմուկի առկայությամբ: Այդ բացատրվում է նրանով, որ ձայնավորների ձևավորման ընթացքում խոսողական անցքը բաց է, խոսողական գործարանները այնպիսի դիրք են զբաղում, որի ժամանակ արտաշնչվող օդի ճանապարհին չեն հանդիպում որոշակի խոչընդոտներ: Այդ պատճառով էլ ձայնավորների արտաբերման դեպքում արտաշնչվող օդի հոսքը համեմատաբար թույլ է:

բ) Բաղաձայններին հատուկ է միայն աղմուկը, կամ աղմուկը՝ ձայնի որոշ առկայությամբ: Չայնի (երաժշտական տոնի) խառնումը աղմուկին լինում է մեծ կամ փոքր չափով (կախված՝ բաղաձայնների բնույթից): Չայնի և աղմուկի տարբեր հարաբերությունն առաջանում է հնչարտաբերական գործարանների մոտեցման կամ նույնիսկ փակման հետևանքով արտաշնչվող օդի հանդիպած տարբեր խոչընդոտների հաղթահարման շնորհիվ: Այդ-

պիսի խոչընդոտներ հաղթահարելու (անցնելու կամ վերացնելու) համար անհրաժեշտ է լինում ավելի մեծ ուժգնության արտաշնչվող օդի քան ձայնավորների արտաբերման դեպքում:

Ցուրաքանչյուր հնչյունի արտասանությունը բաղկացած է երեք հատվածից (ֆազից). 1) էլ, երբ արտասանական գործարանները իրենց դադարի վիճակից անցնում են տվյալ հնչյունի արտասանությանը նախորդող վիճակին, 2) պլան, երբ արտասանական գործարանները կատարում են տվյալ հնչյունն արտաբերելու համար անհրաժեշտ գործողությունը կամ գրավում ու պահպանում են անհրաժեշտ դրությունը, 3) դարձ, երբ արտասանական օրգանները վերադառնում են դադարի վիճակին կամ անցնում են հաջորդ հնչյունի արտասանությանը: Արտասանական գործողության այդ մասերը համապատասխանորեն կոչվում են նաև փակվածք, պլան և պայքյուն:

Հնչյունի դիրք (հնչյունադիրք), Հնչյունի դիրքը այն տեղն է, որ զբաղում է հնչյունը (հնչույթը) արտասանվածքի շղթայում: Տարբերակվում են մեկուսացած (չեղոք) և կապակցված հնչյունի դիրքերը, և՛ հնչյունը (հնչույթը) հանդես է գալիս հնչյունական միջավայրում (օր.՝ տար/տեր, բեր/բեր), ունենալով մերձավորագույն հակադրություններ:

Հնչյունական շղթայում՝ կապակցված հնչյունը (հնչույթը) կարող է լինել ուժեղ հնչյունադիրքում (հնչույթադիրքում), երբ հնչույթը առավելագույն իմաստատարբերակիչ հակադրություններ է ստեղծում և թույլ հնչյունադիրքում (հնչույթադիրքում) (ոչ հնչույթային դիրքում), երբ այն հնչույթաշղթայում իր գրաված դիրքի պատճառով վերածվում է հնչույթի տարբերակի (փոփոխակի): Հնչույթը գտնվում է շեղք դիրքում, երբ տվյալ հնչույթային հակադրության շեղքացում է տեղի ունենում:

### ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Չայնավորները դասակարգվում են երկու սկզբունքով: Առաջին սկզբունքի համար հիմք է ընդունվում լեզվի զբաղված դիրքը բերանում: Ըստ այդմ՝ հայերենի ձայնավորները բաժանվում են երեք շարքի՝ առաջին, միջին և ետին (կամ առաջնալեզվային, միջնալեզվային, ետնալեզվային):

Առաջին շարքի ձայնավորներն են՝ ի, է, ետին շարքինը՝ ա, օ, ու, միջին շարքին է պատկանում ը ձայնավորը:

Չայնավորների դասակարգման երկրորդ սկզբունքի համար հիմք են ընդունվում բերանում լեզվի բարձրացման տարբեր առիճանները: Հայերենի ձայնավորներն արտաբերելիս լեզուն՝ ունե-



նում է բարձրացման երեք աստիճան՝ ստորին բարձրացում, երբ արտաբերվում է ա (բաց) ձայնավորը, միջին բարձրացում, երբ արտաբերվում են օ, է, բ ձայնավորները, վերին բարձրացում, երբ արտաբերվում են ու, ի (փակ) ձայնավորները:

Ձայնավորների արտաբերման երանդի վրա որոշակի ազդեցություն է գործում շրթունքների դիրքը: Ըստ շրթունքների մասնակցության աստիճանի, հայերեն ձայնավորները լինում են շրթնայնացած և ոչ շրթնայնացած:

Շրթնայնացված են ու, օ ձայնավորները, քանի որ դրանց արտաբերության ժամանակ մասնակցում են նաև շրթունքները՝ կլորացած և ընդունելով<sup>8</sup>:

Ձայնավորների դասակարգման աղյուսակ

Ըստ բարձրացման	Ը ս տ շ ր ք ք փ		
	առաջին շարք	միջին շարք	երրորդ շարք
Ստորին բարձրացում			ա
Միջին բարձրացում	է	բ	օ
Վերին բարձրացում	փ		ու

Ձայնավորների տևողությունը հայերենում կապված է շեշտի հետ և լուծի հնչույթային, այսինքն՝ իմաստատարբերակիչ արժեք:

Ֆիզիկական բնույթով ձայնավորները նմանվում են երաժշտական ձայներին, բայց և տարբերվում են նրանցից իրենց հաճախականությամբ:

Ձայնավորները բնորոշվում են նաև ուժգնությամբ, որն ունի իր լսողության համարժեքը: Ուժգնությունն ընկալվում է իբրև ձայնի ուժեղություն և ուղիղ համեմատական է ձայնի լայնույթի (ամպլիտուդի) քառակուսուն: Որքան ուժգին (ինտենսիվ) է ձայնը, այնքան ավելի ուժեղ է այն հնչվում:

Հաճախականությունը ընկալվում է իբրև տոնի բարձրություն կամ ցածրություն:

Հնչյունի տեղությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում հնչվում է սովորական ձայնը: Տևողությունը չափվում է 1/1000 վրկ. կամ միլիվայրկյաններով:

<sup>8</sup> Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը, երանց արտաբերման և ֆիզիկական բնութագրերը սերվում են քստ Ա. Խաչատրյանի ուսումնասիրության արդյունքների շնորհիվ. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, 1979, էջ 74—18, 66—79:

Ձայնի հիմնական տոնը այն հաճախականությունն է, որով արտասանվում է սովորական ձայնավոր կամ ձայնեղ հնչյունը: Հաճախականությունը պայմանավորված է ձայնալարերի տատանումներով. նրա չափման միավորը հերցն է: Որքան շատ է ձայնալարերի տատանումների թիվը մեկ վայրկյանում, այնքան ավելի բարձր է հիմնական տոնը:

Ըստ հիմնական տոնի բացարձակ արժեքի՝ մարդկային ձայները բաժանվում են 3 խմբի. տղամարդու ձայն (80—250 հց), կանացի (200—400 հց), երեխայի (350—550 հց):

Ձայնավորների արտաբերական-արտասանական և ֆիզիկական ակարագրությունը

1) Առաջին շարքի վերին բարձրացման ի ձայնավորն ունի արտասանական հետևյալ բնութագիրը: Նրա արտաբերման ժամանակ լեզուն կծկվում է բերանի խոռոչի միջին մասում, մի փոքր ձգվում է դեպի առաջ և բարձրանալով դեպի կոշտ քիմքը՝ կազմում է դժբեթաձև բարձրություն: Այդ բարձրության դադար գտնվում է բերանի մեջտեղում, կոշտ քիմքի դիմաց: Երկրորդ և երրորդ սեղանատամների մոտ լեզվի եզրերը բարձրանում են և թեթև կալում կոշտ քիմքի եզրերին: Այդ շարքի մյուս ձայնավորի՝ է-ի համեմատությամբ ի-ի արտասանության դեպքում լեզվի բարձրության աստիճանը ամենամեծն է: Ամբողջ բերանային հնչարանը նեղանում է՝ վերածվելով մի անցքի, որը դեպի ետ լայնանում է և միանում կոկորդային լայն հնչարանին: Լեզվի ծայրը իջած է և միանում ու հենվում է ներքին ատամների ներսի մակերեսին: Շրթունքները շեղոք դիրք են զբաղում, ուստի այն ոչ շրթնայնացած ձայնավոր է: Փափուկ քիմքը բարձրացած վիճակում է՝ փակելով դեպի ռինոզային խոռոչը տանող օդի ուղին: Արտաբերության ժամանակ բերանի բացվածքի շատ փոքր լինելու պատճառով համարվում է նաև փակ ձայնավոր:

Ֆիզիկական բնութագիր: Ի ձայնավորը իր էներգիայով մյուսների (հետևապես Ա ձայնավորի) համեմատությամբ, ավելի թույլ է: Նրա տևողությունը Ա կամ Օ ձայնավորների համեմատությամբ ավելի կարճ է:

2) Առաջին շարքի միջին բարձրացման է ձայնավորի արտասանական բնութագիրը հետևյալն է. նրա արտաբերման ժամանակ լեզուն ամբողջ զանգվածով կծկվում է բերանի միջին մասում՝ ձգվելով դեպի առաջ: Ի ձայնավորի համեմատությամբ լեզուն ավելի նվազ չափով է բարձրանում դեպի կոշտ քիմքը, լեզվի եզրերը ավելի թույլ են դիպում ատամներին, լեզվի քսուկ-

ները ավելի նեղ են ու երկարագույն, լեզվի ծայրը իջած է ներքև՝ թեթևակի հպվելով ստորին ատամնաշարին: Ե-ի արտաբերման ժամանակ լայնանում է բերանային հնչարանը, և համապատասխանաբար մի փոքր կարճանում՝ կոկորդայինը: Այդ հնչարանների բաժանման սահմանն ավելի սահուն է և աստիճանական, բերանն ավելի է բացված ի հնչյունի արտաբերման համեմատությամբ: Երթունքները նույնպես գրավում են լեզու գիրք:

**Ֆիզիկական բնութագիր:** Ի ձայնավորի համեմատությամբ իր տեղում լայն է-ն ավելի երկար և ուժեղ ձայնավոր է: Ընդհանուր ուժգնությամբ նույնպես այն մի փոքր ավելի ուժեղ է ի ձայնավորից:

3) Ծախն շարքի ստորին բարձրացման Ա ձայնավորն ունի արտասանական հետևյալ բնութագիրը: Ա-ի արտաբերման ժամանակ լեզուն իր ամբողջ զանգվածով կծկվում է բերանի ետին մասում՝ բարձրանալով դեպի փափուկ քիմքը (բայց ոչ այն շափով, որքան 0-ի և Ու-ի ժամանակ): Ա արտաբերելիս լեզուն ետ քաշելու հետևանքով նրա ծայրը հեռանում է ստորին ատամնաշարից, բերանը բացված է ստորին ծնոտի իջեցման հետևանքով: Բերանի բացվածության աստիճանը ամենամեծն է, և այդ բացվածքի և լեզվի դիրքի շնորհիվ բերանի հնչարանը մեծանում է: կոկորդայինը՝ փոքրանում, Փափուկ քիմքը բարձրացած վիճակում է և փակում է ռեզային հնչարան տանող ուղին: Երթունքները լեզու գիրք են գրավում:

**Ֆիզիկական բնութագիր:** Մյուս ձայնավորների համեմատությամբ ա-ն ամենահզորն է, այսինքն՝ մեծ է այդ հնչյունի էներգիան, նրա ընդհանուր ուժգնությունը, տեղում լայն ամենակրկարն է:

4) Ծախն շարքի միջին բարձրացման շրթնայնացված ձայնավոր օ-ն ունի արտասանական հետևյալ բնութագիրը: Նրա արտաբերման ժամանակ լեզուն բերանի ետին մասում կծկված և կլորացած գմբեթի ձև է ստանում, նրա ծայրը որոշ շափով հեռանում է ստորին ատամնաշարից: Լեզվի այդպիսի դիրքի շնորհիվ ստեղծվում են բերանային մեծ և կոկորդային փոքր հնչարաններ, որոնց սահմանը լեզվի բարձրագույն կետն է: Բերանի բացվածքը ա-ի արտաբերման համեմատությամբ ավելի փոքր է: Հնչմանը ակտիվորեն մասնակցում են շրթունքները, որոնք ձգվելով առաջ՝ կազմում են կլոր բացվածք (ճեղք), ստեղծելով լրացուցիչ շրթնային հնչարան, որը շրթնայնացնելով՝ նպաստում է Օ ձայնավորի տոնի իջեցմանը: Փափուկ քիմքը բարձրացած վիճակում է և փակում է օդի ուղին դեպի քիթ խոռոչը:

**Ֆիզիկական բնութագիր:** Զայնավորի ընդհանուր էներգիան մեծ ա-ից դեպի ա է, բայց բավականին մեծ է:

5) Ծախն շարքի վերին բարձրացման շրթնայնացված ձայնավոր Ու-ն իր կազմավորմամբ շատ ընդհանրություններ ունի 0-ի հետ և նրանից հիմնականում տարբերվում է բարձրացման աստիճանով: Նրա արտաբերման ժամանակ լեզուն բերանի ետին մասում խիստ կծկված է ու կլորացած: 0-ի համեմատությամբ ավելի մեծ է լեզվի բարձրացման աստիճանը: Լեզվի ծայրը ետ է քաշվում ստորին ատամնաշարից, 0-ի համեմատությամբ շրթունքների բացվածքը ավելի փոքր է, բայց դրանք ավելի առաջ են ձգված ու կլորացած: Փափուկ քիմքը փակում է օդի ուղին դեպի քիթ խոռոչը: Նրա կազմավորման ժամանակ բերանային հնչարանը ավելի մեծ է և որոշակիորեն սահմանադատվում է կոկորդային հնչարանից, որն իր հերթին ետին շարքի մյուս ձայնավորների համեմատությամբ ավելի մեծ է, իսկ դա նպաստում է ձայնավորի տոնի իջեցմանը:

**Ֆիզիկական բնութագիր:** Նրա էներգիան համեմատաբար փոքր է, հետևաբար և հնչյունը ավելի թույլ է և տոնն էլ ցածր:

6) Միջին շարքի միջին բարձրացման Ը ձայնավորի արտաբերման ժամանակ լեզվի մակերեսը հարթ է, գտնվում է աննշան բարձրացած վիճակում, և ետին մասում զգացվում է փոքր զոզավորում: Լեզվի ծայրը իջած է և թեթևակի հենվում է ներքին ատամնաշարին, Երթունքները բացվում են ուղղահայաց և մի փոքր ձգվում բերանի անկյուններում: Բերանի բացվածքը միջին աստիճանի է: Լեզուն միջին դիրք է գրավում: Միջին դիրք է գրավում նաև շրթունքների բացվածության աստիճանը՝ ստորին և վերին դիրքերի համեմատությամբ: Առաջին շարքի ձայնավորների համեմատությամբ բավականին մեծ է բերանային և համեմատաբար ավելի փոքր՝ կոկորդային հնչարանը: Փափուկ քիմքը փակում է դեպի քիթ տանող ուղին: Մյուս ձայնավորների նման բերանային ձայնավոր է:

**Ֆիզիկական բնութագիր:** Մյուս ձայնավորների համեմատությամբ աչի է ընկնում կարճությամբ, փոքր է նրա տեղում լայնը: Ընդհանուր էներգիան համեմատաբար թույլ է, որով և մոտենում է ա-ին:

**ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ**

Ի տարբերություն ձայնավորների, հայերենի մյուս հնչյունները, որոնք արտաբերվում են հնչարտաբերման գործարաններում ստեղծված զգալի նեղվածքի կամ փակվածքի հաղթանակով, կոչվում են բաղաձայններ: |

1. Բաղաձայնների կազմավորմանն առարարներումը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.՝

- ա) ՎՊդի հոսքը հաղթահարում է հնչարտաբերական գործարաններում ստեղծվող արգելքները (փակվածք կամ նեղվածք):
- բ) ՎՄհնամեծ լարվածությունն այն ժամանակ է ստեղծվում, երբ հաղթահարվում է հնչարանում ստեղծված արգելքը:
- գ) Այս դեպքում օդի հոսքը համեմատաբար ավելի ուժեղ է, քան ձայնավորների արտաբերության ժամանակ:

1. Բաղաձայնների դասակարգումը ըստ արտաբերության եղանակի, ձայնի և աղմուկի պարունակության, արտաբերության տեղի և կազմության:

1. Բաղաձայնների դասակարգումն ըստ արտաբերության եղանակի

(Որոշել ըստ արտաբերության եղանակի բաղաձայնների բնույթը՝ նշանակում է պարզել, թե բաղաձայնի արտաբերման ժամանակ թոքերից արտամղվող օդի հոսքը ինչպե՞ս և ի՞նչ բնույթի արդեիք (փակվածք, թե՛ նեղվածք) է հաղթահարում) հնչարտաբերական գործարաններում:

1. ըստ արտաբերության եղանակի բաղաձայնները ստորաբաժանվում են պայթական, շփական և պայթաշփական հնչյունների՝

ա) Պայթական բաղաձայնները արտաբերվում են օդի հոսքի կողմից բերանի հնչարաններում ստեղծվող որևէ փակվածքի հաղթահարման հետևանքով: Այդ հնչյուններն արտասանվում են փակվածքի հաղթահարման ընթացքում՝ վայրկենապես և կոչվում են նաև վայրկենական կամ ակնթարթային:

Պայթական հնչյուններն արտաբերելիս փակվածքներ կարող են առաջ գալ բերանի խոռոչի տարբեր հնչարաններում՝ շրթունքների, շրթունքի և ատամների, լեզվի և քիմքի հպումներից: Ժամանակակից հայերենի պայթական բաղաձայններն են՝ ր, պ, փ, դ, տ, թ, գ, կ, ք և ձայնորդներ՝ մ, ն: 1

բ) Շփական բաղաձայնները արտաբերվում են օդի հոսքի կողմից բերանի հնչարաններում ստեղծվող որևէ նեղվածքի հաղթահարման շնորհիվ: Թոքերից արտամղվող օդի հոսքը անցնելով հնչարաններում ստեղծված նեղվածքի միջով՝ շփվում է նրա պատերին և ստեղծում որոշ աղմուկ: Նեղվածքներն էլ փակվածքների նման կարող են առաջ գալ բերանի խոռոչի տարբեր հնչարաններում՝ շրթունքի և ատամների, լեզվի և քիմքի մոտեցմամբ: Շրփական բաղաձայնները պայթականներից տարբերվում են նրանով, որ կազմավորվում և արտաբերվում են ոչ թե փակվածքով,

այլ նեղվածքով, վայրկենական չեն, այլ տևական և կարող են հնչել երկար (ծորել): Այդ պատճառով էլ շփական բաղաձայնները կոչվում են տևական հնչյուններ: Ժամանակակից հայերենի շփական բաղաձայններն են՝ վ, ֆ, զ, ժ, ս, շ, դ, խ, հՊ Շփական բաղաձայնների մեջ են մտնում նաև հետևյալ ձայնորդները. յ, ր, ո, յ: գ) Պայթաշփական (կիսաշփական, կիսապայթական) բաղաձայնները կազմավորվում և արտաբերվում են միաժամանակ և՛ փակվածքի, և՛ նեղվածքի հաղթահարման շնորհիվ: Ժամանակակից հայերենի պայթաշփականներն են՝ ծ, ջ, շ, ծ, ց, ճ բաղաձայնները: 1

2. Բաղաձայնների դասակարգումն ըստ ձայնի և աղմուկի պարունակության:

1. ըստ ձայնի և աղմուկի պարունակության աստիճանի բաղաձայնները լինում են ձայնորդ, ձայնեղ և խուլ: 1

Պայծառ բաղաձայնների (լ, ր, ո, յ, վ, ն) կազմավորմանը նույնպես ակտիվորեն մասնակցում են ձայնալարերը և նրանցում ձայնի առկայությունն աղմուկի համեմատությամբ ավելի զգալի է, քան ձայնեղ բաղաձայնների մեջ:

1. ձայնեղ բաղաձայնների կազմավորմանն ակտիվորեն մասնակցում են ձայնալարերը, ուստի և նրանցում աղմուկի հետ ըզգալի է նաև ձայնի առկայությունը: Ձայնեղ են ր, գ, դ պայթականները՝ ծ, ջ, ց պայթաշփականները և վ, զ, ժ, դ շփականները: 1

1. խուլ բաղաձայնների կազմավորմանը ձայնալարերը ակտիվորեն չեն մասնակցում, ուստի և նրանցում առկա է միայն աղմուկը՝ խուլ բաղաձայններ են պ, տ, կ, փ, թ, ք և պայթականները, ֆ, ս, շ, խ, և շփականները, ծ, ն, շ պայթաշփականները: 1

1. Շփական և պայթաշփական բաղաձայնները ըստ հնչյունի երանգի լինում են սուլական և շշական: 1

Բաղաձայնները սուլական և շշական երանգ են ստանում հաղթահարվող նեղվածքի համեմատական նեղության և կլորության պատճառով:

1. Շփական բաղաձայններից սուլական են՝ ս, գ, շշական՝ շ, ժ, պայթաշփականներից սուլական են՝ ծ, ծ, ց, շշական՝ ջ, ն, շ հնչյունները: 1

3. Բաղաձայնների դասակարգումը ըստ արտաբերության տեղի

Հնչարտաբերական գործարանների որոշակի մասերում ըստ ստեղծվող հնչարաններում իրենց կազմավորման և արտաբերման

համաձայն՝ բաղաձայնները ստորաբաժանվում են հետևյալ խումբերի: 1

ա) Երկշեքնային. հրք հնչյունը կազմավորվում և արտաբերվում է երկու շրթունքների միջև ստեղծված հնչարանում: Երկշեքնային բաղաձայններ են. պայթակաճներ՝ ձայնեղ՝ բ, խուլ՝ պ, շնչեղ խուլ՝ փ. ձայնորդ՝ հպական՝ մ: 1

բ) Երբնատամնային. հրք հնչյունը կազմավորվում և արտաբերվում է շրթունքի և ատամնաշարերի միջև ստեղծված հնչարանում: Երբնատամնային բաղաձայններ են՝ շփական ձայնեղ՝ վ, խուլ՝ ֆ: 1

գ) Առաջնալեզվային. հրք հնչյունը կազմավորվում և արտաբերվում է բերանի խոռոչում լեզվի առջևի մասով ստեղծված հնչարանում: Առաջնալեզվային բաղաձայններ են. պայթակաճներ՝ ձայնեղ՝ դ, խուլ՝ տ, շնչեղ խուլ՝ ք, պայթաշփակաճներ՝ ձայնեղ՝ ձ, ջ, ց, խուլ՝ ծ, ճ, չ, շփակաճներ. ձայնեղ՝ գ, ժ, խուլ՝ ս, շ շփական ձայնորդներ՝ լ, ռ, ո, հպական՝ ն: 1

դ) Միջնալեզվային. հրք հնչյունը կազմավորվում և արտաբերվում է բերանի խոռոչում լեզվի միջին մասով ստեղծված հնչարանում: Միջնալեզվային բաղաձայն է շփական ձայնորդ յ-ն: 1

ե) Նստնալեզվային. հրք հնչյունը կազմավորվում և արտաբերվում է բերանի խոռոչում լեզվի ետին մասով ստեղծված հնչարանում: Նստնալեզվային բաղաձայններ են. պայթակաճներ՝ ձայնեղ՝ գ, խուլ՝ կ, շնչեղ խուլ՝ ք, շփակաճներ՝ ձայնեղ՝ դ, խուլ՝ խ: 1

զ) Հազագային է կոչվում և բաղաձայն հնչյունը. այն կազմավորվում է հազագում և միայն շունչ է պարունակում: 1

4. Բաղաձայնների դասակարգումն ըստ կազմության 1

1) Ըստ կազմության բաղաձայնները լինում են պարզ և բարդ: 1 Պարզ են կոչվում այն բաղաձայնները, որոնք ձևավորվում և արտաբերվում են հնչարտաբերական գործարաններում ստեղծվող կա՛մ նեղվածքի, կա՛մ փակվածքի հաղթահարմամբ: Այս առումով պարզ են ժամանակակից հայերենի բոլոր պայթական և շփական բաղաձայնները:

Բարդ են կոչվում այն բաղաձայնները, որոնք ձևավորվում և արտաբերվում են հնչարտաբերական գործարաններում ստեղծվող փակվածքի և նեղվածքի միաժամանակյա հաղթահարմամբ: Այդ եղանակով արտաբերվող բարդ բաղաձայնները՝ ձ, ջ, ծ, ց, ն, չ, կոչվում են պայթաշփական (կիսապայթական, կիսաշփական): Այդ բարդ բաղաձայնները կազմված են մեկ պայթականից և մեկ

շփականից. ձ > դ-գ, ջ > դ-ժ, ծ > տ-ս, ց > ք-ս, ն > տ-շ, չ > ք-շ:

Բարդ են նաև հայերեն պարզ խուլ պայթականների հազագային շնչեղացումով կազմավորվող և արտաբերվող՝ փ, ք, ֆ շրջնեղ-խուլ բաղաձայնները, որոնք ունեն հետևյալ կազմությունը՝ փ > պ-ն, ք > տ-ն, ֆ > կ-ն:

Բաղաձայնների արտասանական և ֆիզիկական բնութագրերը

1) Պայթական բաղաձայններ. ժամանակակից հայերենի պայթական բաղաձայններն են՝ բ, պ, փ, դ, տ, ք, գ, կ, ֆ:

ա) Բ, Պ, Փ:

Արտասանական բնութագիր: Բ, պ, փ հնչյունները երկշեքնային պայթական բաղաձայններ են՝ բ-ն՝ պարզ, ձայնեղ, պ-ն՝ պարզ, խուլ, փ-ն՝ բարդ/շնչեղ խուլ: Այդ բաղաձայնները կազմավորվում են երկու շրթունքների միջև Դրանց արտաբերման ժամանակ շրթունքները կիպ մոտենում, հպվում են միմյանց և արտաբերվում են շրթունքների հպումից առաջացած փակվածքի հաղթահարման շնորհիվ: Փորձառական հնչյունաբանության տրվելուների համաձայն պ-ի արտաբերության ժամանակ շրթունքների հպումը ավելի ուժեղ է փ-ի և բ-ի արտաբերության համեմատությամբ: Լեզուն ընդունում է հաջորդ կամ նախորդ ձայնավորների դիրքը և որոշ շփում ազդում է այդ բաղաձայնների երանգի վրա: Արտաբերման ժամանակ շրթունքների անմիջապես հետևում, բերանի խոռոչում ստեղծվում է դատարկ տարածություն, որտեղ կուտակվում է օդը: Այդ դատարկ տարածությունն իր ծավալով փ-ի արտաբերման դեպքում ամենամեծն է, այնուհետև պ-ի, այդ երկուսի համեմատությամբ փոքր է բ-ի արտաբերման ժամանակ: Տարբեր է նաև ծախսվող օդի քանակը: Համեմատաբար այն մեծ է փ-ի, այնուհետև փոքրանում է պ-ի և ամենափոքրն է բ-ի դեպքում: Այդ բացատրվում է նրանով, որ փ-ի, իբրև երկշեքնային շնչեղ պայթական բաղաձայնի՝ արտաբերման համար պահանջվում է օդի ամենամեծ քանակությունը, այնուհետև օդի մի փոքր պակաս քանակություն է անհրաժեշտ՝ արտաբերելու երկշեքնային խուլ պայթական պ բաղաձայնը և, վերջապես, այդ երկուսի համեմատությամբ օդի ամենաքիչ քանակությունն է պահանջվում արտաբերելու՝ երկշեքնային ձայնեղ ք բաղաձայնը. քանի որ վերջինիս, իբրև ձայնեղ հնչյունի՝ արտաբերման ժամանակ օդի որոշ քանակություն արդեն ծախսվում է ձայնալարերի տատանման համար:

Ֆիզիկական բնութագիր: Նշված հնչյունների ընդհանուր տե-

վողութիւն մեջ տարբերութիւններ չկան. տարբերութիւնները նրանց տարբեր հատվածների տեղութիւն մեջ է: Այդ հնչյուններն արտաբերելիս շատ ավելի կարճ է պայթիւնի հատվածը. ելքը ամենաշատը Վ-ի արտաբերման ժամանակ է, ամենաքիչը՝ պ-ի, ք-ն միջին դիրք է գրավում:

Տարբեր է այդ բաղաձայնների աղղեցութիւնը հաջորդ և նախորդ ձայնավորների տեղութիւն և անցման հատվածի վրա: Անցումների փոփոխութիւնը անհամեմատ ավելի թույլ, համարյա աննշան է Փ-ի արտաբերման ժամանակ:

բ) Դ, Տ, Թ

Արտասանական բնութագիր: Դ, Տ, Թ հնչյունները առաջնալեզվային պայթական պարզ բաղաձայններ են. Դ-ն՝ ձայնեղ, Տ-ն՝ խուլ, Թ-ն՝ շնչեղ-խուլ: Կազմավորվում և արտաբերվում են լեզվի առաջին մասի ակտիվ մասնակցութեամբ՝ վերին ատամնաշարի և լնդերքի մոտ ստեղծվող փակվածքի հաղթահարման շնորհիվ: Այս հնչյուններն արտաբերելիս լեզվի առջևի մասը հպվում է վերին ատամնաշարին, միջին մասը մի փոքր իջնում է, իսկ ետևի մասը՝ բարձրանում: Լեզուն դողալով ձև ստանալով՝ այդ բաղաձայններին տալիս է թավ երանգ: Հպման ուժգնութեան տեսակետից ամենամոտ փակվածքը կազմվում է Տ-ի, հետո՝ Դ-ի և ամենաթույլը՝ Թ-ի արտաբերութեան ժամանակ:

Ֆիզիկական բնութագիր: Այդ բաղաձայնների մուտքի և կացքի պահերը բնորոշվում են էներգիայի բացակայութեամբ: Նախորդ՝ Բ, Պ, Փ պայթականների համեմատութեամբ փակվածքի հաղթահարումն ուղեկցվում է կարճատև պայթիւնով: Օդի հոսանքի հատվածն ամենաերկարն է Թ-ի, ամենակարճը՝ ա-ի ժամանակ. դ-ն միջին դիրք է գրավում:

դ) Գ, Կ, Ք

Արտասանական բնութագիր: Գ, Կ, Ք հնչյունները ետնալեզվային պայթական պարզ բաղաձայններ են. Գ-ն՝ ձայնեղ, Կ-ն՝ խուլ, Ք-ն՝ շնչեղ-խուլ:

Այս բաղաձայնների առանձնատկութիւնն այն է, որ չ ձայնորդից և ի. է ձայնավորներից առաջ քմայնանում են. կազմավորվում և արտաբերվում են լեզվի ետին մասի և փափուկ քիմքի միջև ստեղծվող փակվածքի հաղթահարման շնորհիվ: Արտաբերման ժամանակ լեզվի ծայրը իջնում և հենվում է ներքին ատամնաշարին: Լեզվի առջևի մասում առաջանում է գոգավորում, լեզվի մեջքը խիստ բարձրանալով՝ փափուկ քիմքի հետ կազմում է փակվածք: Բերանային հնչարանը բաժանվում է երկու առանձին մասերի՝ առջևի հնչարան, որը լայնանալով՝ ավարտվում է շքր-

թունքներով, և ետին հնչարան, որը միանում է կոկորդային հրնչարանին. փափուկ քիմքը բարձրացած լինելով՝ փակում է օդի ուղին դեպի քթի խոռոչը: Լեզուն լարված չէ, նրա կոթը կլորացած է:

Ֆիզիկական բնութագիր: Այս պայթական բաղաձայնները նախորդների նման բնորոշվում են երեք առանձին հատվածներով. ա) էներգիայի բացակայութեան պահով, բ) էներգիայի պոսթիվումով (պայթիւնով), գ) օդի ազատ հոսքի հատվածով: Հիշյալ երեք բաղաձայնների հատվածների տեղութիւնը այս բաղաձայնների մոտ տարբեր է: Կացքի պահը ամենատևականն է Կ հնչյունն արտաբերելիս, որի տեղութեան տարբերութիւնը սերտորեն կապվում է այն պահի հետ, որը հետևում է օդի պոսթիվմանը: Տարբերվում է նաև այդ բաղաձայններին նախորդող և հաջորդող ձայնավորների տեղութիւնը: Արտաբերման ժամանակ ընդհանուր էներգիան ավելի մեծ է նախորդների համեմատութեամբ: Օդի պոսթիվմանը հաջորդող պահը ավելի կարճատև է Գ և Կ արտաբերելիս, ավելի երկարատև՝ Ք-ի արտաբերման ժամանակ:

2) Շփական (նեղվածքային) բաղաձայններ: Ժամանակակից հայերենի շփական բաղաձայններն են՝ վ, ֆ, գ, ժ, ս, շ, դ, խ, (հ): ա) Վ, Ֆ:

Արտասանական բնութագիր: Վ, Ֆ հնչյունները շրթնատամնային շփական պարզ բաղաձայններ են. Վ-ն ձայնեղ է, Ֆ-ն՝ խուլ: Այս բաղաձայնները կազմավորվում և արտաբերվում են շրթունքի և ստորին ատամնաշարի միջև ստեղծվող նեղվածքի հաղթահարման շնորհիվ: Արտաբերման ժամանակ ստորին ծնոտը մի փոքր ետ է քաշվում, վերին կտրիչները մոտենում են ստորին շրթունքին՝ հենվելով նրա ներքին եզրին և կազմում են հորիզոնական նեղ ճեղք՝ նեղվածք: Շրթունքները մի փոքր բացված վիճակում են: Լեզուն իր ամբողջ դանդախով ետ է քաշվում, լեզվի ծայրը իջնում և հենվում է ներքին կտրիչների հիմքին: Լեզվի ետին մասը զգալիորեն բարձրացած է, որի շնորհիվ և այդ հնչյունները կատկային երանգ են ձեռք բերում: Փափուկ քիմքը թեթև իջած է, բայց չի բացում դեպի քթի խոռոչը տանող ուղին:

Ֆ-ի արտաբերման ժամանակ հաղթահարվող ճեղքը (նեղվածքը) Վ-ի համեմատութեամբ ավելի նեղ է, հետևաբար և ավելի լարված է իր արտաբերութեան ուժով: Վերին շրթունքը ավելի հեռացած է ստորին ատամնաշարից:

Ֆիզիկական բնութագիր: Վ-ի համեմատութեամբ ավելի եր-

կար է Ծ-ի տևողութունը: Բաղաձայնների մեջ ձայնեղ և խուզ հնչյունի տարբերության մեծութունը ավելի ցայտուն է դրսևորվում այս զույգի մեջ: Ծ-ի ընդհանուր էներգիան թույլ է Վ-ի համեմատությամբ: Վ-ի սպեկտրապատկերը խիստ տարբեր է Ծ-ի պատկերից (նմանվում է ձայնորդներին):

բ) Զ, Ժ, Ս, Շ

Արտասանական բնութագիր: Զ, Ժ, ս, շ հնչյունները առաջնալեզվային շփական պարզ բաղաձայններ են: Զ և Ժ-ն՝ ձայնեղ, Ս և Շ-ն՝ խուզ Վ և Ս-ն՝ սուլական, Ժ և Շ-ն՝ շշական: Կազմավորվում և արտաբերվում են հիմնականում լեզվի առջևի մասի և ատամնաշարի միջև առաջացող նեղվածքի հաղթահարման շնորհիվ:

Զ, Ս

Արտասանական բնութագիր: Զ և Ս հնչյունների արտաբերմանը բնորոշ է լեզվի առջևի մասի և վերին ատամնաշարի միջև առաջացած նեղվածքը: Այդ նեղվածքի համեմատական նեղության և կլորության պատճառով հնչյունի երանգը ավելի սուր է և այդ պատճառով զ և ս-ն կոչվում են նաև սուլական բաղաձայն հնչյուններ: Այդ հնչյունների արտաբերման առանձնահատկությունը նաև այն է, որ արտասանական գոտին չի ընդգրկում ատամների ողջ մակերեսը, այլ նրա մի մասը միայն, և արտաբերմանը մասնակցում է ոչ թե լեզվի ծայրը, այլ ամբողջ առջևի մասը, որի շնորհիվ այդ հնչյուններն ստանում են թավ (կոշտ) երանգ: Շրթունքները լեզոք բացվածք ունեն, իրարից բավականին հեռանում են, բայց դեպի դուրս չեն ձգվում:

Ֆիզիկական բնութագիր: Իբրև սուլականներ՝ իրենց ուժգնությամբ զ և ս-ն ամենահզոր հնչյուններն են բաղաձայնների մեջ: Երկար են նաև տևողությամբ: Քիչ են ազդվում հարևան հնչյուններից, բայց հաճախ մեծ ազդեցություն են գործում ինչպես նախորդ, և ավելի շատ՝ հաջորդ ձայնավորների վրա:

Ժ, Շ

Արտասանական բնութագիր: Ժ, շ հնչյունները որոշ շփով տարբեր են առաջնալեզվային նույն եղանակով արտաբերվող, շփական զ և ս բաղաձայններից: Տարբերվում են ինչպես նեղվածքի տեղով, այնպես էլ լայնությամբ ու ձևով: Ժ և շ հնչյունների արտասանական գոտին ավելի ետ է ընկած, լիովին ընդգրկվում են ավելոյնները: Նեղվածքների եզրերը գտնվում են վերին ատամներից ավելի ետ և ընդհատվում են ավելոյնների վրա: Մասնակցում է ոչ անմիջապես լեզվի առջևի մասը (ինչպես զ, ս-ի ժամանակ), այլ առջևի և միջին մասերի սահմանը (որը գտնվում

է ավելոյնների հանդիպակաց մասում): Նեղվածք է ստեղծվում այդ մասի և նախաքիթի միջև: Դրա շնորհիվ այդ հնչյունները որոշ շփով քմայնանում են: Ակտիվ մասնակցություն են ցուցաբերում շրթունքները: Նրանք լայն բացվում և ձգվում են առաջ՝ ստեղծելով շրթնային լրացուցիչ հնչարան: Այս հնչյունները նույնպես տևական են, երանգով՝ շշական:

Ֆիզիկական բնութագիր: Հզորությամբ և տևողությամբ Ժ և շ-ն մոտենում են զ և ս հնչյուններին: Նույնպես ազդում են հարևան, հատկապես՝ հաջորդող ձայնավորների վրա:

զ) Դ, և հնչյունները ետնալեզվային շփական պարզ բաղաձայններ են՝ դ-ն՝ ձայնեղ, խ-ն՝ խուզ:

Արտասանական բնութագիր: Կազմավորվում և արտաբերվում են լեզվի ետին մասի և փափուկ քիթի (կատիկի) միջև ըստեղծվող նեղվածքի հաղթահարման շնորհիվ: Դրանց կազմավորման ժամանակ լեզվի առաջին մասը իջնելով՝ գոգավոր ձև է ընդունում, լեզվի ետին մասը վեր է բարձրանում և փափուկ քիթի հետ նեղվածք կազմում: Փափուկ քիթը գտնվելով բարձրացած վիճակում, փակում է քթի խոռոչը տանող ուղին: Որպես բերանային հնչյուններ, դրանց կազմավորմանը շրթունքներն ու քթի հնչարանը չեն մասնակցում, հետևաբար և օժտված չեն որնգային կամ շրթնային լրացուցիչ երանգով:

Ֆիզիկական բնութագիր: Մյուս շփականների համեմատությամբ աղմուկի ուժգնությունը ավելի թույլ է, թեև դ-ի ուժգնությունը համեմատաբար ավելի բարձր է խ-ից: Փորձառական տրվյալներով դ-ի սպեկտրում բարձր հաճախականության աղմուկը համարյա բացակայում է: Մյուս բաղաձայնների նման դ և խ հնչյուններն ազդում և ազդվում են հարևան ձայնավորներից:

դ) Լ—Կոկորդային (հագագային) շփական պարզ բաղաձայն է:

Արտասանական բնութագիր: Լ-ն փաստորեն թոքերից դուրս եկող ձայն է, և արտասանական ուղին ընդունում է նախորդ կամ հաջորդ ձայնավորի արտաբերության դիրքը: Լեզուն բերանում գրավում է ավելի բարձր դիրք և ավելի ետ է քաշվում դեպի երախի պատը, լեզվի կոթն ավելի է մոտենում երախի պատին: Արտաբերությանը ձայնալարերը մասնակցում են, բայց չեն տատանվում: Արտաբերման տեղը գտնվում է արտասանական ուղու խորքում, լեզվի կոթի և ըմպանի մոտ և մասամբ՝ ձայնալարերում:

Ֆիզիկական բնութագիր: Նրա տևողությունը բավականին երկար է բառամիջում, թույլ է բառավերջում: Ընդհանուր էներգիան թույլ է: Երբեմն նկատվում է նաև բարձր հաճախականության աղմուկ: Քանի որ Լ-ի որակի վրա ազդում է նրա արտասանու-

թյան անհղից առաջ գտնվող հնչարանը, ուստի նրա արտաբերման ժամանակ շատ մեծ է ձայնավորների ազդեցությունը:

3. Պայթաշփական բաղաձայններ<sup>9</sup>: Ժամանակակից հայերենի պայթաշփականներն են՝ ձ, ջ, ց, ծ, և, շ, որոնք առաջնալեզվային բարդ բաղաձայններ են, ձ, ջ, ց-ն՝ ձայնեղ, ծ, և, շ-ն՝ խուլ: Կազմավորվում և արտաբերվում են լեզվի առջևի մասի և առամնաշարի միջև ստեղծվող փակվածքի և նեղվածքի միաժամանակյա հաղթահարման շնորհիվ, այնպես, ինչպես միաժամանակ պայթական և շփական առաջնալեզվային հնչյուն արտաբերելիս:

Այդ բաղաձայնները առաջնալեզվային են համարվում հնչարտաբերական ակտիվ օրգանի՝ լեզվի առջևի մասի կատարող դերի պատճառով. վերջինս հնչարտաբերական պասիվ օրգանների հետ նեղվածք և փակվածք է ստեղծում վերին առամնաշարի միջև:

ա) Ձ, Ծ, ց

Արտասանական բնութագիր: Սուլական պայթաշփական ձ, ծ, ց բաղաձայնների արտաբերման ժամանակ լեզվի ծայրը իր առջևի եզրով մոտենում է վերին առամնաշարի հիմքին և սկզբում ստեղծում է փակվածք, ինչպես առաջնալեզվային պայթականների (դ, տ) կազմավորման դեպքում: Լեզվի այդպիսի դիրքի շնորհիվ ըստեղծվում են բերանային մեծ և կոկորդային համեմատաբար փոքր հնչարաններ: Այդ բաղաձայնների արտաբերման հիմնական աղբյուրը դադարի պահին լեզվի ծայրի շնորհիվ այդ նույն տեղում պայթման ստեղծած փակվածքի դանդաղորեն վերածումն է նեղվածքի: Պայթյունի դադարի պահին փակվածքում գոյանում է նեղվածք, որի միջով պայթական երանգ ստացած հնչյունի բաղադրիչները անցնելով՝ առաջացնում են սուլող ձայն, և արտաբերված հնչյունը ստանում է միաժամանակ և՛ պայթական, և՛ շփական բաղաձայնի որակ: Փորձառական տվյալներով այս բաղաձայնների հպման լարվածությունը տարբեր է. ամենաուժեղն է ծ-ի, մի փոքր թույլ՝ ձ-ի, ամենաթույլը՝ ց-ի արտաբերման ժամանակ:

Ֆիզիկական բնութագիր: Պայթաշփականները պայթականներից տարբերվում են նրանով, որ նրանց արտաբերման պահին բացակայում է կարճատև պայթյունի պահը: Պայթաշփականների արտաբերմանը բնորոշ է երկու պահ (հատված)<sup>10</sup>՝ դադար և շփում, որոնք շատ կարճ են տևում՝ շփական և պայթական առանձին բաղաձայնների արտաբերման համապատասխան պահերի համեմատությամբ և ինքնուրույն տարրորջվող հնչյունների որակ շին

կազմում: Ծարբեր է նաև այդ պայթաշփականների հիշյալ երկու պահերի տևողությունը: Ծ-ի արտաբերման ժամանակ ավելի երկար է հպման պահը, շփմանը՝ ավելի կարճ. ց-ի արտաբերման ժամանակ, ընդհակառակը, կարճ է հպման պահը, շփմանը՝ երկար: Շփականների համեմատությամբ (ա, զ) կիսաշփական ձ, ծ, ց-ի արտաբերման պահերը շատ ավելի կարճ են, թույլ են ուժգրնությունը, և համեմատաբար սահուն է նրանց սկիզբը: Հետևաբար, հպման շփման անցումը համեմատաբար դանդաղ է կատարվում: Բառավերջի դիրքի համեմատությամբ բառասկզբում կիսաշփականների շփման մասն ավելի երկար է: Թույլ է հաջորդ ձայնավորների վրա կիսաշփականների ազդեցությունը:

բ) Ծ, Զ, ց

Արտասանական բնութագիր: Ծ, ջ, շ շրական պայթաշփականները նախորդների նման նույնպես ըստ հնչարտաբերական ակտիվ անդամի՝ լեզվի դիրքի, առաջնալեզվային են, կազմավորվում և արտաբերվում են լեզվի առջևի մասի և նախաքիմքի (ավելի ճիշտ՝ վերին առամնաշարի վերին եզրի) միջև ստեղծվող փակվածքի և նեղվածքի միաժամանակյա հաղթահարման շնորհիվ: Կազմավորման ժամանակ լեզուն իր առջևի մասով կաշում է քիմքի առաջամասին՝ վերին առամնաշարի հիմքից սկսած: Նախորդների համեմատությամբ սրանց արտասանական գոտին ավելի լայն է և ետ քաշված: Լեզվի բարձրանալու հետևանքով բերանի հնչարանը փոքրանում է, որի փոխարեն լայնանում է կոկորդի հնչարանը: Ծ-ի արտաբերման ժամանակ հպումը ավելի ամուր է՝ Զ-ի և ց-ի արտաբերման համեմատությամբ: Զայնեղ ց-ի փակվածքի թուլացումը մասամբ պայմանավորված է ձայնալարերի տատանման վրա օդի հոսքի մի մասի ծախսումով: Հպումից հետո լեզուն ստանում է որոշ կորուսյուն և իջնում է ցած: Լեզվի առջևի և միջին մասերի դեպի կոշտ քիմքը միաժամանակյա բարձրացման հետևանքով այդ հնչյունները մասնակի քմայնացման են ենթարկվում: Նախորդ պայթաշփականներից տարբերվում են լեզվի մասնակցությունը: Լեզվի հպվող մասն ավելի լայն է: Սրանց արտաբերմանը մասնակցում են նաև շրթունքները, որոնք առաջ են ձգվում: շրթունքների մոտ ստեղծվում է լայն հնչարան, որը նպաստում է հնչյունի տոնի իջեցմանը: Պայթաշփականների արտաբերման ժամանակ պայթյունը բացակայում է, որը պարտադիր է պայթականներն արտաբերելիս:

Ֆիզիկական բնութագիր: Բառամիջի և բառավերջի դիրքերում մյուս պայթաշփականների նման Ե, ջ, շ-ն բնորոշվում են երկու տարբեր պահերով (հատվածներով)՝ էներգիայի բացակայությամբ,

<sup>9</sup> Կոչվում են նաև կիսապայթական կամ կիսաշփական բաղաձայններ:



որ համապատասխանում է հպման պահին և աղմկային հատվածով: Առաջին պահին բացակայում են ձայնային բաղադրիչները: այդ դեպքի պահն է, որ համընկնում է լուծված հետ և չի առանձնանում: Երկրորդ պահը՝ շփման հատվածն է, տարբերվում է առաջին շարքի համապատասխան հատվածից: Ը-ի ժամանակ հպումը ավելի երկար է ջ-ի և շ-ի համեմատությամբ, շփման պահը՝ ավելի կարճ: Երկրորդ պահը տարբերվում է նախորդ պայթյալի անհանգիստ համապատասխան պահից: Ընդհանուր էներգիան այս դեպքում ավելի թույլ է և բաշխված է ամբողջ դիսպարտում, այդ պատճառով առանձին բաղադրիչները չունեն մեծ ուժգնություն: Համեմատաբար ավելի մեծ է ջ-ի ընդհանուր էներգիան՝ շ-ի և ֆ-ի համեմատությամբ: Զ-ի արտաբերման ժամանակ նկատվում է աղմուկի ավելի մեծ անկանոնություն, որը համապատասխանում է շնչի ազատ հոսքին:

4. Ձայնուղ բաղաձայններ. Ձայնորդների հիմնական առանձնահատկությունն այն է, որ մյուս բաղաձայնների համեմատությամբ նրանցում ձայնի և աղմուկի հարաբերության տեսակետից մեծ է ձայնի հարաբերական ժամալը: Ժամանակակից հայերենի ձայնորդներն են՝ մ, ն, ր, ո, լ, յ: Մ, և ձայնորդները են՝ գային են, ր, ո, լ, յ ձայնորդները՝ բերանային:

ա) Հպական ձայնորդներ: Ըստ արտաբերման եղանակի և տեղի մ և ն ձայնորդները որոշակի նմանություններ ունեն: Մ ձայնորդը երկշրթնային, ընդային երանգով հպական պարզ բաղաձայն է: Մ-ի արտաբերությունը նման է բ, պ, փ պայթյալականների արտաբերությանը, Ն-ինը՝ դ, տ, ք պայթյալականների:

Մ-ձայնորդի կազմավորման և արտաբերման ժամանակ փափուկ քիմքը խիստ իջնում է, բացում է լայն անցք դեպի քթի խոռոչը: Օդի հոսքը մտնում է բերանի խոռոչը և հանդիպելով պատանեղի, անցնում է վեր, դեպի քթի խոռոչը և դուրս է գալիս այնտեղից: Լեզուն իր ամբողջ զանգվածով ձգվում է դեպի բերանի ետևի մասը: լեզվի մեջքի ետևի մասում ստեղծվող որոշ գոգավորության շնորհիվ մ-ն ստանում է որոշակի կոշտ երանգ: Լեզվի ծայրը հենվում է ներքին ատամնաշարի միջին մասին՝ ատամների արմատների և լնդերքի հատվածում: Երթունքները փակված են: Պայթյունը կատարվում է շրթունքների փակվածքում, ապա հընչյունի բաղադրիչները շրթունքներից անցնում են դեպի քթի խոռոչը, որտեղ և հնչյունն ստանում է ընդային երանգ:

ն-ձայնորդը առաջնալեզվային հպական պարզ բաղաձայն է: Նրա կազմավորումը շատ գծերով նմանվում է դ, տ, ք պայթյալականներին: Կազմավորման և արտաբերման ժամանակ լեզուն իր

ծայրով հպվում է վերին ատամնաշարին՝ ատամների արմատների և լնդերքի հատվածում: Արտասանական գոտին ավելի նեղ է և մի փոքր ետ քաշված դեպի կոշտ քիմքը: Փափուկ քիմքը նույնպես իջած վիճակում է, և օդը ազատ հոսում է դեպի քթի խոռոչը: Լեզվի միջին մասը անմիջապես հպման գոտու ետևում մի փոքր իջնում է, ետևի մասը՝ բարձրանում: Այդ դիրքի շնորհիվ ն-ն որպես ձայնորդ նույնպես ստանում է կոշտ երանգ: ն-ձայնորդի արտաբերման ժամանակ շրթունքները բացված են և շեղք դիրք են գրավում: Ելքի պահին հպումը կարող է բացվել հաջորդ հնչյունին անցնելու համար կամ մնալ այդ դիրքում՝ մինչև հնչյունի վերջը:

Ֆիզիկական բնութագիր: Ռեզային մ և ն ձայնորդները ֆիզիկական տեսակետից տարբերվում են բոլոր պայթյալական բաղաձայններից ձայնային բնույթով, ձայնավորներից՝ տեղությունում և սպեկտրային պատկերով:

Ռեզային ձայնորդները ուժեղ ազդեցություն են գործում իրենց հաջորդող ձայնավորների վրա:

բ) Եփական ձայնորդներ: Լ, ր, ո, յ հնչյունները ըստ արտաբերության եղանակի շփական ձայնորդներ են:

1) Լ ձայնորդը առաջնալեզվային շփական պարզ բաղաձայն է:

Արտասանական բնութագիր: Ըստ արտաբերության տեղի նըմանվում է առաջնալեզվային ա, դ, ք պայթյալական բաղաձայններին, նրանցից տարբերվում է արտաբերման եղանակով: Նրա արտասանման գոտին ետնատամնային եզրն է, և դրանով նմանվում է ն ձայնորդի արտասանությանը: Եթե պայթյալականների արտաբերման ժամանակ արտասանական գոտին լիակատար է, ապա Լ ձայնորդի արտաբերման դեպքում այն ընդհատվող է և ձախից կամ աշից, կամ երկու կողմից թողնում է բաց տարածություն, որի միջով օդը անցնելիս ստեղծում է յուրահատուկ շփման աղմուկ: Արտաբերման ժամանակ լեզվի ծայրը հպվում է վերին ատամնաշարին (լնդերքի հատվածում), իսկ լեզվի եզրերը մեկ կամ երկու կողմից փոքր-ինչ բացվում են՝ առաջանցնելով նեղվածք (ճեղք), որի միջով օդի հոսքն անցնելիս՝ տալիս է այդ հնչյունը բնորոշող աղմուկը: Արտաբերման ընթացքում միաժամանակ տատանվում են ձայնալարերը:

Փորձառական ուսումնասիրությամբ հայերենում տարբերակվում են կոշտ կամ կատկային և քմայնացված լ-եր: Կոշտ Լ ձայնորդի արտաբերման ժամանակ լեզվի ետին մասը զգալի բարձրացած է, լեզվի միջին մասում ստեղծվում է գոգավորում:

թյուն, որով պայմանավորված է նրա կատկայնացված տարբերակը: Լ-ձայնորդի քմայնացած տարբերակի ժամանակ լեզվի միջին մասն է բարձրանում զեպի կոշտ քիմբը, որի պատճառով նրա արտասանական դոտին խիստ լայնանում է:

Լ-ձայնորդին արտաբերելիս լեզվի ծայրը հպվում է ատամների ու լնդերին, որով և ստանում է ծայրալեզվային արտաբերում:

**Ֆիզիկական բնութագիր:** Լ-ձայնորդի տեղումնը տարբեր է տարբեր դիրքերում: Ձայնավորների շրջապատում այն ավելի կարճ է՝ բառակերպի դիրքի համեմատությամբ, բառավերջում՝ ամենակարճը: Ընդհանուր ուժգնությամբ ձայնավորների համեմատությամբ թույլ է, ավելի մեծ է անգային (Վ, Ն) ձայնորդների համեմատությամբ: Նրա ուժգնությունը թուլանում է բառավերջի դիրքերում: Ուժեղ է նրա աղղեցությունը հաջորդ ձայնավորների վրա, հատկապես անցումների հատվածում: Անցումների առկայությունն էլ Լ-ձայնորդի ներքին ֆիզիկական հատկանիշներից մեկն է:

2) Բ ձայնորդը առաջնալեզվային շփական պարզ բաղաձայն է:

**Արտասանական բնութագիր:** Որոշ նմանություններ ունի Ծ և Ժ առաջնալեզվային, շփական պարզ բաղաձայնների արտաբերման հետ: Բ ձայնորդի արտաբերման ժամանակ հիմնական արտասանական գոտին՝ նեղվածքը ճեղքի ձև ունի, ետ է քաշված առջևի ատամներից և ընդգրկում է արվեղները: Լեզվի ծայրը մոտենում է վերին ատամնաշարին՝ լնդերի հատվածում, շփույնով նրան: Օդի հոսքը անցնելով այդ նեղ ու երկար անցքով՝ նեղվածքով, առաջացնում է շփման թույլ աղմուկ: Արտաբերման ժամանակ լեզուն իր ետին մասով մի փոքր բարձրացած է, միջին և առջևի մասերը սահուն իջած, որով այդ հնչյունը ստանում է նաև կոշտ երանդ:

**Ֆիզիկական բնութագիր:** Ընդհանուր առմամբ ըստ տեղումնային Բ-ձայնորդը կարճ հնչյուն է: Տեղումնային ըստ դիրքի, միաժամանակ, փոխվում է: Եատ կարճ է ձայնավորների միջև, ամենաներկարն է բառավերջում: Նրա ֆիզիկական պատկերում մեծ տեղ են զբաղում անցումները: Մյուս ձայնորդների նման նրա ընդհանուր կենդանի ձայնավորների համեմատությամբ թույլ է: Նրա սպեկտրապատկերը շատ է նմանվում հարևան, հատկապես հաջորդ ձայնավորների պատկերին, շեղոր դիրքում նմանվում է ձայնեղ շփական Ժ-ին: Խլացած դիրքերում հիշեցնում է խուլ շփական Ծ-ի սպեկտրապատկերը:

3) Ռ ձայնորդը առաջնալեզվային շփական պարզ, թրթռուն բաղաձայն է:

**Արտասանական բնութագիր:** Փորձառական տվյալների համաձայն նրա արտաբերմանը հիմնականում մասնակցում է լեզվի ծայրը, որը մոտենալով արվեղներին՝ կաղմում է նեղվածք, օդի հոսքի աղղեցությամբ լեզվի ծայրը ուժեղ թրթռում է: Ըստ դիրքերի՝ թրթռումների քանակը տարբեր է: Ուժեղ դիրքում ավելի ուժեղ է, թույլ դիրքում՝ նվազ ուժեղ: Արտաբերման ժամանակ լեզվի դիրքը նման է Բ-ձայնորդի արտաբերման դիրքին: Այդ վերաբերում է լեզվի ձևին, նրա միջին մասին, շրթունքների բացվածքին և կոկորդային հնչարանի ծավալին: Տարբերությունն այն է, որ եթե Բ-ն արտաբերելիս լեզվի ետին մասը բարձրացած է, նրա միջին մասում նկատվում է սահուն անցում, ապա Ռ-ի արտաբերության դեպքում այդ զոգավորությունն ավելի խոռն է, և լեզվի առջևի մասը լարված չէ: Շրթունքները մի փոքր դուրս են ցցված՝ մեծացնելով բերանային հնչարանը: Արտաբերմանը մասնակցում են ձայնալարերը:

**Ֆիզիկական բնութագիր:** Ըստ դիրքի՝ Ռ հնչյունի տեղումնայինը տարբեր է: Ամենաներկարը բառակերպում է, այնուհետև նվազում է բառամիջում և համեմատաբար կարճանում՝ բառավերջում: Նրա սպեկտրապատկերը ընդհատվող է և բաղկացած է մի քանի հատվածներից, որոնք բաժանվում են զազարներով: Սպեկտրապատկերները շատ նման են հարևան ձայնավորների պատկերներին: Ընդհանուր ուժգնությունը ձայնավորների համեմատությամբ ավելի թույլ է:

4) Յ ձայնորդը միջնալեզվային շփական պարզ բաղաձայն է:

**Արտասանական բնութագիր:** Կազմավորմամբ նման է Ի ձայնավորին: Այդ հնչյունների արտաբերության ժամանակ լեզուն իր միջին մասով բարձրանում է զեպի կոշտ քիմբը և իր կողքերով հպվում է նրան: Ձայնավորի արտաբերման դեպքում հպման հետքերը ավելի փոքր են, քան յ ձայնորդի. լեզուն բերանում ավելի առաջ է մղված, նրա բարձրակետը մի փոքր առաջ է ընկած: Տարբեր են բերանի հնչարանի ձևերն ու ծավալները: Յ ձայնորդի արտաբերման դեպքում այն ավելի փոքր ու նեղ է: Յ ձայնորդի կազմավորման ժամանակ լեզուն գտնվում է բերանի միջին մասում՝ կազմելով բլրաձև բարձրություն: Նրա ամենաբարձր կետը գտնվում է կոշտ և փափուկ քիմբերի սահմանում: Լեզվի դիրքի շնորհիվ բերանային հնչարանը փոքրանում, և մեծանում է կոկորդային հնչարանը: Շրթունքները բացված են և աննշան դուրս ցցված: Լեզուն իր ամբողջ զանգվածով կենտրոնանում է բերանի

միջին մասում և բարձրանում է դեպի կոշտ քիմքը՝ թողնելով փոքր անցք: Այվիկների և ասամների մոտ նեղվածքը լայնանալով՝ բերանի ետին մասում ստեղծում է լայն կոկորդային հնչարան: Շրթունքները գրեթե չիզոք բացվածք ունեն, թեև մի փոքր դուրս են մղվում: Այն միջնալիզովային քմային ձայնորդ է: Նրա արտաբերման ժամանակ լիզովի եզրերը դիպչում են քիմքին, մեղտեղում նեղ անցք թողնում օդի հոսքի համար: Տարբեր ձայնափոխներից առաջ յ-ն թողնում է տարբեր հետքեր: Յի, յե հնչյունակապակցություններում լիզովի հպման հետքերը ավելի լայն են, ավելի առաջ ձգված, իսկ օդի անցքը՝ ավելի նեղ: Յա կապակցությունում ճեղքի լայնությունը մեծանում և ետ է քաշվում:

Ճիզիկական բնութագրեր: Ըստ սպեկտրանկարների՝ նրա հիմնական մասը կազմում են անցումները: Նրա սպեկտրի կայուն մասը կարճատև է, անցումները՝ երկար: Ընդհանուր էներգիան Վ-ձայնավորի համեմատությամբ ցածր է: Նրա սպեկտրում նկատվում է բարձր հաճախականության աղմուկ:

Քաղաձայների դասակարգման աղյուսակ

Արտասանության տեղը	Պարզ						Բարդ			
	ձայնորդ		շփական		պայթական		դարձական		պայթաշփական	
	զգայական	հոգայական	ձայնեղ	լուսեղ	հոգեղ	լուսեղ	հոգեղ	լուսեղ	հոգեղ	լուսեղ
Նրկչրթնային		ն	վ	ֆ	ք	պ	փ			
Շրթնատամնային	լրո	ն	վ	ֆ	ք	պ	փ	ձ	ձ	ց
Առաջնալիզովային			զ	ժ	չ	ժ	ժ			
Միջնալիզովային			զ	ժ	չ	ժ	ժ			
Նտեղիզովային										
Շաղապային										

**ԵՐԿԱՐԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԵՐԿՆՁՅՈՒՆՆԵՐ**

Երկբարբառները սովորաբար կազմվում են երկու և ավելի իրար հաջորդող ձայնավորներով, արտասանվում են միասնաբար իբրև մեկ վանկ, և նրանցից մեկը (կամ երկուսը) կորցնում է իր վանկարար ուժը:

Երկբարբառներով առանձնապես հարուստ է գրաբարը: Գրաբարյան երկբարբառները բարբառներում վեր են ածվել մեկ ձայնավորի: Բուն իմաստով ժամանակակից հայերենը երկբարբառներ չունի:

Գրաբարյան երկբարբառները կազմված են մեկ ձայնավորով և յ (հի) ու չ (ժյուն) կիսաձայններով:

այ—այլ, ձայն, կայծ, գայթիլ, ար—արե, արծ, արար, գարգ, ծառար. Ետ—պատեան, սեճեակ, վայրկեան, մատեան. եւ—աղբեր, առեծ, ալեր, բեր, մեա, գեղ. իւ—ալիւր, աղբիւր, բիւր, ձիւն, ճիւր, փիւն. ոյ—բայս, լոյս, համբայր, բայր. տ—սոփով, որդւոց և այլն: Գրաբարում կան նաև եռարբառներ:

Եայ (բխտանայ, անդայ), ետ (արդեաւ, պատեանեաւ, գեաւ), տյ (այգտյն, կենդանտյն), իայ (միայն):

Գրաբարի երկբարբառների՝ հայերեն բարբառներում միահնչյուն դառնալը երևում է հետևյալ օրինակներում. գրաբար՝ գեղ, ձիւն, ալիւր, սիւն, այլ, լոյս, բարբառներում՝ գեղ, ձիւն, ձուն, ալիւր, ալուր, սին, էլ, լուս, լիւ և այլն:

Ժամանակակից հայերենը չի պահպանել գրաբարի նշված երկբարբառները և, միաժամանակ, չի էլ որդեգրել հիշյալ երկբարբառներին համապատասխան բարբառային միահնչյուն համակարգը:

Ժամանակակից հայերենում ձայնավորով և ձայնորդ կիսաձայն յ-ով կազմվում են երկհնչյուններ՝ այ (հայր, մայր), ոյ (գայանայ, խոյանայ), ոյ (զույն, երեկույթ, հանույթ), էյ (թէյ), յա (կյանք, մատյան, միամյա), յո (յոթ, արդյոք), յա (հյուսիս, ձյուն, հյուր), յե (երեկո, երգ), յի (գայի, գնայի) և այլն:

Գրական լեզվում միայն երկու (և ավելի) ձայնավորներից կազմված կապակցություններում բառերի և բառաձևերի արտասանման ժամանակ ձայնավորներից մեկը վեր է ածվում ձայնորդ կիսաձայն յ-ի. ինչպես, օրինակ՝ դաստիարակ—դաստյարակ, մի—միայն—միմյայն, Մարիամ—Մարյամ և այլն:

**ՆՆՁՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ**

Տարբեր պատճառներով բառերի և բառաձևերի մեջ հնչյունների այս կամ այն կարգի փոփոխությունը կոչվում է հնչյունափոխություն:

Ժամանակակից հայերենում կարելի է նշել հնչյունափոխության երեք տիպ՝ դիրքային կամ շեշտի ազդեցությամբ կատարվող, փոխազդեցական և պատմական<sup>10</sup>:

<sup>10</sup> Մ. Արեղյան, նշվ. աշխատ., էջ 82—103: Գ. Ասախ, նշվ. աշխատ., էջ 90—95: Ժամանակակից հայոց լեզու, Կ. Ի, էջ 129—161, 2. Անտոյան, իրականացրելու փոխություն հայոց լեզվի, Կ. Ս, Երևան, 1971, էջ 602—716:

Ժամանակակից հայերենում գործուն և կենսունակ է հիմնականում դիրքային կամ շեշտից կախված հնչյունափոխությունը:

**1. Իրեբային կամ շեշտի ազդեցությամբ կատարվող հնչյունափոխություն**

Հայերենում, ինչպես հայտնի է, բառի մեջ շեշտն ընկնում է վերջին վանկի ձայնավորի վրա, հետևաբար և ուժեղ է համարվում ձայնավորի այդ դիրքը: Անշեշտ մյուս ձայնավորները շեշտակիր այդ ձայնավորի համեմատությամբ թույլ և անկայուն են: Բառի ածման (հոլովման, խոնարհման, հոգնակիի կազմության, ածանցման, բառաբարդման) դեպքերում, երբ շեշտը տեղափոխում է իր տեղը, թույլ դիրքերում գտնվող որոշ ձայնավորներ հնչյունափոխման են ենթարկվում: Հնչյունափոխության այս տիպը կոչվում է նաև ավանդական կամ ժառանգորդական, իբրև լեզվի դարգացման նախորդ փուլից, մասնավորապես գրարարից ավանդված կամ ժառանգված:

Հիմնականում հնչյունափոխվում են՝ է (ե), ի, ու, սակավ՝ ա, ո(ո) ձայնավորները:

է (ե) ձայնավորի հնչյունափոխությունը:

1) է (ե) ձայնավորը՝ դառնում է Ի:

ա) բառակազմում. էշ—իջնել, էշ—իշային, իշաբեռ, էգ—իզական.

բ) բառամիջում՝ փակ վանկում. սեր—սիրո, սիրել, սիրային, գես—գիսակ, գիսավոր, կես—կիսել, կիսակատար, գեր—գիրանալ, վեպ—վիպասան, տեր—տիրոջ, տիրել, տիրակալ, անգետ—անգիտակ, գիտուն, գիտնական, բնագետ—բնագիտություն, հայագետ—հայագիտություն, պարտեզ—պարտիզայան, Հովհաննես—Հովհաննիսյան, Ներսես—Ներսիսյան.

2) է (ե) ձայնավորը չի հնչյունափոխվում.

ա) բառավերջում. մարգարե—մարգարեական, բոլբոլ—բոլբոլական.

բ) թեքման ձևերում և հոգնակիի կազմության ժամանակ. պարտեզ—պարտեզի, պարտեզներ, վեպ—վեպի, վեպեր.

գ) Մի բանի բարդություններում. էջ—էջմիածին, էջկապ, էջաշար:

Ի-ձայնավորի հնչյունափոխությունը: 1) Ի ձայնավորը դառնում է Ը.

ա) բառակազմում. ինձ—ընձենավոր, ընձուղա, ինչ—ընչափաղց.

բ) փակ վանկում (դառնում է գաղտնավանկի շարվողը). գիր—գրել, ծին—ծ/ը/նել, սիրա—ս/ը/րտառ, ս/ը/րտակից, ազնիվ—ազն/ը/վական, ֆիմֆ—ֆ/ը/մային, միմֆ—մ/ը/տաբերել, մ/ը/տազար.

գ) արմատի կրկնությունը կցական բարդություն կազմելու դեպքում. բ/ը/ոք/ը/ոպ/ը/թի/ո, գ/ը/լգ/ը/լալ/գի/ը, կ/ը/ցկ/ը/ցել/կից/ը, ձ/ը/զձ/ը/զել/ձից/ը, կ/ը/րկիա, բ/ը/շիշ/բիշ/ը և այլն.

դ) բարդ բառերի թեքման դեպքում, երբ բարդության վերջին բաղադրիչը միավանկ է. բեռնակիր—բեռնակ/ը/րի, ծեղգիր—ծեղգ/ը/րի.

2) բառաբարդման և ածանցման դեպքերում բազմավանկ բառի բաց վանկում ի ձայնավորը միանալով ա հոդակապին, դառնում է Ե («է»). այգի—ա—գործ—այգեգործ, գինի—գինեգործ, ուղի—ուղեգիր, ակի—ակեգույն, բարի—բարեկամ.

3) բառավերջի Ի ձայնավորը դառնում է Յ ակ վերջածանցով կաղնվող բառերում. աղավնի—աղավնյակ, հոգի—հոգյակ, որդի—որդյակ, պատանի—պատանյակ, կղզի—կղզյակ.

4) Ի ձայնավորը սղվում է.

ա) մի շարք բառերի փակ վանկում. կապիկ—կապկել, կապկամառ, գեղեցիկ—գեղեցկանալ, գեղեցկաղեմ, ծաղիկ—ծաղկել, ծաղկի.

բ) բառավերջում՝ աղամորդի—աղամորդու, աղամորդություն, ազնվամեղի—ազնվամեղություն, ազնվամեղորեն, ազնվամեղաբար, գինի—գինու, մորի—մորու, մորթի—մորթու, մորթեղեն.

5) Ի ձայնավորը չի հնչյունափոխվում.

ա) որոշ միավանկ բառերում: ձի (ձիավոր, ձիավարել, ձիասլասֆ), թի (թիակ, թիավարել), մի (միավորել, միակազմ) և այլն.

բ) բարդ բառերի երկրորդ բաղադրիչ հանդիսացող միավանկ այն բառերում, որտեղ այդ բաղադրիչներն իրենց հիմնական իմաստը չեն պահպանել. հրածիգ—հրածիգի.

գ) հոգնակի կազմության դեպքում, երբ բարդ բառերի երկրորդ բաղադրիչ հանդիսացող միավանկ բաղադրիչները պահպանում են իրենց իմաստը կամ անձ են նշանակում. խմբագիր—խմբագիրներ, հրածիգ—հրածիգներ, ականակիր—ականակիրներ, բեռնակիր—բեռնակիրներ:

Ու ձայնավորի հնչյունափոխությունը: 1) Ու ձայնավորը բառամիջում (փակ վանկում) դառնում է գաղտնավանկի շարվողը Ը.

\* Գրաբարբառ է:

ա) բաղադրման, թեքման, հոգնակիի կազմության դեպքերում. տուն—տ/ը/նային, տ/ը/նական, տ/ը/նվոր, շուն—շ/ը/նային, շ/ը/նեք, սուր—ս/ը/բապատյան, ս/ը/բեք, ս/ը/բի, բուրդ—բ/ը/բուրդատու, փախուստ—փախ/ը/ստական, ժողովուրդ—ժողով/ը/բողական, ժողով/ը/բողի (բայց՝ ժողովուրդներ), առտուեք—առտ/ը/նշալ, շշունք—շշ/ը/նշալ, մեմուեք—մեմ/ը/նշալ.

բ) երբ միավանկ բառը, որպես բարդ բառի երկրորդ բաղադրիչ, չի պահպանում իր հիմնական իմաստը. անձեռեղբուր—անձեռեղբ/ը/բի, անձեռեղբ/ը/բեք. հողաթումբ—հողաթ/ը/մբի, հողաթ/ը/մբեք. հրոսակախումբ—հրոսակախ/ը/մբի, հրոսակախ/ը/մբեք.

գ) արմատի կրկնությունը կցական բարդություն կազմելու դեպքում. մ/ը/բմուտ, ծ/ը/փծ/ը/փալ /ծուփ/, շ/ը/բշ/ը/բշել /շուբշ/, շ/ը/բշ/ը/բուկ /շուբ/, փ/ը/բփ/ը/բել, փ/ը/բփուր:

2) Բառավերջի բաց վանկի Ու ձայնավորը երբեմն դառնում է Վ. առու—առվի, առվակ. դասատու—դասատվի, դասատրվական, լեզու—լեզվաբան, լեզվի, լեզվական. մեղու—մեղվապան, մեղվի. բու—բվի, ուրու—ուրվական, ուրվագիր, ուրվանկար:

3) Ու ձայնավորը սղվում է որոշ բառերում. անուր—անթ (թևատակ), ինչպես նաև ում-ով վերջացող բայանուններում Ան—հոլովման դեպքում. կառուցում—կառուցման, ուսուցում—ուսուցման, ծանուցում—ծանուցման, մարզում—մարզման:

4) Ու ձայնավորը չի հնչյունափոխվում.

ա) հոգնակիի կազմության դեպքում, հիմնականում բառավերջի դիրքում. կիւ—կիւնեք, մեղու—մեղունեք, ուրու—ուրունեք, ինչպես նաև՝ ժողովուրդ—ժողովուրդներ.

բ) բառի թեքման դեպքերում, երբ իբրև բարդ բառի երկրորդ բաղադրիչ հանդես եկող միավանկ բառը պահպանում է իր հիմնական իմաստը. հացքոլխ—հացքոլխի, ջրմուղ—ջրմուղի, գազամուղ—գազամուղի:

Ժամանակակից հայերենում որպես գործուն օրինաչափություն հնչյունափոխման չեն ենթարկվում ա, օ(ո) ձայնավորները Այնուամենայնիվ կարելի է նշել նաև այդ հնչյունների հնչյունափոխման մի քանի դեպքեր:

1) Մի քանի բառերում նկատվում են ա, օ ձայնավորների սղման դեպքեր. պակասորդ—պակասող, անապարհ—անպարհ, պահապան—պահպանել, շահանջահ—շահնջահ, ամառ—ամառն, բաղանիք—բաղնիք, համարել—համբել, դադարել—դադրել, ֆաղափ—ֆաղփենի, վարուժանակ—վարուժնակ, կամ՝ օրկուր—օրկրամուլ, օրուհան—օրահան, ծածուրակ—ծածուրակ:

66

2) Արմատի կրկնությունը կազմված կցական և կրկնավոր միջարբ բարդություններում. ա) Ա-ն դառնում է գաղտնավանկի Ը. վազվ/ը/զել, բափք/ը/փել, խաբխ/ը/բել, ծամծ/ը/մել, խազխ/ը/զել, կապկ/ը/պել, մազմ/ը/զուկ, պահպ/ը/նել, ֆաշք/ը/շել և այլն. բ) Ա-ն դառնում է ու. խարխուլ, աղջամաղջ, խաղճախաղճ, խաժամոժ, սպառասպուռ, մանր—մունր, մազ—մուզ, ծակ—ծուկ, ադֆառ—ուղբուռ, լակոտ—լուկուտ. գ) Ա-ն դառնում է ո(օ). հայհոյել. դ) ա-ն դառնում է ե(է). ֆաղցր—մեղցր. ե) օ(ո)-ն դառնում է ու. լակոտ—լուկուտ. զ) օ(ո)-ն դառնում է գաղտնավանկի Ը. կոժոխուր—կժոխուր:

Վերկենչյունների հնչյունափոխությունը: Բառաբարդման կամ ածանցման ժամանակ շեշտակորույս լինելով՝ հնչյունափոխվում են հետևյալ երկհնչյունները.

1) ՅԱ երկհնչյունը դառնում է Ե. վայրկյան—վայրկենական, վայրկենաբար, մատյան—մատենագիր, մատենագրաբան, առյան—ատենակալ, ատենագրիչ:

2) ՈՒՅ երկհնչյունը վեր է ածվում ու պարզ հնչյունի. բույր—բուրավետ, բուրմունք, լույս—լուսավոր, լուսե, ֆույս—հուսահատ, հուսալքվել, կապույտ—կապուտակ, կապուտաշյա:

3) ՈՒՅ երկհնչյունը մի քանի բառերում սղվում է կամ ստանում է գաղտնավանկի Ը. կապույտ—կապտել, կապտաբիծ, կապտախտ, սառույց—սառցադաշտ, սառցալեռ, սառցաջերտ, պրտույտ—պտտվել. պտտահողմ, պտտածող, ֆույր—ֆոռք, ֆոռքուրդի և այլն:

4) Մնացած երկհնչյուններն ընդհանրապես չեն հնչյունափոխվում: Կան որոշ բացառություններ: Յու երկհնչյունը՝ ա) մի քանի բառերում դառնում է Ե. միություն—միութենական, եղջյուր—եղջերափող, եղջեավոր, արյուն—արենակից. բ) դառնում է գաղտնավանկի Ը. ձյուն—ձնագնդի, ձնծաղիկ և այլն. գ) մի քանի բառերում սղվում է. այլուր—այրավանտ, այրաղաց. արյուն—արնաբիծ, արնագույն և այլն:

2. Պատմական հնչյունափոխություն

Պատմական է կոչվում հնչյունափոխության այն տիպը, երբ լեզվի զարգացման պատմության ընթացքում տարբեր պատճառներով որոշ հնչյուններ կամ հնչյունակապակցություններ փոխում են իրենց որակը կամ սղվում են: Հնչյունափոխման նշվող երկվույթը կատարվել է հիմնականում լեզվի զարգացման նախաաշխարհաբարյան փուլում և ժամանակակից հայերենում այլևս չի գործում:

1) Հնչյունների փոփոխություն կարող է առաջանալ բառում

հնչյունի գրաված դիրքի շնորհիվ: Հնչյունն այս դեպքում փոփոխման է ենթարկվում ինչպես բառասկզբում, այնպես էլ բառավերջում, որ պայմանավորված է արտասանության թուլացմամբ կամ դադարով:

ա) Սղվել է գրաբարի Ի վերջնահնչյունը որոշ բառերում: Օրինակ՝ հրախի, արծուի, տեղի—հյուսիս, արծիվ, անդ:

բ) Սղվել է գրաբարի Յ ձայնորդը բառավերջի ա, ս ձայնավորին հաջորդող դիրքում. աղայ—տղա, ծառայ—ծառա, քահալայ—քահալա, կարսայ—կարսա, շղթայ—շղթա, երեկոյ—երեկոս և այլն:

գ) Սղվել է ն ձայնորդ վերջնահնչյունը գրաբարյան մի շարք միավանկ և բազմավանկ բառերում, այդ թվում նաև բայանուններում. գառն—գառ, դուռն—դուռ, ձուկն—ձուկ, մուկն—մուկ, լուսանն—լուսան, ուսումն—ուսում, լուծումն—լուծում, որոշումն—որոշում և այլն: Այդ կարգի բառերի սղված ն հնչյունը վերականգնվում է հիշյալ բառերի աճման (թեքման, հոգնակիի կազմության և բաղադրման) ժամանակ. գառ—գառներ, գառնարած, դուռ—դռներու, դռնապան, ուսում—ուսումնական, ուսումնասեր:

2) Գրաբարյան բառակղբի Յ հնչյունը ժամանակակից հայերենում դարձել է շ. յիսուն—հիսուն, յիշել—հիշել, յիմար—հիմար, յարկ—հարկ, յար—հար (հար և նման), յարուցանել—հարուցել:

3) Գրաբարի պատճառականի -ուցան(-ել) ածանցը ժամանակակից հայերենում դարձել է -ց, -(ու)ց, -ցն. խաղաղեցուցանել—խաղաղեցնել, մատուցանել—մատուցել, յարուցանել—հարուցել:

4) Կատարվել է հնչյունների միացում. ա) խուլ պայթականը միանալով հաջորդ շ-ին, կատարվել է պայթականի շնչեղացում, նաև՝ բարդացում. սեպուհ-ական > սեպհական > սեփական. բ) պարզ հնչյունների վերածում բարդի. արաաուտ > արցունք (տս > ց):

5) Կատարվել է հնչյունների պարզեցում, երբ բառի մեջ բարդ հնչյունները վեր են ածվում պարզի. ծածանել > տատանել, սասանել (ծ > տ, ս), աղաչել—աղոթք, հանաչել—ծանոթ, չուտո > թշվառ (չ > թշ), կոշկոնել (ն > շ), կասկած, կսկիծ, կսկուծ և այլն:

### 3. Փոխազդեցական հնչյունափոխություն

Փոխազդեցական է կոչվում հնչյունափոխության այն տեսակը, որի դեպքում հնչյունի փոփոխությունը կատարվում է բա-

ռի մեջ հնչյունների միմյանց վրա ազդելու պատճառով: Հնչյունափոխության այս տիպին են պատկանում՝ առնմանումը, տարնմանումը, դրափոխությունը, հնչյունի հավելումը, հնչյունի կուրառք, անփոփումը և համարանական հնչյունափոխությունը:

Հնչյունափոխության նշված տեսակներից ժամանակակից հայերենում գործուն և կենսունակ են միայն մի քանիսը (թերի առնմանումն ու տարնմանումը), մյուսները ոչ միայն գործուն և կենսունակ չեն, այլև հնչյունափոխության համակարգում սակավաթիվ փաստեր ընդգրկելու պատճառով լեզվի զարգացման արդի փուլի համար կարևոր արժեք չեն ներկայացնում:

ա) Առնմանում: Առնմանումը հնչյունափոխական այն երեվույթն է, երբ բառի մեջ երկու տարբեր հնչյուններից մեկը ազդելով մյուսի վրա՝ նույնացնում կամ նմանեցնում է իրեն: Առնմանումը լինում է՝ լիակատար և թերի, առաջընթաց և ետընթաց: Առնմանումը լիակատար է կոչվում, երբ առնմանման ենթարկվող հնչյունը բացարձակապես նույնանում է՝ առնմանման ենթարկող հնչյունին:

Առնմանումը թերի (մասնակի) է կոչվում, երբ առնմանման ենթարկվող հնչյունը մասամբ է նմանվում առնմանման ենթարկող հնչյունին:

Առաջընթաց է կոչվում այն առնմանումը, երբ առնմանման ենթարկող հնչյունը ազդում է իրենից առաջ գտնվող հնչյունի վրա՝ փոխելով նրա որակը:

Ետընթաց է կոչվում այն առնմանումը, երբ առնմանման ենթարկող հնչյունը ազդում է իրենից ետ գտնվող հնչյունի վրա՝ փոխելով նրա որակը:

Թոկիկ > բոբիկ բառում կատարվել է լիակատար առաջընթաց առնմանում, երկրորդային ձայնեղ պայթական Բ-ն ազդելով իրենից առաջ գտնվող ետնալեզվային խուլ պայթական կ-ի վրա՝ ամբողջապես նմանեցրել է իրեն:

Աֆոլել > սֆոլել բառում կատարվել է թերի, ետընթաց առնմանում. առաջնալեզվային ձայնեղ շփական Գ-ի վրա ազդելով՝ ետնալեզվային շնչեղ-խուլ պայթական Բ-ն խլացրել է, դարձնելով՝ առաջնալեզվային խուլ շփական ս: Թերի է առնմանումը, որովհետև Գ-հնչյունի միայն մեկ՝ ձայնեղության հատկանիշն է փոխվել:

Թերի ետընթաց առնմանման գործուն օրինակափոխությամբ ժամանակակից հայերենում կազմվում է Բ հոլովակազմից ազդածիական հոլովը. արյամբ < արյան + բ, պայթական Բ-ն հարկադրաբար

ազդելով առաջնաբեկվածին ձայնորդ ն-ի վրա, դարձնում է մ, որը նմանվում է Բ-ին արտաբերության տեղով:

բ) Տարնամանում: Առնամանան հակառակ երևույթն է տարնամանումը, երբ բառի մեջ նույն կամ նման հնչյուններից մեկը ազդում է մյուսի վրա և լրիվ կամ մասնակիորեն տարբերում իրենից: Վարնամանումը նույնպես կարող է լինել՝ ա) լիակատար, երբ տարնամանն ենթարկվող հնչյունը բացարձակապես փոխում է իր որակը. մասնակի կամ բերի, երբ հնչյունը մասնակիորեն է տարբերման ենթարկվում) բ) առաջընթաց, երբ տարնամանն ենթարկող հնչյունն ազդում է իրենից առաջ դրվող հնչյունի վրա. ետընթաց, երբ հիշյալ հնչյունն ազդում է իրենից ետ գտնվող հնչյունի վրա: Այսպես, նույն՝ բոկիլ բառում միաժամանակ առկա է տարնամանն երևույթը. բառավերջի ետնաբեկվածին խուլ պայթեցական Կ հնչյունը ազդելով բառամիջի Կ հնչյունի վրա, ամբողջապես փոխել է նրա որակը՝ դարձնելով Բ (բոբիկ) շրթնային ձայնի պայթեցական:

Թերի (մասնակի) տարնամանում է կատարվել հետևյալ բառերում. արձագանգ—արձագանք, դժգույն—տժգույն, բարբառներում՝ բարբոշ (կենդանուած, խորշոմած) > բարփոշ, բրփոշ, մղեղ > մնեղ (փոշենման, մանր հարդ), տաշտակ > տաշնակ (խաղողի թուփ): Տարնամանն երևույթ է նկատվում մի շարք բառերի հնչման դեպքում. ինչպես՝ ամպրոպ > անպրոպ, ամփոփ > անփոփ և այլն:

գ) Հնչյունի հավելում: Հնչյունի հավելում է կոչվում հնչյունափոխության այն երևույթը, երբ բառի մեջ ավելանում է մի նոր հնչյուն: Այսպես, ոգի բառարմատին ավելանալով մեկական հնչյուն՝ առաջացել են նոր բառեր. ոգի—շոգի—նոգի. Վ-հնչյունի հավելումով՝ ապա—հապա, արբել—հարբել, գրբ. ագանել—հագանել, որբ—հորբ, անար—հանար, անդ (անդաստան)—հանդ, բարբառներում՝ արբ—հարբ, ամբար—համբար: ն հնչյունի հավելումով՝ մեբ—մեմբ, կառաչ—կառանչ (լացի կանչ), երնչակ—երրնչակ, բարբառներում՝ բոնիր—բոնիր, բունդիր, բնդիր, արտասուբ—արտասումբ, կամաց—կամաց:

Հնչյունի հավելում է կատարվել նաև կրկնավոր մի շարք բարդություններում. աման—չաման, օլոր—մօլոր, ավել—մավել, աղբառ—մաղբառ, ոսկոր—մոսկոր, ամբաղ—գամբաղ, առակ—գառակ, առակ—պառակ և այլն:

դ) Հնչյունի կորուստ: Հնչյունի կորուստ է կոչվում հնչյունափոխության այն երևույթը, երբ բառի մեջ ընկնում (սղվում) է որևէ հնչյուն: Օրինակ՝ համբառակ—ամբառակ, խարշել—խաշել, քարշել—քաշել, հարգո—արգո, պահս—պաս, խորնել—խոն, Հակոբ—

Ակոբ և այլն: Հնչյունի կորուստ է կատարվել. 1) կրկնավոր բարդություններում. այլուն—փայլուն (փայլուն—փայլուն), առոբ—փառոբ (փառոբ—փառոբ), ակաս—պակաս, ավալ—բավալ.

2) արմատի կրկնությունը կազմված կցական բարդություններում. հուպայ (<հոկհոպ), հեկեկալ, հատոտել, հագագ, հայթայթել, հեղեղ (<հեղհեղ), հողողող, կեռեսոց (<կեռկեսոց), պոպակ (<պակպակ), խոպպիկ (<խոպխոպիկ), խաղաղ (<խաղխաղ), փաթաթել (<փաթփաթել), փոփոխել և այլն:

3) Արտասանության ժամանակ Հ-ի անկում է նկատվում մի շարք բառերում. աշխար(հ), ար/հ/ամար/հ/ել, հաշվապա/հ/, հերթապա/հ/, նախապա/հ/ և այլն:

4) Հնչյունի կորուստ է կատարվել պատմական հնչյունափոխությանը գրաբարյան ի, յ, և հնչյունների անկման դեպքում. տեղի > տեղ, ծպոս > ծառ, գառն > գառ և այլն:

ե) Հնչյունների դրափոխություն: Դրափոխություն է կոչվում հնչյունափոխական այն երևույթը, երբ բառի մեջ միմյանց վրա ազդելու հետևանքով հնչյունները փոխում են իրենց տեղերը. խստոր > սխտոր, տարգալ > տրգալ—գղալ, ձգել > գցել, կապերտ > կարպետ, մաղախ > մախաղ: Դրափոխության երևույթը հատկապես տարածված է ժամանակակից հայերենի ոչ գրական՝ ժողովրդախոսակցական և բարբառային արտասանության դեպքերում. զոհանչ—զոնհաչ, կնեպ—կպեն, դատարկ—դարդակ, կամուրջ—կարմուրջ, բաշխել—բախշել, հարյուր—հարույր, համբույր—համբյուր, ձյուն—ձույն, նյութ—հույթ, սյուն—սույն և այլն:

զ) Հնչյունների ամփոփում և կրճատում: Ամփոփում է կոչվում հնչյունափոխության այն երևույթը, երբ բառի կազմում եղած իրար հաջորդող նույն հնչյունակապակցություններից կամ վանկերից մեկը կրճատվում է. հասարակակարգ—հասարակարգ, երասանակակալ—երասանակալ, աշխարհանալած—աշխարհալած, աշխարհանայացք—աշխարհայացք, տավարաբաժ—տավարաբ, տեղանուններում՝ Մարմարաշեն—Մարմաշեն, Համամաշեն—Համաշեն:

Կատարվում է նաև ոչ միայն առանձին վանկերի, այլև ամբողջական բառի առանձին մասերի կրճատում՝ հատկապես հատուկ անուններում: Կրճատման եղանակով բառի հնչյունափոխման այս երևույթը կոչվում է արտակարգ հնչյունափոխություն: Օրինակ՝ Կարապետ—կարո, Հայրապետ—Հայրո, Խաչատուր—խաչո, Աստվածատուր—Աստուր, Մատուր, Տատուր, Հովհաննես—Սհան, Օհնիկ, Հանես, Ավան, Ստեփանոս—Ստեփան, Սեփան, Սեփո, Տեփան, Պեպան և այլն:

է) Համարանական հնչյունափոխություն: Համարանական



(կամ նմանակալին) է կոչվում հնչյունափոխական այն երևույթը, երբ իմաստաբանորեն կամ ձևաբանորեն նման կամ նույն իրողությունների արտահայտող բառի (կամ բառաձևի) ազդեցությամբ տվյալ բառը (կամ բառաձևը) լրացնում է իր հնչյունական կազմը մի նոր հնչյունով կամ հնչյուններով: Օրինակ՝ ցած բառը բարձր բառի ազդեցությամբ՝ ցածր. զգույշ/բառի համաբանությամբ՝ բռնուշ քառք արտասանվում է բնույշ. սեպեմքեր բառը հոկսեմքեր և դեկսեմքեր բառերի ազդեցությամբ ժողովրդական լեզվում արտասանվում է սեկսեմքեր. գրաբարում՝ գրեմ—ապառնի՝ գրեսցես—հ համաբանությամբ՝ առնեմ—առացես:

### ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ուղղախոսությունն ընդգրկում է գրական լեզվի բանավոր խոսքի պատմականորեն ձևավորված արտասանական նորմաները: Այն միաժամանակ սահմանում է միասնական գրական արտասանություն: Այդ առումով էլ ուղղախոսությունը նորմավորված գրական արտասանության կանոնների ամբողջությունն է: Նրա հիմքում ընկած է բնիկ հայկական և փոխառյալ բառերում առանձին հնչյունների և հնչյունակապակցությունների արտասանությունը, որ պայմանավորված է ժամանակակից հայոց լեզվի հնչյունական համակարգում այդ միավորների փոխազդեցությամբ առաջացած օրինաչափություններով:

Այսպիսով, ուղղախոսությունը լեզվի զարգացման տվյալ փուլում բանավոր խոսքում բառերի (ավելի ճիշտ՝ բառերում հնչյունների և հնչյունակապակցությունների) գրական նորմավորված, այսինքն՝ գրական լեզվի պահանջների տեսակետից ընդունված, ճիշտ արտասանությունն է: Այդ նշանակում է, որ այն պետք է զերծ լինի բարբառային, անհատական, ինչպես և լեզվի համակարգին խորթ՝ օտար արտասանությունից:

Գրական ճիշտ արտասանության հիմքում ընկած է ուղղախոսական նորման: Ժամանակակից հայերենի ուղղախոսական նորման լեզվի զարգացման տվյալ փուլի համար ընդունված միակ հնարավոր կամ նախապատվություն տրվող արտասանական տարբերակն է, և բանավոր խոսքում գործող մյուս բարբառային և օտար արտասանությունները, որոնք չեն արտահայտում ժամանակակից լեզվի հնչյունական համակարգի հիմնական օրինաչա-

փությունները, համարվում են ոչ ճիշտ և անընդունելի: Մյուս կողմից, ուղղախոսական նորմաների համակարգը մեկընդմիջ տղրված և անփոփոխ չէ: Լեզվի զարգացման ընթացքում նրա համապատասխան համակարգի հետ, թեև դանդաղ, բայց և այնպես ժամանակի ընթացքում փոփոխվում, հղկվում են նաև արտասանական նորմաները: Այդ տեսակետից ժամանակակից գրական արտասանությունը զերծ չէ նաև որոշ տատանումներից, որոնք, սակայն, որակական արժեք չեն ներկայացնում, հետևաբար և որևէ շահով չեն կարող ազդել ուղղախոսական գործող կանոնների վրա: Գրական արտասանության նորմաները պետք է յուրացվեն յուրաքանչյուր կուլտուրական մարդու կողմից և ճշտորեն գործադրվեն լեզվի հաղորդակցման ընթացքում:

Գրական արտասանության նորմաները շատ դեպքերում խոսողից խոսքի ընթացքում պահանջում են որոշ զգաստություն, ուղղախոսական-արտասանական կանոնների գիտակցական կիրառում: Այդ դեպքում խոսողը գիտակցաբար վերանում է իր ընտանեկան-մտերմական արտասանությունից, աշխատում է հաղթահարել մայրենի բարբառից ժառանգած արտասանական որոշ տարրերը<sup>11</sup>:

Ժամանակակից հայոց լեզվի արևելահայ տարբերակի հնչյունական համակարգը, ինչպես և բառերը իրենց հիմնական գծերով պահպանել են գրաբարյան հնչյունական համակարգի, ինչպես նաև բառերի պատկերը: Գրաբարի համեմատությամբ որևէ փոփոխման չի ենթարկվել նաև շեշտը: Այդ պատճառով էլ արևելահայ գրական լեզվի համար արտասանության տեսակետից հիմնականում ճիշտ է համարվել գրաբարի գրապատկերը, տվյալ բառի գրաբարյան գրությունը և դրա համապատասխան արտասանությունը:

Ժամանակակից գրական լեզվի արտասանական նորմաների ձևավորման գործում որոշակի դեր են կատարել նաև ժողովրդական-խոսակցական լեզվի արտասանական որոշ նորմաներ, որոնք գրական լեզվին են անցել ընդհանուր գործածական բառերի հետ:

Ուղղախոսական նորմաների մշակման, միօրինակացման գործընթացի վրա տարբեր ժամանակներում իրենց հետքն են թողել նաև հայերենի ուղղագրության նորմավորման որոշ հարցերի հետ կապված դժվարությունները, որոշ բառերի ուղղագրության անմիօրինակության, զուգահեռ ձևերի առկայության դեպքերը,

Ուղղախոսություն հայերեն տերմինը կազմված է օտարաբան օրֆոզոնիա բառի նմանողությամբ. վերջինս ծագում է հունարեն orthos՝ ճշիշտ, ուղիղ և epos՝ խոսք բառերից:

<sup>11</sup> Ք. Դարագլույյան, Ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսությունը, Քրեմլ, 1974:

ուղղագրության վերանայման, վերափոխման և բարեփոխման հետ կապված հարցերը:

Արդի փուլում ժամանակակից հայերենի գրական արտասանության հիմնական միտումներն ընթանում են ուղղափոխական կանոնների պարզեցման ուղղությամբ: Միաժամանակ աստիճանաբար նվազում և վերացման ընթացքում են գտնվում արտասանական տարբերակները, բարբառային և օտար արտասանությունը, նկատվում է նաև բանավոր խոսքի մտեցում գրավոր խոսքին, արտասանության «գրքայնացման» որոշ միտում:

Ժամանակակից հայերենի գրական արտասանության կատարելագործման գործընթացն ընթանում է հետևյալ ուղղությամբ.

ա) կատարվում է գրական արտասանության միօրինակացում: Այդ նշանակում է, որ աստիճանաբար վերանում կամ վերացման եզրին են գտնվում արտասանական տարբերակները:

բ) Տեղի է ունենում գրական արտասանության աստիճանական տարածում: Այդ նշանակում է, որ գրական արտասանությունը իր մեջ է առնում հայոց լեզվով խոսող հանրության ավելի լայն զանգվածներն ու բոլոր խավերը և ձգտում է դառնալ ժողովրդի բանավոր խոսքի միակ ձևը:

գ) Գրական արտասանության աստիճանական տարածման ընթացքում իրադրծվում է համապատասխանաբար բարբառային և օտար արտասանության աստիճանական նվազում և ապա նաև վերացում:

### ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա, ի, ու ձայնավորները ժամանակակից հայերենում գրվում և արտասանվում են ա, ի, ու:

աա— տառակապակցությունը գրվում և արտասանվում է աա, առանց յ հոդակապի. ամենաարգանատելի, հակաստումային, հեռուստաանտեննա, կիսաանապատ:

առ— կապակցությունը գրվում և արտասանվում է առ, առանց ձայնակապի. Բառս— Բառս, առտա, կակառ և այլն:

աու— կապակցությունը գրվում և արտասանվում է աու. ամենաուրախ, ձիաու, հատկապես օտարազգի, փոխառյալ բառերում. աու, աուտոդաֆե, լաուրեստ, լոկաուտ, կաուչուկ, նոկաուտ, ֆաուլա և այլն:

աի— կապակցությունը արտասանվում է ա/յ/ի մի շարք բառերում. նաիվ, մոզաիկա, կոկաին, աբիաիկ, աբիաիզմ, նովոկաին, տղայի և այլն:

ան— կապակցությունն արտասանվում է յ թույլ ձայնակա-

պով, ինչպես նաև տատանվում է (ան) երկբարբառակերպի և (այ) երկհնչյունի միջև. մատառո— մայեսառո, աերոբազա, աերոսկուր, աերոբենգին, աերոզոլ, աերոսատիկա և այլն:

Իս— կապակցությունը արտասանվում է ա) յա. կրիա— կրյա, փասիան— փասյան, հեֆիաթ— հեֆյաթ. փոխառյալ բառերում՝ ալկադեմիա, ավիացիա, մատերիա, միլիցիա, էներգիա, բիլիարդ, վարիանտ. բ) իյա. արդիական— արդիյական, ճիանալ— ճիյանալ, լիանալ— լիյանալ, միավորվել— միյավորվել, ձիավոր— ձիյավոր, հիլանալ— հիլիյանալ, ձիաու— ձիյաու. փոխառյալ բառերում՝ թերապիա, էնալգիա, Մարիա, Լիա և այլն. գ) մի բաղադրիչով կազմված բաղադրություններում արտասանվում է իա. միամյակ, միանման, փոխառյալ բառերում, հատկապես բառասկզբի դիրքում. դիագրամ, դիալեկտիկա, դիալոգ, դիագնոզ, ֆիասկո և այլն:

Եե (է)— կապակցությունը արտասանվում է. ա) իյէ. ձիեր— ձիյեր, թիեր— թիյեր, փոխառյալ բառերում՝ պիես, կլիենտ, հիերոգլիֆ, Մարիետա, Վիեննա. բ) յե արտասանվում է փոխառյալ բառերում. ֆելիետոն, կարիերա, պրեմիերա, Վիետնամ, Զուլիետա և այլն:

Իի— կապակցությունը արտասանվում է իի. լիիրավ, լիիմաստ, միիմաստ:

Իո— հնչյունակապակցությունը արտասանվում է. ա) յո. օրիորդ— օրյորդ, միլիոն— միլյոն, ռադիո— ռադյո, իդիոմ— իդյոմ, պիոներ— պյոներ, շեմպիոն— շեմպյոն և այլն: Թույլ ձայնակապով (յ) է արտասանվում — որեն մակբայական ածանցյին նախորդող դիրքերում. վստանելիորեն, բազմակողմանիորեն, անդառնալիորեն. բ) բաղադրություններում, երկու բաղադրիչների սահմանազծում արտասանվում է իօ, առանց ձայնակապի. միօրյա, անմիօրինակություն:

Իու— հնչյունակապակցությունը արտասանվում է. ա) իյու ձայնակապով. լիություն— լիյություն, միություն, աբիություն, Բաղադրություն և այլն: Այդ արտասանությունը հատուկ է հատկապես օտարազգի, փոխառյալ բառերին. ալվարիում, սիմպոզիում, բարիում, կալցիում ցելսիուս և այլն. բ) արտասանվում է իու, առանց ձայնակապի հայերեն բաղադրություններում՝ երկու բաղադրիչների սահմանազծում. միումանի, լիուլի, ինչպես նաև մի շարք փոխառյալ բառերում. աբիումֆ, աբիումվիբատ և այլն:

է— ձայնավորը հանդես է գալիս երկու տառով՝ է, է: Բառասկզբում է ձայնավորը բաղաձայնից առաջ հնչվում է է. էման, էգ, էտ, էտել, էշ, էրոց: է հնչումը պահպանվում է նաև աֆսե բա-

զաղրութիւններում, որի երկրորդ բաղադրիչն սկսվում է է-ով, ամենաէական, մանրէ, դողեոցք, որձնէջ:

Ե—տառը միայն բառակազմում է հնչվում է (յե). երամիշա, երեկո, երագ, երանի, երևալ, երգ, երվանդ, երևան: Բառամիջում հնչվում է է. երգել, մեղեդի, մենէրգ, երէխա, երէք, տասնէրէք, անէգր, վէրէլակ, Մէրգէլ: Որոշ բաղադրյալ բառերում և հատկապես ձայնավորից առաջ Ե-ով սկսվող բաղադրիչները պահպանում են Ե հնչումը. կիսանգրափակիչ, ամենաերկար, բայց՝ անէզակի, անէգր:

Յա— կապակցութիւնը հնչվում է. ա) Յա. առօրեական— առօրյական, հրեա—հրյա (բայց՝ հրեական—հրէական), միջօրեական—միջօրյական, Բրիտանական—Բրիտանյական, Անդրեաս—(յան)—Անդրյաս(յան). օտարազգի, փոխառյալ բառերում, եթե Ե-ն ա-ից առաջ շեշտված չէ, ինչպես՝ իղեալ-իղյալ, լաուրեառ, ռեակցիա, սեանս և այլն. բ) մնացած հայերեն բառերում եա (էա)-ն արտասանվում է էյա. էակ—էյակ, էական—էյական, անէանալ—անէյանալ, մարգարեական—մարգարէյական, ինչպես նաև՝ քեական, խարեական. գ) արտասանվում է էա, երկու ձևույթների միջև սահմանագիծը պարզորոշ կերպով գիտակցելու դեպքում. ափեափ—ափէափ, հոգեառ—հոգէառ, ռեակտիվ, ռեակտոր, ռելեյիոն, ռեաբիլիտացիա, տորեադոր:

էի— կապակցութիւնը արտասանվում է էյի. ռոպեի—ռոպէյի, խմէյի, բերէյի:

էն— կապակցութիւնը արտասանվում է էէ. երէէրեն (գրվում է հրէերեն):

եՅ— կապակցութիւնը արտասանվում է. ա) մի քանի բառերում՝ էյօ. ռոպեով—ռոպէյով, բազեով—բազէյով, մանրէով—մանրէյով և այլն: բ) Հիմնականում արտասանվում է յօ փոխառյալ բառերում. Ֆեռզալ—ֆյոզալ, ամեռքա, իղեռլոզիա, Բարդուղիմեոս, Նապոլեոն: գ) Մի շարք բառերում փոփոխութիւն չի կրում, արտասանվում է էօ. նեոկանտական, նեոֆաշիզմ, նեռն, մետեոր, մետեորիտ, քեռլոզիա, խորեոգրաֆիա, պլաեոլիթ, նեոլիթ, կեօ, կեռնարդ, Մոնտեմիդեո և այլն:

էու, եու— հնչունակապակցութիւնը արտասանվում է էյու. էուրյուն—էյուրյուն, ռոպեու—ռոպէյում, խարեուրյուն, մարգարեուրյուն և այլն:

Օ— ձայնավոր հնչյունը արտահայտվում է օ և ո տառերով: Բառակազմում օ տառը գրվում և հնչվում է օ. օրենք, օդ, օրեվան, օր, օրոշի: Բառակազմի օ հնչյունը պահպանում է իր գրութիւնը և հնչումը նաև բաղադրութիւններում, երբ օ-ով սկսվող

բառերը ածանցվում կամ բարդութիւններ են կազմում և փոխում են իրենց դիրքը. անօրինակ, անօրինական, անօրևան, ապօրինի, մեղմօրոշ:

Ո—տառը բառակազմում հնչվում է ՎՕ. որոա, որմնաղիւր, ոս, սխ, ոսխ, որպես, որպիսություն, որոշել, որովնետ: Ո-ով սկսվող բառերը բաղադրութիւնների մեջ (ածանցման և բառաբարդման դեպքերում) փոխելով իրենց դիրքը, չեն պահպանում Վօ հնչումը և հնչվում են օ. անօրակ—անօրակ, անօրոշ—անօրոշ, տարօրոշել—տարօրոշել, անօրդի—անօրդի, աներօրդի—աներօրդի:

Մյուս բոլոր դիրքերում օ-ն արտասանվում է օ. դժգոն, երեկո, մայրակ, մայրվել, բայր, գորովանք և այլն:

Ոա (օա)— կապակցութիւնը արտասանվում է օա առաջին բաղադրիչը օ-ով վերջացող հետևյալ բաղադրութիւններում. կինօարվեստ—կինօարվեստ, կինօարտադրություն, կինօատղ և այլն:

Ը ձայնավոր հնչյունը բառակազմում հնչվում է իբրև ը. ընկեր, ընձուլա, ընչափաղց, ըմբիշ, ըմպել, ընկնել, ըղձալ, ընդհանուր, ընտրություն: Բառավերջում գրվում և հնչվում է ը, երբ հաջորդ բառը սկսվում է բաղաձայնով, կամ, երբ տրամաբանական շեշտն ընկնում է բառավերջի ը-ի վրա: Բառի մեջ գրվում և արտասանվում է այն դեպքերում, երբ ը-ով սկսվող ձևույթը ածանցվում է (նախածանց է ընդունում) կամ հանդես է գալիս իբրև բարդ բառի բաղադրիչ կամ, երբ ը-ն բառի միակ ձայնավոր հնչյունն է. խոշընգոտ, ինքնըստինքյան, դասընկեր, անընկեր, անըստցյուտ, Մըւր:

Գաղտնավանկ ը հնչյունը չի գրվում, բայց լրիվ կամ մասամբ հնչվում է՝ սկ, սպ, ստ, սփ, սք, գք, գզ, գմ, շպ, շտ կապակցութիւններում և բառակազմում, բառամիջում և բառակազմում երկու, երեք և չորս բաղաձայնների կուտակման դեպքերում (տե՛ս բաղաձայնների արտասանութիւնի բաժնում):

Ու— ձայնավոր հնչյունը բառակազմում, բառամիջում և բառավերջում արտասանվում է ու. ուսանող, ուրու, անուրախ, աղուև, ուրաւ:

Ոա— կապակցութիւնը արտասանվում է ոա հիմնականում բաղադրութիւններում. երկուական, երկուաշխանի, գնչուական, փիւրցուական, փոխառյալ բառերում՝ բուրժուա, էվակուացիա, մեմուար, դուալիզմ, ամալյաւ:

Ոի— կապակցութիւնը ա) արտասանվում է ձայնակապակցով, ալի. ժողովածուի—ժողովածույի, օղաչուի—օղաչույի, գ) անար-

ազգի բառերում արտասանվում է առանց փոփոխության, Ու-  
սյութա, ինտուիցիա, կազուիստիկա:

Ուն (ուէ), ուտ (ուօ) — կապակցությունները սովորաբար ար-  
տասանվում են առանց ձայնակապի, հիմնականում օտարազգի,  
փոխառյալ բառերում. դուետ, մենուետ, սիլուետ, Վենետիկա,  
վիրտուոզ և այլն:

### ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1) Կրկնակ բաղաձայնների արտասանությունը: Բառ կամ  
բառաձևի մեջ նույն բաղաձայնի կրկնության դեպքում ժամանա-  
կակից հայերենում դրսևորվում է արտասանական հետևյալ օրի-  
նաչափությունը<sup>12</sup>:

ա) Բառամիջում կրկնակ բաղաձայնները որոշ տևողու-  
թյամբ հնչվում են մի շարք արմատական բառերում (այդ-  
թվում նաև բնածայնական բառերում), նրանցով կազմված բա-  
ղադրություններում, բառամիջում բառի մեջ կատարված հնչյու-  
նափոխությամբ առաջացած ձևերում, ինչպես նաև օտարազգի,  
փոխառյալ բառերում. բբ — աբբա, աբբահայր, դդ — ընդդեմ, ընդ-  
դիմախոս, ընդդիմադիր, հակընդդեմ, Բուդդա, բբ — փթթել  
ֆթթել, լլ — բալլադ, Տալլին, ծծ — կծծի, կկ — երկկողմ(անի), երկ-  
կայմանի, մակկեկորդ, բնակկառավարչություն, դդ — ուղղահայաց,  
ուղղագրություն, ուղղախոսություն, ուղղագիծ, ուղղակի, ուղղու-  
թյուն, ֆադդեկ, ՄՄ — համեմման, սեղմման, ֆամման, գամմա,  
կմմա, Ջեմմա, յյ — եայյան, նն — ֆենել, զենել, գերաններ, վրան-  
ներ, աննշմար, աննպաստ, երևաննախագիծ, վաննա, տոննա, Ան-  
նա, Սուսաննա, ջջ — բջջի, բջջային, բջջակորիզ, սս — երեսսերիչ,  
մասսա, վվ — ապառհավվել, գրավվել, խորովվել, հաշվվել, հուլով-  
վել, նզովվել, րր — անդորրագիր, բերրի, բերբան, օրբան, մորիկ,  
ձյունամերիկ, տարբական, երբորդ, շորբորդ, ցց — կեցցե, մեցցո-  
ստպրանո, գ, ժ, շ, ո — կրկնակ բաղաձայններով կազմված բնա-  
ձայնական բառերում. բզզալ, դզզալ, վզզալ, խզզալ, բծծալ, դծծել.  
վծծալ, բշշալ, խշշալ, վշշալ, բոռալ, գոռալ, մոռալ և հազվագյուտ  
դեպքերում բառավերջում. անդորր, տարր:

բ) Բառասկզբի և որոշ դեպքերում նաև բառամիջի և բառա-  
վերջի դիրքերում կրկնակ բաղաձայնների միջև հնչվում է գաղտ-  
նավանկ ը. բառասկզբում՝ գզզել, գզզել, կկոցել, կկոցնի, կկանգ-  
նի, կկոտրի, կկու. բառամիջում՝ այբբեն, այբբենական, կազմման,  
դրոշմման. բառավերջում՝ լույսս, հարսս, հույսս, վարսս:

2) Բառասկզբում և բառավերջում իրար հաջորդող երկու և  
ավելի բաղաձայնների արտասանությունը: ա) Բառասկզբի իրար  
հաջորդող երկու և ավելի բաղաձայնների դեպքում արտասան-  
վում է ը. բրորնցամարտ, զրնացի, գրրեցի, դրնգրատել, թրընա-  
մի, հրբեշ, մրկրատ, մրկրատել, մրցել, նրզգրատել, շրջիկ և  
այլն, Սկ, սպ, ստ, սփ, սֆ, զբ, զգ, զմ, շպ, շա հնչյունակապակ-  
ցություններով սկսվող բառերի սկզբում արտասանվում է Ը.  
բսկսել, բսպսել, բսպիտակ, բստույզ, բստանալ, բսփոփել, բս-  
ֆոդել, բզբադվել, բզբադմուխ, բզբույշ, բզբեռնել, բզբոն, բզ-  
մայվել, բշտապել, բշտեմարան, բշտապել, փոխառյալ՝ ապիբա,  
սպրտ և այլն:

Երեք և ավելի բաղաձայնների դեպքում ը-ն արտասանվում  
է վանկատման սկզբունքով. մրկրատել, Մրկրատչյան, նրզգրատել,  
մրշտընչենական, բրծրշվել և այլն: Ը-ն պահպանում է իր արտա-  
սանությունը նաև այդ կարգի բաղադրիչ բառերով կազմված բա-  
ղադրություններում. անհրաժեշտ, անմրկրատ, անտրամաբանա-  
կան, ազգագրագետ, ազոավակրաուց, ազաթթու, անըման:  
բ) Բառավերջում երկու և ավելի բաղաձայնների դեպքում դրանց  
միջև ըստ վանկատման սկզբունքի սովորաբար արտասանվում է  
ը. ուրեմբն, երբեմբն, հայրբդ, մայրբդ, հայրբս, մայրբս: Մի  
շարք բառերում գաղտնավանկի ը-ն չի արտասանվում. ինչպես՝  
կամֆ, բույլֆ:

3) Բաղաձայնական կապակցությունների արտասանությունը  
բառամիջում: Բառամիջում երեք և ավելի բաղաձայնների կու-  
տակման դեպքում հնչումը կատարվում է վանկատման սկզբուն-  
քով. արբ-շիռ, հանգ-շել, վայրկ-յան, հաշտ-վել, գաղտ-նի: Այս-  
պիսի դեպքերում երկու բաղաձայնները հնչվում են միասնաբար:  
Կա նաև այդ կարգի բառերի գաղտնավանկ ը-ով արտասանու-  
թյունը. ընկըմել, ընկըմըմել, ընկրկել, ակընկալել, պատը-  
վակ, շատըման, մագըրցել, բոցկրտալ, կրկնել, ֆրենմել, գը-  
նըմել, ընկըմել, տեսըմել, օգտըմել, հայտըմել. ը-գաղտ-  
նավանկ է առաջանում նաև պս, փս, տս, տշ, բշ, ֆս հնչյունակա-  
պակցություններում. պատըսպարել, սպըսպրել, պատըբամբ,  
հափըշտակել, բաբըստոց: Բառամիջում սկ, սպ, ստ, սփ, զբ, զգ,  
շպ, շա հնչյունակապակցություններից առաջ ը գաղտնավանկը  
պահպանվում և արտասանվում է, եթե դրանցով սկսվող հիմնա-  
կան ձևովին նախորդում է բաղաձայն. անբսպատելի, անըգտը-  
վերբատուգիչ, անըսփոփ, անըգրադ, բաբըստոց, փախըստակալ և  
այլն: Գաղտնավանկը չի արտասանվում, երբ այդ հնչյունակա-

<sup>12</sup> Ք. Կարազյուլյան, նշվ. աշխատ., էջ 105—120:

պակցութիւններին նախորդում է ձայնավոր. հիաստան, բանաստեղծ:

Ձայնեղ պայթականների և պայթաշփականների արտասանութիւնը: Ձայնավորներից և ր, մ, ն, ղ հնչյուններից հետո ձայնեղ ր, գ, դ պայթականները և ձ, շ պայթաշփականները որոշ դեպքերում խլանում և արտասանվում են իբրև փ, թ, ւ շնչեղ խուլ և պայթաշփական խուլ՝ ց, ն:

ա) ք—փ. Ձայնեղ պայթական ք-ն շնչեղ փ է հնչվում հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրութիւններում.

1. ձայնավորից հետո՝ խաբել—խափել (խաբերա, խաբելություն, խաբուսիկ), շարքա—շափաք (երկուշաքթի, երեքշաքթի, չորեքշաքթի և այլն), իբրև—իփրև, արխազ—ափխազ.

2. ր, մ— ձայնորդներից հետո. ուրբաք—ուրփաք, նուրբ—նուրփ, նարբել—նարփել, համբերել—համփերել, համբույր—համփույր, նաև հետևյալ անձնանուններում՝ Գարբիել, Հակոբ, Սերոբ, Քերոբ: Գրաբար բուն ունի երկակի արտասանութիւնն.

բ) ք—պ. Ձայնեղ պայթական ք-ն խլանում և հնչվում է խուլ պայթական պ:

1. ՂԲ հնչյունակապակցութիւնը խպ է հնչվում հետևյալ բառերում. աղբ—ախպ (աղբակույտ), աղբյուր—ախպուր, եղբայր—ելխպայր, ողբ—ոխպ (ողբանվագ, ողբասաց, ողբերգություն): Մնացած բառերում ՂԲ-ն ունի գրային արտասանութիւն. աղբյուր, աղբադուլ, բողբոջ(ել), կուղբ, շեղբ, Կողբացի:

2. Մնացած բառերում, հատկապես միջին և նոր շրջանի փոխառութիւններում ք-ն ձայնավորից հետո պահպանում է գրային արտասանութիւնը. արքա, արքա, արքեր, աշխարհարար, հերոսարար, պատահարար, գուր, դարաղ, գոր, կարարե, հոբելյար, հոբելյան, հորոյ, յակոբին, նարաթ, շարաթ, չոբան, պոբլեմ, ինչպես նաև մի շարք անձնանուններում՝ Արգար, Արել, Ջարել, Անոր, Հարեթ, Հոթ, Ռուրեն և այլն:

գ) գ—բ. Ձայնեղ պայթական գ-ն հնչվում է շնչեղ խուլ ք հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրութիւններում.

1. ձայնավորից հետո. նոզի—նոփի, ավագ—ավափ, մարագ—մարափ, կարագ—կարափ, շոգ, ուրագ, նրագ, նրագու, քագավոր, սուգ (սգալ, սգավոր), մուգ (մգանալ), տեգր, օգուտ, օգնել (օգնական, օգնություն, օգտակար, օգտագործել), զագս, զուգել, էգ, էգուց, ծեգ, ծագել (աբևածագ, ծագում), հագնել (հագուստ), հոգալ (հոգաստար), հոգնել, հոգի (հոգեառ, հոգեբանություն), հոգնակի, ձագ (ձագուկ), ձիգ (ձգել, ձգձգել, նրածիգ), ճիգ, ճգնել, ճգնամամ, նորոզել, Գրիգոր, Օգսեն և այլն:

2. Բ— ձայնորդից հետո. երգ—երփ, կարգ—կարփ, քարգմանել—քարգմանել, միրգ—միրփ, մարգարիտ—մարգարիտ, ինչպես նաև Գևորգ—Գևորփ, Մարգար—Մարգար, Սարգիս—Սարփիս և այլն: Բաղադրութիւններում սրանցից շատերը վերականգնում են իրենց ձայնեղ հնչումը, ինչպես՝ երգիծանփ, համերգ, ողբերգություն, ժամերգութիւն:

3. Ն— ձայնորդից հետո. անգամ—անհամ. մյուս բառերում իշխում է գրային արտասանութիւնը. սրինգ, ճինգ, հանգչել, մանգան:

4. Ղ-ից հետո գ-ն խլանում և հնչվում է կ. ղգ կապակցութիւնն արտասանվում է խկ՝ շաղգամ—շախկամ:

5. Մնացած բառերում և հատկապես գրաբարից ժառանգած ու միջին և նոր փոխառութիւններում ձայնավորից հետո գ-ն պահպանում է գրային արտասանութիւնը. ագան, ագարակ, ագի, ագուլ, անագին արագ, արեգ(ակ) (արեգնափայլ), բագին, գագաթ, դագաղ, դեգերել, եղեգ(ն), քագ (քագաղբել, քագակիր, քագածառանգ), նագենալ, անհագուրդ, հեգ (հեգել), հեգնանփ, ձագար (ձագարած), նագար, հաղագայթ, մեգ (միգամած), զուգաբանություն, զուգանեռ, մոգ, մոգական, մոգպետ, նվագ (անգամ), դագանակ, ոգել (ստոգանություն), ոգուրել, ոտոգել, որոգայթ, սագ, սեգ (սիգապանծ, սիգանեմ), վագր, տեգ, փափագ, դագա, դոգմա, զիգզագ, լիգու, կագուր, մագնիս, միգրացիա, վագոն, օգոստոս, ինչպես նաև մի շարք անձնանուններում՝ Գագիկ, Գարեգին, Գրիգորիս, Տիգրան և այլն:

6. Մի շարք բառերում գ-ն թեև ունի երկակի արտասանութիւն, բայց տերմինաբանական կոմիտեի որոշման համաձայն (գոգավոր, գոգնոց), երկրպագել, երկրպագություն, զուգադիպել, զուգանեռ, զուգակցել, զուգընթաց, քագունի, հեգ (խեղճ), նվագ (նվագել, նվագաբան), վարագույր (վարագուրել) և այլն:

դ) Գ—Ք. Ձայնեղ պայթական Գ-ն հնչվում է իբրև շնչեղ խուլ ք.

1) ձայնավորից հետո. օղ—օթ, դագար—դարար (դադարել), դղում—դթում, գղալ—գթալ, Թաղևոս—Թաթևոս: Պահպանում է գրային արտասանութիւնը հետևյալ բառերում. եղեմ, բաղ, հող, հողված, Սեդրակ(յան), սաղայել, զինադադար:

2) Բ— ձայնորդից հետո. գարդ—գարթ, բուրդ—բուրթ, մարդ—մարթ, վարդ—վարթ, երդում—երթում (երդվել), կարդալ—կարթալ, ջարդել—ջարթել, բարդ—բարթ, լարդ—լարթ, որսորդ—որսորթ, արդար—արթար, հաջորդ—հաջորթ, հաջորդել—հաջորթել,

աւղյունք—արթունք, ժողովուրդ—ժողովուրթ, ինչպէս նաև այն բոլոր բաղադրյալ բառերում, որոնք կազմված են —արդ, —ուրդ, —արդ վերջածանցներով:

Երկակի արտասանութիւն ունի բառավերջի —րդ կապակցութիւնը բակարդ, կախարդ, երիտասարդ, խորաւարդ, խորհուրդ, մնացորդ բառերում: Մնացած բառերում և հատկապես միջին ու նոր փոխառութիւններում պահպանում է գրային արտասանութիւնը. աղամանդ, աղամուրդի (աղամամուրթ), բաղ, ցոլոր, զող, գողի, ծղրիդ, հող (հողորոշ), աղաթ, անող (էլեկտրական), կատող, բուրդ, իղեա, իղեալիսա, լեղի, լիգեր, լիմօնաղ, մարինաղ, մողա, մեթող, լող, շկալաղ, ռաղիո, սաղաֆ, սողա, օղեկարն, օրդեր, դարդ, կակորդիլոս, հուրդ, դադր, նարդի, նամարդ, բուրդ. նաև՝ Աղամ, Աղամյան, Թողիկ, Թեղիկ, Թեղորոս, Մարոյան և այլ անձնանուններում և ազգանուններում: Երկակի արտասանութիւն ունեն վառող բառը և Սեդրակ անձնանունը. նախապատվութիւնը տրվում է գրական արտասանութիւնը:

3. Ն— ձայնորդից հետո. անդամ—անթամ, խնդիր—խնթիր, կենդանի—կենթանի: Մյուս բառերում պահպանվում է գրային արտասանութիւնը. հանդես, ծնունդ (ծննդաբերել), սնունդ, խնդալ և այլն:

4. Ընդ նախդիրով կազմված մի քանի բառերում. ընդունել—ընթունել, ընդհանուր—ընթհանուր, ընդամենը—ընթամենը, ընդունակ—ընթունակ: Այդ նախդիրով կազմված շատ բառեր ունեն գրային արտասանութիւն. ընդգրկել, ընդդիմախօսել, ընդդեմ, ընդդիմադիր, ընդելուզել, ընդգծել:

5. Ղդ— կապակցութիւնը հնչվում է խա. խեղդել—խեխտել, խեղդաման, բխխեղդ: Գրքային և փոխառյալ բառերում և հատուկ անուններում պահպանում է գրային հնչումը. Բաղդաղ:

6. Յ— ձայնորդից հետո դ-ն խլանում և արտասանվում է ա. այդ—այտ և դրանով կազմված բաղադրութիւններում՝ այդպես, այդպիսի, այդքան, ըստ այդմ, այդօրինակ:

Ե) Ձայնեղ պայթաշփական ձ-ն հնչվում է ց հետևյալ դիրքերում.

1) ձայնավորից հետո. օձ—օց, օձան, օձապտույտ, օձաբույս, օձանոկ.

2) Բ— ձայնորդից հետո. արձակ—արցակ, բարձ—բարց, բարձր—բարցր, բարձի—բարցել, դարձ—դարց, ինչպէս և դերձակ—դերցակ, հանդերձ, խուրձ, համբարձում, որձ, վարձ, փորձ և դրանցով կազմված բաղադրութիւններում. արձակուրդ, բնդարձակ, համարձակ, բացարձակ, մանկաբարձ, ամբարձիչ, վերամ-

բարձ, բարձիթաղի, բարձրաբերձ, բարձունք, վերադարձ, իրադարձութիւն, դարձյալ, դարձնել, դարձվածք, հարձակողական, նախանարձակ, հարձակում, որձակառոտ, որձատել, վարձատրել, բրնակվարձ, օրավարձ, փորձել, փորձագետ, փորձանք, անփորձ և այլն: Նույն դիրքերում մի շարքբառերում ձ-ն ունի երկակի արտասանութիւն. Տերմինաբանական կոմիտեի որոշման համաձայն նախապատվութիւնը տրվում է գրային արտասանութիւնը. արձան (արձանագործ, արձանագրութիւն), արվարձան, վրձին և նրանցով կազմված բաղադրութիւններում: Մնացած բառերում ր— ձայնորդից հետո ձ-ն ունի գրային արտասանութիւն. արձագանք, ամորձի, լորձ (լորձաթաղանթ, լորձունք), հերձ (հերձել, դիաներձառան), հորձանք, նորձանուտ, ձորձ, մերձ (մերձավոր, մերձակա, մերձենալ, մահամերձ, տնամերձ), ֆուրձ (ֆրձագցեստ, ֆրձեղէն), ուղերձ, խարձ (հղեգնուտ, ձումբ), հանդերձանք:

3. Ղձ— հնչունակապակցութիւնը արտասանվում է խց հետևյալ բառերում. դեղձ—դիխց, դեղձենի—դիխցենի, դեղձան, դեղձանիկ, դաղձ: Մյուս դեպքերում ղձ հնչունակապակցութիւնն ունի գրային արտասանութիւն. առաղձ (առաղձագործ), գեղձ, գուղձ, բաղձ (բաղձալ, բաղձանք, հայրենաբաղձ), իղձ, հեղձ (հեղձաման, ջրահեղձ), մաղձ (մելամաղձոտ), մղձավանջ, փղձկալ, բղձալ, բղձական և այլն:

դ) Ձ ձայնեղ պայթաշփականը հնչվում է խու պայթաշփական շ հետևյալ դիրքերում.

1. ձայնավորից հետո. աջ (աջակողմ), առաջ, մեջ, մեջք, ոչիլ, վայրէջք, անէջք, ֆաջք, առաջարկ, առաջին, առաջնորդ, առաջիկա:

Մի շարք բառերում ջ-ն ունի երկակի արտասանութիւն, բայց տերմինաբանական կոմիտեի որոշման համաձայն նախապատվութիւնը տրվում է գրային արտասանութիւնը. աջակցել, իջնել (իջեվան, իջևանատուն, իջեցում), հաջող (հաջողակ, հաջողութիւն), զիջել. մեջ արմատից կազմված՝ անմիջական, միջակ, միջակեալ, միջանկյալ, միջանցք, միջատ, միջոց, միջբաղաճային, միջադեպ, միջնակարգ, միջուկ, միջավայր, միջև, միջամտել, բնումիջում, անբնումեջ և այլ բառերը, ոչ— հոլովիչով հոլովվող բառերը՝ ֆոջկնոջ, բնկերոջ և այլն:

Մնացած բառերում և հատկապես միջին և նոր շրջանի փոխառութիւններում ջ-ն ունի գրային արտասանութիւն, արտասանվում է ջ. ալոջ (կենդր.), բջիջ, գեջ, դադոջ, էջ (էջակալ, էջակալում), խոխոջ (խոխոջութիւն), խնջույք, հաջորդ, մարմաջ, շեջ (հըրշեջ, անշեջ), ֆաջ, ֆրէիջ, ֆուջուջ, գաջ, դաջ (դաշել, դաշվածք), հաջի և այլն:

2. Բ և ո ձայնորդներից հետո. առջ, վերջ, վերջին, քրջել, առջև: Զ-ն պահպանում է գրային արտասանությունը նաև ր և ո ձայնորդներից հետո, բացի վերոհիշյալ բառերից. երջանիկ, երջանկություն, լուրջ, կամուրջ (կամուրջել), մրջյուն, շուրջ (չրջել, շրջապատել) և այլն:

3. Դջ— հնչյունակապակցությունը խշ է արտասանվում հետևյալ բառերում և նրանցով կազմված բաղադրություններում. աղջիկ—ախշիկ, աղջկառակ (բույս), ամբողջ (ամբողջական, ամամբողջանալ), ողջ (ողջանալ, ողջույն, ողջակեզ, ողջություն, առողջ) և այլն: Մնացած բառերում դջ հնչյունակապակցությունն ունի գրային արտասանություն. աղջամուղջ, գաղջ (գաղջանալ, գաղջություն), գեղջուկ (գեղջկունի, գեղջկական), բղջախոհ, եղջերու, եղջուր (եղջուրավոր, եղջրաբաղանք), գղջալ (գղջում, գղջանար), շեղջ (շեղջել, շեղջակույս), շղջիկ և այլն<sup>13</sup>:

Խույ պայթականների և պայթաշփականների արտասանությունը: Ժամանակակից հայոց լեզվի գրական արտասանության օրինաչափությունն այն է, որ խույ պայթական պ, տ, կ, փ, ք, ֆ և խույ պայթաշփական ծ, ն, շ բաղաձայն հնչյունները բոլոր դիրքերում՝ բառակազմում, բառամիջում և բառավերջում մնում են անփոփոխ, արտասանվում են խույ<sup>14</sup>:

Հ—շփական (հազագային) բաղաձայնի արտասանությունը:

Հ-ն առանձնապես ուժեղ է բառակազմի դիրքերում և պահպանում է իր արտասանությունը ինչպես բառակազմում, այնպես էլ ն-ով սկսվող բաղադրիչներով կազմված բաղադրություններում. հառել, հոսել, հառել, հակառակ, հակադիր, համալիր, ահհատ, օհհասական, ներհոսել, ընդհակառակը և այլն:

Բաղաձայնների տղում: Որոշ բաղաձայններ ձայնորդից հետո կամ բաղաձայնների կուտակման դեպքերում չեն արտասանվում կամ թույլ են արտասանվում: Հ-ն չի արտասանվում կամ թույլ է արտասանվում բառավերջում և հատկապես ր— ձայնորդից հետո. աշխարհ, ճանապարհ, խոնարհ, շնորհ, ընդհանուր, խորհուրդ և դրանցով կազմված մի շարք բաղադրություններում՝ համաշխարհային, աշխարհաֆաղաֆացի, արհամարհանք, արհամարհել,

ճանապարհազուրկ, ճանապարհաշինություն, աղաշնորհ, շնորհակալություն, խոնարհվել, խորհրդավոր, ընդհանրական, ընդհանրություն և այլն: Արտասանության ժամանակ բաղաձայնների սղում է նկատվում նաև մի շարք բառերում մի քանի բաղաձայնների կուտակման դեպքում. երածշուրջություն—երա(ծ)շուրջություն, որպեսզի—որպես(զ)ի, Մկրտչյան—Մկր(տ)չյան, աշխղեկ—աշ(խ)ղեկ և այլն: Այդ երևույթը նկատվում է նաև նորագույն փոխառություններում՝ մասշտաբ—մա(ս)շտաբ:

### ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ f

Լեզվաբանության մեջ գրաբանություն բառը ունի մի քանի իմաստներ:

ա) Գրաբանությունը<sup>15</sup> գրային նշանների ամբողջությունն է, որով բանավոր խոսքը հաղորդվում է գրությամբ, գրավոր ձևով՝ այբուբենի տառերով, շեշտի, առոգանության և կետադրության նշանների միջոցով:

բ) Գրաբանությունը այբուբենի տառերով հնչյունների (հնչյունների) և հնչյունակապակցությունների արտահայտման միջոց է, և այդ առումով էլ այն չի առնչվում հնչյունների իմաստային կողմին: Մինչդեռ, ուղղագրությունը բառերում և ձևայիններում որոշելով հնչյունի արտահայտման կանոնները՝ դրանով կապվում է նաև լեզվի իմաստային կողմի հետ:

գ) Ավելի լայն իմաստով գրաբանությունը համատեքստով տառերի և հնչյունների (հնչյունների) հարաբերակցության համակարգն է:

Գրաբանություն է կոչվում լեզվի գիտության այն բաժինը, որն ուսումնասիրում և նկարագրում է տառերի և հնչյունների (հնչյունների) միջև եղած կապերն ու հարաբերությունը: Այն ուսումնասիրում է այբուբենի կապը տվյալ լեզվի հնչյունական համակարգի հետ պարզում թե որոնք են առանձին տառերի հնչյունական համապատասխանությունները և կամ ինչպե՞ս է կարգացվում այս կամ այն տառը: Նրա ուսումնասիրության հիմնական հարցը տառի հարաբերումն է հնչյունին (հնչյունին):

<sup>13</sup> Մ. Ասատրյան, Արևելահայ գրական լեզվի ձայնի պայթական բաղաձայնների արտասանությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1978, № 2, 32—48; Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 1978, 207—214; Թ. Ղառազյուլյան, Եզվ. աշխատ., էջ 127—214:

<sup>14</sup> Մ. Ասատրյան, Արևելահայ գրական լեզվի պայթական բաղաձայնների արտասանությունը (ՀՍՍՀ ԳԱ «Երաբեր հասարակական գիտությունների»), 1978, № 6, 45—51:

\* Գրաբանություն հայերեն տերմինը կազմված է օտարազգի գրաֆիկա բառի նմանողությամբ (հունարեն graphikē — գեղագրություն, γραφικῆ— գրում եմ):

<sup>15</sup> Գ. Զահալյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, 96—116:



Գրանշանների մեջ մտնում են տառերը և կետադրական (տրո-  
հուսթյան և առոգանության) նշանները:

Հայերենի գրային նշանները պայմանական բնույթ ունենե-  
ցապի տեքստում ամեն մի գրանշան գրվում է առանձին, այս-  
պես կոչված ընդհատական շարքում: Ձեռագիր տեքստում գրա-  
նշանները գրվում են մասամբ միացած, մասամբ՝ անջատ: Լեզ-  
վական արժեք ունեցող ընդհատումները գրավոր խոսքում նշա-  
նակվում են կամ բացատրով կամ հատուկ նշաններով, որոնք  
ցույց են տալիս ընդհատման տարբեր աստիճանները:

Տառը խոսքի հաղորդման գրային նշան է, որ նշում է որո-  
շակի հնչույթ: Տառը յուրաքանչյուր առանձին հնչույթի (հնչյունի)  
կամ հնչյունակապակցության պայմանական նշանն է, հնչյունի  
գծապատկերը:

Տառերի ամբողջությունը դասավորված ընդունված կարգով  
կոչվում է այբուբեն: Այբուբեն բառը կազմված է հայերեն այբու-  
բենի առաջին և երկրորդ՝ ա և բ տառերի անվանումից (այբ, բեն  
կցված աւ շաղկապով)՝ հոնարեն համանշանակ այբավիտա (α, β)  
բառի նմանողությամբ:

Հայերենն ունի 36 հնչույթ և 40 տառ (ներառյալ նաև ւ տառը):

Մեսրոպյան այբուբենն ունեւր 36 տառ: Տարբեր ժամանակնե-  
րում հայերեն այբուբենն են մուտք գործել՝ օ, ֆ, ու, և տառերը, և  
դուրս է ընկել ւ-ն:

Ժամանակակից հայերենի այբուբենը ներկայացնում է որո-  
շակի գրային համակարգ: Հայերենի յուրաքանչյուր հնչյուն (հըն-  
չույթ) ունի իր համապատասխան տառը: Որոշ տառեր նշանակում  
են երկու հնչյուն: Ծ տառը բառասկզբում նշանակում է յե, բառա-  
միջում և բառավերջում՝ է, ք տառը բառասկզբում նշանակում է  
վօ, բառամիջում և բառավերջում՝ օ, և-ը համապատասխանում է  
եվ (յէվ) կապակցությանը: Տառերն ունեն իրենց անվանումները  
և թվային արժեքը:

Մ. Մաշտոցը և հայ գրերի գյուտը: Հայաստանում 4-րդ դարի  
վերջերին և 5-րդ դարի սկզբներին ստեղծված հասարակական-քա-  
ղաքական պայմանների թելադրանքով, հայ ժողովրդի հոգևոր և  
ֆիզիկական անկախությունն ու ինքնուրույնությունը, պետական  
և ազգային միասնությունն ու ամբողջականությունը պահպանելու

համար անհրաժեշտություն դարձավ սեփական գրի և գրականու-  
թյան ստեղծումը: Հայ գրերի ստեղծման նվիրական գործին՝ ձեռ-  
նամուխ եղավ Մեսրոպ Մաշտոցը: /

Մ. Մաշտոցը ծնվել է մոտ 361 թ. Տարոնի Հացեկաց գյու-  
ղում, ազատ շինական վարդանի ընտանիքում: Բարձրագույն կրթ-  
թությունն ստացել է Ասորիքի Անտիոք քաղաքում: Մերձավոր  
Արեւելքի գիտության և արվեստի այդ հռչակավոր օջախում նա  
սովորում է հունարեն և ասորերեն, ծանոթանում՝ ասորական և  
անտիկ գրականությանը: Գիտելիքների հարուստ պաշարով վերա-  
դառնալով Ասորիքից, Մ. Մաշտոցը քարտուղարի և թարգմանի  
պաշտոնով ծառայության է մտնում մայրաքաղաք Վաղարշապա-  
տում, արքունի դիվանում:

Հայոց Վառձապուհ թագավորի, ինչպես նաև կաթողիկոս  
Սահակ Պարթևի հանձնարարությամբ, խրախուսանքով ու գոր-  
ծուն օժանդակությամբ հայերեն գրեր ստեղծելու նպատակով իր  
աշակերտների հետ նա ուղևորվում է ժամանակի գիտության և  
մշակույթի խոշոր կենտրոններ՝ Եղեսիա, Ամիգ և Սամոսատ,  
ուսումնասիրում է այդ քաղաքների գրադարանները, մտտիկից  
ծանոթանում գիտական և մշակութային կյանքին: Նրա խորը և  
բազմակողմանի հետազոտական աշխատանքների փայլուն ար-  
դյունքն է լինում հայ գրերի գյուտը: 405 թ. Մ. Մաշտոցը հաղ-  
թանակով վերադառնում է հայրենիք: Արաքս գետի ափին նրան  
ցնծագին դիմավորում են հայոց թագավորն ու կաթողիկոսը, նա-  
խարարները, հայ ժողովուրդը:

Հետագա տարիներին իր աշակերտների հետ նա շրջագայում  
է Հայաստանի գավառները, բացում է բազմաթիվ դպրոցներ, տա-  
րածում նորագյուտ հայ գրերը: Մ. Մաշտոցը իր մշակութային  
գործունեությունը ծավալում է նաև Հայաստանի սահմաններից  
դուրս՝ Վրաստանում և Աղվանքում, մասնակցելով վրացական և  
աղվանական գրերի ստեղծման աշխատանքներին: Մ. Մաշտոցը  
վախճանվել է 440 թ. և թաղվել Օշական գյուղում:

Մ. Մաշտոցի հորինած հայոց այբուբենը պարունակում է  
36 տառ և անթերի ներկայացնում է գրաբարի հնչյունական հա-  
մակարգը: Իր այբուբենով Մ. Մաշտոցը փաստորեն դառնում է  
հայ առաջին խոշոր լեզվաբանը և հնչյունաբանը:

Մ.Մ.	Տառերի անվանումը	Քվային արժեքը	Քվային կարգի արժեքը
1	Ա, ա—այր	1	1-ին
2	Բ, բ—բնն	2	2-րդ
3	Գ, գ—գիմ	3	3-րդ
4	Դ, դ—դա	4	4-րդ
5	Ե, ե—եչ	5	5-րդ
6	Զ, զ—զա	6	6-րդ
7	Է, է—էլ	7	7-րդ
8	Ը, ը—ըթ	8	8-րդ
9	Թ, թ—թո	9	9-րդ
10	Ժ, ժ—ժե	10	10-րդ
11	Ի, ի—ինի	20	20-րդ
12	Լ, լ—լյուն	30	30-րդ
13	Խ, խ—խե	40	40-րդ
14	Մ, մ—մա	50	50-րդ
15	Կ, կ—կե	60	60-րդ
16	Հ, հ—հր	70	70-րդ
17	Ձ, ձ—ձա	80	80-րդ
18	Ղ, ղ—ղաա	90	90-րդ
19	Ճ, ճ—ճե	100	100-րդ
20	Մ, մ—մե	200	200-րդ
21	Յ, չ—չի	300	300-րդ
22	Ն, ն—նա	400	400-րդ
23	Շ, շ—շա	500	500-րդ
24	Ռ, ո—ոյ	600	600-րդ
25	Չ, շ—շա	700	700-րդ
26	Պ, պ—պե	800	800-րդ
27	Ջ, յ—յե	900	900-րդ
28	Ռ, ո—ոա	1000	1000-րդ
29	Ս, ս—սե	2000	2000-րդ
30	Վ, վ—վե	3000	3000-րդ
31	Տ, տ—տո	4000	4000-րդ
32	Ր, ր—րե	5000	5000-րդ
33	Ց, ց—ցո	5000	6000-րդ

34 Ու, ու—րունում է մեարդայան այբուբենի և տառի տեղը, Քվային արժեքից զուրկ է:

35	Ի, լ—լյուն	7000	7000-րդ
36	Փ, փ—փոք	8000	8000-րդ
37	Ք, ք—քե	9000	9000-րդ

38 Եվ, և-եվ ավելացել է հետագայում:  
 39 Օ, օ-օ ավելացել է միջին դարերում, Քվային արժեքից զուրկ է:  
 40 Յ, ֆ-ֆե ավելացել է միջին դարերում, Քվային արժեքից զուրկ է:

Հայկական այբուբենի տառերը քվային արժեքով հետևյալ պատկերն են ներկայացնում.

ա—թ, միավորներ՝ 1—9: ժ—ղ, տասնավորներ՝ 10—90:  
 հ—չ, հարյուրավորներ՝ 100—900: ո—ք, հազարավորներ՝ 1000—9000.

Ոչ առաջին գրային նշաններ

Ժամանակակից հայերենի կետադրության նշանները.

1. Վերջակետ :
2. Միջակետ .
3. Ստորակետ ,
4. Բութ
5. Շեշտ
6. Հարցական նշան "
7. Բացականչության նշան (կամ երկար)
8. Չակերտներ « »
9. Փակագծեր ( )
10. Կախման կետեր ...
11. Բազմակետեր.....
12. Անշատման գիծ —
13. Միութայն գծիկ -
14. Ենթամուս -
15. Ապաթարց ':

Ապաթարցը արևելահայ գրական լեզվում գրեթե չի գործածվում: Միութայն գծիկը և ենթամուսնան նույնացվում են:

ՀԱՅԵՐԵՆԻ ԳՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ. Ք

Հայկական այբուբենի գրատեսակներն են՝ երկարագիր, բուլար(ա)գիր, գլխագիր, գրչագիր, շղագիր, նառ(ա)գիր, որոնք ստեղծվել են Մ. Մաշտոցի կողմից կամ նրանից հետո և տարբեր ժամանակներում ունեցել են որոշակի կիրառություն:

1) Երկարագիր: Ստեղծել է Մ. Մաշտոցը որպես գլխագիր: Սկզբնական վիճակում գիր է: Գրվել է քարի վրա երկաթի գրողով, որից և, ուսանց կարծիքով, ստացել է այդ անունը: Ուսանց էլ երկարագիր անվանումը կապում են երկաթի ժանգից սրտաբաստված թանաքով գրել: Սա Բանասիրության մեջ կոչվում է «բուն մեարդայան» կամ «մեարդայան երկարագիր»: Գրվում է երկու տողագծերի միջև՝ աջառութային և, փ տառերի որոնց երկար ուղղաձիգ դիծը ձգվում է տողագծից ներքև: Գրչության հիմնական գիր է եղել 5—13-րդ դդ. վիճակում: Միջագրության մեջ, իսկ որպես գլխագիր օգտագործվում է 5-րդ դարից մինչև այժմ: Գլխագրի ժամանակ ուղղաձիգ երկար գիծը ձգվում է վեր կամ վար: Հենք է ծառայել զարգարի համար:

2) Բուլար(ա)գիր (կամ բուլարակ գիր): Ստեղծել է Մ. Մաշտոցը: Գրվում է տողագծերի վրա իր բուլարակով, իսկ ուղղաձիգ մասացած մասը ձգվում է տողից վեր կամ վար: Օգտագործվել է

իրեն առօրյա գիր: 10-րդ դարից դարձել է գրչության, 13-րդ դարի երկրորդ կեսից՝ հիմնական գրերից մեկը, 16-րդ դարից՝ սպասարության գիր: Արանից առաջացել են շղագիրն ու նոտրագիրը:

3. Վրչագիր: Միջնադարում հայտնի է նաև «աղյուսակ գիր» կամ «տախտակագիր», ժամանակակից բանասիրության մեջ՝ «ուղղագիր» կամ «ուղղանկյուն երկաթագիր» անուններով: Գրվում է երկու տողագծերի միջև, հավասար բարձրությամբ, ուղիղ և թեք գրությամբ: Նրա ուղղաձիգ գծերը իրար միանում են ուղղանկյան տակ, հորիզոնական ուղիղ նուրբերով: Իր բազմաթիվ տարբերակներով այն հիմնական գիր է եղել մինչև 12-րդ դարը: 10-րդ դարից սկսած և 13-րդ դ., երբ բուլղարագիրը դառնում է հիմնական գիր, վրչագիրը երկաթագրի հետ միասին գերազանցապես գործածվում է իբրև գլխագիր: Մեր ժամանակներում օգտագործվում է հատկապես վերնագրերում, գրքերի ձևավորման մեջ:

4. Վլխագիր, կոչվում է նաև գլխատառ, մեծատառ Այն գրքի, բնագրի, բանաստեղծության տան կամ գլխի սկզբնատառն է: Ստեղծել է Մ. Մաշտոցը: Մաշտոցյան շրջանում և հետո իբրև գլխագիր օգտագործվող գրատեսակը կոչվել է նաև երկաթագիր: Զեռագրերում գլխագիրը գրվել է բնագրից մեկուկես, երկու և ավելի անգամ մեծ, գրադաշտից դուրս, լուսանցքում: Հետագայում մտել է գրագաշտի մեջ, և վերև ու ներքև ձգվող երկար գծերը ավելի են երկարել:

10-րդ դարից սկսած, երբ բուլղ(ա)գիրը աստիճանաբար դառնում է գրչության հիմնական գիր, երկաթագրի հետ վրչագիրը գործածվում է որպես գլխագիր: Նոտր(ա)գրի համար հետագայում գլխագիր է դառնում նաև բուլղարագիրը:

5-րդ դարից սկսած մինչև օրս բուլղ գրատեսակների համար իբրև գլխագիր օգտագործվում է երկաթագիրը:

5. Շղագիր (շեղագիր): Առաջացել է բուլղ(ա)գրից՝ այդ գրով գրված հնագույն ձեռագիրը վերաբերում է 11-րդ դարին: Ճառերն ունեն շեղ գիրք, անկյունները կլորացած են և իրար են կցվում նուրբ, մաղանման գծիկներով: Այն հնարավորություն է տալիս տառերը գրել կապակցված, առանց ընդմիջման:

6. Նոտրգիր (նոտրագիր): Առաջացել է բուլղ(ա)գրից: Այն բուլղ(ա)գրի ավելի պարզեցրած և արագագրության համար հարմարեցված ձևն է: Զեռագրերում հանդիպում է 13-րդ դարից: Նոտրգրի հիման վրա են առաջացել ժամանակակից ձեռագրի տեսակները:

Բառերի գրության, նրանց իմաստային մասերի կից և անջատ գրության, գլխատառերի գործածության, ինչպես նաև տողադարձի կանոնների համակարգը կոչվում է ուղղագրություն: Ուղղագրությունը խոսքի գրային հաղորդման ժամանակ կարգավորում է գրային նշանները, օգտվելով գրաբանության միջոցներից՝ սահմանում է բառերի գրության միջոցնակություն:

Սովորաբար լեզվի հնչյունական համակարգի և այբուբենի լրիվ համապատասխանություն գոյություն չունի: Ծառերի գործածությունը կարգավորվում է ուղղագրությամբ մշակված կանոնների միջոցով: Ուղղագրությունը որոշում է գրության նորմաները, որոնք ընդունված են յուրաքանչյուր լեզվում՝ նրա զարգացման որոշակի փուլում: Նրա նորմաները պարտագիր են տվյալ լեզվով գրող հանրության համար:

Տառադարձություն: Տառադարձությունը որևէ լեզվի հնչույթների (հնչյունների) և արտասանական առանձնահատկությունների հաղորդումն է միջազգային հնչյունական այբուբենի կամ մեկ այլ լեզվի պայմանական գրության միջոցով: Տառադարձությունը օգտագործվում է գիտական զանազան նպատակներով:

Գրադարձություն: Գրադարձությունը տառադարձության մի ձև (տեսակ) է, երբ մի լեզվի այբուբենի տառերը, գրային նշանները վերածվում, փոխարինվում են մեկ այլ այբուբենի տառերով, գրանշաններով՝ օգտագործելով գրույթների համարժեքներ:

Գրադարձության հիմնական նպատակն է գրային նշանի արտահայտումը և ոչ թե տվյալ տառի նշանակած հնչյունի արտասանության վերարտադրումը, որ բուն տառադարձությանն է վերաբերում:

Հայերենի գիտական տառադարձությունը (ըստ Հյուբշմանի)

ա — a	թ — t' (th)	ձ — j	չ — p	ու — u
բ — b	ժ — z	ղ — γ	շ — j	փ — p' (ph)
գ — g	ի — i	չ — č	ղ — l	ք — k' (kh)
դ — d	լ — l	մ — m	ս — s	և — ew
ե — e	խ — x	յ — y	վ — v	օ — o
զ — z	ծ — c	ն — n	տ — t	ֆ — f
է — ē	կ — k	շ — š	ր — r	
ը — ə	հ — h	ո — o (vo)	ց — c	
		չ — č	ւ — w	

Հայերեն ուղղագրության տերմինը կազմված է օտարազգի ορθογραφία բառի նմանազուցությամբ (որը ծագում է հունարեն orthos—ուղիղ, ճիշտ և grapho—գրում եմ բաղադրիչներից):

Ուղղագրութեան հիմքում կարող են ընկնել մի քանի սկզբունքներ՝ հնչյունական, ձևաբանական, ստուգաբանական, ավանդական։ (ժամանակակից հայոց լեզվի ուղղագրութեան հիմքում ընկած են հիմնականում պատմական կամ ավանդական և հնչյունական սկզբունքները։)

(Պատմական կամ ավանդական սկզբունքը ենթադրում է բաների այնպիսի ավանդական գրություն, երբ բաների տառային կազմը համապատասխանում է ոչ թե նրանց ժամանակակից, այլ հին, մեր ժամանակներում արդեն հնացած արտասանությանը։

Հնչյունական սկզբունքն ընդունում է բաների այնպիսի գրություն, երբ բաների տառային կազմը առավելագույն չափով մոտենում է նրանց հնչյունական կազմին։ Այս դեպքում տաները գրվում են նրանց հնչյուն համաձայն։

Հնչյունական կամ ավանդական ուղղագրութեան դեպքում հաճախ հնարավոր չէ խուսափել ստուգաբանական սկզբունքից, և գրութեան ժամանակ հաշվի է առնվում նաև բանի ծագումն ու նրա նախնական կազմությունը։

Հնչյունական գրությունը հիմնականում բխում է գրական արտասանությունը գրքայինին մոտեցնելու միտումից։

**ՎԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՌԻՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

Չայնավորների ուղղագրությունը։ 1. Ա, ի, ու ձայնավորները հնչվում և գրվում են ա, ի, ու. աբազ բարակ, առու, միասին, ուրխություն, Արարտ, Հրազդան։

2. ա) է տառը գրվում է բառասկզբում, եթե լսվում է էակ, էշ, էջ, էք, էֆուսուֆա, ինչպես նաև՝ է, էի, էիք, էր, էիճ, էիք, էիճ։

բ) Բառամիջում և բառավերջում է գրվում է այն դեպքում, եթե բաղադրության մեջ մտնող բաղադրիչի սկզբնատառն է կամ բաղադրիչ արմատը. վայրէջք, անէանալ, ամենաէական, լայնէկրան, մանուէ, ճէէարան, օրէէ, երբէէ։

գ) Մյուս բոլոր դեպքերում բառամիջում երբ լսվում է է, գրվում է ն տառը. հերկել, մանրել, բերել, դեմք, բերք, վերելք, մարգարե, ռոպի։

3. ա) Բառասկզբում և տառը գրվում է, երբ արտասանվում է յն երկհնչյունը. երևալ, երեկ, երանի, երգ, երկաթ։

բ) Բառամիջում յն երկհնչյունը լսվելիս և գրվում է այն դեպքում, երբ հանդես գալով բաղադրության կազմում, հաջորդում է

ձայնավորով վերջացող այլ բաղադրիչի. համաէլրոպական, ամենաէրկար։

4. ա) Բառասկզբում գրվում է օ տառը, եթե լսվում է օ. օդ, օր, օրեմք, օրինակ, օգոստոս, օրորոց, օվկիանոս։

բ) Բառամիջում օ գրվում է այն դեպքում միայն, երբ այն բաղադրության մեջ մտնող բաղադրիչ բանի (արմատի) սկզբնատառն է. անօրինակեմ, ապօրինի, այսօր, ամենօրյա, ոսկեգօծ, գօր, ոսկեօդ։

գ) Մյուս բոլոր դեպքերում, երբ լսվում է օ ձայնավորը, գրվում է ո տառը. սովորել, բողբոջ, նոր, բոլոր, երեկո, կակաո, հետո, քո։

5. ա) Բառասկզբում օ տառը գրվում է այն դեպքում, երբ արտասանվում է վո հնչյունակապակցությունը. օր, ոխ, ոմն, ողորմելի, որոշել, որմնաղիւր, որակ, ոսկի, ողջայն։ Բացառություն են կազմում՝ ով, ովքեր (երբ լսվում է օ, բայց գրվում է ո)։

բ) Ռուսերենից և օտար լեզուներից փոխառված բաներում (հիմնականում հատուկ անուններում) բառասկզբում լսվող վո կապակցությունը գրվում է վո. վոլեյբոլ, վոլա, վոլֆրամ, վոլգա, վոլոդյա, վորոնեծ, վորոշիլովգրադ։

գ) Հին փոխառյալ անունները այս կանոնին չեն ենթարկվում, գրվում է ո, արտասանվում է վո. Ողիսես, Ողիսական, Ումիգրոլիս։

դ) Բառամիջում վո կապակցությունը լսվելիս ո է գրվում այն դեպքում, երբ բաղադրության մեջ նրանով սկսվող բառը հաջորդում է ձայնավորով վերջացող բաղադրիչի. ամենաողորկ, կիսաողորկ, ամենաողակյալ, աբաղա, ենթաողակյանային։

6. Ա տառը գրվում է բառասկզբում ըստ, ընդ նախդիրներում, շ, մ, ն բաղաձայններից առաջ ը արտասանվող բաներում. ըդձայի, ըմպել, ընկեր, ըմբշամարտ։ Այդ ը-ն պահպանվում է այդ կարգի բաներով կազմված բաղադրություններում. անընդմեջ, ինքնըստինքյան, դասընկեր, ամենաընտիր, ամենաըզմալի։

7. ա) Յ ձայնակապը գրվում է միայն ա և օ տաներից հետո, երբ նրանց հաջորդում է որևէ ձայնավոր. տղա—տղայի, գնալ—գնայի, շղթա—շղթայական, պանածո—պանածոյի, երեկո—երեկոյի, երեկոյանալ։

բ) Յ ձայնակապը չի գրվում ամենա-, ենթա-, ինքնա-, հակա-, կիսա — բաղադրիչներով կազմված բաներում. ամենաընտիր, ամենաերկար, ամենաարագ, ամենազգնիլ, ամենաուղագրավ, ամենաիմաստուն, ենթաողակյանային, ենթաողակյանային, հա-

կախարհագրական, հակաառաջարկ, կիսաանապատային, կիսաօտախական, ինքնապահովագրում:

գ) է և ի ձայնավոր հնչյուններին համապատասխանող տառերը հաջորդ ձայնավոր հնչյուններին համապատասխանող տառերին միանում են առանց յ ձայնակապի և կազմում են՝ էա, էի, էո, էու, իա, իի, իո, իու տառակապակցությունները. էակ, շէի, էուքյուն, միավորել, միայն, Քրիստի, միություն, ձիով:

Յաղաձայնների ուղղագրությունը: 1. ա) ր — ձայնորդից հետո լսվող փ հնչյունը գրվում է փ տառով հետևյալ բառերում. արփի, երփն (գույն), տարփանք, թարփ (ձկնորսական ցանց), փրփուր, Արփար:

բ) Մյուս բոլոր բառերում ր-ից հետո լսվող փ հնչյունը գրվում է ք տառով. երք, նուրք, սրքել, դարքին:

գ) Ձայնավորից կամ մ ձայնորդից հետո լսվող փ հնչյունը հետևյալ բառերում գրվում է ք տառով. խարքել, շարքար, նարքել, նամբրել, համբուրել, Հակար, Համբարձում:

դ) Բոլոր մյուս բառերում լսվող փ հնչյունը գրվում է փ տառով. ափ, շամփուր, դափնի, նամփուրդ, փափագ, փամփուշտ, փափկասուն, փողփողել:

2 ա) Բ — ձայնորդից հետո լսվող ք հնչյունը գրվում է ք տառով հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում. արքուն, երք, զարքենել, զվարք, քարքել, քերք, քերքերունք, քրքիռ, քրքնչուկ, լուրք, խորք, խրքին, կարք, կիրք, հարք, հերք, հորք, մերք, մարք, մրքմրքալ, շողոճորք, շոքել, շուրք, ոքք (խաղողի), չորքան, պարքև, սաղարք, սրքարալ, փարքամ. փիփերք, քարքու, քերքել, քրքնչալ, Վրքանես:

բ) Մյուս բոլոր բառերում ր — ձայնորդից հետո լսվող ք հնչյունը գրվում է դ տառով. բուրդ, աղդար, զարդ, վարդ, մարդ:

գ) Ն — ձայնորդից հետո լսվող ք հնչյունը գրվում է դ հետևյալ բառերում. անդամ, խնդիր, կենդանի, ընդամենը, ընդհանուր, ընդունակ, ընդունել:

դ) Մյուս բոլոր բառերում ն-ից հետո լսվող ք հնչյունը գրվում է ք տառով. կանք, շանք, նակինք, անքեղ, գնքունի:

ե) Ձայնավորից հետո լսվող ք հնչյունը գրվում է դ հետևյալ բառերում. դադար, գդակ, գդալ, դդում, վառող, օդ, Քաղնուս:

զ) Մյուս բոլոր բառերում թե՛ ձայնավորից և թե՛ բաղաձայններից առաջ կամ հետո լսվող ք հնչյունը գրվում է ք տառով. գաքա, թաս, թեթև, թոխչ, թվանշան, պոռթկալ, թերթել:

3. ա) Բառակիրում, բառամիջում ձայնավորից առաջ և բա-

ռավերջում լսվող խ հնչյունը գրվում է խ. խաղող, խոնարհ, խիզախ, կախել, բարախել, ուրախ:

բ) Բաղաձայնից առաջ խ հնչյունը գրվում է խ տառով հետևյալ անհնչյունափոխ բառերում. ախտ (ճիվանդություն), ապուխտ, բոխտ, բախաակ (ձուկ), գխտոռ (բույս), դժոխք, ժրխտել, լախտ, խախտել, խոխտ, ծախք, կխտար, կմախք, հախնապակի, նախկին, նախհիւր, դրախտ, երախտիք, գմրախտ, թախտ, բխկի (ծառ), թուխպ, թուխս, նախշուն, շախշախել, պանդուխտ, սխտոռ, վախճան, վխտալ, աախտակ, ուխտ (դաշինք), Վախտանգ, Շահանդախտ, Սանդուխտ և այլն:

գ) Բոլոր մյուս բառերում բաղաձայնից առաջ լսվող խ հնչյունը գրվում է դ տառով. առողջ, աղքատ, աղա(ոս), կեղա(ոս), խեղդել, սանդուղք, ուղտ (կենդանին), ընձուղտ, դեղձ, ծաղկանոց, թղթապանակ:

4. ա) Բ ձայնորդից հետո շ հնչյունը գրվում է շ տառով. դարշին, շարշի, փարշ բառերում և իշ-ով կազմված բաղադրյալ բառերի հնչյունափոխված ձևերում. նկարիշ—նկարչի, նկարչություն, վարիշ—վարչություն:

բ) Բոլոր մյուս բառարմատներում ր-ից հետո լսվող շ հնչյունը գրվում է շ տառով. արշ, վերշ, թրշել:

գ) Ղ-ից հետո շ հնչյունը գրվում է շ տառով միայն զեղչել բառում: Բոլոր մյուս բառերում դ-ից հետո շ հնչյունը գրվում է շ տառով. առողջ, աղչիկ, աղջամուղջ:

դ) Ձայնավորից հետո լսվող շ հնչյունը գրվում է շ տառով հետևյալ բառերում և նրանցով կազմված բաղադրություններում. առաջ, աջ, մեջ, ոջիլ, առաջնորդ, առաջադան, անընդմեջ, միջամտել և այլն:

ե) Բոլոր մյուս բառերում, որոնք նախորդ կանոնի մեջ չեն մտնում, շ հնչյունը գրվում է շ տառով. աշխ, շափել, կանչել, նանաչիլ, շարշարվել:

5. ա) Պ լսվող հնչյունը գրվում է ք տառով՝ աղք, աղբյուր, եղբայր, ողբ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում. աղբարեղ, գամաղք, աղբրակ, աղբյուրաղբուր, եղբայրաբար, ողբանվագ, ողբաձայն, ողբերգություն:

բ) Բոլոր մյուս դեպքերում պ հնչյունը գրվում է պ տառով. ապակի, դեպի, պարապ, պաթել:

6. ա) Բ ձայնավորից հետո ց հնչյունը գրվում է ց տառով հետևյալ բառերում. ապարարց, արցունք, ընթերցել, հարց, մրցել, պախուրց (սանձ), արցակ (կապոց, փունջ), ցրցամ (տալ), ուրց (բույս), Արցախ:

բ) Բոլոր մյուս դեպքերում Ե ձայնորդից հետո լսվող ց հընչյունը գրվում է ձ տառով. արձակ, բարձր, դերձակ, փարձ, վրձին, հարձանի, մերձավոր, արձակուրդ, դարձյալ:

գ) Ղ-ից հետո ց տառով գրվում են միայն աղջան, ֆաղց, ֆաղցր, ֆաղցկեղ, ֆաղցու բառերը: Բոլոր մյուս բառերում ց հնչյունը ղ-ից հետո գրվում է ձ տառով. դաղձ, դեղձ, գեղձ, բաղձալ, իղձ: Լսվող ց հնչյունը ձ տառով է գրվում նաև օձ բառում:

դ) Այն մյուս բոլոր դեպքերում, որոնք չեն մտնում նախորդ կանոնի մեջ, ց հնչյունը գրվում է ց տառով. գնացի, կեցցե, ցանստըյուն, սառույց, փոցխ, հացթուխ, հացկերույթ, կառուցել, մլրցակից:

7. ա) Բ— ձայնորդից հետո լսվող Բ հնչյունը գրվում է գ տառով հետևյալ բառերում. երգ, բարգման, կարգ, մարգագետին, մարգարե, մարգարիտ, միրգ, պարգև, Մարգար, Սարգիս:

բ) Բոլոր մյուս բառերում Բ-ից հետո լսվող Բ հնչյունը գրվում է Բ տառով. արեա, դիբ, եզեր, զոբ, հերբել, վեր, Բրբիջ, Բուր:

գ) Չափավորից հետո լսվող Բ հնչյունը գրվում է գ տառով հետևյալ բառերում. ավագ, արագ, արեգ(ակ), գոգ, երկուպղել, զագս, զուգել, զուգս, էգ, էգուց, բագավոր, ծագ, ծագել, ծեգ, կարագ, հագել, հոգ, հոգս, հոգի, հոգնել, հոգնակի, ձագ, ձգել, ձիգ, եզնել, եիգ, երագ, մարագ, մուգ, նվագ, նորոգ(ել), շոգ, շոգի, ոգի, պատարագ, վարագույր, օգնել, օգուտ:

դ) Ն ձայնորդից հետո լսվող Բ հնչյունը գրվում է գ տառով անգամ բառում:

և) Բոլոր մյուս բառերում, որոնք նախորդ կանոնների մեջ չեն մտնում, Բ հնչյունը գրվում է Բ տառով՝ առաֆել, արդյոֆ, բուֆ, Երեֆ, ինֆը, ինչֆ, ժանիֆ, հայրենիֆ, հանֆ, մերոնֆ, մորմոֆել, շֆեղ, ոֆ, ցամոֆ, ֆար, ֆրոնիֆ:

8. ա) Բառասկզբում Ե գրվում է միայն բուլե և Բաֆֆի բառերում: Բոլոր մյուս բառերի սկզբում արտասանվում և գրվում է Ե. ուամիկ, ուղիո, ունչպար, Ետին, Եունգ:

բ) Ն ձայնորդ բազաձայնից առաջ Ե գրվում է ինտերնացիոնալ (որից ինտերնացիոնալիստ, կոմիունիստ) բառերում: Մյուս դեպքերում Ն-ից առաջ Ե կարող է գրվել միայն այն ժամանակ, երբ Ե և Ն բազաձայնների միջև եղած ձայնավորը սղվում է. օրինակ՝ աբյուն—արեաներկ, արեագույն, վերին—վերնահարկ, զարուն—զարնանային: Մյուս բոլոր դեպքերում Ն-ից առաջ գրվում է Ե. առնել, դառնալ, դունապան, գառնակ, ընթեռնելի, սպառնալ:

գ) Ուրիշ բազաձայններից առաջ Ե գրվում է՝

1) Հետևյալ բառերում՝ առչև, առվայտ, խապոպ, կառչել, կարնել, կովան, հոչակ, հուորի (աբգավանդ), սառչել, ուղեան, առնանալ, ուղչել:

2) Այն դեպքերում, երբ Ե-ի և բազաձայնի միջև եղած ձայնավորը սղվում է. սառույց—սառցանատ, սառցարան, առու—առման, եռու—եռման, առիթ—առթիվ, սար:

3) Այն դեպքերում, երբ Ե-ով վերջացող բառով նոր բառեր են կազմվում. (թիւ) թոչել, հրթիւ, ուղղաթիւ, առնել, առ, առկայծել, փառֆ, կառֆ:

4) Նմանաձայնությունների կազմված բառերում. գոգոռալ, դրդրալ, կոկոռալ, հոհոռալ, հոհոռալ, մամռալ:

5) Ռ-ով վերջացող արմատի կրկնությունների կազմված բառերում առաջին Ե-ն փոխարինվում է Ե-ով. բարբառ, բրբիւ, մրմուռ, սարսառ, կարկառ(ել):

6) Բ-ով վերջացող բառերի կրկնությունների կազմված բառերում Ե-ն անփոփոխ է մնում. բրբուր, խոխոտ, փոփոխել, ֆարֆառ:

7) Բոլոր մյուս բառերում, որոնք չեն մտնում նախորդ կանոնների մեջ, եթև արտասանվում է Ե, գրվում Ե, և եթև արտասանվում է Ե, գրվում է Ե. առու, արու, եռալ, երագ, առու, տար, առերեֆ, ամառ, ձմեռ, զարուն, զարնանամառ:

9. ա) Բ, պ, փ պայթական բազաձայններից առաջ գրվում է մ. ամբիոն, ամբոց, ամփոփել, համբերել, ամպամած, դամբարան, րմպել, զամբյուղ, ծծումբ, շամփուր, ամբարիշտ:

բ) Բ, պ, փ պայթական բազաձայններից առաջ և գրվում է այն դեպքում միայն, եթև բար սկզբից ան— նախածանցն է ստացել, կամ Զ-ով վերջացող բար բարդվել է Բ, պ, փ-ով սկսվող մի ուրիշ բառով. օրինակ՝ անբան (անբան), ձեռնբաց, անբասիր, դոնբաց, անբիծ, անպատասխան, անփառատելի, դոնփակ:

գ) Բոլոր մյուս բառերում, որոնք նախորդ կանոնների մեջ չեն մտնում, ուր որ լսվում է մ, գրվում է մ, ուր՝ և, գրվում է և. մկրատ, նկար, նպաստ, հանկարծ, կամֆ, հանգչել, կառչել, հանդես, մշակել, ըմբոնել, հիմնարկություն, ձեռնարկ:

10. ա) Բառասկզբում լսվող Ե-ն գրվում է Ե տառով, հառի, հայր, համար, հիմա, հրաման, հալով:

բ) Բառամիջում և բառավերջում Ե-ձայնորդից հետո չի արտասանվում կամ թույլ է արտասանվում, բայց գրվում է Ե առաջ հետևյալ բառերում. խոհարհ, հոհապարհ, շեռհիֆ, աշխարհ, արհամարհել, արհամարհանի և դրանց հիմքերով կազմված բազադրույուններում:

Եվ-ի ուղղագրությունը— 3 տառի փոխարեն եվ տառակապակցություն է գրվում:

ա) և տառը մեծատառ գրվելու դեպքում եվ. օրինակ՝ Եվրոպա, Եվգինե:

բ) Եվ-ով սկսվող հատուկ անուններից կազմված բառերում հնդեվրոպական, արևելաեվրոպական:

գ) Եթե բաղադրության մեջ է (ե)-ից հետո լսվող վ-ն հաջորդ բաղադրիչ բառի սկզբնատառն է. գերեվարել (գերիավարել), գինեվեռ, կարեվեր:

դ) Բառի վանկատման ժամանակ, օրինակ՝ բա-րե-վել, կա-րե-վոր, հա-րե-վան:

Օտարազգի բառերի գրությունը: 1) Ֆրանս., գերմ., անգլ. և բաղաձայնին նախորդող դիրքում գրվում է՝ յու. Հյուզո, Նյուտոն, Նյու Յորկ:

2) Ֆրանս. eu, գերմ. ö նույն դիրքերում գրվում է՝ յո. Գյոթե, Յոնեն:

3) Օտարազգի l (ль)-ն տառադարձվում է լ տառով. պալատ, մեղալ, բոլշևիկ, պոռոֆել, ասֆալտ, կոպալտա:

Միաժամանակ պահպանվում է հնում ընդունված մի շարք բառերի դ-ով գրությունը. Պոդոս, Նիկոդոս:

4) ja, je, ju, jo կապակցությունները (я, уе, е, ю) տառադարձվում են՝ յա, է, յու, յո. Յաֆա, բյազ, բրիլյանտ, տրանսլացիա, Գուբրովսկայա, յոդ, մայոս, յունկեր, պարաշյուտ, ալյումին, բյուրո:

5) Բառամիջում յե-ն տառադարձվում է յե. օբյեկտ, սուբյեկտ:

6) ia, ie, iu, io կապակցությունները տառադարձվում են՝ իա, իե, իու, իո. մալաբիա, պիես, շեմպիոն, Լուիզա:

7) Օտարազգի ia (ռուս. иа, я) անշեշտ վերջավորությամբ անձնանուններում տառադարձվում է յա. (Ասյա, Վոլոդյա, Ամալյա, Օֆելյա. տեղանուններում՝ իա. Ասիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա: Շեշտակիր иа-ն անձնանուններում տառադարձվում է իա, կիա, Մարիա:

8) Բառասկզբում օ-ն տառադարձվում է օ. օլիմպիադա, օրգան, Օդեսա, բառամիջում և բառավերջում՝ ո. Սոկրատ, Հյուզո: Կրկնակ օ-ն բառամիջում գրվում է ո, ևթե արտասանությունը պահում է. կոսյեբացիա, կոսդիմացիա, կոսդիմատ:

9) Օտարազգի vo-ն (ռուս. во) բառասկզբում արտահայտվում է վո տառակապակցությամբ. Վոլտեր, Վոլգա, Վոլա, վոլեյբոլ:

10) Բառավերջի ա-ն պահպանվում է հիմնականում հունալատինական -ika վերջավորությամբ և այլ կարգի բառերում, ինչպես և հին փոխառություններում. ֆիզիկա, մաթեմատիկա, պրակտիկա, դիպլոմատիկա, դիլեմա: Ա-ն չի գրվում այլևս մի շարք նոր փոխառություններում. բրիգադ, պրոբլեմ, սիստեմ, պիես:

11) Բառասկզբում r(R)-ն տառադարձվում է ո. ուղիտ, ռեակցիա, Ռաֆայել. բառամիջում և բառավերջում՝ բ. բարոն, ինժեներ, Շիլլեր: Արմատական լ, և ձայնորդ հնչյուններին նախորդող դիրքերում գրվում է ո. կիրեռնետիկա, Առնոլդ, Ռեյլին:

12) Բառամիջում և բառավերջում կրկնակ r-ն արտահայտվում է ո-ով. տեռոր, Մառ: Ռուսերենից ուղղակի փոխառված բառերում Ծ և Ի ձայնավորներին նախորդող դիրքերում r-ն արտահայտվում է ր-ով. տերիտորիա:

13) Հունարեն օ-ն արտահայտվում է օ-ով. Բարսեղ, բարբարոս: Միջին և նոր շրջանում փոխառված բառերում արտահայտվում է վ տառով. Վասիլ:

14) Անգլերեն w-ն տառադարձվում է վ տառով. «Դեյլի վորկեր»: Մի քանի տարածված բառերում պահպանվում է ու տառադարձությունը. Ուելս, Ուայդ, Ուիթմեն:

15) Օտարազգի կրկնակ բաղաձայնները (ll, կկ, մմ, պպ, սս) հայերեն սովորաբար արտահայտվում են մեկ բաղաձայնով. կոմունիստ, կլասիկ. դուստ, ակորդ, կոլեկտիվ, ապարատ, պասիվ, Բարբյուս: Բացառություն են կազմում մի քանի բառեր, որոնցում կրկնակ բաղաձայնը հայերենում պահպանվել է՝ մասսա, վիլլա:

16) Օտարազգի x, ks (ռուս. кс) հայերեն արտահայտվում է քս գրությամբ. էֆսկուսիա, բուֆսի, տաֆսի, Մարքս: Բուն ռուսերեն բառերը տառադարձվում են կս. Ակսակով:

17) Լատինական լեզուների k, p, t (ռուս. к, п, т) տառադարձվում են կ. պ. տ. կոնվենտ, պրոբլեմ, տեմին:

18) Օտարազգի և-ն հայերեն արտահայտվում է և տառով. Նիդրոլոդ, հերբարիում, հեգեմոնիա:

19) Լատինական c-ն (կ, g) հին փոխառություններում տառադարձվում է Կ տառով. կրկես, կենտրոն, կիկերոն. նոր փոխառություններում՝ ց-ով. ցինկ, ցիտրուս:

20) Օտարազգի ch-ն տառադարձվում է ֆ տառով. ֆիմիկոս, ֆլոր, ֆրոն: Մի քանի բառերում գրվում է խ. խոլերա, սիեսա, մեխանիզմ:

21) Օտարազգի th-ն տառադարձվում է ք-ով. քատրոն, անբոլոգիա, էսթետիկա, մաթեմատիկա, թեոդոր:

22) Օտարազգի ph-ն տառադարձվում է ֆ-տառով. ֆուն-



գրաֆ, ֆոնոլոգիա, հին փոխառություններում՝ Փ. փիլիսոփա, Փիլիպոս:

23) Ռուսերեն жѐ, шѐ, вѐ տառակապակցությունների տառադարձվում են՝ ժո, շո, Վո. Խուլչոլ, Լիխաչով, Տելեչով, դիրիժոր:

24) Ռուսերեն ԵԵ-ն տառադարձվում է ին կապակցությամբ. Վիեսնամ, պրեմիեր, պրեմիերա, ֆելիետոն, Մուլիեր, Պովովիչ. բացառություն են կազմում՝ օրյեկա, սուրյեկա:

25) Արևելյան լեզուներից հայերենին անցած որոշ տերմիններ ու բառեր տառադարձվում են ըստ տեղական արտասանության. Քենրան, Լավվին, Ամմադ, Լուրան, էֆենդի:

### ՄԵԾԱՏԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մեծատառով են գրվում հետևյալ կարգի բառերն ու կապակցությունները<sup>16</sup>.

ա) Կապակցության բոլոր բառերն սկսվում են մեծատառով.

1) Բոլոր պետությունների, Սովետական Միության և ինքնավար հանրապետությունների և մարզերի բաղադրյալ հատուկ անունները: Օրինակ՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն, Լեոնային Լաուրադի Ինֆնավար մարզ, Սովետական Հայաստան:

2) Այն աշխարհագրական և պատմական անուններում, որոնց բաղադրիչներից մեկը հանդես է գալիս իբրև հատուկ անուն. Աշոտ Երկաթ, Տիգրան Երկրորդ, Սահակ Պարթև, Իվան Ահեղ, Նոր Արեշ, Փոքր Մասիս:

բ) Միայն առաջին բառն է սկսվում մեծատառով՝ պահպանելով բաղադրության մեջ եղած հատուկ անվան մեծատառ գրությունը:

1) Աշխարհագրական անուններ. Սև ծով, Կասպից ծով, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս, Հրո Երկիր, Մեծ արջի համապատասխանություն. Մերձավոր արևելք, Հայկական պար (լեռնաշղթան), Սևանա լիճ, Կոփոյ ոռոգ:

2) Գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների, լրագրերի, պարբերականների անուններում, որոնք առնվում են չակերտների մեջ. «Ամբոխները խելագարված», «Հացի ինդիր», «Գրական թերթ», «Պիոներ կանչ»:

3) Հիմնարկ-ձեռնարկությունների, կուսակցությունների ու կազմակերպությունների և հաստատությունների, շքանշանների անուններում, որոնք առնվում են չակերտների մեջ. «Մուրճ ու մանգաղ» գործարան, «Պատվա նշան» շքանշան, «Մայրական փառք» շքանշան, «Նոր կյանք» կոլտնտեսություն, «Գերագանցիկ ֆինանսիստ» կրթքանշան:

4) Պետության կողմից շնորհվող շքանշանների անուններում. Կարմիր աստղի շքանշան, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան, Փառքի առաջին աստիճանի շքանշան:

5) Համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, եզակի բաղաբական, արհեստակցական միությունների անուններում. Միավորված ազգությունների կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ:

6) Բոլոր երկրների, Սովետական Միության հանրապետությունների և ինքնավար մարզերի կառավարական և կուսակցական ղեկավար մարմինների անուններում. Գերագույն սովետ, Միություն սովետ, ՍՍՀՄ Կենտրոնական կոմիտե, Ֆրանսիայի Ազգային ժողով, Անգլիայի Համայնքների պալատ, Լաև՝ Մեջլիս, Գումա, Կոնգրես, Պառլամենտ, Սենատ, Ստորտինգ, Պենտագոն և այլն:

7) Պատմահասարակական, համաշխարհային նշանավոր իրադարձությունների, տոների անուններում. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն, Հայրենական մեծ պատերազմ, Փարիզյան կոնուևա, Մայիսի մեկ, Մարտի ութ, Նոր տարի:

8) Փոքրատառով են գրվում վերոհիշյալ կանոնների մեջ շմանող բաղադրյալ անվանումները, եթե վերջիններս չեն տեղայնացված. արտաֆին գործերի մինիստրություն, պետական պլանային հանձնաժողով, լուսավորության մինիստրություն, կոմունիստական կուսակցություն, սովետական բանակ, սովետական կառավարություն, բանվորական կուսակցություն, գերագույն գլխավոր հրամանատար, սոցիալիստական աշխատանքի հերոս, գլխավոր դատախազ, հերոսուհի մայր և այլն:

9) Հապավումներում.

ա) Մեծատառերով է գրվում տառային հապավումն ամբողջությամբ. ՍՍՀՄ, ԱՄՆ, ՀԼԿԵՄ, ՀՕՊ, ՊԱՊ, ՄԱԿ, ԿԿ (կենտրոնական կոմիտե), ԳԱ (գիտությունների ակադեմիա):

Հասարակ անուն դարձած մի շարք հապավումներ գրվում են փոքրատառով. բուռ, նէպ, հեկ, զագա:

բ) Մեծատառ է գրվում բաղադրյալ հատուկ անունների յը

<sup>16</sup> Տերմինաբանական և սոցիալական տեղեկատու, 201—206:

տառային հապավումների միայն առաջին տառը. կուսակցության կենտրոն, լեհական հանրապետության Պեխարհուրդ, ժողովրդատ:

գ) Հասարակ անվան գործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչի առաջին տառը. Հայկիւն, Հայկեանհրատ, Համկանկուս, Հայմատառ, Լենֆիլմ, Արմենֆիլմ:

դ) Խառը տիպի հապավումների նաև առանձին բաղադրիչների առաջին բառերը. ՍՍՀ Միություն, ՀամԿԽՄ, Հայկական ՍՍՀ:

ե) Գիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդումների մեջ թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի:

### ՐԱՌԵՐԻ ԳՄԻԿՈՎ ԵՎ ԱՆՋԱՏ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Գծիկի գործածությունը: ա) Գծիկով են գրվում հետևյալ կարգի բառերը<sup>17</sup>.

1) Վերլուծական եղանակով կազմված կրկնավոր բարդությունները. արագ-արագ, գույն-գույն, գույգ-գույգ, ինչ-ինչ, կամաց-կամաց, մեծ-մեծ, մեկ-մեկ, աման-չաման, բարակ-մարակ, մանր-մանր, պարապ-սարապ, քաղցր-մեղր, առոֆ-փառոֆ և այլն:

2) Միևնույն խոսքի մասին պատկանող բառերի այն միասնությունները, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց հարաբերական անկախությունը՝ լրացնելով իրար և բնութագրելով կամ ներկայացնելով առարկան (անձը, իրը, երևույթը) տարբեր կողմերից՝ ա) մարտիսիվ-լենինիսիվ, հասարակական-քաղաքական, ագիտացիոն-մասնայական, գաղափարական-դաստիարակչական, բ) գեներալ-մայոր, ինժեներ-մեխանիկ, գ) վագոն-ռեստորան, տուն-թանգարան, դ) հարավ-արևելք, հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, հյուսիս-արևմուտք, ե) ասել-խոսել, գնալ-գալ, ոտել-խմել, զ) կիրովատ-ժամ, լիտր-վայրկյան, մարդ-օր, մեքենա-օր, տուն-նա-կիլոմետր, է) Դուրյան-Արմենյան, Գալկինա-Ֆեդորով, Նիկոլա-Տերեշկով, Սայտիկով-Շչեդրին, Գվինետ-Բիաու, էլգաս-Լոթարինգիա, Կամենց-Պոդոլսկ, ը) աշակերտ-աշակերտուհի, ուսանող-ուսանողուհի, ուսուցիչ-ուսուցչուհի և այլն:

3) Բառերի այնպիսի միացությունները (առաջին բառի վերջածանցի կրճատումով), որոնք արտահայտում են տարբեր հարաբերություններ. ա) հայ-անգլերեն, հայ-նոստրեն-լատիներեն, ռուս-գերմաներեն, ռուս-նապոնական (պատերազմ), շին-ափքեթական (լեզուներ), բուրֆ-թաթարական, ֆրանս-գերմանական, բ) սո-

վետա-լեհական, գերմանա-իտալական, եգիպտա-սիրիական, գ) անգլո-ամերիկյան, իբերո-կովկասյան և այլն:

4) Որևէ անունից (կամ ազգանունից) և Տեր, Մեկիք, Միքա, Բեկ ու նման բաղադրիչներից կազմված անձնանունները (կամ ազգանունները), երբ նշված բաղադրիչներն արտասանվում են առանձին, օրինակ՝ Տեր-Գարիելյան, Մեկիք-Մուսյան, Միքա-Ավագյան, Դավիթ-Բեկ:

5) Վայ, ոտա բառերով և զոյականով բաղադրված բառեր, որոնք արտահայտում են հեղանկան իմաստ: Օրինակ՝ վայ-առաջադիմականներ, ոտա-նայրենասիրություն:

6) Ինչ դերանունով բաղադրված և անորոշության իմաստ արտահայտող բառերը. ինչ-որ, փոքր-ինչ, զույգն-ինչ:

7) Ավանդաբար գծիկով գրվող հատուկ անձանները. Եւր-Դոս, Սայաք-Նովա, Գամառ-Քարիպա, Խենկո-Ապեր, Բամաբա-խանով, Հաջի-Մուրադ, Շահ-Աբաա:

8) Կրճատ գրվող բառը, եթե պահպանվում է բառի վերջնական ձևը: Օրինակ՝ դ-ր (դոկտոր), պ-ն (պարոն) և այլն:

9) Թվականների այն կապակցությունները, որոնք արտահայտում են մոտավորության իմաստ. տասը-առանձինգ (մարդ), չորս-հինգ (ժամ), քսան-քսանինգ (գիրք), Երեսուն-հարասուն (օր):

10) Ձևառերով արտահայտված պայմանանշանների, այլև բառերի և նրանց հետ գործածվող թվանշանային կապակցությունները: Օրինակ՝ Ա-93 բեկզին, ՏՈՒ-134 ինֆեաթիո, «Սայուգ-6» տիեզերակայան, «Օրբիտա-2» ուղեծակայան և այլն:

11) Անկախ չգործածվող բառամասերը (ածանցներ, վերջավորություններ, հիմքեր, տառեր), այդ թվում՝ այն բառերի առաջին բաղադրիչները, որոնց երկրորդ բաղադրիչը բաց է թողնվում՝ գործածվելով միայն վերջին բառով:

ա) -ից, -ական, -գր-, բ) մակրո-, մեգա-, մեկրոաշխարհ:

12) Այն բառաձևերը, որոնց հիմքերը գրված են թվանշաններով, տառային կամ վանկատառային հապավումներ, փոխանուններ են կամ առնված են շակերտների մեջ: Օրինակ՝ ա) 2-ից, 8-ի, 200-ը, X-ի, XX-ից, բ) ՍՍՀՄ-ում, ՍՄԿ-ին, ԱՄՆ-ից, ՀամԿԽՄ-ին, ՄԱԿ-ում, ՆԱՏՕ-ի, գ) «Գարուն»-ի վերջին համարը, «Լենինյան ուլիսով»-ի խմբագրությունը, դ) երեք-ը թվական է, գառուն-ը երկվանկանի բառ է, մարդ-ը գրվում է դ-ով, բայց կարդացվում է բ-ով և այլն, ե) այն բաղադրյալ բառերը, որոնց առաջին

<sup>17</sup> Տերմինարանական և ուղղագրական տեղեկատու, 214-218:

բաղադրիչն արտահայտված է թվանշանով. 25-ամյա, 100-ամյակ, 2-րդ, 10-ակն և այլն:

բ) Առանց գծիկի՝ միասին են գրվում հետևյալ կարգի բառերը.

1) Հոդակապով բարդ բառերը, այդ թվում նաև համադաս բաղադրիչներով կազմվածները. լեզվագրական, գիտահետազոտական, դրամաիդրային, նյութատեխնիկական, ռազմածովային, ժողովրդատնտեսական, բառափոխական, ուսումնադաստիարակչական, աղետամոխային և այլն:

2) Որևէ անունից (կամ ազգանունից) և տեր, մելիք, քեկ, միրզա ու նման բաղադրիչներից կազմված անձնանունները (կամ ազգանունները), երբ նշված բաղադրիչներն արտասանվում են միասին: Օրինակ՝ Մելիքսեթ(յան), Մելիքջանյան, Քեկնազարյան, Քալաքեկ, Միրզաբեկյան, Միրզախանյան և այլն:

3) Արևելյան տեղանունները, որոնց կազմության մեջ կան ֆենդ, սու, շայ, դուզ, թափա և նման այլ բաղադրիչներ. Շուշի-ֆենդ, Մուրադսու, Բոյուֆդուզ, Շիրքափա, Ալիջաշայ, Կիսրուվաղ:

4) Փոխ, էֆ, վիցե, օբեր բաղադրիչներով կազմված բառերը. փոխգնդապետ, փոխանահանգապետ, փոխծովակալ, փոխարքա, էֆչեմպիոն, վիցեպրեզիդենտ, օբերլեյտենանտ:

5) Ինքնուրույն բառի վերածված տառային հապավումների թեքված ձևերը. բունի, զագսից, եէկի և այլն:

6) Անջատ գրվող բաղադրյալ տեղանուններից կազմված ածականները. նորգելանդական, հեռավորաբնեյան, նորֆաբրիկայան, բրանզեդարյան, փոֆրասիական, մերձավորաբնեյան և այլն:

գ) Առանց գծիկի՝ անջատ են գրվում հետևյալ կարգի բառերը.

1) Տարբեր հասկացություններ արտահայտող դոկտոր և պրոֆեսոր բառերը և անջատվում են ստորակետով:

2) Այն կապակցությունները, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է որոշիչ դեր կատարող ածականով կամ գոյականով. ա) ալ կարմիր, բաց դեղին, բաց մանուշակագույն, մուգ կարմիր. բ) նոր Զելանդիա, նոր Լախիշեան, Մեծ Պարսի, Վերին Քալին, Հեռավոր արևելք, Մերձավոր արևելք, գ) թղթակից անդամ, իսկական անդամ (ԳԱ-ի), տիեզերագնաց օդաչու:

3) Անձի անվան և նրա գործունեությունն այս կամ այն առումով հաղադաս գոյականի կապակցությունը. Քումանյան ֆենադատար, Շիրվանզադե դրամատուրգը, Բաֆֆի պատմավիճաբանը և այլն:

4) Տեր, քեկ, Մելիք և նման բառերը հատուկ անվան հետ գործածելիս. Տեր Սահակ, Մելիք Ավան, Խոսրով քեկ և այլն:

5) Երկու կամ ավելի առանձին բաղադրիչներից կազմված

հետևյալ օտարազգի հատուկ անունները. ա) արևմտյան դա, դր, դե, դել, դր, լա, վան, ֆոն, սան, սենա և նման այլ բաղադրիչներ ունեցող անձնանունները. Լեոնարդո դա Վինչի, Կյուրվիլ ֎ան Ռեքնովեն, Անտուան դը սենտ Էֆզուպերի, Վիլհելմ ֆոն Հումբոլդտ. բ) արևելյան ալ, էլ, էդ, էն և նման բաղադրիչներ ունեցող անձնանունները. Հարուն ալ Ռաշիդ, Նահր էլ Բարիդ, «Ալ Ահ-բալ» (թերթ), էլ Քարիա, էլ Զառաֆ, Նուր էդ Գին և այլն:

դ) Օտարազգի մի շարք բաղադրյալ տեղանուններ, որոնց բաղադրիչների հարաբերությունը հայերենում չի գիտակցվում. Նյու Յորք, Նյու Զեբսի, Իուենոս Այրես, Ալմա Աթա, Լա Մանչ, Լե Կրելո, Սանտ Յագո, Սան Ֆրանցիսկո:

6) Թվականների այն կապակցությունը, որի առաջին բաղադրիչն արտահայտված է բացառական հոլովով. ուրից տասը (տարի), երեֆից յոթ (տարեկան), տասից տասնհինգ (մետր):

ՏՈՂԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ<sup>18</sup>

Փամանակակից հայոց լեզվում տողադարձը հիմնականում կատարվում է վանկատման շնորհիվ՝ որոշ դեպքերում հաշվի է առնվում նաև բառի կազմությունը: ՎՁ են տողադարձվում տառային և վանկատառային հապավումները. ինչպես, օրինակ՝ ՍՍԶՄ, ՌՍՅՍԶ, ՀամվԿԵՄ, ՀամԿ(բ)Կ, ՀԿԿ և այլն: ՚

1. Տողադարձը հիմնականում կատարվում է հայերեն վանկատման կանոններով, բառերը վանկերի բաժանելով, ըստ որի՝ ա) Ներկու ձայնավորների միջև եղող մեկ բաղաձայնը անցնում է հաջորդ տող. գա-բուն, բա-նա-կա-յին, դա-սա-սեն-յակ, կա-տու, հե-ֆի-աթ, պի-ն-ներ: Վ

բ) Ներկու ձայնավորների միջև եղող երկու և ավելի բաղաձայններից հաջորդ տողն է անցնում միայն վերջին բաղաձայնը. ար-ձան, բար-ժու-ա-կան, բեր-րի, Աստ-դիկ, Արծ-վիկ, բարգ-ման, բարձ-բա-նալ, երկ-դի-մի, ա-նանց-ներ: /

գ) Յ հնչյունին նախորդող բաղաձայնը կամ բաղաձայններից վերջինը կարող է յ-ին միացած անցնել, կարող է նաև շանցնել հաջորդ տող. անկ-յուն և ան-կյուն, արդ-յոք, ար-դյոք, գոչ-յուն, գո-չյուն, գի-տուր-յուն, գի-տու-թյուն, կաստ-յում, կաս-տյում, Հա-կոբ-յան, Հա-կո-բյան, հո-բել-յար, հո-բե-լյար, մա-տյան, մա-տյան, սեն-յակ, սե-նյակ, սին-յոր, սի-նյոր, վալ-յու-տա, վա-լյու-տա, ուխտ-յալ, ուխ-տյալ:

դ) Բառամիջի ձայնավորից առաջ ընկած և-ը տողադարձի

<sup>18</sup> Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, 219-221:

ժամանակ գրվում է եվ և վ-ն անցնում է հաջորդ տողը. Երե-վան, բարե-վիլ, սե-վաթույր, տերե-վաթափ:

2) Գաղտնավանկ (այսինքն՝ արտասանվող, բայց չգրվող) Ը ունեցող բառերի տողադարձի դեպքում ր-ն գրվում է միայն տողազիցի և հաջորդ տողի սկզբի վանկերում. շրդ-թա, կր-տր-տել. Մր-կրտիչ, Մկր-տիչ, երբե-մըն, գըլ-խավոր, ցնուցն ձևով նաև փոխառյալ բառերում և փոխառյալ ձևայիններով կազմված բաղադրություններում. դեմո-կրատիա, դեմոկր-ատիա, էլեկ-տրո-կան, մինիս-տրություն, մինիստր-ություն, մաես-տրոն, սուր-տրոս, էֆա-պրոպրիացիա, էֆպրո-պրոպրիացիա:

3) Զբ, զգ, շտ, սպ, ստ և նման հնչյունակապակցություններով սկսվող հատուկ անունների հիշյալ հնչյունակապակցու-թյունները տողադարձի ժամանակ հաջորդ ձայնավորից չեն ան-ջատվում, որպեսզի հատուկ անունը Ը-չսկսվի, պետք է տողա-դարձել՝ Ստե-փան, Սպար-տակ, Ստրաս-բուրգ և ոչ թե՛ Ըս-տե-փան, Ըս-պարտակ, Ըստ-րասբուրգ:

4) Միաժամանակ պետք է խուսափել տողադարձի ժամանակ ավելորդ Ը ներմուծելուց. փոխանակ գրելու՝ խառնը-վածք, մարմը-նի, կազմը-վել, կար-մրություն, վերցը-նել, հարցը-րին, էֆրս-կուսիա, սուրբս-տրոս, ինֆրե-իշխան, համըր-ընթաց, մատի-տըն (ընկավ), Դավի-թըն (ասաց) և այլն, պետք է գրել՝ խառն-վածք, մարմ-նի, կազմ-վել, կարմ-ություն, վերց-նել, հարց-րին, էֆա-կուսիա, սուրբ-տրոս, ինֆ-նիշխան, ինֆն-իշխան, համ-ընթաց, համը-ընթաց, մա-տիտն (ընկավ), Դա-վիթըն (ա-սաց):

5) Թարդ և նախածանցավոր բառերը կարելի է տողադարձել նաև առանց վանկատման՝ հաջորդ տողը փոխադրելով արմատը կամ ամբողջական բառը. ոչ միայն կարելի է տողադարձել՝ առա-գրե-թաց, գերը-նական, ա-նօգուտ, ա-նօրոշ, հա-կազդել, ծո-վեգը, գե-տափ, ինֆ-նիշխան, համ-ընթաց, վայ-րեջք, այլ նաև՝ աբազ-ընթաց, ան-օգուտ, ան-օրոշ, հակ-ազդել, ծով-եզր, գե-տափ, ինֆն-իշխան, համը-ընթաց, վայր-եջք:

6) Եթե բարդ կամ նախածանցավոր բառի հաջորդ տողն անց-նող մասը Ը դադանավանկով սկսվող արմատ կամ նրանով կազմ-ված բառամաս է, ապա այդ դադանավանկի Ը-ն չի գրվում. դա-րա-գլուխ, երկնա-սլաց, լեռնա-բնակ, գրա-էննիշ, շարա-դրել, հա-կա-կրեթական, փոխ-գեղապետ, հեղա-շրջում, սպա-շնորհ, ան-վնաս, դիմա-դրման, կարգա-դրություն, հաշվե-տվություն, արե-մայան, հակա-կրանք, նախա-դրյալ, բացա-տրական, պալեո-գրաֆիա, ցինկո-գրաֆ:

## ՉԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՋ ԱՌԵՎՈՂ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՎԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՒԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Չակերտներում անսկզբ անունների հոլովական վերջավոր-ություններն ու հոդերը գրվում են չակերտներում անվան վեր-ջին բաղադրիչին միացած. օրինակ՝ «Մայրենի լեզվի» վերջին հրատարակությունը, «Փառիզը» «Մասույաց աղավնու» հակառա-կորդն էր, Հովհաննիսյանը ոգևորված էր Շահադիզի «Առեփ վըշ-տով», «Շունն ու կատվի» բարբառային լեզուն, հատված «Սպան-ված աղավնուց», «Անուշի» առաջին տարբերակը, Հր. Քոչարի «Կենեռայի բող» հերոսների նախատիպերը, Վ. Անանյանի «Հայ-րենի թփի» թարգմանությունը, Իսահակյանի «Մեծ հաղթանակի օրվա» դիմելը, «Պեպոյի» գլխավոր դերակատարը, Դեմիրճյանին հարցրին՝ սա «Վարդանանկի» ո՞ր հրատարակությունն է, «Գրա-կան թերթի» հասցեն, «Պրավդայից» ստացված նամակ, Բեկեն-բաուերն ընդդեմ «Բավարիայի», Մոսկվայի «Ինվանն» հաղթեց «Լեյնստրիվին», «Արաբաթի» պաշտպանը գրավեց «Սպարտակի» դարպասը, «Հառաչանքը» աչքի է ընկնում իր ռեալիստական կո-լորիտով, «Հրազդանը» լեզու-լեզուն էր, «Արմենիայի» նավապետը մտեցավ մեզ:

2. Չակերտներում անսկզբ անունների հոլովական վերջավոր-ություններն ու հոդերը գրվում են չակերտներից դուրս՝ գծիկով անջատված, միայն այն դեպքերում, երբ անվան և վերջավորու-թյան կամ հոդի միացած գրությունը առաջ է բերում հայերենի համար անսովոր ձևեր կամ դժվարացնում է բնագրի ընկալումը. մասնավորապես.

ա) եթե անունը արտահայտված է ամբողջական նախադա-սությունում. օրինակ՝ «Ղազարը գնում է պատեռագվա»-ի գլխավոր դերակատարը, հատվածներ Բ. Հովսեփյանի «Սերմնացանները շվեդադարձան»-ից, «Արև», արև, ե՛կ, ե՛կ»-ի երաժշտությունը, տեսարան «Քանի դեռ սայլը շուտ չի եկել»-ից, լեզվով շատ է նման «Մեռան՝ չկուրան»-ին, օրինակներ «Սպիտակին է տալիս առա-գասար մենավոր»-ի թարգմանությունից, հեղինակը «Այն լոռու նորն է»-ն փոխել է «Էն լոռու նորն է»-ով, Գ. Սարյանի «Դուրս ո՞ւր եմ գնում, ծիծեռնակներ»-ի բանաստեղծական շունչը, «Եղ-բայր եմ մեք»-ը վաղուց է երգվում:

բ) եթե անունը բաղադրյալ լինելու դեպքում՝ վերջին բա-ղադրիչը, կամ բառի հոլովածն է, կամ շեղվածով բառ, կամ անձնական ու ցուցական դերանուն. օրինակ՝ երգեցին «Ամպի տակից»-ը, Իսահակյանի «Հին ու նոր երգ ու վերերից»-ի թնա-

գիրք, քաղվածքներ «Յուշեկիյան դրոշով»-ից, «Վարդապետաբան կրոնի հասարակաց հայախոսությամբ»-ի հեղինակը, Վ. Վաղարշյանի «Արշալույսին»-ի բեմադրությունը, «Անտառում»-ի տաղաչափական արվեստը, Գ. Ջոհրայի «Կարծեմ քե»-ի հերոսի հոգեբանությունը, «Լեհիհեզա՛ղ, Բեզ համար»-ը հեղինակին ճանաչում բերեց, «Հայաստանը երգերի մեջ»-ը բանաստեղծաշարի խորագիրն է, «Երգ մեր Բարեի մասին»-ի տաղաչափությունը, Նար-Գոսի «Ես և նա»-ի հերոսը, քառատող Դուրյանի «Նէ»-ից, Պուշկինի «Դու և ես»-ի թարգմանությունը:

դ) Եթե անունը բերված է օտար կամ կրճատ գրություններ, անվան վերջին բաղադրիչը թվանշան կամ տառային հապավում է. օրինակ՝ «Современник»-ի լեհիկյան քննադատությունը, «Հ. Հ.»-ի փոստից, «Օլիմպիադա—80»-ի նախապատրաստությունները, հազորդում «Սեյուզ—31»-ից, «Երգ—77»-ի հաղթողները, «ՄԻԳ»-ի օդաչուն, «Հայաստանի պամփիլոսոփյունը մեկնեց ԲԱՄ»-ը մըրցանակ շահած ակնարկ է:

Մանրություն 1. Իրրե բացառություն կարելի է հուշվական վերջավորությունը կամ հոգը լակերտներից զուրս գրել նաև այն դեպքում, երբ վերջավորության կամ հոգի անջատ գրությամբ անհրաժեշտ է առանձնացնել անվան ուղիղ ձևը՝ այն հստակ ու հասկանալի դարձնելու նպատակով. օրինակ՝ Այս պատմափիլիսոփայությունը գալիս է «Վամագն»-ից, «Ազգային երգ»-ից, «Անակրեկա Եանդիպում»-ից, «Ուարկեր»-ի վերջին հոգվածը մեծ հետաքրքրություն ստաշ բերեց:

Մանրություն 2. Նախադասությամբ արտահայտված կամ հուշված բառով վերջացող որոշ անունների հուշվական վերջավորություն կամ հոգ ավելացնելու դեպքում երբեմն ստաշանում են անվան ընկալումը դժվարացնող ու հայերենին անսովոր ձևեր: Նման անսովոր ձևերից խուսափելու համար խորհուրդ է տրվում անվան հետ դործածել համապատասխան լրացյալ, այսինքն՝ փոխանակ գրելու «Զինվորը վերադառնում է տուն»-ի կամ «Զինվորը վերադառնում է տուն» դերակատարները, «Վրաց ժողովրդին»-ի տաղաչափական արվեստը, արտասանեց «նվեր մայրիկիս»-ը, հատվածներ «Մատյան ողբերգության»-ից, պետք է գրել՝ «Զինվորը վերադառնում է տուն» կինոնկարի դերակատարները, «Վրաց ժողովրդին» բանաստեղծության տաղաչափական արվեստը, արտասանեց «նվեր մայրիկիս» բանաստեղծությունը, հատվածներ «Մատյան ողբերգության» պոեմից:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից հայերենի ուղղագրությունը միօրինակացնելու և կարգավորելու, նախատվեստական շրջանում ուղղագրության մեջ գործող տարբեր սկզբունքների փոխարեն միասնական մեկ սկզբունք կիրառելու նպատակով 1922 թ. մարտի 4-ի դեկրետով բարեփոխման է ենթարկվել հայոց լեզվի ուղղագրությունը<sup>19</sup>:

1922 թ. ուղղագրական բարեփոխությունը: Նախագծի հեղինակն է Մ. Աբեղյանը: Բարեփոխման հիմքում, ըստ նախագծի հեղինակի, դրվում է գրական-դպրոցական արտասանությունը: Նոր ուղղագրության համար հիմնական, եղափոսային սկզբունք է ընդունվում մեկ հնչյունի (հնչույթի) համապատասխանությունը մեկ տառին: Այդ պատճառաբանությամբ հայերենի այբուբենից դուրս են մղվում է և Օ տառերը, զրանց փոխարեն գործածելով միայն Օ և Ո նշանագրերը: Մյուս կողմից նոր ուղղագրությամբ փոխվում է գրագրից ավանդված հայերեն շատ բառերի հնչունատառային պատկերը, անտեսվում՝ ուղղագրության ստուգաբանական պահանջն ու պատմականությունը: Դրանով խզվում է կապը նաև հին, գրագրով գրված ու տպագրված և նոր ուղղագրությանը ստեղծվող գրականության միջև: Հետագայում, երբ սխյութահայտությունը չի ընդունում նոր ուղղագրությունը, ավելի են խորանում գրական լեզվի արևելահայ և արևմտահայ ճյուղավորումների տարբերությունները:

Դեկրետով ընդունվում են հետևյալ բարեփոխումները:

1. Օ տառի փոխարեն քոլոր դեպքերում՝ բառակցի, բառամիջի և բառավերջի դիրքերում գրել Ո. ոգնել, որևան, ոգուտ, որինակ, որիորդ, որենել, որգան, Ողեսսա, ախաս, աղորթ, աևորինակ, օսկեզոծ, օհորեն, բացորյա, Մարո, Կարո: Ո տառը անվանել Օ, ոչ թե՛ ՎՕ:

2. է տառի փոխարեն բառակցի, բառամիջի և բառավերջի դիրքերում գրել Ե. Եյական, Եյություն, Եշ, Եջ, առեջք, գեթ, տգեթ, շեզոք, միջորեյական, Բեյական, քե, բուլե, բագե, մարգարեյական, գեյի, գեյիք: Ե տառի անունն է է, և ոչ թե՛ յե:

3. Վերը (վյուն) տառը արտասանվում է Վ, գրել Վ տառը. ավագ, թիվ, սեվ: է և նշանագիրը թողնել իրրե սղագրության նշան: Տողադարձի ժամանակ գրել եվ (տե-վել, տերե-վի):

4. Բաղաձայնական (վ հնչվող) ու տառի փոխարեն գրել Վ:

<sup>19</sup> Ս. Դյալրուզադյան, Նշվ. աշխ., 324—328:

աստուած—աստված, զուարթ—զվարթ, քնուեր—քնուեր, բշուառ—բշուառ, նուազ—նվազ, լեզուի—լեզվի: Ու տառը գրվում է ու պարզ՝ ձայնավոր հնչույթի համար. տիրացուական, բուրժուա, վերահայտի, կառու, կուրգա:

Բաղաձայն վ-ն միշտ արտահայտվում է վ տառով, ձայնավոր ու-ն՝ ու տառով, այբուբենի (վյուն) տառը մնում է իբրև ու-ի բաղադրիչ:

5. Ոչ տառակապակցութեան ու-ի փոխարեն գրել ու, երբ ոչ-ը արտասանվում է ույ. լույս, բույս, կույս, հույս, նույն:

Ոչ տառակապակցութիւնը մնում է միայն այն բաներում, երբ այն արտասանվում է ոչ. խոչ, գոյանալ, գոյական, նոչ:

Ոչ տառակապակցութիւնը ու է գրվում, երբ կարգացվում է ու, գրվում է ույ, երբ ույ է արտասանվում. զգույշ, անուշ, աշխույժ, սառույց, նկույթ, ուժ, բուք, պուտ, շուտ:

6. Բառասկզբի դիրքերում հազագային յ-ի փոխարեն (երբ արտասանվում է հ) գրել հ տառը. հագնել, հակինք, հաղթել, համանուն, հանախ, համբույր, հանկարծ, հիշել, հուշել: Յ տառը անվանվում է յ (յ, ի), ոչ թե՛ հի: Բույլատրվում է երբեմն առանց յ-ի գրել՝ Ակոր, Ովանես, Ոսեփ, Ոհան:

Պահվում են ետև, ետք, ետինք, ետ դառնալ, ետ մնալ, ետքերել ձևերը, որոնք պետք է արտասանվեն յեա, ոչ թե՛ հետ:

7. Ինք, եօ, իւ երկբարբառները գրել յա, յո, յու տառակապակցութիւններով. մատյան, պատյան, սենյակ, պաշտոնյա, ֆրիստոնյա, Գրիգորյան, արդյոք, յոթ, արյունք՝ անկյուն, հյույե, միություն, գյուղ, յուղ, զեփյուտ:

Իւ գրվող մի քանի բաներում պահպանվում է Իւ հնչումը, թեև այն արտահայտվում է Յու տառակապակցությամբ. Իյուզանդիա, Կյուրոս, Պյուրպուր:

8. Զի գրվում բառավերջի դիրքում անձայն (չարտասանվող) Յ տառը. արեա, ծառա, ֆահանա, սատանա, վրա, պահածո, ձուլածո, հավաքածո, ներքն:

9. Գրվում է ձայնավորներին նախորդող դիրքերում Ե տառից հետո լսվող յ-ն. բույնյական, միջօրեյական, գործունեյություն, եյի, եյիր, եյինք, գրեյի, գրեյիր, գրեյինք, գրեյիք, բույնյի:

10. Գրվում է բառասկզբի դիրքում Ե տառից առաջ լսվող Յ-ն յեզր, յերևալ, յերեկ, յեղբայր, յերջանիկ, յերկուրդ, յերազ, յերես, յենթակա:

11. Եմ բայի խոնարհված ձևերը նախորդ բառի ձայնավորին հաջորդող դիրքերում ստանում են սկզբից յ. գալու յեմ, գալու յեզ, գնալու յե, գյուղացի յեմ, ձի յե:

12. Բառասկզբի դիրքում ո տառից առաջ լսվող անկայուն Վ հնչույնը գրվում է Վ տառով. վագի, վագրեյ, վոյրեյ, վոզնի, վոխ, վոսկոռ, վողկույզ, վողնաշար, վոչ, վոն, վոմն, վոսկի:

13. Անկայուն Վ-ն և Յ-ն չեն գրվում.

ա) բառամիջի դիրքերում. ծնկասկը, անոխակալ, աներես, սպերջանիկ:

բ) բառասկզբի դիրքում.

1) բարբառային բաներում, ուր հնչվում են համապատասխանաբար՝ է, օ. երինջ, երնեկ, ոնորք, ոքմին, ոչով.

2) չ, կ մասնիկներից հետո. կողունեմ, չեկամ, չեզամ, կորոշվի:

3) երբ Ե-ով ու Ե-ով սկսվող բառը նախորդ բառի հետ միասին, մեկ ընդհանուր շեշտով է արտասանվում. գարունը յեկամ, աղջիկը վողբում է. բայց՝ գարուն եկամ, լարերն ողբացին:

1940թ. ուղղագրության մասնակի բարեփոխությունը: 1940 թ. օգոստոսի 15-ին Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհուրդը հաստատում է Տերմինաբանական կոմիտեի նախագիծը 1922 թ. նոր ուղղագրությունը մասնակիորեն բարեփոխելու վերաբերյալ: Այդ որոշմամբ ուղղագրության մեջ կատարվում են հետևյալ փոփոխությունները: |

1/ Վերականգնվում են հայոց այբուբենի է և օ տառերը, գրություն մեջ գործածվելով բառասկզբում իբրև է և օ. էակ, էություն, էչ, էպոխա, էվոլյուցիա, օրենք, օրինականություն, օրորդ, օպերա:

2/ Բառամիջի և բառավերջի դիրքերում գործածվում են միայն Ե և Ո տառերը, ինչպես արդեն ընդունված էր նախորդ բարեփոխմամբ. անենել, բույե, բագե, այո, խելոք: |

3/ Ե և Ո տառերը բառասկզբում գործածվում են միայն իբրև յե և վօ. ես, երբ, երևան, երեկո, որժան, որպես, ոսկի, որակ, որսկան: |

Իբրև բացառություն Ե-տառով գրվում են ով, ովքեր դերանունները:

4. Բարդ և ածանցավոր բաներում պահվում է ստուգաբանական գրությունը. անօրինական, կեսօր, ոսկեգօծ, անվայրէջք, չէր, ամենաէական և այլն:

5/ Յ-ն իբրև ձայնակապ գործածվում է ա-ից և օ-ից հետո. նայել, կայարան, խնայել, շոյել, գոյանալ: |

6. Ե և Ո տառերը ձայնավորներից հետո Յ-ձայնակապը չի գրվում: Վարզաբի, թեկնածուի:

7. Սահմանվում է եմ օժանդակ բայի խոնարհման տարբեր

ձևերի հետևյալ ուղղագրությունը՝ եմ, ես, է, եճԷ, եֆ, են, էի, էիւ, էր, էինճ, էիֆ, էինճ, շէր, շէր և այլն:

Այսպիսով, ուղղագրական մասնակի բարեփոխությունը թեև չի լուծում գրաբարյան և նոր ուղղագրության միջև առաջացած սկզբունքային, էական տարբերությունները, բայց, այնուամենայնիվ, այն վերացնում է նոր ուղղագրության որոշ թերությունները, վերականգնում է հայերենի այբուբենից վտարված տառերը, որոշ հարցերում մոտենում ավանդական (գրաբարյան) ուղղագրությանը:

## ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ\*

Ի Բառագիտությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզվի բառային կազմը՝ բառապաշարը իր արդի վիճակում և պատմական զարգացման մեջ:

Բառագիտության ուսումնասիրության առարկան, նախ և առաջ, բանն է: Բառագիտության համար բառը կարևոր է, մի կողմից, իբրև ինքնուրույն միավոր, նրա բառային ու իմաստային առանձնահատկությունները ուսումնասիրելու, մյուս կողմից, իբրև լեզվի բառային կազմի՝ բառապաշարի միավոր, բառային համակարգը քննելու տեսակետից:

Տարբերակվում են նկարագրական և պատմական բառագիտությունները՝

ա) Նկարագրական բառագիտությունը համաժամանակյա դիտակետով, այսինքն՝ լեզվի զարգացման տվյալ փուլի փաստերի հիման վրա, քննում է բանն ու նրա իմաստները՝ լեզվի բառային կազմի կամ բառապաշարի ծավալը և կառուցվածքը, ինչպես նաև բառերի գործածության ոլորտների, ոճական բնութագրման և այլ հարցեր:

բ) Պատմական բառագիտությունը տարածամասնակյա դիտակետով ուսումնասիրում է լեզվի բառային կազմը իր զարգացման մեջ, ներկայացնում է բառապաշարի կրած փոփոխությունները լեզվի պատմության ընթացքում: Այն քննում է լեզվի բառապաշարի կազմավորման ու փոփոխման, բառի գործածության և բառիմաստի տարբեր փոփոխություններին վերաբերող հարցեր:

Լեզվի բառային կազմի ուսումնասիրությունը ավելի համակողմանի կարող է լինել, երբ այն կատարվում է միաժամանակ և՛

\* Հայերեն բառագիտություն բառը կազմված է օտար лексикология բառի նմանողությամբ: Վերջինս բաղադրված է հունարեն lexikos—բառային, բառաբանային և logos—ստույգ, գիտություն բառերից:

Նկարագրական, և՛ պատմական, բառագիտության միջոցով, այսինքն՝ համաժամանակյա և տարածամանակյա դիտակետերով: Այդ դեպքում ոչ միայն արձանագրվում են բառապաշարի արդի և անցյալ վիճակների օրինաչափությունները, այլև պատմական փաստերով պարզարանվում են բառային կազմի ժամանակակից իրականությունները, որ շատ կարևոր է նյութի ամբողջական պատկերացման և ըմբռնման համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բառի ու բառիմաստների տարբեր փոփոխություններն ընդհանրապես հնարավոր չէ բացատրել առանց պատմական, տարածամանակյա մեկնաբանության:

Ժամանակակից հայոց լեզվի արևելահայ գրական տարբերակի բառագիտության ուսումնասիրության նյութը նրա բառային կազմի՝ բառապաշարի ողջ հարստությունն է: Բառապաշարի մեջ է մտնում նաև դարձվածաբանությունը, լեզվում առկա դարձվածքների ամբողջությունը:

Բառագիտության բաժիններն են՝ իմաստաբանությունը, ստուգաբանությունը, բառակազմությունը և դարձվածաբանությունը: Բառագիտության մեջ են առնում նաև բառաբանագրությունը:

Բառի ուսման էր բաժնում քննվում են բառի ուսումնասիրության բնագավառները, բառի սահմանումը, նրա առանձնահատկությունները, հիմնական հատկանիշները, բառի և հասկացության, բառի և լեզվի իմաստային այլ միավորների կապերն ու հարաբերությունները:

Իմաստաբանության (և ստուգաբանության) բաժնում քննվում են բառի և բառիմաստի առանձնահատկությունները, բառիմաստի տեսակները, նրա տարբեր փոփոխությունները: Հայերենի համանունները, հոմանիշները, հակահիշները, բառերի ստուգաբանության ընդհանուր օրինաչափությունները:

Թամանակակից հայոց լեզվի բառապաշարը բաժնում քննվում են բառային կազմի և հիմնական բառաֆոնդի փոխհարաբերության հարցերը: Խոսնակներն հայերենի բառապաշարը ներկայացվում է ըստ ակտիվ ու պասիվ կազմի, ըստ ծագման, ըստ լեզվի տարբեր ոլորտների, ոճական կիրառության և հուզաարտահայտչական զանազան գունավորման:

Բառակազմության բաժնում ուսումնասիրվում են բառերի տեսակները ըստ կազմության, բառերի բառակազմական կազմապարհերը, կազմության ձևերն ու եղանակները:

Թամանակակից հայոց լեզվի դարձվածաբանության բաժնում քննվում են դարձվածքների ընդհանուր առանձնահատկությունները: Իմաստի միաձուլության ու կառուցվածքի տեսակետից դարձ-

վածքների տարբեր տիպերը, դարձվածքների իմաստներին, հոմանշությունը, տարբերակներին, ծագմանն ու գործածությանը վերաբերող հարցերը:

Բառաբանագրության բաժնում ներկայացվում են տարբեր տիպի և բնույթի հայերեն և հայերենին առնչվող հիմնական բառաբանները:

### ԲԱՌԻ ՈՒՍՄՈՒՆԵՐԸ

Մարդկային լեզվի իմաստային հիմնական միավորը բառն է, որը և նախադասության հիմնական բաղադրատարրն է: Լեզուն թեև իր հաղորդակցման կարևոր դերը նախադասության շնորհիվ է կատարում, բայց, այնուհանդերձ, բառը մնում է իբրև լեզվի հիմնական, կենտրոնական միավոր անկախ այն բանից, թե լեզվի մեկնակետը նախադասությունն է համարվում, թե ձևույթը (հնչյունի և իմաստի միաձուլության տեսակետից նվազագույն միավորը):

Բառը քննության առարկա է ծառայում ինչպես բառագիտության, այնպես էլ հնչյունաբանության ու քերականության համար:

Հնչյունաբանության տեսակետից քննվում է բառի հնչյունային կազմը. այսինքն՝ քննության են ենթարկվում բառը կազմող հնչյունները, որոշվում՝ նրանց հնչյունափոխական օրինաչափությունները, տիպերը, տեսակները և այլն:

Քերականության տեսակետից երևան են հանվում բառի պատկանելությունը այս կամ այն խոսքի մասին, բառի առանձնահատուկ քերականական իմաստներն ու քերականական ձևերը, բառերի դերը կամ պաշտոնը նախադասության մեջ, բառերի տարբեր կապակցությունները:

Նկարագրական բառագիտության տեսակետից վեր է հանվում այն ամենը, ինչ կազմված է բառի իմաստի հետ, որոշվում են բառիմաստի տիպերը, բացահայտվում՝ բառի գործածության ոլորտները, նրանց ոճական տարբեր գունավորումները:

Պատմական բառագիտության համար կարևորը լեզվի զարգացման տարբեր փուլերում բառի ծագման, նրա իմաստի, գործածության ոլորտների, ոճական պատկանելության փոփոխությունների հարցերն են:

Բառերի տիպերի և տեսակների, ինչպես նաև իմաստաբանական և կառուցվածքային-քերականական հատկանիշների բաղաձանությունը ղեկարացնում է բառի համակողմանի դիտարկումը սպառիչ սահմանումը: Այդ է պատճառը, որ լեզվաբանական



կանության մեջ մինչև այժմ դեռևս չկա բառի՝ բոլորի կողմից անվերապահորեն ընդունելի սահմանումը: Չափազանց դժվար է հակիրճ սահմանման մեջ ամփոփել նրա բոլոր առանձնահատկությունները: Սղաժ բազմաթիվ սահմանումներն էլ այս կամ այն չափով թերի են ու միակողմանի:

Մ. Արեղյանը՝ բառ է համարում իմաստ ունեցող մեկ հնչյունը կամ հնչյունների կապակցությունը:

Գ. Ղափանցյանը՝ բառի իր բնորոշման մեջ նշում է նախադասության մեջ նրա ինքնություն, շարժուն, ձևավորված և իմաստային տեսակետից անբաժան միավոր լինելու և շեշտ կրելու հատկանիշները:

Գ. Սևակը՝ բառի հիմնական հատկանիշներից մեկը նրա արտահայտած կոնկրետացած, մասնավորված իմաստը համարելով, միաժամանակ ընդունում է, որ «նա ավարտված, վերջավորված, ինքնամփոփ միավոր է թե՛ ըստ բովանդակության, թե՛ ըստ ձևի, և այդ պատճառով ունի ինքնություն գործածություն, կապվում, հարաբերվում է իր նման բառերի հետ»: Նշվում է նաև բառի մեջ մեկ բառային շեշտի առկայությունը:

Է. Աղայանը բառ է համարում այն հնչյունը կամ հնչյունախումբը, որն ունի իմաստ, անկախ, ինքնություն գոյություն և գործառնություն: Բառը սահմանելով իրեն լեզվի մեջ իմաստի և ձևի միասնություն կազմող և ինքնություն միավոր, նրա համար պարտադիր է համարվում նաև մեկ հիմնական բառային շեշտը<sup>1</sup>:

Բառը սահմանելիս, առաջին հերթին, պետք է հաշվի առնել բառի էական հատկանիշները, որոնք անհրաժեշտ է ճշտորեն առանձնացնել ոչ էական, երկրորդական հատկանիշներից. դրանք տարբերակելու համար պետք է համակողմանի և մանրամասն ուսումնասիրվեն և բացահայտվեն բառի բոլոր ներքին առանձնահատկությունները և այն բոլոր հատկանիշները, որոնցով այն տարբերվում է լեզվական այլ միավորներից:

[Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ բառը սահմանվում է իբրև լեզվի իմաստային նվազագույն, (կարճագույն), նիվնական, ինքնաուրույն և ազատ միավոր, որով նախադասությամբ է կազմվում: ]

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1956, 5:

<sup>2</sup> Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, 175:

<sup>3</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, 207—

<sup>4</sup> Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1955, 207—208:

Է. Աղայան, Հայոց լեզվի հոլովումը և խոսնաբանությունը, Երևան, 1967:

Բառն իբրև լեզվի իմաստային հիմնական, ինքնություն և ազատ միավոր, իր հնչյունական կազմով արտահայտում է հասկացություն՝ առարկայի, գործընթացների, օբյեկտիվ իրականության երևույթների, նրանց հատկանիշների կամ իրար հետ ունեցած հարաբերությունների մասին:

[Բառի՝ իբրև լեզվական միավորի հիմնական հատկանիշները հետևյալներն են համարվում<sup>5</sup>. ]

ա) հնչյունական ձևավորվածությունը (բառի հնչյունական կազմը). ]

բ) բառաիմաստաբանական հատկանիշը (բառի բառային իմաստը).

գ) լեքսիկական հատկանիշը (բառի ձևաբանական կառուցվածքը և որպես բաղադրիչ մաս կամ նախադասության ճնարավոր նվազագույն տարր, միավոր): ]

[1) Բառի հնչյունական կազմը կամ հնչյունական ձևավորվածությունը: Բառի հնչյունային (հնչյունական) կողմը այն է, որ յուրաքանչյուր բառ ունի իր հնչյունական կազմը: Ըստ որում, այն կազմվում է մեկ կամ ավելի հնչյուններից: Ժամանակակից հայերենում, օրինակ, մեկ և սակավաթիվ հնչյուններից են կազմվում ձայնարկությունները: Հնչյունական տեսակետից պարզ կազմություն ունեն նաև բնածայնական բառերը, որոշ շաղկապներ (ու, է) և այլն: ]

Գրաբարում, օրինակ, միայն մեկ է հնչյունը ինքնություն բառ է և նշանակում է Աստված: Ժամանակակից հայերենում թեև է-ն ինքնություն բառային արժեք չունի, բայց մի շարք բարդություններում նշանակում է՝ էակ. օրինակ՝ մանրէ, մանրէաբան, հեղափոխություն և այլն:

Քանակական տեսակետից ժամանակակից հայերենում բառերը սովորաբար կազմված են մեկից ավելի հնչյուններից և ներկայացնում են բաղաձայնների ու ձայնավորների տարբեր գույությունները:

[Այսպիսով, բառը որպես լեզվի իմաստային միավոր, անպարձանորեն պետք է հնչյունային ձևավորում ունենալ (խոչ գրավոր լեզվում, խոսքում նաև՝ գրային ձևավորում)<sup>6</sup>, Ըստ որում, յուրաքանչյուր բառային միավոր ռմիշտ հանդես է գալիս իբրև հնչյունային-կառուցվածքային միասնություն, որը համապատասխանում

<sup>5</sup> Տե՛ս Н. М. Шанский, Лексикология современного русского языка, М., 1972, 11:

<sup>6</sup> Ն. Մ. Շանսկի, նշվ. աշխատ., էջ 16:

է ավյալ լեզվի համակարգի հնչույթախոսական կանոններին»<sup>7</sup>։ Արանից հետևում է, որ հայերենում բառերը իբրև որոշակի հնչյունական ամբողջություն խստիվ ենթարկվում են լեզվի հնչյունաբանական օրինաչափություններին, որոնք պայմանավորված են հայերենի հնչյունական համակարգի հնարավորություններով։ Այդ է պատճառը, որ փոխառության դեպքում օտարազգի բառերը յուրացնելիս՝ հայերենը վերջիններս ենթարկում է իր հնչյունական գործող կանոններին։

2) Բառի իմաստային կողմը։ Բառը կազմված լինելով հրնչյունից կամ հնչյուններից, ունի որոշակի իմաստ՝ իմաստատար բերակիչ դեր կատարող հնչյունները (այսինքն՝ հնչույթները) միայն ինքնին վերցրած չունեն իմաստներ և նույնիսկ անմիջականորեն կապված չեն իմաստների հետ, միայն լեզվի իմաստային միավորների հնչյունային պատշաճն են՝ Հնչույթը ձևը է բերում այս կամ այն իմաստը, երբ այն հանդես է գալիս իբրև բառի կամ ձևույթի հնչում<sup>8</sup>։ Այդ պատճառով էլ հնչույթի (հնչյունի) և բառի տարբերությունը հասակորեն է գիտակցվում, որովհետև հնչյունները լեզվում իմաստային միավորներ չեն։ Մյուս կողմից, բառ-իմաստը ինքնին՝ վերացականորեն, հասարակացորեն որպես բառ գիտակցվող հնչյունից դուրս գոյություն չունի։ Բառի մեջ հնչյունային և իմաստային կողմը, հնչյունն ու իմաստը հանդես են գալիս անբաժան միասնության մեջ։ Իրականում բառի հնչյունական կազմը և նրա արտահայտած իմաստը սերտորեն կապված են իրար և իրարից անկախ գոյություն ունենալ չեն կարող։

Բառը կարող է ունենալ բառային ու քերականական իմաստներ։

Բառի քերականական իմաստը հանդես է գալիս որպես բառի բառային իմաստին տրվող լրացուցիչ իմաստ և արտահայտում է զանազան հարաբերություններ (բառի տարբեր պաշտոնները նախադասության մեջ, բառակապակցության կամ նախադասության մեջ բառերի, գործողություն կատարողի կամ այլ անձի հարաբերություններ, հաղորդվող փաստի հարաբերությունը իրականությանը կամ ժամանակին, խոսողի հարաբերությունը հաղորդվածին և այլն)։ Քերականական իմաստը կոչվում է նաև ձևական,

որը բառի ձևական պատկանելության իմաստն է, վերաբերական, հարաբերական իմաստ է ոչ թե առանձին բառով արտահայտված, այլ ոչ ինքնուրույն, բառի հիմնական (առարկայական) մասի վերաբերմամբ լրացուցիչ տարրերով՝ մասնիկներով)։

Սովորաբար բառն ունենում է մի բանի քերականական իմաստներ։ Օրինակ՝ տուն—ուղղական, հայցական հոլով, հերվական գյո վերջավորությամբ, եզակի թիվ։ Գրեցի—պարզ կերպ, ներգործական սեռ, սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակ, առաջին դեմք, եզակի թիվ և այլն։ Մյուս կողմից՝ այդ նույն տուն բառը իր ուղիղ և թեքված ձևերով խոսքի մեջ տարբեր նախադասություններում տարբեր պաշտոններ կարող է ստանալ։

Այսպիսով, լեզվում քերականական իմաստներն ունեն իրենց ձևաբանական կամ շարահյուսական դրսևորումները և արտահայտում են հիմնականում բառերի ձևերով, որոնք կազմվում են՝

Հա)՝ վերջավորություններով կամ մասնիկներով և արմատահնչյունի փոփոխմամբ. օրինակ՝ տուն—տան—տներից—տնով—տնում. սեղան—սեղանի—սեղանից—սեղանով—սեղանում. քոյր—քույրս—քույրսն—քույրսից—քույրսով—քույրսում. հոլովական իմաստներ)։

Բ) Բայական ածանցմամբ. օրինակ՝ ծծել—ծծվել, երգել—երգվել, պարել—պարեցնել, խաղալ—խաղացնել (ներգործական, շեղք, կրթվորական, պատճառական իմաստներ)։

Գ) Հոգնակիի իմաստի արտահայտմամբ՝ համապատասխան վերջավորություններով. օրինակ՝ տուն—տներ, սեղան—սեղաններ, այլուն—այլուներ։

Դ) Բառերին՝ հայերենի հոգների կցմամբ։

Քերականական իմաստները կարող են արտահայտվել նաև առանց նյութական մասնիկների, բառի բառային իմաստին զուգընթաց։

Բառի բառային իմաստը բառի բովանդակությունն է, իսկ այն հարաբերակցությունն է, որ հաստատվում է բառի հնչյունական կողմի (հնչյունային կազմի) և առարկայի, երևույթի ու օբյեկտիվ իրականության միջև։ Բառի իմաստը մտնում է բառի կառուցվածքի մեջ որպես բովանդակություն, ներքին կողմ, որի նկատմամբ բառի հնչյունային կազմը հանդես է գալիս իբրև նրա արտաքին կողմ՝ նյութական պատշաճն։ Բառի մեջ այդ ներքին և արտաքին կողմերի միասնությունը արտահայտված է բառի իմաստի և հրնչյունային (հնչյունային կազմի) միջև մշտական և անբաժան կապի հաստատմամբ։ Այսպես, մարդ բառի «մտածելու և խոսելու կարողությամբ օժտված կենդանի էակ» իմաստը և հնչյունային կազմը

7 В. В. Виноградов, О формах слова, Изв. АН СССР, отдел литературы и языка, т. 3, вып. 1, 1944, 31.

8 Р. И. Аванесов, Фонетика современного русского литературного языка, М., 1956, 15.

9 К. А. Левковская, Теория слова, М., 1963, 101.

10 Մ. Շանկի, Եզվ. աշխատ., էջ 17.

պայմանավորված են նրա ներքին և արտաքին կողմերի՝ բովանդակության և հնչյունային կազմի միասնությանը, նրանց մեջ գոյություն ունեցող մշտական և անքակտ կապով:

**Բառ և հասկացություն:** Բառը և հասկացությունը իրար նրկատմամբ որոշակի հարաբերության մեջ են գտնվում: Բառը լեզվական միավոր է, հասկացությունը՝ տրամաբանական: Բառը լեզվի իմաստային միավոր է, որով նախադասություն է կազմվում, իսկ հասկացությունը իրրև տրամաբանական միավոր նշանակում է օբյեկտիվ իրականության առարկան կամ երևույթը գիտակցության մեջ արտացոլված:

Հասկացությունը արտահայտում է առարկայի և երևույթների ընդհանուր, էական հատկությունները: Բայց հասկացությունները արտացոլում են ոչ միայն ընդհանուրը, այլև բաժանում են իրերը խմբավորում, դասակարգում են ըստ նրանց տարբերությունների: «Մարդ» հասկացությունը ոչ միայն արտացոլում է էապես ընդհանուրը, այն ինչ հասուկ է բոլոր մարդկանց, այլև ամեն մի մարդու տարբերությունը մնացած ամեն ինչից<sup>10</sup>:

Բառի և հասկացության կապը անմիջական չէ: Բառն ու հասկացությունը լեզվական մակարդակում չեն նույնանում: Գրանք լեզվական և տրամաբանական կարգերի համապատասխանություններ են: Հասկացությունն ընդգրկում ու պահպանում է միայն էականը: Ահա թե ինչու համեմատաբար քիչ թվով հասկացություններ ընդգրկում են անթիվ քանակությամբ իրեր, հատկություններ ու հարաբերություններ<sup>11</sup>:

Լեզվում միևնույն հասկացության համար հաճախ առկա են լինում մի քանի բառեր, թեև չի բացավում նաև հակառակ երեվույթը, երբ լեզվում տարբեր հասկացություններ արտահայտվում են միևնույն բառով: Հետևաբար հասկացությունն ու բառը ձևականորեն նույնպես չի կարելի նույնացնել: Հասկացությունները իրրև օբյեկտիվ աշխարհի այլևայլ առարկաների, երևույթների, հատկանիշների կրողներ՝ իրենց նյութական արտահայտությունն են ստանում հնչյունական որոշակի կաղապարի մեջ, բառերի շնորհիվ: Իրրև տրամաբանական կարգ, հասկացությունները լեզվական արտահայտություն են ստանում բառի մեջ և բառի շնորհիվ, հնչյունական որոշակի կազմով (կաղապարով) և բառային որոշակի իմաստով:

Այսպիսով, բառիմաստը բառի մեջ պարունակվող այն բովանդակությունն է, որ կապված է հասկացության հետ, որպես գիտակցության մեջ օբյեկտիվ աշխարհի առարկաների, երևույթների, հատկանիշների և այլնի արտացոլման արդյունք:

Ի Բառի բառային իմաստը և նրա մեջ պարունակվող հասկացությունը փոխադարձորեն կապված են իրար, բայց և նույնը չեն: Մյուս կողմից, «Տարբեր դարաշրջաններում հասկացությունները սարբեր են իրենց բովանդակությամբ: Նրանք տարբեր են միևնույն մարդու զարգացման տարբեր մակարդակներում»<sup>12</sup>: Ի Բառի մեջ բառի հասկացությունը մեկն է, իսկ բառի իմաստը կարող է մեկից ավելի լինել: Ի օրինակ՝ հայերեն կրակ բառն ունի 10-ից ավելի առանձին իմաստներ՝ խառույկ, օջախ, բոց, հրգեհ, աշխույժ, ճարպիկ, բանկ և այլն: Ի

Հասկացությունը իրականության օբյեկտիվ արտացոլումն է, մինչդեռ բառիմաստին կարելի է ավելացնել սուբյեկտիվ գեահատական (օրինակ՝ որդի-որդյակ, աղավնի-աղավնյակ, մայր-մայրիկ, հայր-հայրիկ, սիրուն-սիրունիկ, կամ՝ մեռնել-վախճանվել-հոգին ավանդել-հրեշտակների հետ խոսել և ստակել-շանաատակ լինել-դժոխքը գնալ-ալլահի ծոցը գնալ և այլն):

Բառիմաստը գոյանում է բառի բառային իմաստից, նրա նյութական բովանդակությունից (որն արտահայտում է բառի հիմքը) և քերականական իմաստից, այն իմաստից, որը ցույց է տալիս տարբեր հարաբերություններ և սովորաբար իր արտահայտությունն է գտնում բառի ձևական պատկանելության մեջ:

Բառի և լեզվի իմաստային մյուս միավորների կապը: Լեզվի իմաստային միավորներ են նաև ձևույթները: Ձևույթը բառի այլևս չբաժանվող, շտարբայութվող իմաստային մասն է: Այն արդեն բառի իմաստային նվազագույն միավորն է: Ի

Ի Ձևույթը սահմանվում է իրրև ձևի և իմաստի միասնություն կազմող նվազագույն լեզվական միավոր: Ի

Ի Ձևույթները ստորաբաժանվում են երևույթների և երկրորդականների: Ի

ա) Երևույթները ձևույթները բառի արմատներն են կամ արմատական բառերը, նույն պարզ հիմքերը, որոնք իրենց մեջ պարունակում են բառի բառային հիմնական իմաստը: Ի Գրատախտակ բառը կազմված է գր(գիր)—տախտակ հիմնական կամ արմատական ձևույթներից: Վազել, երգել, պարել բառերը կազմված են՝ վազ, երգ, պար հիմնական ձևույթներից կամ արմատներից:

<sup>10</sup> Տե՛ս Ա. Սպիրիդին, Մարքսիստական փիլիսոփայության դասընթաց, Երբ-վան, 1970, էջ 334—335:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում:

(բ) Երկրորդական ձևայինները ցույց են տալիս հիմնական ձև-վույթի տարբեր մասնավորված բառային և հարաբերությունները արտահայտող քերականական իմաստներ: Ըստ այդմ տարբերակ-վում են.

(1) Բառակազմական կամ իրանաբերական երկրորդական-ձևույթներ, որոնք հանդես են գալիս բառակազմության մեջ որպես ածանցներ (նախածանց, վերջածանց): Օրինակ՝ անտուն, անտնու-թյուն, տնային, տնական և այլն: |

2) Բառահարաբերական կամ շարահյուսական երկրորդական-ձևույթներ, որոնք հանդես են գալիս բառի մեջ որպես դանազան վերջավորություններ (հոլովական, խոնարհման ցուցիչներ, հոգ-նակիի մասնիկներ, հոգեր և այլն): Օրինակ՝ տուն-տան-տնից-տնով-տնում, տարի-տարվա, քույր-քրոջ, զրույ-զրել, գրած, գրե-ցի, կղբեմ, գրեմ, գրիր, գրեմ, գիրք, գիրք, գիրք, գիրք, գրքներս, գրքներդ, գրքեր և այլն: |

Քառի և ձևույթի միջև ընդհանուրը այն է, որ և՛ բառերը, և՛ ձևույթները իմաստներ ունեն, բայց տարբերվում են ինչպես իրենց իմաստների բնույթով, այնպես էլ գործածությամբ: Քառը անկախ գործածություն ունի, այնինչ ածանցները և քերականական մաս-նիկները ինքնուրույն, անկախ գործածություն չունեն:

(Այսպիսով, ձևույթները նույնպես լեզվի իմաստային միավոր-ներ են: | Հիմնական ձևույթները, ինչպես հայտնի է, բառարմատ-ներն են և օժտված են նույնպես բառային իմաստով, միայն այն-տարբերությամբ, որ բառի բառային իմաստը կոնկրետ է, իսկ արմատինը՝ ոչ: | Օրինակ՝ տուն, սեղան, գիր, մարդ, տախտակ, կենդանի, կարմիր, սպիտակ և այլ բառերը և վազ(ել), գն(ալ), գն(ացք), մարզ(անք), մարզ(ել) բառարմատները կամ հիմնա-կան ձևույթները: |

Լեզվում բառն ու բառարմատը շատ դեպքերում նույնանում են. ինչպես, օրինակ՝ տուն, մարդ, սեղան, գիր, տախտակ, դա-նակ և այլն: Բառի և բառարմատի նույնությունը դեպքում բառ-արմատների քերականական ձևերի բացակայությունը ձևական է, որովհետև նրանց ձևերի քերականական իմաստը արտահայտված է, այսպես կոչված, զրո ձևով: Մյուս կողմից, այդ կարգի բառար-մատներին շատերը ծագումնաբանորեն կամ ստուգաբանորեն նույնպես տարբարակվել են. ինչպես, օրինակ՝ դան-ակ, օրհորդ (օրի-որդ) և այլն, թեև արդի հայերենի գործող նորմաների ըմ-բռնողությամբ դրանք արմատական բառ են համարվում: Վերջին հաշվով արմատը թեև օժտված է բառիմաստով, այն, նախ՝ կոնկ-րետ չէ, և, երկրորդ՝ չունի քերականական ձև և չի մտնում հարա-

ցույցի մեջ, ինքնուրույն գործածություն չունի, լեզվի իմաստային ինքնուրույն միավոր չէ:

Լեզվի ինքնուրույն իմաստային միավորներ չեն կարող հա-մարվել նաև երկրորդական՝ իրահարաբերական և բառահարաբե-րական ձևույթները՝ ածանցները, հոլովական, խոնարհման, հոգ-նակիի և այլ վերջավորություններն ու մասնիկները, որովհետև վերջիններս չունեն բառային առանձին, ինքնուրույն գործածու-թյուն, առանձին շեշտ և այն հատկանիշները, որոնցով օժտված է բառը: Ածանցների, վերջավորությունների և քերականական մաս-նիկների իմաստները առարկայական չեն, այլ վերաբերական են, հանդես են գալիս որպես բառի բաղադրատարր, կցվում են բառե-րին, տալով դրանց զանազան լրացուցիչ իմաստներ կամ վերա-բերական հարաբերություններ: Մի խոսքով, դրանք միայն քերա-կանական արժեք ունեն:

Բառահարաբերական ձևույթների (վերջավորություններ, զա-նազան մասնիկներ և այլն) շնորհիվ կազմվում են բառաձևեր, որոնք ելակետային բառի (ուղղական հոլով, անորոշ դերբայ) նը-կատմամբ կախյալ վիճակում են: Բառի ելակետային ձևը կամ բուն բառը համարվում է առարկայի, երևույթի, հատկանիշի ան-վանողական ձև և հիմք է ծառայում իր իսկ հարացուցային ձևերի համար:

Մյուս կողմից, ամբողջական բառը տարբերվում է բառի մա-սից իր իմաստային ավարտվածությամբ, որից բառի մասը զուրկ է: Վերջինս հանդես է գալիս որպես սոսկ բառի մաս և չունի այդ ավարտվածությունը, որը և նախապայմանն է տվյալ միավորի՝ ուրիշների հետ քերականական կապակցման համար<sup>13</sup>:

Որպես բառի և ձևույթի հիմնական տարբերություն, նշվում է առաջինի՝ նախադասության սահմաններում քիչ թե շատ ազատ տեղաշարժվելու ունակությունը<sup>14</sup>:

Բառի և ձևույթի էական տարբերությունն ի վերջո այն է, որ նրանք պատկանում են լեզվական տարբեր մակարդակներին: Ձևույթն իբրև իմաստային միավոր իրեն իրացնում, դրսևորում է բառի մեջ, միևնույն բառը գործածվում է նախադասության մեջ: Մյուս կողմից, բառն օժտված է բառաքերականական վերաբերու-թյամբ: Ձևույթները գոյություն ունեն բառի մեջ որպես իմաստա-յին տեսակետից անբաժանելի միավորներ, նրանք չունեն բա-

<sup>13</sup> А. Н. Смирницкий, К вопросу о слове (проблема «отдельности сло-ва»). Вопросы истории и теории языка, изд. АН СССР, М., 1952, 188.

<sup>14</sup> В. В. Виноградов, Русский язык, М., 1947, 9:

աքերականական վերաբերություն, հանդես են գալիս միայն իբրև իմաստային մասեր, որոնք զուրկ են ոչ միայն որևէ ձևաբանական ձևավորվածության հատկանիշից, այլև չեն պատկանում որևէ բառաքերականական կարգի՝ որևէ խոսքի մասի<sup>15</sup>:

Բառի ամբողջական ձևավորվածությունը և բառական շեշտը: Բառի հիմնական հատկանիշներից են նրա ամբողջական ձևավորվածությունը և բառական շեշտը:

Բառը բառակապակցություններից և դարձվածքներից տարբերվում է իր ձևավորման ամբողջականությամբ (ամբողջաձևավորվածությամբ)<sup>16</sup>: Բառի ամբողջական ձևավորվածությունը տերմինով հասկացվում է նրա հանդես գալը իբրև լեզվի իմաստային, ամբողջական, անբաժանելի միավոր, որը հնարավոր չէ տարալուծել, ինչպես նաև նրանում հնարավոր չէ լեզվական այլ միավորների մուծումը առանց նրա իմաստի ամբողջությունը խեղաթյուրելու:

Բառը ինչպես ձևույթներից, այնպես էլ բառակապակցություններից ու դարձվածքային միավորներից տարբերվում է նաև նրանով, որ ունի մեկ հիմնական բառային շեշտ: Ինչպես հայտնի է, ձևույթները զուրկ են դրանից, իսկ բառակապակցություններն ու դարձվածքները օժտված են մեկից ավելի շեշտով:

### ԲԱՌԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բառի գործառույթը խոսքի մեջ բառային միավորի կենսագործունեության նպատակն ու կոչումն է, նրա իրացումը: Ըստ այդմ էլ՝ բառի հիմնական գործառույթներն են.

ա) Հաղորդակցման գործառույթ: Երբ բառը հանդես է գալիս իբրև լեզվի հաղորդակցման և հաղորդման միջոց:

բ) Անվանողական գործառույթ: Երբ բառը հանդես է գալիս իբրև առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի անվանում:

գ) Գեղագիտական գործառույթ: Երբ բառը հանդես է գալիս իբրև գեղարվեստական արտահայտչականության միջոց:

Բառ, բառույթ և բառածև: Բառը լեզվի իմաստային նվազագույն, ամարտուն և ինքնուրույն միավոր է, քերականական սրուշակի ձևավորվածությամբ:

Բառույթը լեզվի միավոր է, լեզվական համակարգի կառուցվածքային տարր: Այն բառն է իր բառային հատկանիշներով, երբ

բառը հանդես է գալիս որպես բառապաշարի ինքնուրույն միավոր, ի տարբերություն խոսքում, նախադասության մեջ բառի ձևը բեռած քերականական դանազան իմաստների և ձևափոխությունների:

### ԲԱՌԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բառի տարբերակ կարելի է համարել այն միավորները (կազմությունները), որոնք ունեն համարյա նույն ձևույթային կազմը. նրանց միջև տարբերությունն այնքան չնչին է, որ ամբողջությամբ առած չի խախտում բառային տվյալ միավորի միասնությունը:

Ժամանակակից հայերենում բառի տարբերակ պետք է համարել միայն միևնույն բառի հնչյունական-ուղղագրական տարատեսակը կամ տարբերակը: Ինչ վերաբերում է, այսպես կոչված, քերականական կամ ձևաբանական տարբերակներին, դրանք պարզապես հորովված, խոնարհված, հոգնակի վերջավորություն, հոգստացած բառաձևերն են, որոնց ճիշտ չէ բառի բուն տարբերակ համարել: Ուրեմն՝ բառի ուղղագրական կամ հնչյունային տարբերակը կապված չէ նրա հարացուցային կամ ձևաբանական այլևայլ փոփոխությունների հետ: Դրանք նույն բառի հնչյունական տարբեր դրսևորումներն են, որոնցից մեկը լեզվի զարգացման տվյալ փուլի համար համարվում է ճիշտն ու ընդունելին և օրինականացվում է: Բացառիկ դեպքերում ընդունվում է միևնույն բառի երկակի գրությունը:

Այսպիսով, ժամանակակից հայերենում բառի ուղղագրական կամ հնչյունական տարբերակը զանազան պատճառներով միևնույն բառի տարբեր գրությամբ արտահայտվածներն են. ինչպես՝ դարպաս-դարբաս, բրիգադ-բրիգադա, թեզ-թեզիս, պատիվ-պասսիվ, հեռացնել-հեցնել, գեղգեղալ-գեղգեղել, մախաղ-մաղախ, ողողն, մրբմրթալ-մոթմոթալ և այլն:

Բառի ուղղախոսական տարբերակներ են համարվում նրա տարբեր հնչումները, որոնք գրավոր չեն արտահայտվում: Հաշվի առնելով բառի արդի արտասանությունը, մեր լեզվում կարելի է նկատել նաև ուղղախոսական տարբերակներ. ինչպես՝ բաբն-բաբն, կարգ-կարբ և այլն:

Լեզվի զարգացման արդի փուլում լեզվական համակարգի միօրինակացման և հատկապես ուղղագրության դյուրացման նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առնթեր տերմինաբանական կոմիտեի որոշումներով և ուղղագրական բառարանների միջոցով նվազագույնին են հասցված ժամանակակից հայերենի բառերի ուղղագրական կամ հնչյունական տարբերակները: ♣

<sup>15</sup> Տճ՝ս Ա. Դ. Սմիռնիցկի, նշվ. աշխատ., էջ 194:

<sup>16</sup> Տճ՝ս Ն. Մ. Եանսկի, նշվ. աշխատ., էջ 20:

## ԼԻՒՄԱՍ ԲԱՌԵՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԲԱՌԵՐ

Վժամանակակից հայերենի բառերը ստորաբաժանվում են՝ լի-  
փմաստ կամ ինքնուրույն բառերի և սպասարկու բառերի։

ա) Լիփմաստ բառեր։ Դրանք այն բառերն են, որանք օժտված  
են ինքնուրույն բառաառարկայական իմաստով, կատարում են ան-  
վանողական դեր, անվանում են առարկան՝ գործողությունը, հատ-  
կանիչը, օբյեկտիվ իրականության զանազան հարաբերություն-  
ները և ինքնուրույնաբար հանդես են գալիս որպես նախադասու-  
թյան անդամ։ Դրանք ներկայացնում են գոյական, ածական, թվա-  
կան, բայ, մակբայ, դերանուն խոսքի մասերը, ինչպես՝ տուն,   
գիրք, մառդ, գալ, գնալ, վազել, կարմիր, դեղին, սպիտակ, լավ,  
վատ, նոր, մեկ, երկու, երեք, արագ, հաճախ, ես, դու, նախ և այլն։  
Լիփմաստ բառերում բառի բառային իմաստը գերիշխում է քերա-  
կանական իմաստի վրա։

բ) Սպասարկու բառեր։ Դրանք այն բառերն են, որոնք ան-  
վանողական դեր չեն կատարում, չեն անվանում առարկաները,  
գործողությունը, հատկանիչները, այլ ծառայում են օբյեկտիվ  
իրականության առարկաների և երևույթների անվանումների, լի-  
արժեք բառերի տարբեր հարաբերություններն արտահայտելուն և  
գործածվում են գլխավորապես միայն վերջիններիս հետ։ Սպա-  
սարկու բառերը ձևաբանական փոփոխման չեն ենթարկվում, չեն  
հոլովվում կամ խոնարհվում։ Չունենալով անվանողական գործա-  
ռույթ, նրանք նախադասության անդամ չեն, այլ գործածվում են  
իբրև ձևաբանական (քերականական) միջոցներ։ Այդ կարգի բա-  
ռերն անտարակույս օժտված են նաև բառային իմաստով, բայց  
այդ իմաստները կոնկրետ, առարկայական չեն, այլ՝ բնորոշումը,  
վերաբերական։

Վժամանակակից հայերենում սպասարկու բառեր են՝ կապերը,  
շաղկապները, ձայնարկությունները և եղանակավորող բառերը,  
ինչպես, օրինակ՝ համար, հետ, առաջ, ու, և, բայց, իսկ, ախ,  
վախ, վի՛շ և այլն։

## ԲԱՆՁԱՅՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Դրանք այն բառերն են, որոնք իրենց հնչյունային-ձևավոր-  
մամբ մարդկանց ինքնաբերական բացականչության արտահայտու-  
թյունն են, ներկայացնում են բնության երևույթների ու առարկա-  
ների, կենդանիների, թռչունների և այլնի ձայներ, ճիչեր, աղմուկ  
և այլն։ Դրանք օգտագործվում են իբրև իրականության արտացո-  
ման արտահայտչական (էքսպրեսիվ) միջոց։

Ք Արտաքին տեսքով մի շարք բնաձայնական բառեր մոտենում  
են ձայնարկություններին, բայց տարբերվում են նրանցից, բանի  
որ չեն արտահայտում զգացմունք, հուզմունք, զեղում և այլն։

Ըստ Հ. Աճառյանի, հայերեն բնաձայնական բառերը կազմ-  
վում են իրենց առաջին բաղաձայնից, որը և նրանց արմատն է։  
Բնաձայնական բառերը կազմված են այդ արմատի վրա դրված  
ն, շ, նշ, ո և այլ հնչյուններով կամ ածականներով կամ էլ այդ  
արմատի կրկնությամբ. ինչպես, օրինակ՝ շաշել, շշել, շաաշել,  
շշուկ, շշունջ, շոինջ, շրշուն և այլն։

Հ. Աճառյանի տվյալներով<sup>17</sup>, հայերեն բնաձայնական բա-  
ռերի թիվը 150-ից անցնում է։ Այդ կարգի որոշ բառեր իրենց  
զուգահեռներն ունեն հնդեվրոպական ցեղակից լեզուներում։ Քա-  
նի որ բնաձայնական բառերի մեծ մասը ընդհանուր է շատ լե-  
զուների համար, Հ. Աճառյանը գրանք բնիկ հայերեն բառեր լի  
նամարում և չի որոշում դրանց ցեղակցությունը հարցը։

Մտորե բերում ենք հայերեն բնաձայնական բառերից մի քա-  
նիսը. բառաչել, բառաշ, բզգալ, բնշել, բովբյուն, բու, գլգլալ, գո-  
շել, գոզոռոց, գոզալ, դոփել, դոնշել, զոալ, բմբյուն, խառնել,  
խխնշել, խնշել, խոխոջ, խոխոշել, խոալ, խոնշել, խրխինջ, ծիվ-  
ծիվ, ծվծվալ, կական, կառանշ(ել), կարկաչել, կկլացնել, կկու,  
կնտառոց, կուկուկու, կրնել, հա, հաչել, հոպոպ, հիշ, ճճճոկ,  
նոզիյուն, նոնշել, նովոզել, մայել, մլավել, մմմալ, մմմջել,  
նվալ, շաշել, շաաշել, շշել, վնկել, վնկվնկալ, վնգստալ, վրնշել,  
տզգալ, տզոզալ, տզոց, փնշել, փոնշել և այլն<sup>18</sup>։

## ԲԱՌԻ ՆԵՐՔԻՆ ՁԵՎ

Բառի ներքին ձևը բառահիմքի ձևահնչյունաբանական (ձևա-  
հնչյունաբանական) կաղմն է, որը ցույց է տալիս բառի հնչման և  
տվյալ իմաստի պատճառաբանված կապը։ Օրինակ՝ սպիտակա-  
նեք—սպիտակ մազեր ունեցող, գրատախտակ—տախտակ, որի վրա  
գրում են, կարմրագույն—կարմիր գույն ունեցող և այլն։

Բառի ներքին ձևը երևում է բաղադրյալ և հատկապես՝ բարդ  
բառերում։ Այն որոշ շափով դրսևորվում է նաև ածանցավոր բա-  
ռերում. ինչպես, օրինակ՝ անտուն—տուն չունեցող, դժբախտ, ան-  
բախտ—բախտ չունեցող, բախտից զուրկ, ուսանողունի—իշական  
սեռի ուսանող, երևանցի—երևանի բնակիչ և այլն։

<sup>17</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1940,  
էջ 113—116։

<sup>18</sup> Նույն տեղում։

Ըրառի ներքին ձևը իրականում բառի հնչյունական կազմից չխող, բառի հնչյուններով պայմանավորված բովանդակությունն է: Այդ տեսակետից պարզ բառերի ներքին ձևը ժամանակակից հայերենում պատճառաբանված չէ, և այդ կապը հնարավոր էլ չէ գտնել կամ պարզաբանել:

Ըրառի՝ իբրև լեզվի նշանային համակարգի միավորի իմաստը ինչպես այլ լեզուներում, այնպես էլ ժամանակակից հայերենում ոչ մի տրամաբանական, պատճառաբանված կապ չունի նրա հնչյունական կազմի՝ հնչյունների հետ: Այդ առումով վերևում նըշված բաղադրյալ բառերի, այսպես կոչված, ներքին ձևի մեջ արտահայտված կապը պայմանական, երևութական է: Բարդության մեջ բառերի ներքին երևութական կապը իմաստի հետ նշում է նրա բաղադրիչների արդեն հայտնի իմաստների առկայությունը: Այդ պատճառով էլ պարզ կամ արմատական բառերի այդ ներքին ձևը հնարավոր չէ ցույց տալ: Այս հարցում առանձնակի տեղ կարող են զբաղել բնաձայնական բառերը և ձայնարկությունները:

Ձայնարկություններում (իբրև հոգեկան, զգացմունքային որոշակի գործողություն արտահայտող բառերի) և բնաձայնական բառերում (որպես բնության երևույթների, առարկաների, կենդանիների և այլնի աղմուկ, ձայն, ճիչ արտահայտող բառերի) որոշ չափով, կարծես թե, հնարավոր է տեսնել այդ ներքին կապը՝ նմանությունը տվյալ բառի համար որպես հիմք ծառայած ձայնին:

### ԽՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ\*

Հայերենում իմաստաբանություն տերմինը երկու իմաստ է արտահայտում: Իմաստաբանությունը լեզվաբանության այն բաժինն է, որ զբաղվում է բառերի և դարձվածքային միավորների բառային իմաստներով և նրանց փոփոխություններով: Այս իմաստով իմաստաբանությունը մտնում է բառագիտության մեջ և այն գիտաճյուղն է, որ զբաղվում է բառերի և դարձվածքների բառային իմաստներով, նրանց տարբեր տիպերով, տեսակներով, իմաստային տարբեր հարաբերություններով ու փոփոխություններով:

Իմաստաբանությունը նշանակում է նաև ընդհանրապես լեզվական միավորների՝ բառի, դարձվածքի, ջերակախական ձևի իմաստ (սեմանտիկա): Այս նշանակությամբ հայերեն իմաստա-

\* Հայերեն իմաստաբանություն բառը կազմված է семаантика և сема-нология բառերի նմանազությամբ (семаантика-ն ծագում է հունարեն semantikos «նշանակող», семанология-ն հունարեն «semasia» «նշանակու-թյուն» + logos «հասկացություն, ուսմունք» բառերից):

բանությունը բառը ամբողջապես համընկնում է բառի բառային և ճեղքականական իմաստներին, հետևաբար ընդհանուր լեզվաբանու-թյան կարգ է և որքանով որ վերաբերում է բառագիտությանը, նույնքանով էլ՝ ձևաբանությանը և ընդհանրապես ջերակախու-թյանը:

### ԲԱՌԻ ԲԱՌԱՅԻՆ ԻՄԱՍ. ՆՐԱ ՏԻՊԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բառի բառային իմաստը բառի բովանդակությունն է, այսինքն՝ նրա հնչյունական կազմի և օբյեկտիվ իրականության առարկայի, երևույթի, հատկանշի և այլնի միջև եղած հարաբերակցու-թյունը: Բառի բառային իմաստը արտացոլում է առարկաների և երևույթների ճանաչված ոչ բոլոր հատկանիշները, այլ դրանցից միայն այնպիսիները, որոնք էական են համարվում կամ օգնում են մի առարկան տարբերելու մյուսից: Օրինակ, երբ ասում ենք՝ մարդ, ձյուն, ձուկ կամ ոչխար, ապա՝ մենք նկատի ունենք միայն դրանց ընդհանուր հատկանիշները, յուրաքանչյուրի համար առանձին-առանձին:

Իրենց հասարակական կենսագործունեության ընթացքում մարդիկ ճանաչում են առարկաները, երևույթները, գործընթաց-ները, զանազան որակներն ու հատկանիշները, և օբյեկտիվ իրա-կանության այդ առարկաների, երևույթների, գործընթացների կամ որակների որոշակի տարբերակված հատկանիշներն էլ հիմք են ծա-ռայում բառերի այս կամ այն իմաստների համար:

Ըրառի բառային իմաստը տվյալ լեզվով խոսող հանրությանը գիտակցության մեջ ամրացված օբյեկտիվ իրականության առարկայի, երևույթի նկատմամբ ունեցած բառի վերաբերությունն է, նրա համապատասխանությունը: Բառի բառային իմաստի էական առանձնահատկությունն այն է, որ բառն իբրև լեզվական միավոր իր բառային իմաստի համար հարաբերակցվում է արտալեզվային նյութի՝ օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների հետ: Այդ վերջիններս հասկացության շնորհիվ անմիջականորեն դառնում են բառիմաստի բաղադրատարր<sup>19</sup>:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի ճնշող գերակը-նությունն են կազմում այն բառերը, որոնք իրենցից ներկայաց-նում են օբյեկտիվ իրականության զանազան երևույթների անվա-նումները (առարկաներ, գործողություններ, հատկանիշներ և այլն): Այդ լիմաստ բառերը ջերակախորեն գոյակախներ, ածականներ, մակբայներ, թվականներ և գերանուններ են: Այս կարգի բառերի

<sup>19</sup> Տես Ն. Մ. Կանկի, նշվ. աշխատ., էջ 33:

էական առանձնահատկութիւնը նրանց անվանողական դերն է: Այս առումով հիշյալ կարգի բառային խմաստ ունեն ոչ բոլոր բառերը: Այլ է ձայնարկութիւնների, կապերի, շաղկապների իմաստների բնույթը: Զի կարելի ժխտել այդ կարգի բառերի մեջ բառային իմաստի առկայութիւնը: Հիշյալ կարգի սպասարկու բառերի բառային իմաստների բնույթը այլ է: Սպասարկու բառերը անմիջապէս կապված չեն օբյեկտիվ իրականութեան առարկաների և երևույթների հետ, շունեն առարկայական իմաստ, բայց և սխալ է դրանց զրկել ընդհանրապէս բառային իմաստից: Կասկածից վեր է, որ այդ կարգի բառերը նույնպէս, ինչպէս և լիիմաստ բառերը, ունեն բառային իմաստ, որը, սակայն, առարկայական չէ, այլ՝ վերաբերական, կոնկրետ չէ, այլ՝ ընդհանուր: Սպասարկու բառերի իմաստը հիմնականում տարբերվում է լիիմաստ բառերի իմաստից նրանով, որ առաջինների իմաստը անվանողական չէ, այլ՝ ընդհանուր և վերաբերական: Ոչ ոք չի կարող ժխտել, օրինակ, ձայնարկութիւնների (ա՛խ, վա՛խ, հե՛յ, օ՛հ) կամ կապերի ու շաղկապների (հետ, պէս, առաջ, համար, բացի, և, ու, բայց, իսկ, եթէ և այլն) բառային իմաստները, որով և պայմանավորված է վերջիններիս, որպէս բառի՝ լեզվի իմաստային ազատ միավորի կոչումը: Այլապէս դրանք լեզվում չէին կարող հանդես գալ որպէս ինքնուրույն բառային միավորներ: Բառային իմաստ ունեցող բառերը իրարից տարբերվում են այդ իմաստի արտահայտման յուրահատկութեամբ:

Ժամանակակից հայերենում կարելի է առանձնացնել բառի բառային իմաստների հետևյալ տիպերը՝ ուղղակի կամ անվանական իմաստ և դարձվածաբանորեն կապված իմաստ:

ա) Բառի անվանական կամ ուղղակի իմաստ: Բառի անվանական կամ ուղղակի իմաստը բառային այն իմաստն է, որն անմիջականորեն կապված է օբյեկտիվ իրականութեան առարկաների և երևույթների արտացոլման հետ:

Ուղղակի կամ անվանական իմաստը բառի կողմից առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի անվանումն է՝ կապված նրա անվանողական գործառույթի հետ: Օրինակ՝ ծառ, խոտ, սար, այծ, կով, պատ, քար, առաստաղ, պատշգամբ, ընձուղտ, խոսք, երգ, նվագ, խոսել, երգել, նվագել, կարմիր, կայույտ, դեղին, կանաչ, սպիտակ և այլն:

Անվանական կամ ուղղակի իմաստ ունեցող բառերի կապերն ու հարաբերութիւնները ուրիշ բառերի հետ որոշվում են առարկայական-տրամաբանական օրինաչափութիւններով և բառային համակարգի օրենքներով: Այդ կարգի բառերի գործածութեան սահ-

մանները ավելի լայն են, նրանց կապերը այլ բառերի հետ բազմազան են և ազատ, նրանք սահմանափակվում են միայն առարկայական-տրամաբանական հարաբերութիւններով: Այսպէս, անվանական կամ ուղղակի իմաստ ունեն՝ ձեռք, ոտք, գլուխ, սեղան, զանակ, դաշտ, լեռ, ձյուն, անձրև, փոքորիկ, մերիկ, սեր, խանդ, թշնամաճք, ծնունդ, մահ, սպանություն և այլն, որպէս առարկայի կամ երևույթի անվանում. մեծ, փոքր, ցածր, բարձր, գեղեցիկ, ազնու, սև, սպիտակ և այլն, որպէս հատկանիշի անվանում. գրել, կարդալ, վագել, ֆնել, ուտել, խմել, ապրել, ծիծաղել, մեռնել և այլն, որպէս գործողութեան անվանում. արագ, նիշտ, սխալ, երեկ, հաճախ, միշտ, հազվադեպ և այլն, որպէս գործողութեան հատկանիշի անվանում. մեկ, երկու, հինգ, հարյուր, հազար, առաջին, երկուրդ, երրորդ, տասներորդ, մեկական, երկուական և այլն. որպէս թվի անվանում և այլն:

Անվանական կամ ուղղակի իմաստ ունեցող բառերն ունեն լայն ու բազմազան բառային կապեր, և այդ պատճառով էլ անվանական կամ ուղղակի իմաստը կոչվում է նաև ազատ իմաստ: Այդ կարգի բառերի կապակցելիութեան հնարավորութիւնները այլ բառերի հետ, այնուամենայնիվ, անսահմանափակ չեն: Այսպէս՝ սեղան բառը կարող է հարաբերվել կամ կապակցվել՝ մեծ, փոքր, ցածր, բարձր, կլոր, փառակուսի, տալիակ, երկար, սպիտակ և այլ բառերի հետ: Բայց ելնելով նրա առարկայական-տրամաբանական հարաբերութիւններից՝ նույն սեղան բառը ի վիճակի չէ կապակցվելու ցանկացած այլ բառերի հետ, ինչպէս, օրինակ՝ արագ, նիշտ, սխալ, երեկ, այսօր, գրել, երգել, լողալ, մտել, ծեծել և այլ բառերի հետ: Բնական է, որ անվանական կամ ուղղակի իմաստ ունեցող յուրաքանչյուր բառի կապակցելիութեան ունակութիւնները անսահման չեն և նույնպէս ենթարկվում են որոշակի օրինաչափութիւնների:

բ) Բառի դարձվածաբանորեն կապված իմաստ: Դա այն բառային իմաստն է, որ բառը ձեռք է բերում միայն դարձվածաբան միավորի կազմում կամ կայուն բառակապակցութեան մեջ: Այդ իմաստը պայմանավորված է ոչ թե տոնարկայական-տրամաբանական հարաբերութիւններով, այլ հայտնի օբյեկտի բառային համակարգի ներքին օրենքներով: Խոսքի մեջ այդ բառերը գործածվում են խիստ որոշակի բառերի հետ, և որպէս կանոն, ոչ մեծաբանակ կապակցութիւններում: Այդ կարգի իմաստ ունեցող բառերը գործածութեան տեսակետից ազատ չեն, նրանց կապերն ու հարաբերութիւնները այլ բառերի հետ անհամեմատ սահմանափակ են: Այդ կարգի բառերի կապը օբյեկտիվ իրականութեան



առարկաների և երևույթների հետ ոչ թե ուղղակի, անմիջական է, այլ՝ միջնորդավորված: Օրինակ՝ ազվեսասատկ, ազվեսա-  
ֆուն, լուսնահաչ բառերը առանձին անգործածական են, իրենց  
իմաստը զրոսեորում են՝ ազվեսասատկ տալ կամ անել, ազվեսա-  
ֆուն տալ կամ անել, լուսնահաչ տալ բայական կապակցություն-  
ների մեջ, սառ ֆուն ձևնալ, զուր կերպով խոսել իմաստներ-  
ում:

### ԲԱՌԻՄԱՍԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բառի բառային իմաստը գոյանում է նրա առարկայական  
(իրեղեն) իմաստից և ածանցային իմաստից: 1

1) Բառի առարկայական (իրեղեն) իմաստ: Դա բառի նյու-  
թական իմաստն է և համապատասխանում է սովյալ բառի հիմ-  
քում ընկած հասկացությունը, որը ներկայացնում է իրականու-  
թյան առարկան, երևույթը, հատկանիշը և այլն: Օրինակ՝ տուն,  
տնային, տնակ, անտուն բառերում առարկայական իմաստն ար-  
տահայտված է տուն բառարմատով, որը համապատասխանում է  
«տուն» հասկացությանը: Այստեղ առարկայական (իրեղեն)  
իմաստի կրողն է բառի արմատը (պարզ հիմքը):

2) Բառի ածանցային իմաստ: Դա այն իմաստն է, որ առա-  
ջանում է բառի բաղադրությանը դեպքում բառակազմական ա-  
ծանցների կողմից: Ածանցային իմաստ արտահայտողները բա-  
ռակազմական ձևայիններն են՝ ածանցները: Օրինակ՝ տնակ-ուն  
(տուն) նվազական իմաստ ունեցող -ակ ածանցով, որ նշանակում  
է փոքրիկ տուն: Չինանոց = դին(դենք) + սնոց. կազմված է  
զեն(ն) առարկայական (արմատական) իմաստից և -ունոց ածան-  
ցային իմաստից, որ նշանակում է տեղ. ամբողջ բառը նշանակում  
է՝ տեղ, որտեղ գենք են պահում:

Պարզ կամ շտաբայությունով հիմքերից կազմված բառերում  
բառային և առարկայական (իրեղեն) իմաստները համընկնում  
են: Ինչպես, օրինակ՝ տուն, արագ, կարմիր, նինգ, երգ, պար և  
այս կարգի արմատական բառերում կամ պարզ հիմքերում բառի  
բառային և առարկայական իմաստները նույնն են և ըխում են  
միայն նրա արմատական ընդհանուր իմաստից:

3) Վերացական իմաստ: Վերացական իմաստը բառի ընդ-  
հանուր իմաստն է, որը հատուկ է վերացական նշանակություն ու-  
նեցող՝ որակ, հատկանիշ, վիճակ, գործողություն ցույց տվող  
բառերին: Այդ իմաստն արտահայտում են սովորաբար վերացա-  
կան գոյականները. սեր, ատելություն, խանդ, կարոտ, ահամար-

կանք, առախություն, քախիծ, ախություն, հրեվանք, հերոսու-  
րյուն, խիզախություն, վախկոտություն, գովեստ, գովք, հույս,  
նգամ և այլն: Լայն առումով գոյականներից բացի՝ վերացական  
իմաստ են արտահայտում նաև այլ խոսքի մասերին պատկանող  
բառերը. ինչպես, օրինակ՝ ածականները՝ բարի, ջերմ, խելոք, հի-  
մար, շվայտ, բարոյական, քախծոտ, վախկոտ (որոնց մի մասը  
առաջացել է գլխավորապես վերացական գոյականներից): Նույն  
կերպ կարելի է տարբերակել նաև բայերը. սիրել, ատել, խան-  
դել, գուրգուրել, փաղափշել, քախծել, կարոտել, հրեվել, ուրա-  
խանալ, գովել, պախարակել, գոհանալ, դժգոհել, նգամել, հուսալ,  
որոնք օժտված են ավելի արտահայտված վերացականությամբ,  
ցույց են տալիս զգացմունք, վերաբերմունք, ներքին վիճակ և  
այլն: Մինչդեռ՝ գրել, կարդալ, կուրել, տաշել, երգել, ֆայլել, ֆենել  
և այլ բայերը ցույց են տալիս առարկայական գործողություն:

4) Թանձրացական (կամ կոնկրետ) իմաստ: Բառի այն  
իմաստն է, որն ի հակադրություն վերացական իմաստի՝ նշա-  
նակում է ֆիզիկական առարկաներ կամ առարկայացված հատ-  
կանիշներ, գործողություն և այլն: Որոշ դեպքերում թանձրացա-  
կան իմաստը նույնանում է բառի անվանական իմաստի հետ:  
Օրինակ՝ արտ, սեղան, տուն, գրիչ, անտառ, լեռ, փար և այլն: Վ  
Թանձրացական (կոնկրետ) իմաստ ունեն նաև թանձրացական  
գոյականներից կազմված մյուս խոսքի մասերը՝ ածականները,  
բայերը և այլն:

5) Բառարանային իմաստ: Բառարանային իմաստը ոչ թե  
կոնկրետ խոսքային իրադրության մեջ գործող, այլ զրանից դուրս  
առնված, խոսքային բաղմազան իրադրություններից վերացարկ-  
ված նյութական-առարկայական իմաստն է: Վ

6) Հիմնական իմաստ: Բառի՝ իբրև լեզվական միավորի կա-  
ռուցվածքային իմաստն է, որ իրացվում է իր տարբեր գործածու-  
թյամբ: Դա բառի հասկացության բովանդակությունն է: Վ

7) Երկրորդական իմաստ: Երկրորդական են հիմնական ի-  
մաստից դատ մնացած բոլոր իմաստները: Երկրորդական են հա-  
մարվում բառի փոխաբերական, կողմնակի և այլ իմաստները: Վ

ա) Կողմնակի իմաստ: Բառի Երկրորդական, ոչ հիմնական  
իմաստն է, որ իբրև լրացուցիչ իմաստ դրվում է նրա հիմնական,  
անվանական իմաստի վրա և արտահայտում է նաև բառի իմաս-  
տային որևէ նրբերանգ: Օրինակ՝ անկիրք - հիմնական իմաստն է՝  
չկրթված. կողմնակի իմաստներ են՝ 1. կոպիտ, անտաշ, բիրտ. 2.  
անբաղաբավարի. 3. բարբարոս, անբաղաբակիրթ. կամ՝ ան-

կիբե — հիմնական իմաստն է՝ կիրք շունեցող, կողմնակի, ածանց-  
յալը՝ անտարբեր, անզգա: V

բ) Լրացուցիչ իմաստ: Բառի իմաստային կամ ոճական նրբերանգն է, որ դրվում է նրա հիմնական իմաստի վրա և ծառայում է հուզա-արտահայտչական տարբեր գունավորումների արտահայտման համար, տալով նրան անկաշկանդութիւն, մտերմութիւն, հանդիսավորութիւն և այլ բնութի իմաստներ: V Իս բառի լրացուցիչ բովանդակութիւնն է և նրա մեջ պարունակվող իմաստային կամ ոճական նրբերանգները, որ դրվում են նրա հիմնական իմաստի վրա և արտահայտում են հուզա-արտահայտչական գնահատման նրբերանգներ: V Օրինակ՝ ասպեռ — մեծահոգի, վեհանձն, անձնուրաց, անձնազոհ (մարդ), ասեղ — փուշ (պնու, ծառի և այլն), աստղ — բախտ, հաջողութիւն, աղվես (մարդ) — խորամանկ, գայլ (մարդ)՝ անկուշտ, ագահ և այլն: V

8) Վստիճական կամ ելակետային իմաստ: Բառի նյութական-առարկայական մասի բուն իմաստն է, նրա ստուգաբանական կամ նախիմաստը, որից գոյացել է համապատասխան իմաստը՝ ժամանակակից հայերենում: Օրինակ՝ կառավարել — կառք վարել (որից կրկիր և այլն ղեկավարել, գլխավորել և այլն): V

9) Պատճառարեւակ իմաստ: Բառի այն ընդհանուր իմաստն է, որը կարելի է որոշել, պատճառաբանել ըստ նրա բաղադրիչների իմաստների: Օրինակ՝ ձկնուտ — ձուկ որսացող, ձկան որսով զբաղվող մարդ, անձրեալուր — անձրեի ջուր. այգեպտղաբանը — այգու, պտղի և բանջարի բուծմամբ զբաղվելը. անհամ — համ չունեցող, ոչ համեղ, համից զուրկ և այլն: V

10) Սովորական (կամ ընդունված) իմաստ: Լեզվում կայունացած, գործածութեամբ սովորական դարձած և ընդունված իմաստը կոչվում է բառի սովորական կամ ընդունված (ուղուալ) իմաստ: Օրինակ՝ ալբել — 1. գոյութիւն ունենալ, կյանք ունենալ, կենդանի լինել. 2. բնակվել, 3. կերակրվել, սնվել և այլն: Ալք — տեսողութեան գործարան, տեսողութիւն. Անալ — 1. քաղցր, 2. դուրեկան, հաճելի և այլն: V

11) Պատճառական (կամ շրջունված) իմաստ: Այն իմաստն է, որ հանդիպում է բառի խոսքային գործածութեան միայն տվյալ համատեքստում և փաստորեն շեղվում է սովորական, ընդունված գործածութեանից, իր վրա կրում է անհատական գործածութեան կնիքը: Գրավոր խոսքում բառի այն իմաստն է, երբ հեղինակը շեղվելով ընդհանուր, գործածական, ընդունված իմաստից, բառին տալիս է բոլորովին նոր, ոչ սովորական, հանրութեան կողմից դեռևս ընդունված, անգամ արտասովոր իմաստ: V

Օրինակ՝ ալեգորիա — ձյունապատ, ձյունով ծածկված, Այնտեղ վեհափառ Արտուր յուր ալեգորի գազարով իշխում է ջրչակա բարձրությունների վրա (P): Ընդունված իմաստն է՝ ալեհեր: Աղ-լամուղ — թոհուրոհ, քառու: Կյանքի, մահի այս ամենի աղբամուղ-ջում՝ Ողբակիզմուղ հոգիներին — ողբույն, ողբույն (ԵԶ): Ընդունված իմաստներն են՝ մութուրույս, լուսադեմ, մթնշաղ:

Այդ կարգի իմաստները խիստ հազվագյուտ դեպքերում են սովորական և ընդունված դառնում և մեծ մասամբ մնում են հեղինակային, անհատական գործածութեան սահմաններում:

12) Վշավանության շարժանացած իմաստ: Սա որոշ շահով նույննում է նախորդի հետ: Այն իմաստն է, որ անկախ այս կամ այն համատեքստերում բառի գործածութեանից, հանրութեան կողմից հավանութեան չի արժանանում և մերժվում է ըստ լեզվի համակարգի գործող օրինաչափութիւնների. օր.՝ նավթայրոց բառի՝ նավթի ճրագ, նավթաճրագ կամ ձայնալար բառի երաժշտական գործիքի լար իմաստները և այլն, իբրև ոչ ճիշտ կամ ոչ ընդունելի իմաստ: V

13) Բառի փոխաբերական իմաստ: Այն իմաստն է, որ խոսքում բառը ձեռք է բերում այնպիսի առարկա, երևույթ, հատկանիշ և այլն նշանակելու համար, որը նրա սովորական կամ բնական հասկացական բովանդակութեանը չէ: V Բառի փոխաբերական իմաստը երկրորդական, ածանցյալ, ոչ հիմնական իմաստն է, որ ձեռք է բերում բառը և գործում է նրա մեջ ուղղակի կամ անվանական իմաստի հետ, որը, ինչպես հայտնի է, անմիջականորեն յուրյց է տալիս օբյեկտիվ իրականութեան առարկաներն ու երեւոյթները: Ի տարբերութեան ուղղակի կամ անվանական իմաստի, որը (եթե նկատի ունենանք պարզ բառերը) պատճառաբանված չէ, փոխաբերական իմաստը պատճառաբանվում է ուղղակի իմաստով: V Օրինակ՝ աղունաց — ուղղակի կամ անվանական իմաստով՝ աղ և հաց, փոխաբերական իմաստով՝ խնջույք, պատիվ, հարգանք. անձրև — ուղղակի, անվանական իմաստով՝ մթնշուրտային տեղում, փոխաբերաբար՝ մեծ քանակութեամբ տեղացող, թափվող որևէ բան. ոսկե անձրև, հրեղեն անձրև. անուն — ուղղակի, անվանական իմաստներով՝ անձնանուն, հատուկ և աշխարհադրական անուններ, փոխաբերաբար՝ նավթավ, հոշակ. արյուն — փոխաբերական իմաստով՝ 1. կոտորած, արյունահեղութիւն. 2. պատերազմ. 3. զրհ, զոհաբերութիւն. 4. մերձավոր ազգական, արյունակցական կապ և այլն: V

Վիմաստի փոխաբերութեանը կատարվում է ըստ ձևի, գույնի, յափի և այլ առարկաների նմանութեան, գործողութեան բնութի:

առարկայի դերի, կցորդութեան, ինչպես նաև ժամանակի, տարածութեան և այլ զուգորդումների հիման վրա: V

V Բառի փոխաբերական իմաստն առաջանում է հիմնականում փոխաբերութեան (մետաֆորա), փոխանունութեան (մետոնոմիա) և այլաբերութեան (սինեկդոխա) հիման վրա: V

### ԲԱՌԻ ՄԵՆԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

⌈ ա) Մենիմաստութեանը բառի մեջ միայն մեկ իմաստի առկայությունն է: Սովորաբար մեկ իմաստ են ունենում տերմինները կամ գիտաբաները: Օրինակ՝ ածխածին, ջրածին, քրկածին, ծծումբ, ֆոսֆոր, ուրան, մանրէ, վիրահատություն, բոֆարոբկամ՝ անկյունագիծ, տրամագիծ, ֆանտոզ. կամ՝ խնձորենի, հացենի, թխկի, սոսի, սոնուպի և այլն:⌋

⌈ Տերմինաբանական արժեք ունեցող բաներից բացի՝ մենիմաստ կարող են լինել առարկա և հատկանիշ ցույց տվող որոշ գոյականներ ու ածականներ, մակբայները, դերանունները, ինչպես նաև ձայնարկությունները:⌋

⌈ Գոյականներից, օրինակ՝ գրասեղան, գրադահլարան, բազմոց, օրաց, սպասափայտահարան, գդալ, դանակ, պատառափաղ և այլն, և այլն:⌋

⌈ Ածականներից այնպիսիները, որոնք զլխավորապես ցույց են տալիս ինչ նյութից լինելը կամ վերացական հատկանիշ. ինչպես, օրինակ՝ փայտե, արծաթյա, փղոսկրյա, անդուր, մեծաշառաչ, մեծաղողող, լայնախոն, անհատական, պիոնեթական, հառաբակական, գյուղական, ֆաղաֆային և այլն:⌋

⌈ Մենիմաստ են նաև դերանունները. ինչպես՝ ես, դու, նա, այնքան, որքան, ինչքան, ինչ, ինչպես և այլն. մակբայների մի մասը, ինչպես՝ այստեղ, այնտեղ, երեկ, ուշ, շուտ և այլն. ձայնարկոսությունները՝ ա՛խ, վա՛խ, հե՛յ և այլն:⌋

Չթերվող խոսքի մասերին պատկանող բառերի մենիմաստու-

թյունը բացատրվում է նրանով, որ գրանք բառային ընդհանուր իմաստ են արտահայտում և առարկաների և երևույթների տարբեր զուգորդման, հետևաբար և փոխաբերութեան հնարավորութեանը դրանցում բացատրվում է:

բ) Բազմիմաստութեանը միևնույն բառի մեջ իրար հետ կապված մեկից ավելի իմաստների առկայությունն է՝ որ առաջանում է սովորաբար այդ բառի սկզբնական իմաստի զարգացման հիման վրա: Այն միևնույն բառի՝ տարբեր, մեկից ավելի իմաստներով գործածվելու հատկությունն է՝

⌈ Ժամանակակից հայերենում, օրինակ, զիծ բառն ունի մոտ 15 իմաստ: 1. Հետք թողնող առարկայով (կավիճ, մատիտ, գրիչ և այլն) քաշած խազ: 2. (ոազմ.) ճակատ, ճակատագիծ: 3. Տոզան, երկարութեամբ ձգվող առարկաների շարք: 4. Երկաթուղագիծ: 5. Օղային և ջրային տրանսպորտային ուղի: 6. Երկարութեամբ ձգված լար (հեռագրական, ուղիտյի, էլեկտրականություն հաղորդման համար): 7. էլեկտրական հոսանքի, ուղիտհաղորդման, հեռագրային հաղորդակցման և այլն ճյուղավորում: 8. Սահման, սահմանագիծ: 9. Հետք, հետագիծ: 10. (փխբ.) Կնճիռ, խորշում: 11. Բնորոշ կողմ, հատկանիշ: 12. Դիմագիծ: 13. Դիրքավորում (քաղաքական, գաղափարական, տնտեսական գործունեության մեջ հիմնական ուղղություն) և այլն:⌋

Կրակ բառն ունի տասից ավելի իմաստներ. 1. Հուր: 2. Բոց: 3. Խարույկ, օջախ: 4. Հրդեհ: 5. Կայծ: 6. Լույս, լուսավորություն: 7. (ոազմ.) Հրաձգություն: 8. (փխբ.) Կիրք, հրայրք: 9. (փխբ.) Ավյուն, եռանդ, աշխուժություն: 10. (փխբ.) Փորձանք, պատահաս: 11. (փխբ.) Թանկություն (կրակի գին) և այլն:

Գլուխ բառն ունի մոտ քսան իմաստ. 1. Մարդու մարմնի մաս: 2. Առարկայի վերին մաս: 3. Կատար, գագաթ (Արարատի դուխ): 4. Առաջամաս, շարքի առաջին մասը: 5. Սկիզբը (ամսի դուխ): 6. Որևէ բանի կամ տարածության ծայրային մաս (կամրջի դուխ): 7. Վերին կողմը, պատվավոր տեղը (սեղանի դուխ): 8. Ստեղծագործության, աշխատանքի առանձին բաժին:

Մազմիմաստություն (հուն. polisemia, poli—շատ + sema—նշան, որու. առանցում):

Մենիմաստություն (հուն. monosemia, monos—մեկ + sema—նշան):

9. Ղեկավար, առաջնորդ, գլխավոր: 10. Առարկայի գնդաձև կամ կլոր վերջավորություն կամ ծայր: 11. Գլխի մագերը (գլուխը սպիտակել է): 12. Հատ, հաշվի միավոր (20 գլուխ ուշխար): 13. (փխբ.) Մարդ, անձ: 14. (փխբ.) Միտք, գիտակցություն: 15. (փխբ.) Կյանք: (Մի գարի հացը մի գլուխ արծն (ԱԻ): 16. Տոկոսով տրված դրամ և այլն:

Գարձնել բայն ունի 6 իմաստ: 1. Անել, վերածել, փոխարկել: 2. Վերադարձնել: 3. Շուռ տալ, շրջել: 3. Պատեղ, պատեցնել: 5. Ուղղել: 6. Մեկի անունով գրել (ունեցվածքը):

**ԲԱՌԻՄԱՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

Լեզվի պատմական զարգացման ընթացքում կատարված իմաստաբանական բարդ գործընթացների հետևանքով տեղի են ունենում բառիմաստի տարբեր փոփոխություններ: Դրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ կատարվում են համեմատաբար երկար ժամանակահատվածում, որակական փոփոխությունների աստիճանական կուտակման ձևով: Համարյա աննկատելի կատարվող բառերի իմաստների այդ փոփոխությունները որոշ ժամանակից հետո վեր են ածվում որոշակի որակական տարբերության: Բառի իմաստի կամ իմաստների փոփոխության տիպերը սերտորեն կապված են նրանց առաջացնող տարբեր պատճառների հետ: Այդ պատճառները կարող են լինել և՛ լեզվական, և՛ արտալեզվական: Լեզվական են կոչվում բառիմաստի փոփոխման այն պատճառները, որոնք բխում են զուտ լեզվական գործոններից և պայմանավորված են վերջիններով: Արտալեզվական են համարվում բառիմաստի փոփոխությունն առաջացնող այն պատճառները, որոնք պայմանավորված են ոչ թե զուտ լեզվաբանական, այլ արտալեզվական՝ հասարակական գործոններով: Բառերի իմաստափոխության մասնավոր պատճառները շատ են և բազմազան: Այդ փոփոխություններին այս կամ այն ձևով կարող են ազդակ ծառայել կամ նպաստել գիտության և մշակույթի առաջընթացը, երկրի, ժողովրդի կյանքում քաղաքական-տնտեսական շրջադարձային տեղաշարժերը կամ լեզուների տարբեր ազդեցությունները:

Բառիմաստի փոփոխությունները հիմնականում կատարվում են բառիմաստի նեղացման, ընդլայնման, շրջման, համաբանության, իմաստի մեկ ուղղությամբ զարգանալու, ըստ գործառույ-

թի և նմանության նոր իմաստ ձևեր բերելու և այլն պատճառներով<sup>20</sup>:

ա) Բառիմաստի նեղացում: Պատմական զարգացման ընթացքում խոսքային գործածության համատեքստում հայերենում տեղի է ունեցել բառի իմաստային ծավալի նեղացում՝ բառի ավելի լայն իմաստի կամ իմաստների մասնավորման շնորհիվ: Օրինակ՝ գրաբարում հավ բառը նշանակում է թույլն ընդհանրապես, ժամանակակից հայերենում այն ձևեր է բերել թույլունի մի տեսակի իմաստը: Գարձան նախնական իմաստով նշանակում է պետ, սնունդ, դեղ. այժմ ունի նաև հարդ իմաստը: Խաչ բառը սկզբնապես նշանակել և այժմ էլ իր հիմնական իմաստով նշանակում է քրիստոնեական կրոնի խորհրդանշան, հետագայում ձևեր է բերել նաև՝ տառապանք, տանջանք իմաստները: Սուրբ բառը նախապես նշանակել է միայն՝ աստվածային, գերբնական էակ, հետագայում ձևեր է բերել նաև՝ մաքուր, ազնիվ, առաքինի իմաստները: Ակնարկ՝ իր նախնական իմաստով նշանակում է հայացք, նայվածք, հետագայում ձևեր է բերել նաև՝ զբաղան տեսակի անվանման իմաստ (օշերկ): Գրող—գիր անող ընդհանուր նշանակության հետ ունի՝ ստեղծագործության հեղինակ, հեղինակող իմաստը: Դատավոր բառը, որ նշանակում է դատը վարող և վե՛ր կայացնող անձ, հետագայում ստացել է նաև՝ մրցադատավոր, մրցավար, խաղադատավոր, խաղավար իմաստը: Մայր, որ վերջավորություն, վերջ է նշանակում, իր գրչածայր իմաստով իմաստի նեղացում է ստացել:

Իմաստի նեղացման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել տերմինաբանության բնագավառից, երբ լեզվի սովորական, ընդհանուր գործածական բառը տերմինացման ենթարկվելով՝ վեր է ածվում որևէ գիտության կամ արտադրության որևէ ճյուղի տերմինի. ինչպես, օրինակ՝ արբանյակ, պատառ (էկրան), կարգ (կատեգորիա), կռուկ, սայր և այլն:

բ) Բառիմաստի ընդլայնում: Իմաստի ընդլայնում է կոչվում իմաստափոխական այն երևույթը, երբ լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը կորցնելով իր էական հատկանիշների մի մասը, ընդարձակում է իր իմաստային ծավալը: Օրինակ՝ կայսր նշանակում է քազավոր, միապետ (կայսրության, թագավորության դուխ), առաջացել է Կեսար (Հռոմի միապետի) հատուկ անունից:

<sup>20</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, հ. 2, Երևան, էջ 141—153, է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 266—273:

ստացել է ընդհանրական իմաստ: Սուր նշանակում է հատու, կըտ-  
րող, ձեռք է բերել նաև զենք իմաստը. ըստ որում ստացել է նաև  
գոյականի բերականական կարգ: Տուն նշանակում է բնակարան,  
կացարան, ապրելու տեղ, ունի նաև՝ ցեղ, տոհմ, ժողովուրդ իմաստ-  
ները: Մարշալ իր ստուգաբանական նախնական իմաստով նշանա-  
կում է ձիապան, այժմ՝ զորքի գլխավոր նրամանատար և զինվո-  
րական բարձր կոչում՝ գեներալից բարձր: Կառավարել իր նախնա-  
կան իմաստով նշանակել է կառք վարել, կառավարություն բառը  
ըստ այդմ՝ կառվ վարելը, մինչդեռ այժմ ունի այն՝ պետական բար-  
ձրագույն մարմին իմաստը:

Նույն ձևով բառի նախնական իմաստի կամ իմաստների հա-  
մեմատություններ իմաստի ծավալի ընդարձակում է կատարվել նաև  
ժամապահ, տարեգրություն, տանավանառ և այլ բառերում: Նույն  
ձևով որոշ հատուկ անուններ ու տեղանուններ վեր են ածվել ան-  
վանակարգային անվանումների, ինչպես՝ Վոլգա, ժիգուլի (ավտո-  
մեքենաներ), Նաիրի, Իվին, Ախրամար, Երևան (կոնյակ), Էջմիա-  
ծին, Ռսկեվագ (գինի) և այլն:

զ) Բառիմաստի շրջում: Իմաստի շրջումը լեզվի պատմական  
զարգացման ընթացքում բառի մեջ տրամագծորեն հակառակ ի-  
մաստի կամ իմաստների առաջացումն է: Այսպես՝ անազին նշա-  
նակում է անեղ և սուկալի, ունի՝ մեծ, հսկա, անուելի իմաստ-  
ները: Պարսպ նշանակում է՝ ազատ, անգործ, առանց զբաղմուն-  
քի, դատարկ, մինչդեռ պարսպել նշանակում է մի բանով զբաղ-  
վել, գործ կատարել, գործ անել:

դ) Բառի վերաիմաստավորում: Ժամանակակից հայերենում  
որոշ գրաբարյան, բարբառային (զավառական), զրական նոր բա-  
ռերի նախկին իմաստների փոխարեն որոշ բառեր ձեռք են բերում  
նոր իմաստներ: Շատ դեպքերում նախկին իմաստները մթազ-  
նում կամ ետին շարքն են մղվում, դառնալով երկրորդական, լրա-  
ցուցիչ, տեղի տալով նորերին՝ որպես առաջնային, հիմնական  
իմաստների: Վերաիմաստավորման այդ գործընթացը լայն շափե-  
րով տարածված է հատկապես տերմինաբանության բնագավառում  
և կատարվում է գիտական հասկացությունների համար համապա-  
տասխան տերմիններ կամ էլ օտարազգի տերմինների կամ բառերի  
հայերեն համանշանակներ ստեղծելու նպատակով: Օրինակ՝ առ-  
յան (ժյուրի), ազարակ (ֆեյմա), վարդապետություն (դոկտորինա),  
հրահան, մական (КЛИШКА):

Այս հղանակով գրաբարյան շատ բառեր ձեռք բերելով նոր  
իմաստներ, ժամանակակից հայերենում երբեմն գործածվում են  
բոլորովին տարբեր բնագավառներում: Օրինակ՝ գրաբարում հաս-

տոց բառը նշանակում էր անջրպետ, պատվար, այժմ՝ 1) դաշգահ,  
դործասեղան. 2) հրետասայլ (թնդանոթի) և այլն: Գիտակ — 1) աշ-  
րի բնկած բան. 2) պահակ, հսկող. 3) թուղթ, նամակ, այժմ՝ գոր-  
ծիք, որ հեռու առարկաները մոտեցնում է աչքին: Լուսանկար—  
լուսավոր, լուսադարձ, այժմ՝ լուսանկարչական ապարատով հան-  
ված պատկեր՝ նկար (որից՝ լուսանկարել, լուսանկարիչ, լուսա-  
նկարչական, լուսանկարչություն, լուսանկարչատուն): Պաստառ—  
աստառ, շորի կտոր, այժմ սենյակի պատերին խփելու թղթի երկար  
նկարազարդ շերտ. 2. հայտարարություն, լողունգ և այլն գրելու  
թղթի կամ կտորի լայն շերտ. 3. կտավ (նկարչական) և այլն:  
Պաղպաղակ — բյուրեղ, այժմ՝ կաթով, շաքարով, սերուցքով և  
պողպատով պատրաստվող սառեցրած քաղցր ուտելիք, սառնա-  
նույշ: Պանպանակ — 1. գինվորի մարմինը պահպանող զրահ. 2.  
հմայիչ, կախարդական դիր, այժմ՝ այն թերթը, որ կազմարարը  
դնում է գրքի և գրքի կազմի միջև՝ բնագիրը մաքուր պահելու հա-  
մար: Օղապարիկ — օդի մեջ սավառնող (ձիու համար գործածվող  
մակդիր), այժմ՝ գաղով լցված օդում թռչող սարք, հարմարանք:  
Անտիպ — անձև, անկերպարան. այժմ՝ շտպված, շտպագրված:  
Կլուբատար — 1. հեշտ համբերելի, որին հեշտ է համբերել. 2. հեշտ  
հասկանալի, դյուրահասկանալի. այժմ՝ հեշտությունը տարվող,  
այն, որի ծավալի փոքրության պատճառով կարելի է հեշտությունը  
տանել<sup>21</sup>:

ե) Իմաստափոխություն ըստ զուգորդության (ասոցիացիայի):  
Իմաստափոխության այս տեսակը կատարվում է առարկաների և  
երևույթների նմանություն հիման վրա: Օրինակ՝ զլուխ (մարդու) և  
զլուխ (գաղաթ, լեռան կատար), ալն (աչք) և ալն — 1) աղբյուրի.  
2) անիվ. 3) մատանու քար. մշակ — 1) աշխատավոր, ծառա. նաև՝  
բեռնակիր (ֆիզիկական աշխատանք կատարող). 2) զիտության՝  
արվեստի մեջ մեծ վաստակ ունեցող (օր.՝ զիտության մշակ):  
Փուլ — 1) լուսնի լրումից հետո հետզհետե նվազելը. ստացել է  
նոր իմաստներ՝ 2) մարդական բնագավառում՝ խաղաշրջան, 3) հա-  
սարակական կյանքի զարգացման շրջան, էտապ: Օղակ — հիմնակա-  
նում ունեցել է կլոբ, շրջան իմաստը. հետագայում ձեռք է բերել  
աշխատանքային խումբ ընդհանուր իմաստը (դաշտավարական,  
խաղողագործների, ծխախոտագործների և այլն օղակ): Անկում —  
նշանակում է բնկնելը, կործանվելը. ձեռք է բերել նաև անասուն-  
ների մասսայական կորուստ, կտորած՝ հիվանդության կամ որևէ

<sup>21</sup> Տե՛ս Հ. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, Երևան, 1951,  
էջ 481—82:

աղետի հետևանքով իմաստը Թբոր — նշանակում է հիմնակա-  
նում՝ միջատի տեսակ. ձեռք է բերել՝ տրակտորի, մեքենայի, տան-  
կի և այլն անիվի շարժական մետաղյա մաս իմաստը (թրթուրա-  
վոր տրակտոր, տանկի թրթուր)։ Ճյուղ — սկզբնապես ունեցել է  
ծառի նյութավորում, ոստ, բնձյուղ իմաստը, հետագայում ձեռք է  
բերել՝ 1) հոտ (ոչխարի), 2) մասնանշուղ, ստորաբաժանում, բա-  
ժին. 3) ստեղն, թև (չահի) և այլն իմաստները։

գ) Իմաստափոխությունը ըստ կցադրության կամ աղընթեու-  
թյան։ Իմաստափոխության այս տեսակը նույնպես կատարվում է  
իմաստների նմանության հիման վրա։ Օրինակ՝ կարինետ — 1) դա-  
նազան նպատակներին ծառայող սենյակ, սրահ և 2) մինիստրնե-  
րի խորհուրդ։ Համար — 1) թվի կարգ. 2) հյուրանոցի, բաղնիքի  
տեղ, սենյակ։ Երակ (մարմնի) և երակ (հանքի)։

է) Գործառական իմաստափոխություն։ Իմաստափոխության  
այս տեսակը կատարվում է միևնույն գործառույթը կատարող ա-  
ռարկաների հաջորդականության հիման վրա։ Այս դեպքում որևէ  
առարկայի կամ երևույթի անունը անցնում է այնպիսի մի նոր ա-  
ռարկայի կամ երևույթի, որն իր դերով փոխարինում է նախկին  
առարկային։ Օրինակ՝ ռաֆ (մարզու) և ռաֆ (կահույքի, սարածնե-  
րի, մեքենայի և այլն ներքևի հենարաններից յուրաքանչյուրը)։  
2) հրազենի շնիկ, հրահան, 3) սանդուղքի, աստիճանի մատ և  
այլն։ Թև — 1) թռչունների թռչելու գործարանը, 2) մարդու բազուկ,  
կուռ, ձեռք, 3) դանազան կարգի անիվների (չրազաց, հողմազաց)  
շառավիղ, տախտակ, 4) ինքնաթիռի մաս, քաշող մակերեսներից  
մեկը, 5) գուլանի մետաղյա թիակաձև մասը, 6) շինության կողմ-  
նային մասը, 7) գորբի մարտական դասավորության՝ աշակողմ-  
յան և ձախակողմյան մասերը, 8) քաղաքական կազմակերպու-  
թյան՝ կուսակցության խմբավորում, 9) կշեռքի յուրաքանչյուր  
թաթը՝ լծակի հետ, 1) հովանավորություն, պաշտպանություն, սա-  
տար, թիկունք և այլն։

### ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԸ\*

Ինչպես հայտնի է, բառը, որպես նախադասություն կազմող  
իմաստաբերի ավարտուն միավոր, կապված է որոշակի հնչյունական  
կազմի հետ։ Այդ տեսակետից իդեալականն, իհարկե, տարբերակ-  
ված բառային մեկ իմաստին մեկ հնչյունական կազմի կամ պատ-

յանի համապատասխանությունն է։ Վերջինիս անհնարինություն  
պատճառով լեզվում սովորական է հնչյունական միևնույն կազմով  
ոչ միայն տարբեր իմաստների, այլև տարբեր բառերի ու բառաձե-  
վերի առկայությունը։ Այդտեղից էլ առաջանում է համանունության  
երևույթը լեզուներում։

Համանունությունը որպես լեզվական ընդհանուր իրողություն՝  
կարող է վերաբերվել ինչպես բառային կազմին, այնպես էլ քերա-  
կանությանը՝ ձևաբանությանը և շարահյուսությանը։ Ըստ այդմ էլ  
տարբերակվում են բառային և քերականական համանունները։

Ը Բառային համանունները<sup>22</sup> տարբեր իմաստով այնպիսի բառեր  
են, որոնք համընկնում են միայն իրենց արտաքին՝ հնչյունական  
տեսքով կամ կազմով։ Օրինակ՝ 1. մարտ (պատերազմ) և 2. մարտ  
(ամիսը). 1. փող (խողովակ), 2. փող (սրինգ) և 3. փող (զբամ).  
1. հարստություն (ինչք), 2. հարստություն (թագավորական դինաս-  
տիա). 1. սեր (կաթի) և 2. սեր (զգացմունք) և այլն։

Համանունությունն իբրև ձևի և իմաստի տեսակետից բառերի  
և բառաձևերի որոշակի հարաբերության արտահայտություն, հա-  
մաժամանակյա իրողություն է։ Այդ նշանակում է, որ բառերի, բա-  
ռաձևերի և նրանց իմպուսների համանունությունը պետք է դի-  
տել լեզվի զարգացման միայն տվյալ փուլի փաստերի կամ օրի-  
նաչափությունների հիման վրա։ Հետևաբար հայոց լեզվի զար-  
գացման տարածամանակյա կամ պատմական իրողությունները  
բավարար հիմք չեն կարող տալ ժամանակակից հայոց լեզվի բա-  
ռային և բառաբերականական համանունության կապերի որոշման  
համար։

Համանուններ են կոչվում երկու և ավելի այն բառեր, որոնք  
նույնն են գրությամբ (հնչյունական կազմով) կամ արտասանու-  
թյամբ և տարբերվում են միայն իմաստաբանորեն կամ ֆեռակա-  
նորեն, կամ էլ և՛ իմաստաբանորեն, և՛ ֆեռականորեն միաժամա-  
նակ։ Այսպիսով, համանուն բառերը տարբեր են իմաստով, բայց  
նույնն են գրությամբ կամ հնչյունով։ Դրանք նույն կերպ գրվող  
կամ հնչվող, բայց տարբեր իմաստներ ունեցող տարբեր բառեր են։

Համանունների շարք։ Ծրկու և ավելի համանունները կազմում  
են համանունների շարք։ Ծրկու համանուններից կազմվող շար-  
քերը կոչվում են երկանգամ, երեք համանուններից՝ եռանգամ,  
հրեքից ավելի համանուններից կազմված շարքերը՝ բազ-

\* Հայերեն համանուն տերմինը համապատասխանում է ռուսերեն ОМОИМЬ  
բառին, որը ծագում է հունարեն homos—նույն, եռյակակերպ+onyma, oномa—  
անուն բառերից (ըստ այդմ՝ հայերենի պատճենումը կրնի նույնանուն)։

<sup>22</sup> Ա. Շալունց, Համանուն բառերը ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի  
հարցեր, 4, Երևան, 1977, էջ 5—75։

մանդամ շարքեր: Ժամանակակից հայերենում գերակշռում են համանունների երկանդամ շարքերը:

Հայերենի բառային համանունները կարելի է տարբերակել ըստ հնչման և գրություն, իմաստարանական, ձևաբանական-ձևույթաբանական, բառակազմական, ժաղումնաբանական և այլ հատկանիշների հիման վրա:

Համանունների դասակարգումը ըստ հնչման և գրության նույնությամբ ժամանակակից հայերենում ըստ հնչման և գրության նույնության համանունները դասակարգվում են հետևյալ տիպերի՝ բուն համանուններ, համագիր կամ նույնագիր բառեր և համանունը կամ նույնահունը բառեր:

1 (Բուն համանուններ: Դրանք տարբեր իմաստներ ունեցող այն տարբեր բառերն են, որոնք նույն կերպ են գրվում և հնչվում: Օրինակ՝

1. Անջիկ (չնչվող, անջնջելի), 2. Անջիկ (ոչ ջինջ, ոչ հրատակ, պղտոր):

1. Անհատ (անձնավորություն), 2. Անհատ (անհատնում, անսպառ):

1. Բուն (ծառի), 2. Բուն (բույն, որջ), 3. Բուն (խակական):

1. Բազուկ (մարմնի մաս, թև, դաստակ), 2. Բազուկ (ճակընդեղ):

1. Նվազ (նվազելը, երաժշտություն), 2. Նվազ (անգամ, հեղ):

2 (Նույնագիր կամ համագիր բառեր: (Ομογραφ, հունարեն հոմոս—նույն, նույն կերպ + grapho—գրում եմ):

Դրանք այն համանուններն են, որոնք ժամանակակից հայերենում գրությամբ նույնն են, բայց տարբերվում են հնչումով: Ինչպես, օրինակ՝

1. անել (ան-էլ) (կատարել, շինել), 2. անել (ան-յել) (անելանելի, դժվարին, ծանր):

1. Բարդ (բարթ) (ոչ պարզ, խրթին), 2. Բարդ (բարդ) (խտի դեղ):

1. միակնություն (մի-ակնություն) (մեկ աչք ունենալը), 2. միակնություն (միա-կընություն) (մեկ կին ունենալը):

1. բազմակնություն (բազմ-ակնություն) (շատ աչքեր ունենալը), 2. բազմակնություն (բազմա-կընություն) (մի քանի կին ունենալը): Այս կարգի համանուն բառերի հնչույթային կազմի տարբերությունը արդի հայերենում նույն հնչյունի կամ հնչյունախմբի միևնույն դիրքերում տարբեր հնչումն է:

3) (Նույնահունը կամ համանունը բառեր: (Ομοφων, հունարեն հոմոս—նույն, նույնակերպ + phōnē ձայն, հնչյուն):

Ի տարբերություն նույնագիր բառերի, նույնահունը կամ համահունը համանունները ժամանակակից հայերենում այն բառերն են, որոնք որոշ շփոթվ տարբերվում են հնչյունական կազմով կամ գրությամբ, բայց նույնն են հնչումով կամ արտասանությամբ, օրինակ՝

1. գրվում և հնչվում է՝ ախտ (հիվանդություն), 2. հնչվում է ախտ (գրվում է աղտ) (Պեղտ):

1. ամյակ (ամիակ) (անուշադրի սպիրտ), 2. ամյակ (ամյակ) (տարեթիվ) (տարի):

1. անօթ (անոթ) (աման), 2. անօթ (ան-օդ) (օդադուրկ):

1. աչ (աչ) (աչք), 2. աչ (աչ) (աչակողմ, աչյակ):

1. բացօթյա (բացօթյա) (առանց օթևանի, բաց երկնքի տակ), 2. բացօթյա (բացօդյա) (բաց օդում, անծածկ):

1. գօր (գօր) (ցերեկ), 2. գօր (գոր) (զորություն):

1. յէրթ (երդ) (1. երդիկ, 2. տուն, ընտանիք), 2. յէրթ (երթ) (1. շքերթ, 2. ընթացք):

1. վօրթ (որդ) (ճիճու), 2. վօրթ (որթ) (խաղողի վաղ):

1. ուխտ (ուխտ) 1. (ուխտատեղի, 2) երգում և այլն), 2. ուխտ (ուղտ) (սապատավոր կենդանի):

Այս կարգի բառերի նույնահունությունը ժամանակակից հայերենում հիմնականում առաջանում է՝ ձայնեղների խլացման (դ-խ, դ-թ), խուլերի ձայնեղացման (չ-ջ), խուլերի շնչեղացման (տ-թ) հնչյունական օրինաչափությունների հիման վրա:

Համանունների ձևաբանական-ձևույթաբանական և իմաստային դասակարգում

1) ըստ ձևաբանական-ձևույթաբանական հատկանիշների հայերենի համանունները ստորաբաժանվում են.

ա) Բացառձակ համանուններ: Դրանք իմաստով տարբեր, բայց գրությամբ և հնչումով նույն այն բառերն են, որոնց մեջ համընկնում է քերականական ձևերի ամբողջ համակարգը: Այդ համանունները պատկանում են քերականական միևնույն կարգին, համընկնում են նաև հոլովման և խոնարհման ձևերով: Օրինակ՝

1. ափ (ձեռքի), 2. ափ (չրի եզր):

1. վարել (հողը հերկել), 2. վարել (կառավարել գործ, մեքենա և այլն):

1. կետ (կենդանի), 2. կետ (նշան), 3. կետ (կայան):

բ) Մասնակի համանուններ: Դրանք իմաստով տարբեր, բայց

նույն գրութեամբ և հնչումով այն բառերն են, որոնք համընկնում են իրենց ոչ բոլոր քերականական կարգերով և ձևերով:

1. Բան (հոգը փորելու գործիք), 2. բան (զարմանքի բացականչություն).

1. բաւ (եղանակավորող բառ), 1) բա, հապա, 2) ուրեմն, 3) իհարկե). 2. բաւ 1) արական թավ ձայն, 2) (երաժշտական գործիք).

1. անել (կատարել, շինել), 2. անել (անելանելի, դժվարին, ծանր).

1. մորթ (կաշի), 2. մորթ (մորթելը).

1. սեր (զգացմունք), 2. սեր (կաթի):

Այս կարգի համանունները կարող են տարբերվել տարբեր քերականական կարգերի պատկանելութեամբ, իսկ քերականական վարդերի զուգահիշական դեպքում՝ կարող են տարբերվել քերականական իմաստներով և այլն:

գ) Բառական և քերականական համանուններ: Համանունութեան այս տիպի հիմքում ընկած է համանունների շարք կազմող անդամների՝ բառի և բառաձևի հնչյունական կազմի բացարձակ նմանությունը: Օրինակ՝

1. անցավ (անցնել բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալի երրորդ դեմք), 2. անցավ (առանց ցավի, ածական անուն).

1. հորդ (առատ), 2. հորդ (քո հորը):

Հայերենում այս կարգի համանունների հնչյունական զուգահիշականների առաջացման հիմքում ընկած են հոլովման, խոնարհման և հոգառութեան ժամանակ բառերի կրած փոփոխությունները:

(Համանուն բառաձևերի ենթատեսակները հետևյալն են.

ա) Հոգառութեամբ և բառի ուղիղ ձևով կամ բառաձևերով հարբերվող.

1. սարդ (սարդ), 2. սարդ (կենդանի).

1. սիրելիս (սիրելի-ս), 2. սիրելիս (սիրելի բայի դերբայ).

1. բուն (բուն), 2. բուն (ծառի բուն, հիմնական և այլն):

բ) Խոնարհման և հոլովման ձևերով կամ բառի ուղիղ ձևով հարբերվող.

1. ոսկրացավ (ոսկրանալ բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալի երրորդ դեմք), 2. ոսկրացավ (ոսկրի ցավ, հիվանդություն).

1. որոնան (որոնալ բայի ըզձական եղանակի ապառնի երրորդ դեմք), 2. որոնան (որոնացող).

1. վանեցի (վանել բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալի եզակի առաջին դեմք), 2) վանեցի (վանի բնակիչ).

1. առ (առնել բայի հրամայական, եզակի թիվ), 2. առ (ակոս).

1. բեր (բերել բայի հրամայական, եզակի թիվ), 2. բեր (բեր) ոչխարի մակադատող).

1. ձյունե (ձյունել բայի ըզձական եղանակի ապառնի անցյալի երրորդ դեմք), 2. ձյունե (ձյուն-եր, հոգնակի).

1. նկարե (նկարել բայի ըզձական եղանակ, եզակի, երրորդ դեմք), 2. նկարե (գեղեցիկ).

1. խնձորի (խնձոր-ի, սեռական-տրական հոլով), 2. խնձորի (խնձորենի).

1. մորթածին (մորթով ծնված, ծնվող), 2. մորթածին (մորթած-ի-ն):

2) Ըստ ձևաբանական և իմաստաբանական հատկանիշների, ինչպես նաև ըստ ծագման համանունները կարելի է ստորաբաժանել հետևյալ տիպերի. ա) նույնաճիւղ (կամ նույնարմատ) համանուններ և բ) տարաճիւղ (կամ տարարմատ) համանուններ:

ա) Հույնաճիւղ (կամ նույնարմատ) համանուններ: Այս կարգի բառերի հիմքերը թեև ստուգաբանորեն ընդհանուր են, բայց նրանց տարանջատումը և միավորումը որպես համանունների պայմանավորված է իմաստային-ձևաբանական որոշակի տարբերություններով և հատկանիշներով, որոնք համակարգային բնույթ ունեն: Այդ իսկ պատճառով լեզվի զարգացման տվյալ փուլում այդ կարգի բառային միավորները գիտակցվում են իբրև տարբեր բառեր.

1. գատիկ (քրիստոնեական տուն), 2. գատիկ (միջատ).

1. ձգել (1) ձի գ տալ, քաշել, դուրս քաշել, 2) մեկնել, կրկարացնել, 3) պրկել, 4) իր կողմը գրավել, հրապուրել), 2. Չգել (արևատահայերեն զցել, նետել).

1. ճիչ (ճշալու ձայն, ճշոց), 2. ճիչ (բույս, աղվեսազի, կածուկ).

1. ջոկ (ածական, մակբայ, 1) գառ, առանձին, 2) տարբեր, ուրիշ), 2. ջոկ (գոյական 1) խումբ, բազմություն, 2) երամակ, 3) ջոկատ).

1. դասական (դասին վերաբերող, օր. դասական թվական), 2. դասական (կլասիկ, անտիկ աշխարհին, մշակույթին, արվեստին վերաբերող և այլն):

բ) Տարաճիւղ (կամ տարարմատ) համանուններ: Այս կարգի բառերի՝ իբրև համանունների էական առանձնահատկությունն այն է, որ դրանց տարբեր ծագում ունեցող հիմքերը միավորվում են



Համանունների շարքերում հնչման կամ գրութայն ընդհանրություն  
և իմաստային տարբերության շնորհիվ: Օրինակ՝

1. անկար (1) կար շունեցող, չկարած, 2) կարան, միացման գիծ  
շունեցող), 2. անկար (1) անկարող, անզոր, 2) աղքատ)։

1. անկտուր (կտուր, տանիք շունեցող), 2) անկտուր (չկտրված,  
միակտուր)։

1. անհագ (առանց հագնվելու, չհագնված), 2) անհագ (անկուշտ,  
առանց հագնալու)։

1. անհատ (անձ, անձնավորություն), 2) անհատ (անհատնում,  
անսպառ)։

1. բալ (բարինու պտուղ), 2. բալ (մեզ, մառախուղ, մշուշ), 3. բալ  
(պարահանդես)։

1. բաղ (քաղեղիք, հունձ), 2. բաղ. (1) արու այծ, 2) կտղուց)։

1. նախաբար (մինխտոր, պրսկ-ից փոխառություն), 2. նախաբար  
(ամենից առաջ ստեղծված, նախաստեղծ)։

1. բոբ (քիմիական տարր), 2. բոբ (մաշկի վարակիչ հիվանդու-  
թյուն)։

բ) Մեկ նույն և ստուգաբանորեն մեկ տարբեր հիմնով (բա-  
ղադրիչով) բաղադրված բառը և բաղաձանցավոր բառերի համա-  
նուններ։

1. ռազմավար (ռազմական ավար), 2. ռազմավար (ռազմագետ,  
ստրատեգ)։

1. բազմայր (շատ սղամարդ ունեցող), 2) բազմայր (շատ այրեր՝  
քարանձավների ունեցող)։

1. սակավամտություն (սակավամիտ, կարճամիտ լինելը, սակավ-  
միտ-ություն), 2. սակավամտություն (սակավ մտնելը, սա-  
կավ-մտտ-ություն)։

1. բազմակնություն (բազմ-ա-կին-ություն), 2. բազմակնություն  
(բազմ-ակն-ություն)։

ժամանակակից հայերենի համանունների աղբյուրները և առա-  
ջացման պատճառները

Համանուն բառերի առաջացումը ժամանակակից հայերենում  
պայմանավորված է ինչպես իմաստարանական, այնպես էլ ոչ  
իմաստարանական պատճառներով։

1) Անվան իմաստարանական տարբեր գործոնների հետևե-  
նով առաջացած համանուններ։

Քաղմիմաստությունը և համանունները ժամանակակից հա-  
յերենում համանունների առաջացման կարևոր գործոններից մեկը  
բառի քաղմիմաստությունն է։ Ինչպես մի շարք լեզուներում, այն-

պես էլ հայերենում համանունների մի մասը գոյացել է բառի  
քաղմիմաստության շնորհիվ։

Քաղմիմաստ բառի մեջ կարող է տեղի ունենալ ինչպես ի-  
մաստների ներքին փոփոխություն, այնպես էլ նոր իմաստի կամ  
իմաստների զարգացում։ Այդ հղանակով համանուն բառերի ա-  
ռաջացումը կատարվում է ոչ կարճ ժամանակամիջոցում, այլ եր-  
կարատե գործընթացում, երբ լեզվի բնականոն զարգացմամբ  
քաղմիմաստ բառի մեկ կամ մեկից ավելի իմաստներ ներքին կամ  
արտաքին զանազան պատճառներով ժամանակի ընթացքում աս-  
տիճանաբար այնքան են հեռանում տվյալ անվանական, նախնա-  
կան իմաստից, որ խզում է առաջանում այդ նոր իմաստի կամ  
իմաստների և անվանական կամ նախնական իմաստների միջև  
Այդ նոր իմաստը այնքան է հեռանում իրեն ծնող բառից, որ նույն  
հնչյունական կազմով այդ միավորը գիտակցվում է իբրև ինքնու-  
րույն, անկախ բառ։ Այսպիսով, նույն բառի հիմնական, նախնա-  
կան իմաստը կամ իմաստները համանունային հարաբերության  
մեջ են մտնում այդ բառից անջատված և արդեն ինքնուրույն բառ  
գիտակցվող միավորի հետ և կազմում համանունների շարք։ Քաղմ-  
իմաստության հետևանքով համանուն դարձած բառերի մեծ մասը  
բառային իմաստներով իրարից այնքան են հեռանում, որ կրթման  
ստուգաբանական հատուկ հետազոտությամբ է միայն հնարավոր  
գտնում բացահայտելու ծագման տեսակետից այդ կարգի բառերի  
ընդհանրությունը։ Բառի բառային իմաստների փոփոխման մեջ  
առանձնահատուկ տեղ է զբաղում բառի հիմնական կամ անվա-  
նական իմաստին զուգընթաց երկրորդական կամ փոխաբերական  
իմաստի կամ իմաստների առաջացումը։ Ժամանակակից հայերե-  
նում որոշակի թիվ են կազմում քաղմիմաստ բառի փոխաբերա-  
կան իմաստից կամ իմաստներից գոյացած համանունները։ Այս-  
պես, օրինակ՝ 1. փող (1) խողովակ, 2) զենքի խողովակաձև մաս,  
3) խողովակաձև երաժշտական գործիք, շեփոր)։ Այս վերջին երկու  
փոխաբերական իմաստները հետագայում առանձնանալով՝ գի-  
տակցվել են որպես ինքնուրույն, անկախ բառեր և դարձել իրենց  
ծնող հիմնական բառի համանուններ։

Բառի նախկին իմաստների միջև համանունային հարաբերու-  
թյուններ կարող են առաջանալ բառիմաստի փոփոխման հետևյալ  
պատճառներով։

ա) Բառիմաստի ընդլայնման շնորհիվ։

1. սուր (հատու) և 2. սուր (զենք)։

1. փերթիլ (մաշկել) և 2. փերթիլ (ստեղծագործել. օր՝ քերթու-  
թյուն)։

- բ) Բառիմաստի ներդաստան շնորհիվ.
- 1. հավ (թուշուն, հավթ), 2. հավ (թուշունի մի տեսակը).
- 1. ծաղիկ (բույս), 2. ծաղիկ (հիվանդութուն):
- դ) Բառի հին իմաստի մրազնման և նորի առաջացման շնորհիվ.

- 1. դալար (խոտ) և 2. դալար (կանաչ, թարմ):
- դ) Իմաստների համադրանքային շնորհիվ.
- 1. բազուկ (ձեռքի) և 2. բազուկ (ճակնդեղ).
- 1. փուլ (շրջան, ժամանակաշրջան) և 2. փուլ (լուսնի):

ե) Իմաստների գործառնական (ֆունկցիոնալ) փոփոխության շնորհիվ.

- Իմաստի գործառնական փոփոխությունը կատարվում է ըստ նմանություն, ըստ կցորդություն և այլ պատճառներով, երբ մի առարկայի կամ երևույթի անունը փոխանցվում է մյուսին:
- 1. կանգուն (կանգնած), 2. կանգուն (շափի միավոր):
  - զ) Իմաստաշփոթության հետևանքով.
  - 1. ժամ (ժամանակ), 2. ժամ (եկեղեցի): Ժամ—նախապես ունեցել է ժամանակի տեղումնություն, ժամանակ և պատարագ իմաստները: Վերջին իմաստը առանձնացել է իբրև ինքնուրույն բառ, իբրև պատարագ կատարելու տեղ:

2) Բառերի պատահական նմանությամբ առաջացած համանուններ:

Ժամանակակից հայերենում համանուններ են առաջացել նաև այլ ճանապարհներով և առաջին հերթին բառերի պատահական նմանությամբ:

- Այս եղանակով համանուններ առաջացել են.
- ա) Սեփական (բնիկ) բառերի հնչյունական կազմի պատահական նմանությամբ.
  - 1. այր (մարդ) և 2. այր (քարայր, քարանձավ).
  - 1. անձուկ (ձուկ շունեցող), 2. անձուկ (նեղ).
  - 1. բազմանվագ (շատ նվագվող), 2. բազմանվագ (շատ անգամ) և այլն:

բ) Սեփական (բնիկ) և փոխառյալ բառերի հնչյունական կազմի պատահական նմանությամբ.

- 1. մարտ (պատերազմ), 2. մարտ (ամիսը).
- 1. փող (խողովակ), 2. փող (գրամ).
- 1. բաս (եղանակ. բառ, 1) հասպա, բա, 2) իհարկե), 2. բաս (1) արական թավ ձայն, 2) հրաժշտական գործիք):

գ) Փոխառյալ բառերի հայերեն գրության պատահական նմանությամբ.

- 1. նոտա (ձայնանիշ), 2. նոտա (հայտագիր, փերջնագիր).
- 1. կամար (կառույցի, հունական փոխառ.), 2. կամար (գոտի, պարսկական փոխառ.):
- դ) Հայերենի ուղղագրության փոփոխման հետևանքով առաջացած համանուններ:

Այս կարգի համանունները ժամանակակից հայերենում առաջացել են հայերենի ուղղագրության բարեփոխմամբ (1922, 1941 թթ.) զբաղվող և ժամանակակից հայերենի ուղղագրությունների մեջ առաջացած տարբերությունների հետևանքով: Դրանք հիմնականում վերաբերում են և և է, ո և օ, և և յ, ոյ-ույ, ոյ-ու գրություններ:

- 1. Սեր (սերուցք), 2. Սեր (զբբ. սէր, զգացմունքը):
- 1. Հարկ (տուրք), 2. Հարկ (յարկ, հարկաբաժին):
- 1. Հույլ (խումբ, բազմություն), 2. Հույլ (յույլ, մեղկ, թույլ, ծույլ):
- 1. Կար (կաթն, զբբ., ն-հնչյունի կորուստ, կովի կաթ), 2. Կար (կաթիլ):
- 1. Հոտ (բույր), 2. Հոտ (հոտ, ոչխարի):
- 1. Պառ (կաթիլ), 2. Պառ (պոյան, կակաշ):

ե) Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում գործածվող տարբեր բառերի հնչյունական նմանությամբ առաջացած համանուններ.

- 1. հող (ոսկրի խող), 2. հող (քերականական կարգ), 3. հող (արևմտահայ, այդտեղ). 1. հոն (բույսը և պտուղը), 2. հոն (արևմտահայ նախեղ):

զ) Գրական և բարբառային բառերի պատահական նմանությունից առաջացած համանուններ.

- 1. կուռ (զբական՝ միասնական և այլն), 2. կուռ (բարբառ.՝ թև, ձեռք).
- 1. բոկ (բոկոտն, բորիկ), 2. բոկ (բարբ.՝ վառեկ).
- 1. տներ (անմազ), 2. տներ (բարբառ.՝ անհայր):

է) Գրական լեզվի ընդհանուր գործածական բառի և տեղմիկի համանուններ.

- 1. ախան (փոս), 2. ախան (ախանանեթի արկ) և այլն:

**ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԸ**

Նախերենում հոմանիշ հասկացության համար տարբեր ժամանակներում գործածվել են մի քանի տերմիններ՝ հոմանիշ, համանուն, նույնանիշ: Դրանք կազմվել են հունարեն *sinōnymos* բառի հիման վրա, որ բառացի նշանակում է նույն անունն ունեցող: Այժմ գործածության մեջ են մնում, փաստորեն, հոմանիշ, համա-

նիշ, նույնանիշ տերմինները, որոնք թեև ըստ բաղադրիչների իմաստների նույն նշանակությունն ունեն, բայց արդի հայերենում՝ ձևեր են բերել միևնույն հասկացության որոշակի տարբերակված իմաստներ: Հայերենում մեզ հետաքրքրող իրողության ընդհանուր հասկացության համար այժմ ընդունված է նույնանիշ տերմինը, իսկ նամանիշ և նույնանիշ տերմինները գործածվում են լեզվաբանական միևնույն իրողության երկու տարբերակների, առաջինը՝ մոտ իմաստ ունեցող, երկրորդը՝ նույն իմաստն ունեցող բառերի համար:

Հումանիշների սահմանումը՝ Հայերենում հոմանիշներ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստնե՞ր և միաժամանակ կարող են տարբերվել ռճական կիրառությամբ, հուլաարտահայտչական գունավորմամբ, ինչպես նաև գործածականությամբ և ուրիշ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ:

Ի ժամանակակից հայերենի հոմանիշները ստորաբաժանվում են՝ նամանիշների, որոնք ունեն մոտ իմաստները կամ իմաստային նրբերանգներ և նույնանիշների, որոնք ունեն նույն իմաստները:

Հումանիշության չափանիշները: Հոմանիշները համաժամանակյա լեզվական կարգ են համարվում Այդ նշանակում է, որ հոմանիշներ կարող են համարվել հայոց լեզվի զարգացման տվյալ փուլի բառապաշարի մեջ մտնող բառերնե՞ր գարձվածքները՝ իրենց իմաստային-նրբերանգային նույնությամբ կամ մոտությունամբ, ռճական-կիրառական և հուլաարտահայտչական գունավորման որոշ տարբերություններով, այն բառերն ու գարձվածքները, որոնք իրենց իմաստային և ռճական արժեքներով արտահայտում են լեզվի զարգացման տվյալ փուլի օրինաչափությունները: Սրանից հետևում է, որ զրաբարյան և միջին հայերենի բառերի իմաստային նշանակությունները և ռճական կիրառությունները չի կարելի, և հնարավոր էլ չէ, համակցել արդի հայերենի ժամանակակից փուլի համապատասխան համակարգի հետ և այդ կարգի բառերով կազմել հոմանիշների շարքեր կամ խմբեր: Սրանից, սակայն, ամենևին չի հետևում, թե զրաբարյան և միջին հայերենի որոշ բառեր, որոնք հնացած ու հազվադեպ գործածություն ունեն ժամանակակից հայերենում և հատկապես նրա զրաբարյան ու բանաստեղծական ոճերում, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվի շատ բառեր նույնպես պետք է ընդհանրապես ղանց առնել: Այդ կարգի բառերը, ինչպես հայտնի է, կազմում են ժամանակակից հայերենի բառային կազմի բաղկացուցիչ մասը և, ինչպես ընդունված է, բառարանագրական մշակման են ենթարկվում և հատուկ նշում-

ներով տեղ են գրավում ժամանակակից հայոց լեզվի բառարաններում:

Արդի հայերենի բառային կազմը, փաստորեն, զրական ու խոսակցական լեզուների և զրանց համապատասխան բառապաշարային բոլոր շերտերի ամբողջությունն է: Այդ նշանակում է, ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի մեջ զրական լեզվի գործածական բառերից բացի՝ մտնում են նաև հնացած և հազվադեպ գործածական որոշ բառեր, նորակազմ և նոր փոխառված, ինչպես նաև զեղարվեստական գրականության մեջ լայնորեն տարածված ժողովրդախոսակցական լեզվի և զավառական բառերը:

Հումանիշության ենչյունարանական, բառաբերականական, ձևվարանական և իմաստառային չափանիշները:

ա) Հենչյունարանական չափանիշ: Ըստ հենչյունարանական չափանիշի՝ հոմանիշները պետք է տարբերվեն իրենց հենչյունական կազմով, ժամանակակից հայերենի բառային կազմի, հետևաբար և հոմանիշության համար որևէ արժեք չեն ներկայացնում համաժողովրդական ընդհանուր լեզվի բառային կազմի մեջ մտնող բառերի բարբառային հենչյունական տարբերակները:

բ) Բառաբերականական չափանիշ: Հայերենում բառարանային արժեք չունեն ամենա և գույն ածանցներով կազմված որակական ածականի զերադրական աստիճանը ցույց տվող բառերը, ան- միտական ածանցով կազմվող բառերը, որոնք պարզապես առարկայի կամ հատկանշի բացակայություն, մի բանից զուրկ լինելն են նշանակում: Բայց նույն կարգի բառերը բառարանային արժեք են ստանում, երբ ձևեր են բերում առանձին, ինչնուրույն իմաստներ. ինչպես՝ ամենակառող, ամենազորմած, զերազույն, անտուն, անօթևան և այլն:

Արդի հայերենում հարակատար և ենթակայական դերբայների դերակշիռ մասը բայի բառաձևեր համարվելու պատճառով նույնպես բառարանային արժեք չունի, բացառությամբ այն բառերի, որոնք որոշակի, մասնավոր բառային տարբերակված իմաստ են ձևեր բերել և նշանակում են օբյեկտիվ իրականության առարկա, երևույթ, հատկանիշ, վիճակ և կորցրել են իրենց ղերբայական հատկանիշները (գրող, ծնող, սպառող, հորատող, սխաժ, նշանած, հատված):

գ) Անարանական հատկանիշ: Ըստ հոմանիշության ձևաբանական չափանիշի՝ հոմանիշության համար որպես անհրաժեշտ նախապայման առաջ է քաշվում միևնույն խոսքի մասին պատկանելու պահանջը: Հետևաբար, գոյականները, բայերը, ածականները, մակ-

բայները և մնացած խոսքի մասերը համապատասխանաբար առան-  
ձին-առանձին կազմում են հոմանշային ինքնուրույն շարքեր:

դ) Իմաստաբանական և ոճաբանական շափանիշներ: Բառային հոմանիշների կարևոր շափանիշները նրանց իմաստային և ոճա-  
կան գործառնություններն են: Նրանք են որոշում նույն կամ մտ-  
իմաստ ունեցող բառերի յուրահատուկ կապերն ու հարաբերու-  
թյունները, ինչպես նաև այդ կարգի բառերի տեղը լեզվի բառային համակարգում:

Հոմանշության հիմնական շափանիշը վերջին հաշվով բառ-  
իմաստն է, բառերի իմաստային մոտությունը կամ նույնությունը: Իմաստով իրար հետ կապված, այսինքն՝ մոտ կամ նույն իմաստ ունեցող բառերը կազմում են հոմանիշների փակ շարք, որը լեզվի տվյալ համաժամանակյա վիճակի համար տեսականորեն չի կարող ոչ ընդարձակվել, ոչ էլ կրճատվել, այսինքն՝ հարաբերականորեն այն կայուն է, բայց լեզվի զարգացման հետ և նրա հետևանքով այդ շարքը անխուսափելիորեն ենթակա է փոփոխման և փոփոխվում է, ինչպես լեզվում նոր բառեր երևան գալու և հին բառերի դուրս մնալու, այնպես էլ՝ լեզվի կազմում իմաստաբանական փոփոխությունների պատճառով առաջացող հետևանքների կապակցությամբ:

Հոմանիշների միջև հոմանշային հարաբերությունների համարվճորոշ դեր են կատարում իմաստային-նրբերանգային տարբերությունները: Նրբիմաստի կամ իմաստային նրբերանգի բնորոշ կողմն այն է, որ խոսքի մեջ այն իրացվում է բառի գործածության կամ կիրառության շնորհիվ: Այնինչ բառի ինքնուրույն իմաստներին բնորոշ են շարահյուսական և կառուցվածքային պայմանավորվածության ձևերը, նրանց տարբեր դրսևորումները:

Որպես հոմանշության շափանիշ առաջ է քաշվում նրանց իրարով փոխարինելու, կամ այսպես ասած՝ հոմանիշների փոխարարած փոխարինելիության հարցը: Վերոհիշյալ հարցը կարելի է ըմբռնել երկու իմաստով՝ փոխադարձ փոխարինելիությունը դիտել որպես հոմանշության բացարձակ շափանիշ կամ այն համարել օժանդակ, երկրորդական շափանիշ:

Հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը, նախ, գործնական և բացարձակ շափանիշ չի կարելի համարել, քանի որ նույնիսկ նույնանիշ բառերը ոչ բոլոր համատեքստերում է հնարավոր իրարով փոխարինել: Մյուս կողմից, եթե անգամ հոմանիշների շարքի մեջ մտնող առանձին բառեր իմաստներով ոչ մի տարբերություններ չունեն, նրանք կարող են տարբերվել ոճական կիրառությամբ կամ գործածականությամբ. ինչպես նոր տարի:

ամառ, նավասարդ, կաղանդ հոմանիշները իմաստով նույնն են, բայց միայն նոր տարին է գործածվում ժամանակակից հայերենի արևելահայ գրական տարբերակի շեղոք բառապաշարում որպես լեզվի ընդհանուր գործածական բառ, մինչդեռ՝ ամառ, կաղանդ, նավասարդ բառերի գործածությունը արդի հայերենում սահմանափակված է՝ իբրև գրքային-բանաստեղծական (ամառ), գրքային-հնացած (նավասարդ) և միայն արևմտահայերենում գործածվող (կաղանդ) բառերի: Այս դեպքում հնարավոր է նույնանիշների փոխարինում այն պայմանով, եթե անտեսվեն տվյալ բառերի ոճական-կիրառական տարբերությունները:

Հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը համարյա անհնար է դառնում նրանց մեջ նրբիմաստային տարբերությունների առկայության դեպքերում: Օրինակ՝ խնդրել, բախանձել, աղաչել, պաղատել, կամ՝ պաշ (ընդհանուր), ազի (ձարավոր, նաև՝ թավամազ), ձեռ (թավամազ) (բրբ. խսկց.), տառն, տուտ (քղանցքի) և զես (աստղի) և այլն:

Հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը, այսպիսով, անհնար է, փաստորեն, իմաստային նրբերանգներով կամ միաժամանակ ոճական կիրառությամբ և հուզարտահայտչական տարբերության գունավորմամբ իրարից տարբերվող հոմանիշ բառերի դեպքում:

Հոմանիշների որոշ, մասնակի փոխարինելիություն կարող է տեղի ունենալ հոմանիշների շարքի ներսում, շարքը կազմող առանձին գույգների կամ շարքի որևէ անդամի և հիմնաբառի միջև: Այդ դեպքում հոմանիշների միջև առկա է իմաստների ընդհանրությունը, ավելի ճիշտ՝ նույնությունը, իսկ այդ բառերի ոճական և հուզարտահայտչական գունավորման տարբերություններն անտեսվում են: Օրինակ՝ բամբակ—չարախոսել, ծովափ—ծովեզր, շրթունք—պոռ, այտ—թուշ, ախլոր—ախաղաղ, համեմատել—բաղդատել, Արուսյակ—Աստղիկ—Վեներա և այլն:

Հոմանիշների փոխադարձ փոխարինելիության հնարավորությունը կախված է գլխավորապես այն բանից, թե արդյո՞ք հոմանիշները պատկանում են գրական լեզվի միևնույն բառապաշարի շերտին կամ գործածվում են բացարձակապես համարժեք համատեքստերում, թե ոչ: Որքանով հոմանիշները մոտ են իմաստներով, այնքանով մեծանում է նրանց փոխադարձ փոխարինելիության հնարավորության աստիճանը և ընդհակառակը՝ հոմանիշները որքանով տարբերվում են իրարից իրենց բառաբերականական, բառային-առարկայական իմաստներով, նույնքանով էլ դժվարանում կամ անհնարին է դառնում նրանց իրարով փոխարինելը:

Փոխադարձ փոխարինելիությունը որպես հիմնական շափանիշ-կարելի է ընդունել նույնանիշների կամ բացարձակ հոմանիշների համար, այն էլ՝ ղլխավորապես տերմինային արժեք ունեցող բաների դեպքում:

ա) Հոմանիշները կարող են լիովին իրար փոխարինել միայն իմաստների բացարձակ նույնության (նույնանշություն) և ոճական նման կիրառությունների դեպքերում. Օրինակ՝ վրիպակ—տառա-սխալ—գրասխալ—գրավրիպակ. գաղափարախառություն—գաղա-փարաբանություն, հերոսաբար—հերոսորեն. մեծամտաբար—մեծամտորեն. հիմարաբար—հիմարորեն և այլն: Բառային կրկնակների դեպքում՝ անվող—փողագուրկ, անհող—հողագուրկ և այլն: Տեղմանային հոմանիշների դեպքում՝ ֆոսֆոր—լուսածին. պլատին—լուսնոսկի, Միք-կաթին—Հարդագուղի հանապարհ և այլն:

բ) Հոմանիշների մասնակի փոխարինում կարող է տեղի ունենալ նաև հոմանիշ բառերի իմաստային նույնության, բայց բառապաշարի տարբեր շերտերին պատկանելու, ոճական տարբեր կիրառության, ինչպես նաև նրանցում հուզաարտահայտչական տարբեր գունավորման առկայության դեպքում: Ըստ որում, այս դեպքում անտեսվում են բառապաշարի տարբեր շերտերին պատկանելու, ոճական-կիրառական և հուզաարտահայտչական տարբերությունները: Օրինակ՝ տգեղ—գեշ, շրթունք—պոռ, սպիտակ—նևր-մակ, գեղեցիկ—սիրուն—խորու, գցել—նետել և այլն:

Այսպիսով, իրականում փոխադարձ փոխարինելիության շափանիշը, որ կիրառվում է հոմանիշների իմաստային բովանդակու-թյան դուզագիպության, նրանց իմաստային նույնության դեպքերի համար, չի կարող համարվել հոմանիշների ընդհանուր և դործնական շափանիշ: Այն պետք է ընդունել իրրև օժանդակ, կրկ-րորդական շափանիշ:

### Հոմանիշների շարքը ժամանակակից հայերենում

Հոմանիշների շարքը բառերի և դարձվածքների այն խումբն է, որի մեջ մտնող բառերը կամ դարձվածքները իրար հետ կապված են հոմանշային հարաբերությամբ: Բառերի կամ դարձվածքների այն խումբը, որ միավորում է երկու կամ ավելի հոմանիշ բառեր կամ դարձվածքներ, կոչվում է հոմանիշների շարք: Հոմանիշների շարքը տերմինից բացի՝ բառերի այդ խումբն անվանում են նաև հոմանիշների փունջ կամ հոմանիշների բույն: Հոմանիշների շարքը իրենից ներկայացնում է բառերի և դարձվածքաբանական միավորների պատմականորեն կազմավորված համաժամանակյա խումբավորում, որը համակարգային բնույթ ունի: Հոմանիշների շար-

րի մեջ մտնող բառերն ու դարձվածքները արտահայտում են միև-նույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են կա՛մ իմաստային նրբերանգներով, կա՛մ ոճական կիրառությամբ, կա՛մ էլ՝ և՛ մեկով, և՛ մյուսով: Հոմանիշների շարքի գոյության հիմնական նախապայմանը իմաստաբանական շափանիշն է, լեզվի դարգացման տվյալ փուլում բառերի և դարձվածքների գործող հոմանիշային կապերը: Իմաստաբանական շափանիշը որպես հոմանիշների շարքի հիմնական նախապայման, ի վերջո պայմանավորված է լեզվի դարգացման տվյալ փուլում, տվյալ բառային իմաստի հանրորեն գիտակցվող և ընդունված իրական իմաստով, երբ հիշյալ բառիմաստին վերաբերող մնացած բոլոր շեղումները մերժվում են իրրև մասնավոր, ոչ համակարգային դրսևորումներ:

Միակողմանի կլինի հոմանիշների շարքերի գոյությունը պայմանավորել միայն բառերի ու դարձվածքների հոմանշային կապերով: Իրականում այդ կապերը գոյություն չունեն այլ կերպ, քան հոմանիշների շարքերի միջոցով, նրանց շնորհիվ: Լեզվում հոմանիշների շարքը այդ հարաբերությունների գոյության ապացույցն է: Լեզվի զարգացման տվյալ փուլում հոմանիշների շարքը հարաբերականորեն կայուն է և սերտորեն կապված է բառապաշարի տեղաշարժերի հետ: Բառապաշարի կազմում կամ բառիմաստի մեջ կատարվող բոլոր, անգամ ամենաշեշին փոփոխությունները իրենց արձագանքն են դտնում հոմանիշային կապերի մեջ և դրանցվում են հոմանիշային շարքերի միջոցով:

Ժամանակակից հայերենի բառային կազմում կատարվող փոփոխությունները հիմնականում արտահայտվում են նորաբանությունների, այսինքն՝ նորակազմ բառերի և նորագույն փոխառությունների, բառերի մեջ նոր իմաստներ երևան գալու և լեզվի մեջ մուտք գործելու, ինչպես նաև հնաբանությունների՝ հին բառերի ու իմաստների լեզվից դուրս մնալու կամ դուրս մղվելու միջոցով:

Բառիմաստի փոփոխման հետևանքով հոմանիշների շարքերի ընդլայնման կամ փոքրացման հետ հոմանիշների մեջ կատարվում են հետաքրքրական այլ իրողություններ և՛ հոմանիշային համաբանությունը (առնմանումը) և հոմանիշների ատրեմանումը: Հոմանիշների համաբանությունը (կամ առնմանումը) այն երևույթն է, երբ շարքի մի քանի նույնիմաստ բառեր աստիճանաբար իրենց են մոտեցնում շարքի մեջ մտնող իմաստային որոշ տարբերություն ունեցող բառերի (օր.՝ գազաբ—կատար): Հոմանիշային տարնմանման ժամանակ կատարվում է հակառակ գործընթացը. նույն իմաստ

տւնեցող բառերը շարքում ձեռք են բերում իմաստի նրբերանգային տարբերութուններ: Օր. պոչ, ազի, ձեռ և այլն:

Քանակական տեսակետից հոմանիշների շարքի նվազագույն սահմանը, բնականաբար, երկու հոմանիշներն են: Հետևաբար, հոմանիշների շարքերը կարող են լինել՝ երկանդամ և բազմանդամ:

ա) Երկանդամ հոմանիշների շարքերը հայերենում համեմատաբար սակավ են: Այդ կարգի շարքեր հայերենում կազմվում են հիմնականում նույնանիշներից: Այդ շարքերը կազմող հոմանիշները մեծ մասամբ տերմինաբանական բնույթ ունեն: Օր.՝ ալոգիզմ—հակաուրամաբանականություն (փիլիսոփայություն), ամպլիտոտը—լայնույթ (ֆիզիկա), ամպերմետր—ամպերաչափ (ֆիզիկա), ախտանիշ—ախտանշան (բժշկություն): Երկանդամ շարքեր են կազմում նաև գրական և բարբառային (զավառական) բառերի հոմանիշներից, ինչպես՝ արտաբնիկ—արամիշառ:

բ) Բազմանդամ հոմանիշների շարքերը կազմվում են երկուսից ավելի հոմանիշներից: Այդ կարգի շարքերը հայերենում դերակշիռ մաս են կազմում: Սովորաբար բազմանդամ հոմանիշների շարքեր են կազմում նրբիմաստով և ոճական կիրառություններով տարբերվող հոմանիշ բառերը: Ժամանակակից հայերենում բազմանդամ հոմանիշների շարքերում հոմանիշ բառերի և դարձվածքների թիվը երբեմն տասնյակից անցնում է: Օր.՝ մեռնել—մահանալ, վախճանվել, ղիաճալ, դիակաճալ, ննջել, մահգնել, աշխարհից հրաժարվել, աշխարհից գնալ, հոգին ավանդել, հոգին տալ, հոգին աստծուն տալ, կնքել մահկանացուն, կյանքի թելը կտրվել, կյանքը կտրել, կյանքը (մեկին) բաշխել, կյանքը խավարել, աստղը խավարել, արևը խավարել, արևը (մեկին) բաշխել, արևը մարել, արևը սեանալ, արևը կծկել, արևը տալ, արևը մահացնել, արևից ընկնել, աշխարհին մնաս բարով ասել, կյանքին մնաս բարով ասել, կյանքի հետ հաշիվները փակել, սև աշխարհ գնալ, աշխարհի հետ հաշիվը փակել, հրեշտակների հետ խոսել, մեկի շարք տանել, սրտի թելը կտրվել, աստծու մոտ գնալ, պապերի մոտ գնալ, հուրական տուն գնալ, անցավորաց բարև տանել, տիրոջ նույսին մնալ, ոսկորները հանգստացնել, պատարագ ապապրել, (անարգ., գոհ.)՝ շանսատակ լինել, ռոտերը պարզել, ռոտերը արնկել, զրոյի ծոցը գնալ, ալլահի գիրկը գնալ և այլն:

Հոմանիշների շարքեր կազմում են և՛ նույնանիշներով, և՛ հոմանիշներով:

Նույնանիշների շարքերը հայերենում կազմում են.՝

ա) Միայն գրական լեզվի բառերից. ինչպես, օրինակ՝ ակադեմիկոս—ակադեմիկոս, ակադեմիկոս—ակադեմիկոս, ակադեմիկոս—

ակադեմիկոս, ամրոտակ—պնդոտակ, այցաբարտ—այցատուն:

բ) Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների բառերից. սյիտակ—նեմակ, գեղեցիկ—աղվոր, այստեղ—հող, սառը—պաղ, պաղպաղակ—սառնանույշ: /

գ) Գրական և փոխառյալ բառերից. լսնակուն, ջրակուն—ալաբաստ, ականառուժ—ֆուգաս, բաժնետուն, բաժնեբալդ—ակցիա. ձայնաբանություն—ակուստիկա, մեղմիչ—հարվածամեղմիչ—ամրախիզատոր: /

դ) Գրական և զավառական բառերից. ականջարմատ—ականջառոտ. Արուսյակ, Աստղիկ, Այգասող, Լուսաբեր, Գիշերավար, Եղջերու և Քարվանկորուտ, Քարվանկորուկ, Քարվանի ասաղ:

ե) Միայն զավառական բառերից. ակիշ—ակիշքաթ—քաթակիշ—տաշտաբեր, տաշտաբերիշ (խմորի տաշտը քերելու երկաթե փոքր գործիք). ամուլ—եզնամուլ—լուծֆ—հարկինֆ (լուծք միասին բաշտող) և այլն:

Ի տարբերություն նույնանիշների շարքերի՝ հոմանիշների շարքերը ընդհանրապես հարուստ են հոմանիշ բառերի իմաստային, բառաբերականական, ոճական և հուզաբարտահայտչական, կիրառական առանձնահատկություններով, ինչպես նաև շարքերի բանականային կազմությամբ:

Հոմանիշների շարքերի իմաստաբանական կապերի էական առանձնահատկությունը հոմանիշների իմաստային որոշ տարբերություններն են: Հոմանիշների շարքերի մեջ բառերի նրբիմաստային տարբերությունները կարող են արտահայտվել և հանդես գալ բազմազան ձևերով:

1) Իմաստի նրբերանգային տարբերություններ, որոնք ցույց են տալիս գործողության ուժգնությունը կամ տարբեր աստիճանները. ինչպես՝ խնդրել—հայցել, աղեհսել, աղաչել, պաղատել, բախանձել, աղաչել—պաղատել, լալ—արտասվել, հեկեկալ, հեծկրլտալ, ողբալ, կոծել, կակաճել և այլն. ծիծաղել—խնդալ, ժրպտալ (թեթևակի), մոռոտալ, կարկաչել, կշկշալ, ֆրֆալ (բարձրաձայն), նխալ (ուրախությունից), փոթկալ, փոթկացնել, փխկալ (հանկարծակի), դնջրտալ (խսկց.), ատամները ցույց տալ և այլն. կամ՝ հարգել—համակրել, սիրել և այլն:

2) Որակի տարբեր աստիճաններ ցույց տվող հոմանիշներ. լավ—հիանալի, հրաշալի, սփանչելի, զմայլելի, անզուգական, չհաշխարհիկ և այլն:

3) Վերացական և թանձրացական (կոնկրետ), ընդհանուր և թանձրացական հարաբերություններ ցույց տվող հոմանիշներ.

ապրել—գոյատեւել, գոյութիւն ունենալ, նայել—հայել, դիտել, տեսնել, աշխերը շնել և այլն:

4) Որնէ հատկանիշի աստիճանով. ա) Մեծութամբ. մեծ—խոշոր, հսկա, վիթխարի, անուշիկ և այլն:

բ) Գույնով. կարմիր, կարմրագույն, նրագույն, բացագույն, ալ կարմիր, շառագույն, կարմրավուն, կարմրոտակ, կարմրեւանգ, կարմրամեռ (կարմրին մոտ):

5) Միեւնույն առարկայի, երևույթի տարբեր տեսակները, ձեւերը, արտահայտութիւնները. ինչպես՝ քամի—հողմ (ուժեղ), զեփշուտ, սյուփ, հովիկ (մեղմ), հյուսիս, պախըրցի (ցուրտ), բուփ (ցրտաշունչ, ձյունախառն), մրրիկ, փոքորիկ (ուժեղ, անձրևախառն), սամաւ (ուժեղ, անապատային), վիշապ, թաթառ (ուժեղ), հարավ, խոշակ (տաք), այծ—էաղ, փոշ, նոխազ (արուն). ձի—հովատակ (արուն) և այլն:

6) Համանիշներ, որոնք շնն համընկնում իրենց արտահայտած հասկացութիւնների ծավալով. արախտ—դերասան (թատերական), նկարիչ—գեղանկարիչ, կենդանագիր, ծովանկարիչ, բնանկարիչ, գլուխանկարիչ, դաշտանկարիչ և այլն:

7) Միեւնույն առարկայի տարբեր հատկանիշներն արտահայտող համանիշներ. աստված—արարիչ, ստեղծող, ստեղծիչ, տեր, հայր, ամենակալ, արքա երկնավոր, երկնային թագավոր, երկնային դատավոր, տիեզերքի թագավոր, թագավոր թագավորաց և այլն:

Այսպիսով, հոմանիշների շարքերի մեջ իրենց արտահայտութիւնն են գտնում բառերի ու զարձակածքային միավորների ոճական, հուզարտահայտչական տարբեր գունավորման, բառապաշարի տարբեր շերտերին, կիրառական տարբեր ոլորտներին պատկանելու, ինչպես նաև բառերի կապակցականութեան բաղմամբի ստանձնահատկութիւնները: Հոմանիշների շարքերի հարստութիւնը որոշուում է նաև առանձին համանիշ կամ նույնանիշ բառերի գործառութիւնը, շարահյուսական տարբեր կիրառութիւնները, բառերի կապակցական ունակութիւնները:

Հիմնարար կամ հենարար հոմանիշների շարքում: Հոմանիշների բաղմամբ կապերի համար շարքի մեջ կլակետային անդամը հիմնարար կամ հենարան է: Հայտնի լեզվի հոմանիշների շարքերը կազմում են ինչպես շարքի բոլոր անդամների, այնպես էլ յուրաքանչյուրի և հիմնարար հետ ունեցած հոմանշային հարաբերութիւնների հիման վրա: Սակայն այդ հարաբերութիւններն իրականում տարբեր և բաղմամբ են: Հիմնարար պետք է արտահայտի հիմնական, ընդհանուր իմաստը, ոճականապես պետք

է չեզոք լինի և գործածականութիւնը ավելի ակտիվ: Հոմանշային նույնատիպ, համարժեք հարաբերութիւններ ոչ միշտ է հնարավոր նկատել շարքի առանձին անդամների և յուրաքանչյուր անդամի ու հիմնարարի միջև: Շատ դեպքերում շարքի մեջ մտնող հոմանիշները նրբամաստային, ինչպես նաև ոճական կիրառութեան տեսակետից կարող են ավելի շատ տարբերվել, քան դրանցից յուրաքանչյուրը և հիմնարարը: Համեմատաբար հեշտ է հիմնարար կամ գերիշխող բառի ընտրութիւնը հոմանիշների շարքում: Ինչպես, օրինակ՝ պոչ—ազի (ձարավոր), ձեռ (թավամազ), գետ (աստղի) և այլն: Հոմանիշների այս շարքում իմաստի ընդհանրութիւնը, ոճական և կիրառական առանձնահատկութիւններով առանձնանում է պոչ բառը. այն պատկանում է լեզվի չեզոք բառապաշարին, զուրկ է լրացուցիչ հուզարտահայտչական գունավորումից, այդ շարքի մնացած անդամների համեմատութիւնը ամենագործածականն է լեզվում և, ամենազգիւսալորը, տվյալ հասկացութեան ընդհանուր գաղափարն է արտահայտում: Հետևաբար, այդ շարքի համար հիմնարար է ընտրված պոչ բառը:

Նույն ձևով նաև՝ նայել—դիտել, հայել, տեսնել, նկատել, նըմարել, (աշքերը) հառել, սենել (ակնապիշ), (հայացքը, ուղարկութիւնը) բեւեւել, մտիկ աւել, մտիկ տալ, ակն ածել շարքում նույնպես իմաստային, ոճական և այլ հատկանիշներով հիմնարար համար ամենահարմարը նայել բառն է:

Հոմանիշների շարքում երբեմն զժվար է կոզմոնորովել և ընտրել իր բոլոր հատկանիշներով ընդունելի լիարժեք հիմնարար, նամանավանդ, երբ այդ պաշտոնի համար կարող են հանդես գալ մեկից ավելի հոմանիշներ, որոնք իրենց տվյալներով տվյալ շարքում կարող են հավասարաթեք լինել: Օրինակ՝ երանալի—սխանչելի, գմայելի և այլն շարքում երանալի և սխանչելի հոմանիշներից զժվար է որեւէ մեկին նախապատուութիւն տալ:

Հիմնարար կամ գերիշխող բառը զժվար է որոշել հատկապես նույնանիշների շարքերում: Նույնանիշների շարքերը, կազմվելով գլխավորապես տերմիններից, ինչպես նաև գրական, այնպես էլ գովառական այնպիսի բառերից, որոնք շունեն իմաստների նրբերանգային տարբերութիւններ, երբեմն զուրկ են նաև ոճական-կիրառական զգալի տարբերութիւններից. ինչպես՝ ուղղաճառագազարբանաճառագազ, արգո-ծածկալեզու, աֆրիկատ-կիսաշրփական, կիսապայթական, պայթաշփական, բաժնեթուղք-բաժնետոմս—ակցիա և այլն:

Այս դեպքում շարք է հաշվի առնել կիրառական-գործառական աննշան տարբերութիւնները: Այնուամենայնիվ, կան նաև նույնա-





հոմանիշների շարքերը կամ զույգերը բաժանվում են՝ տարբարմատ, նույնածանց և հոմանիշ ածանցյալներով կազմվող հոմանշային շարքերի (կամ զույգերի):

Հայերեն հոմանիշների դասակարգումը.

Հոմանիշների դասակարգումը կատարվում է ըստ իմաստաբանական և ոճական չափանիշների:

Ըստ իմաստաբանական չափանիշների կամ իմաստային հատկանիշների հայոց լեզվի հոմանիշները ստորաբաժանվում են երկու խմբի՝ նույնանիշների և համանիշների:

ա) նույնանիշները նույն իմաստն ունեցող բառերն են և կոչվում են բացարձակ հոմանիշներ: Օրինակ՝ համեմատել—բաղդատել, ափաղաղ—ափլուր, արև—արեգակ—արփի, գետափ—գետեզր, գնալ—երթալ, բնականաբար—բնականապես—բնականորեն, մխլա—գամ, այլ—թուշ, շրթունք—պոռչ և այլն:

բ) Համանիշները մոտ իմաստ ունեցող բառեր են և կոչվում են նաև հարաբերական հոմանիշներ: Օրինակ՝ բարկանալ—նեղանալ, սրդողել, սրմտել, սրունդել, ներստոել, շարձալ, շղայնանալ, զայրանալ, կատաղել, մոլեգնել, դիվոտել և այլն:

Ոճական հոմանիշներ: Հոմանիշների ոճական դասակարգման հիմքում ընկած է նրանց՝ լեզվի տարբեր ոճերին, կիրառության տարբեր ոլորտներին, բառապաշարի տարբեր շերտերին պատկանելը, ինչպես նաև բառակազմական առանձնահատկություններն ու այլ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությունները:

ա) Հոմանիշներ, որոնք օժտված են հուզաբարտահայտչական տարբեր գունավորումներով: Օրինակ՝ մեռնել (չեղոք)—վախճանվել, հոգին ավանդել, աստու մոտ (գողջ) գնալ, հրեշտակների մոտ գնալ, հրեշտակների հետ խոսել (զրակահ գունավորում), սատկել, շանատակ լինել, գրողի ծոցը գնալ, ալլանի ծոցը գնալ (անարդական, բացասական գունավորում), ռոները պարգել, ռոները երկարել, ռոները անկել (զուհեկաբանական, բացասական գունավորում), կամ՝ հարթել և լակել (անդգ., բացասական):

բ) Մեղմասական և ծածկաբանական հոմանիշներ: Խմել և կոնծել, օգի—առլուծի կար, սղանել—և ևս անել և այլն:

գ) Բառերի տարբեր կապակցելիությամբ օժտված հոմանիշներ, Օրինակ՝ ստեղծել (ընդհանուր)—կերտել (չենք, կոթող), հորինել (կեղծ, սուտ), կամ՝ պարզ (ընդհանուր)—վնիտ, ականակիտ (ջուր, աղբյուր), մազ (ընդհանուր)—վարս, հեռ (կնոջ):

դ) Լեզվի տարբեր շերտերին, պատմական տարբեր շրջաններին, գործածության տարբեր ոլորտներին պատկանող, տարբեր ծագում ունեցող հոմանիշներ:

1) Հայ գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների հոմանիշներ: Օր.՝ գեղեցիկ—աղվուր, ավսե—պնակ, վատ—գեշ, սառը—պաղ, նեղասացույց—նեղատեսիլ, բույե—վայրկյան, պատվիրել—ապսպրել, քամի—հով, կծել—խածնել, վերցնել—առնել, ուղղել—շակել, թանկ—սուղ և այլն:

2) Գրական լեզվի և բարբառային-գավառական ու ժողովրդախոսակցական շերտերի հոմանիշներ: Օրինակ՝ ածուխ—գործելի (բրբ.), կողք—կուշտ, խեշ (բրբ.), վաղը—էգուց (ժող. խսկց.), փաթիլ—գուլջ (բրբ.), քուլա. պարանոց—վիգ, նիտ (բրբ.), շրթունք—պոռչ (ժող. խսկց.):

3) Գրական լեզվի շեղոք շերտի և հին, հնացած, հազվագործ գործածական հոմանիշներ: Օրինակ՝ ականջ—ունկն (հնացած), աշխ—ակն (հնացած), ձի և ասպ, քիթ—ունջ, ազգը—բարձ (հնացած):

4) Գրական լեզվի, գիտություն և տեխնիկայի տարբեր ոլորտներում գործածվող հոմանիշներ: Օրինակ՝ մեխանիկական—մեխանիկական, հանցագիտակ. անմեխանիկական—անհանցագիտակ—անմեխանիկական (իրավաբանական), մալի—սուսի—չամ (բուսաբանական), ապարքոց—մակակերտ. կիսաշփական—կիսապայթական—պայթաշփական (լեզվաբանական):

5) Լեզվի սեփական և փոխառյալ բառերով կազմվող հոմանիշներ: Օրինակ՝ բոֆախտ—տուբերկուլյոզ. վերացարկում—աբսուրակցիա. մաֆրակրոն—պուրիտան. մակարդանյուք—ֆերմենտ. Արուսյակ—Աստղիկ—Վեներա և այլն:

ե) Բառային և դարձվածաբանական հոմանիշներ:

1) Բառային արժեք ունեցող դարձվածաբանական միավորներով և համանշանակ բառերով կազմվող հոմանիշներ: Օրինակ՝ գլխի գցել—հատկացնել. գլխի ընկնել—հատկանալ. զույս գալ—նաշողվել. գլխից հանել—մոլորեցնել. գլուխ տանել—ձանձրացնել. աշխից գցել—ատել. երեսի ջուր—ամոք, պատկառանք և այլն:

2) Բառային ընդհանուր արժեք ունեցող հարադրություններով և համանշանակ բառերով կազմվող հոմանիշներ. ինչպես, օրինակ՝ լուռ մնալ, լուռ կենալ—լուռ. լաց լինել—լալ. աղաչանք անել, պաղատանք անել—աղաչել, պաղատել. պար գալ—պարել. պար ածել—պարեցնել. շուտ գալ—շրջվել. պատառ—պատառ անել—պատառատել. առաջ գալ—առաջանալ. առաջ բերել—առաջացնել և այլն:

3) Միայն դարձվածաբանական միավորներով կազմվող հոմանիշներ. օրինակ՝ ուղտի ականջում բնած—դու կա՞ս միայն նրուսաղեմ:

**Հայերենի հումանիշների աղբյուրները:**

Հայերենի հումանիշների ճոխությունը պայմանավորված է նրա աղբյուրների հարստությամբ, հումանիշների առաջացման ուղիների բազմազանությամբ: Լինելով աշխարհի հումանիշներով հարուստ լեզուներից մեկը, հայերենը իր գոյության երկար դարերի ընթացքում սեփական բառակազմական միջոցներով և փոխառությունների շնորհիվ ոչ միայն անընդհատ ընդարձակել է իր բառային կազմը, այլև արտաքին և հատկապես ներքին միջոցներով ու աղբյուրներով հարստացրել բառերի իմաստային ողջ համակարգը:

Հայերենում հումանիշների առաջացման հիմնական գործոններն են՝ բառապաշարի տարբեր շերտերի առկայությունը, բառային կազմում կատարվող համալրումները, բառերի ոճական զանազան կիրառությունները, բառերի իմաստափոխությունը և այլն:

ա) Բառիմաստի փոփոխմամբ առաջացող հումանիշներ: Բառիմաստի փոփոխության պատճառները, ինչպես և տեսակները հայերենում բազմազան են: Դրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ կատարվում են գլխավորապես երկար ժամանակահատվածի ընթացքում, որակական փոփոխությունների աստիճանական կուտակման ձևով: Համարյա աննկատելի կատարվող բառերի իմաստային փոփոխությունները որոշ ժամանակից հետո վեր են ածվում որակական որոշակի տարբերության: Դրանք հիմնականում կատարվում են բառիմաստի նեղացման, իմաստի ընդլայնման, շրջման, մեկ ուղղությամբ դարգանալու, համարանության, ըստ գործառնության նոր իմաստ կամ իմաստներ ձեռք բերելու և այլ պատճառներով: Բառիմաստի փոփոխություններին կարող են նպաստել նաև արտաքին հանգամանքները՝ երկրի, ժողովրդի կյանքում քաղաքական-տնտեսական շրջադարձային տեղաշարժերը կամ էլ լեզուների տարբեր ազդեցությունները: Բառերի նոր իմաստներ ձեռք բերելու բազմապիսի և բարդ գործընթացների մեջ հատկանշական է բառիմաստի աստիճանական ճյուղավորումը, տարբերացումը և մասնավորումը, որոնք հատկապես էական նշանակություն ունեն հումանիշների շարքերի կազմության համար:

Հումանիշների մեջ գոյություն ունեցող նրբիմաստային բոլոր տարբերությունները, փաստորեն, առաջացել են կամ առաջանում են բառի իմաստային փոփոխությունների հետևանքով: Ստորև բերվում են բառիմաստի զանազան տեղաշարժերի շնորհիվ առաջացած հումանիշներ, երբ բառի ունեցած նշանակության հետ

երևան են եկել նոր իմաստներ, ինչպես նաև նոր իմաստի առաջացման հետ միագնել են հին իմաստները. թուղթ—նամակ, նախապես թուղթ (նյութ) նշանակության հետ հետագայում ձեռք է բերել թղթի վրա գրվածի բովանդակությունը, իմաստը: Սուրբ բառը «աստվածային», «գերբնական» իմաստի հետ ձեռք է բերել «մաքուր, ազնիվ, առափինի» իմաստները և այդ բառերի հետ էլ կազմում է հումանիշների շարք: Զախ, ձախակողմյան բառերի ձախ կողմում գտնվող իմաստին ավելանում է նաև առաջադիմական՝ հասարակական-քաղաքական շարժման, խմբավորման պատկանելու նոր իմաստ, այսինքն՝ արմատական փոփոխությունների կողմնակից կամ այդ կուսակցությանը պատկանող: Նույնի համաբանությամբ՝ աջ, աջակողմյան բառերը ստացել են հետադիմական իմաստը և կազմել համապատասխան շարք:

բ) Ոճական տարբեր կիրառությունների շնորհիվ առաջացող հումանիշներ: Լեզվի տվյալ փուլի բառապաշարի ներքին փոփոխությունների հետևանքով հումանիշներ են առաջանում նաև լեզվի համակարգում կատարվող ոճաբանական գործընթացների շնորհիվ: Հումանիշների առաջացման պատճառ կարող են լինել բառերի տարբեր հուզաբարտահայտչական գունավորումները և ոճական-կիրառական տարբեր գործառնությունները:

1) Ուժեղ կամ թույլ հուզական (էմոցիոնալ) գունավորմամբ բառերով կազմվող հումանիշներ. վախեճալ—զողալ, երես—մուտք, դաժան—անգուր, անխիղճ, անսիրտ, բիրտ, ժանտ, դժնի, դժեյտ, դժեղակ, անողորմ, անողոք, անագուրայն, վայրագ. մեռնել—վախճանվել, հագին ավանդել, հեշտակների հետ խոսել և շանտառակ լինել:

2) Մեղմասությունների կամ գոհակարանությունների շնորհիվ առաջացող հումանիշներ. սատանա—սև վարդապետ, մեզնից լավերը, մեզմեն աղեկները (արևմտահայերեն), լալ—ոռնալ (գահլ), արտախոց—գուգուրան, ցեմիշ (մեղմասացություն):

3) Նույն կամ մոտ իմաստով, բայց լեզվի տարբեր ոճերին կամ խոսքի տարբեր ժանրերին պատկանող, ցածր և բարձր, բանաստեղծական, գրքային և խոսակցական բառեր. այս—սույն, այտ—թուշ, գեղեցիկ—սիրուն, շտապել—վազել—արտոգալ—անապաբել, աբա—բազավոր, բագունի—դշխո—դշխունի, վախ—երկյուղ և այլն:

գ) Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների շնորհիվ առաջացող հումանիշներ: Արդի հայերենի հումանիշների հաջորդ աղբյուրը հայ գրական լեզվի երկու ճյուղավորումների՝ արևելահայ և արևմտահայ տարբերակների բառերով ու դարձվա-

ծաբանական միավորներով կազմվող հոմանիշներն են: Արևելա-հայ գրական լեզվի բառերի հետ հոմանշային շարքեր են կազմում ինչպես արևմտահայերենի նորակազմությունները, այնպես էլ հայերեն այն ընդհանուր բառերը, որոնք առավելապես կամ ավելի շատ գործածվում են գրական լեզվի արևմտահայ տարբերակում: Արևելահայ գրական լեզվի բառային կազմի մեջ մտնող բառերի հետ հոմանշային կապերի մեջ մտնող արևմտահայ բառերը կարելի է մի քանի խմբերի բաժանել:

1) Ընդհանուր հայերեն այնպիսի բառեր կամ բառերի այնպիսի իմաստներ, որոնք ավելի շատ գործածվում են արևմտահայերենում: Օրինակ՝ աղա—կեղա. աղտոտ—կեղտոտ. ավրել—փչացնել, ապականել. ագի—պոչ, պաղ—սառը. պաղանձավ—ֆաբանձավ. բանել—աշխատել. ֆակել—բանալ. ասպանություն—անվտանգություն. գոց—փակ. գոցել—փակել. ձգել—զցել. կոնակ—քիկունք, առիճենել, գզխել—հրապուրել, գերել, դուրսել. ներմակ—սպիտակ. անպարար—ձեռնածու. հանձնախուժ—հանձնաժողով և այլն:

2) Հայերեն բառեր, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում և արևելահայերեն համազորների կամ հոմանշանակների հետ հոմանիշների շարքեր են կազմում. ինչպես, օրինակ՝ ատիկա—այդ, ասիկա—այս, հոս—այստեղ, հոդ—այդտեղ, հոն—այնտեղ, քով—մոտ, աղվոր—գեղեցիկ, ազել—լավ, այլանել—հանդիմանել, խպնել—ամաչել, դաշնակ—դաշնամուր, էրիկ, էրիկ մարդ—ամուսին, ատեն—ժամանակ, լմննալ—ավարտվել, խոսնակ—նաղորդավար, պագ—համբույր, փաստել—ապացուցել, գործանեղան—հաստոց, դանլին—կառավարություն, կառավարական կազմ և այլն:

3) Միևնույն հասկացության համար արևելահայերենում և արևմտահայերենում նորակազմ հայերեն երկու տարբեր բառերի առկայության շնորհիվ առաջացող հոմանիշներ, ինչպես՝ աստղանավորդ—տիեզերագնաց, հեռանայն—հեռախոս, հեռատեսիլ—հեռուստացույց, գործադրություն—վիրահատություն, բանզուլ—գործազուլ, գործավոր—բանվոր, գործատուն—գործարան և այլն:

4) Արևելահայերենում փոխառյալ օտարազգի բառերի փոխարեն արևմտահայերենում ստեղծված նորակազմ բառերի կամ հին հայերեն բառերի գործածությամբ կազմվող հոմանիշներ, ինչպես՝ արտուրակցիոնիզմ—վերացապաշտություն. արտուրակցիոնիստ—վերացապաշտ. դեմագոգիա—ամբոխավարություն. դեմագոգ—ամբոխավար. միևիստ—նախարար, միևիստություն—նախարարություն, ժյուրի—մրցատյան. առամ—հյուպե. կինո—շարժանկար.

ավտոմեքենա—ինքնաշարժ, կոմունիստ—համայնավար, կոմունիզմ—համայնավարություն. սոցիալիստ—ընկերավար. սոցիալիզմ—ընկերավարություն. կապիտալիզմ—դրամատիզություն. իմպերիալիզմ—կայսերապաշտություն. ռեալիզմ—իրապաշտություն. ռեալիստ—իրապաշտ և այլն:

դ) Նորաբանությունների և նորագույն փոխառությունների շնորհիվ առաջացող հոմանիշներ:

Հոմանիշների առաջացման հաջորդ աղբյուրը արդի հայերենի բառային կազմի մեջ կատարվող լրացումներն են, որոնք իրացվում են նորաբանությունների՝ նորակազմությունների և նորագույն փոխառությունների միջոցով:

1) Արդի հայերենում նորակազմությունները առաջին հերթին երևան են դալիս նոր հասկացությունների համար համապատասխան բառեր ստեղծելու պահանջով: Մյուս կողմից, մեր լեզվի բառակազմական հնարավորությունները պայմաններ են ստեղծում մեկից ավելի բառեր կազմելու նույն հասկացության համար: Այսպիսով, միևնույն հասկացության համար հայերենում կազմված բառերի միջև հաստատվում են հոմանշային բազմապիսի կապեր, որոնց բնույթը կախված է հոմանիշների տեսակից, լեզվի իմաստաբանական համակարգում հոմանիշ բառերի հարաբերությունից և այլն:

Նորակազմ բառերի ստվար մասը, որ մեծ մասամբ առարկաների և երևույթների անվանումներ են, նախապես իրար նկատմամբ մտնում են հոմանշային հարաբերության մեջ: Ինչպես, օրինակ՝ գաղափարաբան—գաղափարախոս, գաղափարաբանություն—գաղափարախոսություն, լրագրող—լրագրող (ժուռնալիստ). հանդիսադանլին—հանդիսասրահ, դահուկանոց—դահուկափայտ, դահուկորդ—դահուկավագորդ, դամբանաբուր—գերեզմանաբուր—շիրմաբուր—դամբանաբուր—գերեզմանաբուր—շիրմաբուր. արձանագրագետ—վիմագրագետ, արմատավորել—կիրարկել—ներդնել—ընդերել:

Նորակազմ բառերը լայն չափերով ընդգրկվում են նաև հոմանշային ավելի բարդ հարաբերությունների մեջ, իրենց խոսքի մասային բոլոր կարգերով, բառաբերականական և ոճական առանձնահատկություններով:

Հոմանիշների բազմաթիվ շարքերի օրինակներ կարելի է բերել, որոնցում հոմանիշների մեծ մասը նորակազմություններ են: Ինչպես՝ ուրախ—զվարթ, զվարթաբեմ շարքում՝ պայծառաղեմ, ուրախաղեմ, ժպտաղեմ, ժպտատես, ժպտահայաց բառերը բացակայում են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառա»

բանում: Նույն բառաբանում չեն գրանցվել նաև վերջին երեք բա-  
սերը՝ բուխ—մերիկ—ձյունաբուխ—ձյունամերիկ—ձյունաեռզմ շար-  
քից:

2) Հայոց լեզվի հոմանիշների առաջացման աղբյուրներից են  
նաև նորագույն փոխառությունները: Լեզվի կյանքը ցույց է տա-  
լիս, որ շատ դեպքերում փոխառության հետ միաժամանակ կամ  
որոշ ժամանակ անց՝ կազմվում է հայերեն համազորը, իսկ որոշ  
դեպքերում նաև փոխառյալ մեկ բառի դիմաց ստեղծվում են հայե-  
րեն մեկից ավելի համանշանակներ, որոնք և հոմանիշային կապեր  
են հաստատում փոխառյալ բառի հետ, կազմելով հոմանիշների  
ինքնուրույն շարքեր: Իմաստային այդ կապերը սովորաբար երկա-  
թատե չեն, և փոխառյալ ու սեփական բառերի միջև սկսվող մեր-  
ցակցության հետևանքով գրանցից որևէ մեկը (կամ սեփականը,  
կամ փոխառյալը) դուրս է մղվում լեզվից կամ էլ՝ իմաստապես  
մասնավորվելով, վերափոխում է իր կապերը, մտնելով հոմանիշ-  
ների նոր շարքի մեջ: Այնուհանդերձ, լեզվի տվյալ համեմատա-  
բար կարճ ժամանակահատվածի համար նորագույն փոխառյալ և  
լեզվի սեփական բառերի միջև հոմանշային կապերն իրական են, և  
չի կարելի դրանց առկայության փաստը որևէ շահով կասկածի  
տակ առնել: Հատկանշական է, սակայն, որ նորագույն փոխառ-  
յալ բառերով կազմված շարքերը սակավադրամ են լինում: Օրի-  
նակ՝ արտաբաղաձայն—վերացարկում, օչեկ—ակնաբեկ, ֆուսթո-  
լուսածին, սլլատին—լուսնուկի, կոսմոպոլիտ—աշխարհաբարձ-  
բացի—համաշխարհաբարձացի, ինտելիգենտ—մտավորական և  
այլն:

6) Բարբառային (զավառական) բառերի շնորհիվ առաջացող  
հոմանիշներ: Հայերեն հոմանիշների հաջորդ աղբյուրը բարբառ-  
ներն են, ավելի ճիշտ՝ բարբառներից եկող կամ բարբառային ծա-  
գում ունեցող զավառական բառերն ու դարձվածքային միավորնե-  
րը: Գավառական բառերի զգալի մասը, ինչպես հայտնի է, թեև չի  
արձանագրվել հին հայկական գրավոր հուշարձաններում, սա-  
կայն իր ծագումով և կազմությամբ համարժեք է գրաբարից ժա-  
ռանգված բառերին: Դրանք մեծ մասամբ հին կյանքը, կենցաղը,  
առտնին հարաբերությունները ցույց տվող, գյուղատնտեսության  
հին գործիքներին, զանազան զբաղմունքներին, հին պաշտամուն-  
քին, հավատալիքներին, ծեսերին, սովորույթներին, ինչպես նաև  
բուսական և կենդանական աշխարհին վերաբերող բառեր են:  
Դրանց մեծ մասի համարժեքները չկան արդի հայերենում և, բնա-  
կանաբար, այդ կարգի բառերը մուտք են գործում ինչպես գրակա-  
նության, այնպես էլ խոսակցական լեզվի մեջ: Օրինակ՝ ալբա—

լիպո (թթվի վրա բռնած փառը), աղիչ—թանիչ—խալիչ (կա-  
րագը հալելուց հետո տակը մնացած թանի մնացորդը), խովակ—  
գիլիպ—ծոծոակ—ունալ (այգու կամ պարտեզի պատի տակից  
թողված ջրհոսի անցք), աչխալույս—աչխալուսանք—ակաճըրունկ  
(նվեր, որ տրվում է ուրախ լուր բերողին), առատամ—ծնոտ—  
կուտակ—խոփակալ (գութանի կամ արորի մաս), ամանկուտրիկ—  
ամանկուտունկ—կուտրունկ—կուտունկ—ձափկուտունկ—պը-  
տուկկուտունկ—հարսունկ (բույս) և այլն: Այս կարգի զավառական  
բառերը կազմում են հոմանիշների ինքնուրույն շարքեր:

Գավառական բառերի մյուս մասը իր իմաստային համադրն  
ունի արդի հայերենում, բայց այդ վերջին հանգամանքը չի խան-  
գարում, որպեսզի այդ կարգի բառերը հոմանշային կապերի մեջ  
մտնեն գրական լեզվի բառերի հետ. ինչպես՝ հեռու—անցյալ տա-  
րի, կոնաոֆ—կտաման—ֆուլ—խաժի (թռչունի ստամոքս), աֆ-  
լուր—աֆաղաղ և ուճակ, նետ, կամ՝ արտույտ—արեղուկ—արեղա-  
ձագ—հոտաղիաբան—հովիվխաբուկ—հովիվխաբան, կամ՝ գըլ-  
գըլալ—խոխոջել. գլխավերև—սնար և այլն:

Գավառական բառերի զգալի մասը զեղարվեստական գրակա-  
նության միջոցով և այլ ճանապարհներով այն շահերով է թա-  
փանցել գրական լեզվի բառապաշարը և այնպես է մերվել նրա  
հետ, որ սովորական աչքով այդ կարգի բառերը դժվար է աշխ-  
տաբերել, օրինակ՝ աչխալ—աչխան, անկուշտ. աչխալ—հեռա-  
բամիտ, հարսիկ. աչխալույս—ավետչյա, ավետիֆ. աֆլուրականչ—  
հավախոս. գետնել—տապալել. ծալպակաս—ալուշ, հիմար. բըթ-  
վաղեմ—խոժոռաղեմ. բարև—ողջուն և այլն: Անհրաժեշտ ենք  
համարում հիշեցնել, որ շարքի առաջին բառերը բարբառային  
ծագում ունեն:

Գավառական, բարբառային ծագում ունեցող բառերի հետ  
հավասարապես արդի հայերենի հոմանիշների աղբյուր է հան-  
դիսանում հայերեն դարձվածքային միավորների գերակշիռ մասը,  
որը բարբառային-ժողովրդական ծագում ունի. ինչպես՝ ականջ  
անել, ականջ դնել—լսել, անալ. ականջը տանել—ձանձրացնել.  
անուշ անել—հաշակել, ուտել, կամ՝ աչխալ անել, աչխալ, աչխ  
դնել, աչխ քնկնել, աչխ կուշտ, աչխ դուրս, աչխ կախ և այլն:  
Այժմ անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե արդյոք  
հայերենում բոլոր բառերն ու դարձվածքներն ունեն հոմանիշներ և  
պարզել, թե որ կարգի բառերը չեն մտնում հոմանշային կապերի  
մեջ, շուրջն հոմանիշներ:

Հոմանիշային կապերի մեջ է գտնվում հայոց լեզվի բառային  
կազմի զգալի մասը. Հայերենում հոմանիշներ չունեն անձնանուն-

ներն ու տեղանունները, թեև երբեմն հանդիպում են նաև դրանց կրկնակները, փաղաքշական կամ կրճատ ձևերը. ինչպես՝ Մառխա—Աբուրաու կամ Հայրապետ—Հայրո, Կարապետ—Կարո, Ասովաձա—տուր—Մատուր, Տատուր և այլն:

Հայերենի բառային կազմի մեջ մտնող բառակարգերից հոմանիշներով առանձնապես աղքատ են տերմինները, որ պայմանավորված է վերջիններիս բառաքերականական առանձնահատկություններով: Հոմանիշներով համեմատաբար աղքատ են նաև տերմինաբանական հասկացություններին մոտեցող առարկաների և երևույթների այնպիսի անուններ, որոնք հանդես են գալիս մեծ մասամբ իրենց բուն, անվանական իմաստներով: Խոսքիմասային կարգերից հայերենում թերևս կարելի է հիշատակել միայն թվականները, որոնք շատ շնչին բացառությամբ են հոմանշային կապերի մեջ մտնում: Այդ հանգամանքը որոշ չափով պայմանավորված է նաև լեզվի բառապաշարի ընդհանուր համակարգում նրանց գրաված տեղի և գործածության հետ:

Հոմանիշների դերը չափազանց մեծ է լեզվի բառապաշարի և գործնականության հարստության ճիշտ և նպատակային օգտագործման, օրինակելի բառային և դարձվածքային շրջանառության, ակտիվ բառապաշարի ծավալի ընդլայնման, բառերի գործածության նրբերանգների յուրացման, խոսքի ճոխ դրսևորման, լեզվի ոճական միջոցների հարստացման և խոսքի մշակույթի զարգացման գործընթացում:

Հոմանիշները հնարավորություն են տալիս արտահայտելու բառերով արտացոլված օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների զանազան նրբերանգները, նրանք ավելի կատարելագործում և զարգացնում են գրական լեզուն, ճշտություն և ստուգություն տալիս բառին և բառագործածությանը, լեզվում մտցնում են ոճական և հուզաարտահայտչական բազմազանություն և պեսպիսություն, օգնում՝ խուսափելու խոսքի միօրինակությունից, նույն բառի կրկնությունից և այլն: Այսպիսով, նրանք բազմազան և պատկերավոր, արտահայտիչ և գեղեցիկ են դարձնում խոսքը:

Հոմանիշների, որպես գեղարվեստական խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցի, նշված առանձնահատկություններն առանձնապես վառ դրսևորում են ստանում գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ:

Լեզվում գործնական-կիրառական կարևոր դերի հետ մեկտեղ, հոմանիշների ուսումնասիրությունը պակաս հետաքրքրություն չի ներկայացնում նաև լեզվի բառապաշարի և դարձվածքանության, իմաստարանության, ոճաբանության և ընդհանուր լեզվաբանու-

թյան մի շարք առանցքային հարցերի քննման և լուսարանման, լեզվական որոշ օրինակաբանությունների բացահայտման և պարզաբանման ուղղությամբ<sup>23</sup>:

**ՀԱԿԱՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հականշությունը<sup>24</sup> բառային միավորների իմաստների հակադրությունը կամ բեռացումն է: Հակահիշները այն բառերն են, որոնք զուգորդական հարաբերությունների դեպքում ունեն հակառակ իմաստներ: Լեզվում հականիշները գործածվում են այնպիսի հակադիր առարկաներ, երևույթներ, հատկանիշներ և այլն նշանակելու համար, որոնք իմաստով (իմաստաբանորեն) կարող են իրար հարաբերակցվել. ինչպես, օրինակ՝ սպիտակ—սև, ուրախ—տխուր, հարուստ—աղքատ, առողջ—եիվանդ, ճիշտ—սխալ, ճիշտ—մոռալ, հարց—պատասխան, ծնվել—մեռնել և այլն:

Բերված զույգերը հակադրվում են իմաստային մակարդակում, բայց այնուամենայնիվ, հարաբերակցվում են իրար հետ, միաժամանակ ունեն նաև որոշակի ընդհանրություններ այն առումով, որ յուրաքանչյուր զույգ հակադրվում է խոսքիմասային միևնույն երևույթը, հատկանիշը և այլն հակադիր հասկացությամբ արտահայտելու ընդհանրությամբ: Այդ տեսակետից բառերը հականիշներ չեն դառնա, եթե իրար հակադրվեն տարբեր խոսքի մասեր, անհարիր երևույթներ, առարկաներ կամ հատկանիշներ. ինչպես, օրինակ՝ սպիտակ և սեղան, երկինք և վազել, տալ և տխուր և այլն: Հականշության առանձնահատկությունն այն է, որ հակառակ, հակադիր իմաստներով պետք է օժտված լինեն միևնույն բառաքերականական կարգին, դասին պատկանող առարկաներ, երևույթներ, որակ-հատկանիշներ արտահայտող բառերը:

Հականշության համար առաջին հերթին հիմք կարող է ծառայել բառի բառային իմաստի մեջ որակական հատկանշի առկայությունը: Այդ հատկանիշը կարող է աճել կամ նվազել և հասնել հակադրության: Պատահական չէ, որ հականշային հարաբերությունների ավելի հարուստ կապեր են դրսևորում հատկապես այն ածականները, որոնք արտահայտում են որակական հատկանիշներ:

<sup>23</sup> Ա. Սալիսյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971:

Հակահիշ հարերեն տերմինը կազմված է АНТОНИМ բառի նմանողությամբ, իրեն նրա իմաստային պատճենում (հունար. anti—հակառակ+onyma, onoma անուն):

<sup>24</sup> Բ. Շալունց, Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979:

Օրինակ՝ տաֆ—սառք, քաց—չոր, ֆաղցր—դառը, համեղ—աճեամ  
(տարբեր զգայություններ արտահայտող հասկացություններ),  
հաստ—բարակ, մեծ—փոքր, բարձր—ցածր, կարն—երկար, լայն—  
նեղ, խոր—ծանծաղ, մոտ—հեռու, ներքև—վերև (ծավալի, շափի,  
տարածություն, տեղի հասկացություն), հիւն—նոր, անցյալ—արդի,  
ժամանակակից, երկարատև—կարճատև (ժամանակային տարբեր  
հարաբերություն), սպիտակ, ներմակ—սև, բաց—մուգ (գունային  
տարբեր հարաբերություններ), սիրելի—ատելի, բարի—չար, ֆաջ—  
վախկառ, բույլ—ուժեղ, գեղեցիկ—տգեղ, խելոք—հիմար, արխ-  
մար, միամիտ—խորամանկ, լավ—վատ, վեհ—ստոր, վսեմ—նը-  
վաստ, նիվանդ—առողջ (ֆիզիկական և հոգեկան տարբեր հարա-  
բերություններ) և այլն:

Հակադրական նման իմաստներ կարող են ունենալ նաև գոյա-  
կան անուններն ու բայերը, որոնք վերաբերում են բնության և  
հասարակական կյանքի գանաղան առարկաներին, երևույթներին և  
արտահայտում են տարբեր վիճակներ, ժամանակային, տարածա-  
կան, զգացմունքային և այլ տարբեր՝ հակադիր հարաբերություն-  
ներ. երիտասարդ—ծեր, երիտասարդություն—ծերություն, մա-  
նուկ—ծեր, մանկություն—ծերություն, տղամարդ—կին, աղբիկ—  
տղա, արու—էգ, մափի (էգ ոչխար)—խոյ (տարիքային, սևույթին  
հարաբերություն), լույս—խավար, սկիզբ—վերջ, առավոտ—երե-  
կո, ցերեկ—գիշեր, ամառ—ձմեռ, արևելք—արևմուտք, հյուսիս—  
հարավ, երկինք—երկիր, երկինք—գետին (բնության, երևույթների  
հակադիր հարաբերություններ), բարություն—չարություն, թշնա-  
մություն—բարեկամություն, սեր—ատելություն, սիրելի—ատելի,  
ուրախություն—վիշտ, ուրախանալ—վշտանալ, լաց—ծիծաղ, լալ—  
ծիծաղել, պատերազմ—խաղաղություն, կյանք—մահ, ապրել—  
մեռնել, աշխատել—հանգստանալ, իշնել—բարձրանալ, գալ—գնալ,  
ծաղկել, փրթել—թառամել, թռչնել, լույս—խոսել, բնել—գարթ-  
նել, նրամուտքի—ննագանգվել (մարդու հասարակական գործու-  
նեություն, մարդկային հոգեբանության, կենսագործունեության,  
զգացմունքային տարբեր գնահատության հակադիր հարաբերու-  
թյուններ):

Հականշային հարաբերության մեջ կարող են դանվել նաև մակ-  
բայները՝ շուտ—ուշ, կանուխ—ուշ, վաղ—ուշ, մոտ—հեռու, ա-  
րագ—դանդաղ, առաջ—ետ, այստեղ—այնտեղ, նախդիրները՝  
մեջ—դուրս, տակ—վրա և այլն:

Բառի բաղմիրմասությունը և հոմանշությունը երբեմն պայ-  
մանավորում են նույն բառի կամ նույն կամ մոտ իմաստ ունեցող  
բառերի մեկից ավելի հականշային հարաբերությունների մեջ մըտ-

նելը, հետևաբար և հականիշներ ստեղծելը. օր.՝ տափակ (առար-  
կա)—սուր (առարկա), տափակ (հիմար, ոչ սրամիտ)—սրամիտ,  
ցածր (պատ, դիրք)—բարձր, ցածր (արարք)—բարի (արարք):

Իրենց ձևաբանական և բառակազմական առանձնահատկու-  
թյուններով հականիշ բառերը կարող են լինել՝ տարարմատ (տա-  
րահիմք) և նույնարմատ (նույնահիմք):

ա) Տարարմատ հականիշներ: Դրանք այն հականիշներն են,  
որոնց արմատները (կամ հիմքերը) տարբեր են և ծագումնաբա-  
նական որևէ կապ չունեն իրար հետ. մեծ—փոքր, սև—սպիտակ,  
գեղեցիկ—տգեղ, գիշեր—ցերեկ, աղքատ—հարուստ, սկսվել—վեր-  
ջանալ, հաջողվել—ձախողվել, ծնունդ—մահ, լայն—նեղ, խելոք—  
հիմար, բարակ—հաստ և այլն:

բ) Նույնարմատ հականիշներ: Դրանք այն հականիշ բաղա-  
դրյալ բառերն են, որոնց կազմում ընդհանուր է առնվազն մեկ  
հիմնական ձևույթ. ջրագուրկ—ջրաշատ, անեղ—հողառատ, ջր-  
անցիկ—անջրանցիկ, տնաշեն—տնավեր, տնավոր—անտուն, օրի-  
նական—անօրլինական, ճեղքափոխական—հականեղափոխական,  
հավատարիմ—անհավատարիմ, ներշնչել—արտաշնչել, գերակա-  
տարել—թերակատարել, համակրել—հակակրել և այլն:

Հականիշները լայնորեն գործածվում են գեղարվեստական  
գրականության, հրապարակախոսության և ժողովրդական բանա-  
հյուսության մեջ, որպես հակադրություն ստեղծելու գեղարվեստա-  
կան միջոց: Նրանք խոսքին հազորդում են դիպուկություն, արտա-  
հայտչականություն, պատկերավորություն: Յուրահատուկ նշանա-  
կություն են ստանում հականիշները գեղարվեստական ստեղծա-  
գործության մեջ և հատկապես բանաստեղծական արվեստում: Գե-  
ղարվեստական պատկերներ ստեղծելիս՝ հայերենում հականիշների  
կիրառության փայլուն օրինակներ են տալիս Գ. Նարեկացին, Ավ.  
Իսահակյանը, Պ. Սևակը: Ինչպես՝

Ապիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է գողին՝ ազ-  
նիվ, բարեհույս,

Ապուշին՝ հաննար, վախկապին՝ կտրին, տգեղին՝ շքեղ և  
պոռնիկին կույս (Աբու-Կալա-Մահարի):

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ԲԱՌԱՅՊԱՇԱՐԸ

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը լեզվի մեջ մտնող բոլոր բառերի ամբողջությունն է: Բառապաշարի մեջ մտնում են ոչ միայն լեզվի համագործածական (ընդհանուր գործածական) բառերն ու դարձվածքները, այլև լայն գործածություն ունեցող տերմինները կամ գիտաբառերը: Լայն առումով ժամանակակից հայոց լեզվի բառային կազմն ընդգրկում է ինչպես գործուն (ակտիվ) և ոչ գործուն (պասիվ) բառապաշարները, այնպես էլ՝ տերմինաբանությունը:

Բառապաշարը պատմական կարգ է: Այդ նշանակում է, որ հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում այն անընդհատ փոփոխվում, լրացվում և կատարելագործվում է: Լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենազգայունը, որն ամենից շատ է ենթարկվում արտալեզվական գործոնների ազդեցությանը, բառապաշարն է: Հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն առաջին հերթին իրենց արտահայտությունն են գտնում բառապաշարի մեջ: Նրա փոփոխումն ու լրացումը անմիջականորեն կապված է կյանքում կատարվող սոցիալական փոփոխությունների, մարդու արտադրական գործունեության, հասարակական-տնտեսական կյանքի, մշակույթի, գիտության և տեխնիկայի զարգացման հետ: Վերոհիշյալ կարգի ազդակների շնորհիվ նոր առարկաների և երևույթների երևան գալու կապակցությամբ լեզվի բառային կազմի համալրումը կատարվում է կամ սեփական բառերի կիրառման, կամ էլ օտարազգի բառերի փոխառության միջոցով: Մյուս կողմից, լեզվում որոշ հասկացությունների՝ իրենց դարձնալու, հնանալու հետևանքով գործածությունից դուրս են գալիս նաև նրանց համապատասխան սնվանումները: Բառապաշարի փոփոխմանն ու լրացմանը մեծապես նպաստում են նաև լեզվի կենսագործունեության մշտական ազդակներից մեկը՝ իմաստաբանական բարդ գործընթացները: Բառային կազմի լրացման աղբյուր կամ բառապաշարից բառերի դուրս մղման պատճառ

կարող են ծառայել նաև տարբեր պատճառներով բառի մեջ նոր իմաստի կամ իմաստների առաջացումը, բառի իմաստի մթազնումը և այլն: Այսպիսով, բառապաշարի տեղաշարժերն արտահայտվում են նորաբանություններով՝ նոր բառերի կազմությամբ, նորագույն փոխառություններով, լեզվի տարբեր ոլորտներում արդեն գործածվող բառերի նորանոր իմաստների ձևաբերմամբ, ինչպես նաև լեզվում առկա բառերի վերաիմաստավորման, հների մոռացման և այլ իրողությունների շնորհիվ: Հետևաբար, լեզվի բառային կազմում կատարվող փոփոխությունների ընդհանուր գործընթացն իրագործվում է բառապաշարի համալրման ու իմաստաբանական զարգացման և բառապաշարի կատարելագործման միջոցով:

Բառապաշարի զարգացման և հարստացման ոչ պակաս կարևոր լեզվական իրողությունը նրա կատարելագործումն է<sup>25</sup>: Բառապաշարի կատարելագործումը լեզվի բառային կազմում այնպիսի փոփոխությունների ամբողջությունն է, որ կարող է բնութագրվել իրեն բառապաշարի որակական զարգացում: Այդ նշանակում է, թե բառապաշարի կատարելագործումը ենթադրում է ոչ այնքան նոր բառերի և իմաստների մուտքը լեզվի բառային կազմի կամ իմաստաբանական համակարգի մեջ, որքան լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի զանազան կարգի փոփոխությունները, բառերի անցումները գործառական մեկ ուրիշ մյուսը, կամ բառերի փոխադարձ ներթափանցումները կիրառական տարբեր ոլորտները, որոնք ամբողջությամբ վերացրած, ուղղված են լեզվի համակարգայնության և միօրինակության ծավալմանը, բառագործածությունների և բառիմաստների ճշգրտմանը, բառակազմական կաղապարների և տիպերի միասնականացմանը, լեզվի մաքրության ապահովմանը, բառապաշարի արդիականացմանը: Այսպիսով, բառապաշարի կատարելագործումը լեզվում գործող զարգացման ներքին (ներլեզվական) օրինաչափություններին համապատասխան և արտաքին (արտալեզվական) գործոնների թելադրանքով տվյալ լեզվի բառային կազմի ներքին զարգացումն է, որ ուղղված է լեզվում առկա բառերի իմաստաբանական, գործառական, ձևական-ձևաբանական և բառակազմական հատկանիշների արդիականացմանը:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործումն

<sup>25</sup> է. Աղայան, Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործումը (Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, № 2, 1978, էջ 155—170):

իրականանում է տարբեր ուղիներով: Այն կատարվում է ինչպես ներլեզվական տարբերակների, ինչպես, օրինակ՝ հնատիպ և նորատիպ հիմքերով կազմված բաղադրությունների (աստեղատուն—աստղատուն, աստեղալից և աստղալից, աստեղային և աստղային, կամ՝ հորական և հայրական, մորական և մայրական, զագարնային—զագարթային, աղեղնային—աղեղային, բաղեղնաղատ—բաղեղնաղատ), հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերի տարբերակների (մշակույթային—մշակույթային, լուսային—լուսային, քրեախոս—քուրեախոս) միջև մղվող պայքարի ձևով, մինչև այդ ձևերից մեկի հաղթանակը: Բառապաշարի իմաստաբանական ու գործառական կատարելագործումը վերաբերում է առաջին հերթին բառերի իմաստների և գործածության ճշգրտումներին, որ կատարվում է իմաստային անորոշություններ ու շփոթություններ առաջացնող որոշ բառերի բազմիմաստության վերացման (ինչպես՝ նակատ—նազմանակատ, թև—գորթև, կազմակերպական (организационный) և կազմակերպչական (организаторский), հեռատարկություն (հրատարակված գործ) և հեռատարկություն (հրատարակող մարմին), հոմանիշների գործառական, իմաստային և ոճական տարբերակումների (գիտուն—գիտնական, լեզվաբան—լեզվագետ, պատմաբան—պատմագետ), ինչպես նաև նույն հասկացության համար կազմված մեկից ավելի նույնանիշների՝ բառային կրկնակների կրճատման միջոցով, նրանցից մեկի հաղթանակի հետևանքով (արտադրամաս—գործամաս, գեղագիտություն—գեղեցկագիտություն, վառիչ—իմբնավառիչ, իմբնավառ, լուցիչ և այլն): Վերջապես, ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործման ուղիներից մեկն էլ լեզվի մաքրության շահերից ելնելով՝ անհարկի փոխառյալ բառերի փոխարինումն է սեփական, հայերեն բառերով (ֆիլոլոգ—բանասեր, ֆիլոլոգիա—բանագիտություն, բոտանիկա—բուսաբանություն, բիոլոգիա—կենսաբանություն, գենլոգիա—երկրաբանություն):

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը կազմված է բառային հիմնական ֆոնդից (հիմնական բառաֆոնդից) և բառային կազմից:

Բառային հիմնական ֆոնդ: Բառային հիմնական ֆոնդը<sup>26</sup> բառապաշարի հիմքն է, նրա բազան, ամենակայուն շերտը, որի մեջ առաջին հերթին մտնում են նախասկզբնական և նախնական ամենակարևոր և ամենաանհրաժեշտ այն բառերը, որոնք հաստատապես մուտք են գործել այդ լեզվով խոսող ժողովրդի կյանքում:

Պրանք ընդհանուր գործածական այն բառերն են, որոնք անվանում են օբյեկտիվ իրականության առարկաները, երևույթները, գործընթացները, հատկանիշները և այլն: Այդ բառերը տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների լեզուների համար կարող են բնույթով տարբեր լինել:

Ժամանակակից հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ են մտնում այն բառերը, որոնք հանրածանոթ են հայերեն խոսողներին, դրանց իմաստները բացատրության կարիք չեն դրում և գործածական են բոլորի կողմից, անկախ այդ մարդկանց կրթությունից, մասնազիտությունից և բնակչության վայրից:

Բառային հիմնական ֆոնդը ընդգրկում է լեզվի ամենաանհրաժեշտ բառերը, և չպետք է կարծել, թե նրանք ճշտորեն համապատասխանում են միայն կարևոր հասկացություններին կամ անհրաժեշտ առարկաներին, քանի որ միևնույն հասկացությունների հետ կարող են կապված լինել տարբեր բառեր, իսկ նույն առարկաները կարող են անվանվել տարբեր բառերով:

Նույն հասկացությունը նշանակելու համար, ինչպես հայտնի է, լեզվում գոյակցում են մի շարք հոմանիշներ, բառապաշարում խաղացած իրենց դերի և արժեքի համապատասխան էլ՝ դրանցից ոչ բոլորն են մտնում բառային հիմնական ֆոնդ:

Հիմնական բառաֆոնդի բառերը չեզոք բառապաշարի են վերաբերում: Պրանք կարելի է գործածել միայն նույն իմաստներով՝ խոսքի ցանկացած համատեքստում և ժանրերում:

Լեզվի բառային հիմնական ֆոնդի կորիզն են կազմում արմատները կամ արմատական բառերը, որոնք հիմք են ծառայում բազմաթիվ բաղադրյալ բառերի համար: Օրինակ՝ մարդ, տուն արմատական բառերից բաղադրված են. մարդ—մարդկային, մարդկայնաբար, մարդկայնորեն, մարդկայնություն, մարդանալ, մարդկություն, մարդամտ, մարդախոս, մարդավայել, մարդավարի, մարդակերպ, մարդակապիկ, կապկամարդ, անմարդկային, ամարդի և այլն: Տուն—տնային, տնական, տնաբույս, անտուն, հեռագրատուն և այլն:

Հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդը ձևավորվել է նրա կազմավորման ընթացքում, ընդգրկում է բնիկ հայերեն, այսինքն՝ հնդեվրոպական նախալեզվից ժառանգած՝ ցեղակից, ինչպես նաև հայ ժողովրդի կազմի մեջ մտնող ոչ ցեղակից (ոչ հնդեվրոպական) լեզուների, այսինքն՝ այլ ծագում ունեցող փոխառյալ բառեր, որոնք այլ ժողովուրդների և քաղաքակրթությունների հետ ունեցած հայերի մշակութային, տնտեսական և քաղաքական հարաբերությունների բնականոն արդյունքը կամ հետևանքն են հանդիսանում:

<sup>26</sup> Л. А. Булаховский, Введение в языкознание, ч. II, М., 1954, с. 82.



Բառային հիմնական ֆոնդից դուրս են մնում մասնավորապես. ա) ծարգոնային տարրերը կամ նրանց վերապրուկները մեր օրերում. բ) նեղ մասնագիտական բառերը. գ) առանձին հեղինակների մոտ գործածվող այն բառերը, որոնք լեզվում համընդհանուր գործածություն չունեն:

Բառային հիմնական ֆոնդի բառերը իրենց իմաստներով վերաբերում են հիմնականում հետևյալ բնագավառներին.

ա) Մարմնի տարբեր մասերի և նյութերի անուններ, ինչպես՝ գլուխ, աչք, ձեռք, ոտք, մատ, թաթ, ականջ, երես, հակատ, էրթ, դուռ, բև, բիկունք, ուս, կուրծք, թոք, լյարդ, ստամոքս, ոսկոր, առամ, արշու, թուփ, ճարպ, միս և այլն:

բ) Ազգակցական տարբեր հարաբերություններ ցույց տվող բառեր. հայր, մայր, եղբայր, քույր, օրդի, զավակ, դուստր, աղջիկ, տղա, երեխա, փեսա, հարս, կնիք, մարտույր, հորտույր, հարեղբայր, սկեսուր, սկեսրայր, տեգր, անեք, անեքձագ, զոհանջ և այլն:

գ) Բնության երևույթների և առարկաների անվանումներ. ինչպես՝ արև, լուսին, հող, ջուր, անձրև, ձյուն, կարկուտ, քամի, սրտ, կայծակ, անտառ, դաշտ, սառ, լեռ, գետ, ծով և այլն:

դ) Կենդանական աշխարհի անվանումներ. մարդ, ձի, կով, ոչխար, խոզ, թռչուն, ծիւղ, ազոս, աքլոր, հավ, սագ, բաղ, մեղու, հանձ, շուն, կատու, գայլ, աղվես, արջ, նապաստակ և այլն:

ե) Բուսական աշխարհի անվանումներ. ցորեն, գարի, խոտ, ծառ, կանաչ, տերև, թուփ, վարդ, մեխակ, մատուր, կաղնի, եղևնի, սանի, բարդի, կեչի, կաղամախի և այլն:

զ) Մենդի առարկաների, սննդանյութերի տարբեր անվանումներ, ինչպես՝ հաց, ջուր, աղ, միս, յուղ, կարագ, ձև, ձավար, բրինձ, երշիկ, մեղր, ձմերուկ, խաղող, խնձոր, ծիրան, դեղձ, տանձ, բնկույզ, միրգ, բանջար և այլն:

է) Աշխատանքային տարբեր գործիքների անվանումներ. մուրճ, դանակ, կացին, ուրագ, սղոց, մեքենա, հաստոց, տրակտոր, կոմբայն և այլն:

ը) Աշխատանքային պրոցեսների անվանումներ. ինչպես՝ հերկել, վաբել, ցանել, մշակել, հնձել, փաղել, կտուցել, մաքրել, գտել, շարել, տնկել և այլն:

թ) Ամենօրյա կենցաղի հետ կապված առարկաների և գործողությունների տարբեր անվանումներ. եփել, թափել, լվանալ, սրբել, տուն, սենյակ, խոհանոց, հատակ, կտուր, դուռ, լուսամուտ և այլն:

ժ) Արհեստների և մասնագիտությունների տարբեր անվա-

նումներ. բանվոր, գյուղացի, կոլտնտեսական, մտավորական, բանասեր, գրող, գիտնական, ուսուցիչ, հողագործ, այգեգործ, կուլիվ, նախապան և այլն:

ժա) Բնակավայրերի, վարչական բաժանումների հետ կապված անվանումներ. գյուղ, ֆաղափ, ավան, գյուղաֆաղափ, երկիր, մարզ, քաղամաս, շրջան և այլն:

ժբ) Գործողության և վիճակի վերացական և թանձրացական տարբեր անվանումներ. ֆայլել, ֆնել, նստել, կանգնել, ուտել, պառկել, կոթնել, վազել, խոսել, լուր, մտածել, լսել, սիրել, առել, տխրել, ուրախանալ, հիշել, մոռանալ և այլն:

ժգ) Որակ, հատկանիշ ցույց տվող բառեր. սպիտակ, սև, կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, բարձր, ցածր, երկար, բարակ, կարճ, հաստ, խելոք, հիմար, ուրախ, տխուր, արագ, դանդաղ, շատալ և այլն:

ժդ) Հաճախ գործածվող դերանունները, թվականները, շաղկապները, կապերը, ձայնարկությունները, եղանակավորող բառերը:

Բառային հիմնական ֆոնդին առանձնահատուկ է նրա ոչ մեծ ծավալը, կայունությունը, գործածության տևականությունը: Նրա համեմատական կայունությունից էլ բխում է մյուս կարևոր առանձնահատկությունը՝ ժառանգորդությունը, փոխանցումը սերունդից սերունդ: Հայոց լեզվով խոսող հանրությունը, յուրացնելով ժառանգած բառային հիմնական ֆոնդը, իր գոյատևման յուրաքանչյուր փուլում փոխանցել է հաջորդ սերունդին:

Մյուս կողմից՝ հասարակական կյանքի, արտադրական հարաբերությունների բնույթի փոփոխման, տնտեսության, քաղաքական կյանքի, գիտության ու մշակույթի զարգացման և առաջընթացի հետ բառային հիմնական ֆոնդը իր հերթին, թեև շատ դանդաղ, բայց և ենթակա է որոշ փոփոխման:

Բառային հիմնական ֆոնդի լրացումը կատարվում է ներքին և արտաքին գործոնների շնորհիվ՝ լեզվի բառային կազմին պատկանող բառերի փոխանցման, նորակազմ բառերի երևան գալու և փոխառությունների միջոցով: Բառային հիմնական ֆոնդը հարստանում է, նախ, հատկապես այնպիսի նոր բառերի շնորհիվ, որոնք անվանում են նոր հասկացություններ (արտահայտում են արտագրության նոր տեսակներ և ձևեր, հասարակական նոր հարաբերություններ) և, երկրորդ, գլխավորապես ի հաշիվ բառային կազմի այն բառերի, որոնք լեզվի ներքին հարավորություններով և միջոցներով առաջացել են հիմնական բառաֆոնդի բազայի վրա:

Սվոդեշի կարծիքով լեզվի հիմնական բառաֆոնդը, նախ,

փոփոխման է ենթարկվում հավասար արագությամբ, ըստ որում, յուրաքանչյուր հազարամյակի ընթացքում դուրս է ընկնում այդ բառերի 15%-ը<sup>27</sup>:

Այսպիսով, լեզվի հիմնական բառաֆոնդը մտնում է բառապաշարի մեջ իբրև նրա հիմնական և համեմատաբար կայուն մաս:

Բառային կազմ: Բառային կազմի մեջ մտնում են լեզվի բոլոր բառերը, այդ թվում նաև հիմնական բառաֆոնդի բառերը: Լեզվի բառային կազմը հիմնական բառաֆոնդի համեմատությամբ քանակապես շատ ավելի ընդարձակ և ավելի փոփոխական է, նրա սահմաններն ավելի շարժուն են: Այն անընդհատ լրացվում է նորանոր բառերով և իմաստներով. նրանից դուրս են մնում հնացած և հազվադեպ գործածվող որոշ թվով բառեր: Այն կարող է լրացվել նաև բառի կառուցվածքի փոփոխման և բառերում նոր իմաստներ զարգանալու հետևանքով առաջացած նոր բառերով ու իմաստներով:

Բառային կազմը ավելի զգայուն է հասարակական, մշակութային կյանքում մարդու գործունեության մեջ կատարված փոփոխությունների նկատմամբ: Նրանում արձագանք են գտնում նշված բնագավառներում կատարվող քիչ թե շատ զգալի փոփոխությունները:

Ի տարբերություն հիմնական բառաֆոնդի, բառային կազմում տեղ են գրավում բառապաշարի հետևյալ խմբերը:

ա) նորաբանությունները, այսինքն՝ նորակազմություններն ու նորագույն փոփոխությունները:

բ) Հնացած և հազվադեպ գործածվող այն բառերը, որոնք դեռևս գործածվում են լեզվի տարբեր ոճերում, գեղարվեստական գրականության մեջ:

գ) Ոչ համաժողովրդական բառապաշարի այն բառերը, որոնք գործածվում են որևէ բնագավառում կամ գեղարվեստական գրականության մեջ (օրինակ՝ կերպարների, հերոսների լեզվում):

դ) Զրադուրեքային բառապաշարը՝ մասնագիտական և տերմինաբանական բառապաշարը:

ե) Ժողովրդախոսակցական լեզվի այն բառերը, որոնք չեն մտնում հիմնական բառաֆոնդի մեջ:

զ) Ոտարադրի ծագում ունեցող այն բառերը, որոնք չեն մտնում հիմնական բառաֆոնդի մեջ և իրենց համազորները չունեն լեզվում:

Հիմնական բառաֆոնդը և բառային կազմը իրենց ակնհայտ տարբերություններով հանդերձ՝ անանցանելի պատնեշով իրարից, այնուամենայնիվ, չեն սահմանազատվում: Նրանք գտնվում են փոխադարձ կապի և փոխներգործության մեջ, որն արտահայտվում է լեզվի կենսագործունեության ընթացքում բառային կազմից հիմնական բառաֆոնդը կամ վերջինից բառային կազմը մշտապես որոշակի թվով բառերի փոխադարձ անցումներով:

ԱԱԱ  
ԱԱԱ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱԾԱՐԸ ԸՍՏ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐԻ ԵՎ  
ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԾԵՐՏԵՐԻ

[ Հայոց լեզուն իր գրավոր շրջանում անցել է հին գրական հայերենի (գրաբարի), միջին գրական հայերենի և նոր գրական հայերենի (աշխարհաբարի) զարգացման փուլերը:

Ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարում կարելի է տեսնել ինչպես ընդհանուր հայերենի զարգացման բոլոր փուլերի բառապաշարային գրանցումները, այնպես էլ նրա ինքնուրույն զարգացման հետևանքով ձևեր բերած բառապաշարային հարստությունը:

Ըստ զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի՝ ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարը կազմված է գրաբարյան, միջին հայերեն, բարբառային (գավառական), արևելահայ և արևմտահայ գրական լեզուների բառերից, որոնք և կազմում են նրա բառապաշարային առանձին շերտերը: Ժամանակակից հայերենի բառապաշարը իրականում միասնական և մի կուռ համակարգ է, և նրանում շերտերի առանձնացումը, իհարկե, պայմանական բնույթ ունի:

Քանակական տեսակետից գրաբարյան, միջին հայերեն, բարբառային (գավառական) և զուտ արևմտահայերեն բառերը ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարում (վերջինս եթե պայմանականորեն ընդունենք մոտ 150 հազար բառային միավոր) կարող են կազմել մոտ 1/5 մասը միայն: Հետևաբար, արևելահայ գրական լեզվի բառապաշարի մեծագույն մասը կամ հիմնական զանգվածը ստեղծվել և կազմավորվել է նրա պատմական զարգացման ընթացքում՝ հայերենի բառակազմական օրենքներով կերտված նորանոր բառերի, գրա-

<sup>27</sup> Գ. Չանուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 219:

բարյան, միջին հայերեն, բարբառային բառերի ձևեր բերած նոր իմաստների և օտար, հատկապես ուսերենի միջոցով կատարվող փոխառությունների շնորհիվ:

1. Գրաբարյան բառեր և բառաձևեր: Գրաբարը որպես գրական լեզու, գրի է առնվել 5-րդ դարում, իբրև գրավոր լեզու իր գոյությունը պահպանել է մինչև 19-րդ դարը: Ըստ որում, նրա խոսակցական տարբերակը համաժողովրդական լեզվի իր դերը կատարել է մինչև 9—10-րդ դարերը, հետագայում իր տեղը զիջելով բարբառների և միջին գրական հայերենին: Ժամանակակից հայերենում գրաբարյան շերտը կազմում են գրաբարից ծառանգած բառերն ու իմաստները, ինչպես նաև գրաբարյան բառաձևերը, որոնք այժմ ներկայացնում են գրաբարի քերականական բարացած ձևեր և ժամանակակից հայերենում գիտակցվում, ընդունվում են իբրև ինքնուրույն բառեր: 1

Որոշ մասնագետներ ժամանակակից հայերենին անցած գրաբարյան բառերը գրաբարյան փոխառություններ են համարում: Նույն լեզվի մեջ, նրա զարգացման տարբեր փուլերում բառապաշարի փոխանցումները իբրև փոխառություններ զիտելով, այդ մասնագետներն, անշուշտ, նկատի ունեն ուրիշ լեզուների բառապաշարների փոխհարաբերության օրինակը: Ռուսագետները իրավացիորեն փոխառություն են համարում ուսերենին անցած հին կամ եկեղեցական սլավոներենի բառերը: Այդ բնական է, որովհետև հին սլավոներենի հիման վրա են առաջացել ժամանակակից ուսերենը, ուկրաիներենը, բելոռուսերենը, լեհերենը, բուլղարերենը և մյուս ազգային լեզուները, որոնք այժմ տարբեր ժողովուրդների համաժողովրդական և համազգային լեզուներն են: Նույնը չի կարելի վերագրել ժամանակակից հայերեն գրական լեզվի երկու տարբերակներին, որոնք նույն ժողովրդի, միևնույն ազգության լեզուներն են: Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակները իբրև գրաբարի զարգացման հետագա դրսևորումներ իրականում ծառանգել են գրաբարի բառապաշարը, հետևաբար և այն չի կարող փոխառություն համարվել:

Գրաբարի բառապաշարը իր ամբողջական արտահայտությունն է պահել երկհատոր «Նոր հայկազյան բառարանում» (Վիեննա, 1936—37 թթ.), որ պարունակում է մոտ 51 հազար բառահոդված, և հատկապես սրա համառոտ տարբերակում՝ «Առձեռն

հայկազյան բառարանում» (2-րդ հատոր, Վիեննա, 1865 թ.), որ բնագրկում է ազգի քան 56 հազար բառ<sup>28</sup>:

Այսպիսով, ըստ գրաբարյան բառարանների տվյալների, գրաբարյան բառերի քանակը մոտ 50—55 հազար է կազմում: Այդ չի նշանակում, որ գրաբարի բառային կազմը միայն վերոհիշյալ բառաքանակով է սահմանափակվում: Հիշյալ բառերը, ինչպես հայանի է, միայն գրաբարյան գրավոր հուշարձաններում արձանագրված բառերն են: Այդ հուշարձանների սահմանափակությունը, այդ հուշարձաններում գիտությունների, բնագավառների բնագրկման համեմատաբար ոչ մեծ բազմազանությունը, իհարկև, մեծապես ազդել են բառարաններում գրաբարյան բառերի իրական թվի արտացոլման վրա: Մյուս կողմից՝ գրաբարյան գրավոր հուշարձաններում լրիվ չափով չի ներկայացված նաև խոսակցական բառապաշարը: Ամենահամեստ հաշվումներով ժամանակակից հայերենին է փոխանցվել գրաբարյան ընդհանուր բառապաշարի մոտ 40 տոկոսը: Այդ բառերի մեծ մասը պահպանել է իր հիմնական իմաստները, որոշ բառեր ձևեր են բերել լրացուցիչ իմաստներ, որոշ բառեր էլ իմաստափոխվելով՝ ժամանակակից հայերենում հանդես են գալիս նոր իմաստներով:

1 Ժամանակակից հայերենում գրաբարյան բառերը բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի. բնդհանուր հայերեն բառեր, գրաբարից անցած տերմիններ, գրաբարյան իմաստափոխված բառեր (որոնք արդի հայերենում հիմնականում տերմիններ են դարձել) և գրաբարյան կազմություններ:

1 (ա) Բնդհանուր հայերեն բառեր: Այդ կարգին են պատկանում գրաբարյան այն բառերը, որոնք ծառանգել է արդի հայերենը և ընդհանուր են հայերենի բոլոր դրսևորումներին, ինչպես գրաբարին, այնպես էլ միջին գրական հայերենին, բարբառների և ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակներին՝ արևելահայերենին և արևմտահայերենին: 1

Գրանք հիմնականում բառային հիմնական ֆոնդի բառերն են, ինչպես՝ հայր, մայր, եղբայր, քույր, զավակ, որդի, աղջիկ, աղա, դուստր, մարդ, կին, ամուսին, հաց, ջուր, տուն, լեռ, քար, գետ, ծով, լիճ, մեծ, փոքր, լավ, վատ, կարմիր, կապույտ, սև, սպիտակ, առագ, դանդաղ, մեկ, երկու, հազար և այլն, որոնք իրենց հիմնական առարկայական (իրեղեն) իմաստներով գրաբարյան շրջանից գոյատևում են մինչև մեր օրերը: Այս կարգի բառերը ընդհանուր են նաև միջին հայերենին և հայերեն տասնյակ բարբառ-

<sup>28</sup> Հմմտ., Ն. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951 թ., 490:

ներին: Միակ առանձնահատկությունն այն է միայն, որ միջին հայերենում, բարբառներում, հաճախ նաև աշխարհաբարում այդ բառերը ենթարկվել են համապատասխան հնչյունական այլևայլ ձևափոխությունների (ինչպես՝ հայր—հէր, խէր, մայր—մէր, հաց—խաց, հոց, եղբայր—ախպեր, ապեր, ախպար, արար, լեռոն—լեռ, քայր—քայր, որդի—վորդի):

Գրաբարից են անցել նաև բաղադրյալ շատ կազմություններ, որոնք նույն կամ իմաստային աննշան փոփոխմամբ գործածվում են ժամանակակից հայերենում: Այսպես, «Առձեռն» բառարանի պատահականորեն բնորոշված 120—130 էջերում (10 էջում) գնտեղված ավելի քան 150 բառ գործածվում է ժամանակակից հայերենում: Այդ կարգի բառերի զգալի մասը գեղարվեստական գրականությունից քաղված բնագրային օրինակներով տեղ է գտել «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (Ա հատոր, 1969 թ.):

Թվենք դրանցից մի քանիսը. ասպետ, ասպետություն, ասպընջական, ասպընջականություն, աստիճանակից, աստիճանաձև, աստիճանավոր, աստղաբաշխություն, աստղագետ, աստղագուշակ, աստղալույս, աստղակեղև, աստղային, աստղակար, աստղանրման, աստղապսակ և այլն. կամ՝ ասրեղեն, ասրյա, ատաղձագործ, ատամնահաճ, ատամնաթափ, ատամնավոր, ատամնացավ, ատրագույն, ատրաշեկ, արագագեաց, արագագործ, արագաթև, արագաթռիչ, արագախոս, արագանոս, արագաշարժ, արագաշարժություն, արագախալ, արագընթաց, արագություն, արամբի, արատավոր, արատավորություն, արարողություն և այլն: Հիշյալ տասնյակ այլ բառերի բնագրային գործածման օրինակները «Ժամանակակից հայոց լեզվի բառարանում» բերված են արևելահայ և արևմտահայ դասական և ժամանակակից գրողներից (Ռ. Պատկանյան, Բաֆֆի, Հ. Պարոնյան, Նար-Դոս, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Գ. Վարուժան, Գ. Զոհրապ, Ե. Օտյան, Գ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ն. Զարյան, Ա. Բակունց, Պ. Սևակ, Ս. Խանզադյան և ուրիշներ): Այս կարգի բառերը այժմ լայն գործածություն ունեն ինչպես գրավոր և բանավոր խոսքում, այնպես էլ՝ գրական լեզվի տարբեր ոճերում:

(բ) Գրաբարյան իմաստափոխված բառեր ժամանակակից հայերենում: Վեզվի պատմական զարգացման ընթացքում գրաբարյան հազարավոր բառեր կամ իմաստափոխվել են, կամ էլ իրենց հիմնական, առարկայական իմաստներին զուգահեռ ձեռք են բերել նոր իմաստներ, ըստ որում շատ գեղեցիկում այդ նոր իմաստներն այժմ ավելի գործածական են, քան նախնական իմաստները:

Այսպես, օղապարիկ գրաբարում գործածվում էր իբրև ձիուն տրվող մակդիր՝ օդի մեջ սավառնող. հետագայում՝ ժամանակակից հայերենում այն գործածվում է իբրև գազով լցված հատուկ թռչող սարքի անվանում: Ազատական գրաբարում նշանակում է՝ ազնորականին հատուկ, համարձակ, այժմ՝ ազատամիտ գազափարների տեր (անձնավորություն): Պանպանդակալ գրաբարում ունի հետևյալ իմաստները՝ 1) պահող, պահպանող, 2) ժողովրդի կառավարիչ. ժամանակակից հայերենում՝ 1) ամեն մի նորությունը թշնամի, քաղաքական կարգի, կենցաղի և այլնի անփոփոխության պաշտպան, 2) այդ հայացքներն ունեցող մարդ. 3) ժայռահեղ աչ քաղաքական կուսակցության անդամ:

(գ) Գրաբարից անցած տերմիններ: Գրաբարից են անցել և ժամանակակից հայերենում լայն գործածություն ունեն՝ քերականական, գրականագիտական, փիլիսոփայական, բժշկագիտական, բուսաբանական որոշակի քանակով տերմիններ: Ինչպես, օրինակ՝ բայ, մակբայ, բառ, առո, դերանուն, գոյական, թվական, իմաստասեր, իմաստասիրություն, ֆերականություն, ստուգաբանություն, ասանց, ապարաց, ստորակետ, բարձրագույն, ներկա, անցյալ, ապառնի, անօրոշ, հրամայական, ներգործական, կրավարական, սանմանական, հոլով, սեռական, հայցական, ձայնավոր, ձայնորդ, բաղաձայն, նախադրություն, առոգանություն, բարդություն, կամ՝ մակդիր, կառակերպություն, ողբերգություն, հազներգություն, մեծավերջ (յամբ), վերջառանջ (անապեստ), ֆոլարաբ, ֆոլարոստ և այլն:

Հատկանշական է, որ պատմական զարգացման ընթացքում այդ կարգի տերմինների հիմքում ընկած հասկացությունների ծավալի փոփոխման հետևանքով շատ տերմիններ, ընդարձակելով կամ համապատասխանաբար փոփոխելով հասկացության ծավալը, պահպանել են իրենց կենսունակությունը, ինչպես այն կատարվել է քերականական և փիլիսոփայական-տրամաբանական բազմաթիվ հայերեն տերմինների հետ:

(դ) Գրաբարյան կազմություններ: Այս կարգի բառերի շերտը ժամանակակից հայերենում իրենից ներկայացնում է գրաբարյան քարացած ձևերը:

Գրաբարյան քարացած ձևերը գրաբարյան նախդիրներով, գրաբարի հոլովման և խոնարհման ձևերով, բայական ասանցներով կաղմված, ինչպես նաև գրաբարյան շարահյուսական կապակցություններ, անգամ ամբողջական նախադասություններ ներկայացնող միավորներ են, որոնք ժամանակակից հայերենում գիտակցվում և գործածվում են իբրև ինքնուրույն բառեր:

Անհրաժեշտ է նշել նաև, որ այդ կարգի բառերի որոշ մասը համաբանությամբ կազմվել է ոչ թե լեզվի զարգացման գրաբարյան փուլում, այլ հետագա շրջանում:

Գրաբարյան առ, գ, ընդ, ըստ, ի, ց նախդիրներով կազմված բառեր.

Առ—առայժմ, առանձին, առասել, առավել, առափել, առափ-նյա, առբերել, առգրել, առդնել, առընթեր, առկա, առկախ, առկայ-ծել, առնասարակ, առնայնել, առնեռն, առնակատել, առմիշտ, առնչություն, առնվազն, առուգանել, առողջ, առօրյա:

Զ—զարմանալ, զամպ(ել), զարկել, զգալ, զգետնել, զեռալ, սրափվել (զբափվել), զեղել (զենեղել), զեղծել, զիջել (զիջա-նել), զողել, զավանալ (զնովանալ), սփռել (զփռել), զօծել, զօր, կույրգկուրայն, հետզհետե:

Ընդ—ընդամենը, ընդառաջ, ընդառաջել, ընդարձակել, ընդար-մանալ, ընդբերանել, ընդգծել, ընդգրկել, ըմբռնել (ընդըռնել), ընդդեմ, ընդդիմադիր, ընդհատել, ընդհարվել, ընդհակառակը, ընդհուպ, ընդհանուր, ընդելուզել, ընկազմանել (ընդկազմանել), ըն-կրկել (ընդկրկել), ընձեռել (ընդձեռել), ընդմիշտ, ընձյուղել, (ընդձյուղել), ընդդռնել, ընդդռնել, ընդդռնել, ընդդռնել (ըն-դռնել), ընդունարան, մեկընդմիշտ, գիրկընդխառն, մեշընդմեջ:

Ըստ—ստանձնել (ըստանձնել), ըստ այդմ, ըստ այսմ, ըստ ամենայնի, ինքնըստինքյան, օրըստօրե:

Ի—իմարկել, հաջող(ել), ի աջողել, (յաջողել), հօգուտ (ի օգուտ, յօգուտ), իմիջիայնոց, հավելյալ (ի ավելյալ, յավելյալ), հանձնիս, իհարկե, խառնիխառն, վերիվայր, վայրիվեր:

Յ—ցայգ, ցերեկ, ցման, ցտեսություն:  
Գրաբարյան հոլովական ձևեր: Գրանք այն բառերն են, որոնց մեջ պահպանվել են գրաբարի հոլովված տարբեր ձևերը:

1) Եզակի ուղղական-հայցականը ի վերջավորությամբ. տե-ղի (տեղի տալ), անտեղի, գերեզմանատեղի, ուխտատեղի:

2) Եզակի սեռական-տրականը ա, ո, ույն վերջավորությամբ. Վանա, Սևանա, հուսո, պատվո (պահակ), սիրույն, արժանվույն, ֆեռողի, ֆեռայր (գրք. ֆոյր > ֆեռ):

3) Եզակի բացառականը ե (է), են (էն) վերջավորությամբ. դարեդար, օրեցօր, բացեիքաց, օրստօրե, իհարկե:

4) Եզակի գործիականը՝ բ, ավ (աւ), իվ (իւ) վերջավորու-թյամբ. ձերբազատվել, ձերբակա(լել), ձերբասուն, բնավ, հա-րկավ, հագիվ, խօտիվ, շնորհիվ, միով բանիվ, մեծավ մասամբ, այնուամենայնիվ:

5) Հոգնակի ուղղականը Ք վերջավորությամբ. արկնայի,

պարունայի, բաժանունի (<բաժանումն), պատանունի (<պա-տանումն), մտածունի, հարցունի, հուզունի, ցուցունի, ու-մունի, ամունի, արարունի, բերունի, բուրունի, սխալունի, Լուսինի (<Լիսն):

6) Հոգնակի սեռական-տրականը աց, ից, ոց վերջավորու-թյամբ. վրաց, պարսից, հայոց (<վիրք, պարսք, հայք), խորոց (ի խորոց սրտի), գործոց, ձեռագիր, ձեռագրափող:

7) Հոգնակի հայցականը Ս վերջավորությամբ. բաղնիս, գուֆս, պաս, ծախս, ծառս (լինել):

8) Հոգնակի բացառականը ուց վերջավորությամբ. մանկուց, առավոտուց, մոռուց, վաղուց, փոքրուց, հեռուց:

9) Գրաբարյան հոլովական և խոնարհման ձևերից ծագող մակբայներ, եղանակավորող բառեր, շողկփայներ, կոշականներ. երբեմն, հագիվ, իբրև, կեցցե՛, ավա՛ղ, օ՛ն:

10) Գրաբարյան բայական որոշ ձևեր՝ ույց, ուց պատճա-ռական ածանցով, ան սոսկածանցով, ցոյական կամ պարզ ան-ցյալի հիմքով, եզակի երրորդ դեմքի ձևով. մատուց, հատուց, կատուց, ասացող, տաղասաց, հեռագնաց, հարամնա, բայ, գոյ:

11) Գրաբարյան անցյալ դերբայի եսլ ածանցով կազմված բառեր. անցյալ, լքյալ, կատարյալ, կարծեցյալ, հանգուցյալ, հեծ-յալ, հետևյալ, ննջեցյալ, սառուցյալ, ստորադրյալ, վերոնիշյալ, վերաբերյալ, ներհանիշյալ:

12) Գրաբարի դարձվածքներ, ոճեր, արտահայտություններ. ձայն բարբառո հանապատի, սանման ֆաջաց զենն յուրյանց, ի խորոց սրտից, ոչ միայն հացիվ (կեցցե մարդ), ակն ընդ ակն, ատամն ընդ ատամն, երիցս նգովյալ, հավուր պատշանի, նման զմամն սիրե, ունայնություն ունայնության, ավա՛ղ փառացս ան-ցավորի:

13) Գրաբարյան շարահյուսական կապակցություններ. համե-նայն դեպս, այնուամենայնիվ, ընդ որում, ըստ որում, այսուամե-նայնիվ, այսուհետև, հետզհետե, ամենայն հավանականությամբ, ըստ մեծի մասին, ըստ օրեքփ, ըստ այսմ, ըստ այդմ, ըստ այնմ, ընդ սմին, ի բաց առյալ, ի փառս, ի վիճակի (լինել), ի հիշատակ, ի պատիվ, ի պաշտոնե, ի նպաստ, ի նկատի առնել:

14) Գրաբարյան ամբողջական նախադասություններից կազմ-ված բառեր. որե՛ն, ովե՛ն, ինչե՛ն, ովե՛կե, երբե՛կե, որե՛կե, ուրե՛կե-ցե, տերողորմյա, ֆաջալեր(ել) և այլն:

Ճ 2. Միջին հայերեն բառեր: Միջին հայերենը, լինելով 12—17-րդ դարերի լեզուն<sup>20</sup>, անցման շրջան է ծառայում գրաբարի և

<sup>20</sup> 2. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 226—

աշխարհաբարի միջև: Միջին հայերենով հասել է տարբեր բնույթի հարուստ գրականություն: Այն եղել է ժամանակի ոչ միայն գրականության, այլև ժողովրդի խոսակցական, կենդանի լեզուն: Միջին հայերենին զուգահեռաբար դեռևս գիտական որոշ ուսումնասիրությունների և եկեղեցու համար գրաբարը որպես գրական և գրքային լեզու իր գոյությունը պահպանում է մինչև 19-րդ դարը: Միջին հայերենի գործառնության և տարածման շրջանում Հայաստանի տարածքում գործում էին նաև հայերեն բարբառները:

Հայերենի մասնագետները համակարծիք են այն հիմնական կետում, որ միջին հայերենի լեզվական իրողությունները որակապես տարբերվում են ինչպես գրական հին հայերենից՝ գրաբարից, այնպես էլ գրական նոր հայերենից՝ աշխարհաբարից: Այդ հանգամանքն էլ հիմք է տալիս միջին հայերենը անվերապահորեն ընդունելու որպես հայերեն գրական-խոսակցական լեզու, որը հաջորդել է գրաբարին և նախորդել՝ աշխարհաբարին:

Միջին հայերենը իր ծնունդով և գոյությունը սերտորեն կապված է գրաբարի և բարբառների հետ, որոնցից էլ բխում են նրա բառապաշարի օրինաչափություններն ու ընդհանրությունները հիշյալ լեզուների հետ:

Նախ, միջին հայերենը ժառանգել է գրաբարի բառապաշարը, ենթարկելով իր հնչյունաբանական, ձևաբանական, բառաիմաստաբանական օրինաչափություններին: Մյուս կողմից, իր գոյատևման ընթացքում նա ինքնուրույնաբար փոխառություններ է կատարել արաբերենից, նոր պարսկերենից, թուրքերենից, եվրոպական և այլ լեզուներից<sup>30</sup>: Միջին հայերենի բառապաշարի բաղադրատարրն են կազմում նաև ժամանակի բարբառների բառերը: Հետաքրքրական է նաև, որ բարբառային (գավառական) շատ բառեր առաջին անգամ արձանագրվել են միջին հայերեն գրական հուշարձաններում: Միջին հայերենի բառապաշարը կազմված է՝ գրաբարյան ժառանգությունից, ինքնուրույնաբար կատարած փոխառություններից, բարբառային (գավառական), ինչպես նաև հայերենի բառակազմական օրենքներով այդ շրջանում կերտված բառերից: Մյուս կողմից, գրաբարից ժառանգած որոշ բառեր միջին հայերենում ձեռք են բերել նոր իմաստներ:

Ժամանակակից հայերենի բառապաշարում միջին հայերեն

բառերի շերտը որոշելիս պետք է զանց առնել այն բառերը, որոնք ընդհանուր են գրաբարին, միջին հայերենին և ժամանակակից հայերենին: Դրանք գրաբարյան շրջանից եկող ընդհանուր հայերեն բառեր են, պատկանում են հիմնական բառաֆոնդին, գոյատևել են հայերենի պատմական զարգացման բոլոր դրսևորումների ժամանակ:

Ժամանակակից հայերենի բառապաշարում միջին հայերեն բառերի շերտն են կազմում գրավոր և բանավոր խոսքում այժմ դործածվող բառային այն միավորներն ու բառիմաստները, որոնք ստեղծվել կամ փոխ են առնվել միջին հայերենի շրջանում, հետևվաբար և ծագումով պատկանում են միայն այդ լեզվին:

Միջին հայերենից ժամանակակից հայերենին ավանդված պետք է համարել այն բառերն ու իմաստները, որոնք հատուկ են միայն միջին հայերենին և շեն արձանագրվել 5—10-րդ դարերի գրաբարյան հուշարձաններում:

Վերահիշյալ սկզբունքներով առաջնորդվելով հանդերձ, այնուամենայնիվ, ժամանակակից հայերենի բառային կազմում միջին հայերեն բառերի որոշման և տարբերակման հարցում որոշ դժվարություններ են առաջանում հետևյալ պատճառներով:

Նախ, հրապարակի վրա դեռևս չկա այդ շրջանի բառապաշարն ամփոփող որևէ բառարան, որով հնարավոր լինեք զաղափար կազմել այդ լեզվի բառային կազմի սահմանների, նրա քանակի, որակական հատկանիշների մասին: Այնուհետև, դժվար է միանշան լուծում տալ բառապաշարային այն ընդհանրություններին, որոնք գոյություն ունեն գրաբարի և միջին հայերենի միջև, մի կողմից, և բարբառների ու միջին հայերենի միջև, մյուս կողմից:

Այս հարցերը պարզաբանելուց և լուծելուց հետո միայն հնարավոր է հստակորեն որոշել միջին հայերենի շերտը ժամանակակից հայերենի բառապաշարում:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում միջին հայերեն բառերի շերտն են կազմում հիմնականում բնությանը, մարդկային գործունեությանը և հարաբերություններին, ընտանիքին, զանազան պաշտոնների, զբաղմունքների, արհեստների, արվեստին ու կրթությանը, կրոնին, հագուստեղենին, ուտելիքին, բուսական և կենդանական աշխարհին վերաբերող բառերը:

Ժամանակակից հայերենի գրական և գրականության լեզվի բառային կազմի մեջ մուտք գործած միջին հայերեն բառերից կարելի է հիշատակել՝ ալոն, բաժ, բովել, բուլբ (սրունք), գաբա, գաշ, գոց, գշիբ (ծակող գործիք), դուկատ, թոկ, լավաշ, խավիժ, խոստակ (ավատ), ձես, կարդինալ, կաֆա (բանաստեղծության

—254. Մ. Աղաբաջյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 231—235, 320—323: Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 120—121: Մ. Մուրադյան, Բառագիտություն (Ակնարկներ միջին հայերենի պատմության), Երևան, 1972, էջ 169—236:

<sup>30</sup> Տե՛ս Մ. Մուրադյան, Նշվ. աշխատ., էջ 169—236:

տեսակ), կեն, կոթ, հար, հարսանիք (կեղծ կարմրուկ), հաշիշ, հեֆիմ, հիկա, հուա, մարկիզ, մարկ, մելիֆ, մունեռիկ, մաշիկ, մշուշ, նուպա, շեմա (արև), պարոն, ասնդա, վեզիր, փնթի, փոցխ և այլն:

Միջին հայերենից են անցել հատկապես բուսական աշխարհին վերաբերող զանազան անուններ՝ ինչպես՝ ազատդախտ, ակիր (բաղշտակ), արծպա, ազարիոն, գրիշկ, գինի, եղբեանի, լալա, լալագար, խաղթուք, կակիթրակ, մանդանակ և այլն:

Ժամանակակից հայերենի ժողովրդագիտական լեզվում տարածված պետք է համարել միջին հայերենի հետևյալ բառերը. ակոա, արգատ, բլուզ (վերնաշապիկ), դամ (ուռկան), գզիր, զուրգ, գազ (արշին), գավ, գիծ, գրդակ (կլոր հաց), դախ (աղաձիհի), զոխ, ժուկ (ժամանակ), լակ, լաթ, լաշակ, իան, խավար (շափի միսվոր), խգար, խեչակ, խշուր, խանչալ, խալի, խալիչա, խաֆան (սուլթան), խուլինջ (փորացավ), խոշապ (օշարակ), լվեզ (մողես), կխաու (մորեխ), կոծիծ, կտրին, կոտոշ, հարհանդ, հիմա, հոթ (կտորեղեն), ծայր, նմուտ, նաղ, յախու, նան, մաթ (դոշաթ), մլուկ, մզբել, մղլակ (դոսն փակ), մանտեսի, շվաֆ, պլիկ (մանր դրամ), պուլիկ, ջոջ, ոսնչպար (հողագործ), սինի, վանք (թարախ), վոլիկ, ցաֆան, փաղիշան, փեշ, ֆով (մոտ), ֆոշ, ֆեղխուղա և այլն:

Այս կարգի բառերի որոշ մասը հասարակաբանություններ և գոհակարանություններ են, դիտվում են անգամ գավառաբանություններ և բարբառաբանություններ և այդ իմաստով դուրս են մնում գրական լեզվի բառային կազմից, ինչպես, օրինակ՝ բազազ, բին (պոռնկորդի), բշտել (կոպտել), դուֆան, ժու (խակ), ժուկ (ժամանակ), լայնդ, կուաթ (ազոսվ), հալ, հալալ, շեթ (խելագար), շեֆ, նաղդ (կանխիկ), փարդա (վարագույր) և այլն<sup>31</sup>:

Հիշյալ բառերի զգալի մասի մուտքը հավանաբար կատարվել է բանավոր ճանապարհով, հայ բարբառների միջոցով, բարբառներ, որոնք գոյակցում էին միջին հայերենին:

ՅՂ Ռաբրաուային բառեր: Հայոց գրական լեզվի բառապաշարում կարելի է առանձնացնել բառեր, որոնք գործածության ավելի սահմանափակ շրջանակներ ունեն: Դրանք հայերեն տասնյակ բարբառների բառերն են:

Մկգրունրոն բարբառային ոչ բոլոր բառերն են մտնում գրական լեզվի բառապաշարը: Այդ հատկապես վերաբերում է գրաբարյան բառերի բարբառային հնչյունափոխված ձևերին՝ դրաբար-

յան բառերի բարբառային հնչյունական տարբերակներին: Ինչպես, օրինակ՝ մօկնը (մուկ(ն)), խաց, հօց (հաց), հէր, խէր, հար (հայր) և այլն: Այդ տեսակետից ժամանակակից հայերենի համար որևէ արժեք չեն ներկայացնում նաև այլևայլ լեզուներից (առանձնապես անելյան լեզուներից) կատարված բարբառային փոխառությունները: Այդ կարգի բառերի մեծ զանգվածից ժամանակակից հայ գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարն են մուտք գործել խիստ սամանափակ քանակով բառեր և հատկապես այնպիսիները, որոնց համանշանակներն ինչ-ինչ պատճառներով չեն կազմվել կամ չկան (օր. ջան, յոլա (գնալ) և այլն):

Գրական լեզվի բառապաշարը լրացնելու գործում այլ արժեք են ներկայացնում այսպես կոչված գավառական բառերը:

ա) Գավառական են կոչվում մեծ մասամբ հին կյանքը, կենցաղը, առտնին հարաբերությունները ցույց տվող, գանազան զբաղմունքներին, գյուղատնտեսական գործիքներին, հին պաշտամունքին, հավատալիքներին, ծեսերին, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհին վերաբերող, այլևայլ հասկացություններն անվանող բառերը: Իրենց հնությամբ դրանց գերակշռի մասը ամենայն հավանականությամբ գրաբարյան շրջանին է վերաբերում, թեև մեզ հասած գրաբարյան գրավոր հուշարձաններում այդ կարգի բառերը չեն արձանագրվել. ինչպես, օրինակ՝ ազապ, ախուր, աղամամերկ, աղամուրդի, բանջար, դարսել, դեղնուց, դևսիտ, ժածիկ, իլիկ, իբարանցում, լինգ, լգար, լուլիկ, լուսնկա, խելաո, կոանել, հավկուր, հաղարշ, հավկիթ, հեշտ, հենց, հիմա, մալանշ, մոշ, մոշի, մուզ, նօրելուկ, շիտակ, պատառ և այլն:

բ) Գավառական բառերի մի փոքր մասը գրաբարյան բառերի հնչյունափոխված ձևերի հետևանքով առաջացած նոր բառեր են. ինչպես՝ արցունք (գրբ. արասուք), էլ (գրբ. այլ), էտել (գրբ. յոտել—հատել, կտրել), իրիկուն (գրբ. երեկո), նամփա (նանապարհ), պաս (պահ) և այլն:

գ) Գավառական բառերի մյուս մասն էլ գրաբարյան բառերի՝ բարբառներում ձևոր բերած նոր իմաստներն են ներկայացնում. ինչպես՝ սովորել (ուսանել), կարգալ (ընթեռնել), մեռել (դի, դիակ), նար (հնար, միջոց), առնել (զնել, տիրել, սկսել), դեղնուքյուն (դեղնախտ, հիվանդություն), իշխան (ձուկ), ծիրանի (ծառ), ծիծ (ստինք), ածել (լցնել, նվազել, ձու դնել), ալարել (ծուլանալ), աղոթարան (առավոտ կանուխ, գրբ. աղոթատեղի), անբան (անգարծ, գրբ. բանկանություն շունեցող, անխելք. անխոս, մուկ) և այլն:

դ) Գավառական են կոչվում նաև բնիկ (գավառական) և

<sup>31</sup> Հմմտ. Մ. Մուրադյան, Նշվ. աշխատ., էջ 169—296:

փոխառյալ բառերով բարբառներում կազմված բաղադրյալ բառերը. ինչպես՝ լակաման, լականալ, լակել, գյուլխառով, ծնկաշոփ:

Գավառական բառերի որոշ մասը բնդհանուր է միջին հայերենի հետ: Ինչպես, օրինակ՝ լաթ, լավաշ, խավիժ, իլեզ, նարսանիք, նան և այլն: Այդ կարգի բառերի միջին հայերենին պատկանելը պայմանական է: Գրանք միջին հայերենին են վերաբերում միայն այդ լեզվի գրավոր հուշարձաններում առաջին անգամ հիշատակված լինելու կապակցությամբ, թեև այդ բառերը իրավամբ կարող են որևէ բարբառի սեփականությունը լինել և համարվել գավառական:

Բարբառային (գավառական) բառերի մուտքը գրական լեզվի բառապաշարը կատարվել և կատարվում է հետևյալ ուղիներով.

ա) Ժամանակակից հայոց գրական լեզուն, կազմվելով բարբառային հիմքի վրա, քերականական, հնչյունաբանական համապատասխան իրակությունների հետ ժառանգել է նաև բարբառային բառապաշարի որոշ մասը և հատկապես այն բառերը, որոնց համագործնությունը շեն արձանագրվել գրաբարում և միջին հայերենում:

բ) Բարբառային (գավառական) բառերը հետագայում գրական լեզու են սկսում թափանցել խոսակցական լեզվի շնորհիվ:

գ) Բարբառային բառերի գրական լեզու թափանցելու մյուս ուղին գեղարվեստական գրականության մեջ այդ կարգի բառերի գործածությունն է՝ գեղարվեստական պատկերավորման, արտահայտչական միջոցների, հերոսների կերպավորման և միջավայրի կոլորիտ ստեղծելու նպատակով:

դ) Եվ, վերջապես, բարբառային բառապաշարը ժամանակակից հայերենի գիտատեխնիկական տերմինաբանության ազդուրներից մեկն է. այդ կարգի բառերը տերմինացման շնորհիվ մուտք են գործում գրական լեզվի բառային կազմը:

Ժամանակակից հայ գրական լեզվում բարբառային շերտը կազմող բառերը գործածության տեսակետից կարելի է բաժանել երեք խմբի.

ա) Առաջին խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք ամբողջապես մերվել, ձուլվել են գրական բառապաշարին, կազմելով նրա անկապտելի մասը: Նրանք ամենօրյա և անսահմանափակ գործածություն ունեն: Այդ կարգի բառերը ծագումով միայն կարելի է բարբառային համարել: Նման բառերից կարելի է հիշատակել՝ արտառոց, ափուր, գովական, գործարար, հավաբույն, հավկուր, հարթարած, հենց, մալանչ, նախապան, նորելուկ,

դարմանագող, դարսել, քանապուր, բործ, կոանել, տարիավար, տնտնալ, փոշեկալել<sup>32</sup> և այլն:

բ) Հաջորդ խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք դեռևս ամբողջապես չեն ձուլվել գրական լեզվում, և բարբառային երանգն, այնուամենայնիվ, զգալի է թե՛ կազմությանը, թե՛ իմաստով և թե՛ ոճական կիրառությամբ, ինչպես, օրինակ՝ ածմծել (խարխափել), ակոկել, աղբիկանես, աղջկատեր, աղջկատուն, ամանել, աման-շաման, անադուհաց, աշխուսանք, աշխածակ, ասեկոսե, բածինք, բզրբել, բղավել, բոթել, գանել, գշել, դմբ, դնգատել, երեսբաց, երեսով, կույց, թելպանիր, թերխաշ, ժածիկ, իշաբեռ, իրասածի, լայնսիրտ, լավամարդ, լիլխալ, լիկել, լիկած, լրխլրիկալ, լպտել, խնամաբար, խունուն, խունջիկ-մունջիկ, ծալպակաս, ծակաշփ, ծամծմել, ծլկել, ծկբակել, կլգարուկ, կուրբունուկ, կոնոն(ք), հանաք, հարսնատեր, հրես, հրեն, հրեղ, ձմրոնուկ, դծվժալ, դծվժոց, հղնղան, ճուլ, մաթ, մածնաբրդուն, մարդանաշիվ, մարդամեշ, մարդատեղ, մարդավարի, մեռելոց, մեկուհար, մոգոնել, մոթալ, նեղիկ, շատվար, շեկիկ, շնթոկել, շշպոել, շաշանակ, շարաշփ, շորագուլիս, պարգերես, պոզ, պոզավար, պոզանարել, սղկել, սմբել, վատամարդ, վերջինեկ, տակետակ, տկճոք, տխիլ, տկոշիկ, տնաշեն, տնաբանդ, տնաղել, տնփեսա, ցփնել, ուշունց, փեսատես, փոխնորդ, փոխս (ընկնել), փոշմանել, փսոռ(ել), քած, քաշովի, քթկալ, քեռակիկ և այլն:

Սեռանձին խումբ են կազմում բացառապես այն բառերը, որոնք իրենց իմաստներով և ոճական կիրառության այլևայլ առանձնահատկություններով կանգնած են գրական լեզվի եզրին, մտնում են խոսակցական բառապաշարի մեջ: Գեղարվեստական գրականության մեջ այդ կարգի բառերը գործածվում են միջավայրի բներանց (կոլորիտ) ստեղծելու կամ ծառայում են իբրև պատկերավորման-արտահայտչական միջոց՝ հերոսների կերպավորման համար. ինչպես՝ ակրատ (թեթև նախանաշ), ածաման, ակնառ, աղոթարան, անեկ, անեղ (սայլի մաս), ապի (ափի, ափ), բարուր (բալուլ), բրիշակ (ավերակ), գլուզ (փաթիլ), զոնչ, զոնչո, դանդալոշ, դարձվոր, դոր (կարգ, հերթ), դրնդեգ, երկունգոփս, զանգուլակ, էփի (օր), քաթալոշ, քափան, քլոզել, քոնթորալ, քրվոշ, ժածփ, լաղոզել (լղոզել), լկահաշ, լոխ, լոփ (քալ), լուլ (գինով), խախալ (մաղի տեսակ), խզակոթ, խոխա (երեխա), կզնվել, կինարմատ, կնիկարմատ, կուլտ, կուպալ, հալավ, հան, հաշքոզ, հիծ, հիծ ու պիծ, հլրուր, հլուրկ, հլուրթի, հկոկ, հոթոել,

<sup>32</sup> Հմմտ. Ն. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 480—481:



նուռ, մամե, մարե, մերի (անտառ), մթնածոռել, շիկնի, շալթուկ, պատնառավոր, ջախ, ջիկի, ջամուկ, տակ (ճակնդեղ), տկլոգ, ուգվոր, ցիբո, փորփոշ, օնոբ և այլն:

4. Արևմտահայերեն բառեր: Չձայ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով հայոց գրական լեզուն ունեցավ իր երկու ճյուղավորումները՝ արևելահայ և արևմտահայ: Առաջինը կազմավորվեց Արևելյան Հայաստանում, երկրորդը՝ Արևմտյան Հայաստանում: Արևելահայ գրական լեզուն այժմ Սովետական Հայաստանի պետական, ազգային լեզուն է, իսկ արևմտահայ գրական լեզուն Արևմտյան Հայաստանի վերացումից հետո փաստորեն դարձել է սփյուռքի հայ զաղթօջախների գրական լեզուն: Արևմտահայերենն, այսպիսով, այժմ աշխարհի տարբեր մասերում ցրված հայ ժողովրդի խոսակցական լեզուն է, նրա հաղորդակցման միջոցը: Բացառությամբ է կազմում Իրանի հայկական գաղութը, որտեղի գրական լեզուն արևելահայերենն է: 1

Արևմտահայերենով աշխարհի համարյա բոլոր մայրցամաքներում շարունակվում է ստեղծվել գեղարվեստական, հրապարակախոսական, մանկավարժական հարուստ գրականություն: Արևմտահայերենով է կատարվում հիմնականում Պոլսում, Մերձավոր Արևելքում, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում և այլուր գործող հայկական դպրոցների ուսուցումը:

Գրական լեզվի այդ երկու ճյուղավորումների առանձնահատկությունն այն է, որ շնչած դրանց միջև գոյություն ունեցող տարբերություններին, մեր ժողովրդի երկու հատվածներն էլ հաջողությամբ հաղորդակցվում են լեզվի այդ երկու տարբերակների բանավոր և գրավոր ձևերով: Հայ գրական լեզվի այդ երկու ճյուղերի ներկայացուցիչների համար նույն նշանակությունն ու արժեքն ունի ինչպես արևելահայերենով, այնպես էլ արևմտահայերենով ստեղծված գրականությունը: 1

Ինչ վերաբերում է գրական լեզվի այդ երկու տարբերակներին բառապաշարին, ապա այդ մարզում ընդհանրություններն այնքան մեծ են, որ կարելի է անգամ ուշադրություն չդարձնել մասնակի տարբերությունների վրա: Այդ ընդհանրությունները բխում են, անշուշտ, գրանց սնող միևնույն աղբյուրներից՝ գրաբարից, միջին հայերենից, հայ բարբառներից, ինչպես նաև բառակազմական նույն օրենքներից, որոնցից հավասարապես օգտվում են գրական լեզվի այդ երկու տարբերակները: Այդ է պատճառը, որ միևնույն հասկացության համար կերտված նորակազմ բառերը

հավասարապես մատչելի են և հաճախ ընդունվում են և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում:

Ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարում արևմտահայ գրական տարբերակի բառերի շերտը որոշելու և պատկերացնելու համար անհրաժեշտ է առանձնացնել և ներկայացնել բառերի և բառիմաստների գործածության այդ տարբերություններն ու ընդհանրությունները հիշյալ լեզուներում<sup>33</sup>:

ա) Միայն արևմտահայերենում գործածվող բառեր, որոնք անցել են ժողովրդախոսակցական լեզվից, բարբառներից և այլն, անսովոր են արևելահայերենին:

ակոա (ատամ), աղել (լավ), աղջ(կ)նակ (փոքր աղջիկ), աղվոր (գեղեցիկ, սիրուն), աճապարել (շտապել), այսպանել (հանդիմանել), աճանկ (այնպես), ասանկ (այսպես), ատանկ (այդպես), ատեն (ժամանակ), ատեն-ատեն (երբեմն, երբեմն, ժամանակ առ ժամանակ), ասիկա (այդ), աւտուալ (շտապել), դաշնակ (դաշնամուր), գեշ (վատ), ընթերցարան (դասագիրք), էրիկ, էրիկմարդ (տղամարդ, ամուսին), լմնալ (ավարտվել), լմնցնել (ավարտել), խպնել (ամաչել), խպնոտ (ամաչկոտ), կաղանդ (նոր տարի), կանչվառել (գոռոզալ), հող (այդտեղ), հոն (այնտեղ), հոս (այստեղ), հրել (մղել), ճանչվոր (ծանոթ), պագ (համբույր), պագնել (համբուրել), պգտիկ (փոքր), պգտիկություն (փոքրություն, ստորություն), պլլուիլ (փաթաթվել), պոռալ (կանչել, աղմկել), սահմոկել (սարսափել, փշաքաղվել), սառնանույշ (պաղպաղակ), տապլիկտիլ (թավալվել), փրցլիմբ (լորձուկ), փատել (ուպացուցել), ֆով (մոտ) և այլն,

բ) Ընդհանուր հայերեն այնպիսի բառեր կամ բառերի այնպիսի իմաստներ, որոնք ափելի շատ գործածվում են արևմտահայերենում. ազի (պոչ), ալտ (կեղտ), աղտոտ (կեղտոտ), ալբել (փշացնել, ապականել), առիմբել (գերել, դյուքել), ապառավալություն (անփտանգություն), աճաբար (ձեռնածու), աճաբարություն (ձեռնածություն), ամանո (նոր տարի), բաղդատել (համեմատել), բանել (աշխատել), գոց (փակ), գոցել (փակել), երկվայրկյան (վայրկյան), գզլի (հրապուրել, գերել), կոճակ (թիկունք), հանձնախումբ (հանձնաժողով), ներմակ (սպիտակ), ձգել (գցել), պաղ (սառը), պաղարյուն (սառնարյուն), պաղանձավ

<sup>33</sup> Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, 1951 թ., էջ 563—568:

(քարանձավ), պատկան (համապատասխան), վայրկյան (րոպե),  
ֆակել (բանալ) և այլն:

գ) Արևմտահայերենում կյանքի կոչված գրաբարյան ալեպիսի  
բառեր, որոնք արևելահայերենում չեն գործածվում կամ հազվա-  
դեպ են գործածվում. ազազուն (չորացած, ճոզած), ակաղձուն (լի-  
քը, լեցուն, լեփլեցուն), այր (տղամարդ), կաղամար (թանաքա-  
ման), մելան (թանաք), պոստել (հոնքերը կիտել), վառնգի (որով-  
հետև), տարատ (անդրավարտիք), ուծանալ (մի բանից սառչել,  
օտարանալ), ցփսի (շալ), ֆայո (վզնոց, մանյակ) և այլն:

դ) Միայն արևելահայերենին հատուկ ընդհանուր հայերեն  
բառեր, որոնք անցել են ժողովրդախոսակցական լեզվից կամ  
բարբառներից, բայց չկան արևմտահայերենում. գազազել (կա-  
տաղել), գարգանդ (սարսափ), քիսել (եփել), քոկ (չվան), իսկի  
(բնավ), լուսամուտ (պատուհան), խունանալ (խամբել, դուխը  
նետել), կածան (նեղ ճանապարհ), կուտ (թև), կերք (կարգ), շոգ  
(տաք), շուտ տալ (դարձնել), պակել (փրցնել), պոռչ (շրթունք),  
պրծնել (աղատվել, վերջանալ), սարֆել (հորինել, շինել), տիկնիկ  
(խամաճիկ), տկլոր (մերկ), ֆորոց (գնդասեղ) և այլն:

ե) Միևնույն բառի հնչյունական-ուղղագրական տարբերակ-  
ներ. արևմտահայերենում բառի մեջ ձայնավորի կամ բազմաձայնի  
սղոմ, բառի հնչյունափոխված ձևեր և այլն. ամաշել—ամշնալ,  
անել—ընել, արքնանալ—արքննալ, առավոտ—առուտ, ասե—կո-  
սե—ըսի—ըսավ, դադարել—դադրիլ, էժան—աժան, էլ—ալ, ընկ-  
նել—իյնալ, բալանել—բալլել, բֆել—բֆնել, բուֆնել, լինել—ըլ-  
լալ, լցնել—լեցնել, ծալել—ծալլել, ծախս—ծախֆ, կակղացնել—  
կակուղցնել, կատաղել—կատղիլ, կաբենալ—կրնալ, կողպել—կըղ-  
պել, կարչել—կորսվիլ, հագնվել—հագվիլ, հիմֆ—հիմ, հոզս—հոզ,  
հանաչել—հանչնալ, մեծանալ—մեծնալ, մենակ—մինակ, մեկ-  
մեկ—մեյ-մեկ, մեն-մենակ—միսմենակ, մրսել—մսել, շեմֆ—  
սյամ, շվաֆ—շուֆ, պաշել—պագնել, պաս—պահֆ, սպանել—  
սպաննել, սովորել—սորվիլ, վախենալ—վախնալ, վայր—վար,  
ուղարկել—ղրկել, ֆայլել—ֆալել, ֆենլ—ֆնանալ և այլն:

զ) Բառեր, որոնք գրական լեզվի երկու ճյուղավորումներում  
տարբեր իմաստներ ունեն. իմանալ—գիտենալ (արևելահայ.), լսել  
(արևմտահայ.), լաք—կեղտոտ (չոր, արևելահայ.) և հագուստ  
(արևմտահայ.), հայտնի—եջանավոր (արևելահայ.) և ակնեւ  
(արևմտահայ.), հով—զով (արևելահայ.) և ֆամի (արևմտահայ.),  
մեջֆ—քիկունֆ (արևելահայ.) և գատկատեղ (արևմտահայ.), մտիկ  
անել—դիտել (արևելահայ.) և լսել (արևմտահայ.), շուր—հագուստ  
(արևելահայ.) և կեղտոտ շորի կտոր, լաք (արևմտահայ.), պղտը-

տել—շուտ տալ (արևելահայ.) և գրասնել, ման գալ (արևմտահայ.),  
վայրկյան—1/60-երոդական ռպե (արևելահայ.) և ռպե (արևմ-  
տահայ.):

է) Միևնույն հասկացութային համար տարբեր բառերի գոր-  
ծածություն՝ գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակ-  
ներում (այդ թվում՝ նաև նորակազմ բառեր). այնուամենայնիվ—  
ասուր հետ մեկտեղ, ափսե—պնակ, բաղրիչան—սմբուկ, բանվոր—  
գործավոր, բանտ—բոնաբան, բղավել—պոռայ, գազար—ստեպ-  
դին, գործադուլ—բանդուլ, գործարան—գործատուն, գրչահատ—  
գմելի, դեղատոմս—դեղագիր, դեղատուն—դեղարան, դուրս գալ—  
ելլել, ընթերցարան—ընթերցատուն, բանկ—սուղ, քվալ—երկիլ,  
լիք—լեցուն, ծովային նավատորմի—ծովուծ, ծրար—պահարան,  
կուլ տալ—կլլել, կաշիլ—փակչիլ, կոանալ—ծոխլ, կտուր—տանիֆ,  
համար—բիվ, հանգչել—մարել, հաստոց—գործասեղան, հար-  
բած—գինով, հարևան—դրացի, հացթուխ—հացագործ, հեծանիվ—  
հեծելանիվ, հեռախոս—հեռաձայն, հեշտ—դուրիհե, դուրավ, հե-  
ռուսացույց—հեռառեսիլ, հյուսիսափայլ—հյուսիսայգ, ձու—հավ-  
կիթ, մարդ—էրիկ, մեխ—գամ, մեխել—գամել, մեջֆ—կոնակ,  
նավթ—ֆարյուղ, ներֆե—վար, շեմֆ—սյամ, շոկ—գատ, վաղ—կա-  
նուխ, վեր կենալ—էլլել, վերցնել—առնել, վայրկյան—երկվայր-  
կյան, վիրահատություն—գործողություն, տղա—մանչ, ռպե—  
վայրկյան, ցած, ցածր—վար(ք), ցույց տալ—ցուցանել, փակ—  
գոց, փակել—գոցել, փուլ գալ—փլիլ, ֆաղցած—անոթի, ֆաղցա-  
ծանալ—անոթենալ, ֆամի—հով, ֆեռի—մորեղբայր, օղային նա-  
վատորմ—օղուծ և այլն:

ը) Երբ օտարազգի բառերի փոխարեն արևմտահայերենը  
ստեղծում է նոր բառեր կամ համապատասխանեցնում հները, իսկ  
արևելահայ տարբերակը հիմնականում փոխառություններ է կա-  
տարում. ակադեմիկոս—կանոնորդ, պրոֆեսոր—ուսուցչապետ,  
արտուակցիոնիզմ—վերացապաշտություն, արտուակցիոնիստ—  
վերացապաշտ, ավտոմոբիլ—ինֆանշարժ, ատոմ—հյուսիլե, գինեկո-  
լոգ—կնախտաբան, գերբ—պետնիշ, դեմագոգ—ամբոխավար, դե-  
մագոգիա—ամբոխ(ա)վարություն, բունել—փապուղի, ժյուրի—  
մրցատյան, իմպերիալիզմ—կայսերապաշտություն, կոմպոզիտոր—  
երգահան, կոմունիզմ—համայնավարություն, կոմունիստ—համայ-  
նավար, կապիտալիզմ—դրամատիրություն, կաթինետ—դանիլե,  
կինո—շարժապատկեր, շարժանկար, ռադիո—ձայնասփյուռ, ռեա-  
լիզմ—իրագաշտություն, ռեալիստ—իրապաշտ, սուրռեալիզմ—գե-  
րիպաշտություն, տանկ—հրասայլ, տուրիստ—գրասաշրջիկ, տու-  
րիզմ—գրասաշրջություն և այլն:

թ) Երբ օտարազգի բառերի դիմաց նույն հասկացութեան համար արևելահայերենն ու արևմտահայերենը տարբեր բառեր են կիրառում. գնացք—կառախումբ (ПОЕЗД), շոգեֆարշ—վայրաշարժ (ЛОКОМОТИВ), կինոնկար—շարժանկար, շարժապատկեր, հեռու-տաքայն—հեռառեսիլ (ТЕЛЕВИЗОР), հարդրազարդ—խոսնակ (ДИКТОР) և այլն:

Օտարազգի բառերի վերոհիշյալ արևմտահայերեն համադր-ներից շատերն այժմ էլ մոտք են գործում արևելահայերեն գրա-կան լեզվի բառապաշարը: Այդ կարգի բազմաթիվ բառեր դեռ 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ արևմտահայ հեղինակների կազ-մած դասագրքերի ու բառարանների շնորհիվ սկսեցին թափանցել և հաստատուն տեղ գրավել արևելահայ գրական լեզվի բառային կազմում. ինչպես, օրինակ՝ ամխածին, ջրածին, թթվածին, ախտա-բան, ախտաբանություն, մանրէ, մանրէաբանություն և այլն:

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱԾԱՐԸ ԸՍՏ ԱԿՏԻՎ ԵՎ ՊԱՍԻՎ ԿԱԶՄԻ

Բառային հիմնական ֆոնդի և բառային կազմի մեջ կատարվող փոփոխություններն ու փոխազդեցությունները պայմանավորված են գլխավորապես լեզվի զարգացման օբյեկտիվ գործոններով: Մինչդեռ գործուն և ոչ գործուն բառապաշարները սուբյեկտիվ կար-գեր են: Դրանց գոյություն փաստը, ինչպես և փոխազդեցություն-ներն ու դրանցում կատարվող փոփոխությունները անմիջականորեն առնչվում են լեզուն կրողների, լեզվական հանրության հետ: Գործուն (ակտիվ) բառապաշարի մեջ մտնում են ամենօրյա գործածական այն բառերը, որոնց իմաստները հասկանալի են տրվ-յալ լեզվով խոսող մարդկանց հանրությանը: Դրանք այն բառերն են, որոնք որևէ լեզվով խոսողը (տվյալ դեպքում հայերեն խոսողը) ոչ միայն հասկանում, այլև ակտիվ կերպով գործածում է իր ամեն-օրյա հաղորդակցման ընթացքում: }

Ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի հիմնական, ան-հրաժեշտ մասը (մոտավորապես այն, ինչ համարվում է հիմնական բառաֆոնդ) այս կամ այն չափով ընդհանուր է ակտիվ բառապա-շարի հետ:

Ոչ Գործուն (պասիվ) բառապաշարն իբրև սուբյեկտիվ կարգ, տար-բեր է հասարակական առանձին խմբերի, անգամ տարբեր անհատ-ների համար: Նրա ծավալը և բնույթը կախված է անհատի կրթու-թյան և ընդհանուր զարգացածության մակարդակից, մասնագիտու-

թյունից և սուբյեկտիվ այլ հանգամանքներից: Մյուս կողմից, հա-յերեն խոսողների այս կամ այն խմբերին, իրենց մասնագիտութեա-նը կամ զբաղմունքին համապատասխան՝ հատուկ են որոշ բառեր ու արտահայտություններ, որոնք նույնպես մտնում են նրանց գոր-ծուն բառապաշարի մեջ: }

Ոչ գործուն բառապաշարի մեջ մտնում են այն բառերը, որոնք տվյալ լեզվով խոսողը (տվյալ դեպքում հայերեն խոսողը) հասկա-նում է, դրանց իմաստները կարող է հասկանալ կամ գլխի ընկ-նել համատեքստից: Այդ բառերը, սակայն, նա կարող է ընդհանրա-պես չգործածել կամ սակավ գործածել: Այդ կարգի բառերից շա-տերը մարդու գիտակցության մեջ երևան են գալիս կամ հիշվում են ընթերցանության ժամանակ կամ լսվում են ուրիշից: Դրանք հիմնականում հասկանալի, ծանոթ, բայց խոսողի կողմից ամենօր-յա հաղորդակցման ժամանակ չգործածվող բառերն են: }

Ոչ գործուն բառապաշարն են կազմում այն բառերը, որոնք տվյալ անհատի կամ հասարակական խմբի ամենօրյա, ակտիվ բառապաշարի մեջ չեն մտնում. դրանք կարող են վերաբերվել նրանց անծանոթ մասնագիտական տերմինաբանությանը կամ կա-րող են արտահայտել հուզարտահայտչական տարբեր գունավո-րումներ, ինչպես նաև ունենալ հնացածության ցայտուն արտա-հայտված գունավորումը (այս կամ այն բառերը նշանակող հասկա-ցությունների հնանալու կապակցությամբ վերջիններս մահացման եզրին են գտնվում և լեզվում հազվադեպ գործածություն ունեն): Մյուս կողմից այդ կարգի շատ բառեր իրենց նորությունը լեզվում դեռևս քաղաքացիության իրավունք ձեռք չտրելով և լայն ճա-նաչման շարժանանալով՝ ամենօրյա գործածություն չունեն: Հատ-կանշական է նաև այն, որ մշտական փոխազդեցության և փոխ-լրացման անընդհատ փոփոխման մեջ գտնվելու կապակցությամբ գործուն և ոչ գործուն բառապաշարների սահմանները նույնպես փոփոխական են:

Ոչ գործուն (պասիվ) բառապաշարը ստորաբաժանվում է եռ-արբանությունների և հնարանությունների: }

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

Նորաբանություն է կոչվում այն բառը կամ դարձվածային միավորը, որ կազմվում է նոր հասկացություն արտահայտելու

\* Հայերեն նորաբանություն բառը կազմված է օտար НЕОЛОГИЗМ բառի նմանազությամբ (հուն. neos—նոր—logos—բառ, հասկացություն),

կամ հոր առաւելա, երևայթ, հատկանիշ և այլն նշանակելու համար: Բ

Նորաբանութիւնները լեզվում հիմնականում ստեղծվում են մարդու հասարակական գործունեության ընթացքում նոր հասկացութիւններ երևան գալու կապակցութամբ: Նորաբանութիւնների մեջ են առնվում նաև նորագույն փոխառութիւնները: Ծարբերակվում են՝ բառային նորաբանութիւններ և իմաստային նորաբանութիւններ: Բ

Ի բառային նորաբանութիւնները իրենց արտաքին՝ հնչյունական պատշաճով և իմաստով բոլորովին նոր բառեր են, որ առաջին անգամ են գործածվում լեզվում: Իմաստային նորաբանութիւնները լեզվում արդեն եղած բառերի նոր ձևեր բերած իմաստներն են: Բ

Նորաբանութիւնների հոսքի մասին ժամանակակից հայերենում ավելի հստակ պատկերացում կազմելու համար օգտակար կարող են լինել բառարանագրութիւն տվյալները: Գրաբարի բառապաշարն ամփոփող «Նոր հայկազյան բառարանը»<sup>34</sup> պարունակում է մոտ 50 հազար բառ, Հ. Դաղբաշյանի «Հայ-ռուսերեն բառարանը»<sup>35</sup>, որն ընդգրկում է 70 հազար բառահոգոված, գրաբարի համեմատութամբ մոտ 20 հազար նոր բառ է պարունակում: Ստ. Մալխասյանցի բառահատոր հայերեն բացատրական բառարանը<sup>36</sup>, որի բառացանկը մոտ 120 հազար բառ և դարձվածքային միավոր է, նախորդին գերազանցում է մոտ 40 հազար բառով: 60—70-ական թվականներից հետո լույս տեսած «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը»<sup>37</sup>, «Ժամանակակից հայոց լեզվի բառարանը»<sup>38</sup>, էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»<sup>39</sup> Ստ. Մալխասյանցի բառարանի համեմատութամբ առաջին անգամ արձանագրել են 30—40 հազար նոր բառեր և հազարավոր նոր իմաստներ: Ի վերջո, Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանը»<sup>40</sup> պարունակում

է 152 հազար բառ, որի 1/3-ը չի արձանագրվել Ստ. Մալխասյանցի բառարանում: Նշված բառարաններում առաջին անգամ արձանագրված բառերի գերակշիռ մասը նորաբանութիւններ են:

Նորաբանութիւնների էական առանձնահատկութիւնն այն է, որ նրանք անմիջականորեն կապված են նոր հասկացութիւնների հետ: Լեզվի դերը տվյալ դեպքում այդ կարգի հասկացութիւնների համար պարտադիր կերպով իր համապատասխան նշանը ստեղծելն է: Այդ նոր բառերը կազմվում են լեզվի ներքին միջոցներով, բառակազմական գործող կազապարներով:

Նորաբանութիւնների մյուս առանձնահատկութիւնն էլ այն է, որ նրանք վերաբերում են կյանքի բոլոր բնագավառներին և այդ պատճառով էլ մեծ է նրանց արժեքը և կշիռը բառապաշարի թարմացման և հարստացման գործում:

Լեզվի ներքին միջոցներով, բառակազմական գործող կազապարներով են առաջացել հայերենի հազարավոր նորաբանութիւնները կամ նորակազմ բառերը:

Միայն վերջին տասնամյակներում, օրինակ, տիեզերական տարածութիւնների հետազոտման կապակցութամբ սկսել են գործածվել նորակազմ տասնյակ բառեր, որ կազմվել են հայերենում. ինչպես՝ տիեզերակայան, տիեզերագնաց, տիեզերագնացություն, տիեզերանավ, աստղանավորդ (արևմտահայերենում), երկրամեծ, երկրամեռ, տիեզերափոշի, լուսնագնաց, լուսնախցիկ, լուսնաձող, լուսնապար, լուսնամեծ, լուսնանավ, լուսնատար, լուսնաճեղ, լուսնակենտրոն, լուսնածածկույթ, լուսնագրաստեֆ, լուսնացույց, լուսնաճշուր, լուսնաբար, լուսնափոշի, լուսնաբշտով, լուսնաստվեր, լուսնէջֆ և այլն:

Հայերենի բառակազմական միջոցներով կազմվող նորաբանութիւնները վերաբերում են կյանքի բոլոր բնագավառներին և հատկապես ընդգրկում են կյանքի, կենցաղի, հասարակական-քաղաքական կյանքի, գիտութիւն և տեխնիկայի, մշակութի և արվեստի բոլոր բնագավառներն ու ճյուղերը: Կառուցվածքային-բառակազմական տեսակետից այդ նորաբանութիւնների էական առանձնահատկութիւնն այն է, որ դրանք բաղադրյալ բառեր են՝ կազմված բարդութիւն և ածանցման շնորհիվ: Օրինակ՝ աշխարհագրացում, պատվոգիր, հեռուստացույց, հեռուստադիտող, հեռուստակայան, պատմաչափ, բազմաճարկ, ազակեթել, կառուցապատել, մանրահատակ, ինֆնագործունեություն, գեղասահֆ, գեղասահորդ, հեզամարտ, տասնամարտ, հնգամարտիկ, տասնամարտիկ, մարզադաշտ, խաղավար, խաղահրապարակ, երթուղի, հանրօգուտ, ցայտադրյուր, մրցավազֆ, շարաթօրյակ, նպանուղի, ցուցանմուշ, հուշ-

34 Բառգիրք նոր հայկազան լեզուի, Կենետիկ, 1836—37.  
35 Հ. Դաղբաշյան, Հայ-ռուսերեն լիակատար բառարան, Երևան, 1944—1966.  
36 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944—1946.  
37 Ա. Սոֆիսյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967.  
38 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1 հ. 1969, 2 հ. 1972, 3 հ. 1974.  
39 Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1 հ. 1976, 2 հ. 1977.  
40 Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973.

Երեկո, մսուր-մանկապարտեզ, արտադասարանական, արտադարձ-  
ցական, արտանաստիճային, գերնշգրիտ, գերհզոր, գերակատարել,  
ճերտաշ, ճերգնել, ճամատեղություն, պահանջարկ, հաշվարկ, վար-  
չարար, խոտանարար, վազֆուլյակ, հնգամյակ, աշպինյակ, շա-  
բաթօրյակ, ստուգայց, կենցաղապասարկում, ժողկրթբաժին և  
այլն:

Փամանակակից հայերենում նորաբանությունների երևան գա-  
լը պայմանավորված է լեզվի բառապաշարի լրացման պահանջով,  
լեզվի զարգացման և կենսագործունեության թելադրանքով: Նոր  
հասկացությունների համար ստեղծվող բոլոր հաջող բառերի մեծ  
մասը լեզվում քաղաքացիության իրավունք է ձեռք բերում և մըտ-  
նում ժամանակակից հայերենի բառապաշարը:

Փամանակի ընթացքում ժամանակակից հայերենի բառերի  
հետ նրանք այնպես են մերվում, որ հետագայում դժվար է լինում  
գրանք տարբերել բառային կազմի այսպես կոչված «հնարնակ-  
ներից»: Լեզվում լայն գործածություն ձեռք բերելով՝ այդ կարգի  
բառերը դադարում են այլևս նորաբանություն լինելուց. ինչպես,  
օրինակ՝ կաթնամանուշյան, կոլտնետեսական, աշխօր, մքերակա-  
յան, իբրահիմյան, ցածրորակ, խմբակակալի» ինքնագործունեու-  
թյուն, կերպար, Կենտկոմ, Բաղկոմ, ՍՍՀՄ և այլ հազարավոր բա-  
ռեր այլևս նորաբանություններ չեն կարող համարվել: Լեզվում ամ-  
բանալուն, քաղաքացիական իրավունք ձեռք բերելուն նպաստում  
են մի շարք գործոններ՝ առաջին հերթին նոր բառերի հասարակա-  
կան պահանջը և, իհարկե, նրանց կառուցվածքային-իմաստաբա-  
նական արժանիքները:

Նորաբանություններից լեզվում քննություն չեն բռնում, լեզ-  
վում չեն ամրանում այնպիսիները, որոնք հնչյունական կազմով և  
կառուցվածքով (անբարեհնչյունությամբ, բառի երկարությամբ,  
սխալ կազմությամբ և այլն) կամ էլ իմաստային տեսակետից լի-  
արժեք չեն և տվյալ հասկացության լեզվական համապատասխա-  
նություն չեն կարող համարվել:

Միևնույն հասկացության համար հայերենում հաճախ ստեղծ-  
վում են մեկից ավելի նորակազմ բառեր: Այդ կարգի հոմանիշ  
բառերի միջև ընթացող պայքարում հազթանակում է մեկը, իսկ  
մյուսները կամ դուրս են մնում լեզվից, կամ էլ նոր իմաստ կամ  
իմաստային նրբերանգներ ստանալով՝ արդեն իբրև առանձին բա-  
ռեր հանդես են գալիս իմաստաբանական նոր համակարգում:

Իբրև բառերի առանձին խումբ նորաբանությունների մեջ  
առանձնանում են հեղինակային նորակազմությունները՝ Այդ կար-  
գի բառերը ղլխավորապես կազմվում են հեղինակների կողմից:

գեղարվեստական ստեղծագործության ոճավորման և այլ նպա-  
տակներով, որոնք, սակայն, սովորաբար լայն տարածում չեն  
գտնում և մուտք չեն գործում լեզվի բառային կազմը: Այսպես,  
Ս. Խանզադյանը ոճավորման նպատակով կազմել և գործածել է  
Եզկարես բառը: «Բրուտանոցի մուտքի մոտ դրված էր մի մեծ կա-  
րաս: Դա նման էր եզան ղլխի ... Երբեմն Մանասարը ժամերով նա-  
յում էր հնամենի եզկարասի կույր աշքին ու միտք էր անում աշ-  
խարհի բաների վրա»: Կամ՝ «Արման... մոտեցավ՝ քարին անկաթ  
արմատակալը քաշեց և մանրակրկիտ նայեց. շոշափեց որդագույն  
և որդատեսuf արմատները» (Մ. Գալշոյան, «Բովտուն»): Գ. Մահա-  
րու քննադատական հոդվածներից մեկում հանդիպում ենք լեզվա-  
շմուռնություն բառին:

Հեղինակային նորակազմությունների օրինակներ կան անգամ  
Հ. Թումանյանի երկերում.

— Հորեղբայր, Օհան, ինչո՞ւ չես ասել՝  
Իմ հերը որսի սար է ունեցել,  
Այժյամ կա էնտեղ, եղջերու, կխտար.  
Վեր կաց, հորեղբայր, տար ինձ Ռրասասր:

Բնական է, որ այս կարգի նորակազմությունները լայն տա-  
րածում չեն կարող ստանալ և իրականում դուրս չեն գալիս հեղի-  
նակի բառապաշարի սահմաններից:

Հեղինակային նորակազմությունները հատկապես շատ են  
հայերեն թարգմանվող գրականության մեջ: Օրինակ՝ կաթնաֆու-  
րիկ, ալիֆաշրջան, բուրայուղ, աղամանդախույր, պանջամբա-  
սրան, հաղթաղարձ, դիպվածախաղ, խմբեզատեղ, մեծամրջուն,  
զապանակառուփ, պննասենյակ, ծեփապատենն և այլն (Ա. Մո-  
րուա, Բալզակի կյանքը, Երևան, 1972):

Փամանակակից հայերենում այդ կարգի նորաբանությունների  
շարքը պետք է դասել նաև գիտական այս կամ այն հասկացու-  
թյան համար ստեղծվող մեկից ավելի տերմինները, որոնք նույն-  
պես հավանություն չգտնելով՝ չեն մտնում հայոց լեզվի բառային  
կազմը. օրինակ՝ տուրիզմ—գրասաշրջապայություն, գրասաշրջու-  
րյուն, աշխարհաբաղաբացի և համաշխարհաբաղաբացի (կոսմո-  
պոլիտ), բարեշրջում, բարեշրջություն, շրջափոխում (էվոլյուցիա)  
և այլն:

Հեղինակային նորաբանություններին մոտ են, այսպես կոչ-  
ված «ոճական» նորաբանությունները՝ Դրանք սեփական կամ  
խարգմանական-գեղարվեստական գրականության մեջ կազմվող  
հայերեն այն բառերն են, որոնք վերաբերում են տվյալ ժողովրդի  
պատմությանը, մշակույթին, կենցաղին՝ արտագրությունը և այլն,

որոնց համապատասխան հասկացությունները ծանոթ չեն հայերին: Օրինակ՝ Օ. Դր Բալզակի<sup>41</sup> «Մարդկային կատակերգության» միայն 5 և 7-րդ հատորներում հանդիպում ենք հետևյալ բառերին. դատաբույժ, դատագործ, գյուղագնացություն, կրոնամանչյու, բորակակալել, արծվանշան, անվկայագրյալ, նոտագագրյալ, միջնադարակ, կոմսամուր, կոմսամուրություն, բրվաման, կախակնոց, կարգան, կառադուտ, ծալագարդում, հովհարավանառ, հակալանջ, մահանաստատում, ձեղնալուսամուտ, ներհանտնետություն, վանդակափեղկ, շփակառ, վարձակառ, ուխտանվեր, վարձագին, փոխանակագիր (5-րդ հատոր), ձեղնառենյակ, դալարոց, պահակաշուն, կնածայր (մատներ), կրեոսկրե, շփակահ, մացառագորտ, ուղեկառ, աշխարհաշինարար, ընթերարքեմ, ումադին, եկամբաթուղթ, ֆեռադչիկ, պտտանվակ, արույրաթել (տաֆտա), ֆարշահինու, նշացից, նավարանտ, հարդախուրձ, ոգորահյուս (կառք), ֆաշաղանդեր, գրավագիր, ումաթուղթ, կանանարդար, ցայգասեղան, հնաշոր (կարկանդակ), կասիսոդի, գարդացցվակ, ոչխարանյուս, սյունանդրի, շփեղակառ, մարդակառ, փոստակառ, խաղապարտիա, խաղագրավ, ժառանգախաղ, նաշագանգ, բրախաղաց, արհայապան (գորագունդ), տանջանիվ, խոտոտվանադուստր և այլն (7-րդ հատոր):

Նորաբանությունը պատմական հասկացություն է: Այն, ինչ լեզվի զարգացման տվյալ փուլում նորաբանություն է համարվում, պատմական այլ շրջանում որպես այդպիսին այլևս չի դիտակցվում և չի ընդունվում: Այդ տեսակետից հատկանշական է, որ որոշ նորաբանություններ լեզվի զարգացման ընթացքում հնանում և լեզվից դուրս են մնում: Անգամ սովետական շրջանում ստեղծված նորակազմ շատ բառեր այժմ հազվադեպ գործածություն ունեն կամ պարզապես գործածությունից դուրս են մղվել և անցել են հնաբանությունների շարքը. ինչպես, օրինակ՝ նկարահան, կուսքիչ, հեղկոմ, ժողկոմ, ժողկոմատ, կլարմիր բանակային, կենտգործկոմ, և այլն:

### ՀԱՌԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերեն հնաբանություն տերմինը կազմված է αρχαιος բառի հիման վրա (ծագում է հունարեն archaios—հին բառից):

Հնաբանություն են համարվում լեզվի զարգացման տվյալ

փուլի համար հնացած, ակտիվ գործածությունից դուրս եկած բառերն ու դարձվածքային միավորները:

Հնաբանություններն ակտիվ գործածությունից դուրս եկած անպահի բառեր են, որոնք սովորաբար ընկալվում են իբրև լեզվի զարգացման ավելի վաղ շրջանի մնացուկ: Հնաբանությունները քանակապես զիջում են նորաբանություններին և, որպես կանոն, լեզվի գործուն բառապաշարից փոխանցվում են ոչ գործուն բառապաշարին:

Հնաբանությունները ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

1) Բառային հնաբանություններ: Բառային հնաբանություններ են համարվում այն բառերը, որոնք տարբեր պատճառներով ժամանակակից հայոց լեզվի ակտիվ գործածությունից դուրս են մնացել:

ա) Այս կարգի հնաբանությունների մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք արդեն հնացած են համարվում հասարակական կյանքում և կենցաղում, գիտության և արտադրության մեջ դրանց համապատասխան հասկացությունների վերացման կապակցությամբ: Օրինակ՝ գավառ, զգիր, բարան, իշխան, բեգ, խան, նեմարան, շարչի, առնուտեր, նուտ, ստրուկ, պրիսավ, ուրյադնիկ, ֆեդխուլա և այլն:

բ) Առանձին խումբ են կազմում այն հնաբանությունները, որոնք ժամանակակից հայերենում ունեն իրենց համապատասխան հոմանիշները կամ համապատասխանությունները, ինչպես, օրինակ՝ սույն, դույն, նույն, նոքա (այս, այդ, այն, նրանք), ագանել (գիշերել), զենուկ (մորթել), ֆակզի (քանի որ, որովհետև), յուր (իր), միով բանիվ (մի խոսքով), մեծավ մասամբ (մեծ մասամբ), վարժապետ (ուսուցիչ), վարժունի (ուսուցչուհի) և այլն: Այս կարգի հնաբանությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ ոչ թե վերացել են դրանց համապատասխանող հասկացությունները, այլ այդ բառերը հնանալով՝ իրենց տեղը զիջել են նորերին, համապատասխան հասկացություններն արտահայտող նույնանիշ բառերին կամ բառային կրկնակներին:

2) Պատմական բառեր: Բառային հնաբանության առանձին տեսակ պետք է համարել պատմական բառերը (խտորիզմներ): Դրանք հնացած այն բառերն են, որոնք հասարակության պատմական զարգացման հետևանքով համապատասխան հասկացությունների վերացման կամ ծավալի փոփոխման կապակցությամբ լեզվական ակտիվ գործածությունից դուրս են եկել: Այս կարգի բառերը որոշ շափով մոտ են կանգնած բառային հնաբանությունների նախորդ խմբերին, բայց և որոշակիորեն տարբերվում են նրան-

<sup>41</sup> Օ. դր Բալզակ. Մարդկային կատակերգություն, հ. 5, Երևան, 1957, հ. 7, 1959.

ցից. ինչպես, օրինակ՝ ազատանի, ազատագունդ, ազնուր, արաբեկ, ամիրա, նախարար, սպարապետ, մարզպան, կուսակալ, բղեշխ, կապարճ, կապարճակիր, նիգակ, տեգ, վաճան, բերդ, ամբոց, ավատ, խոստակ, խոստակդար, աղանարկ, առուշան, գրադաշտ, գրադաշտական, հեթանոս, հրովարտակ և այլն:

Հատկանշական է նաև այն երևույթը, որ շրջանառություններից դուրս եկած, այսպես կոչված որոշ հնացած բառեր որոշ ժամանակ անց՝ «վերակենդանանալով» նույն կամ մոտ իմաստներով վերստին սկսում են գործածվել լեզվում. ինչպես՝ այր, կանառ, ձոն, այրուծի, արևմտահայերենում՝ նախարար և այլն:

3) Հազվադեպ գործածվող բառեր: Ոչ գործուն բառապաշարի մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք լեզվում հազվադեպ գործածություն ունեն: Այդ կարգին են պատկանում ինչպես հնացած կամ անդամ՝ նորակազմ այն բառերը, որոնք մարդու կենսագործունեության, նրա հասարակական և անձնական կյանքի համար ոչ այնքան անհրաժեշտ հասկացությունների բառային համապատասխանություններն են, ինչպես նաև գրավոր և բանավոր խոսքում քիչ տարածված բարբառայնություններն ու օտարաբանությունները, հուղարտահայտչական վառ գունավորմամբ բառեր և գոհակաբանություններ. ինչպես՝ աղբյուս (ազբի կույտ), արասի, արասանոց, արեշում, ագեհատ (պուշտ), ազումեջ (աճուկ), ազուռ (աղյուս), ազգաթճանկ, ալեխումալ, ալան (արթուն) և այլն:

Այդ կարգի բառերի մեջ կան նաև գրաբարից փոխանցված այնպիսի բառեր, որոնք գրաբարյան շրջանում էլ հազվադեպ են գործածվել. ինչպես՝ արաշփարիշա (կրակապաշտ), արիոն, արիոնացի (աղքատ), ազալ (աղքատների կերակուր), ազոդ (հոգեհաց), ախտաբ (աստղագուշակ), սյսեմ (փուշ) և այլն:

Հնաբանություններն ունեն որոշակի ոճական արժեք և գործածվում են պասիվ բառապաշարում: Ինչպես հնաբանությունների, այնպես էլ պատմական բառերի զգալի մասը գործածվում է գեղարվեստական և գիտապատմական գրականության մեջ, առաջինում՝ որպես գեղարվեստական պատկերավորման միջոց, ոճական արժեք, իսկ երկրորդ դեպքում՝ նրանք ծառայում են որպես անցած պատմական դարաշրջանների համապատասխան հասկացությունների անվանման միջոց՝ այս կամ այն պատմական դարաշրջանը պատկերելու համար:

Հնարանությունների և պատմական բառերի արժեքը լեզվում այն է, որ այդ կարգի բառերը խոսքի ոճավորման համար գործածվում են.

ա) Դարաշրջանի պատմական բներանգը վերականգնելու համար (պատմական բնույթի գեղարվեստական ստեղծագործություններում):

բ) Գեղարվեստական խոսքին հանդիսավորություն, հուղարտահայտչական երանգ տալու համար (չափածո և հրապարակախոսական գործերում, ճարտասանության մեջ, հետորական ելույթներում):

գ) Զավեշտական, հեգնական, երգիծական տպավորություն ստեղծելու համար (Ֆիլյետոնային, պամֆլետային, երգիծական ստեղծագործություններում):

դ) Գեղարվեստական ստեղծագործության կերպարների խոսքային բնութագրման համար և այլն:

ե) Պատմական տվյալ դարաշրջանի հասկացությունների անվանման համար (պատմափիլիսոփայական, գիտական գրականության մեջ և այլն):

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ  
ԻՄԱՍՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ, ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀՈՒԶԱՄՐՏԱՀԱՅՏԱԿԱՆ ԳՈՒՆԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Բառապաշարը արտահայտչական-պատկերավորման՝ հուղարտահայտչական գունավորման և ոճական կիրառության տեսակետից ստորաբաժանվում է շեղոք և գրական գնահատություն ունեցող խմբերի.

1) Միջոնային կամ շեզոք բառապաշար: Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ ժամանակակից հայերենի բառաոճային խումբերը կարող են առանձնանալ կամ տարբերակվել համագործակցական, միջոնային բառապաշարի ֆոնի վրա: Այդ բառապաշարը գրական գունավորմամբ օժտված բառերի նկատմամբ ոճականորեն շեզոք է կամ ունի, այսպես կոչված, «ոճական զրո բնութագրում»<sup>42</sup>: Այս վերջինիս շուրջն էլ խմբավորվում են մնացած բոլոր ոճական կարգերը: Չեզոք բառապաշարը այն կենտրոնն է, որից էլնելով՝ հնարավոր է որոշել բառերի խմբավորումները ոճականորեն գրական գունավորման տեսակետից:

Չեզոք կամ միջոնային բառապաշարին պատկանող բառերի

<sup>42</sup> О. С. Ахманова, Очерки по общей и русской лексикологии, М., 1957, 243—262.

Հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանք պատկանում են բառային հիմնական ֆոնդին (հիմնական բառաֆոնդին), ստեղծվել են լեզվի զարգացման ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում: Ինչպես, օրինակ՝ մարդ, աչք, ոտք, ձեռք, գլուխ, կենդանի, հող, ջուր, հաց, գետ, լեռ, ծառ, ֆայր, երկինք, գետիկ, աշխարհ, հայրենիք, ընտանիք, տուն, սեղան, արքա, շուն, կատա, կով, ոչխար, սան, խոսել, գալ, գնալ, կանգնել, ֆայլել, վազել, երգել, քնել, ապրել, մեռնել, սև, սպիտակ, կարմիր, կապույտ, չափ, վատ, գեղեցիկ, տգեղ, մեծ, փոքր և այլն: Այդ կարգի բառերը առարկաների, երևույթների, հատկանիշների անվանումներն են, հիմնականում արտահայտում են բառերի ուղղակի կամ անվանական և որոշ շափով հետազայում ձևեր բերած փոխաբերական այն իմաստները, որոնք ոճական և հուզաարտահայտչական գունավորման տեսակետից գործածության որևէ սահմանափակում չունեն: Իրանք ոճական և հուզաարտահայտչականության տեսակետից չեզոք լինելով, չունեն ոճական կամ հուզաարտահայտչական գունավորման որևէ բնութագիր: Վերոհիշյալ առանձնահատկությունների շնորհիվ այդ կարգի բառերը կարող են գործածվել խոսքային հաղորդակցման տարբեր ոլորտներում և ընդհանրապես տարբեր ոճերում:

Չեզոք բառապաշարի մեջ մտնում են նաև այն բառերը, որոնք գուրկ լինելով ոճական որևէ գունավորումից, ունեն ոճական հոմանիշներ լեզվի գործառական՝ գրքային, խոսակցական, հասարակաբանական և այլ ոճերում: Օրինակ՝ թափառել (չեզոք) — դեգերել, աստանդել, եծդեհել (գրքային), պտտել, ման գալ, թրև գալ, ֆաշ գալ (խոսակցական), գվոնել, գվոտել (հասարակաբանական): Խաբել (չեզոք) — 1. խաղալվանել, պառել (գրքային), գլխահան անել, գլխից հանել, աչքերը կապել, գլուխը յուզել, գլուխը կապել (խոսակցական), գլուխը կլայակել, պարանի հանել, պարանի ֆաշել, սառցի ֆաշել (հասարակաբանական), էջի տեղ դնել (գոհակարանական), թլոգել, թլսմոթել, թլտոթել (խոսակցական), 2. փշել, դուրս տալ (խոսակցական). ամուսին (չեզոք) — այք, կողակից, կենակից (գրքային), մարդ (խոսակցական), ամուսնյակ (փաղաքշական) և այլն:

2) Հուզաարտահայտչական բառապաշար: Այդ բառապաշարի մեջ մտնող բառերը ծառայում են խոսքում հույզերի, ապրումների, արամադրության արտահայտման, բառի մեջ սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման համար: Իրանք այն բառերն են, որոնք լեզվական միջոցներով արտահայտում են հուզաարտահայտչական

զանազան երանգներ. ինչպես, օրինակ՝ սիրունիկ, քննազիկ, ֆաղթիկ, հոգյակ, աղավնյակ և այլն:

Արտահայտչականությունը բառին կամ դարձվածքին ներքնապես հատուկ կամ դրանց կողմից ձևեր բերված արտահայտչականապատկերավորման հատկությունն է, որը բառին տալիս է պատկերավորություն և արտահայտչական գունավորում, որով և հիշյալ բառերն ու արտահայտչությունները տարբերվում են սովորական կամ ոճականորեն չեզոք բառերից:

Արտահայտչական (էքսպրեսիվ) են կոչվում այն բառերը (կամ դարձվածքները), որոնք արտահայտում են փաղաքշանք, կատակ, հեգնանք, արհամարհանք, ընտանեկարություն և այլն: Օրինակ՝ գրող և գրչակ, թուղթ մրող, հաեգաթախ (ծախու կամ վատ գրող), կամ՝ մեռնել, վախճանվել, հոգին ավանդել, մահկանացուն կենել, ներշնչակների հետ խոսել, և սառել, դժախտ գնալ, ալլահի մոտ (գոգը) գնալ, ոտները (նալերը) տնկել և այլն:

Հուզական (էմոցիոնալ) բառապաշարի մեջ մտնում են.

ա) Այն բառերը, որոնք լեզվական տարբեր միջոցներով բառին տալիս են հուզական զանազան գունավորումներ. ինչպես, օրինակ՝ հոգյակ, աղավնյակ, հայրիկ, մայրիկ, պապիկ, տատիկ, դստրիկ և այլն:

բ) Գոհակարանությունները. ինչպես, օրինակ՝ էջի տեղ դնել, էջի ախանջում քնած, փսխել, խնչել և այլն:

գ) Չայնարկությունները և եղանակավորող բառերը. ինչպես, օրինակ՝ կեցցե՛, կեցցե՛ս, սատաեան տանի, գաղղի ծոցը, ինտրիկ, սուեմն, անպայման, ա՛խ, վա՛խ, էեե՛յ, օ՛ն, ուտա՛ և այլն:

Հուզական բառապաշարին ոմանք վերագրում են նաև այն բառերը, որոնք ծառայում են հույզեր, զգացմունքներ, արամադրություն կամ որպես միջոց՝ հուզական գնահատություն արտահայտելու համար (նողկանք, գարշանք, զզվանք, կոպտություն, թշնամանք, ատելություն, հավանություն, վախ, թախիծ և այլն): Օրինակ, զզվելի, գարշելի, նողկալի, զազելի, պժգալի կամ՝ փառավոր, փառահեղ, փառապանծ, պանծալի, հիանալի, սփանչելի, շնաշխարհիկ, հիառփանշ, հոյակապ և այլն:

3. Ժամանակակից հայերենի բառապաշարը ոճական կիրառության տեսակետից.

Բառերի ոճական պատկանելությունը որոշելու համար անհրաժեշտ է առաջին հերթին առանձնացնել բառապաշարի այն զանգվածը, որն իր գործածությամբ սահմանափակված չէ: Այդ կարգի բառերը, գործածվելով խոսքի տարբեր ոճերում, պահպանում են ոճական-կիրառական իրենց չեզոքությունը, հավասարապես ըն-



դունելի և մատչելի են լեզվի տարբեր ոճերին, կարող են գործածվել լեզվի ցանկացած ոճում ու ժանրում և կազմում են լեզվի շեղոք բառապաշարը:

Զեզոք բառապաշարը այն հենքն է, որի հիման վրա կամ որի համեմատությամբ առանձնանում են բառերի ոճական տարբեր կիրառությունները, ոճականորեն գրական գունավորում ունեցող բառերը: Ոճականորեն չգունավորված «շեզոք» բառերի համեմատությամբ բառապաշարի մեջ մտնող մյուս բառերը կարող են բաժանվել «բարձր» և «ցածր» ոճերի: Մյուս կողմից՝ տարբեր ոճերի սահմանները մշտական չեն. ժամանակի ընթացքում բառերը իրենց ձեռք բերած նորանոր կիրառությունների շնորհիվ հաճախ փոխում են նաև գործածության ոլորտները և լեզվի մի ոճից անցնում են մյուսը:

ա) «Բարձր» ոճին պատկանող բառապաշար: «Բարձր» ոճին պատկանող բառերը սովորաբար անվանվում են նաև գրքային: Զեզոք բառապաշարի համեմատությամբ «բարձր» ոճին պատկանող բառերի գործածությունը լեզվում ընկալվում է իբրև լեզվի լավիմացության վկայություն: Ի տարբերություն խոսակցական բառապաշարին պատկանող բառերի՝ գրքային բառերը զուրկ են վառ արտահայտված արտահայտչականությունից և նրանք որոշ մասով ընդհանուր գործածական, գիտական լեզվի մասնագիտական բառեր՝ տերմիններ են: Այդ կարգի բառերը լեզվին տալիս են որոշ շափով արհեստական, «բռնագրոսիկ», «չոր», պաշտոնական բնույթ, երբեմն նույնիսկ՝ որոշ շքեղություն (պճնանք):

Գրքային բառապաշարը առաջին հերթին լրացնում են ընդհանուր գործածական և համագիտական տերմինները, որոնք նպաստում են հիմնականում գիտական հաղորդակցմանը և հարակից ոլորտների սպասարկմանը:

Ոճական «բարձրացումը» ավելի ցայտուն կերպով է արտահայտվում «բարձր» և «բանաստեղծական» ստորաբաժանումներում:

«Բարձր» ոճի բառերից բանաստեղծականները տարբերվում են նրանով, որ վերջինները առաջինի համեմատությամբ ավելի նեղ և յուրահատուկ բնույթ ունեն, քանակապես ավելի քիչ են և համեմատաբար օժտված են բառաիմաստային սահմանափակությամբ, որոշ շափով իրենց վրա կրում են հնություն, հնացածություն կնիք: Բանաստեղծական բառերն ունեն իրենց շեղոք համարժեքները կամ հոմանիշները: Օրինակ՝ սյուր (բանաստեղծական) — ֆամի (շեզոք), հով, զեփյուտ (բանաստեղծական), զով (շեզոք): Բանաստեղծական բառապաշարում զգալի տեղ են գրավում

հնարանությունները, մասնավորապես գրաբարյան թառերն ու բասաձևերը:

Բարձր ոճի բառերը գործածվում են գլխավորապես արձակում, հրապարակախոսության մեջ, ըստ պարագաների, կարող են գործածվել շատերի կողմից, երբ պահանջվում են արտահայտման «բարձր» ձևերը: Բանաստեղծական բառերի համեմատությամբ այս կարգի բառերը քանակապես ավելի շատ են և ավելի լայն շափերով են տարածված ժամանակակից գրական լեզվի գրավոր տարբերակում:

Բացի վերոհիշյալ՝ բանաստեղծական և «բարձր» շերտերից, «բարձր» ոճը ստորաբաժանվում է նաև՝ ճարտասանական, ակադեմիական, մասնագիտական-տեխնիկական և այլ շերտերի:

Գրքային բառապաշարում առանձնանում են մի քանի ոճային խմբեր՝ պաշտոնական-գործարարական, արտադրական-տեխնիկական, գիտական, հասարակական-հրապարակախոսական և այլն, որոնք իրենց հերթին՝ լրացուցիչ կերպով ստորաբաժանվում են առանձին ենթախմբերի:

1) Պաշտոնական-գործարարական բառապաշարին բնորոշ են դանազան տիպի գրասենյակային փաստաթղթերի, արձանագրությունների, որոշումների, հրահանգների, կոչիքի, դիվանագիտական և իրավաբանական գրագրությունների մեջ հաճախ գործածվող բառերը:

Պաշտոնական լեզվում կարևոր նշանակություն ունի մտքերի ճշգրիտ շարադրանքը, փաստերի ստույգ անվանումը, հետևաբար և նրանում զգալի տեղ են գրավում մասնագիտական բառերը: Իրավաբանական-դիվանագիտական բառապաշարում գործածվում են նաև որոշ թվով հնացած, այսպես կոչված՝ գրասենյակաբանություններ, ինչպես նաև այդ բնագավառում հաճախ գործածվող կազապարներ, ինչպես, օրինակ՝ առ այն, սույն, վերոբերյալ, վերոգրյալ, վերոհիշյալ, ի ցույց, ի կատարումն, ի լուր (ամենֆի), վերաշարադրվածի հիման վրա, ըստ այդմ, ըստ այսմ, ըստ այնմ, ըստ որում, ընդ որում, ընդամիև և այլն:

Պաշտոնական բառապաշարը գործածական է նաև ղեղարկատական գրականության մեջ, հատկապես այն ղեպքերում, երբ ներկայացվում են համապատասխան կերպարներ կամ նկարագրվում են համապատասխան իրադարձություններ, ինչպես, օրինակ՝ դատավարություն, նիստ, ժողով և այլն:

2) Գիտական բառապաշարը բնորոշվում է վերացական իմաստ ունեցող բառերի և հատկապես համապատասխան մասնագիտական տերմինների գործածության առատությամբ:

3) Արտադրական-տեխնիկական բառապաշարը գիտատեխնիկական հեղաշրջման արդի փուլում աստիճանաբար ընդլայնում է իր տեսակարար կշիռը գրքային ընդհանուր բառապաշարում: Վերոհիշյալ լեզվում զգալի տեղ են բռնում կիրառական տեխնիկային, արտադրական գործողություններին, տեխնոլոգիական պրոցեսներին վերաբերող մասնագիտական բառերը և տերմինները:

4) Հասարակական-քաղաքական բառապաշարը ավելի գործածական է հասարակական-քաղաքական և զբաղմունքատարական աշխատություններում, լրագրա-հանդեսային տեսություններում և հոդվածներում, ակնարկներում, ֆելիետոններում, պարսավազրերում (պամֆլետ) և այլն:

Հատկանշական է, որ գրքային բառապաշարի մեջ մտնող հիշյալ՝ պաշտոնական, գիտական, արտադրական-տեխնիկական, հասարակական-քաղաքական խմբերը մեկուսացած, ներփակված չեն, կարող են փոխադարձաբար ներթափանցել միմյանց բնագավառները:

բ) «Ցածր» ոճին պատկանող բառապաշար: Չնայած բառապաշարի համեմատությունում, այսպես կոչված՝ «ցածր» ոճին է պատկանում խոսակցական բառապաշարը, որի մեջ առանձին ենթախմբեր են կազմում հիմնականում հասարակաբանությունները և գեհկարանությունները:

1) խոսակցական բառապաշար: խոսակցական բառապաշարը մտնում է բանավոր խոսքի մեջ. նրան հիմնականում վերաբերում են այն կարգի բառերը, որոնք առաջին հերթին անհրաժեշտ են առօրյա անկաշկանդ խոսակցության համար: Հիշյալ բառապաշարի հիմքն են կազմում լեզվի համագործածական բառերը. ինչպես նաև հուզաարտահայտչական գունավորմամբ օժտված այնպիսի բառեր, որոնք անկաշկանդ, անբռնազբոսիկ խոսքին տալիս են նաև որոշակի արտահայտչականություն և աշխուժություն: Կառուցվածքային տեսակետից խոսակցական բառապաշարին են վերաբերում նաև այն բառերը, որոնք կազմված են նվաղական, փաղաքշական, արհամարհական իմաստ ունեցող ածանցներով, ինչպես, օրինակ՝ հոգյակ, աղավնյակ, ամուսնյակ, նյութակ, տհակ, խենթուկ և այլն:

խոսակցական բառապաշարին են հարում՝ խոսակցական-առօրյա և կենցաղային (առտնին) բառերը: խոսակցական-առօրյա բառերն անհրաժեշտ են խոսակցական բառապաշարին՝ առօրյա հաղորդակցման ամենօրյա գործառնությունը կատարելու համար:

Կենցաղային (առտնին) կամ խոսակցական-կենցաղային բառապաշարի մեջ մտնում են ամենօրյա գործածության բառերը,

որոնք անվանում են կենցաղի առարկաներն ու երևույթները, արտահայտում են կյանքի ընդհանուր կացութաձևը, մեղ շրջապատող իրականությունը, սովորությունները, բարքերը և այլն:

2) Հասարակաբանություններ: խոսակցական բառապաշարից նկատելիորեն տարբերվում են հասարակաբանությունները, որոնք իրենց ոճական-արտահայտչական գունավորմամբ հաճախ ունեն վառ արտահայտված բացասական երանգ:

Հասարակաբանական բառապաշարի հիմքը ժամանակակից հայերենում կազմում են զլխավորապես բարբառային-գավառական բառերը, մասամբ նաև գրական լեզվի այն բառերը, որոնք իրենց ձևով բերած փոխաբերական նոր իմաստների շնորհիվ հուզաարտահայտչական տարբեր երանգներ են արտահայտում. ինչպես, օրինակ՝ ռեյս, կարկամ:

Հիշյալ բառապաշարի մեջ առանձնանում է նաև բառերի մի խումբ, որի մեջ մտնող բառերը զուրկ են վառ արտահայտված բացասական գունավորումից և գտնվում են գրական գործածության եզրին, ինչպես, օրինակ՝ ծլկել, ծիկրակել, ակոկել, պաշել, պոռչ, մոռչ, բուչ և այլն:

Սովորաբար այս կարգի բառերը գրական նորմաներից դուրս են գտնվում և բնորոշվում են հասարակեցման, պարզեցման, ցածրացման, կոպտություն երանգներով, որ հաճախ գեղարվեստական ստեղծագործություններում և խոսակցական լեզվում գործածվում են իբրև արտահայտչական տարրեր՝ խոսքին հատուկ արտահայտչական երանգ տալու, խոսքը ոճավորելու կամ գեղարվեստական գրականության մեջ գործող անձանց անհատական բնութագրման համար:

3) Գեհկարանություններ: Այս կարգի բառերը բառապաշարի մի շնչին մասն են կազմում և փաստորեն գտնվում են գրական լեզվի բառապաշարից դուրս: Դրանք այն բառերն են, որոնցում կոպտության կամ արհամարհանքի երանգը չափազանց վառ կերպով է արտահայտված:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱԾԱՐԸ  
ԸՍՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՈՒՈՐՏՆԵՐԻ

ԶԲԱՂՄՈՒՆՔԱՅԻՆ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐ

1) Զբաղմունքային բառապաշար: Ժամանակակից հայերենում ընդհանուր գործածական բառապաշարի մեջ մտնող բառերին զու-

գահեռ կան նաև շատ բառեր ու բառակապակցություններ, որոնք ամենօրյա հաղորդակցման ընթացքում գործածվում են իրենց աշխատանքային գործունեությանը, զբաղմունքով, միևնույն մասնագիտությանը միավորված մարդկանց որոշակի խմբերի կողմից: Այդ կարգի բառերն ու արտահայտությունները կազմում են լեզվի զբաղմունքային բառապաշարը:

Զբաղմունքային բառապաշարի մեջ մտնող բառերի բնորոշ հատկանիշն այն է, որ նրանք խիստ տարբերակման և մասնավորման են ենթարկում արտագրության միջոցների, արտագրական գործիքների, մասնագիտական առարկաների, կոնկրետ երեվույթների, գործողությունների անվանումները: Առանձին մասնագիտությունների տեր մարդկանց բնագավառի աշխատողները (ինչպես, օրինակ՝ բժիշկները, ճարտարապետները, շինարարները, վարորդները, քիմիագործները, ատաղձագործները, լամպագործները, կոշիկագործները, տպագրիչները և այլն) իրենց բառապաշարում այնպիսի յուրահատուկ բառեր ու բառիմաստներ են գործածում, որ անհասկանալի կամ զժվար հասկանալի են մեկ այլ բնագավառի աշխատողներին: Այդ կարգի բառերի մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ դրանք իրացվում են բանավոր հաղորդակցման ընթացքում և համաժողովրդական լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի համեմատությամբ իրենց գործածության ոլորտները սահմանափակ լինելով, դուրս չեն գալիս խոսակցական լեզվի շրջանակներից:

Ը. 2) **Տերմինաբանական բառապաշար:** Տերմինաբանություն, տերմինագիտություն, տերմին: Ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի բաղադրիչ մասն է կազմում տերմինաբանական բառապաշարը: Կապված լինելով այս կամ այն գիտության հասկացությունների համակարգի հետ, տերմինաբանությունը լայն առումով տվյալ լեզվի տերմինների, նեղ առումով՝ տվյալ գիտության կամ բնագավառի, ճյուղի, անգամ՝ մասնաճյուղի տերմինների ամբողջությունն է և, որպես համաժողովրդական գրական լեզվի բառապաշարի բաղկացուցիչ մաս, սպասարկում է գիտության և տեխնիկայի, տնտեսության և արտագրության, մշակույթի՝ լարվեստի ու զբաղմունքային և այլ բնագավառները:

Տերմինաբանություն բառն ունի մեկ այլ իմաստ ևս. այն բառագրության բաժին է, որ զբաղվում է տերմինների տեսության և կիրառության զանազան հարցերով: Տերմինաբանության այս իմաստին այժմ փոխարինում է տերմինագիտություն<sup>44</sup> բառը:

Տերմինաբանությունը համարվում է գիտության (կամ գիտության և տեխնիկայի) լեզու, ազգային ընդհանուր գրական լեզվի ինքնուրույն գործառական տարբերակ, գրական լեզվի գործառական ենթահամակարգ: Այդ առումով ընդհանուր համագործածական լեզվի համեմատությամբ տերմինաբանությունը՝ գիտության լեզուն, ավելի նեղ հասկացություն է, նրան հատուկ չեն գրական լեզվի կիրառական-գործառական բոլոր առանձնահատկությունները: Տերմինաբանությունը, իր մեջ ներառելով մասնագիտական բառապաշարը, միայն իրեն հատուկ գործառական (տեղեկատվական-հաղորդակցման) և լեզվական յուրահատկությունների պատճառով, իբրև գիտության, մշակույթի, արտագրության տարբեր բնագավառների մասնագետների զբաղմունքային (պրոֆեսիոնալ) հաղորդակցման միջոց, փաստորեն գտնվում է սովորական, ոչ պրոֆեսիոնալ հաղորդակցման սահմաններից դուրս: Սազելով և դարգանալով ընդհանուր գրական լեզվի նյութական ու բառակազմական օրինաչափությունների հիման վրա, տերմինաբանությունն օժտված է նաև որոշակի առանձնահատկություններով, որոնք արտահայտվում են իմաստային համակարգայնությամբ, ինչպես նաև կառուցվածքային կամ մասնագիտական արտահայտման միջոցների միօրինակություն, որոշ ընդհանուր օրինաչափությունների միասնականություն ստեղծելու միտումներով:

Տերմինը բառ կամ բառակապակցություն է, որ նշանակում է հասարակական-քաղաքական, գիտության և տեխնիկայի, արվեստի և գրականության տարբեր բնագավառների որևէ հասկացություն: Տերմինները մասնագիտական լեզվի այն բառերը կամ բառակապակցություններն են, որոնք ստույգորեն (ճշգրտորեն) արտահայտում են մասնագիտական հասկացություններ և նշանակում են մասնագիտական առարկաներ: Տերմինը, միաժամանակ, այն բառը կամ բառակապակցությունն է, որ նշանակում է միայն գիտական ստույգ հասկացություն: Իբրև գիտական հասկացություն, յուրաքանչյուր տերմինի իմաստ հնարավոր է գիտականորեն սահմանել: Այս դեպքում տերմինի բովանդակությունը նույնացվում է առարկայի, երևույթի հասկացության հետ:

Ոմանց կարծիքով լեզվի սովորական բառերից տերմինը տարբերվում է իր արտահայտած հասկացության ծավալով: Այդ կարգի

լեզվաբանական տերմինների համակարգային, վառուցվածքային վերլուծություն: Լեզվի և ոճի հարցեր, 4. 4, Երևան, 1977, էջ 200—207:

Տերմին բառը ծագում է լատիներեն *terminus*-ից, որ բառացի նշանակում է սահման, սահմանային եղանակ, եզր: Արևելահայ գրական հայերենում թարգմանվում է՝ գիտաբան, հրեման՝ անվանում, արևմտահայերենում՝ եզր:

<sup>44</sup> է. Ազալյան, Տերմինագիտություն, Երևան, 1978: Լ. Ղազարյան, Հայերեն

սովորական բառերից տերմինն առաջին հերթին նրանով է տարբերվում, որ տերմինի և հասկացութան կապը անմիջական է, մինչդեռ բառի համար բառիմաստի հասկացութան հետ անմիջական կապը պարտադիր պայման չէ նրա և հասկացութան կապը հիմնականում միջնորդավորված լինելու պատճառով:

Որոշ մասնագետներ գտնում են, որ երկու դեպքում էլ և՛ տերմինի, և՛ բառի կապը հասկացութան հետ անմիջական է, այն տարբերությամբ միայն, որ տերմինի կապը ավելի «հստակ», ավելի «թափանցիկ» է, քան՝ բառի<sup>45</sup>: էականը, սակայն, այն է, որ տերմինի բովանդակությունը բոլոր դեպքերում հավասարաթեք է հասկացութանը: Մյուս կողմից, տերմինները ոչ միայն անվանում են հասկացությունները, այլև որոշակիորեն սահմանադատում են մի հասկացությունը մյուսից, հատկապես տարբեր գիտություններին կամ տեխնիկայի այլևայլ բնագավառներին վերաբերող հասկացությունները:

Առանձնապես ընդգծվում է տերմինի անվանողական հատկանիշը, նրա անմիջական կապը իրի, առարկայի հետ: Տերմինաբանության որոշակի բնագավառներում, հատկապես տեխնիկական տերմինաբանության մեջ, տերմինի անվանողական հատկությունն ավելի ակնառու կերպով է դրսևորվում, քան մյուս բնագավառներում, ինչպես, օրինակ, հասարակական-քաղաքական և գիտական որոշ բնագավառների տերմինաբանական համակարգերի մեջ: Այսպես, մաթեմատիկայի, փիլիսոփայության, տրամաբանության, գրականագիտության, արվեստի և մի շարք այլ բնագավառների տերմինները ուղղակիորեն չեն հարաբերակցվում իրերին, առարկաներին: Այս դեպքում էլ վերջին հաշվով տերմինի անվանողական պահանջը բավարարվում է նրանով, որ տվյալ հասկացությունը լինելով վերացարկված, համապատասխան տերմինը միաժամանակ անվանում է այդ իրը՝ առարկան:

Տերմինը լեզվի սովորական բառից տարբերող հատկանիշներն են.

ա) Տերմինի գոյությունը պայմանավորված է միայն մասնագիտական հասկացություններ արտահայտելու պահանջով:

բ) Հետևաբար տերմինը ոչ թե հատուկ բառ է, այլ բառ՝ հատուկ գործածությամբ:

գ) Տերմինը ճշգրտորեն հարաբերում է իր նշանակած հասկացությանը, ի տարբերություն սովորական բառի, որի նշանակած հասկացության ծավալն ավելի լայն է:

դ) Տվյալ մասնաճյուղի տերմինները սովորաբար մենիմաստ են, ի տարբերություն սովորական բառերի, որոնց հիմնականում բնորոշ է բազմիմաստությունը:

ե) Տվյալ տերմինաբանական համակարգի տերմինների հարաբերակցությունը իրար նկատմամբ հիմնականում ստորակարգային է, թեև նույն համակարգի ներսում նրանք կարող են իրար նկատմամբ համադաս հարաբերության մեջ գտնվել:

Տերմինը, որպես կանոն, տվյալ տերմինաբանական համակարգում մենիմաստ է, զուրկ է որևէ հուղաարտահայտչական գունավորումից և ոճական կիրառական առանձնահատկություններից: Տերմիններին՝ որպես հասկացության լեզվական նշանների, բնորոշ է միանշանակ հարաբերումը հասկացություններին: Մեկ նշան՝ մեկ հասկացություն, մեկ հասկացություն՝ մեկ նշան, այս է տերմինի և հասկացության փոխհարաբերությունը: Մինչդեռ լեզվի սովորական բառը հիմնականում ոչ միայն բազմիմաստ է, այլև պարտադիր կերպով մտնում է որևէ հոմանշային և հականշային շարքի մեջ: Նույն համակարգի ներսում տերմինի բազմիմաստությունը կարող է ստեղծել ավելորդ կրկնաբանություններ, տերմինի սահմանման ճշգրտության խախտում և այլն: Նույնը ամբողջությամբ վերաբերում է նաև տերմինների համանունությանը միևնույն համակարգի ներսում:

Այլ բան է տերմինների արտահամակարգային բազմիմաստությունն ու համանունությունը: Օրինակ՝ սև տերմինը հավասարապես կարող է օգտագործվել՝ կենսաբանության, բժշկության, բուսաբանության, լեզվաբանության մեջ, այդ գիտությունների համապատասխան իմաստային տարբերակումներով:

Ներմինի և բառի տարբերակումն առաջին հերթին դրսևորվում է տերմինային և բառային իմաստների միջև: Բառի բառային իմաստը նրա բովանդակությունն է, օբյեկտիվ աշխարհի առարկաների, երևույթների, հասկանիշների արտացոլումը: Տերմինային իմաստի յուրահատկությունն այն է, որ այն կապվում է միայն դիտության, տեխնիկայի, արվեստի, արտադրության, հասարակական-քաղաքական բնագավառների որևէ կոնկրետ հասկացության հետ: Իբրև գիտական հասկացություն, տերմինի իմաստը հնարավոր է գիտականորեն սահմանել: Եվ վերջապես, տերմինի հիմքում ընկած հասկացությունն իր բնույթով ճշգրիտ (ստույգ) է, որը համապատասխանում է մարդու ճանաչողության ժամանակակից մակարդակին:

Տերմինի և սովորական բառի տարբերությունն արտահայտվում է նաև համատեքստի հետ ունեցած նրանց հարաբերությամբ:

45 Р. А. Булагов, Введение в науку о языке, М., 1958, с. 27.

Յթե լեզվի ընդհանուր գործածական բառի կոնկրետ իմաստի ոճական-կիրառական, հուզաարտահայտչական գունավորման առանձնահատկությունների դրսևորման և բացահայտման համար վճռական նշանակություն ունի համատեքստը՝ բառային շրջապատը, խոսքային իրադրությունը, արտահայտման ժանրը և այլն, ապա տերմինի համար համատեքստն այդ տեսակետից վճռական նշանակություն չի կարող ունենալ: Կապվելով տերմինարանական տվյալ համակարգի հետ, տերմինը կարող է հասկացվել նաև համատեքստից դուրս, եթե հայտնի է տերմինարանության որևէ բնագավառի նրա պատկանելությունը: >

Հաճախ դժվար է սահմանագիծ տանել տերմինի և ոչ տերմինի (սովորական բառի) միջև: Նախ՝ որևէ բնագավառում տերմինացած բառերը շարունակում են միաժամանակ օգտագործվել իրրև լեզվի ընդհանուր բառեր (օրինակ՝ օդ, մթնոլորտ, ջուր, գետ, ծով, լիճ, երկիր, երկաթ, պղինձ, աղ, բույս, ծառ, բուսի և այլն): Այնուհետև ընդհանուր լեզվի բառերի մի մասը տերմինացվում է միայն բառակապակցական տերմինների մեջ (օրինակ՝ բառային կազմ, հեղույթային կազմ, ածականի համեմատության աստիճան և այլն):

Ղեկավար սովորական բառերը տերմինացվում են, սովորաբար, բառիմաստի փոփոխության զանազան եղանակներով՝ իմաստի նեղացման, ընդլայնման, ըստ գործառնության, գույնգործության կամ ըստ փոխաբերության իմաստափոխության շնորհիվ: >

Տերմինարանական և լեզվի համագործածական բառապաշարները դասվում են փոխադարձ կապի և փոխներթափանցման գործընթացի մեջ: Այդ ընթացքում նկատվում է երկու հակառակ միտում. մի կողմից տերմինացում՝ ընդհանուր լեզվի բառի վերածում տերմինի (օրինակ՝ օդ, ջուր, երկաթ, պղինձ, սսի), մյուս կողմից՝ ապատերմինացում. տերմինի վերածում ընդհանուր լեզվի բառի (օրինակ՝ հեռուստատեսություն, հեռուստակառավարում, հեռուստացույց, տիեզերագնաց): Առաջին դեպքում տեղի է ունենում գործածության ոլորտների նեղացում (բառիմաստի նեղացում), երկրորդ դեպքում՝ գործածության ոլորտների ընդլայնում: Ըստ որում, ընդհանուր լեզվի բառը տերմինանալով, չի դադարում գործել ընդհանուր գրական լեզվի համակարգում, և տերմինը ապատերմինանալով, չի դադարում գործելուց իր տերմինարանական համակարգում: Ստանալով տերմինարանական նոր գործառնություն և մուտք գործելով գործածության նոր ասպարեզ՝ ընդհանուր լեզվի բառը կտրում է իր նախկին բառային՝ հոմանշային և հականշային կապերը: Քանի որ այդ կարգի տերմիններից չուրաքանչյուրը հանդես է գալիս մեկ առանձին տերմինահամակարգի

մեջ, չի խախտվում տերմինների և նրանց իմաստների համակարգայնությունը և շփոթության պատճառ չի դառնում:

Ի հակակշիռ լեզվի սովորական բառերի, որոնց համար պարտադիր է հոմանշային համապատասխան շարքի մեջ մտնելը, տերմինների հոմանշությունը հանձնարարելի չէ: Տերմիններն իրենց բնույթով չեն կարող հոմանիշներ լինել, այսինքն՝ տարբերվել նրբիմաստներով կամ հուզաարտահայտչական գանազան գունավորումներով ու ոճական տարբեր կիրառություններով: Լեզվում, սակայն, հանդիպում են տերմինային նույնանիշներ, ինչպես, օրինակ՝ լեզվաբանության մեջ. բառակազմական ձևույթ և ածանց, կիսաշփական, կիսապայթական, պայթաշփական, ճպաշփական կամ՝ դրափոխություն և հնչյունների ետևառաջություն, տերմինարանություն և տերմինագիտություն, բաղդատական կամ համեմատական աստիճան և այլն: Տվյալ դեպքում հասկացության անվանման համար հաշվի է առնվում մերթ մեկ հատկանիշ (կիսաշփական, կիսապայթական), մերթ բոլոր հատկանիշները (պայթաշփական), վերջապես բոլորովին նոր հատկանիշ, ինչպես՝ ճպաշփական:

Տերմինարանական հոմանշության պատճառ կարող է դառնալ նաև նույն հասկացության համար սեփական և օտարազգի տերմինների գործածությունը, ինչպես՝ գործառնություն, գործառույթ և ֆունկցիա, պսիխոլիզգլիստիկա և հոգեկեզվաբանություն, էպիտետ և մակդիր, լիրիկա—ֆնաբերգություն, պոեզիա—բանաստեղծություն: Տերմինարանական հոմանշության առանձնահատկությունն այն է, որ այն նկատվում է հիմնականում տվյալ համակարգի ներսում և համարվում է ներհամակարգային երևույթ:

Վերջապես, տերմինաբանական հոմանշությունը ժամանակավոր երևույթ է տերմինաբանության դարգացման տվյալ փուլի համար: Նույնանիշներից մեկը հոմանշային մրցակցության մեջ հաղթելով, դառնում է այդ հասկացության միակ անվանումը, մյուսները կամ դուրս են մնում լեզվից, կամ էլ ձեռք բերելով նոր իմաստ, օգտագործվում են իրրև նոր տերմին՝ այլ հասկացության համար:

Տերմինի և հասկացության հարաբերակցության հարցերը անմիջապես կապի մեջ են տերմինի և անվանակարգի (տերմինաբանության և անվանակարգության) հարաբերության հարցերի հետ: Տերմինաբանությունը, ինչպես նշվեց, հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական որևէ բնագավառի կամ բոլոր բնագավառների տերմինների ամբողջությունն է և սերտորեն կապված է գիտական հասկացությունների համակարգի հետ: Անվանա-

կարգը որևէ մասնագիտութիւնի մեջ գործածվող անվանումների ամբողջութիւնն է, մասնագիտական տերմին-անվանումների ցանկը: Կիրառվելով գիտութիւն, տեխնիկայի, արտադրութիւնի այլևայլ բնագավառներում, անվանակարգը այդ բնագավառների տիպական օբյեկտների անվանումն է: Անվանակարգը թեև առնչվում է տերմինաբանութիւնը, կազմում նրա անհրաժեշտ մասը, բայց ուղղակիորեն գիտական հասկացութիւնների հետ չի կապվում, այսինքն՝ չի հանդիսանում այդ հասկացութիւնների անմիջական կրողը: Նրա կապը հասկացութիւնի հետ շատ ավելի անվանական է և միայն պիտակավորում է գիտական օբյեկտները, գիտական հասկացութիւններին համապատասխանող առարկաները, անվանում է արտադրանքը, առարկաները, նրանց տեսակները, ենթատեսակները, գործընթացները, հատկանիշները և այլն: Անվանակարգի մեջ են մտնում աշխարհագրական անունները (երկրների, լեռների, ծովերի, գետերի անունները), բժշկական, կազմախոսական, բուսաբանական, երկրաբանական, քիմիական և այլ բնագավառների տարբեր կարգի ցանկեր ու անվանումներ, արտադրութիւնի զանազան տեսակների, ապրանքների անուններ, զանազան մակնիշների անվանումներ և այլն (օրինակ՝ աշխարհագրական անուններ՝ Հայաստան, Ռուսաստան, Սևանա լիճ, Վանա լիճ, Միջերկրական ծով, Արարատ, Արագած կամ՝ մի քանի հարյուր հազարի հասնող քիմիական միացութիւնների բանաձևային անվանումների ցանկը, գինիների անուններ՝ Արենի, էջմիածին, Կազար, Մուկատ, ամսոմեքենաների և սավառնակների անվանումներ (մակնիշներ)՝ Մուսկիշ—408, Ժիգուլի, Զապորոժե, ՏՈՒ—134, ՏՈՒ—144 և այլն): Անվանակարգի մեջ մտնող միավորումների մեծ մասը և հատկապես հատուկ անունները ընդհանրապես բառային իմաստ չեն արտահայտում, չեն առնչվում սահմանելի որևէ հասկացութիւնի հետ:

Լեզվաբանական տերմինաբանութիւնի մեջ, ինչպես հայտնի է, մտնում են լեզվաբանական զանազան իրակութիւններին համապատասխանող հասկացութիւնների անվանումները՝ լեզվաբանական տերմինները (ինչպես՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարանջատություն, ֆեռականություն, հնչույթ, ձևվույթ, շարույթ, բառ, ածանց, նախադասություն և այլն), մինչդեռ նույն բնագավառի անվանակարգի մեջ առնում են աշխարհի լեզուների անունները ցեղակցական կամ նույնիսկ ոչ ցեղակցական դասակարգմամբ (հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն, հունգարերեն և այլն):

Տերմինաբանութիւնի մյուս կարևոր առանձնահատկութիւնը

նրա համակարգայնութիւնն է: Տերմինաբանութիւնն ամենից առաջ կապված է տվյալ գիտութիւնի հասկացութիւնների համակարգի հետ: Տերմինների համակարգայնութիւնը պայմանավորված է այս կամ այն գիտաճյուղի հասկացութիւնների որոշակի օրինակի կապակցվածութեամբ, և տվյալ ճյուղի կամ մասնաճյուղի տերմինները նույն բնագավառին պատկանող հարակից այլ տերմինների հետ մի ամբողջական համակարգ են կազմում: Տերմինային համակարգ կամ տերմինահամակարգ կազմում են ինչպես նույն բնագավառի առանձին մասնաճյուղերը, որպես, այսպես կոչված՝ մանրաձևակարգ (միկրոհամակարգ), այնպես էլ գիտութիւնի ամբողջ ճյուղը կամ տվյալ գիտութիւն, տեխնիկայի, արտադրութիւնի բնագավառը ամբողջութեամբ առած իրրև ընդհանուր համակարգ (մակրոհամակարգ):

Այդ սկզբունքով էլ գիտութիւն, տեխնիկայի, արտադրութիւն, արվեստի և գրականութիւնի յուրաքանչյուր ճյուղ կամ բնագավառ ունի իր յուրահատուկ տերմինների ամբողջութիւնը, որը և կազմում է առանձին տերմինաբանական համակարգ կամ տերմինահամակարգ. ինչպես, օրինակ՝ բժշկական, բուսաբանական, մաթեմատիկական, քաղաքական, տնտեսագիտական, իրավաբանական, փիլիսոփայական, լեզվաբանական, գրականագիտական, արվեստագիտական և այլն:

Տերմինաբանական ընդհանուր և մանրահամակարգերի միջև գոյություն ունի համադասային և ստորակարգային հարաբերութիւն:

Այսպես, օրինակ՝ բժշկական տերմինաբանութիւնն ամբողջութեամբ կազմում է առանձին, ընդհանուր համակարգ, սակայն բժշկութիւնի յուրաքանչյուր ճյուղ, ինչպես՝ կազմախոսութիւնը, բնախոսութիւնը, վիրաբուժութիւնը, ներքնաբուժութիւնը, մանկաբուժութիւնը, մանկաբարձութիւնը, հոգեբուժութիւնը, ուռուցքաբանութիւնը, սրտաբանութիւնը, դեղագործութիւնը և այլն իրենց հերթին կազմում են առանձին համակարգեր կամ մանրահամակարգեր. ըստ որում հիշյալ ճյուղերից յուրաքանչյուրն իր հերթին կարող է բաժանվել մանրահամակարգերի:

Նույն ձևով նաև լեզվաբանական տերմինաբանութիւնի մեջ: Այստեղ նույնպես կարելի է մեկ ընդհանուր համակարգի մեջ առանձնացնել լեզվաբանական տերմինաբանութիւնը, իսկ վերջինս իր հերթին բաժանել առանձին մասնավոր համակարգերի կամ մանրահամակարգերի, ինչպես, օրինակ՝ առանձին լեզուների տերմինների համակարգերը, լեզվաբանութիւնի առանձին ճյուղերի կամ մասնաճյուղերի համակարգերը, կամ մանրահամակարգերը (հնչյու-

նաբանական, բառագիտական, իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական, բարբառագիտական և այլն)։

Ստորակարգային հարաբերությունը տարածվում է նաև յուրաքանչյուր գիտաճյուղի կամ բնագավառի ներսում. յուրաքանչյուր գիտաճյուղ կամ բնագավառ ունի իր առավել ընդհանուր հասկացությունները և դրանց ստորադասվող նեղ հասկացություններ, երբ ընդհանուրից աստիճանական անցում է կատարվում դեպի մասնավորը։

Այսպիսով, տերմինաբանությանը հատուկ է ընդհանուր տերմինաբանական համակարգերի, տերմինաբանական մանրահամակարգերի և առանձին տերմինների ստորակարգությունը։ Այդ ստորակարգության մեջ տերմինը մի առանձին միավոր է։ Տերմինային առանձին միավորները կարող են իրար նկատմամբ լինել ոչ միայն ստորակարգային, այլև համարասային հարաբերության մեջ։ Այսպես, ժամանակակից հայոց լեզու տերմինային համակարգին ստորադասվում են՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն մանրահամակարգերը։ Հնչյունաբանություն մանրահամակարգում ընդգրկված տերմիններն իրենց հերթին կարող են հանդես գալ ինչպես ստորակարգության, այնպես էլ համարասային հարաբերությամբ։ Օրինակ՝ հնչյուն, հնչույթ, ձայնավոր, բաղաձայն և ձայնորդ, հպական, շփական և այլն։

Տերմինաբանական ընդհանուր համակարգ և մանրահամակարգ ըմբռնումներին սերտորեն առնչվում է նաև տերմինաբանական միջհամակարգ հասկացությունը։ Գիտական տերմինները մեկուսացած, իրարից առանձնացված չեն։ Նրանք հաճախ կապակցված են մի ամբողջ շարք հարակից գիտությունների կամ գիտության մասնաճյուղերի տերմինների հետ և դրանց միասնությունում մի ամբողջական համակարգ են կազմում։ Սրա ակնառու օրինակը կարող է ծառայել բժշակական տերմինաբանական համակարգի մեջ՝ բուսաբանական, ֆիզիական, ֆիզիկական և այլ, լեզվաբանական տերմինների համակարգի մեջ՝ տրամաբանական, փիլիսոփայական, հոգեբանական, գրականագիտական, ֆալսեական, անգամ՝ ֆիզիկական (փորձառական հնչյունաբանության մեջ) տերմինների առկայությունը։

Տվյալ տերմինաբանական համակարգում այսպես կոչված միջհամակարգային կամ հարակից գիտություններին կամ բնագավառներին պատկանող տերմինների առկայությունը բացատրվում է, մի կողմից, տարբեր գիտությունների, գիտաճյուղերի և բնագավառների փոխադարձ կապով, և մյուս կողմից՝ տարբեր գիտու-

թյունների և գիտաճյուղերի ուսումնասիրության նույն օբյեկտով։ Ինչպես է, որ այդ բոլոր դեպքերում միևնույն տերմինը մի քանի տերմինահամակարգերում հանդես է գալիս իբրև դրանց համար ընդհանուր տերմինաբանական միավոր։

Այսպիսով, տվյալ լեզվի տերմինաբանությունը ամբողջություն է մի քանի տերմինահամակարգերի, որի մեջ մտնում են՝ ընդհանուր տերմինաբանական համակարգը, ճյուղային (առանձին գիտությունների և բնագավառների) համակարգերը, տերմինային միջհամակարգերը կամ հարակից գիտությունների տերմինաբանական համակարգերը և ներճյուղային մասնավոր տերմինաբանական համակարգերը։

Տերմինաբանության մեջ ուշագրավ է, այսպես կոչված, միջազգային բառապաշարը կամ միջազգային տերմինների շերտը։ Այդ կարգի տերմինները, մի կողմից, մի շարք լեզուներում գոյություն ունեցող ընդհանուր ծագումով և նույն նշանակությամբ տերմինատարրերն են, որոնք սովորաբար ձևավորվում են տվյալ լեզվի հնչյունաբանական և ձևաբանական կանոններով (օրինակ, էնեզ-, էլեկտ-, ավիա-, աէրո- և այլն)։ Միջազգային են համարվում նաև այն բառերը, որոնք սովորաբար անփոփոխ ձևով են առնվում ժամանակակից զարգացած տերմինաբանություն ունեցող մի շարք լեզուների կողմից այն լեզվից, ուր կերտվել են դրանք։ Միջազգային բառապաշարին պատկանող տերմինները վերաբերում են հասարակական-քաղաքական, գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներին. ինչպես՝ սոցիալիզմ, կոմունիզմ, դիկտատուրա, դիպլոմատիկա, մատերիալիզմ, իդեալիզմ, մետաֆիզիկա, սոցիալոգիա, սոցիոլոգ, սոցիալիստ, կոմունիստ, մատերիալիստ, իրեալիստ, բիոնիկա, կիբեռնետիկա, բիոկիբեռնետիկա, կամ՝ բանկ, բանկիր, գրիպ, ասպիրին, պենիցիլին, կաուչուկ, պոլիմեր, մոնումեր, պոետ, դրամա, օպերա, բալետ, սպորտ, ֆուտբոլ, բասկետբոլ և այլն։

Այս կարգի տերմինները միջազգային պետք է համարել միայն այն առումով, որ լայն տարածում են ստացել աշխարհի բազմաթիվ լեզուներում։ Մագումով սրանց բառարմատները հիմնականում լատիներեն կամ հունարեն են, բայց տերմինային ձևավորում են ստացել եվրոպական լեզուներում՝ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի և այլ լեզուների միջոցով. ըստ որում՝ հունա-լատինական շատ բառարմատներ այդ լեզուներում տերմինային նոր իմաստներ են ձեռք բերել։ Այսպես, օրինակ՝ դեկան բառը (բարձրագույն ուսումնական հաստատության առանձին գիտության ուսումնական մասի ղեկավարի ընտրովի պաշտոն) հու-

նարենում (dekan) նշանակում է տասնապետ: Հատինա-հունական տերմինատարրերից է կազմված սոցիոլոգիա տերմինը. լատ. societas (հասարակություն) և հուն. logos (գիտություն): Տերմիններ են կազմվում անգամ արաբական և հունա-լատինական տերմինատարրերով. օրինակ՝ ալդեհիդ (альдегид) կազմված է՝ al cohol (արաբ. al kuhl) և dehydrogenatum (հուն. de+hydro—ջրային և լատ. genus—սեռ)—բուսոցի՝ ջրից զուրկ ալկոհոլ:

Հետաքրքրություն է ներկայացնում տերմինաբանական և լեզվի ընդհանուր բառապաշարների փոխհարաբերության հարցը: Հիշյալ բառապաշարները լեզվի կենսագործունեության ընթացքում ամենեին էլ մեկուսացած չեն, դանդաղ են փոխադարձ կապի և փոխներթափանցման մեջ: Մշտական փոխանակություն է կատարվում տերմինների և ոչ տերմինների (սովորական բառերի) միջև: Նախ, գիտության և տեխնիկայի, արտադրության, մշակույթի զարգացման հետևանքով տերմինաբանության այս կամ այն բնագավառի՝ անընդհատ նոր տերմիններով համալրելու պահանջը կատարվում է հիմնականում լեզվի սովորական բառերի տերմինացման շնորհիվ, և պարբերաբար կատարվում է այդ կարգի բառերի ներհոսք տերմինաբանության մեջ: Մյուս կողմից՝ հասարակության գիտատեխնիկական մակարդակի հարաճուն զարգացման, կրթական ընդհանուր մակարդակի բարձրացման շնորհիվ տարբեր բնագավառներին պատկանող տերմիններ աստիճանաբար յուրացվում են տվյալ լեզվով խոսող ավելի և ավելի շատ մարդկանց կողմից և անցնում են լեզվի ընդհանուր գործածական բառերի շարքը:

Հասարակության մշակույթին և տեխնիկական զարգացման մակարդակին համապատասխան փոփոխվում են լեզվի ընդհանուր գործածական, սովորական բառերի և տերմինների հարաբերությունները: Բարձր զարգացած հասարակության պայմաններում սովորական մեծ թվով տերմիններ, դուրս գալով նեղ մասնագիտության շրջանակներից, սկսում են մուտք գործել լեզվի ընդհանուր գործածական բառապաշարը և հասկանալի դառնալով հասարակության լայն զանգվածներին, հավասարապես գործածական են դառնում լեզվի սովորական բառերի հետ: Այդպիսով աստիճանաբար վերանում է ընդհանուր գործածական բառերի և որոշ տերմինների միջև եղած անջրպետը, և վերջիններս լեզվական ամենօրյա գործածության մեջ լայն տարածում գտնելու կապակցությամբ՝ որպես մասնագիտական բառեր կամ տերմիններ այլևս չեն գիտակցվում: Օրինակ՝ տեխնիկական այնպիսի տերմիններ, ինչպես՝ հեռախոս, հեռուստացույց, ինֆնաքիո, ուղղաքիո, ռադիո, շարժիչ,

տրակտոր, կոմբայն, կոնվեյեր, էլեկտրականություն, բժշկական՝ ասպիրին, պենիցիլին, գրիպ, հարբուխ, ֆաղցկեղ, ինֆարկտ, կարմրուկ, ջերմաչափ, կարճատեսություն, երկարատեսություն, բուսաբանական՝ մեխակ, յուսաման, պիոն, խաղողի տեսակներ՝ խաղի, հաշարաչ և այլն: Նույն ձևով նաև գիտության, արվեստի, գրականության, մարզական կյանքի շատ տերմիններ, ինչպես՝ համերգ, մեներգ, զուգերգ, երգիչ, երգչուհի, պարուհի, տենոր, կոլորատուրա, բարիտոն, բաս, էստրադա, սիմֆոնիա, արձակ, շափածո, վեպ, վիպակ, նորավեպ, բանաստեղծ, բանաստեղծություն, պոեմ, հասկացություն, գիտակցություն, տրամաբանություն, լավատեսություն, հոռետեսություն և այլն:

Մյուս կողմից՝ «ամենօրյա լայն գործածության» տարրերիչ շահանիչ ընդհանրապես գոյություն չունի մի շարք տերմինների և բառերի միջև, ինչպես՝ օդ, ջուր, դաշտ, լեռ, երկաթ, ֆարձուխ, վարդ, մեխակ և այլն:

Լեզվի զարգացման արդի փուլում կան նաև տերմիններ, որոնք միջակա տեղ են գրավում լեզվի ընդհանուր գործածական և տերմինաբանական բառապաշարների միջև. օրինակ՝ կիսաբազդողիչներ, գեներատոր, տրանսֆորմատոր, կիբեռնետիկա, իմպլանտ, վիրուս, միկրոբ, մանրէ, բնագոյ, անտեննա և այլն:

Տերմինների ճնշող մեծամասնությունն, այնուամենայնիվ, ունի նեղ մասնագիտական կիրառություն և դուրս է մնում ընդհանուր գործածական բառապաշարից: Տերմինաբանական բառապաշարի գործածության ոլորտը գիտության, տեխնիկայի, արտադրության, արվեստի այլևայլ բնագավառներն են: Դժվար է մեկ առ մեկ իվարկել մարդու գործունեության այն բոլոր բնագավառները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ տերմինաբանությունը: Ըստ որում այդ բնագավառներից յուրաքանչյուրի մեջ մտնող տերմինների քանակը տասնյակ, անգամ հարյուր հազարների է հասնում: Գիտությանը հայտնի է, օրինակ, երեք հարյուր հազարից ավելի բույսերի անուններ. միայն քիմիական միացությունների թիվը մի քանի հարյուր հազարի է հասնում:

Տերմինաբանության մշակումն ու կարգավորումը: Տերմինաբանության մշակման ու կարգավորման նպատակներից մեկը նրա միօրինակացումն է: Այդ նշանակում է, որ հնարավորության սահմաններում տվյալ լեզվի տերմինաբանական համակարգում անհրաժեշտ է հասնել առավելագույն օրինաչափության, բացառել և նվազագույնի հասցնել տերմինների ձևի և բովանդակության անհամապատասխանություններն ու նկատելի թերությունները:



Տերմինաբանությունը կարող է ենթարկվել արտաքին և ներքին միօրինակացման:

Տերմինաբանության արտաքին միօրինակացումը նկատի է առնում տերմինաբանության միջազգային և միութենական (ՍՍՀՄ ժողովուրդների ազգային լեզուների) հնարավոր կարգավորումը: Այս հարցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև յուրաքանչյուր լեզվի տերմինաբանության մշակման ավանդույթներին, բառակազմական ներքին հնարավորություններին և այլն:

Տերմինաբանության ներքին միօրինակացումը իրագործվում է տվյալ լեզվի տերմինաբանական համակարգի նորմավորման, հաջող տերմինների կերտման, զուգահեռ գործածվող տերմիններից (տերմինային նույնանիշներ) ավելի հաջողների՝ հասկացությունների բովանդակության՝ համապատասխանող տերմինների ընտրության միջոցով: Ներքին միօրինակացման համար անհրաժեշտ է հետևել տերմինների համակարգայնությանը, անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր ճյուղի տերմինների ներհամակարգային փոխադարձ կապը, ինչպես նաև տարբեր ճյուղերի միջև տերմինների հարաբերակցության պահպանումը:

Վերջապես, տերմինների կարգավորման համար անհրաժեշտ է հավասարապես խուսափել ինչպես տերմինների համանունությունից, այնպես էլ հոմանշությունից (նույնանշությունից):

Տերմինաբանության միօրինակացումն ու կարգավորումը հիմնականում իրագործվում է տերմինաբանական կոմիտեի, տերմինաբանական ճյուղային հանձնաժողովների միջոցով: Վարչական միջամտությամբ արձանագրվում և օրինականացվում են միայն լեզվում արդեն գործող փաստերն ու իրողությունները:

Տերմինների ներքին միօրինակացումը որոշ չափով կատարվում է նաև տերմինների, այսպես կոչված, ինքնակարգավորման միջոցով: Դա այն երևույթն է, երբ արտաքին վարչական միջամտությունից անկախ, լեզվական գործընթացում բնական ընտրության ճանապարհով ժամանակի ընթացքում, աստիճանաբար, լեզվի օրինաչափությունների թելադրանքով տերմինաբանությունը դառնում է ձևով ու բովանդակությամբ անհաջող տերմիններից, տերմինաբանական բազմիմաստությունից, համանունությունից և հոմանշությունից:

Ժամանակակից հայոց լեզվի տերմինների կազմալուծման աղբյուրներն ու միջոցները: Հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական հայերեն տերմինների կերտման աղբյուրներն են՝ հայոց լեզուն իր զարգացման հին, միջին և նոր փուլերով, հայերեն

բարբառները և փոխառությունները, իսկ միջոցները՝ հայերենի բառակազմական օրինաչափությունները:

ա) Հայերեն տերմինների զգալի մասը ստեղծվել է լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի մեջ մտնող սովորական բաների տերմինացման շնորհիվ, ինչպես, օրինակ՝ բառ, հնչյուն, խոսք, բարբառ, կամ՝ կարմուխ, վաղախոս, կարմիր քամի, թոֆ, թև, թիակ, արմուկ, աչք, գլուխ, դաստակ, կոկորդ, երկաթ, պղինձ, անագ, կեչի, թղի, սոսի և այլն, որոնք որպես մասնագիտական բաներ կամ տերմիններ, մտնում են տերմինաբանական այս կամ այն համակարգի մեջ:

Լեզվի սովորական բառը տերմինանալով՝ սահմանափակվում է նրա բովանդակության ծավալը, այն ձևեր է բերում նոր, մասնագիտական իմաստ և մուտք գործելով համապատասխան տերմինահամակարգ, մի կողմից, նույն համակարգի տերմինների հետ մտնում է իմաստա-ձևաբանական նոր հարաբերությունների մեջ, մյուս կողմից՝ խղում է իր նախկին բառային կապերը հոմանիշների, հականիշների, համանունների հետ, պահպանելով ձևաբանական-բառակազմական հատկանիշները:

Լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի բաների տերմինացման զրական կողմն այն է, որ, նախ, պահպանվում է սեփական, ոչ փոխառյալ բառային կազմը, բառապաշարը չի համալրվում անհարկի նոր բառերով կամ տերմիններով և, որ կարևոր է, այդ կարգի տերմիններն ավելի մատչելի և հասկանալի են դառնում տվյալ լեզվով խոսող հանրությանը:

բ) Հայ տերմինաբանության աղբյուրներից են գրաբարը և միջին հայերենը: Այդ կարգի բաները կամ բառաձևերը նույնպես տերմինացման են ենթարկվում նույն իմաստներով կամ մեծ մասամբ իմաստափոխված: Օրինակ՝ գրաբարյան հաստոց բառը, որ նշանակում է խորոց, պատվար, իմաստափոխվելով, վեր է ածվել մեքենաշինության բնագավառի տեխնիկական տերմինի: Նույն ձևով նաև՝ պարետ, դիպան, արբանյակ և այլն:

գ) Հայերեն տերմինաբանության աղբյուրներից է բարբառների զավառական բառապաշարը: Հատկապես կարելի է հիշատակել գյուղատնտեսության, բուսաբանության և մի շարք այլ բնագավառներ, որտեղ մուտք են գործել տերմինացված զավառական շատ բաներ, ինչպես՝ գյուղատնտեսությանը վերաբերող՝ էտ, էտել, էտում, այգեբաղ, այգեբաց, այգեփոք, աշնանացան, զարնանացան և այլն, ինչպես նաև հազարավոր բուսանունները, որոնք մտնում են հայերեն բուսաբանական տերմինաբանության մեջ:

Քարբառներում պահպանված շատ բաներ այժմ գործածվում

են իբրև բժշկական, կազմախոսական տերմիններ, ինչպես՝ կարմրուկ, անուկ, կարմիր քամի, կապույտ հագ և այլն:

դ) Հայերեն տերմինաբանության հարստացման հաշորդ աղբյուրը փոխառությունն է:

Գիտության, տեխնիկայի, արտադրության, մշակույթի զարգացման հետևանքով առաջացած նորանոր հասկացություններին համապատասխանող տերմինները փոխառության շնորհիվ սկզբը նազրջուր լեզուններից անցնում են աշխարհի տարբեր լեզուների, այդ թվում՝ նաև հայերենին:

Ներմուծվող գիտական նոր հասկացության համար հայերենը, հանպատրաստից բառեր չունենալով, փոխ է առնում օտարը՝ մինչև սեփական, ձևով և բովանդակությամբ համապատասխան տերմինի ստեղծումը: Միայն վերջին տասնամյակներում ժամանակակից հայերենը ուսուցիչների միջոցով փոխ է առել հազարավոր տերմիններ, որոնք վերաբերում են գիտության, տեխնիկայի և մշակույթի տարբեր ճյուղերին և բնագավառներին. ինչպես՝ բիոսֆերիկա, բիոֆիզիկա, բիոֆիմիա, կիրեոնետիկա, դեմարկացիա, դեմոգրաֆիա, սոցիոլինգվիստիկա, պսիխոլինգվիստիկա, կոմբայն, բուլդոզեր, կուլտիվատոր և այլն:

Հայերենի տերմինակազմության հիմնական միջոցը հայերենի բառակազմական ներքին հնարավորություններն են: Հայերենի բառակազմության պատրաստի կաղապարներով կազմվում են հազարավոր բաղադրյալ՝ ածանցավոր, բարդ և բարդ ածանցավոր, ինչպես նաև բառակապակցական տերմիններ: Այս վերջին կարգի՝ բաղադրյալ և բառակապակցական տերմինների առավելությունը արմատական, պարզ տերմինների համեմատությամբ այն է, որ սրանց տերմինային իմաստները պատճառաբանված լինելով, իրենց բաղադրիչների՝ հիմնական և երկրորդական ձևայինների արդեն հայտնի իմաստների առումով, ավելի դյուրամատչելի և հասկանալի են գործածության համար. ինչպես, օրինակ՝ տիեզերագնաց, տիեզերակայան, տիեզերանավորդ, տիեզերանավ, տիեզերական լարուտուորիա և այլն:

Մյուս լեզուների նման հայերենը նույնպես հաճախ ոչ թե փոխ է առնում օտար տերմինը, այլ համապատասխան հասկացությունը: Այս դեպքում հայերեն տերմինների նյութը սեփական բառերն են, միջոցները՝ լեզվի բառակազմական ներքին օրինակափոխությունները:

Հայերենի բառապաշարային նյութի հիման վրա օտար հասկացությունների համար նոր տերմինների կազմության եղանակներն են՝ թարգմանությունն ու պատճենումը:

Օտար տերմինը հիմնականում թարգմանվում է հայերեն համար մեկ բառով կամ կապակցությամբ, որին ամրացվում է տվյալ հասկացության համապատասխան իմաստը. ինչպես՝ հրեզամյակ, հարվածային, շարքորյակ, աչքեային, դասակարգային պայքար, աշխատանքային կարգապահություն և այլն:

Հայերեն նոր տերմինների կազմության մյուս եղանակը պատճենումն է, երբ օտար տերմինի կամ տերմինակապակցության իմաստային փոխառության հետ ընդօրինակվում է նաև նրա բառակազմական ձևական կողմը. հակադագ (противодуг), շոգեփարջ (паровоз), ինֆեաթիո (самолет):

Տերմիններն իբրև որոշակի տերմինահամակարգի տարրեր՝ ենթարկվում են նրա օրինաչափություններին: Տվյալ ճյուղի կամ բնագավառի տերմինաբանության մշակման ընթացքում անհրաժեշտ է միօրինակություն և ներդաշնակություն հաստատել լեզվում արդեն առկա տերմինների և կերտվող ու փոխառվող տերմինների միջև: Ըստ որում, նոր տերմիններ կերտելիս կամ փոխառելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն տերմինի բառապաշարային և իմաստաբանական առանձնահատկությունները և կապը լեզվի ընդհանուր բառապաշարի օրինաչափություններին, այլև տերմինի առնչակցությունը տվյալ լեզվի համակարգի մյուս կողմերին՝ նրա հնչյունաբանական, ձևաբանական և բառակազմական առանձնահատկություններին, տերմինի դյուրահնչյունության, հնարավորության սահմաններում, նաև՝ կարծության, հոլովվելու և խոնարհվելու, բարդություններ և ածանցումներ կազմելու նրա կարողություններին:

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ

Մագումնաբանական տեսակետից ժամանակակից հայերենի բառապաշարը բաժանվում է՝ բնիկ հայերեն, ստացվածքային կամ ժառանգորդական բառերի և փոխառությունների:

1) Բնիկ հայերեն բառեր: Բնիկ պետք է համարել հայոց լեզվի այն բառերը, որոնք կազմում են նախնական՝ հնդեվրոպական բառապաշարը կամ կերտվել են հետագայում հայերենի բառապաշարային նյութի հիման վրա: Դրանք, նախ, հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատները կամ արմատական բառերն են, որոնք զրաբարից, միջին հայերենից և հայ բարբառներից փոխանցվել են ժամանակակից հայերենին, ինչպես նաև վերահիշյալ արմատներով կամ արմատական բառերով լեզվի զարգացման հին և նոր շրջաններում կազմված բաղադրությունները:

Հայերեն գրավոր հուշարձաններով ավանդված մոտ 11 հազար բառարմատներից, ըստ Հ. Աճառյանի տվյալների<sup>46</sup>, հրնդեվրոպական ծագում ունեն հայերեն մոտ 930 բառեր: Այդ թիվը որոշ շահով կարող են լրացնել հայերեն բարբառներում պահպանված գավառական այն բառերը և դրանցից հատկապես այնպիսիները, որոնք հնդեվրոպական ծագում ունեն կամ առնչվում են հնդեվրոպական ցեղակից լեզուներին: Այս կարգի բառերի ցուցակներ են բերում Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը<sup>47</sup>: Այդ բառերից կարելի է հիշատակել՝ բոթել, բոռալ, լալ, կուլա, մուգ, հան, ջիվ, փիփերդ և այլն: Այսպիսով, ինչպես գրաբարյան հուշարձաններով վկայված, այնպես էլ քարբառներում պահպանված հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատների ընդհանուր թիվը այդ լրացումներով անցնում է 1200-ից:

Ըստ բնության, կենդանական և բուսական աշխարհի, մարդու և մարդկային գործունեության տարբեր բնագավառների պատկանելության հիշյալ բառերը ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

1) *Բնությանը, բնության երևույթներին պատկանող բառեր.* առև, արեգ, արեգակ, աստղ, լուսին, լույս, աճոյ, ամպրոպ, բուխ, մորիկ, կարկուտ, ձյուն, բռն (անձրև), մեգ, բալ, սառև, շրփա (ձյունախառն անձրև), առու, գետ, հեղեղ, աղբյուր, ալիք, սղոթ, մար, լիկ (ճահիճ), տիղմ, հուն, անդունդ, սառ, բլուր, հողմ, հով, օդ, պուտ (կաթիլ) և այլն:

2) *Մարդուն վերաբերող և մարդու մարմնի մասեր նշանակող բառեր.* ակ(ակն), աչք, ականջ, ունկն, ունգ(ն), այտ, բեբան, բիւք, լեզու, ատամ, լինդ, ծնոտ, երես, մորուխ, ալիք (մազերի), կույ, կակոդ, որկար, ուն (վիզ), արմունկ, ուս, ձեռք, աչք, ափ, մառ, եղունգ, թիկն (թիկունք), լանջ, սախն, սիրա, լյարդ, կող, մեջք, ող(ն), որովայն, փամփուշտ, փայծաղ, արգանք, ընդերք, երաստան, քամակ, շեք, ազդր, ծունկ, ծունք, ամբարձիք, նետ, ոտ, ոլոք, սրունկ, ջիլ, գեղձ, արյուն, միս, մարմին, անձր(ն), մուկ(ն) (մկան), ոսկր, հող, նյարդ, արտատուք, արտասր, բուխ, մեգ, փին, քաթիք (փրտն), միտք, հոգի, տոզ (տողիք) արու և այլն:

3) *Ընտանիք, արյունակցական-ազգակցական, բարենկամական կապեր ցույց տվող բառեր.* ամուսին, աչք, կին, հայր, մայր,

մամ (մայր, տատ), աղե (մայրիկ), նան, նանե, նանի (մայր, տատ), ապի (հայրիկ, եղբայր), ափու (հայր), հավ, հորա (յորայ), մորու (մորու), հանի, եղբայր, բոռ, ֆույր, դուստր, սուստր, որդի, մանուկ, մանչ, սան, հարս, նու, սկեսուր, տայգր (տեգր), տալ, քենի, ներ, որք, բնաանիք, գերդաստան, արբանյակ, բնկեր, երեց, մարդ, բնաանիք, գերդաստան:

4) *Հիվանդություններ և այլ երևույթներ նշանակող բառեր.* երկունք, կեղ, պալար (բշտիկ), էլունդ, դալուկ, ջերմ, խիթ, խոթ, մոմուռ (ցավ), բարախ, լոբց, բանչ, լուս(ն), ջիլ, խեղ, ործ(կ)ալ, հնալ, հիբնալ, խույլ (խուլեր), հոլի, դեղ, բոթով, մածել (շփել, տրորել):

5) *Կրոնին, դավանանքին վերաբերող բառեր.* դիք (հեթանոսական աստվածներ), ձոն (մատաղ, նվեր), մաղթել, մեղք, սուրբ, տոն, երդում, անեծք, բովել, ստեղծել, ֆավել:

6) *Կենդանական աշխարհին վերաբերող բառեր.*

ա) *Ընտանի կենդանիների անուններ.* ամիկ (մեկ տարեկան այծ), ուլ, այծ, ափաղաղ, բուծ (գառ), գառ, եգ, էջ, կով, հավ, ձի, մաֆի, մարի (էգ), մեղու, մոզի, շուն, սկունդ, որք, սագ, տավար, ցուլ, ձագ, ձուկ, թռչուն, ֆոթոք: Բայեր՝ մկկալ, խլշել, խլթլազանել (ականջները ցցել), խլվալ, խլալալ (շարժվել, թռվոսալ, թարտալ):

բ) *Վայրի կենդանիների, թռչունների անուններ.* աղվես, առյուծ, արծիվ, արջ, բոբենի, գայլ, եղն(իկ), ինձ, լուսան, ծիծառ (ծիծեռնակ), կռունկ, ոզնի, ցիճ, ուրուր, կռավել, կալանչել, ոռնալ:

գ) *Սողունների, միջատների և վնասատու այլ կենդանիների անուններ.* անիծ, բոռ, բրետ, թիթեռ, բրբառ, լու, կետ (անասնաճանճ), մլակ, մլուկ, մուն, մրջյուն, մղմեղ, մղմող (ցնց), սարդ, տիգ, իծ, ֆարք, օձ, գարտ, մուկ:

7) *Երկիր, պետություն, զենք նշանակող բառեր.* առյան, մարտ, աղմուկ (կռիվ), թուր, նետ, պաֆ, կուլք, գերի:

8) *Մետաղներ, հանքեր նշանակող բառեր.* աղ, արծաթ, ավազ, պալ, ֆար:

9) *Գյուղատնտեսություն, երկրագործություն, անասնապահությունը վերաբերող բառեր.*

ա) *Բույսերի անուններ.* բոզ, բողիկ, բողկ, բույս, գաղձ, գափ, դինձ, գեղձ, դեղձ, եղևին (եղևնի), սխտոր (խտոր), կաղիք, ճացի, բոֆի (պոթի), թեղի, մայրի, դաղձ, մորենի, որթ, սիսեռ, տատասի, փիփերք, ցախ:

բ) *Բուսաբանական ընդհանուր բառեր.* ան, արմ, արմատ,

<sup>46</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, էջ 108—112:

<sup>47</sup> Հ. Աճառյան, Երևան տեղում, էջ 119—122: Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 283—289:

բարոյ, բերք, ծառ, կողք, մոլ, ողոր, ոստ, պատկ, ջով (ծիւ), սերմ, ստեղ, շիվ:

դ) Գյուղատնտեսական գործիքների անուններ. առոր, բան, բիր, եղան, թի, լուծ, սամի, սամեաի:

դ) Երկրագործական-անասնապահական բառեր. ածու, ածել, բել, բուսնել, հերկել, պեղել, փաղել, այգի, առա, առոր, բերք, բերի, ոսաին, դալար, դեղ (խոտ), դեզ, դիզել, բույս, բուփ, արդյունք, կավառ (նեղ առու), անդ, հող, աղալ, արածել, բուծել, բան, բուտ, դիել, գեղմ, գոմ, երի, երբուծ, բառ (թառեկ), բրիք, փքիր, փակոր, տարք (աթար), լակ, լափ, լափել, խաշ, խեշ, խոշ, ծանծ, կոյ, հովիվ, հոտ, հորան (այծի հոտ), ձետ, մալել, մածնել (մածնուլ), հղի, որձ, որոնալ, ստեղ, ստե, ստինք, տիկ, տավար, առա:

10) Շինարարութիւնը, արհեստներին, առևտրին վերաբերող բառեր.

ա) Շինարարութիւն. անդ (գրանդի), անդաստակ, անկյուն, անագաստ, առաստաղ, աստղծ, գերան, դուռ, բույր, խուղ (հյուղ), կամուրջ, կավար (տանիքի տախտակ), մայք, մույք, սանդալք, սյուն, տուն, ցանկ, ցիվ, քիվ:

բ) Արհեստ, առևտուր. ասեղ, աղալ, արծնել, դակուր, դարբին, դարգ, երկան, թակ, բարփ, թեփել, թիթեղ, թործ (անկյունածն տաշած փոս), լասակ, լար, կարք, կար, կակել, հերշուն (մեծ ասեղ, մախաթ), հեճք, հեռել (յեռուլ) (եռակցել), հիճել, հնոց, հողել, ձաղկ, ձե, ձուկել, մամուլ, մալանչ (զգած բրդի), մխել, արս, սալ, սարել, սարք, սարի, տօրգ, փերել, փերթել, փեծել, օղ, կուլա, կընուն, պուլիկ, զին, գնել:

գ) Մովազնացութիւն. առագաստ, թի, լաստ, նավ:

11) Արվեստին, կրթութիւնը վերաբերող բառեր. գիր, գրել, ընթերցել (ընթեռնուլ), ուսանել, թիվ, գեղգեղել, երգ, երգել, առած, առակ, առասպել:

12) Հագուստիղենին և զարդեղենին վերաբերող բառեր. հագնել (ագանիլ), անկողին, բարձ, մերկ, բոկ (բոկոտն), գինդ, արդ, գարդ, զգեստ, օթոց, օծել:

13) Ուտելիք և ըմպելիք նշանակող բառեր. աղանձ, բակեղ, դոն (հացի տեսակ), դալ, կարք, կօգի (կարագ), կորկառ, կեր, կուտ, կերակուր, արբ (արբեճալ), ուտել, այլուր, բան, մածուն, մեղր, չիւ, ջուր:

14) Առանին տնտեսութիւնը, կենցաղին վերաբերող բառեր. աղարիք, աղալ, անյուն (մոխիր), առ (բուրդ), ավել, աման, այրել, արծարծել, բարբախել, բովել, բոց, բուլ (խմորի գունդ), բուրդ, գեղմ,

եռալ, եփել, թաթալել, լեսել, լոգանալ, լվանալ, լուցանել, խայծաղ, խանձել, խաշել (խարշել), խարել (դաղել), խորովել, կայծ, հալել, հեղել, գեղել, հիճել, հուս, հար, մոխ, մուտ, մրկել, մուր (մուրճ), հայ, շաղել, շաղաղել, նույր (մաղի տեսակ), պղպղակ, շեռուցել, գրալ (գրգալ), փամել, փերել, սղկել (մանրել):

15) Գույների անուններ. դեղին, դեղձաճ, մուգ:

16) Թիվ, շափ նշանակող բառեր. մի, երկու, երեք (միճել) ինեսունինն, ամբողջ, ամենայն, ավելի, թիվ, կրկին, հաղ (հեղ), մեն, միայն, հոլով, ստեղ, փան(ակ), երկայն, երկար, լայն:

17) Դերանուններ, շողկապներ, նասրդիրներ. ես, դու, եա, սա, դա, եա, մե(ն)ք, սույն, դույն, նույն, այս, այդ, այն, ավաթիկ, ավադիկ, ավանիկ, այլ, աստ, անդ, առ (մոտ), արդ (այծմ), արդյոք, բոլոր, եթե, ես, եմ, գի, իք, չիք, մի, ինչ, յուր, գի, թե, ընդ, ըստ, մյուս, միայն, միմյանց, միթե, նամանավանդ, ով, որ, ոմն, ոք, ոչ, ուր, ուրեմն, ի, ց, քան, իսկ:

18) Ժամանակ, տեղ, տարածութիւն, շարժում ցույց տվող բառեր. ամ (տարի), ամառ, ամիս, արդ, արտ (դուրս), գարուն, գեր (վեր), գիշեր, երեկո, երեկ, դեռ, աղբնթեր, հանուր, հեռի, հեռու, հուպ, ձմեռ, մերձ, մեջ, մոտ, մինչ, հեռ (յեռ), հեռո (յեռո), ներ, ներքո, ի վեր, տեղի, տեղի, տիվ, ցերեկ, օր, օրեանել, արեհեռ, կածան, ուղի, գալ, երթալ, շվել, հաճել (յածել):

19) Կյանքի սովորական բառեր. ազագել (լղարել), ազտ, այլ, անձուկ, անուն, աղավաղել, աղատ, աղկաղկ, արգանատել, արթուն, առնել (առնուլ), առնել (շինել), առել, արի, արդար, անուրջ, արգել, ասել, արծարծել, այց, ընկնել (անկանել), արմանալ (գարմանալ), բան, բառ, բամբասել, բառնալ, բարձ, բեկել, բեռ, բերել, բերձ (բարձրաբերձ), բլբլալ, բոլոր, բոթել, բուր (կոոր), բոռալ (գոռալ), բուք, բրդել, գալ, գալարել, գաղել, գաղտ, գաղջ, գան (զղվանք), գանել (զղվել), գարշ, գեղեցիկ, գեղգեղել, գերփել, գոդ, գլուխ, գեջ, գլել, գիտեճալ, գոնել, գոյ, գործել, գոփել, դադարել, դամբան, դամբարան, դառնալ, դեղնել, դի, դիակ, դեղ, դնտել (ծեծել), դուզ, եզր, եկ, երգծել, երեւալ, ելնել, կուլակ, կղնել (լինել), եղուկ, երևալ, երեց, երթալ, երկնել, գայրանալ, գանգիտել, գարկ, գգալ, գեղել, գերծ, գմբել, ընթանալ, ընծա, ընկղմել, ընտիր, թաթալել, թակել, թափնել (թափշի), թառամ, թարշամ, թանձր, թարմ, թավ, թմբել, թեր, թերի, թոշել, թոնթորալ, թոպել, թնդալ, թնկթնկալ (հեկեկալ), իր, իրավ, լալ, լավ, լերկ, լիզել, լի, լցնել (լնուլ), լկել (սասուլցը սկսել հալել), լիրք, լկել, լկտած, լողալ, լլիրծ, լլիրշ, լուծել (լուծանել), լոք (տալ) (գտակել), լսել, լիի, լուտալ, լուտ, խածել, խայթել, խայծ, խայտ, խանդ, խնդալ,

ժառր, ծիծաղ, ծամել, ծեծել, ծեք, ծնել, ծայտուն, ծուլ, կալնել (կալու), կաղաղ (որջ), կաղավել (օձի՝ սառչել, թմբել), կարգալ (կանչել), կարծր, կատակ, կյալ (կեալ), կենդանի, կողմ, կլանել, կլոր, կմշել, կմշոց, կնդել (խուզել), կողինձ (կորիզ), կրծել, կրկիտ (պինդ, ամուր), հայցել, հասնել, հաստ, հատատ, հարկ, հարթել, հարցնել, հարել (յարի), հարմար (յարմար), հավելել (յաւելու), հեղել (յեղու), հագնալ (յագենալ), հանգ (յանգ), հառնել (յառնել), հեծնել, հեղզ, հեռ, հերթ (կարգ), հին, հյուր (հյուր), հոգ, հոլանի, հուլ (սեղմ), հոլավել, հոա, հոտոտել, ձաղել, ձիւ, ձր, ձրի, հանաչել, հառագել, մանր, մաշել, մատաղ, մատղաշ, մարել, մզլել (բորբոսնել), մեծ, մեղկ, մեղմ, մեռնել, մլալ, մլմլալ (ծխալ), մրնալ, մոգոնել (Տորինել), մոլի, մոլար, մոլոր, մույն, մոռանալ, մունջ, ներքն, նստել, նար, նսեմ, նուրբ, շեղ, սղբալ, սղաղել, սղակ, սղարմել, սղոնել, սղջ, շոր, պապանձվել (պապանձիլ), պինդ, պլոկել, պլպլալ, ջանալ, ջեւմ, ջին, ջնել, ջինջ, ջնջել, սաստ, սաստիկ, սեռ, սերել, սերունդ, սեգ, սիրել, սխալ, սին, սնել, սկել (ընկղմվել), սպառնալ, ստեպ, ստիպել, ստանալ, ստույգ, սուտ, սուր, սուրբ, տամուկ, տատանել, տարտամ, տարտղնել (ցրել, ցիրուցան անել), տզկել (թացանալ), տնտղել, տնփալ, տոկալ, տեսնել, տնել, ցայտել, ցեղ, ցելել (ցելու), ցտել, ցրել, ցուցանել (ցուց տալ), ուծանալ, ունայն, ուտել, ուրանալ, փանափ(ի) (վատ), փայլ, փայլել, փողփողել, փարվել (փարիլ), փեռնկել, փերթ, փորձել, փոքիլալ, փոքկացնել (հանկարծակի ծիծաղել), փլշել (փլանիլ), փշել, փոքր, փտալ (վրիպել), փուստ, փոալ, փոփոալ (ֆրոֆրոալ, ծածանվել), փրփուր, փութալ, փուփ, փաղց, փն, փոքել, փսել, փուն, օգնել, օգուտ:

2) Փոխառյալ բառեր: Ժամանակակից հայերենի բառապաշարի բաղկացուցիչ մասն են կազմում փոխառյալ բառերը: Փոխառությունները փաստորեն ուրիշ ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի բնական արդյունքն են, երբ այդ շփման հետեանքով նորանոր հասկացությունների, իրությունների հետ լեզվի մեջ մուտք են գործում նաև դրանց նշանակող բառերը: Այդ եղանակով երկարատև տնտեսական, քաղաքական, մշակութային, ուղղական, կրոնական և այլ կապերի շնորհիվ հայոց լեզվում մուտք են գործել և ամրացել օտար շատ բառեր: Դրանք այն բառերն են, որ հայերենը իր պատմական գոյատևման ու զարգացման ընթացքում փոխ է առնել ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից:

Փոխառությունները սովորաբար ավելի շատ վերաբերում են.

ա) հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական տերմիններին.

բ) կենցաղային, տնային գործածության առարկաներին (հագուստեղենի, կոշիկեղենի, զանազան գործիքների, ուտելիքի, ճաշատեսակների և այլնի անվանումներ).

գ) տեղանուններին, աշխարհագրական անուններին (երկրների, բնակավայրերի, գետերի, լեռների և այլն անուններ).

դ) ժողովուրդների և մարդկանց անուններին (էթնոնիմիկա և օնոմաստիկա):

Միաժամանակ հատկանշական է, որ բառապաշարի ոչ բոլոր բաժիններն են հավասարապես կամ նույն չափով լրացվում փոխառությունների շնորհիվ: Որպես կանոն, խիստ հազվադեպ են փոխառվում հիմնական ֆոնդի բառերը, օրինակ՝ ազգակցականարյունակցական կապեր ցույց տվող այնպիսի էական բառեր, ինչպես՝ հայր, մայր, եղբայր, քույր, որդի, զավակ, աղջիկ, դուստր, քեռի և այլն, մարմնի մասերի անվանումներ՝ գլուխ, աչք, ախանջ, առամ, լեզու, քիթ, բերան, ձեռք, ոտք, սիրտ, բազուկ, թև և այլն, անձնական դերանունները, քանակական թվականների մեծ մասը, կարևորագույն բայերը, հիմնական որակական ածականները և այլն:

Բառային փոխառություններն ունեն արտաքին և ներքին, արտալեզվական և լեզվական պատճառներ:

Փոխառության արտալեզվական գործոնները կապված են ժողովուրդների միջև ծավալվող քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և նման կապերի հետ, պայմանավորված են նաև գիտության, տեխնիկայի և արտագրության փոխազդեցությամբ և փոխներգործությամբ: Նշված հարաբերությամբ պայմանավորված փոխառությունները կոչվում են մշակութային-պատմական: Փոխառություն կարող է կատարվել նաև հարկադրաբար, երբ մի ժողովուրդ գտնվում է մեկ ուրիշի պետական, քաղաքական վարչական և տնտեսական երկարատև տիրապետության ներքո: Այդ եղանակով են կատարվել հայերեն բարբառների թուրքական բազմաթիվ փոխառությունները:

Մշակութային-պատմական փոխառություններից բացի (երբ փոխ է առնվում տվյալ լեզվում բացակայող բառ-հասկացությունը)՝ գործում է նաև «զուտ լեզվական» փոխառությունը, որը կապ չունի հասկացությունների (առարկանների, երևույթների) փոխառության հետ: Փոխառության այդ եղանակը վերաբերում է հատկապես հին հունական և լատինական բառարմատների (հաճախ՝ տերմինատարրերի) հիման վրա եվրոպական լեզուներում (անգլերեն,

Ֆրանսերեն, ռուսերեն և այլն) նոր բառերի կազմությունը: Ավտոմոբիլ (հունարեն՝ autos — ինքն + mobilis — շարժական, բառացի՝ ինքնաշարժ) բառը բաղադրիչների ծագմամբ հունական փոխառություն է, բայց և հիմք չկա պնդելու, թե ավտոմոբիլ հասկացությունը նույնքան հին է, որքան հին են այդ բառի բաղադրիչ-արմատները:

Փոխառության ներքին պատճառները մասամբ բխում են արտաքին պատճառներից: Արտաքին գործոնների շնորհիվ օտար լեզվից փոխառված բառը փոխառու լեզվում հանդես է գալիս որպես դեռևս անծանոթ հասկացության լեզվական համապատասխանություն: Փոխառության ներքին հիմնական պատճառն, իհարկե, տրվելու հասկացության, գաղափարի, իրույթի համապատասխանող բառի բացակայությունն է փոխառու լեզվում: Եթե լեզուն մինչ այդ բացակայող հասկացության համար բառակազմական իր սեփական հնարավորություններով կամ միջոցներով ի վիճակի է անմիջական նոր հաջող բառ կերտելու, այդ դեպքում փոխ է առնվում միայն տվյալ հասկացությունը: Մյուս բոլոր դեպքերում այդ հասկացության հետ լեզուն փոխ է առնում նաև օտարազգի բառը:

Այսպիսով, բառի փոխառություն հիմնականում կատարվում է նոր իրերի կամ առարկաների հետ կամ մշակութային, դիտական, տնտեսական, ռազմական և այլնի շփման միջոցով նոր երևույթների և ձևերի յուրացման ընթացքում: Ինչպես, օրինակ՝ տրակտոր, տրամվայ, տրոլեյբուս, կոմբայն, տանկ, գեներալ, դիվիզիա, դիվիզիոն, ղոցենտ, պրոֆեսոր, դեկան, դեկանատ, ռադիո, կիրեն-ենտիկա, վոլեյբոլ, բասկետբոլ, թենիս, ֆուտբոլ և այլն:

Օտարազգի բառի փոխառությունը կարող են նպաստել նաև ներքին այլ պատճառներ, որոնցից կարելի է հիշատակել հետևյալները.

ա) Այս կամ այն հասկացության համար կազմված բառի անբարենչընդունությունը, հատկապես երկարությունը. ինչպես՝ աուրիզմ — գրոսաշրջագայություն, գրոսաշրջիկություն, կոմպոզիտոր — երաժշտաստեղծ, երաժշտահարդար, կոմպոզիտ — աշխարհաբաղաճի, համաշխարհաբաղաճի:

բ) Նորակազմ բառի իմաստային անհամապատասխանությունը, անգամ՝ մասնակի անհամապատասխանությունը, երբ այն կարող է բառիմաստի որոշ խեղաթյուրում առաջացնել. ինչպես, օրինակ՝ համայնավար (կոմունիստ), համայնավարություն (կոմունիզմ), քնկերավար (սոցիալիստ), քնկերավարություն (սոցիալիզմ), նյութապաշտ (մատերիալիստ), նյութապաշտություն (մատերիա-

լիզմ), բնաշրջում, բարեշրջություն, շրջափոխություն (էվոլյուցիա) և այլն:

դ) Երբ փոխառու լեզուն ձգտում է տվյալ հասկացության համապատասխանող բառին տալ իմաստային կամ ոճական որևէ նրբերանգ կամ տարբերակում. ինչպես, օրինակ, պարսկերենից փոխառյալ հարևան և բնիկ (սեփական)՝ դրացի, ասորերենից՝ ձեթ և սեփական (բնիկ)՝ յուղ և այլն:

զ) Տվյալ հասկացության համար լեզվում առկա բառի իմաստային նրբերանգային տարբերությունները առանձնացնելու պահանջը, երբ փոխառությունը լեզվում հոմանշային կիրառություն է ձևոր բերում: Այս դեպքում փոխառությունը կապված չէ նոր հասկացության հետ, որովհետև փոխառու լեզվում գոյություն ունի և՛ հասկացությունը, և՛ դրան համապատասխանող բառը: Այսպիսով, լեզվում առկա սեփական և փոխառյալ բառերի միջև հաստատվում են հոմանշային հարաբերություններ:

Օրինակ, կոմպոզիտ-փոխհամաձայնություն, տարբերացում-դիֆերենցիացիա, կոմպակտն-գործընկեր, անտեսություն-էկոնոմիկա, համակարգ-սխեմա (ընտրական սխեմա, նյարդային համակարգ, լեզվի համակարգ), գործընթաց-պրոցես:

ե) Օտարազգի նույն բառի համար հայերեն մեկից ավելի բառերի առկայության և նորերի կազմության դեպքում, երբ հայերեն համապատասխան նույնանիշների առատության պատճառով, որոշ դեպքերում վերջին հաշվով նախապատվությունը տրվում է փոխառությանը. ինչպես, օրինակ՝ կոմպոզիտոր և երգահան, երգաստեղծ, երաժշտահարդար, երաժշտաստեղծ, նվագաստեղծ, նվագահարդար. կամ՝ կոմպոտ և խաշաք, շամշարակ, մրգաթան, մրգանուշ և այլն:

զ) Լեզվի քառային կազմում և հատկապես տերմինաբանության բնագավառում բառի բազմիմաստությունից խուսափելու կամ բազմիմաստության վերացման նպատակով հաճախ ավելի նպատակահարմար է լինում համապատասխան բառի փոխառությունը. ինչպես, օրինակ՝ կոմպրեսոր — 1) (տեխ.) հնդակ, 2) բժշկ. սեղմակ, սեղմիչ:

Բանավոր և գրավոր (կամ գրկային) փոխառություններ: Փոխառություններ կատարվում են երկու ճանապարհով՝ բանավոր և գրավոր: Բանավոր փոխառությունները կատարվում են այլալեզու հանրության ստվար զանգվածի կամ առանձին անհատների հետ անմիջական, առօրյա շփման՝ խոսակցական հարաբերության միջոցով: Այդ իսկ պատճառով փոխառու լեզվից հիմնականում յուրացվում է խոսակցական բառապաշարը, որն ըստ ամենայնի համապատասխանեցվում է սեփական լեզվի հնչյունական, քերական-

նական և իմաստարանական համակարգին: Հաճախ ժողովրդական ստուգաբանություն շնորհիվ այս դեպքում փոխառյալ բառերը աղավաղման են ենթարկվում:

Մյուս կողմից, բանավոր փոխառությունների դեպքում առաջին հերթին լրացվում է բարբառային-խոսակցական բառապաշարը: Մինչդեռ, հիշյալ եղանակով կատարված փոխառություններին մուտքը գրական լեզվի բառապաշարը սովորաբար տեղի է ունենում երկար ժամանակահատվածի ընթացքում և այն էլ սակավաթիվ դեպքերում: Հատկանշական է նաև այն, որ բանավոր փոխառությունների դեպքում հայերենում նկատելիորեն աղավաղվում է փոխառյալ բառի արտաքին տեսքը՝ հնչյունական կազմը, ենթարկվելով երբեմն բարբառային-խոսակցական լեզվի օրինաչափություններին: Օրինակ՝ ստաբան, կրուշկա, գրաֆիկա, շիֆաներկա, մարոմնի, պերոմնի, պեչենի, մարմալադ, սապոշի, տուֆի, բասանոշկա և այլն:

Գրավոր կամ գրքային փոխառությունները կատարվում են գեղարվեստական, գիտական, տեխնիկական, հասարակական-քաղաքական, պատմական գրականության, պարբերական մամուլի, պաշտոնական և գործարարական փաստաթղթերի շնորհիվ, և այդ պատճառով այդ եղանակով կատարված փոխառյալ բառերը իրենց արտաքին տեսքով՝ հնչյունական կազմով և իմաստով մոտ են մնում սկզբնաղբյուրին՝ փոխառու լեզվին: Փոխառու լեզվում նրանց յուրացումը նույնպես անմիջապես չի կատարվում, այլ՝ աստիճանաբար, որոշ ժամանակի ընթացքում: Գեղարվեստական, գիտական գրականության միջոցով կամ այլ ուղիներով կատարվող գրավոր կամ գրքային փոխառյալ բառերն ավելի «բարձր» են նշանակություն մը, հուզաարտահայտչական զունավորմամբ առնչվում են ավելի շատ լեզուներին:

Ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր փոխառությունները ժամանակակից հայերենը կատարել է իր պատմական զարգացման բոլոր փուլերում, այն կատարվում է նաև արդի փուլում: Ժամանակակից հայերենին բանավոր փոխառություններն անցել են բարբառներից, իսկ գրավոր փոխառությունները՝ հիմնականում գրականության միջոցով:

Փոխառությունները կարող են կատարվել զանազան ժամանակներում, բայց որում տարբեր ժամանակներում նույնիսկ նույն լեզվից կատարված փոխառություններ, որոնք փոխառու լեզվում ենթարկվում են հնչյունական տարբեր օրինաչափությունների, ստանում են հնչյունական տարբեր ձևավորում: Այսպես, հանկ բառը հին պարսկերենից է, շանգ-ը՝ նոր պարսկերենից (վերջինս գործած-

վում է Երևանի բարբառում): Պողովատ և պոզպատ բառերը նույնպես պարսկերենից տարբեր ժամանակների փոխառություններ են: նույն ձևով արաբերենից՝ կեղև և կլեպ, կենպ բառերը, հունարեն՝ ստեպլին (գաղար) (հունարեն՝ staphylinos) և ստապլին, տապլին ձևերը: Տարբեր ժամանակներում կատարված փոխառությունները հաճախ հայերենում դառնում են բառահնչյունաբանական կրկնականներ, հոմանիշներ և նույնիսկ տարբեր բառեր: Ինչպես, օրինակ՝ Արամազդ, Ումիզդ և Հյուրմուզ հայերենում գիտակցվում են իրեն տարբեր անուններ, թեև փոխատու լեզվում նույնն են:

Փոխառությունները կարող են կատարվել մի լեզվի մի բարբառից կամ մի քանի բարբառներից: Առաջին դեպքում փոխառյալ բառը սովորաբար մեկ ձև է ունենում, երկրորդ դեպքում՝ մի քանի (երկու և ավելի) ձևեր, որոնցից յուրաքանչյուրը տարածվում է փոխառու լեզվի տարբեր բարբառներում (կամ գրական լեզվում և բարբառներում): Օրինակ՝ իրանյան (պարսկական) մարձել և մարզել, մածել (իրանական բարբառային ձևեր), վիշապ և հուշապ (իրանական բարբառային ձև). կամ՝ թուրքերեն üzerlik (սպանդի խոտ), Երևանի բարբառում՝ ուզարլիկ, Ղարաբաղի բարբառում՝ զաւնիկ ձևերով<sup>48</sup>:

Փոխառյալ բառի հնչյունական, ձևաբանական և իմաստային յուրացումը: Փոխառյալ բառերը ենթարկվելով փոխառու լեզվի հնչյունական, ձևաբանական (քերականական և իմաստային՝ իմաստաբանական) կանոններին ու օրինաչափություններին, դառնում են այդ լեզվի բառային կազմի միավոր: Ուրիշ լեզուների նրման հայերենը նույնպես փոխառությունը նույնություն մը՝ հնչյունական, քերականական և իմաստային տեսակետից բացարձակապես անփոփոխ վիճակում չի ընդունում: Այն ենթարկվում է հընչյունային, ձևաբանական կամ իմաստային որոշակի փոփոխման կամ հարմարեցման:

Փոխառյալ բառերի յուրացումը անմիջապես չի կատարվում: Բայց յուրացված է համարվում, եթե այդ լեզվում ձևը է բերում բաղաբացիության իրավունք և մտնում է մշտական գործածության մեջ, իսկ օտար բառը այդ իրավունքը ձևը է բերում միայն հընչյունական, ձևաբանական և իմաստային լիակատար հարմարեցման դեպքում:

Հնչյունական յուրացումը օտարազգի բառի գրային կամ հնչյունական արտահայտումն է փոխառու լեզվի միջոցներով, տեղյալ դեպքում հայերենի հնչյունական օրինաչափություններով: Այդ

<sup>48</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., Ա. Գաս, էջ 234, Բ մաս, էջ 423—424:

արտահայտվում է, նախ, նրանով, որ փոխառյալ բառի կազմության մեջ մտնող հայերենում բացակայող հնչյունները փոխարինվում են ավելի մոտ հնչյուններով, և, որ կարևոր է, փոխառությունը համապատասխանեցվում է հայերենի հնչյունական համակարգից բխող օրինաչափություններին և նրանցով պայմանավորված հայերեն բառերի հնչյունական (հնչույթային) կառուցվածքներին: Փոխառյալ բառի հնչյունական յուրացման տեսակետից տարբերվում են հին և նոր փոխառությունները: Ակնհայտ է, որ հատկապես նորագույն փոխառությունները համեմատաբար ավելի թիչ են ենթարկվում հնչյունական փոփոխման, քան հին շրջանինը: Ժամանակակից հայերենում, միաժամանակ, փոխառությունը ենթարկվում է նաև ուղղախոսական-արտասանական օրինաչափություններին, հարմարեցվում արտասանության-շեշտադրության կանոններին:

Փոխառյալ բառերը ենթարկվում են նաև տվյալ լեզվի ձևաբանական (քերականական) յուրացմանը, այսինքն՝ փոփոխման են ենթարկվում նրանց ձևաբանական կառուցվածքը և քերականական առանձնահատկությունները:

Նորագույն՝ ուսերենից կամ ուսերենի միջոցով կատարվող փոխառությունների ձևաբանական կառուցվածքի յուրացումն արտահայտվում է նրանով, որ.

ա) Հայերենում բառը փոխ է առնվում ամբողջական կառուցվածքով, առանց հիմքի և ածանցի տարանջատման և սկզբնական շրջանում առանց դրանց տարրորշման, ինչպես, օրինակ՝ դարվի-նիզմ, սոցիալիզմ, մատերիալիզմ, կոմունիզմ, նոմինալիզմ, նոմինալիստ, սոցիալիստ, կոմունիստ և այլն:

բ) Հատկապես չի գիտակցվում ուսերենից փոխառված գոյականների սեռը, նրանց սեռային վերջավորությունը: Այսպես՝ մասսա, մատերիա, ֆակտուրա, բրոկադա, ամպլիտուդա, պրոպագանդա, բազա և այլ բառերում չի գիտակցվում սեռային վերջավորությունը: Վերջին շրջանում այդ կարգի մի շարք բառեր հայերենում գրվում են առանց այդ վերջավորության. ինչպես՝ բրիգադ, բալլադ, պոեմ, սյուիտ և այլն:

գ) Օտարազգի ամբողջական բառերը կամ հիմնական ձևույթները ենթարկվում են հայերենի ձևաբանական (քերականական) օրինաչափություններին, հոլովվում, խոնարհվում և ընդունում են զանազան հոգեր, մասնակցում բառակազմությանը: Ռուսերենից փոխառված որոշ բառեր, որոնք փոխառու լեզվում չեն հոլովվում (ինչպես՝ պալատ, մեռո, կինո, կաշնե, կուպե և այլն),

հայերենում ենթարկվում են հոլովական ընդհանուր օրինաչափությանը:

Հայերենում կատարվում է փոխառյալ բառի իմաստային յուրացում: Սովորաբար փոխ են առնում օտարազգի բազմիմաստ բառի ոչ բոլոր, այլ մեկ կամ մեկ-երկու հիմնական իմաստները, հիմնականում այն հասկացության համապատասխան իմաստը կամ իմաստները, որոնք բացակայում են հայերենում:

Փոխառյալ բառերը, մտաք գործելով լեզվական նոր միջավայր, նոր լեզվի համակարգում դառնում են նրա բառային կազմի միավոր և այլևս պասիվ չեն մնում, ընդհակառակը, անջատվելով մայրենի, հարազատ հողից, նրանք նոր միջավայրում սկսում են իրենց կենսագործունեությունը զարգացման նոր փուլով և հաճախ ձեռք են բերում նոր իմաստներ, իմաստային դանադան նոր բերանգներ և երբեմն այնքան են հեռանում սկզբնաղբյուրից, իրենց նախնական իմաստներից, որ անգամ անճանաչելի են դառնում: Այդ դեպքում փոխառության միակ հիշողությունը կարող է լինել միայն նրա հնչյունական պատյանը՝ արտաքին տեսքը: Գալանտերեա (галантерея բառը ծագում է галантный ածականից <ֆրանս. galant—խիստ, շափազանց փառափառի>). վերջինս վերաիմաստավորվելով՝ ստացել է «արդուզարգեղեն, արդուզարդի մանրուքներ» իմաստը:

Բառի «ճեքիմ ձևը» փոխառու լեզվում: Լեզվական նոր միջավայրում փոխառյալ բառի ստուգաբանական իմաստը ընդհանրապես չի գիտակցվում: Նոր միջավայրում փոխառյալ բառը գրկվում է նաև իր «ներքին ձևից», այլևս չի գիտակցվում բազադրիչների շնորհիվ մեկնվող նրա ընդհանուր իմաստը: Դրա հիմնական պատճառը այն է, որ այդ կարգի փոխառությունը նոր լեզվում որպես բազադրույթուն չի ընկալվում: Այն գիտվում է իբրև պարզ, արմատական բառ: Ռուսերենի միջոցով փոխառյալ պոմիդոր բառը իտալերենում բազադրույթուն է, կազմված՝ pomi-d-oro, որ բառացի հայերեն թարգմանվում է ոսկե խնձոր: Նույն ձևով՝ գերմաներեն կուրորտ, kur-ort— բուժավայր, անգլերեն սնայպեր— snipe—ճեպճ բառացի՝ բեկասի հմուտ որսորդ: Անգլերեն պունչ, punch հնդկերեն panč հիբդ, այդ ըմպելիքի մեջ մտնում է հինգ բազադրատարր: Ֆրանսերեն կաշնե, cachne բառացի՝ փիթ պահի՛ր, բաֆցոն՝:

Անհրաժեշտ և անհարկի փոխառություններ: Ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի լրացման աղբյուրները նրա ներքին հնարավորություններն ու արտաքին միջոցներն են: Բառապաշարի լրացման և հարստացման հիմնական աղբյուրը, ինչպես բոլոր լե-



գուներում, այնպես էլ հայերենում լեզվի ներքին հնարավորություններն են՝ բառակազմական գործող կաղապարներով նոր բառերի կերտումը և լեզվում առկա բառերի իմաստային հարստացման շնորհիվ նոր իմաստների ձեռքբերումը:

Փոխառությունը իր կարևորությամբ և անհրաժեշտությամբ հանդերձ մնում է իբրև բառապաշարի լրացման օժանդակ աղբյուր և կոչված է միայն նպաստելու լեզվի բնական զարգացմանը, բառային կազմի հարստացմանն ու ճոխացմանը: Այդ առումով էլ պետք է տարբերել անհրաժեշտ և անհարկի փոխառությունները:

Անհրաժեշտ են համարվում տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտական և այլ կարգի շփումների հետևանքով կատարված բառային այն փոխառությունները, որոնք որպես նոր հասկացությունների կրողներ՝ կոչված են բավարարելու լեզվի բառային կազմի համալրման ու հարստացման իրական պահանջը:

Անհարկի են համարվում այն փոխառությունները, որոնց համանշանակները կան լեզվում և դրանց պահանջը չի զգացվում: Այդ կարգի բառերը նոր հասկացությունների կրողները չեն, լեզվում առկա բառերի հետ չեն կարող մտնել հոմանշային կապերի մեջ, ընդհանրապես որևէ շահով չեն նպաստում բառապաշարի հարստացմանը և լեզվի կենսագործունեությանը: Անհարկի փոխառությունների դեմ պայքարելու հարցում պետք է դեկլարվել Վ. Ի. Լենինի «Ռուսաց լեզվի մաքրության մասին» հայտնի հոդվածում առաջարկված դրույթներով: «Ռուսաց լեզուն մենք փշացնում ենք, — գրում է նա: Օտար բառը գործ ենք ածում առանց անհրաժեշտության: Այդ բառերը սխալ ենք գործածում: Ինչի համար ասել «դեֆեկտներ», երբ կարելի է ասել թերութուններ, կամ պակասություններ կամ բացեր, ... Եթե կարգավ սովորողին ներելի է օտար բառեր գործածել, իբրև նորություն, ապա գրականագետներին այդ ներել չի կարելի: Արդյոք ժամանակը չէ՞, որ մենք պատերազմ հայտարարենք օտար բառերի առանց անհրաժեշտության գործածությանը»<sup>49</sup>:

Անմիջական (ուղղակի) և միջնորդավորված (անուղղակի) փոխառություններ: Անմիջական կամ ուղղակի են կոչվում այն փոխառությունները, որ հայերենը իր պատմական զարգացման ընթացքում փոխ է առել անմիջապես, առանց միջնորդավորման այս կամ այն լեզվից, որն էլ համարվում է տվյալ բառի սկզբնաղբյուրը: Օրինակ՝ ախոռ, ախտ, ամբոխ, անգամ, ապակի, բժիշկ, գանձ, գեբեզման, դանակ, դարման, ժամ, ժամանակ, ժանգ գրաբարից

ժառանգված բառերը անմիջական փոխառություններ են պարսկերենից, բյուզե, կոնֆեթանա բառերը աշխարհաբարյան անմիջական փոխառություն են ֆրանսերենից:

Միջնորդավորված կամ անուղղակի են կոչվում այն փոխառությունները, որոնք փոխառու լեզվում նույնպես փոխառություն են մի այլ լեզվից: Այսպես՝ աբիա, ալեգրո, լիրեատ, դիրիժոր, ռեժիսոր, կավատինա, կոնցերտ, սերենադ, սոնատ, սուպրանո, կուրորտ, ռեստորան, ինստիտուտ, մեդալիոն, կուրսով, սյուրսով, միլիտ, տամբուր, մակարոն, վերմիշել, բուլյոն, կարամել, սիգար, կոտլետ, լեդի, դեղդի, միսիս, բոչկոտ, միտինգ, լիգեր, եֆրեյտոր, շոաբ, տրոլեյբուս, դրեյֆ, ռեյդ, դյուլմ, էվոլյուցիա, սպարտ, սպորտսմեն, ֆուտբոլ, բասկետբոլ, հոկեյ և այլն միջնորդավորված փոխառություններ են: Ժամանակակից հայերենը այդ բառերը փոխ է առել ռուսերենի միջոցով, թեև դրանք ծագումով պատկանում են անգլերենին, ֆրանսերենին, իտալերենին, հոլանդերենին, իսպաներենին, պորտուգալերենին:

Անուղղակի կամ միջնորդավորված փոխառությունները հայերենը կատարել է ինչպես գրաբարյան, այնպես էլ աշխարհաբարյան շրջաններում: Օրինակ՝ գրաբարից ավանդված զամբյուղ բառը ասորերենից (zabulla — մի բան տանելու աման) անցել է պարսկերենից (zambil), որից էլ՝ հայերենին<sup>50</sup>:

Աշխարհաբարյան փուլում հայերենը փոխառությունները հիմնականում կատարում է ռուսերենի միջոցով: Այդ տեսակետից հետաքրքրական է մի շարք փոխառյալ բառերի ճակատագիրը, ներանց փոխանցման ուղին՝ մինչև հայերենին անցնելը: Այսպես՝ իդեալ, իդեալիստ բառերը հայերենը փոխ է առել ռուսերենից, ռուսերենը՝ ֆրանսերենից, ֆրանսերենը՝ հունարենից, պառլամենտը ֆրանսերեն սկզբնաղբյուրից փոխ է առել անգլերենը, որից գերմաներենը, սրանից ռուսերենը և հետո՝ հայերենը. կամպանիա՝ իտալերեն-ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն, կապիտալիզմ՝ լատիներեն-անգլերեն-ֆրանսերեն, ռուսերեն-հայերեն, ֆետիշ(իզմ)՝ պորտուգալերեն-ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն:

Հնագույն ու հին և նոր ու նոբագույն փոխառություններ: Ժամանակագրության տեսակետից հայերեն փոխառյալ բառերը ստորաբաժանվում են՝ հնագույն ու հին և նոր ու նորագույն փոխառություններ:

<sup>49</sup> Վ. Ի. Լենին, Ռուսաց լեզվի մաքրության մասին, Երկեր, հատ. 30, էջ 375:

<sup>50</sup> Հ. Աճառյան, Կրակատար քերականություն, ներածություն, Երևան, 1955 թ., էջ 373:

ա) Հնագույն ու հին փոխառություններ են համարվում այն բառերը, որոնք հայերենը փոխ է առել իր պատմական զարգացման վաղ շրջանում: Այն հիմնականում կատարվել է գրաբարի, նրա ձևավորման և հետագա զարգացման շրջաններում, ինչպես նաև միջին հայերենի և բարբառների միջոցով:

բ) Նոր ու նորագույն փոխառություններ պետք է համարել այն բառերը, որոնք ժամանակակից հայերենը փոխ է առել իր կազմավորման և հետագա զարգացման ու գոյատևման ընթացքում:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կազմում հնագույն և հին փոխառությունների առանձնացումը և տարբերակումը հարաբերական բնույթ ունի: Իրականում այդ կարգի փոխառությունները իբրև բառային պատրաստի միավորներ ժամանակակից հայերենը ժառանգել է գրաբարից, միջին հայերենից և բարբառներից: Հիշյալ լեզուների կատարած այդ կարգի փոխառություններից ժամանակակից հայերենի համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում միայն այն բառերը, որոնք մուտք են գործել: Նրա բառային կազմը, կազմում են նրա բաղադրատարրը:

Այդ տեսակետից անհրաժեշտ է որոշել այդ կարգի բառերի արժեքը և կատարող դերը ժամանակակից հայերենի բառային կազմի իմաստաբանական, բառակազմական, ոճակիրառական համակարգում:

### ՀՆԱԳՈՒՅՆ ՈՒ ՀԻՆ ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻՍԻ

Այդ կարգի փոխառությունները ժամանակակից հայերենին են անցել գրաբարի, միջին հայերենի և բարբառների միջոցով:

Հնագույն փոխառությունները վերաբերում են գրաբարի կազմավորման շրջանին՝ դրանց մի մասը գալիս է անգամ նախադրաբարյան շրջանից: Այդ փոխառությունները կատարվել են փոքրասիական, կովկասյան լեզուներից, ասուրա-բաբելոններից, խեթերներից, խուրիտերներից, ուրարտերներից, պահլավերներից, հին հունարենից, հին լատիներենից և այլն: Չի բացառվում նաև այն իրողությունը, որ հայ ժողովրդի կազմավորման և հետագա շրջաններում հիշյալ լեզուները կրող որոշ ցեղախմբեր, ձուլվելով հայ ժողովրդի մեջ, այդ ճանապարհով հարստացրել են հայոց լեզուն մի շարք բառերով:

Խեթերներից, խուրիտերներից, ուրարտերներից և հին փոքրասիական մեծյալ լեզուներից կատարված փոխառությունները որոշ

իմաստով կարելի է ստացվածքային<sup>51</sup> համարել, քանի որ այդ լեզուները կրող ժողովուրդները հայ ժողովրդի և նրա գրական լեզվի՝ գրաբարի կազմավորումից հետո արդեն դուրս էին եկել պատմական ասպարեզից, իրենց լուծման մտցնելով հայ ժողովրդի էթնիկական կազմի և հայոց լեզվի մեջ:

Այդ տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում նաև գրաբարում ավանդված, ակնհայտորեն պահպանված ծագում ունեցող մի շարք բառեր, որոնք պարսկերենում չեն պահպանվել: Ըստ Չ. Աճառյանի՝ աշտանակ, աշտարակ, ամբաստանել, հանապազ, աստիճան, վիշտ, հրածեշտ, հրածարվել, հրամենք, հրապույր, հրատարակել, հրեջ, հեխակ, հրեվանք, հրասակ, հրվանդան, պատանել, պատանաբ, պատանդ, պատանի, պատառ, պատարագ, պատգառակ, պատիժ, պատժանակ, պատին, պատկանել, պատկանել, պատհառ, պատվանդան, պատուհան, պատույս, պատրվակ և այլ բառերը արտաքին բոլոր տվյալներով պետք է, որ պարսկական ծագում ունենան, թեև իրանյան որևէ լեզվում չեն պահպանվել: Դեռ ավելին, հայերենում կան նաև ակնհայտորեն պարսկերեն արմատներով բաղադրված բառեր, ինչպես՝ առուշան, ասպանդակ, ճավակառիփ, առուշակ և այլն, որոնք նույնպես պարսկերենում չկան կամ չեն պահպանվել<sup>52</sup>, մինչդեռ դրանք ժամանակակից հայերենում նույնիսկ տարածված բառեր են:

Օգտագործելով Չ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Գ. Զահուկյանի, է. Աղայանի և ուրիշների տվյալները հայերենի հնագույն փոխառությունների վերաբերյալ, ստորև, ըստ լեզվի զարգացման շրջանների և առանձին լեզուների, տրվում են փոխառյալ արև բառերը, որոնք գրաբարի, միջին հայերենի և բարբառների միջոցով անցել են ժամանակակից հայերենին:

Այդ շրջանի փոխառությունների պատկերը ամբողջական դարձնելու նպատակով, նախ, տրվում են այն բոլոր բառերը, որոնք լայն գործածություն ունեն ժամանակակից հայերենում և կազմում են նրա բառային կազմի բաղադրատարրը:

Հայերենի հնագույն և հին փոխառությունների ցանկը<sup>53</sup>, ըստ առանձին լեզուների.

1. Միջերկրական փոխառությունների ընդհանուր թիվն է— 4, որից ժամ. հայեր. 4:

<sup>51</sup> Գ. Մեակ, Ժամանակակից հայոց լեզվի զարգացումը, Երևան, 1955, էջ 109:

<sup>52</sup> Չ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, Երևան, 1940, էջ 317:

<sup>53</sup> Համառ. Չ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, Երևան, 1951,

2. Փոքրասիական, թրակո-փոյուզիական—9, ժամ. հայ. 9:
3. Խեթական— 42 և 41:
4. Ուրարտա-խուրիտական— 19 և 18:
5. Ասուրական— 27 և 21:
6. Կովկասյան— 60 և 39:
7. Իրանյան (պարսկական)— 1411 և 530:
8. Ասորերեն—211 և 95:
9. Հին լատիներեն— 10 և 5:
10. Հունարեն— 918 և 130:
11. Եբրայերեն— 138 և 10:
12. Արաբերեն—702 և 60:
13. Վրացերեն— 57-ից՝ 13:
14. Թուրքերեն— 30:

Ստացվածֆային կամ ենթաշերտային բառեր: Հայոց լեզվի բառապաշարում ստացվածքային կամ ենթաշերտային պետք է համարել այն բառերը.

ա) որոնք դեռևս չեն ստուգաբանված. այսինքն՝ դրանց ծագումը մեզ հայտնի լեզուներով չի բացահայտվում.

բ) որոնք անցել են հայ ժողովրդի կազմի մեջ մտած ժողովուրդների (կամ ցեղերի) լեզուներից, որոնց կրողները հեռացել են պատմության ասպարեզից:

2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» և «Հայոց լեզվի պատմություն» (Ա և Բ մասեր) տվյալներով, հայերեն մոտ 11 հազար արմատների որոշ մասը մնում է դեռևս չստուգաբանված: Չստուգաբանված բառերի այն մասը, որը լեզվաբանությանը հայտնի որևէ լեզվի առկա փաստերով հնարավոր չէ ստուգաբանել կամ մեկնել, պետք է դասել պատմության ասպարեզից հեռացած, մեռած և ինքնուրույնության որևէ հետք չթողած լեզուների շարքը: Չի բացառվում նաև հայերեն այդ բառերի որոշ մասի հետագա ստուգաբանությունը արդեն հայտնի լեզուների փաստերի հիման վրա:

Դրանց մեջ կան բառարմատներ, որոնք պատկանում են արդեն մահացած այն լեզուներին, որոնք կրող ժողովուրդները և էթնիկական միավորները մասնակցել են հայ ժողովրդի կազմավորմանը, ևսլովիով հայերի մեջ, կորցրել են իրենց լեզուն, իսկ լեզվի որոշ բնկորներ, այդ թվում նաև շատ բառեր ծառանգվել են հայերենի կողմից: Այդ լեզուներից հայերենին անցած իրողությունները կազմում են հայերենի ենթաշերտային տարրերը: Ստացվածքային կամ ենթաշերտային պետք է համարել ուրարտական, խուրիտական, խեթական, անգամ՝ թրակո-փույուզիական, միջերկրա-

կան կամ էգեյան փոխառությունները, մասամբ նաև հին պարսկական (պահլավական) այն բառերը, որոնք չեն հիշատակվում հին պարսկական հուշարձաններում:

1. Հայերենի բառապաշարի ուրարտա-խուրիտական շերտը: Հայերը ուրարտացիների անմիջական ծառանգորդներն են, հետևաբար և հայերենը առաջին հերթին պետք է իր մեջ առներ ուրարտերենի բառապաշարի որոշ մասը: Այդ հանգամանքը միանգամայն բնական է համարում 2. Աճառյանը և ենթադրում է<sup>54</sup>, որ հայերեն շատուգարանված արմատների գերակշիռ մասը խալդական (ուրարտական) ծագում ունի:

Հայերենի ամբողջ՝ մոտ 11 հազար արմատներից դուրս հանելով բնիկ (հնդեվրոպական ծագում ունեցող) և ծանոթ լեզուներից բոլոր փոխառյալ բառերը, մնացածը (մոտ 5500), այսինքն՝ կեսը, ենթադրվում են փոքրասիական (ոչ հնդեվրոպական) և ուրարտական (խալդական) լեզուների բառեր: Ըստ որում այդ բառերի մեծագույն մասը, ըստ 2. Աճառյանի, պետք է, որ ուրարտերեն լինի: Այդ կապակցությամբ նա քննության առնելով մի քանի բառախմբեր, որոնք նրա կարծիքով պետք է, որ ուրարտական ծագում ունենան, տալիս է այդ կարգի բառերի ցանկը:

ա) Գույներ ցույց տվող բառերից՝ գորշ, երփն (որից՝ երփնե-րանգ), թույր (օրինակ՝ սպիտակաթույր), թուխ, լուրթ, լուրջ, խած, խառտյաշ, ծալի, կանաշ, հիւր (հակնթազույն, կամ երկնազույն), հնդիկ (զուտ սև), շառագույն, շեկ ոչ հնդեվրոպական են և ոչ էլ հայտնի լեզուներից փոխառյալ, ուստի և դրանց մի մասը ուրարտական է ենթադրվում:

բ) Մետաղներ ցույց տվող բառերից՝ երկաթ, կապար, սսկի:

գ) Բուսականներից՝ ցորեն (ցորեն), վարսակ, եղին, կոտիմն (կոտեմ), մանդակ, մուհուղեգ, օղին և այլն:

դ) Ամանեղեն նշանակող բառերից՝ անոթ, գուշ, խավյակ, խեցի, խուփ, ծափ, կանույր, կայթ, կաբաս, կեռիկ, կնուն, կուր, հաղաղակ, մեսուր, պտուկ, սափուր:

ե) Արհեստներին և հատկապես ոստայնանկությունը վերաբերող բառերից՝ ազբ(ն), առէջ, բարբար, գոբգ, թել, իլ, ծոպ, կապերտ, կարժ, կծիկ, կկել, կկոց, կարել, կուր, հյուսել, մանել, շաղամաթ, ոստայն և այլն:

զ) Ընտանիք և ընտանեկան ու ազգականական կապ՝ հարաբերություն ցույց տվող բառերից՝ աղջիկ, կույս, անեւ, հուր, բեռի,

<sup>54</sup> 2. Աճառյան, նույն աեղում, էջ 180—185:

զոհանչ, փեսա, զավակ, բռն(ն), լան, բայրաբուս, խնամի, որոնց մեծ մասը իդական գծին են պատկանում:

է) Դրամենրից՝ բնիոն, նախարակիտ, խերեկշ (որոնք մանր տեսակի դրամ են նշանակում):

ը) Գրական-կրթական բաներից՝ բուլք, բանաբ, էջ, գիծ, գրծել և այլն:

ա) Ուրարուական բաները հայերենում: 2. Աճառյանը<sup>55</sup> ուրարտերենից հայերենին անցած 15 բառ է բերում. ընկույզ, ծեփել, ծիրան, ծյուրել, կաղամախ, կարաս, կարափ, կրթել, կոնել (կուռ, կոան), կտավ, փառ (զգեստ, շապիկ), այդ թվում՝ հանար, հակ (էգ), նմար, տող բաները տալիս է հարցականով:

Գ. Ղափանցյանը<sup>56</sup> և Գ. Զահուկյանը<sup>57</sup> վերոհիշյալներին ավելացնում են բուրգ, ծես, ծով, հատել (հատանել), հոսել, հույր (պարարտ), շերտ, ուղի բաները:

բ) Խուրիտական բաները հայերենում: Պատմահամեմատական, ժազումնաբանական ուսումնասիրությունների վերջին տրվյալներով խուրիտերենը ուրարտերենին մերձավոր ցեղակից լեզու է համարվում: Ապացուցված է համարվում նաև, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ մեծ դեր են խաղացել խուրիտական ցեղերը, կազմելով հայ ժողովրդի բաղադրամասը: Խուրիտական շատ բաներ և ընդհանրապես նրա լեզվի տարրերը մտել են հայերենի մեջ, որպես նրա ենթաշերտ:

Գ. Ղափանցյանի<sup>58</sup> սվյալներով հայերենին խուրիտերենից են անցել խնձոր, խոռ, ծառա, շանք բաները:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ուրարտա-խուրիտական ժազում ունեցող բաների դերակշիռ մասը լայն կիրառություն ունի նաև ժամանակակից հայերենում՝ կազմելով նրա բառային հիմնական ֆոնդի անկապտելի մասը:

2. Խեթական բաները հայերենում: Գիտությունը հայտնի են խեթական երեք լեզուներ՝ պրոտոխեթերեն կամ նախախեթերեն, հիերոգլիֆային կամ մեհենագիր խեթերեն և հնդեվրոպական խեթերեն: Հիերոգլիֆային կամ մեհենագիր խեթերենը նույնպես հընդ-եվրոպական, ցեղակից լեզու է համարվում: Վերջին շրջանում առաջ է քաշվում նաև նախախեթերենի կամ պրոտոխեթերենի հընդ-եվրոպական լեզու լինելու վարկածը:

Այս լեզուներով խոսող ժողովուրդը 3—2-րդ հազարամյակ-ներում մեր թ. ա. գոյություն է ունեցել Փոքր Ասիայի այն տարածքում, որ համընկնում է Պատմական Հայաստանի հարավ-արևմտյան սահմանների հետ: Խեթական պետության փլուտակները վրա կազմավորված հայ ժողովուրդը կլանել է նաև խեթական կիսիկական հոծ զանգվածներ, իսկ հայերենը իր մեջ առել է, անշուշտ, ցեղակից այդ լեզվի շատ տարրեր, այդ թվում նաև բաներ, որոնց ղգալի մասը ուրարտերենի և խուրիտերենի օրինակով պետք է նույնպես ենթաշերտային կամ ստացվածքային համարել:

2. Աճառյանը<sup>59</sup> բերում է հայերենին անցած խեթական 10 բառ. ապա, հատակ, հատանել, խանգարել, ոլուրել, վառել, փշրել, առավատ, փետուր, շարավանդ (կապ):

Գ. Ղափանցյանը<sup>60</sup> տարբերակում է հայ-խեթական բառային ընդհանրությունները խեթական փոխառություններից: Հայ-խեթական ընդհանուր բաներ են համարվում՝ անբեղ, ատաղն, արգատ, սուրճեսա, ապա, գորգ, թողնել, իրար, խառն, խելք, խիղն, խնայել, խորք, խուղ, հյուղ, խուլք, խմբել, ծուխ, կարիք, կարիճ, հատել, հեգնել, հիմա, հուպիտ (ժաղրածու), ճիվաղ, մորխ, ջախջախել, սկսել, սպրդել, տագնապ, տող, փետուր:

Խեթերենից կատարված փոխառության շարքն են դասվում՝ աղանդեր, բարգավան, մանավանդ, ուրղ (առու), քրթմեջել բաները:

3. Միջերկրական կամ եգեյան ֆաղափարության բաները հայերենում: Դրանք այն բաներն են, որոնք հայերենին են անցել պատմության ասպարեզից դուրս եկած կրետացիներից և Փոքր Ասիայի արևմտյան մասի ժողովուրդների՝ լիդիացիներից, լիկիացիներից, կարիացիներից և այլն, որոնց լեզուները այժմ մեռած են: Հայերենում Միջերկրական կամ էգեյան համարվում են՝ գինի, թուզ, յուպ, սպունգ բաները, որ այժմ էլ գործածական են ժամանակակից հայերենում<sup>61</sup>:

4. Թրակո-փոյուզիական բաներ հայերենում: Հայերենը որպես հնդեվրոպական լեզու՝ ցեղակցական մերձավոր կապերի մեջ է գտնվում բալկանյան հնագույն լեզուների՝ թրակերենի և փոյուզերենի հետ: Հայկական և թրակո-փոյուզիական բառային կապերը վերաբերում են նախազրաբարյան շրջանին: Հայերենում թրակո-փոյուզիական բաներ են համարվում՝ ագաբակ, աղյուս, ասաված,

<sup>55</sup> 2. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, էջ 186.

<sup>56</sup> Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961, էջ 130—139.

<sup>57</sup> Գ. Զահուկյան, Урартский и индоевропейские языки, 1963.

<sup>58</sup> Գ. Ղափանցյան, Եզվ. աշխատ., էջ 104—130.

<sup>59</sup> 2. Աճառյան, նույն տեղում, էջ 149.

<sup>60</sup> Գ. Ղափանցյան, նույն տեղում, էջ 148—204.

<sup>61</sup> 2. Աճառյան, նույն տեղում, էջ 100—104.

տակ, հանճար, մատյան, եկար, եվագ, պատկեր, հրահանգ, վարդապետ, վարժել, վին, տավիղ, ֆանդակել:

5. Կրոն, նախապաշարմունք նշանակող բառեր. ապաշխարել, բախտ, բագին, գուշակ, դրախտ, դե, դժոխք, գոն, կախարհ, ճմալիլ, հրաշք, հրեշտակ, մարգարե, մեհյան, եզովք, եվեր, պաշտել, պարիկ, ջաղու (շատուկ), սանդարամետ (դժոխք), օհնել, վանք, տանա:

6. Գյուղատնտեսությանը, երկրագործությանը, խաշնարածությանը վերաբերող բառեր. ման, նամբարակ, պատվատ, պարտեզ, պանեզ, վարել, խար, նարակել, մարգ, փեթակ, երասան, խարագան, գավազան, ասպանդակ, դանդախանդ, բադ, մատակ, գոմեշ, նոխագ, դմակ, սմբակ, ճանկ, բաշ:

7. Արհեստին, շինարարությանը, վաճառականությանը վերաբերող բառեր. դամ, դերձակ, դերձան, նախարակ, նավագ, պանապան, տաշել, դանիին, դաստակերտ, դարպաս, դիվան, զեղան, նեմիշ, պաաշգամբ, պատվար, պարիսպ, սրան, ախոռ, ամբար, ամբարտակ, ապարանք, ասվազան, քանտ, բարավոր, գմբեթ, փերեգակ, արժել, գանձ, գանձանակ, գրավ, երաշխ(ավորել), քանկ, համարել, պարտք, վանառել, վաշխ(առու), վարձ, վնարել, վնաս, տույժ, տալանք:

8. Հագուստեղեն, գարդեղեն նշանակող բառեր. անդրավարտիք, ապարանջան, արեշում, աստառ, բագպան, բամբակ, գրպան, դիպակ, զանկապան, բագ, խույր, կամար (գոտի), կերպաս, կոշիկ, հանդերձ, մույկ, մուճակ, մուշտակ, շագիկ, պաստառ, պատմունան, պարեգոտ, պսակ, սանդալ, սնդուս, վարտիք, վերմակ:

9. Ուտելիք, ըմպելիք ցույց տվող բառեր. ապուխտ, խորտիկ, կարագ, հրուշակ, նաշ, նարպ, նշխար, շաբար, պանիր, պաշար, օշարակ:

10. Առտնին տնտեսական զանազան բառեր. առասան, բաժակ, բարձ, բողով, գան, դաստառակ, դարան, դույլ, գամբյուղ, քակույկ, լական, կուժ, հավանգ, հրագ, մոժ, շիշ, պաշտառակ, պատույզ, սկավառակ, սպաթ(ք), սովակ, վանդակ, տախտ, տախտակ, տակառ, տաշտ, տաշտակ, տապակ, ֆալկ, ֆուճ, կարավան, նանապարհ, մակույկ:

11. Ժամանակ, թիվ, շափ, կշիռ, դրամ ցույց տվող բառեր. ժամ, ժամանակ, նախ, նահանջ, նավասարդ, բյուր, գրիվ, դաճեկան, դրամ, հագար, փող:

12. Երկիր, տեղ, վայր նշանակող, ինչպես նաև վարչական, իրավաբանական, ուսումնական բառեր. աշխարհ, անապատ, դաշտ,

հրապարակ, ավան, մարգ, շեն, ռստան, սանման, տապետ, բղեշխ, բարապան, դանին, դատավոր, դեսպան, իշխան, համհարգ, հալատակ, մարգպան, մարգպետ, նախարար, նահապետ, նվիրակ, ջահանջան, ռստիկան, պանակ, պատվիրակ, պարելի, պետ, սեպուհ, սպարապետ, սպանարզան, դաշն, դառ, դատաստան, իշխել, հրավարակ, մուրհակ, նամակ, պատենե, ռոնիկ, վկա, վնիռ, օրենք, սպասամբ, ասպատակ, արշավ, ավար, գուճարտակ, գունդ, դարան, դրոշ, զինվոր, գոբ, թշնամի, հրամանատար, հաշտություն, հեն, համբար, մարգել, նախնիր, հահանջ, պայխար, պատերազմ, զենք, գրան, հիզակ, սողավարտ, վահան, տապար, տեգ:

դ) Գույներ նշանակող բառեր. գույն, երանգ, կապույտ, կարմիր, ճերմակ, սև, սպիտակ:

դ) Սովորական կյանքին վերաբերող, ինչպես նաև վերացական հասկացություններ արտահայտող բառեր. ախորժ, ակամա, անգամ, կամա, կամք, ուժ, ուշ, պատուհաս, ջատագով, ադդ, ամբարիշտ, ամբարտավան, անապակ, անուշ, աշկարա, աշխատել, ասլաստան, ապիրատ, ապապրել, առատ, առույզ, արագ, հարգ (տրգ), արժան, արձակ, ավարտ, ավեր, բագուժ, բագմել, բաժանել, բաշխել, բարակ, բավ, բնակվել, բովանդակ, բույր, գովել, գումարել, դաժան, դեմ, դիտել, դժգույն, դժխեմ, դժկամակ, դժնդակ, դժնյա, դժվար, դարովել, դրվատ, դրժել, դրուժան, երամ, երկ, զանազան, գոր(ություն), գուր, գույշ, թշնամանք, թշվառ, թոշակ, ժան, ժանր, ժիր, խամ, խոստանալ, խոստովանել, խորտակել, կամք, կարի, կերպ, կույտ, հակիրհ, հանել, համ, համակ, համայն, հանգամանք, հանդարտ, հանդես, հանդիման, հավասար, հավետ, հավերժ, հզոր, հիշատակ, հիշել, հնար, հրամայել, հրաման, հրավեր, հուզել, հույժ, հախր, հար, հարակ, հարպիկ, հեմել, միշտ մուրազ, նագել, նամ, նավակատիք, նիշ, նիրհել, նկուն, նման, նշան, նշանակ, նշմարել, նպաստ, շատ, շնորհ, շտապ, շվան, պանել, պայման, պաշտպան, պատախան, պատգամ, պատիր, պատիվ, պատշան, պատվեր, պատվիրան, պատապարել, պատրաստ, պատուհաս, պարտար, պարգ, պես, պետք, ջատագով, ջոկ, ջուխտ, սով, սպանել, սովար, սրակել, սուգ, վանել, վանկ, վատ, վատթար, վավերական, վեն, վինակ, վիշտ, վնիռ, վստան, վտանգ, վտարել, վրեպ, տակ, տակավին, տանջել, տարագ, տոթ, ուխտ, ուժ, ուշ, փարթամ, փառք, փտել, ֆանդել, ֆա(ր)շել, օրինակ:

8. Աստիճական փոխառություններ: Հատկաների ազդեցությունը հայերենի վրա Հ. Աճառյանը<sup>66</sup> երկու շրջանների է բաժանում՝ հին և նոր:

<sup>66</sup> Նույն տեղում, Ա մաս, էջ 329:

Հայերենի բառապաշարի վրա հոսմեական ազդեցության հին շրջանը բնկնում է մեր թվ. առաջ 2-րդ դարից մինչև մեր թվ. 2—3-րդ դարերը: Այդ շրջանում գրաբարը փոխ է առել 10 բառ, որից՝ արկղ, սկուսեղ, կառք, մարգարիտ, ղենջակ (գոգնոց) գործածական են ժամանակակից հայերենում:

Հին շրջանին են վերաբերում նաև գրաբարում հունարենի միջոցով կատարված լատինական միջնորդավորված փոխառությունները<sup>67</sup>, որոնցից ժամանակակից հայերենում գործածական են կյանքի և կենցաղի առանձին հարաբերություններին, կրոնական-եկեղեցական, պետական-պաշտոնական, ռազմական և վարչական մարզերի մոտ երեք տասնյակ բառեր. օրինակ՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների անունները. կամ՝ դինար (դրամական միավոր), բուրթ, լեզին, կաղանդ, կանթեղ, կարդինալ, կիտրոն, կնգուղ, կուրապաղատ, կրկես, մագիստրոս, մանկավիճակ, նոտար, պալատ, սապոն, սենատոր, վեզար, տիտղոս, տոդրիկ (թռչուն), ունկի (շափի միավոր), ուրուր (եկեղեց. սքեմ), փոս, փուտ և այլն:

Հիշյալ բառերի փոխառության միջնորդ լեզուն հունարենն է համարվում, որովհետև հայերենը լատինական բառերը փոխ է առել հունարենի տառադարձությամբ: Օրինակ՝ կիտրոն—հունարեն kitron, լատ. citrus, մագիստրոս—հուն. μάγιστρος, լատ. magister, տիտղոս—հուն. titlos, լատ. titulos և այլն:

Անհրաժեշտ է նշել նաև, որ հունարենի միջոցով հին շրջանում գրաբարի փոխառյալ լատինական որոշ բառեր հետագայում ժամանակակից հայերենը կրկին փոխ է առել եվրոպական լեզուներից և առաջին հերթին՝ ռուսերենի միջոցով. ինչպես, օրինակ՝ դիկտատոր, կուրատոր, ռեկտոր, սենատոր և այլն:

Նոր շրջանում հայերենի լատինական բոլոր փոխառությունները միջնորդավորված են:

9. Ասորական փոխառություններ: Ասորական ազդեցությունը հայերենի վրա սկսվում է մեր թվ. ա. 2-րդ դարից և շարունակվում է մինչև մեր թվ. 5—6-րդ և հետագա դարերը<sup>68</sup>: Իրենց որակով և բնույթով ասորերենից կատարված փոխառությունները տարբեր են: Իրանը վերաբերում են ինչպես կենցաղին, առանձին հարաբերություններին, այնպես էլ՝ կրոնական-եկեղեցական, գիտա-

կան, մշակութային կյանքին, կենդանական և բուսական աշխարհի, մարդկային գործունեության այլևայլ բնագավառներին:

Գրաբարի և միջին հայերենի կատարած 205 ասորական փոխառությունից ժամանակակից հայերենում ալիւի գործածական պետք է համարել մոտ 45%-ը, 95 բառ: Այդ բառերն են՝ արեղա, աբուգա (փողրակ), ասնեա, ախոր, բուրգ, գուր, գուր, գուլպա, դար (հարյուրամյակ), գույգ, գուրկ, բարգման, բոն և բոն, լավաշ, լոշ (յոշտակ բույսը), լումա, խանձարուր, խանութ, խարտել, խավիժ, իլաւոդ, խմոր, ծարիր, ծնձղա, ծաբոր (բույս), ծոմ, ծրար, կարսա, կասկարա, կատու, կացին, կափավ, կեղև, կրղա (բաժակ), կոզով, կոմս, կուլը (ջրշուն), կուլբ, հագար (բույս), հաշիվ, հեզ (հեզի), հեքանոս, հեռա, ձեթ, ձյութ, դեկ, մագաղաթ, մախաթ, մակաղել, մամոնա, մանանա, մանգաղ, մանիշակ, մաշկ, մարսել, մախ, մեղրակ, հաշի, շարաթ, շալակ, շամփուր, շավիղ, շեզը (զանակի), շերաս (շերամ), շեփոր, շեֆ, շղթա, շկար, շուկա, շուշան, պոդոտա, ջալլամ, սատանա, սափրել, սյուֆ, սկան (բաժակ), սվին, տուներ, սուր (կարմիր ներկ), սպեղանի, տառապել, տերև, տլա, ցամախ, ուրբաթ, փարսանել, փիլիսոփա, փրկել, ֆահանա, ֆանար, ֆարոգ, ֆնար, ֆուրա, ֆուրմ:

Հիշյալ բառերի մեջ կան նաև անուղղակի՝ միջնորդավորված փոխառություններ, որոնց սկզբնաղբյուրը ասորերենը չէ. ինչպես՝ փիլիսոփա, պոդոտա, կեղև, հեքանոս և այլն:

Ասորական փոխառությունների մեծ մասը կատարվել է մեր թվ. 2—5-րդ դարերում: Մի շնչին մասն է, որ կատարվել է 5-րդ դարից հետո: Ուշ շրջանում կատարված փոխառությունների առանձնահատկությունն այն է, որ պրանք հին շրջանի հնչյունական օրինքներին չեն ենթարկվում: Ավելի ուշ շրջանի փոխառություններ են համարվում ժամանակակից հայերենում լայն գործածություն ունեցող՝ մանիշակ, մախաթ, շուկա, գուլպա բառերը:

10. Հունական փոխառություններ: Գրաբարը հունարենից փոխառություններ է կատարել մեր թվ. 3—4-րդ դարերից սկսած մինչև 10—11-րդ դարերը: Հունական ազդեցությունը հայերենի վրա հիմնականում կատարվել է գրական-գրքային ճանապարհով, գիտության, գրականության և եկեղեցու միջոցով: Հունարենից գրաբարի փոխառած 918 բառերը<sup>69</sup> ղլխավորապես գիտական-գրական, մշակութային, անտեսական, եկեղեցական-կրոնական բնույթի և բուսական ու կենդանական աշխարհին վերաբերող բառեր են, որոնցից ժամանակակից հայերենում գործածական պետք է համարել 130 բառ, այսինքն՝ մոտ 14%-ը:

<sup>67</sup> Նույն տեղում, Բ մաս, էջ 41—44:

<sup>68</sup> Հ. Անադյան, Նույն տեղում, Ա մաս, էջ 336—342, 354:

<sup>69</sup> Հ. Անադյան, Նույն տեղում, Ա մաս, էջ 5—53:

Ըստ գործածության տարբեր ոլորտների դրանք ստորաբաժանվում են.

ա) Մշակութային կյանքին (արվեստ, ճարտարապետություն, գրականություն), արտագրությանը, բնությանը, կենցաղին վերաբերող բաներ. ակադեմիա, ամբիոն, ամֆիթատրոն, այլ, անդրի, արգասիք, ափսե, ափսիներ, բաղնիք, բարբառոս, բեմ, գաղափար, գավաթ, դստիկոն, եթեր, երգեհոն, զեյիտոն, զմելին, զմուտս, բատրոն, լարյուրիերոս, լամպար, լապտեր, լիտր, կաղապար, կամար, կանոն, կարկին, կեմ, կենտրոն, կիթաո, կլիմա, կղմինդր, նշուխ, հյուպատոս, հոեռո, մաթեմատիկոս, մանյակ, մեղեդի, մետախ, մեխենա, միմոս, մյոն, պանդոկ, պախիմատ, պիտակ, պնակ, պոռնիկ, պոետ, պրակ, ոետին, սավան, սատրապ, սիմինդր(ր), սովեստ, տամախ, ստեպոլին (գազար), վրձին, տաղանդ, տետ(ակ), ախյ, ախամ, տոկոս, տամար, տամս, ռոպե, ֆարա, ֆարսեզ, ֆարսուպար, ֆոնիկոն. օագիս, օվկիանոս:

բ) Կրոնական-եկեղեցական բնույթի բաներ. արքա, աբեյախուպոս, գայխոն, եկեղեցի, եպիսկոպոս, թեմ, կաթոլիկ, կաթոլիկոս, կերոն, կիրակի, կղեր, կոնդակ, հերետիկոս, մատուռ, մարտիրոս, մևոն, մետրապոլիտ, պապ (հայրապետ), պատրիարք, սաղմոս, սեմ, տարատոս, փիլոն, ֆրամիդ, ֆրիստոնյա, օրթոդոքս և այլն:

գ) Բուսականներ. անեմոն, անթեմ, անխոն, դափնի, երեհոս, լիմոն, կեռաս, կիպարիս, կիտոն, հագնի, հալվե, հակինթ, մեկոն, մեդրապոպ (ձմերուկ), մսլոշ, նարդոս, նարգիզ, պրաս:

դ) Կենդանիների անուններ. դեյփին, կետ, կոկորդիլոս, հիդրա, առոեի, փաթյան, փյունիկ, փոկ:

ե) Հանքերի անուններ. աղամանդ, ակատ, բյուրեղ, մետաղ, հակինթ, հասպիս, պոբփյուր, տպագիոն:

Նշելով հայերենի հնչյունական օրինաչափություններից, արգասիք, պոռնիկ, լապտեր հունարեն բաների փոխառությունը միջնորդավորված է համարվում պահպանվածներին<sup>70</sup>:

11. Իրալայական փոխառություններ: Երբայական ժաղում ունեցող բաները գրաբարին են անցել գրականության և առաջին հերթին՝ Աստվածաշնչի (Հին կտակարանի) միջոցով: Հնչյունական համապատասխանությունները յույց են տալիս, որ գրաբարը երբայական փոխառությունները կատարել է ոչ անմիջապես, այլ միջնորդավորված, հունարենի միջոցով:

Գրաբարում արձանագրված 138 երբայական բաներից<sup>71</sup> ժա-

<sup>70</sup> Տե՛ս է. Անտոյան, նշվ. աշխատ., Բ մաս, էջ 52:

<sup>71</sup> է. Անտոյան, նշվ. աշխատ., Բ մաս, էջ 54—62:

մանակակից հայերենում այս կամ այն չափով գործածություն ունեն հետևյալ բաները. ալելուիա, ակֆան (փուշը), ամեն, բենեդ-զերուզ (սատանայապետ), զենեն, եդեմ, մեսիա, հոբելյան, հոբելյար, օվանենա (10 բառ):

12. Արաբական փոխառություններ: Արաբերենի ազդեցությունը հայերենի վրա երկու փուլով է կատարվել, նախ՝ Հայաստանում արաբների տիրապետության շրջանում, 7—9-րդ դարերում և այնուհետև 12—16-րդ դարերում՝ Կյլիկիայի հայկական թագավորության շրջանում: Արաբերենից անմիջական փոխառություններ են կատարել գրաբարը, միջին հայերենը և հայ բարբառները<sup>72</sup>, Գրաբարում արձանագրված միջին հայերենից ավանդված և բարբառներից անցած արաբերեն ավելի քան 700 բաներից ժամանակակից հայերենն օգտագործում է մի շնչին քանակը միայն, ընդամենը մոտ 60 բառ: Դրանք գլխավորապես մարդու գործունեությանը, կյանքի զանազան բնագավառներին, գիտությանը և արվեստին, առտնին հարաբերություններին, բժշկությանը, ռազմական գործին, պետական-վարչական կյանքին, երկրագործությանը, արհեստին և սարքեր զբաղմունքներին վերաբերող բաներ, զանազան մետաղների, բույսերի, կենդանիների անուններ են:

Ստորև բերվում է ժամանակակից հայերենում գործածվող արաբական բաների ցանկը. ազապ, ալֆիմիա, աղարիկոն (սունկ), անպարար (ձեռնածու), ամիրա, այլ (թերություն), աքլաս (կտորեղեն), ափիոն, բադրիշան, բալասան, բակա, դանուն (թուղուն), զանչաֆիլ, զաֆրան, բաս, բնայի (սնկի տեսակ), ժպակ (սնդիկ), խանդակ, խիկար, խպիպ, խսիր, խումար, կապա, կապալ, կավատ, կոյակ, կոլոտ, կոդակ, կուրան, համպար, հաշիշ, հերիսա, հինա, հունպա, հուրի, հիտ (վիդ), մահաեսի, մելիք, մզկիթ, մրկ-րատ, մղլակ, մումիա, մունետիկ, նարաշ, նաշ, նարինջ, նոպա, նունուֆար, շամամ, շիպ (պաղլիզ), պայտար, ոնեան, սաղափ, սղկել, սնդուկ, սոնուրի (ծառ), սուլթան, տնազ:

13. Վրացերենից փոխառյալ բաներ: Երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և վրացիների տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի հետևանքով առաջացած հնագույն շրջանի լեզվական ազերոսին 12—13-րդ դարերում և հետագա ժամանակաշրջանում հետևում է լեզվական և բառապաշարային փոխազդեցությունների նոր փուլը: Այդ շրջանից գրավոր և բանավոր նախապարհով հայերենին անցած 57 բառից<sup>73</sup> ժամանակակից հայե-

<sup>72</sup> է. Անտոյան, նշվ. աշխատ., Բ մաս, էջ 169—217: Ակնարկներ միջին հայերենի պատմության, Երևան, 1972:

<sup>73</sup> է. Անտոյան, նշվ. աշխատ., Բ մաս, էջ 218—225:

բննում գործածվում է 13-ր. ակուր (վառարան), բոկ, խագ, խր-  
տիա (գիրկ), ծես, ծիա, կիճն (մանր քար), հոն (մուշտակակար),  
մաշիկ, փոցխ, բզավել, բոխր (թոխրել), պոռչ:

14. Թուրքական փոխառություններ: Թուրքական դարավոր լծի,  
թուրք իշխանավորների, ապա պետության բռնատիրական և ձու-  
լողական քաղաքականության արդյունք պետք է համարել լեզվա-  
կան (և հատկապես բառապաշարային) ազդեցությունը, որ սկըս-  
վում է 13—14-րդ դարերից: Թուրքերենը ազդել է միջին հայերենի  
և դերադանցապես հայ բարբառների վրա: Միայն հայ բարբառնե-  
րում թուրքերենից փոխառյալ (միջնորդավորված և անմիջական)  
բառերի քանակը մի քանի հազարի է հասնում<sup>74</sup>:

Այդ տեսակետից այլ պատկեր են ներկայացնում հայոց գրա-  
կան լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակները: Գրական  
լեզուն սկզբունքորեն մերժում է թուրքական փոխառությունները:  
Ժամանակակից հայոց լեզվում գործածվում են միայն մոտ երեք  
տասնյակ թուրքական փոխառություններ, որոնք անցել են հայ  
բարբառներից: Ըստ որում այդ բառերի որոշ մասը միջնորդավոր-  
ված փոխառություններ են և արտբական ու պարսկական (ուշ շքր-  
ջանի) ծագում ունեն. աթարել, ալոն, աղուք (հակինթ), աբխ (ա-  
ռու), բաբան (պարսպաքանդ, պատերազմական գործիք), վառող,  
բեղ, բեկ, բին (ապօրինի դավակ), բոխարի(կ), դբման, դում, Ե-  
լակ, երշիկ, դիլ (սուր ձայն), գմուխտ, քաղաբ, թոզ (փոշի), խա-  
բուն (տիկին), խամանիկ (տիկնիկ), խամուք (ձիու սարք), խո-  
րոտ(իկ) (գեղեցիկ), հոք (ծայր), մասուրա (մարք), յուլա (յուլա  
գնալ), շոբել, ջիգր (վրեժ, ոխ), տուրակ (պարկ), փուր (կեղև),  
բուրջ: Այս բառերի մեծ մասը գրական լեզվի ժողովրդախոսակ-  
ցական բառապաշարին է պատկանում:

Հատկանշական է, որ թուրքերենից փոխառյալ հիշյալ բառերի  
համար ժամանակակից հայերենում առկա են հոմանիշները, ինչ-  
պես՝ աղուք (հակինթ), աբխ (առու), թոզ (փոշի), հոք (ծայր),  
ջիգր (վրեժ, ոխ), տուրակ (պարկ, մախաղ), փուր (կեղև):

### ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՄՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Նոր փոխառություններն այն բառերն են, որ ժամանակա-

<sup>74</sup> Տե՛ս Է. Անադյան, Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա. Թուրքե-  
րենի փոխառյալ բառերը հայերենի մեջ, էմինյան ազգագրական ժողովածու, հա-  
տոր Ը, Վաղարշապատ, 1902:

կից հայերենը կատարել է իր կազմավորման շրջանից մինչև ու-  
վետական շրջանը ընկած ժամանակահատվածում: Նորագույն փո-  
խառությունները ամբողջապես վերաբերում են հայերենի զար-  
գացման սովետական փուլին:

Նոր փոխառություններ: Ժամանակակից հայերենի այդ փո-  
խառությունները վերաբերում են աշխարհաբարին, որն իր զար-  
գացման նախնական փուլում անմիջապես կատարել է հիմնակա-  
նում եվրոպական լեզուներից, նախ՝ իտալերենից, նոր հունարե-  
նից, ֆրանսերենից, հետագայում նաև անգլերենից, դերմաներենից  
և այլ լեզուներից: Այդ կարգի փոխառություններ ժամանակակից  
հայերենին են փոխանցվել նաև միջին հայերենից:

Նոր եվրոպական լեզուների ազդեցությունը: Եվրոպական լե-  
զուներից փոխառությունները կատարվել են գրական ճանապարհով  
և վերաբերում են մշակութային, հասարակական-քաղաքական,  
վարչատնտեսական կյանքին, դիտատեխնիկական տերմինաբանու-  
թյանը, եվրոպական ժողովուրդների պատմությանը, կենցաղին վե-  
րաբերող դանազան հասկացություններին:

Եվրոպական լեզուներից կատարված անմիջական փոխառու-  
թյունները՝ շատ դեպքերում տարբերվում են արդեն նոր փուլում  
ուսուներենի միջոցով հայերենի փոխառած նույն բառի հնչյունա-  
կան ձևից, ինչպես, օրինակ՝ կոնֆերանս անմիջական փոխառու-  
թյուն է ֆրանսերենից (conféranse ձևից), իսկ կոնֆերենցիա՝ ուս-  
սերենի միջոցով (конференция) կատարված փոխառություն:

Նոր փոխառություններից կարելի է հիշատակել՝ բեյ < ֆրանս.  
thé (շինարեն), հայդուկ < բուլղարերեն hajduk, հերոս < հունարեն  
herōs (ֆրանս. héros), հորիզոն < ֆրանս. horizon (հուն. horizōn.)  
մուսա < հուն. moûsa < լատ. musa, մատիտ < իտալ. matita,  
հրամունկ (բույս) < լատ. ranuncus, փարոս < հուն. pháros և  
այլն:

Միջին հայերենի գրավոր հուշարձաններում արձանագրված է  
87 եվրոպական բառ: Այդ բառերից ժամանակակից հայերենում  
որոշ վերապահությամբ գործածական կարելի է համարել՝ առափ-  
նուկ (կանկառ բույսը) < իտալերեն articiocco, գունդատարլ (զոր-  
քերի հրամանատար, սպարապետ) < իտալ. contestabile, սոլ (կո-  
շիկ) < լատ. solea, պրինց < ֆրանսերեն prince, լիվր (դրամա-  
կան միավոր) < ֆր. livre, կարդինալ < լատ. cardinalis, մարա-  
ջախտ (մարշալ) < հին ֆր. marechal, մարկիզ < հին ֆր. mar-  
quis, մարկ (դրամական միավոր) < գերմ. Mark, ունձա, ունձի  
(կշռի շափ) < ֆր. once, պայլ (իշխան) < ֆր. bail, պատրոն



(տիտղոս) < ֆր. patron < լատ., պարոն < ֆր. baron, սիր (արքա) < ֆր. sire, դուկատ (դրամական միավոր) < իտ. ducato, դուբլ (կրկին) < ֆր. double, կոմանդոր (հրամանատար) < ֆր. commandeur:

Նշված փոխառություններից՝ մարաշախտ, պարոն բառերը ավելի շատ գործածվում են գրական լեզվի արևմտահայ տարրերակում: Սուլ բառը այժմ միայն բարբառներում է գործածվում, ժամանակակից հայերենի տեսակետից բարբառաբանություն է: Հիշատակված դուբլ, դուկատ, լիվր, կարդինալ, կոմանդոր, մարկ, մարկիզ, պատրոն, պրինց բառերի փոխառությունը կատարվել է ավելի ուշ՝ 19-րդ դարում և նրանից հետո: Այդ մասին են վկայում փոխառված նույն բառի հնչյունական տարբերությունները միջին հայերենում և ժամանակակից հայերենում: Օրինակ՝ ժամանակակից հայերեն դուբլ և միջին հայերեն տուբլ (ֆր. double), դուկատ և տուկատ (ֆր. ducat), պրինց և քրինձ (ֆր. prince) և այլն:

**Նորագույն փոխառություններ:** Ռուսերենի ազդեցությամբ: Հայ-ռուսական հարաբերությունները դարավոր պատմություն ունեն: Ռուսերենի անմիջական ազդեցությունը<sup>75</sup> հայերենի վրա բուկրսվում է 19-րդ դարի առաջին քառորդից սկսած՝ (1827 թ.) Հայաստանը Ռուսաստանին միավորվելու շրջանից, որն աստիճանաբար ընդարձակվելով, մեծ շահերի է հասնում և նոր բնույթ է ձեռք բերում սովետական իշխանության տարիներին:

Մեծ է ռուսերենի դերը իրրև սովետական ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցման միջոցի, սովետական և համաշխարհային մշակույթի, գիտության և տեխնիկայի, գրականության և արվեստի նվաճումներին ծանոթանալու և հաղորդակցվելու գործում:

Իր դարդացման տարբեր փուլերում դրավոր և բանավոր ճանապարհով հայերենի՝ ռուսերենից կատարած փոխառությունների թիվը հարյուրների է հասնում: Հատկապես մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնք հայերենը վերջին շրջանում փոխ է առնում ռուսերենի միջոցով: Այդ տեսակետից շահալանց մեծ է ռուսերենի՝ որպես միջնորդ լեզվի դերը ժամանակակից հայերենի բառային կազմի լրացման և հարստացման գործում: Արդի փուլում հայերենը ռուսերենի միջոցով փոխառություններ է կատարում ինչպես սովետական ժողովուրդների, այնպես էլ աշխարհի բազմաթիվ լեզուներից:

<sup>75</sup> Ս. Ղազարյան, ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման և զարգացման մեջ, Երևան, 1955:

Ռուսերենից կատարված փոխառությունները ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

ա) Ռուն ռուսական կամ ռուսերենում որպես այդպիսին ընդունված բառեր, որոնք ժամանակակից հայերենը փոխ է առել տարբեր ժամանակներում: Իրանք հիմնականում վերաբերում են վարչատնտեսական, քաղաքական և ռազմական կյանքին, կենցաղին, առտնին հարաբերություններին և այլն. կոլխոզ, սովխոզ, սովկո, նեյ, բալալայկա, բայան, բորչ, շի, կոտլետ, պլվնեն, պոնչիկ, պրյանիկ, ժարկո(ե), սոխարի, սապոգ, բառաեղկա, տանկետկա, լոգոչկա, դրոմիա, դրոմիենիկ և այլն:

բ) ՍՍՀՄ ժողովուրդների տարբեր լեզուների բառեր, որոնք ժամանակակից հայերենը փոխ է առել ռուսերենի միջոցով և ռուսերենի հնչյունական ձևափոխությամբ. ակին, աուլ, սակլի, կորգար, բանջուրա, բեշմետ, կումիս և այլն:

գ) Եվրոպական և աշխարհի այլևայլ լեզուներին պատկանող բառեր, որոնք ժամանակակից հայերենը փոխ է առել ռուսերենի միջոցով, ռուսերենում ընդունված իմաստներով և հիմնականում ռուսերենին համապատասխանեցված հնչյունական տեսքով. շլապա, կարտուզ, ցիլինդր, լակ, կրեմ, վիտամին, ասպիրին, պիբամիդոն, պենիցիլին, սաբեպոցիդ, տրիկո, բոստոն, ֆլանել, սատին, շիֆոն, կրեմային, էպոնե, տրանսֆորմատոր, տրակտոր, տանկ, կատեր, ֆլագման, էֆակավատոր, բուլդոզեր, դիրեկտոր, սեկտոր, ռեֆորմ, ռեֆորմատոր, սիմֆոնիա, սոնետ, սուրանո, կոմպոզիտոր, կոմունիստ, կոմունիզմ, սոցիալիզմ, մանիֆեստ, միլիտարիզմ, կապիտալիզմ, պառլամենտ և այլն:

Ռուսերենից և ռուսերենի միջոցով նորագույն փոխառությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանք ավելի շատ համապարփակ բնույթ ունեն, վերաբերում են բնության, մարդկային կյանքի և գործունեության բոլոր բնագավառներին, գիտության, տեխնիկայի, արտադրության տարբեր մարզերին և կազմում են ժամանակակից հայերենի բառային կազմի անկապտելի մասը:

**Օտարաբանություններ:** (Ռուսերեն barbarismos): Լեզվում ըստ իրենց ներթափանցման աստիճանի՝ փոխառությունները կարող են լինել յուրացված և չյուրացված: Վերջինիս են վերաբերում տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ կապերի շնորհիվ, ինչպես նաև գրքային ճանապարհով հայերենում մուտք գործած այն օտարազգի բառերը, որոնք չեն յուրացվում՝ լեզվի կողմից և չեն մերվում նրա բառային կազմի մեջ, մեկուսացած և միայնակ մնալով, լեզվի համակարգում դիտ-

վում են իբրև օտար բառեր: Այդ կարգի բառերը փոխառու լեզվում տարբերվում են հաճախ կառուցվածքով, հայերենին ոչ հատուկ վերջավորություններ և անգամ՝ իրենց արտաքին պատյանով՝ հնչյունական կազմով:

Օտարաբանությունները սովորաբար վերաբերում են տարբեր ժողովուրդների բնորոշ կյանքին, կենցաղին, վարք ու բարքին, սովորություններին, պատմական և մշակութային այլևայլ հասկացություններին:

1) Աշխարհի տարբեր լեզուներին վերաբերող օտարաբանություններ, որոնք նորագույն փոխառության հետևանք են. մերսի, պարզոն, դենդի, մադամ, մադուազել, ֆրաու, ֆրեյլին, լեդի, միլեդի, նեռ, միսս, միսսիս, սրբ, միսսեր, միլոդ, սենյոր, մոնսիեյոր, մոպո, սինյորինա, ջենտլմեն, պոլիսմեն, կոնգրեսմեն, ջերիֆ, պերֆեկտ, սուպերֆեկտ (պաշտոնյա), միկադո (ճապոնական կայսր), կապլլան (կաթոլիկ քահանա), պրիոր (վանահայր), կրեոլ (եվրոպական առաջին գաղութարարների հետնորդները կատինական Ամերիկայում), հորբի, բալա (կեցցե), բալիսիմո, կիմոնո (ճապոնական հագուստ), իսորի (կարճ կիմոնո), ջինս, հոլիդեյ (տաբատի տեսակ), մոսկե (ճապոնական տաբատ), մոկալին (կոշիկի տեսակ), սամբրեո (գլխարկի տեսակ), ռեալ, պիսետա, ֆունտ, ֆրանկ, դոլար, պիսսո (դրամական միավորներ), խերես, մադերա, բորդո, էյլ, վիսկի (խմիչքեղեն), ակր (Նոդային շափի միավոր), դյուլմ, յարդ (երկարության միավոր), կարեյլոս (երկարության միավոր), սպանիել (որսորդական երկարամազ շուն), լաստոն, սիբակլո (ծովային քամի), տրամոտանա (լեռներից փչող քամի), պալանկին (ուտերին կրվող պատգարակ), տրայսել (առագաստի տեսակ), պետոն (կալվածատիրոջ կախման մեջ գտնվող բանվոր), սակն (ճապոնական կերակուր), կենդանիների անուններ՝ անտիլոպ, կաննա, կվազգա, պավիան, դյուգոն (ծովակույ) և այլն:

2) Արևելյան լեզուներին վերաբերող օտարաբանություններ, որոնց մի մասի փոխառությունը կատարվել է հայերեն բարբառների միջոցով. էֆենդի, մյուրիդ, գայմազայմ, մեշիխ և այլն:

3) Օտարաբանություններ կարող են դառնալ նաև օտարազգի այն բառերը, որոնց հայերեն համազորները կազմվում և քաղաքացիության իրավունք են ձեռք բերում փոխառու լեզվում: Այսպես՝ ֆիլոլոգ (բանասեր), ֆիլոլոգիա (բանասիրություն), գեոլոգ (երկրաբան), գեոլոգիա (երկրաբանություն), բիոլոգ (կենսաբան), բիոլոգիա (կենսաբանություն), լեկսիկոլոգ (բառագետ), լեկսիկոլոգիա (բառագիտություն), սինտակսիս (շարահյուսություն) և այլն

բառերը, որոնք ժամանակակից հայերենի արդի փուլում ունեն իրենց հայերեն հաշոյ համազորները՝ օտարաբանություններ են:

### ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատճենումը փոխառության հատուկ տեսակ է համարվում, երբ փոխ է անվում ոչ թե օտարազգի բառը, այլ նրա իմաստը կամ՝ իմաստը, և՛ կառուցվածքը:

Պատճենումները հայերեն այն բառերն են, որ կազմվում են օտարազգի բառերի իմաստների թարգմանությամբ կամ նրանց կառուցվածքի նմանողությամբ: Լեզվում այդ կարգի բառերն առաջանում ու մուտք են գործում դրբային ճանապարհով:

Պատճենումները լինում են՝ իմաստային, կառուցվածքային և կիսապատճենումներ:

1) Իմաստային պատճենումներ: Իմաստային է համարվում այն պատճենումը, երբ լեզվի սեփական բառը փոխ է անում միայն օտարազգի բառի իմաստը: Այս դեպքում բառը, փաստորեն, իր հնչյունական կազմով, բառաբերականական կառուցվածքով բունիկ, սեփական է, իսկ նրա մեկ կամ մեկից ավելի (երբեմն՝ ժամանակակից բոլոր) իմաստները փոխառություն են որևէ օտար լեզվից:

Ցրինակ՝ հայերեն տափակ բնիկ բառի աճեամ, ոչ սուր իմաստը (տափակ մարդ, տափակ դատողություն, տափակ անեկդոտ և այլն) փոխառություն է ֆրանսերեն plat, ինչպես և ռուսերեն плоский բառերի նույն իմաստներից:

Ռուսերենից կատարած իմաստային փոխառություններ են հայերեն նարվածային (ударник), երկաթուղային (железнодорожник) բառերի գոյականական իմաստները (հարվածային—աշխատանքային նորմաները կատարող և դերակատարող առաջավոր բանվոր, երկաթուղային—երկաթուղային տրանսպորտի աշխատող), գիծ (բնավորության, դեմքի) < ֆրանսերեն trait, ռուսերեն черта, черты, մեխ (որևէ բանի ամենաէականը, հիմնականը) < ֆր. clou, ռուս. гвоздь:

Իմաստային պատճենման օրինակներ ռուսերենից. անպայման (1) առանց պայմանի և 2) անշուշտ, անպատճառ) < безусловно. հայտնի (1) ծանոթ և 2) նշանավոր, ակնհավոր, երևելի) < извѣстный. ոչինչ (1) ոչ մի բան, 2) ոչ վատ, լավին մոտ) < ничего. կարենլ (1) կարճացնել, 2) իրավաբանության մեջ՝ գործը դադարեցնել) < прекратить (дело). բոլորովին (ամենին) < совсем.

Պատճենում (ռուս. казнь < ֆր. calque—պատճենում, բառացի՝ պատճենում բավանցիկ թղթի վրա, պատճեն):

փոխադրություն (1) փոխադրելը, տեղը փոխելը. 2) ազատ թարգմանություն) < перевод. ապրել (1) գոյություն՝ կյանք ունենալ. 2) բնակվել) < жить. շնայած (թեև, հակառակ) < несмотря. որոշ (անորոշ, որի թիվը, բանակը, անձնավորությունը հայտնի չէ) < определенный, ֆր. certain. մի շարք (մի խումբ, բազմաթիվ շատ) < ряд (вопросов). համար (հյուրանոցի, բնակարանի) < номер. համար(ներ) (բազմիթի) < номера. հնգամյակ (հինգ տարվա շրջան) < пятилетка և այլն<sup>76</sup>:

19-րդ դարում մի շարք եվրոպական լեզուներում, ինչպես և ուսուցանում, հետադարձում նաև ժամանակակից հայերենում երեվան եկած աջ (հետադիմական, պահպանողական) և նախ (առաջադիմական, հեղափոխական) իմաստներն առաջացել են ֆրանսերեն droit (աջ) և gauche (ձախ) բառերի նոր իմաստների հիման վրա: Փրանսերենում այդ իմաստները ծագել են ֆրանսիական բուրժուական հեղափոխության շրջանում (1789—1793 թթ.) կոնվենտի նիստերի ժամանակ պահպանողական (ժիրոնդիստներին) և առաջադիմական (մոնտանյարներին) կուսակցությունների զբաղեցրած տեղերի կապակցությամբ<sup>77</sup>:

2) կառուցվածքային (կամ բառակազմական) պատճենումներ: կառուցվածքային են կոչվում այն պատճենումները, որոնք կազմվում են օտար բառերի կամ արտահայտությունների (դարձվածքների) իմաստային մասերի՝ բաղադրիչների թարգմանությամբ: Պատճենման այս եղանակը փաստորեն օտարալեզի բառերի և՛ իմաստի, և՛ բառակազմական կառուցվածքի յուրացման արդյունք է, թեև կազմվող բառի բաղադրիչները իրենց նյութական մասով բնիկ (սեփական) են:

ա) Ռուսերենի բառակազմական (կառուցվածքային) պատճեններ. ինֆեաֆենադատություն (самокритика), գեբալանցիկ (отличник), հակազգազ (противогаз), հակահարված (контрудар), հեմեա (самовар), զեղացի (пулемёт), շագեալ (пароход), շոբեաշ (паровоз), համատեղել (совместать), համըկել (совладать), վեաանայել (пересмотреть), նպատկահարմար (целесообразный), աեապատկահարմար (нецелесообразный), օրինաշափություն (закономерность), բնդատակ (подполье), բնդատակյա (подпольный), աեսադաշտ (поле зрения), սաոցադաշտ (ледяное поле), փոձադաշտ (опытное поле), ուղաբիա (вертолёт), ինֆարիա (самолёт):

բ) Այլ լեզուներից ուսուցանելի միջոցով կատարված պատճենումներ. զեմաոգ (сверхчеловек < գերմ. Über+Mensch), սաո-

աբաժանում (подразделение < ֆր. subdivision), կենսագրություն (биография < հուն. bios+grapho) և այլն:

դ) Անմիջապես օտար լեզուներից կատարված պատճենումներ. օրինակ՝ մայրաքաղաք < հուն. metropolis (հայկական կաղմոթյամբ՝ Բաղաքամայր), իմաստասեր < հուն. philosophos, բանասեր < հուն. philologos, ցայգատուն (արևմտահայերեն՝ գիշերային սրճարան) < ֆր. boit de nuit—բառացի թարգմանություն է. ուղղագրություն < հուն. orthos— ուլիղ, ճիշտ + grapho— գրում եմ, կենդանաբանություն < ֆր. zoologie < հուն. zoon— կենդանի + logos— ուսումն և այլն:

կառուցվածքային պատճենման եղանակով հայերենում բազմաթիվ նոր բառեր են կերտվել դեռևս 5-րդ դարում հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից: Հունարենի նմանողությամբ այդ շրջանում են կազմվել հարյուրավոր տերմիններ, որոնք վերաբերում են գիտության և կյանքի ղանաղան բնագավառների՝ փիլիսոփայությանը, լեզվին, գրականությանը, աստվածաբանությանը և այլն:

3. Պատճենումների առանձին տեսակ պետք է համարել հայերենի բառակազմական միջոցներով և կանոններով կազմված այն բառերը, որոնց համապատասխան հասկացությունները կամ իմաստները փոխառություն են այլ լեզուներից: Օրինակ՝ հեռուստացույց— телевизор, արբանյակ— спутник, սավառակ— самолёт, մանրէ— микроб < ֆր. microbe < հուն. mikros— փոքր, մանր+bios— կյանք, հեռուստատեսություն (телевидение) և այլն:

Օտարազգի բառերի հիման վրա կազմված համազորներում նախադասությունը, առարկան, երևույթը ավելի պատկերավոր, տպավորիչ ներկայացնելու նպատակով հայերենը երբեմն շեղվում է բնագրից, օրինակ՝ համազգեստ, ֆր. uniforme (բառացի՝ միաձև, միանման, միատեսակ), ուսու. форма, համերգ, ֆր. concert (բառացի՝ իբար հետ համամիտ, համակամ, համախորհուրդ լինելը), հանդես (ամսագիր), ֆր. journal (օրական, օրագիր, լրագիր), անդլ. journal (շաբաթաթերթ, ամսաթերթ). հեծանիվ, ֆր. vélodipède (բառացի՝ յատ. արագոտք), գերմ. Rad— անիվ և Far-rad— համախորհելու անիվ. հաշարան, անդլ. ֆր. restaurant (կազմակերպչ. կազմակերպչ), շանթարգել, ֆր. paratonnere (parer— կասեցնել և tonnere— որոտում), անդլ. lightning-rod (lightning— փայլակ և rood— ձող), իտալ. parafulmine (fulmine— կայծակ), սուս. промощвод (гром— որոտ և отвод— հետ դարձնել)<sup>78</sup>:

<sup>76</sup> Շ. Անտոյան, նշվ. աշխատ., էջ 590—597:

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>78</sup> Տե՛ս Շ. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, Թ մաս, էջ 486—58:

4) Կիսապատճենումներ: Կիսապատճենումները կառուցվածքով նույնպես համապատասխանում են սկզբնաղբյուրին, սակայն կազմված են բնիկ՝ լեզվի սեփական և փոխառյալ բաղադրիչներով: ավտոկանգառ, ավտոհանգրվան, ավտոտնակ, կինոթատրոն, կինոդեռասան, կինոաստղ, էլեկտրակայան, էլեկտրացանց, խնարեռոն, քարաբեռոն, կրաբեռոն:

Բառիմաստը ավելի ճիշտ ներկայացնելու նպատակով հայերենը երբեմն մոտավոր պատճենում է կատարում: Այդ դեպքում բաղադրիչներից մեկի թարգմանությունը ստույգ (բառացի) է լինում, մյուսինը՝ մերձանիշով (իմաստով մոտ բառով): Անապույս (стреловист, բառացի՝ անատերեհ), նույն ձևով՝ փշամորթներ (иглокожие), բաղապատ (утконос), ուղեղյուր (носорог), կենսափրկավորներ (непаракопытные), ատամնադուր (зубчатка), եղնահավ (крапивник), սգաբիրն (траурница), կաղամբաբիրն (капустница) և այլն:

Հայերենում, ինչպես և մյուս լեզուներում, հաճախ փոխառությունն ու պատճենումը զուգահեռաբար են կատարվում: Որոշ դեպքերում պատճենումը ավելի նեղ, մասնակի իմաստ է ձեռք բերում, փոխառությունը՝ ավելի լայն, ինչպես, օրինակ՝ մառերիալիզմ և նյութապաշտություն, կոմպոզիտոր և երգահան, պրոցես-գործընթաց, օրյեկա-առաչկա:

Փոխառությունը և պատճենումը երկար ժամանակ գործածվում են լեզվում որպես հոմանիշներ, մինչև որևէ մեկի լիակատար հաղթանակը (ինչպես, օրինակ՝ սպորտսմեն-մարզիկ) կամ վերաիմաստավորումը:

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ մեծացավ ժամանակակից հայերենի հասարակական կշիռը, նպաստավոր պայմաններ ու լայն հնարավորություններ ստեղծվեցին նրա հետագա զարգացման և կատարելագործման համար: Ժամանակակից հայերենի գրական և ազգային լեզվի գործառույթուններին ավելացավ նաև պետական լեզվի գործառույթունը, որով ավելի ընդարձակվեցին նրա կիրառության բնագավառներն ու շրջանակները:

Սովետական շրջանում<sup>79</sup> հասարակական-քաղաքական, տնտե-

<sup>79</sup> Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973, Գ. Սեփակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 133—141: Հայոց լեզվի զարգացումը

սական և մշակութային կյանքի վերափոխումներն ու վերակառուցումները և վերջապես դարձա գիտատեխնիկական հեղաշրջումը որպես արտալեզվական գործոններ նպաստեցին լեզվում և հասարակական նրա ավելի զգալուն մասի՝ բառապաշարի ոլորտում կատարվող փոփոխություններին: Բառապաշարում տեղի ունեցող փոփոխությունները, ընդգրկելով բառային կազմը, իմաստաբանություն և դարձվածաբանության բնագավառները, իհարկե, չէին կարող որևէ շափով ազդել ժամանակակից հայերենի բնույթի վրա: Այդ փոփոխությունները հիմնականում արտահայտվում են բառապաշարի հարստացման, բազմաթիվ նորանոր բառերի կերտման, նորագույն փոխառությունների, հայերեն գիտատեխնիկական միջավայր բնագավառների տերմինաբանության մշակման կամ ստեղծման, որոշ թվով բառերի գործուն բառապաշարից կամ ընդհանրապես գործածությունից դուրս գալու կամ սակավ գործածվելու, լեզվում առկա բառերի նոր իմաստներ ձեռք բերելու, մյուսների՝ հին իմաստներից զրկվելու, ինչպես նաև լեզվական մյուս տարրերի հետագա կատարելագործման միջոցով:

Ժամանակակից հայերենի բառային կազմի՝ բառապաշարի և դարձվածաբանության, ինչպես նաև իմաստաբանության բնագավառներում կատարված փոփոխություններն ու տեղաշարժերը ընթացել են հիմնականում հետևյալ ուղղությամբ.

ա) բառային կազմում նոր բառերի, բառակապակցությունների ու դարձվածքների առաջացում.

բ) լեզվում եղած բառերի նոր իմաստների ձեռքբերում.

գ) բառակազմական միջոցների ծավալմամբ որոշ կարգի բաղադրությունների աշխուժացում.

դ) լեզվի բառային կազմից ընդհանրապես, ինչպես նաև նրա գործուն բառապաշարից որոշ բառերի դուրս մղում.

1) Բառային կազմի հարստացումը նոր բառերով, բառակապակցություններով ու դարձվածքներով

Սովետական իշխանության տարիներին հասարակական նոր հարաբերությունների, հասարակական-քաղաքական կյանքի սկզբունքային նոր ձևերի, գիտության, տեխնիկայի, արտադրության և մշակույթի մեջ կատարված արմատական փոփոխությունների հետևանքով ժամանակակից հայերենի բառային կազմը համալրվում է բազմաթիվ նորակազմ բառերով ու արտահայտություններով:

դասման սովետական փուլը, Երևան, 1946: Ս. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզուն և բառերին դերը նրա հարստացման և զարգացման մեջ, Երևան, 1953:

րով, ինչպես նաև նոր փոխառություններով, միաժամանակ շատ բառեր ձեռք են բերում նորանոր իմաստներ:

Նորակազմ բառերով բառապաշարի համալրումը և լեզվում առկա բառերի նոր իմաստների ձեռքբերումը արդյունք են ինչպես լեզվի ներքին զարգացման, այնպես էլ՝ ուսուցիչի ազդեցության: Ռուսերենի ազդեցությունն այդ շրջանում տարբեր ձևերով է արտահայտվում: Հայերենի նյութի հիման վրա, նրա բառակազմական միջոցներով կազմվում են այնպիսի բառեր ու կապույն կապակցություններ, որոնք արտահայտում են սովետական կյանքի տարբեր կողմերն ու երևույթները: Լեզվի բառակազմության գործող կանոններով ու կազմապարհներով կերտված նոր բառերի մեջ որոշակի թիվ են կազմում, այսպես կոչված, սովետարանությունները: Գրանք այնպիսի բառեր, կապույն կապակցություններ ու դարձվածքներ են, որոնց հիմքում ընկած հասկացությունները ներկայացնում են սովետական հասարակարդին բնորոշ երևույթները:

Այդ կարգի բառերն ու կապակցությունները կարելի է բաժանել մի քանի խմբերի.

ա) Սովետական կարգերի, վարչական մարմինների, կուսակցական-սովետական ապարատի և աշխատանքի հետ կապված համապատասխան անվանումներ՝ բառեր և բառակապակցություններ. ՍՍՀՄ, Բաղրյուրո, կուրյուրո, կուսկույն, պետպլան, կուսակտիվ, կուսհամագումար, կոմերիտական, միլիցիա, միլբաժին, միլպետ, կենտրոնական կոմիտե, գերագույն սովետ, Բաղր-Բային սովետ, շրջանային սովետ, շրջկոմի Բարտուլար, կենտկոմի Բարտուլար, շրջանային գործադիր կոմիտե, գյուղական սովետ, ավանային սովետ, կուլկտիվ ղեկավարություն, լենինյան կուրս, պետական վերահսկողություն, պետավտոտեսչություն, ֆինբաժին, ադրամին, ժողկրթբաժին, սովետական Բարտուլար և այլն:

բ) Աշխատանքի կազմակերպման սոցիալիստական ձևերի և մեթոդների, բազարային և դրոշակական կյանքում կատարված փոփոխությունների, արտագրություն, գիտության, մշակույթի առաջընթացի հետ կապված նոր բառեր, կապակցություններ և իմաստներ. ենգամյակ, սոցմրցություն, Երաբար, հարվածային, շարաբորյակ, կիրակնօրյակ, միամսյակ, Երաբարություն, համալիր, խոպանորդ, Բենադատություն, ինֆանֆանդատություն, հեռախոսող, գերակատարել, շֆանշանակիր, կոլտնտեսություն, օղակավար, գյուլստտես, անասնորայծ, աշխօր, կրվորունի, կովանոց, քրոշանոց, Երաբարող, խոպանոց, վերապատրաստում, վերավորակավորում, կոմունիստական աշխատանքի բրիգադ, պլանային Երաբարություն, կուլկտիվ պայմանագիր, գեղարվեստական ինֆան-

գործունեություն, կոմունիստական շինարարություն, հանգիստակց պլան, Գարգացած սոցիալիզմ, Բարձրագույն ուսումնական հաստատություն, մանկավարժական պրակտիկա, գիտությունների թեկնածու, ենգամյա պլան, Ժողովրդական տնտեսություն, արտապլանային արտաբանք, անի տեմպեր, աշխատանքային վերելք, աշխատանքային խանդավառություն, Երի գագում, փոխանցիկ դրոշ, նյութական շահագրգռվածություն, Ժողովուրդների անխախտ բարեկամություն, փորձի փոխանակում, հերոսունի մայր, հերոս Բարաք, արտադրության առաջավոր և այլն:

Հասարակական-բազարական հարաբերությունների, Ժողովրդական տնտեսության, արդյունաբերության, գիտության, տեխնիկայի և մշակույթի աննախընթաց վերելքի շնորհիվ սովետական շրջանում հայոց լեզուն դարձել է նաև գիտության և տեխնիկայի լեզու: Մշակվել են հայ տերմինաբանության հիմնական սկզբունքները, ստեղծվել կամ կյանքի են կոչվել հասարակական-բազարական, գիտատեխնիկական տարբեր բնագավառներին պատկանող հազարավոր տերմիններ, կազմվել են տասնյակ տերմինաբանական բառարաններ և տերմինաբաններ: Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության ստեղծման և մշակման գործում ուսուցիչը դարձել է ուղեցույց-լեզու և սկզբնաղբյուր-լեզու: Այժմ հայերենն իր տերմինաբանության մակարդակով հաջողությամբ ծառայում է ժամանակակից գիտության բոլոր ճյուղերին ու բնագավառներին: Մյուս կողմից, գիտության ու տեխնիկայի, արտադրության և մշակույթի Ժողովրդականացման, հասարակության լայն զանգվածների գիտատեխնիկական բնագավառում մակարդակի անբնորոշ բարձրացման շնորհիվ բազմազան բնագավառներին պատկանող բազմաթիվ տերմիններ նշանակալից չափով մուտք են գործել համաժողովրդական լեզվի բնագավառում գործածական բառապաշարը, մատչելի են դարձել ժողովրդական լայն զանգվածներին և կիրառության սահմանների փոփոխման հետևանքով շատ տերմիններ վեր են ածվում լեզվի սովորական բառերի. ինչպես՝ ավիացիա, ամնիստիա, հրթիռ, տիեզերաճավ, տիեզերագնաց, ագրեսիա, ագրեսոր, ացետիլեն, անսամբլ, կվարտետ, տրիո, արձակ, արձակագիր, պոեզիա, դրամա, դրամատուրգ, դրամատուրգիա, պոետ, օպերա, սյուժե, կերպար, սցենար, բանկար, գունակար, ծաղրանկար, նեպանկար, հարբաբանդակ, դիսերտատես, դիսերտացիա, բանասեր, գրականագետ, լեզվաբան, ֆիմիլիոս, ֆիզիկոս, տնտեսագետ, կենսաբան, ինժեներ, ագրոնոմ, տեխնիկա, տեխնոլոգիա, ռելե, դեմոկրատիա, սոցիալիզմ, կոմունիզմ, կոնֆերանս, պլենում, դեպուտատ, դեկտացիա, պատգամավոր, համագումար,



պես աշխուժացան հապավումները: Այս շրջանում հապավումները կազմվում են ոչ միայն զուտ հայկական իրականությունից, ազգային կյանքի պայմաններից բխող հասկացություններից, այլև գերազանցապես սովետական կյանքի, տնտեսական-քաղաքական հարաբերությունների, պետական-վարչական կարգի հետ պայմանավորված հասկացությունները առաջին հերթին ուսերենում գրքանցվելու շնորհիվ: Պատահական չէ, որ հայերենի հապավումների գրչով մասը կազմված է ուսերենի համաբանությունից, թարգմանությունից կամ կաղապարներով:

Լեզվի բառապաշարի շատ բառերի տարբեր պատճառներով կատարվող ներքին իմաստափոխության զուգընթաց՝ արդի հայերենի որոշ բառերի իմաստների փոփոխությունը կատարվել է նաև ուսերենի ազդեցությամբ: Այդ ճանապարհով հայերեն բառերը ձևոք են բերել նոր իմաստներ և զործածվում են միայն այդ կամ նաև այդ իմաստներով: Ռուսերենի նմանողությունը կամ համաբանությունից հայերեն բառերի ձևոք բերած նոր իմաստները իբրև իմաստային պատճենումներ, աստիճանաբար տարածվում են լեզվում: Դրանցից շատերը վաղուց մուտք են գործել ընդհանուր գործածական լեզվի իմաստաբանական համակարգը, ինչպես՝ հարվածային (ударник), գերազանցիկ (отличник), շաբաթոյակ (субботник), թեխում (учаю), զտում (чистка), անկում (падёж), օղակ (звено), կլորացնել (округлять), սահել (սմբակոծել, գրնդակոծել), բաց (թերություն), անճարագատ, անկայուն (տարր), մաղվել (ուսանողություն), կոծկել (թերություններ), անզանգել, ընդգծել. իմաստային պատճենումներ՝ բաժանել, կիսել (մեկի կարծիքը), կողքից անցնել (անուշադրության մատնել), նակատ (սպարեզ, բնագավառ), շոշափել (մեկի շահերին զիպչել, մեկի մասին խոսել), սառեցնել (գումար, միջոցներ), ծանրաբեռնել, ծանրաբեռնվածություն (ղասախոսների) (нагрузка):

Այս շրջանում առանձնապես լայն շափերի են հասել դարձվածքների և արտահայտությունների իմաստային պատճենումները, կապակցությունների թարգմանությունը. ինչպես՝ արշի ծառայություն, արշի ծառայություն մատուցել, հինգերորդ շաբաթուն կամ զորայուն, լեզուն առամենի ետևում պահել, ձեռքերը ծալած նստել, կամ՝ բնդհանուր հայտարարի բերել, աչհակապայթյամբ գրավել. կապակցություններ՝ հանրային տնտեսություն, սովետական իշխանություն, պլանային տնտեսություն, հանդիպակաց պլան, սոցիալիստական մրցություն, զարգացած սոցիալիզմ և այլն:

Լեզվի բառապաշարում որոշակի տեղաշարժեր են կատարվել նաև բառերի ոճական կիրառության ընդարձակման ուղղությամբ:

Գրավոր լեզվի գրքային ոճի շատ բառեր և արտահայտություններ ավելի հաճախ են գործածվում բանավոր, խոսակցական լեզվում և ընդհակառակը՝ խոսակցական լեզվի բառերը թափանցում են գրքային, գրավոր լեզվի տարբեր ոճերը: Բանավոր խոսակցական լեզվում արդեն սովորական են՝ հեռուստացույց, արբանյակ, պատգամավոր, նստաշրջան, ֆաղափական ուսուցում, արտադրության առաջավոր, ֆիմիական պարտատանյութ, մեխանիզատոր, թոչնաճոց, սգրոտեխնիկա, պետական կարգապահություն, անի տեմպեր և նման շատ բառեր ու կապակցություններ:

Խոսակցական լեզվից գրավոր խոսքն են թափանցում այնպիսի բառեր, ինչպես՝ խոտհարք, կորեզան, էտել, էտոց, այգեթաղ, այգեբաց և այլն:

Մյուս կողմից, երկրի քաղաքական կարգերում և տնտեսական-վարչական կյանքում կատարված արմատական փոփոխությունների պատճառով, պետական-վարչական կառուցվածքին, հին կյանքին ու կենցաղին վերաբերող շատ բառեր, բառիմաստներ, արտահայտություններ՝ համապատասխան հասկացությունների, երևույթների վերացման, անհետացման, պատմության գիրկն անցնելու կապակցությամբ կամ ընդհանրապես դուրս են եկել լեզվի բառապաշարից, կամ էլ նրա գործունե կազմից անցել են ոչ գործունե կազմը: Այդ կարգի բառերն ու արտահայտությունները կարելի է բաժանել մի քանի խմբերի:

Ցտոական իշխանության տապալման, զանազան խավերի, դասերի լիկվիդացման հետ վերացան կամ գործունե բառապաշարից դուրս մղվեցին. ա) Պետական հին կարգին, վարչակարգին, հիմնարկներին, գյուղական և քաղաքային դանազան պաշտոններին վերաբերող բառեր ու արտահայտություններ. ինչպես՝ իշխան, իշխանուհի, կոմս, կոմսուհի, ցար, փոխարքա, ոստիկան, ոստիկանապետ, ոստիկանատուն, ֆաղափապետ, ֆաղափազույս, քաղապետ, գավառ, գավառապետ, պրիստավ, տանուտեր, գրագիր, էյոխվա, գգիր, ֆեթխուդա, Խզնվական, կալվածատեր, Ջերդ գերազանցություն, Ջերդ ազնվախայություն, Ջերդ պայծառափայություն, Ջերդ արժանապատվություն և այլն:

բ) Հին կյանքի ու կենցաղի, եկեղեցու, եկեղեցական ծեսերի, տիրոջանների, աստիճանների, գյուղատնտեսական գործիքների, կշեռքի, չափի և այլն հին բառեր, անվանումներ և իմաստներ. ինչպես՝ շարշի, փողաղջի, ծառա, սպասավոր, սպասունի, վարժունի, օրհորդ (ուսուցչուհի), գիմնագիա, նեմարան, խանութպան, կնուեֆ, պաս, կնեֆ, թեմ, առաջնորդ (եկեղեցական), տերտեր, ֆահաւա, տիրացու, տնօրենեֆ, վեղար, ուրար, գանձանակ, սկին, արշիմ,

ֆունտ, վերստ, սաժեն, խալվար, գրվանֆա, լուծ, լծկան, հոտադ, բառակ, կուլակ, առոռ, շուք, կոռ, բեգյառ:

Վերոհիշյալ բառերից շատերը դարձել են հնարանություններ և պատմական բառեր:

գ) Միայն վերջին տասնամյակներին սովետական հասարակական-վարչական կյանքում կատարված փոփոխությունների կապակցությամբ պետական-կառավարչական մարմինների, բանակի և նավատորմի անվանումների որոշ փոփոխման հետևանքով գործածությունից դուրս են եկել նույնպես մի շարք բառեր. ինչպես՝ կարմիր բանակ, կարմիրբանակային, կարմիր եավատուրմ, կարմիրնավատուրմային, կարմիր գվարդիական, բանակային (զինվոր), ժողկոմ, ժողկոմատ, ժողովրդական կոմիսար, ժողովրդական կոմիսարիատ, Բաղդեկ, ժողանտխորհ, ժողովրդական տրեմետական խորհուրդ, կենտգործկոմ, կենտրոնական գործադիր կոմիտե, կուսբջիչ, կուսակցական բջիչ, պարենհարկ և այլն:

դ) Գեղարվեստական գրականության լեզվում, ինչպես նաև մասնագիտական տերմինաբանության մեջ նկատվում է գրաբարայան որոշ բառերի և բառաձևերի վերականգնում կամ գործածության աշխուժացում, ինչպես՝ ի ցույց դնել, ի սպաս դնել, ի հենուկս, ի դերև հանել և այլն:

## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բառակազմություն<sup>1</sup> տերմինը երկու իմաստ ունի: Առաջին իմաստով նշանակում է լեզվաբանության այն բաժինը, որն զբաղվում է բառերի կառուցվածքի, բառերի կազմության օրենքների ու կանոնների, լեզվի բառակազմական համակարգի քննությամբ: Մյուս իմաստով բառակազմությունը նոր բառերի կազմության գործընթացն է, լեզվի բառակազմական օրենքներով նոր բառերի կազմումը:

Բառակազմությունը ուսումնասիրվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարաժամանակյա դիտակետերով:

Համաժամանակյա բառակազմության նպատակն է պարզել և մեկնաբանել բառերի կազմության օրինաչափությունները լեզվի զարգացման ժամանակակից փուլում: Այդ նշանակում է, որ բառի ըստ բաղադրիչների տարրալուծումը պետք է կատարել ժամանակակից լեզվաբանականությամբ: Այդ տեսակետից, օրինակ, տիկին, տիկզեբ, անբառերը պարզ են, թույլատրելի չէ դրանց տարրալուծումը ըստ բաղադրիչների: Նույն ձևով արդի լեզվաբանականությունը չի գիտակցվում՝ մասին, անծամբ, համարյա բառերում գրաբարյան քերականական ձևերի առկայությունը:

Համաժամանակյա բառակազմությունն, այսպիսով, ուսումնասիրում է լեզվի ժամանակակից փուլում զոյակցող միավորները, որոնք կարող են բացատրվել միայն լեզվի այդ շրջանում գործող օրինաչափություններով:

Այլ է տարաժամանակյա բառակազմության մոտեցումը: Տարաժամանակյա բառակազմության նպատակն է բացատրել և մեկնաբանել բառակազմական օրինաչափությունների պատմական կապերը: Այդ նշանակում է, բառակազմական իրողությունները պետք

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965. Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980, Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955. Ժամանակակից հայոց լեզու, 4. 1-ին, Երևան, 1979. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:



է ուսումնասիրել իրենց պատմական դարգացման մեջ: Այսպես, վերոհիշյալ՝ տիկիւն, տիեզերք, տեր բառերը տարածամանակյա կամ պատմական բառակազմութեան տեսակետից տարրալուծվող միավորներ են՝ տի-կիւն, տի-եզեր(ք), տի-այր, որտեղ տի բաղադրիչի իմաստն է «մեծ»: Մասին բառը գրաբարի մասն բառի տրականն է, անծամբ բառը՝ անն-ի գործիականը և այլն: Այսպիսով, բառակազմութեան համաժամանակյա և տարածամանակյա մոտեցումների դեպքում միևնույն տերմինով անվանվող մի շարք հասկացութիւններ տարբեր բովանդակութիւն են ստանում:

Լեզվի բառակազմական համակարգի ուսումնասիրութիւնն, անշուշտ, կարելի է կատարել անկախաբար, համաժամանակյա և տարածամանակյա դիտակետերով առանձին-առանձին: Նպատակահարմար է, սակայն, այդ ուսումնասիրութեան ընթացքում օգտագործել ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարածամանակյա բառակազմութեան ընձեռած փաստերն ու տվյալները: Ավելիին՝ հաճախ արդի փուլի բառակազմութեան շատ փաստեր ըմբռնելու համար անհրաժեշտ է լինում նրանց զարգացման օրինաչափութիւնների բացահայտումը. օրինակ՝ ա հոգակապի ծագումը, կամ՝ մի շարք ածանցների առաջացումը և այլն:

Ուրեմն՝ համաժամանակյա և տարածամանակյա (պատմական) բառակազմութիւններն ուսումնասիրութեան միևնույն, ընդհանուր առաքկայի իրենց տարբեր մոտեցումներով հասակորնն սահմանադատում են բառակազմութեան ժամանակակից իրակութիւնները պատմական փաստերից, բայց և որոշ իմաստով լուսնելով իրար, բառակազմական օրինաչափութիւնների քննութիւնը դարձնում են բաղակողմանի և ամբողջական:

Բառակազմութեան օրինաչափութիւնների, կանոնների ու կազատարների ամբողջութիւնը ներկայացնում է տվյալ լեզվի բառակազմական համակարգը: Բառակազմական համակարգի մեջ են մտնում այն տարրերը, որոնցից կազմված է բառը, նրա կառուցվածքի (կառուցի) մեջ մտնող միավորները (արմատ, ածանց, հոգակապ): բառերի կառուցվածքը, ինչպես նաև այն օրենքները, որոնցով բառերն ըստ իրենց բառակազմական իմաստների խմբավորվում են բառակազմական տիպերի՝ բառերի որոշակի տեսակների մեջ:

Բառակազմութիւնը սերտորեն կապված է բառապաշարի, ինչպես նաև բիրականութեան՝ ձևաբանութեան ու շարահարկութեան հետ:

Բառապաշարի հետ ունեցած նրա կապը պայմանավորված է նրանով, որ բառակազմութեան շնորհիվ լեզվի բառակազմական

միջոցներով կերտվող նորանոր բառերը համալրում են բառային կազմը: Իսկ նոր բառերի կերտումը կատարվում է բառապաշարի զարգացման պահանջով:

Բառակազմութեան կապը քերականութեան հետ անմիջական է. բառերը կազմվում են տվյալ լեզվի քերականութեան՝ ձևաբանական և շարահարկական կանոններով: †

## ՁԵՎՈՒՅԹՆԵՐ

Ձևույթները որպես բառի իմաստային միավորներ (մասեր): Հայերեն ձևույթ տերմինը կազմված է ուս. морфема (հունարեն morphē— ձև) բառի նմանողությամբ: Ձևույթը իմաստային տեսակետից բառի անբաժանելի, այլևս շտրոհվող մասն է, իմաստի և ձևի տեսակետից լեզվի նվազագույն միավորը:

Ժամանակակից հայերենում բառն ու ձևույթը չեզոքական տարբեր իրակութիւններ են, ունեն և՛ նման, և՛ տարբեր հատկանիշներ: Նրանք նման են նրանով, որ լեզվի իմաստային (իմաստակիր) միավորներ են, ունեն որոշակի հնչույթային (հնչյունական) կազմ:

Բառերն ու ձևույթները իրարից էսպես տարբերվում են նրանով, որ.

ա) բառերն արտահայտում են կոնկրետ իմաստ, մինչդեռ ձևավորների իմաստը կոնկրետ չէ, այլ ընդհանուր է.

բ) բառերն օժտված են քերականական ձևավորվածությամբ, ձևույթները՝ ոչ.

գ) բառերը գործածութեան տեսակետից ինքնուրույն, անկախ միավորներ են, որոնցով նախադասութիւն են կազմում, հետևաբար և մտնում են նախադասութեան մեջ. ձևույթները զուրկ են ինքնուրույնութեանից և անկախութեանից, մտնում են բառի կազմի մեջ, կազմում են բառի մասը, նրա բաղադրատարրը:

Որոշինք տևտեսել, հասնել, ջրմուղ, գրաբնագատութիւն, անհանդուրժող, այսօր, քաղաքի բառերի ձևույթային կազմը. արևտեսել— անտեսել, հասնել— հասնել, ջրմուղ— ջրմուղ, գրաբնագատութիւն— գրաբնագատութիւն, անհանդուրժող— անհանդուրժող, այսօր— այսօր, քաղաքի— քաղաքի: Այստեղ բերված ձևույթները միատարր, համարժեք չեն:

ա) Ձևույթների մի մասը բառերի հնչյունափոխված ձևեր են, ինչպես՝ տև<տուն, գր<գիր, ջր<ջուր, որոնք այդ ձևերով ինքնուրույն գործածութիւն չունեն, մինչդեռ դրանց ուղիղ ձևերը (տուն,

չուր, գիր) իբրև բառեր՝ ինքնուրույն անկախ գործածություն ունեն։

բ) տես, հաս, մուղ, հանդարժ ձևույթները հնչյունափոխված չեն, ընդհանուր բառական իմաստ են արտահայտում, բայց ինքնուրույն գործածություն չունեն, անկախ բառեր են դառնում քերականորեն ձևավորվելուց հետո։

գ) -ել, -ան, -ող, -ուրյուն, -ա ձևույթները նույնպես իմաստային միավորներ են, արտահայտում են տարբեր իմաստներ, բայց ինքնուրույն գործածություն չունեն և կարող են հանդես գալ միայն բառի կազմում։

դ) այս, օր, քաղ, արի ձևույթներն արտահայտում են որոշակի կոնկրետ իմաստներ, քերականորեն ձևավորված են, տվյալ բաղադրություններից դուրս ունեն ինքնուրույն, անկախ գործածություն։ Դրանք միաժամանակ և՛ ձևույթներ են, և՛ բառեր, արմատական բառեր կամ պարզ հիմքեր։

Ձևույթները բաժանվում են երկու տիպի՝ հիմնական և երկրորդական։

1) Հիմնական կամ արմատական ձևույթներ։ Հիմնական ձևավորված բառի նվազագույն, պարտադիր այն մասն է, որ պարունակում է բառի հիմնական բառական իմաստը։ Օր.՝ այգեպտղաբանչաբարունություն բառը կազմված է այգ, պտղ, բանջար, բուծ հիմնական ձևույթներից, որոնցից յուրաքանչյուրը իր մեջ պարունակում է բառի հիմնական ընդհանուր բառային իմաստ։

Հիմնական ձևույթներն, ուրեմն, բառի բառային իմաստ պարունակող միավորներ են, որոնք հիմնականում հանդես են գալիս իբրև արմատներ՝ հնչյունափոխված կամ չհնչյունափոխված ձևերով։

Լիզվում ինքնուրույն գործածություն ունեցող ձևույթները արմատական բառերն են, երբ արմատի և բառի բառային իմաստները համընկնում են. ինչպես, օրինակ՝ հայերեն բոլոր պարզ բառերը՝ այգի, տուն, հաց, գլուխ, մարմին, կարմիր, կանաչ, սպիտակ, լավ, վատ, արագ, դանդաղ և այլն։

Հիմնական ձևույթների մյուս գանգվածը լեզվում ինքնուրույն գործածություն չունի։ Այդ կարգի միավորները այն բառարմատներն են, որոնք ածանցման, բառաբարդացման կամ մասնիկավորման շտրահիվ վեր են ածվում բառերի. ինչպես՝ վագ-ք>վագք, վագ-ել>վագել, հաց-թուխ>հացթուխ, զին(դեն)-վոր>զինվոր, զին-ա-վառ>զինավառ և այլն։

Արմատը կամ բառարմատը հիմնական ձևույթ է, բառի նյու-

թական իմաստի կրողը, որի մեջ չի պարունակվում որևէ երկրորդական ձևույթ (ածանց, քերականական մասնիկ)։ ✓

Արմատները լինում են՝ ձևաբանական և ստուգաբանական։ Արմատներն ունենում են նաև տարբերակներ։

ա) Ձևաբանական արմատ։ Ձևաբանական այն արմատներն են, որոնք տարբերակվում են ըստ լեզվի արդի վիճակի, գիտակցվում են որպես այդպիսիք ժամանակակից լեզվաբանություն համաձայն։ Օր.՝ տիեզերք, տիեզերական, տիեզերազնաց բառերի մեջ ձևաբանական արմատն են տիեզերք, տիեզեր։

բ) Ստուգաբանական արմատ։ Ստուգաբանական են համարվում այն արմատները, որոնք տարբերակվում են լեզվի զարգացման անցյալ փուլերի հարաբերությամբ։ Դրանք կոչվում են նաև էքիմոն կամ բուն արմատ։ Օր.՝ կառավարել>կառ(ք)-վար-ել, տիեզերք>տի-եզ(եր)-ք։

գ) Արմատի տարբերակ։ Դրանք արմատների այն տարատեսակներն են, որ առաջ են գալիս հնչյունափոխությամբ, ինչպես, օրինակ՝ ջրմուղ. ջր<չուր, մղել. մղ<մուղ, ջր և մղ ձևույթները արմատի տարբերակ են։

2) Երկրորդական ձևույթներ։ Երկրորդական են կոչվում այն ձևույթները, որոնք արտահայտում են բառակազմական (ածանցային) կամ ձևակազմական (քերականական) իմաստներ։ Դրանք բառի կամ բառերի տարբերը կամ մասերն են։

Երկրորդական ձևույթները բաժանվում են՝ քերականական (կամ իրահարաբերական) ձևույթների և բառակազմական (ածանցային) ձևույթների։ Բառակազմական և քերականական երկրորդական ձևույթները գուրկ են ինքնուրույն բառային իմաստից։

Բառակազմական իմաստներ արտահայտող երկրորդական ձևույթները ածանցներն են և կոչվում են երկրորդական բառակազմական ձևույթներ։ Երկրորդական բառակազմական ձևույթները կամ ածանցները, միանալով հիմնական ձևույթներին (բառին կամ արմատին), փոխում են նրանց իմաստները և կազմում են նոր բառեր։ Օրինակ՝ անհանդուրժողականություն բառը կազմված է՝ հանդուրժ հիմնական ձևույթից և ան-, -ող, ական, -ություն երկրորդական բառակազմական ձևույթներից՝ ածանցներից։

Ածանց, վերջավորություն, հոդակապ։ Հայերենի ածանցները (նախաածանցները և վերջածանցները) երկրորդական բառակազմական ձևույթներ են, մտնում են բառի կազմի մեջ, փոխում են արմատի (հիմքի) բառային իմաստը և կազմում են նոր բառեր։ Օր.՝ դժբախտ-ություն։

Մի փոքր այլ է բայական ածանցների դերը։ Հայերենի բա-

յական ածանցները (ն, չ, ան, են, ց, ացն, եցն, վ, ատ, ոտ, տ) արտահայտում են ընդհանուր սեռային-քերականական, կերպային և բառակազմական իմաստներ:

Վերջավորությունները երկրորդական քերականական (ձևակաշմական) ձևույթներ են, որոնցով կազմվում են բառաձևեր. օրինակ՝ հոլովական վերջավորությունները՝ սեղան, սեղանի, սեղանից, սեղանով, սեղանում, քույր, քրոջ, քրոջից, քրոջով, խոնարհման վերջավորությունները՝ երգում (եմ), երգելու (եմ), երգեցի, երգիր, կերպնմ և այլն, հոգնակերտ մասնիկները՝ երգե՛ր, գառնե՛ր, քաղաքնե՛ր և այլն:

Հոգնակազմ նույնպես երկրորդական քերականական (ձևակազմական) ձևույթ է: Հանդես գալով բառի մեջ, կապակցում է նրա բազուկիչները: Հայերենում բազուկիչությունների մեջ հանդես է գալիս ա հոդակապը: Օր.՝ լուսամուտ, տնատե, հողատե և այլն: +

### ԲԱՌԻ ԿԱՌՈՒՅՑՔԸ, ՆՐԱ ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Հայերենում բառը կազմված է մեկ և մեկից ավելի ձևույթներից: Յուրաքանչյուր բառի կազմության մեջ պարտադիր է հիմնական՝ արմատական ձևույթի առկայությունը, առանց որի չի կարող լինել բառային անկախ, ինքնուրույն և ամբողջական միավոր:

Հայերեն պարզ կամ արմատական բառերի կառույցի հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանք կազմված են միայն մեկ, այն էլ հիմնական ձևույթներից, ինչպես, օրինակ՝ հայր, մայր, քույր, եղբայր, տուն, սեղան, հաց, մարդ, բծիշկ, մեծ, փոքր, աբազ, դանդաղ, մեկ, հինգ, տասր, ես, դու, նա, երգել, պարել, խաղալ, նանապարհել, ինստիտուտ, ֆակուլտետ, օպերա, բալետ, տրամվայ, տրակտոր և այլն:

ա) Ածանցավոր բառերը կազմված են մեկ հիմնական (արմատական) և մեկ կամ ավելի երկրորդական բառակազմական ձևույթներից. անտուն—ան (երկրորդական բառակազմական)+ տուն (հիմնական ձևույթ), համալսարան—համ+ (ա) (երկրորդական բառակազմ.) + լս (հիմնական) + արան (երկրորդական բառակազմ.), անբափանցելիություն—ան (երկրորդական բառակազմ.) + քափանց (հիմնական) + էլի (երկրորդական բառակազմ.) + ություն (երկրորդական բառակազմ.):

բ) Բարդ բառերը կազմված են երկու և ավելի հիմնական (արմատական) ձևույթներից, հոդակապավոր բարդությունները նաև՝ քերականական մեկ և ավելի ձևույթներից, ինչպես, օրինակ՝ ջրհոր-

ջր-հոր, գրասեղան—գր-ա-սեղան, հեռախոս—հեռ-ա-խոս, բնաջնջել—բն-ա-ջնջ-ել, անդամահատել—անդամ-ա-հատ(ել), հոր-կայր—հոր-եղբայր (երկու հիմնական ձևույթներից), հեռագրայուն—հեռ-ա-գր-ա-սյուն, էլեկտրատրանսպորտ—էլեկտր-ա-տր-ա-գիր (երեք հիմնական ձևույթներից), էքսիլանտ—էքսիլ-անտ-ա-ջր-ա-ծին, էլեկտրագազանակցել—էլեկտր-ա-գազ-ա-եռ-ա-կց(ել) (չորս հիմնական ձևույթներից):

գ) Բարդածանցավոր բառերի կառույցի առանձնահատկությունն այն է, որ նրանք կազմված են երկու և ավելի հիմնական (արմատական) և առնվազն մեկ և ավելի երկրորդական բառակազմական ձևույթներից. ինչպես, օրինակ՝ նախադասարկույուն—նախապարհ (հիմնական) + ա (քերականական, երկրորդական ձևույթ) + զրկ (հիմնական) + ություն (երկրորդական բառակազմական ձևույթ), անմարտունակություն—ան (բառակազմական երկրորդական) + մարտ (հիմնական) + ունակ (հիմնական ձևույթ) + ություն (երկրորդական բառակազմական ձևույթ) և այլն:

Բնրվող օրինակներում տարրալուծման շնորհիվ կատարվում է բառերի բառակազմական-զծային վերլուծություն, այսինքն՝ բառերը տարրալուծվում են ըստ իրենց ձևույթային բաղադրիչների՝ ժամանակակից հայերենի լեզվաբանականությամբ:

Հիմքերի տիպերը: Հայերենի բառային կազմի մեջ մասնող բուն բառերը ըստ իրենց մեջ պարունակած ձևույթների՝ բաժանվում են երկու տիպերի՝ պարզ (ոչ բաղադրյալ) և բաղադրյալ հիմքերի:

1) Պարզ (ոչ բաղադրյալ) են կոչվում այն հիմքերը, որոնք ժամանակակից լեզվաբանականությամբ բաղկացած են մեկ անբաժան մասից՝ արմատից: Մեկ պարզ հիմքից են կազմված հայերեն բուն պարզ կամ արմատական բառերը: Այդ կարգի բառերի հիմքերը համընկնում (նույնանում) են իրենց համապատասխան արմատներին, դրանք այնպիսի բառեր են, որոնցում հնարավոր չէ առանձնացնել ածանցային կամ այլ բաղադրիչ տարրեր:

2) Բաղադրյալ հիմքերը ժամանակակից լեզվաբանականությամբ բաղկացած են մեկից ավելի ձևույթներից: Դրանք ածանցավոր, բարդ և բարդածանցավոր բառերն են, որոնց մեջ պարտադիր է առնվազն մեկ և ապա՝ մեկից ավելի պարզ հիմքի (արմատի) առկայությունը, ինչպես նաև արմատից և վերջավորությունից կազմված հիմքերը. օր.՝ խոսելացավ:

Բառակազմական վերլուծության նպատակը լեզվի զարգացման արդի փուլում բառի կառուցվածքի բացահայտումն է: Այդ նշանակում է, որ բառի ըստ բաղադրիչների տարրալուծումը կատարվում է լեզվի զարգացման արդի փուլում գործող, նրա ժամանակակից միճակն արտահայտող օրինակաբանություններով, հայտնի լեզվի արդի փուլն արտահայտող լեզվական ըմբռնողություններ:

Բառակազմական վերլուծության կարող են ենթարկվել ժամանակակից հայտնի լեզվի այն բոլոր բառերը, որոնք արդի լեզվական ըմբռնողություններ գիտակցվում են իբրև բաղադրություններ՝ ածանցավոր, բարդ, բարդածանցավոր բառերը:

Այս դեպքում բաղադրյալ բառը տարրալուծվում է ըստ բաղադրիչների՝ բառերի կամ բառարմատների՝ պարզ հիմքերի և ածանցների, կատարվում է բաղադրիչների գծային վերլուծություն: Այսպես՝ դժգոհ—դժ-գոհ, դժգոհություն—դժ-ԳՈՂ-ություն, անտուն—ան-ՏՈՒՆ, անտնություն—ան-ՏՆ-ություն, խորովածանոց (տՈՐՈՎ-ած)-անոց, Էնթանտակարգ—ենթա-(հաւ(ա)-ԿՍՐԳ), բազմյուսական—բազ-ՉՏՈՒՍ-ական, գերաբազմություն—գեր-աբա(ա)-ԴԲ-ություն, աբադաբաբանական—աբա(ա)-ԳՍԱ-աբաբան-ական տիեզերանավ—ՏԻԵԶԵՐ-ա-ՆԱՎ, սրտայրուխ—ՍՐՏ-ա-ՔՈՒԽ, կավածեփ—ԿԱՎ-ա-ՄԵՓ, հեռագրասյուն—ՀԵՌ-ա-ԳՐ-ա-ՍՅՈՒՆ, էլեկտրաբազմիչ—էլեկՏՐ-ա-ՍՐՏ-ա-ԳԻՐ, հարեղարյւ—ՀՈՐ-եղՐԱՅՐ, տանտիկին—ՏԱՆ-ՏԻԿԻՆ, Բեռնդի—ՔԵՆ-ՈՐԳԻ, Էջմիածին—ԷՋՄԻ-ա-ՄԻՆ, այսօր—ԱՅՍ-ՕՐ, ինքնագործունեություն—ԻՆՔՆ-ա-ԳՈՐԾ-ուն-ե-ություն (ե < յա, գործունյա), Բրգիմանկարիչ—ԲՐԳԻՄ-ա-ՆԿԱՐ-իչ, տիեզերագնացություն—ՏԻԵԶԵՐ-ա-ԳՆԱՅ-ություն, կատակերգություն—ԿԱՏԱԿ-երԳ-ություն, հեռուստակառավարում—ՀԵՌ-աւտ-ա-ԿԱՌ-ա-ՎԱՐ-ում և այլն:

ԲԱՌԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ-ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ ԲԱՆԱԶԵՎԸ

Հայերեն յուրաքանչյուր բաղադրյալ բառ իր ձևային բաղադրիչների համաձայն կարող է բանաձևվել: Այդ բանաձևը արտահայտում է, մի կողմից, բառի կառուցվածքը լեզվի զարգացման արդի փուլում, մյուս կողմից, տարբերակելով հիմնական (բառացմատ կամ պարզ հիմք) և երկրորդական (բառակազմական) ձևայինները (ածանցները), տալիս է նաև դրանց բառակազմական կապերն ու հարաբերությունները: Ինչպես՝ ան(տուն), [դժ(գոհ)]-

ություն, [ան(հանդուրժ)-ող]-ական]-ություն, {ան[(տն)(տես)-վար]}-ություն, [(նալ)ա(գն-աց)]-ություն, [անդր(շիրիմ)]-յան, նախա {[(գար(-ոց))-ական]}, {[(հեռ)-ուստ]-ա-(տես)}-ություն, [ան[(մարդ)ի]-այն]-ություն, (մեծ)ա(տուն), [(ողջ)(երգ)]-ություն, {[(գին)-վոր]ական}-ություն, նախա{[(գոր)-ա-(կոչ)]-ային}, {[(փոխ)(անց)-ում]}ա[(մբջ)ում], { (օղ)ա{[(լուս)-ա-(նրկար)]}-ություն}, (քաղաք)-ա-(մայր), [(ամ)-ա-(նոր)]-յա, ան-[(չր)-ա-(թափ)(անց)]-ելի}-ություն, [(լուս)(անց)]ա[(վերն)ա(գիր)], (լուս)-ա-[(վիմ)ա(գր)]ա(տուն)}, (կինո){[(լուս)ա-(նկար)ա(հան)-ում]}, (կինո)(ցուց)-ա-(ղթ)-ա-(հերթ):

Հայերեն ածանցավոր, բարդ և բարդածանցավոր բառերի կառուցվածքային քննությունը ցույց է տալիս, որ նրանց կազմությունը միօրինակ չէ: Որոշ բաղադրություններ կազմված են բաղադրիչների՝ հիմնական և երկրորդական բառակազմական ձևայինների անմիջական միացումով: Ինչպես՝ անտուն, հանդուրժող, Բազմա-ցի, գյուղացի, դժգոհ, հեռագիր, լրագիր, անտեսվար և այլն:

Հիշյալ բաղադրությունները կազմված են կա՛մ երկրորդական բառակազմական և հիմնական (արմատական) ձևայիններով, կա՛մ միայն հիմնական (արմատական) ձևայինների անմիջական կցումով: Ինչպես ան-տուն, դժ-գոհ, հանդուրժ-ող, Բազմ-ացի, գյուղ-ացի, հեռ-ա-գիր, լր-ա-գիր, ան-տես-վար:

Այս բաղադրությունները կարող են արդեն նոր բաղադրությունների հիմք ծառայել: Այդ դեպքում արդեն վերահիշյալ բաղադրությունները կդառնան «նախատիպ» հիմքեր իրենցով կազմվող բա՛ղադրությունների՝ համար: Ինչպես, օրինակ՝ անտուն-(անտն)-ություն, դժգոհ-(դժգոհ)-ություն, ան-(հանդուրժող)-ություն, (Բազմ-ացի)-ություն, (գյուղացի)-ություն, (հեռագր)-ա-ություն, ան-(տեսվար)-ություն և այլն<sup>2</sup>:

Այսպիսով, հայերեն բաղադրությունների (ածանցավոր, բարդ և բարդածանցավոր բառերի) ձևային և բառակազմական կազմապարհները, հետևաբար և նրանց բանաձևերը տարբերվում են իրարից: Ձևային կազմապարհը և բանաձևը արտահայտում են բաղադրյալ բառի սոսկ ձևային կազմը, բառակազմական կազմապարհը և բանաձևը՝ բաղադրյալ բառի իրական կազմության պատկերը:

<sup>2</sup> Ս. Փալախյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

Բառի ձևույթային և բառակազմական վերլուծության հիմքում ընկած է ժամանակակից լեզվական ըմբռնողությունը, այսինքն՝ բառը տարրալուծվում է լեզվի ժամանակակից փուլում գործող օրինակափուլությունների համաձայն, և ըստ այդմ որոշվում բառի բաղադրակազմը: Ժամանակակից լեզվի ըմբռնողությամբ իմաստի և ձևի (հնչյունական կազմի) տեսակետից այլևս անբաժան շատ բառեր կամ բառերի բաղադրիչներ ստուգաբանական վերլուծմամբ արդեն կարող են տարրալուծվել իմաստային բաղադրիչների (ձևվույթների): Տիեզերք, տիկին, օրհորդ, մասին բառերը ժամանակակից լեզվական ըմբռնողությամբ և օրինակափուլություններով պարզ, արմատական բառեր են, մինչդեռ դրանց ստուգաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք բաղադրյալ են, կազմը՝ ված՝ մեկից ավելի ձևույթներից. տիեզերք—տի-եզեր-ք, որտեղ տի ձևույթն ունի մեծ իմաստ, ինչպես տիկին բառի մեջ՝ տի-կին, տեք բառի մեջ՝ տի-աչք. եզերք բաղադրիչը ստուգաբանորեն կազմը՝ ված է եզեր-ք ձևույթներից, ք-ն իբրև գրաբարի հոգնակիի մասնիկ՝ երկրորդական ձևույթ, եզեր բաղադրիչը եզր բառի գրաբարյան թեքված ձև է: Մասին բառը մասն պարզ հիմքի կամ արմատի, գրաբարյան տրական հոլովի ձևն է. մշուս բառը կազմված է մի-ևս բաղադրիչներից: Օրհորդ բառը ստուգաբանորեն բաղադրված է օրի-որդ արմատական ձևույթներից, բառացի նշանակում է օրի(իշխան)-որդ(որդի)-իշխանի որդի: Կամ՝ հմուտ, հզոր, հլու, հ-մուտ, հ-զոր, հ-լու հնում բարդ բառեր են եղել. հ<հու ձևույթն ունեցել է ըլավ՝ իմաստը:

Այսպիսով, բառի ստուգաբանական վերլուծման նպատակը նրա անցյալ վիճակի, պատմական դարգացման, նախնական կառուցվածքի և բառակազմական կապերի բացահայտումն է, երբ ուղղվում՝ բացահայտվում է ժամանակակից լեզվական ըմբռնողությամբ անհասկանալի կամ չբացատրվող բառի կամ նրա բաղադրիչ տարրերի կազմությունն ու ծագումը:

Ժամանակակից հայերենում ստուգաբանական վերլուծության կարելի է ենթարկել բնիկ՝ հնդեվրոպական բառերը, ինչպես հին, այնպես էլ նորագույն փոխառությունները, գրաբարյան և բարբառային կազմությունները:

ա) Բնիկ՝ հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն բառեր. ազագիլ (չորանալ) > հնդ. նախալեզվի \*ազ արմատի կրկնությամբ. ամբողջ > ամբողջ (ամբ, ըմբ, > հնդեվրոպ. նախալեզվի \*bhd — երկուսն էլ). ամուսին ամ (համ, կից, միասին) + ուս (հնիս.

սկ—վարժել, սովորել)— Ին ածանց. անդունդ > ան+դունդ (<նատակ>, որ առանձին չի ավանդված). առած>ԱՌ (առնուլ)+ ԱՄ ածանց, առակ>առ (նախդիր)+ակ(ն) (աչք). առասպել առ (նախդիր) + սպել (հնիս. spel—խոսել, պատմել) և այլն:

բ) Հին գրաբարյան փոխառություններ. ապահարգան < իրանյան, ապա— + harəz (արձակել, ձգել, թողնել). ասպտակ, ասպրատակել < իրանյան, պահավերեն ասպ(ձի)+տակ (tak—վազել) բառերից. Ալիու(իա)<երբայեցերեն՝ սգովեցեք, փառաբանեցեք սասծուն>՝:

զ) Գրաբարյան հոլովման և խոնարհման ձևերով, նախդիրներով կազմված՝ այժմ բարացած ձևեր, ինչպես նաև բարբառային և այլ կազմություններ.

1) Գրաբարյան տարբեր հոլովաձևերով կազմված՝ այսուհետև, այնուհետև, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, ձերբակալել, օրեցօր, տարեցտարի և այլն:

2) Գրաբարի բայաձևերով կազմված՝ ինչևիցե, որևիցե, տերուզումյա, սառուցյալ, հանգուցյալ, ննջեցյալ, կեցցի, հասցե և այլն:

3) Գրաբարի նախդիրներով կազմված. ինչպես՝ գօր>գօր, հօգուա>հ(ի)-օգուա, ցոնեսություն>ցօնեսություն, ինքնըստինքյան>ինքն-ըստ-ինքյան և այլն:

4) Բարբառային և այլ կազմություններ. ինչպես՝ փոխփոխ, տակետակ. ամեն>ամ(ամբողջ)+են ածանց. ամիլ>ամ(տարի)+իլ ածանց, այժմ>այս ժամ. այգի>այգ(խաղող)—ի ածանց, առափել (ուզարկել)>առ(նախդիր)+ափ (ոտք) և այլն:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԻՐԻՆՎ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՐ

Լեզվի դարգացման բոլոր փուլերում բառապաշարի շրջման հիմնական աղբյուրը բառակազմական օրենքներով նոր բառերի ստեղծումն է: Ժամանակակից հայերենը նոր բառերի կերտման եղանակները հիմնականում ժառանգել է հայոց լեզվի դարգացման նախորդ փուլերից: Նախագրաբարյան շրջանին հատուկ է եղել արմատատեղծումը և արմատի հնչյունափոխությամբ կամ աճականի՝ հնչյունի հավելումով նոր բառերի ստաշացումը: Գրաբարյան շրջանից ժառանգած բառակազմական միջոցներն են՝ բառաբարդացումն ու ածանցումը: Նոր բառերի ստեղծման նոր եղանակ է նորագույն հապավումը:

2. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-ին, Երևան, 1968:

Այսպիսով, հայերենի բոլոր դրսևորումներին հատուկ են եղել քառաստեղծման վերևում նշված բոլոր միջոցները, որոնցից այժմ կենսունակ և գործող եղանակներն են բառաբարդացումն ու ածանցումը, ինչպես և հապավումը:

Արմատասեղծումն իբրև հայոց լեզվի զարգացման հնագույն շրջանի երևույթ: Արմատների ստեղծումը հատուկ է եղել մարդկության պատմության հնագույն շրջանին և, բացառությամբ բնաձայնական արմատների, դժվար է սպառիչ բացատրություն գտնել նրանց օրինաչափությունների վերաբերյալ: Հեռավոր անցյալում մարդկանց հաղորդակցմանը ծառայել են սակավաթիվ արմատներ՝ իրենց համապատասխան իմաստներով: Այսպիսով, պարզ է դառնում, որ արմատները ստեղծվել են, իսկ թե ստուգապես երբ և ինչպես կամ ինչ եղանակով, ոչ ոք վճռական և վերջնական պատասխան տալ չի կարող:

Միաժամանակ հայտնի է, որ այժմ, քաղաքակրթության ներկա մակարդակում, բացառված է նոր արմատ (արմատական բառ) ստեղծելու հնարավորությունը, եթե, իհարկե, հաշվի չառնենք վերջին հարյուրամյակում արհեստականորեն ստեղծված մի քանի արմատների երևան գալը, ինչպես՝ զագ բառը, որը, սակայն, հատուկ սովորական հասարակի վերածման օրինակ է: Վերջին դարում հայերենում պատահական արմատաստեղծման եզակի օրինակ է համարվում սուրբ բառը:

Նոր բառերի կազմությունը ինչպես մյուս լեզուներում, այնպես էլ հայերենում կատարվում է արդեն առկա արմատների (արմատական ձևությունների կամ արմատական բառերի) հիման վրա:

Հայերենի հնագույն շրջանին, ավելի ճիշտ՝ նախազրաբարյան հայերենին հատուկ են եղել նույն արմատի ձայնավորների փոփոխմամբ (ձայնդարձով) կամ արմատի հնչյունական հավելումով՝ աճականով նոր բառերի ստեղծումը: Բառաստեղծման այդ եղանակը հայոց լեզվի զարգացման գրաբարյան փուլից սկսած այլևս գործուն չէ:

## ՁԱՅՆԱՐՁԸ ԵՎ ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Բառարմատի ձայնավորի կանոնավոր փոփոխումը կոչվում է ձայնդարձ<sup>4</sup>, ձայնդարձը հատուկ է եղել հնդեվրոպական հիմք-լեզվին: Հնդեվրոպական հիմք-լեզվի (կամ նախալեզվի) ձայնդարձի ամենասովորական ձևն ունի հետևյալ բանաձևը: Մի արմատ, որը

<sup>4</sup> 2. Անտան, կիսատար քերականություն հայոց լեզվի, հատոր 3-րդ, Երևան, 1957, էջ 37—57:

բաղկացած է p և t բաղաձայններից, ստանում է երեք ձև՝ pet, pot ըլ՝ ձայնավորների հետևյալ հերթագայությունը՝ e, o, —(զրո), առաջինը կոչվում է e կամ բարձր աստիճանի, երկրորդը՝ o կամ միջին աստիճանի և երրորդը՝ զրո կամ ցածր աստիճանի (ձայնավորից զուրկ) ձայնդարձ:

Հայերենում մնացել են միայն հնդեվրոպական նախալեզվի ձայնդարձի հետքերը, որոնք դիտվում են իբրև մնացուկային երեվույթներ:

Հնդեվրոպական հիմք-լեզվի համեմատությամբ հայերենում ձայնդարձով պահպանված արմատները բաժանվում են երեք խմբի.

ա) Առաջին խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնցում առկա է ձայնդարձի միայն մեկ աստիճանը, առանց հաշվի առնելու նրա բարձր, միջին կամ ստորին լինելը: Օրինակ՝ աղ, աղտ, աղծ < հնիս. sâld, հուն. ἄλο γα. sal, գոթ. salt. բլուր, բլուր, բոզ (բողբոջ, բոզկ) հնիս. bhel, bhōl, bhol ձևերից: Որոշ դեպքերում հնիս. o-ին հայերենում համապատասխանում է երկար օ (ō), որից էլ՝ ու:

բ) Երկրորդ խմբի մեջ մտնում են հայերեն այն արմատները, որոնք ներկայանում են ձայնդարձի երկու աստիճանով: Այս խումբըն իր հերթին բաժանվում է երեք կարգի:

1) Ստորին և բարձր ձայնդարձով ներկայացող բառարմատներ. բաճ, բիր (< հնիս. bher), բառնալ, բառն (բարձր), բերն (< հնիս. bhrg'h, bherg'h ձևերից), դեղ, դեղին, դեղբ, դեղն, դեղ-ձան, դեղն, դալար, դալակն, դաղձն (< հնիս. dhel, dh), ծիծառն, ծիծեռնակ (< հնիս. g'ar արմատից):

2) Ստորին և միջին ձայնդարձով ներկայացող բառարմատներ. գաղչ, գուլ (հնիս. vel արմատի միջին vol և ստորին v) ձայնդարձներից), գաղել, գաղտ, գաղտուկ, գաղտնի, գող, գողտուկ (< հնիս. vol և v. ձևերից), խառել, խառոյկ, խառչել, խառով (< հնիս. ger), փայլ, փաղփաղիլ, փողփողել (< հնիս. sphel, phel):

3) Միջին և բարձր ձայնդարձով ներկայացող բառարմատներ. զուրկ, զիւրկ (զ-նախադրով, ē և օ ձայնդարձ), ծիծ, ծուծ, ծծել, կեր, կոր, կակորդ, որկոր (< հնիս. g'er արմատից), կիթ, կութ, կթել, կից, կուց, կցել, կառար, կառարել, կաուր, կտրել, կտիր (հատուկտիր), կտ, կեռ և այլն:

գ) Երրորդ խմբի մեջ մտնում են հայերեն այն արմատները, որոնց մեջ առկա են ձայնդարձի բոլոր երեք աստիճանները. խայթել, խեթել, խեթ, խիթ (միսիբար), խաթել, խուր (խթել), խայթ, խօթ (< հնիս. khait (gai) խաչ, խոչ, խեչուկ (խեչ-խեչ). հեղուլ, զեղուլ, հեղեղ, ողողել, հալել (< հնիս. pel, pol, pl). հեախ, յեա,

ետ, ոսն, յառակ «ոսի» (<հնիս. pedo, pod, pæd). ֆերել, ֆորել, ֆարբ, ֆերթել, ֆերծուլ, ֆերթել (< հնիս. sger, ger):

Չայնդարձի օրենքով նոր բառերի (բառարմատների) ստեղծումը հատուկ է եղել նախազրաբարյան հայերենին, հայերենի զարգացման գրաբարյան շրջանում այդ օրենքն արդեն չէր գործում:

### ԱՃԱԿԱՆՐ ՀԱՅԵՐԵՆՈՒԾ

Աճականը<sup>5</sup> հայերենում պարզ հիմքին կամ արմատին (հիմնականում հնդեվրոպական հիմք-լեզվի) որևէ հնչյունի (ձայնավոր, բաղաձայն, երկբարբառ) հավելում է, որը զգալի կերպով չի փոխում կամ մի նոր երանգ չի տալիս տվյալ արմատի իմաստին:

Հայերենի գեղծալ, գեղծել (սաստիկ փափագել), գեղծ (սաստիկ փափագ), հնիս. wel արմատի աճումն է՝ աճականով:

Աճականները իրենց բնույթով մոտենում են ածանցների, այն տարբերությամբ, որ առաջինները և՛ բայակերտ են, և՛ գոյականակերտ:

Նախազրաբարյան հայերենում ձայնզարձի օրենքով ձևափոխված պարզ արմատներով նոր բառեր են կազմվել նաև աճականների շնորհիվ: Այդ շրջանի հայերենի համար, այսպիսով, ձայնզարձի հետ բառակաղձմական (բառաստեղծման) արժեք են ունեցել նաև աճականները, որոնք հիմք են դարձել բազմաթիվ նոր բառերի: Այսպես, օրինակ՝ ագանիմ (գիշերել) բառի արմատն է ագ, որից թ աճականով ստեղծվել է օթ և կազմվել օթևան, օթել, բացօթեագ բառերը. արդ (ձև) ծաղում (հնիս. ar պարզական արմատից. դ աճականով նույն արմատից ստեղծվել են՝ զարդ, յարդարել, արդար, արդ (այժմ), արդի (ժամանակակից) բառերը. նույն արմատից մ աճականով՝ յարմար (յ<ի) նախորդով). հնիս. bhōl արմատից հայերենն ունի բող (բողբոջ) և կ—աճականով՝ բողկ բառերը. բուլ, փուլ, փչել բառերն առաջացել են հնիս. p̄hu արմատից՝ ֆ և շ աճականներով: նույն արմատն ունեն գալ և գաղջ բառերը, զան (ծեծ) և ջինջ (ջնջել) բառերը, վերջին զույգերի ջ աճականով. գելուլ (ոլորել): Գալար, գիլ, գլորեն, գիդ (գալթագել), գաղձն-գեղձ (պատատուկ բույսը) արմատներն ու բառերը նույն հնիս. vēl, vel, v̄l արմատից են ծագում, ձ աճականով: Գող, գաղել (թաքցնել) և գաղտ (գաղտուկ), գողտ (գողտուկ) ընդհանուր արմատ ունեցող բառերի մեջ վերջին զույգի տ-ն աճական է: Դեղ (խոտ, դարման), դեղին արմատից են դեղբ, դեղձ, դեղձան, դեղ-

ձրն, դաղձն բառերը, կազմված՝ համապատասխանաբար ք և ձ աճականներով: Մաղբ և ծիծաղ նույնարմատ բառերում ծաղրի ր-ն աճական է: Շուրթն և շուրջ բառերի արմատն է շուտ, ք-ն և ջ-ն աճականներ են: Սերել, սեռ, սերմն ընդհանուր արմատ ունեցող բառերի վերջին սերմն-ի Մ-ն աճական է: Փեղկել, փերթ բառերը ծագել են հնիս. spher արմատից կ և թ աճականներով. ֆերել, ֆորել բառերի Քեթ, ՔՈՐ պարզ արմատները ք, ք, ծ աճականներով ստեղծել են ֆարբ (օծ), ֆերթել, ֆերթել, ֆերծուլ (փերծել) բառերը և այլն:

Աճականների տարբերակումը հայերենում: Ըստ Հ. Աճառյանի աճականները հայերենում հնարավոր է տարբերակել հետևյալ միջոցներով.

ա) Երբ հնդեվրոպական ժառանգ լեզուների մեջ նույն արմատներն իրարից տարբերվում են վերջին ավելորդ հնչյունով, որը և աճական է, օր.՝ հայերեն լայծ, որից՝ լուծել, լուծանել, իր համապարհներն ունի՝ հունարեն՝ λῶω, լատիներեն՝ luō, հեռաբար հայերենի Մ-ն աճական է: Հայերեն քերթ բառի վերջին Թ-ն աճական է, որովհետև հնդեվրոպական բույր լեզուների համապատասխան արմատներում այն չկա. ինչպես՝ հուն. ερόν, լատ. accipiter, գերմ. Feder, սանսկ. pátra և այլն:

բ) Երբ հայերենում նույն արմատները իրարից տարբերվում են արմատավերջի մեկ կամ ավելի հնչյուններով, որոնք պետք է համարվեն աճականներ. օրինակ՝ հայերեն լալիբ և լալիբ բառերում ծ և շ աճականներ են: Քերթ բառի արմատական տարբերակների համեմատությունից պարզվում է (թերի, թերես, թիս, թիթեռ, թեր (տերև)), որ ք-ն աճական է:

գ) Հնդեվրոպական ժառանգ լեզուներում կան շատ բառեր, որոնք ծագել են նույն արմատից, բայց այդ բառերը տարբերվում են իրարից զանազան հավելյալ հնչյուններով, որոնք և աճականներ են: Ինչպես, օրինակ՝ հայերեն լուլ բառը գրսեորում է երեք աճական (ո, ր, ս)՝ լուռ, լուր, լուս (լսել), արմատն է լու:

Շատ բառեր ունեն մեկից ավելի աճականներ, ինչպես՝ մունջ—ն և ջ, ստեղծել՝ դ և ծ, նևաղ՝ ր և դ, սառյգ՝ տ և գ, սուրբ՝ րբ և այլն:

### ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

Ժամանակակից հայերենում բառերն ըստ կազմության լինում են՝ պարզ և բազադրյալ:

ա) Պարզ բառեր: Պարզ են կոչվում բոլոր այն բառերը, որոնք

<sup>5</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխատ., էջ 60—68:

ժամանակակից լեզվական ըմբռնողությամբ կազմված են միայն մեկ հիմնական ձևությից: Դրանք կոչվում են նաև արմատական-ինչպես, օրինակ՝ հայր, մայր, ամուսին, բույր, եղբայր, տուն, հաց, ցարեն, սեղան, գազան, բծիշկ, օպերա, տրամվայ, տրոլեյբուս, լավ, վատ, մեծ, վառ, դանդաղ, խաղաղ, առաջ, ետ, մասին, հագիլ, հլու, տիկին և այլն:

Հիշյալ բառերը պարզ են համարվում, որովհետև կազմված են մեկ հիմնական ձևությից (կամ արմատից). ինչպես՝ հայր, մայր, բույր, եղբայր, բծիշկ և այլն, կամ էլ՝ ժամանակակից լեզվական ըմբռնողությամբ գիտակցվում են իբրև մեկ հիմնական ձևությ (կամ արմատ), թեև պարզ համարվող բառը ստուգաբանորեն մալրեհի կամ փոխատու լեզվում կարող է բաղադրյալ լինել: ինչպես, օրինակ՝ փոխառյալ՝ տրամվայ, տրոլեյբուս, օպերա և այլն, կամ՝ բնիկ՝ հլու, տիկին և այլն:

Պարզ կամ արմատական բառերը ածանցման և բառաբարդման միջոցով հիմք են ծառայում նոր բառերի կազմության համար:

բ) Բաղադրյալ բառեր: Բաղադրյալ բառերն իրենց հերթին ստորաբաժանվում են՝ բառաձևերի (վերջավորություններով կազմված, օր.՝ գրել, տուն, տներ), ածանցավոր, բարդ և բարդ ածանցավոր բառերի:

Բաղադրյալ բառերը կազմվում են վերջավորությունների հավելման, ածանցման և բառաբարդացման միջոցով:

### + ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր կամ ավելի հիմնական ձևությների (արմատների) կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բաղադրությունները, որոնք ունեն մեկ ընդհանուր շեշտ, կոչվում են բարդություններ կամ բարդ բառեր:

Ըստ ձևաբանական-շարահյուսական կառույցի բարդությունները լինում են՝ վերլուծական և համադրական:

### ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս կարգի բարդությունները կազմվում են վերլուծական եղանակով, բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, ունեն մեկ ընդհանուր հիմնական շեշտ, գիտակցվում են իբրև բառային մեկ միավոր: Վերլուծական բարդությունների մեջ են մտնում հարադրություններ և կրկնավորներ:

Ա. Հարադրական բարդ բառեր կամ հարադրական բարդություններ

Վերլուծական եղանակով կազմվող այն բարդությունները, որոնց կազմի մեջ մտնող երկու և ավելի բառեր առանց միաձուլվելու, հանդես գալով հարադրաբար արտահայտում են մեկ բառի իմաստ, կոչվում են հարադրական բարդություններ: Հարադրական բարդությունների բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, իրարից բաժանվում են արտասանական զգալի դադարով՝ պահպանում են իրենց ձևական անկախությունը, որ գրավոր խոսքում արտահայտվում է բաղադրիչ-բառերի կա՛մ անջատ, կա՛մ էլ միացման զծիկով գրությամբ: (Օրինակ՝ ձեռք տալ, ներս տանել, բառ ու բան, մեծ-մեծ, խումբ-խումբ, մեռնել-պրծնել և այլն):

Առոտրական, ոչ դարձվածքային հարադրական բարդությունների բաղադրիչ բառերը պահպանում են իրենց բառային իմաստները. ինչպես՝ հազար ու մեկ, երկու-երեք, բառ ու բան, կես անել, կոլ տալ, կյտ անել, հագիլ թե, հառ և նվառ և այլն):

Հարձվածքներ ներկայացնող հարադրական բարդությունների բաղադրիչները, ընդհակառակը, կորցնում են իրենց բառային իմաստները, և դարձվածքի իմաստը չի բխում բաղադրիչների բառային իմաստներից. ինչպես՝ աչք տալ, աչք գցել, աչքով աչք չուներեալ, գլուխ գալ, գլխի ընկնել, աչք ծակ, ձեռք բաց, ձեռք թեթև, խելի տուպակ, ուրտի ականջում բնած և այլն):

Որպես հարադրություն հայերենում հանդես են գալիս ամեն տիպի բառերի կաշուն կապակցությունները, կազմված՝ ինչպես լրացում լրացյալից (աչքը մտնել, խելի տուպակ), համադաս անդամներից (գիշեր ու ցերեկ, գիշեր-ցերեկ, հիստ ու կաց, նստել վեր կենալ), այնպես էլ միևնույն բառի կրկնությունից (մեկ առ մեկ, մեկ-մեկ, երես առ երես):

Հարադրական բարդությունները ստորաբաժանվում են անվանական հարադրությունների և բայական հարադրությունների: >

ա) Անվանական հարադրություններ: Անվանական հարադրական բարդությունները կազմվում են գոյական, ածական, մակբայ, թվական, շողկապ, եղանակավորող բառ խոսքի մասերի բառերի հարադրությամբ. ինչպես՝ գիշեր-ցերեկ, օր ու գիշեր, առ և տուր և այլն: >

1) Հայականական հարադրություն: կազմվում են գոյականների հարադրությամբ, շողկապերով կամ առանց շողկապների. օր ու գիշեր, առ ու զոռ, կեր ու խումբ, տուն ու տեղ, վառ ու ցանկ, նյուն-ձմեռ, վագր-նետառան և այլն):

2) Ածականական հարադրություն: կազմվում են ածականների հարադրությամբ. ծանր ու թեթև, լուռ ու մունջ, լավ ու վատ, բարակ-մարակ, լոխ-մնջիկ, կարմիր-կանաչ, թաց ու չոր և այլն: >



Այս կարգի հարադրություններից որոշ մասի բաղադրիչ բառերն իմաստային որոշ հարաբերակցության մեջ են գտնվում: Դրանց մեջ առկա է հականշային որոշակի հարաբերություն:

3) Ասիերայական հառադրություն: Կազմվում են արմատական մակբայների հարադրությամբ, երբեմն ու, և շաղկապներով, բաղադրիչ-բառերի բառական իմաստների հականշային հարաբերությամբ. ետ ու առաջ, դես ու դեն, վեր ու վար, այստեղ-այնտեղ և այլն: >

4) Լճվականական հառադրություն: Կազմվում են իրար հաջորդող թվականների հարադրությամբ. երեսուն-հազար, երկու-երեք, չորս-հինգ, տասը-հասն, հազար ու մեկ, ինը հարյուր յոթանասներեք և այլն: >

5) Հաղկապներով և եղանակավորող բառերով կազմված հառադրություններ. ապա թե ոչ, կամ թե, միայն թե, քան թե, կարծես թե, առես թե, քանի որ, մանավանդ որ, թեկուզ և, իբրև թե, ինչ-որ, ինչպես որ, քանի դեռ և այլն: >

բ) Բնայական հառադրություններ: Հարադրական բարդությունների զգալի մասը կազմում են հարադրական բայերը<sup>6</sup>: Հարադրական բայերը կազմվում են մեկ բայից և հարադիր բառից կամ երկու բայերից, ունեն բառային առանձին իմաստ և մեկ ընդհանուր շեշտ: Ինչպես, օրինակ՝ գործ անել (գործել, աշխատել), լաց լինել (լալ), բաց լինել (բացվել), վազ տալ (վազել), պար գալ (պարել), թաց անել (թացացնել) և այլն: >

Հարադրական բայերը հիմնականում մեկ բառի արժեք ունեն և մասամբ (առանց իմաստի աղավաղման) կարող են փոխարինվել համապատասխան միաբառ, նույնարմատ բայական համարժեքով. ինչպես՝ գրույց անել—գրուցել, պար գալ—պարել, վազ տալ—վազել: Որոշ դեպքերում հարադրական բայերի և նրանց միաբառ զուգահեռների իմաստները կարող են նաև շամբընկնել. ինչպես՝ կանգ առնել—կանգնել, թափ տալ—թափել, ման տալ—մանել, քաշ տալ—քաշել և այլն:

Դարձվածքային հարադրական բայերի բառական իմաստները քանի որ չեն բխում բաղադրիչների իմաստներից, հետևաբար և շունեն նույնարմատ մի բառ համադրներ. ինչպես, օրինակ՝ գլխի ընկնել—ըմբռնել, գլուխ տալ—բարեկել, աչք գցել—նայել, հավանել, ականջն ընկնել—լսել, ձեռք առնել—ծաղրել և այլն:

<sup>6</sup> Մ. Արեղյան, նշվ. աշխատ., էջ 137—138: Գ. Սևակ, նշվ. աշխատ., էջ 161—165: Ա. Արտահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Նրևան, 1962, էջ 190—208: Ա. Մուրվալյան, նշվ. աշխատ., էջ 194—215: Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Նրևան, 1966:

Հարադրական բայերը կազմվում են երկու անկախ բայերից կամ բայից և հարադրից. առաջինները կոչվում են՝ զուգադրական բայեր կամ զուգաբայական հառադրություններ, երկրորդները՝ հարադրական կամ հառադրավոր բայեր: >

Զուգադրական բայեր կամ զուգաբայական հառադրություններ:

ա) Զուգադրական բայերը կազմվում են երկու անկախ բայերից, որոնցից յուրաքանչյուրը առանձին, անկախ խոնարհվում է: > Այդ կարգի բայերի արտահայտած բառային իմաստները զգալիորեն տարբերվում են հարադրության մեջ մտնող բաղադրիչ-բայերի առանձին, ինքնուրույն գործածական իմաստից: <Օրինակ՝ գնալ—գալ, գալ—գնալ, ասել—խոսել, մեռնել—պրծնել, մեռնել—ազատվել, ֆշել—բերել, թողնել—գնալ, թողնել—փախչել, վազել—գալ, ժողովրդախոսակցական՝ երդվել—շարդվել, գերել—գերփել, ծլել—ծաղկել և այլն: >

Զուգադրական բայերի բաղադրիչները անկախաբար, միաժամանակ խոնարհվում են. ինչպես՝ գնացի—եկա, գնացիր—եկար, գրանաց—եկավ, կամ ֆշեցի—բեռեցի, ֆշեցիր—բեռեցիր, ֆշեց—բեռեց և այլն:

բ) Մեկ միաբառ բայից և մեկ հարադրավոր (հարադրական) բայից. ինչպես՝ ծակել—դուրս գալ, կտրել—դեն գցել, ձեծել—դուրս անել, խփել—ներս տանել, ջարդել—դուրս անել, համոզել—դուրս բերել, գնալ—դեմ ընկնել և այլն: Այս դեպքում էլ բաղադրիչ-բայերը խոնարհվում են անկախաբար: >

գ) Մեկ միաբառ (չեղոք կամ ներգործական) բայից և տալ բայից կազմվում է պատճառական բայ, ըստ որում խոնարհվում է միայն տալ բայը. ինչպես՝ գրել տալ (գրել տվեցի), երգել տալ (երգել տվեցի), ձեծել տալ (ձեծել տվեցի), պարել տալ, վազել տալ, հաշվել տալ, խմել տալ, բռնել տալ և այլն: >

Հառադրական կամ հառադրավոր բայեր: Այս կարգի բայերը կազմվում են որևէ հարադրով (ոչ բայական) և բայով: >

ա) Անել, լինել, դառնալ, դարձնել, գալ, բերել, կտրել, տալ և այլն վերացական իմաստ ստացած բայերով և գոյականների, ածականների, դերանունների, ձայնարկությունների կամ բնաձայնական բառերի շարահյուսական կապակցությամբ կազմվող հարադրավոր բայեր: >

1) Գոյական, ածական հարադիրով կազմվող բայեր (գոյական | բայ, ածական + բայ կաղապարներով). գիր անել, աղաչանք անել, պաղատանք անել, լաց լինել, գահ լինել, մարդ դառնալ, մարդ դարձնել, Երեսին գալ, միտքը գալ, աշխարհ բերել, գույնը տալ, կրակ կտրել, սառույց կտրել. կամ արժանի լինել, անտես անել, տևալատիվ անել, անպատիվ լինել, գանձակեց անել և այլն: > Այս

կաղապարով հարադրավոր բայերի կազմության հնարավորությունները ժամանակակից հայերենում մեծ են. դրանց մի մասը վեր է ածվում դարձվածքների:

2) Մի քանի հարադրավոր բայեր կազմվում են ինքնուրույնաբար չդորձածվող բայական հիմքերով և անել, դառնալ, լինել, տալ և այլն վերացական իմաստ ստացած բառերով. ինչպես՝ իմաց անել, լուռ լինել, իմաց տալ, բաց անել, բաց լինել, ցույց տալ, վագ տալ, բաց անել, թաց լինել, թաց դառնալ և այլն:

3) Հարադրավոր բայերի մեծ մասը կազմվում է տեղ ցույց տվող բառերով ու մակբայներով և հիմնականում շարժում ցույց տվող բայերով: Այս կարգի հարադրավոր բայերի կազմությանը մասնակցում են անել, անել, առնել, բերել, գալ, գնալ, գցել (ձգել), դնել, ելնել, ընկնել, վազել, տալ, տանել, փաշել և մի քանի այլ բայեր ու տեղ ցույց տվող առաջ, դեմ, դես, դուրս, ետ (հետ), մեջ, մոտ, ներս, շուռ, վայր, վեր, վրա, տակ, տեղ բառերը:

առաջ,— առաջն առնել, առաջ բերել, առաջ գալ, առաջ գնալ, առաջ գցել, առաջ ընկնել, առաջ տալ, առաջ տանել, առաջ փաշել և այլն.

դեմ,— դեմ անել, դեմ առնել, դեմն առնել, դեմ(ը) գալ, դեմ գրնալ, դեմ դնել, դեմ ելնել, դեմ ընկնել, դեմ վազել, դեմ տալ, դեմ տանել.

դեմ,— դեմ անել, դեմ անել, դեմ գնալ, դեմ գցել, դեմ դնել, դեմ ընկնել, դեմ թափել, դեմ տալ, դեմ տանել, դեմ փաշել, դեմ փշել.

դես,— դես անել, դես բերել, դես գալ, դես ձգել, դես փաշել, դես փշել.

դուրս,— դուրս անել, դուրս անել, դուրս բերել, դուրս գալ, դուրս գցել, դուրս ելնել, դուրս ընկնել, դուրս թափել, դուրս ձգել, դուրս վազել, դուրս տալ, դուրս տնկվել, դուրս ցրցվել, դուրս փաշել, դուրս փշել.

ետ(հետ),— ետ անել, ետ անել, ետ առնել, ետ բերել, ետ գալ, ետ գնալ, ետ գցել, ետ դարձնել, ետ ընկնել, ետ կանչել, ետ նայել, ետ տալ, ետ փաշել, ետ փշել, հետ գալ, հետ գնալ, հետ բերել, հետ նայել, հետ տալ.

մեջ,— մեջ անել, մեջ առնել, մեջ բերել, մեջ գալ, մեջ գցել, մեջ դնել, մեջ ընկնել, մեջ մտնել, մեջ տալ, մեջ փաշել.

մոտ,— մոտ անել, մոտ բերել, մոտ գալ, մոտ դնել, մոտ վազել, մոտ տանել, մոտ փաշել.

ներս,— ներս անել, ներս անել, ներս առնել, ներս բերել, ներս գալ, ներս գցել, ներս ընկնել, ներս մտնել, ներս վազել,

ներս տալ, ներս փաշել, ներս փշել.

շուռ,— շուռ անել, շուռ բերել, շուռ գալ, շուռ տալ.

վայր,— վայր բերել, վայր գալ, վայր գցել, վայր դնել, վայր ընկնել.

վեր (ներև, ցած, վար),— վեր անել, վեր անել, վեր գցել, վեր դնել, վեր ընկնել.

վեր (վերև),— վեր առնել, վեր գալ, վեր կենալ, վեր ձգել, վեր փաշել.

վրա,— վրա անել, վրա բերել, վրա գալ, վրա գցել, վրա հասնել, վրա սրժնել, վրա վազել, վրա տալ, վրա փշել.

տակ(ը),— տակը գցել, տակը դնել, տակն ընկնել, տակը փորել, տակը փաշել.

տեղ(ը),— տեղ անել, տեղ դնել, տեղ տալ, տեղը բերել, տեղը գալ, տեղը գցել, տեղը դնել, տեղն ընկնել և այլն:

4) Ի նախդիրով հարադրավոր բայեր. Ի մի բերել, Ի մի գումարել, Ի կատար անել, Ի դերև հանել, Ի սպաս դնել, Ի հայտ գալ, Ի ցույց դնել: Այս կաղապարները դրաբարի համաբանություններ կազմված ձևեր են:

Հիշյալ բաղադրիչներով կազմվում են նաև դարձվածքային հարադրական բայեր: Գրանց բաղադրիչները կորցնում են իրենց բառական իմաստները, և դարձվածքը ձևով է բերում բաղադրիչներից անկախ իմաստ. առաջ բերել, առաջ գալ, դեմ անել, դեմ առնել, դեմ ընկնել, դեմ տալ, դեմ անել, դեմ գցել, դեմ ընկնել, դեմ տալ, դուրս բերել, դուրս գալ, դուրս գրել, դուրս ընկնել, դուրս սրժնել, դուրս փաշել, ետ անել, ետ բերել, ետ դնել, մեջ անել, մեջ առնել, մեջ-մեջ անել, մեջ բերել, մեջ գցել, մեջ ընկնել, մոտ անել, մոտ-մոտ անել, մոտ լինել, ներս անել, ներս գցել և այլն:

5) Գերաբանում և բայով կազմվող հարադրավոր բայեր. իրար անցնել, իրար բերել, իրար գալ, իրար տալ, իրենով անել:

6) Ձայնարկությամբ կամ բնածայնական բառերով և բայով կազմվող հարադրավոր բայեր. ախ անել, ախ-փաշել, ախ ու վախ անել, վայ տալ, հաֆ անել, փիշտ անել և այլն:

## 2. Բաղնյուսական հարադրություններ

Հարադրական բարդությունների մի տեսակն է բաղնյուսական հարադրությունը: Առվորական հարադրությունից այն տարբերվում է նրանով, որ հարադրվող տարրերը՝ բաղադրիչները իրար նկատմամբ համազոր են և հաճախ համազուտ, շղկապվում են ու կամ

և շաղկապով: Օր.<sup>1</sup> ան ու դող, ցան ու ցիր, օր ու գիշեր, անց ու դարձ, նիստ ու կաց, առ և տուր, ցան-ցիր, գոռում-գոչում (գոչումն), թև-թիկունք, կորած-մալուրած, հագած-կապած:

Բաղճյուսական գոյական հարադրությունը հոլովվում և հոդ է առնում իբրև մեկ բառ: Հոլովվում է միայն նրա վերջին բաղադրիչը. ինչպես՝ ուղղ., հայց.<sup>2</sup> անց ու դարձ, սեռ., տրական՝ անց ու դարձի, բացառ.<sup>3</sup> անց ու դարձից, գործիակ.<sup>4</sup> անց ու դարձով, ներգոյ.<sup>5</sup> անց ու դարձում. կամ՝ անց ու դարձը, ան ու դողը, նիստ ու կացը և այլն: Բարդության ընդհանուր իմաստը հիմնականում բրտում է բաղադրիչների բառական իմաստներից: Որոշ դեպքերում բարդությունը ստանում է նաև սաստկական իմաստ:

Բաղճյուսական հարադրություններ կազմվում են հիմնականում համանիշ, նույնանիշ, ինչպես նաև իմաստով մոտ (միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող) բառերի հարադրությունից:

ա) Համանիշ, մոտ իմաստ ունեցող և նույնանիշ՝ նույն իմաստն ունեցող բառերի հարադրությամբ կազմվող բաղճյուսական հարադրություններ. ան ու սարսափ, ձայն ու ծպտում, ձայն-ծպտում, լուռ ու մունջ, լոկ-մեջիկ, ցիր ու ցան, ցիր-ցան, հալ ու մաշ, շարդ ու բուրդ, ախ ու վախ, նար-հարակ, գոռում-գոչում, հագած-կապած, զուգված-զարդարված, այրել-մրկել, քար-ապարած, բանկ ու կրակ:

Սյս կարգի բաղճյուսական հարադրություններից կազմվում են նաև հարադրական քայեր, ինչպես՝ հալ ու մաշ անել կամ լինել, շարդ ու բուրդ անել՝ լինել, ցան ու ցիր անել՝ լինել և այլն:

բ) Իմաստային որոշ ընդհանրություն ունեցող (միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող) բառերի հարադրությամբ կազմվող բաղճյուսական հարադրություններ. ինչպես՝ թև ու թիկունք, թև-թիկունք, հագած-կապած, զուգված-զարդարված, կազմ-պարտատ, ան ու դող, գունդ ու կծիկ, տեր-ապավեն, կտուր-բերդուն, թփել-մրել, այրել-մրկել, հար և նման, աշխարհ-արարած, կյանք-կենդանություն, արև-աշխարհ, ծափ-ծիծաղ, ծառ-հյուղ, հավ ու ճիվ, շենք ու շնորհք, վար ու ցանք, մարդ ու կին, անց ու դարձ, կեր ու խում, արդյ ու զարդ, խաղ ու պար, տուն ու տեղ, օր ու գիշեր և այլն: Սյս կարգի որոշ հարադրությունների բաղադրիչ-բառերը կորցնում են իրենց իմաստները, և ամբողջ հարադրությունը հաճախ ձևեր է բերում մի նոր, ընդհանրական իմաստ, ինչպես՝ հագած-կապած (զուգված), ան ու դող (սարսափ), մարդ ու կին (ամուսիններ), կեր ու խում (խնջույթ) և այլն: Որոշ բարդություններ էլ ստանում են սաստկական իմաստ. ինչպես՝ թև-թիկունք,

զուգված-զարդարված, թփել-մրել, այրել-մրկել, ծափ-ծիծաղ և այլն:

գ) Բաղճյուսական հարադրություններ են կազմում նաև այնպիսի բառեր, որոնք իրենց բաղադրիչների իմաստային հարաբերությամբ նման են արդեն հիշատակված կարգերին, հարադրվող համադաս և համազոր բառերն իրար նկատմամբ ունեն իմաստային որոշակի, երբեմն հեռավոր առնչություն, բաղադրության մեջ չեն պահպանում իրենց ինքնուրույն, անկախ իմաստները և իբրև բառական միություն ստանում են մի նոր, հաճախ՝ հավաքական իմաստ: Ինչպես, օրինակ՝ աս ու լիս (զրույց, խոսակցություն, հարցազրույց), շենք ու շնորհք, հարց ու վարձ, դուռ-դրացի, դուռ-դրկից, խաղ-խալտառակ (անել), էլ ու մուտ, էլ և մուտ, գիշեր-ցերեկ (օր), թուփ ու մուր (անպատվություն), կանաչ-կարմիր (ծիածան), ձյուն-ձմեռ, դես ու դեն (ընկնել), բաց ու խուփ (անել), կաց ու կապ (անել), քար ու քանդ (անել), վեր ու վար (անել), տակն ու վրա (անել), երկինք-գետին, սար ու ձոր, այր ու կին, շարժ ու ձև, օտք ու ձեռք (ընկնել), կարգ ու սարք և այլն:

դ) Իրար հաջորդող թվականների հարադրությամբ կազմվում են նույնպես բաղճյուսական հարադրական բարդություններ. ինչպես՝ երկու-երեք, տասը-աասներկու, քսան-երեսուն, նիսուն-վաթսուն և այլն<sup>7</sup>:

3. Կրկնավոր հարադրություններ կամ կրկնավոր հարադրական բարդություններ

Կրկնավոր հարադրական են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են վերլուծական եղանակով նույն բառի կրկնությունով: Կրկնվում են սովորաբար միավանկ կամ կարճ բառերը, գրվում են անջատ, ինչպես հարադրական բարդությունները, և բաղադրիչ-բառերը պահպանում են իրենց շեշտը: Կրկնավոր բաղադրիչ-բառերի միջև երբեմն ընկնում են ու կամ և շաղկապները, ինչպես նաև զրաբարյան նախդիրները: Որոշ կրկնավորների բաղադրիչներից մեկը ենթարկվում է հնչյունափոխության:

ա) Հայերենի ապրեր խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությամբ կազմվող կրկնավոր բարդություններ: Կրկնավոր հարադրական բարդություն կարող է կազմվել հայերենի համարյա բոլոր խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությամբ: Գոյականների, ածականների, մակբայների և մյուս խոսքի մասերի կրկնությամբ կազմվող նման կրկնավոր հարադրությունները ժամանա-

<sup>7</sup> Հմմտ. Մ. Արեղյան, նշվ. աշխատ., էջ 142—143; Հ. Աճառյան, նշվ. աշխատ., էջ 84:

կակից հայերենում բառարանային արժեք շունեն։ Ձեռք բերելով զանազան իմաստներ կամ իմաստային նրբերանգներ, դրանք ստանում են ածականական կամ մակբայական կիրառություններ։ Այսպես՝ ածական-ածական (բմպելիթներ, խմիչքներ, ճաշեր և այլն), փունջ-փունջ, գույն-գույն (ծաղիկներ), խումբ-խումբ (մարդիկ), (ածական), տուն-տուն (խաղալ), խումբ-խումբ (վազել, քայլել, ստանալ), գունդ-գունդ (արշավել) և այլն (մակբայական կիրառություն)։

1) Գոյականների կրկնությամբ կազմվում են ածականներ և մակբայներ. գույն-գույն, գունդ-գունդ, դասարան-դասարան, թել-թել, խումբ-խումբ, ածական-ածական, տուն-տուն, փունջ-փունջ և այլն։ Այս կարգի կրկնավորներն ունեն դանազանություն, բազմակիության իմաստներ կամ ցույց են տալիս համազգի առարկաների կամ երևույթների հաջորդականություն։

2) Ածականների և մակբայների կրկնությամբ կազմվում են ածականներ ու մակբայներ։ Այս կարգի կրկնավորները սաստկացնում են ածականների իմաստը, ստանում են բազմակիության նըշանակություն, մակբայական դործածության ղեպքում ցույց են տալիս գործողության կրկնություն, ինչպես նաև առարկայի վիճակ։ Օրինակ՝ սև-սև (հոսքեր, աչքեր), մեծ-մեծ (մարդիկ, նաև՝ խոսել), լավ-լավ (հույսեր, խոստումներ), սուր-սուր (փշեր), կլուր-կլուր (երես, աչքեր), Բիշ-Բիշ (ուտել, խմել), խելոք-խելոք (խոսել), հիվանդ-հիվանդ (աշխատել), արագ-արագ (քայլել), ուշ-ուշ (դալ), մանր-մանր (բրդել, կտրտել, կոտորել) և այլն։

3) Թվականների կրկնությամբ կազմվում են կրկնավորներ, որոնք ստանում են բազմակիության, ինչպես նաև բաշխական նշանակություն. մեկ-մեկ, մի-մի (մեկական, յուրաքանչյուրին մեկ), մեկ-մեկ (սեփեմն) (կանգնել, երևալ, տալ), մեկ-մեկ, մի-մի (գիրք, տետր և այլն), երկու-երկու (երկուական), երեք-երեք (երեքական), հինգ-հինգ (հնգական) և այլն։

4) Գերանունների կրկնությամբ կազմվող կրկնավորները սովորաբար արտահայտում են բազմակիության, երբեմն նաև առանձնակիության իմաստներ կամ իմաստային նրբերանգներ։ Օր.՝ ինչ-ինչ (պատճառով), իրեն-իրեն (խոսել), այս-այս (ղեպքում, մարդր), Բանի-Բանի (անզամ) և այլն։

Ու (նսև և) շաղկապներով կազմվող այս կարգի կրկնավորները կապվում են որոշակի բայերի հետ. ինչպես՝ ես ու ես, ինձ ու ինձ (մտածում, խոսում էի), ո՞վ ու ո՞վ (գնացին, եկան), ի՞նչ ու ի՞նչ, ի՞նչ և ի՞նչ (տամ քեզ) և այլն։

5) Չայնարկությունների և բնածայնականների կրկնությամբ

կազմվող կրկնավորները արտահայտում են սաստկական իմաստներ. ինչպես, օրինակ՝ հե՛յ-հե՛յ, վա՛ն-վա՛ն, հա՛յ-հա՛յ (հայ-հայ, մոտիկ տեղից եկա— շԹ), հա՛մ-հա՛մ, հա՛-հա՛, հի՛կ-հի՛կ, վա՛յ-վա՛յ, վա՛յ-վա՛յ, կը՛ն-կը՛ն, վի՛շ-վի՛շ, վա՛շ-վա՛շ, ո՛ւ ո՛ւ (քամու ձայնը) և այլն։

բ) Կրկնավոր բայեր։ Հարադրավոր բայի հարադրի կրկնությամբ կազմվում է կրկնավոր բայ. ինչպես՝ բզիկ-բզիկ անել, բըզիկ-բզիկ լինել, կտոր-կտոր գալ, վեր-վեր թռչել, մոտ-մոտ անել, մեշ-մեշ անել և այլն։

գ) Գրաբարյան նախդիրներով կրկնավորներ։ Գրաբարյան առ, ընդ նախդիրների օգնությամբ (որոնք ընկնում են կրկնավոր բաղադրիչների միջև) կազմվում են կրկնավոր հարադրություններ. երես առ երես, բառ առ բառ, ժամանակ առ ժամանակ, տող առ տող, մեկ առ մեկ, մաս առ մաս, Բայլ առ Բայլ և այլն. կամ՝ մեջ ընդ մեջ, մերթ ընդ մերթ և այլն։ Մյուս նախդիրներով (բայ, ի, դ, ց) կրկնավորներից կազմվում են կցական բարդություններ։

դ) Հնչյունափոխությամբ կրկնավորներ։ Այս կարգի կրկնավոր հարադրական բարդություններում հնչյունափոխվում կամ հնչյունի կորուստ է կրում կրկնվող բաղադրիչներից մեկը կամ էլ բաղադրիչների միջև առաջանում է հավելյալ հնչյուն։ Այս կրկնավորների առանձնահատկությունն այն է, որ հիմնականում ընդարձակվում է բո՞րի բառային իմաստը, բայց ձեռք է բերում հավաքական, բազմակիության ավելի լայն նշանակություն։ Բաղադրիչները միանում են դժիկով, երբեմն նրանց միջև ընկնում է «ու» շաղկապը։

1) Կրկնավոր բարդություն՝ առաջին բաղադրիչի բառակարգի բաղաձայնի կորուստով. այլուև-փայլուն, առոք-փառոք, ապաղ-նապաղի գալ (հանկարծամահ լինել), ախաս-պախաս, ալաս-փալաս, ալան-քալան։

2) Կրկնավոր բարդություն՝ երկրորդ բաղադրիչի բառակարգի բաղաձայնի փոփոխմամբ. թելիկ-մեկիկ, Բիշ-միշ, հաց-մաց, սուտ-մուտ, սեփիկ-մեփիկ, ցախ-մախ, բան-ման, կլուր-մլուր, տուն-մուն, կնիկ-մեփիկ, գավակ-մավակ. այս օրինակներում երկրորդ բաղադրիչների բառակարգի բոլոր բաղաձայնները դարձել են Պ-պարապ-սարապ, պ>ս։ Լաթի-փոթի, սուս-փուս, լ>փ, ս>փ։

3) Կրկնավոր բարդության՝ երկրորդ բաղադրիչի սկզբում որևէ բաղաձայնի հավելումով. անուշ-մանուշ, ոլոր-մոլոր, ավել-մավել, ոսկոր-մոսկոր, աղ (ու) մաղ, աման-շաման, առակ-պառակ (խայտառակ), ամբաղ-գամբաղ, առակ-գառակ և այլն։ Այս բարդություններում կատարվել է մ, շ, պ, գ բաղաձայնների հավելում։

4) Կրկնավոր բարդություն՝ երկրորդ բաղադրիչի ձայնավորի

կամ ձայնավորների փոփոխմամբ, մանր-մուր, մազ-մուզ, շեմ-շում, ֆաղցր-մեղցր, ծակ-ծուկ, մարդ-մարդ, ձեն-ձուն, հարայ-հուրայ, հայ-հույ (մեկ ձայնավորի փոփոխությամբ), փալաս-փուլուս, չակոտ-չուկուտ, աղքատ-ուղքուտ (երկու ձայնավորների փոփոխություն):

5) Կրկնավորներ՝ ածականների առաջին բաղադրիչի առաջին վանկի փոփոխմամբ: Այս եղանակով կազմված մի քանի կրկնավոր հարադրական բարդություններում կատարվել է բաղադրության ընդհանուր իմաստի սաստկացում. ինչպես կաս-կալույտ, կաս-կարմիր, կափ-կանաչ, նեփ-ներմակ, սիփ-սիպտակ (սպիտակ), սեփ-սև, սիփ-սև, լեփ-լեցուն, լեփ-լիք, միս-մեկակ (սրանց մեծ մասը գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում), շիփ-շրփ-լախ (բարբառային) և այլն:

6) Կրկնավոր հարադրական բարդությունների մի տեսակ է հնչյունական կազմով ու իմաստով նույն կամ մոտ բառերի կրկնությունը, երբ կրկնավորի երկրորդ բաղադրիչը որոշ շափով ձեվափոխված է<sup>3</sup>. ինչպես, օրինակ՝ ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում տարածված՝ փոք-փառ, շուն-շնվոր, հար-հարակ, տեր-տիրական, կեր-կերակուր, հոտ-հոտառանք և այլն:

#### 4. Հատվածական բաղադրություններ

Վերլուծական բարդությունների առանձին տեսակ է հատվածական բաղադրությունը, որի բաղադրիչները նույնական կամ նույնիմաստ ածականակերտ ածանցներով կազմված և իրար հետ ստորադասության, համադասության կամ փոխադարձության հարաբերությամբ կապակցված բառեր են<sup>4</sup>:

Այս կարգի բաղադրությունները առաջանում են նույնանիշ կամ համանիշ ածանցներով կազմված ածականների համադասական կամ ստորադասական կապակցություններից՝ առաջին բաղադրիչ անդամի ածանցի կրճատման և շաղկապի վերացման միջոցով. ինչպես՝ ռազմական և ֆաղափական > ռազմաֆաղափական, գիտական և հանրամատչելի > գիտա-հանրամատչելի, պատմական և բանասիրական > պատմա-բանասիրական, ռազմական և հեղափոխական > ռազմա-հեղափոխական, տեխնիկական և տեխեսական > տեխնիկա-տեխեսական, դատական և ֆենչական > դատաֆենչական, ռազմական-ծովային > ռազմա-ծովային, ռազմական-օդային > ռազմաօդային, ֆիզիկական և մաթեմատիկական > ֆիզիկա-մաթեմատիկական, մանկա-պատանեկան, կուլտուր-լուսավորական, ֆար-

բիկա-գործարանային, նյութա-տեխնիկական, բարոյա-ֆաղափական, բարոյա-կամային և այլն:

Հատվածական բաղադրությունների բաղադրիչ-անդամների քերականական հարաբերությունը համադասական է համարվում, երբ բաղադրության անդամները համադր են, միմյանց լրացում չեն, և բաղադրությունն իբրև համադաս անդամների մի բառակապակցություն՝ նախադասության մեջ միասնաբար դառնում է գոյականական անդամի լրացում. ռազմա-հայրենասիրական, նշանակում է ռազմական և հայրենասիրական. պատմա-բանասիրական, տեխնիկա-տեխեսական, բանվորա-գյուղացիական, ֆիզիկա-մաթեմատիկական, վարչա-տնտեսային, ուսումնա-մանկավարժական, ուսումնա-մեթոդական և այլն:

Ստորադասական է բաղադրիչ-բառերի հարաբերությունը, երբ բաղադրիչներից մեկը (առաջինը) մյուսի լրացումն է. նյութա-արեևյան (նահանգների), արևմտա-եվրոպական (գրականություն) և այլն:

Վերջապես, այդ կարգի բաղադրությունների բաղադրիչ-բառերը կարող են գտնվել երկկողմանի (անգամ՝ եռակողմ և բազմակողմանի) հարաբերության մեջ (փոխադարձություն, զուգադրություն և այլն). ինչպես՝ սովետա-ֆինլյանդական (պայմանագիր), ռուս-հայրենական (պատերազմ), ռուս-հայերեն (բառարան), լատին-ռուս-հայերեն (բժշկագիտական բառարան) և այլն:

Հատվածական այս կարգի բաղադրությունների դարդացման միտումը նրանց բառացումն է, վերլուծականից՝ համադրական բարդությունների վերածումը, երբ դրանք գրվում ու արտասանվում են իբրև մեկ բառ. ինչպես՝ գիտաեռագրտական, գիտատեխնիկական, ժողովրդախոսակցական, վարչատնտեսական և այլն:

### ՀԱՄԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս կարգի բարդությունները կազմվում են համադրության եղանակով. բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար, ունեն մեկ ընդհանուր շեշտ, և ըստ բաղադրիչների ձուլվածության աստիճանի ու կցվածության, շարահյուսական կապի դրսևորման, իմաստային անկախության ստորաբաժանվում են կցական և իսկական բարդությունների<sup>5</sup>:

1 ՀԱՄԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆ: Համադրական եղանակով կազմվող այն բարդությունները, որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչները (բառ, արմատ, նախդիր) հանդես են գալիս միասնաբար՝ ներքև (բառ, արմատ, նախդիր) հանդես են գալիս միասնաբար՝ կցումով (գրվում և արտասանվում են իբրև մեկ բառ), կոչվում են

<sup>3</sup> Հ. Ահարյան, նշվ. աշխատ., էջ 84:

<sup>4</sup> Հայոց լեզու. 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980 թ., էջ 402-408:

կցական բարդութիւններ. օրինակ՝ այսօր, կեսօր, որևէ, ինչևէ, հորեղբայր, մորեղբայր, ծվծվալ, ծակծկել:

Կցական բարդութիւնները կազմվում են շարահարկային կապակցութիւններից, տարբեր տիպի հարադրութիւններից, կրկնափոխներից: Այդ կարգի շատ բարդութիւններում բաղադրիչները թեև հանդես են գալիս միասնաբար, բայց և զգալի է նրանց ձևաբանական-շարահարկային և իմաստային անկախութիւնը. ինչպես՝ այսօր, կեսօր, հորեղբայր, այստեղ, այդտեղ:

1) Մարանկուսական տարբեր կապակցութիւններին կազմված կցական բարդութիւններ: Այս կարգի կցական բարդութիւններն առաջացել են շարահարկային տարբեր հարաբերութիւններ ցույց տվող հարադրութիւններից՝ կապակցութիւններից:

ա) Հատկացուցիչ-հատկացյալից կազմված կցականներ. տանտիկին > տան-տիկին, հորեղբայր > հոր-եղբայր, մորեղբայր > մոր-եղբայր, մորեղբայր, տանտե, բեայր, բեռորդի (բեռ գրաբ. բոյր-ի սեռական հոլով):

բ) Որոշիչ որոշյալով կազմված կցականներ. այսօր > այս-օր, կեսօր > կես-օր, այսպես > այս-պես, տղամարդ > տղա-մարդ, այստեղ, այդտեղ, ինչպես, որպես, որչափ, ոչոք, ոչինչ, այսինչ, այնինչ, տա՛հեղ, այսչափ, այդչափ, նույնչափ, մեջտեղ, մեկտեղ, կախօրհան:

Այս կարգի կցականների բաղադրիչներից մեկը հաճախ իբրև անկախ, նյութական իմաստ ունեցող բառ չի դործածվում. ինչպես՝ տասնամյակ, հարյուրամյակ, գործինակ, այսօր, այդօր, նույնօր:

գ) Երկար-ստորոգյալով կազմված կցական բարդութիւններ. երբևէ, ինչևէ, երբևիցե, ովևէ, տե՛րողորմյա: Այս կարգի կցական բարդութիւնները փաստորեն «բառ-նախադասութիւններ» են. ովևիցե-ով էլ որ լինի, ովևէ-ով որ է, ինչևէ-ինչ որ է, երբևէ-երբ որ է, էջմիածին-իջամ միածինը:

դ) Բայի հրամայականի ձևերով կազմված կցականներ. երթևեկ, առևտուր, ելևէջ, տարևառ:

ե) Գրաբարյան հոլովածներով կազմված կցականներ. ձերբագատ, այսուհետև, այնուհետև, որովհետև, այսուամենայնիվ, այնուամենայնիվ:

2) Գրաբարյան նախդիրներով կազմված կցականներ:

ա) Պոչականներ, ածականներ, մակբայներ և այլ խոսքի մասեր: Գրաբարի առ, գ, ընդ, ըստ, ի, ց նախդիրները, որոնք ժամանակակից հայերենում քերականական այդ կարգի բացակայության պատճառով կորցրել են իրենց դերը, գրաբարյան շրջանից ժառանգ

գած բառերում հանդես են գալիս իբրև բարդութիւն բաղադրիչներ: Հայերենի զարգացման հետագա՝ մասնավորապես աշխարհաբարյան շրջանում համաբանութիւնը հիշյալ նախդիրներով կազմվում են նոր բառեր.

Առ նախդրով— առայժմ, առմիշտ, առդիր (հավելված), առհասարակ, առձեռն, առտնին, առանձին, առնչութիւն (առ-ինչ-ութիւն), առօրյա, առկախ, առկա, առավել, առնվազն, առընթեր, առափնյա, առշեղ, առհավետ, առողջ, առզին, առերես, առերևոյթ, առայժմ, առկայծ(ել), առձույլ, առանցք, առընդմիջ:

Ձ նախդրով— զարդ, զարմ, զամբ (զ-ամպ), զգլխիչ, զարտուլի, զով (զհոլ), զամիվայր, զատիվեր, զատիկող, զարթուն, զանց (առնել), զանցանք, զերծ, զերդ, զօր:

Ընդ նախդրով— ընդհանուր, ընդդէմ, ընդարձակ, ընդառաջ, ընդամենը, ընդունայն, ընդհատ, ընդմիջտ, (ան)ընդմեջ, ընդմիջել, ընդհատակ, ընդգետնյա, ընդդատյա, ընդերկրյա, ընդձույլյա, ընդջրյա, ընդունակ, ընդամին, ընկեր (ընդ-կեր), ընտիր (ընդ տիր):

Ըստ նախդրով— ըստամուտ, ըստգործյա, ըստամենայնի, ըստմտնյա, ըստինքյան, ըստզյուտ (ստզյուտ):

Ի(յ) նախդրով— իգուր, իսպառ, իդեպ, իհարկե, իմիջիպալոց, իվեր, հառաջ, հանձին (ի անձին > յանձին > հանձին), հօգուտ, հանձնասպան, հայսմավուր, հուղարկ, հտարնկայս, հուշարար:

բ) Նախդիրներով կազմված կցական բայական բարդութիւններ:

Նախդիրներով կազմված բայերի մի մասը ժամանակակից գրական լեզվին է փոխանցվել գրաբարից: Գրաբարյան այդ կարգի բայերի համաբանութիւնը էլ արդի հայերենում կազմվել են նորերը:

ԱՌ— առադրել, առաւելել, առբերել, առգրավել, առգրել, առդատել, առզնել, առերեսել, առասել, առընթանալ, առինքնել, առլծել, առլցել, առկայծել, առկոշել, առկրել, առկցել, առհոսել, առձայնել, առձգել, առնակատել, առնամանկել, առնչվել, առոգանել, առանձնանալ:

Ձ— զարթնել, զարկել (զարկանել), զարդարել, զարտուղել, զարմանալ, զգլխել, զգետնել, զեռալ, զեղել, զեղծել, զետեղել, զրմայլվել զովանալ, զիջել (զ-իջանել), զառանցել, զողել, զօծել, ըսթափվել (զթափվել), սփողել (զ-սփողել):

Ընդ— ընդառաջել, ընդարձակել, ընդդիմանալ, ընդհարվել, ընդվզել, ընդգծել, ընդգրկել, ընդլայնել, ընդարմանալ, ընդմիջել, ընդունել (ընդ ունել), ընդօրինակել, ընդաստնել, ընդհատվել, ընձուղել (ընդ-ձուղել), ընկնել (ընդ-կնել), ընկողմանել (ընդ-կողմ)

մանկի), ընկրկել (ընդ-կրկել), ըմբռնել (ընդ-բռնել), ըմբերանել (ընդ-բերանել):

ՐՍՏ— ստանձնել (ըստ-անձնել), սագտել (ըստ-գտել):

Ի(յ)— հանձնանել, հանձնարարել, հանձնել, հանձնվել, հաջող-վել, հարձակվել, հարդարել, համբառնալ, հուղարկել և այլն:

3) Հարադրական բայերից կազմված կցականներ: Հարադրական բայերից հին շրջանում կազմվել են մի քանի կցական բայեր. ակնածել (ակն ածել), գործածել (ի գործ ածել) և այլն: Ավելի տարածվածը, սակայն, հարադրական բայերի հիման վրա տարբեր խոսքի մասերին պատկանող կցական բարդությունների կազմումն է. ինչպես՝ հանձն առնել-ից (գրք. յանձն առնուլ) կազմվել է հանձնառու, հանձնառություն, վրեժ խնդրել-վրեժխնդիր, վրեժ-խնդրություն, ակն կալել-ակնկալություն, ակնկալ և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվում՝ իբար անցնել-իբարանցում, Երես ծեծել-երեսծեծանք, աչք խփել-աչքփոց:

Գրական, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվում կցական բարդություններ են կազմվում ոչ միայն բուն հարադրական, այլև լրացում ունեցող բայերից, երբ բայական բառակապակցությունը կամ հարադրական բայը ծառայում է որպես ածանցավոր բաղադրության հիմք, ինչպես՝ նրազ վառել—ճրագվառոց, արև(ը)-մտնել—արևմտոց, արև ծագել—արևծագոց, տեղ(ը) քափվել—տեղեփափոց, աչք խփել—աչքփոց, նշան տալ— նշանտուք, բարև տալ—բարևաուք, կուծ կոտրել—կուծկոտրուկ (բույս), աման կոտրել—ամանկոտրուկ (բույս), սիրտ(ը) խառնել— սիրտխառնուք, առաջը կտրել—առաջկտրուկ (խաղ), Երես(ը) սրբել—երեսսրբիչ, գիր կապել—գիրկապ, աղջիկ տեսնել—աղջիկտես, խոսք կապել—խոսքկապ, մաս հանել—մասհանում, մեջ բերել—մեջբերում, առաջ բաշել—առաջբաշում, առաջ խաղալ—առաջխաղացում, շուքը կալնել—շուքըկալ<sup>10</sup>:

4) Բաղնյուսական հարադրություններից բարդություններ: ա) Համանիչ (համանիչ և նույնանիչ), իմաստային ընդհանրություն ունեցող, ինչպես նաև համազոր և համադաս այլ անդամներով կազմվող բաղնյուսական հարադրություններից բաղադրիչների կրկնումով կազմվում են կցական բարդություններ: Այդ կարգի կցական բարդության բառային իմաստն ավելի ընդհանուր ու լայն է, հաճախ՝ փոխաբերական, և բաղադրիչ բառերը հաճախ կորցնում են իրենց իմաստային ինքնուրույնությունը. ինչպես՝ ազունաց (բարեկամություն, հավատարմություն), նիստուկաց (բարք, սովորու-

թյուն), ինչպես նաև՝ անցուղարձ, այրուծի, երթեկ(ուրյուն), առևառ, Ելևառ, Ելևչ, այրուբեն, խորդաբորդ, տանառեռ, ուձնեգ, հալումաշ, հարցումորձ, պարտակատաշան, հարևմամ, հարսնեռ-դի և այլն:

բ) Համադաս բաղադրիչներից տասնավորներով և միավորներով են կազմվում տասնմեկից մինչև ինեսունիներ թվականները:

5) Լճառի կրկնությամբ կազմված կցական բարդություններ: Ժամանակակից հայերենում հարադրական կրկնավորների որոշ մասը կցվելով՝ ընդունում է մեկ ընդհանուր շեշտ, գրությունը և արտասանությունը հանդես գալով միասնաբար, վեր է ածվում կցական բարդությունների: Այս կարգի բարդությունների առանձնահատկությունն այն է, որ բաղադրիչ-բառերի (կրկնավորների) միջև ընկնում է շողկապ, հոգակապ կամ նախդիր. ինչպես, օրինակ՝ լիսլի, կաղիկաղ, կոբիկոբ, մերթնդմերթ, մեջընդմեջ, մոտևմոտ, ԲովեԲով, տակեապ, փոխեփոխ, օրեօր, օրդեօրդի, տարեցտարի, ժամեժամ, տեղնուտեղը, բացեբաց, մեջեմեջ, հասվեհաս, մեծամեծ, նորանոր, մոտամոտ, ջերմաջերմ, շարաշար, ինքնքստինքնյան, օրստօրե, գույնգույն, հեղահեղա և այլն: >

Այս կարգի բարդության բաղադրիչ-բառերից մեկը հաճախ հանդես է գալիս թեթևած ձևով (միբասմիաջե, օրստօրե, ինքնքստինքնյան) իրրև դրաբարի հոլովական բարացած ձևեր ժամանակակից հայերենում:

6) Արմատի կրկնությամբ կազմված կցական բարդություններ: Ժամանակակից հայերենում մեծ թիվ են կազմում բառարմատի կրկնությամբ կազմված կցական բարդությունները: Այդ կարգի կրկնավոր-կցական բարդության առանձնահատկությունն այն է, որ կրկնվող արմատը ժամանակակից հայերենում ինքնուրույն, անկախ գործածություն չունի: Կրկնավոր-կցական բարդության մի մասի արմատը հնչյունափոխվում է, մյուս մասինը մնում է անփոփոխ<sup>11</sup>:

ա) Արմատի կրկնություն՝ առանց հնչյունափոխության: Այս կարգի կրկնավոր-կցական բարդություններում բաղադրիչ-բառարմատները հանդես են գալիս առանց հնչյունափոխության: Աղկաղի (խեղճ, շնչին, տկար, գաղիք), աղտաղտուկ (բույս), ալլալլալի, առարել, առարիչ (գրք. առնել բայի անցյալ կատարյալի հիմքը՝ առար), արծարծել, բեկբեկ(Էլ), գեղգեղ(Էլ), դողդողալ, բորբորել (կաթել, մաղել), խողխողել, խորխորատ, ծործոր, կափկափել, կեկեբալ, կողկողել, հեղհեղուկ, ջողջողալ, ռստոստալ,

<sup>10</sup> Մ. Աբելյան, Նշվ. աշխատ., էջ 141—142:

<sup>11</sup> Շ. Անադյան, Նշվ. աշխատ., էջ 85—89:

առտոսայուն, շարշարել, ջախջախել, սորսոր, փայփայել, փռփռոզալ, ֆայֆայել:

բ) Արմատական ձայնավորների ենչյունափոխությամբ կրկնավոր-կցական բարդություններ: Այս կարգի բարդություններում արմատական ձայնավորը կարող է հենչյունափոխվել ինչպես երկու բաղադրիչներում, այնպես էլ բաղադրիչներից մեկում:

1) Երկու բաղադրիչներում արմատական ձայնավորների հընչյունափոխություն. գլգլալ (գիլ), բոբոալ (բիո), բֆբֆել (բուբ), խլխլել (խիլ), ծփծփալ (ծուփ), կցկցել (կից), ձգձգել (ձիգ), մրոմրալ (մուռ), շիշիել (շուփ), շրշրջել (շուրջ), շրջուկ (ջուր), փրփրել (փուր), ֆրֆրել (ֆիբ):

2) Բաղադրիչներից մեկում արմատական ձայնավորի հընչյունափոխություն. բոբուր (բուր), բջիջ (բիջ), կրկիտ (կիտ), ծիծաղ (ծաղ), նղնիմ, առուս (տուրտուս), ֆսփուս (քուսփուս), փրփուր (փուր) (առաջին բաղադրիչում):

Չայնավորի հենչյունափոխություն՝ բարդության երկրորդ բաղադրիչում. վազվզել, բախթփել, խաբխբել, ծամծմել, խազխզել, կապկպել, մազմզուկ, պանպանել, ֆաշֆշել ( $ա > ք$ ), խաղնախաղն, խաբխալ (խար), աղառուղ (աղջ), աղտամուղտ (աղտ), խաժաժաժ, սպասսպուս ( $ա < ու$ ), հայնոյել ( $ա < ո$ ), ծածրակ (ծոր) ( $ո < ք$ ):

3) Արմատական վերջին բաղաձայնի կորուստ բաղադրիչներից մեկում. կակազել (կազ), բաբախ, բաբախել (բախ), դադար (դար), բաբալ (բալ), բեբե (բե), բաբախել (բախ), բոբովել (բով), ծիծաղ (ծաղ), ծածանել (ծան), ծոծրակ (ծոր), կոկոն (կոն), հահանել (հան), պապաննովել (պանն), շոշուկ (շոկ), պոպոկ (պոկ), սասանել (սան), տատանել (տան), փոփոխել (փոխ):

4) Արմատական առաջին բաղաձայնի կորուստ բաղադրիչներից մեկում. գծուծ (գուծ), դայլայլ (դալլ), խաղաղ (խաղ), խոպոպիկ (խոպ), հագագ (հա), հայթայթել (հայթ), հեղեղ (հեղ), հուղղող (հողղ), կնտնտոց (կնտ), հուպուպ (հուպ), հեկեկալ (հեկ), հոտոտել (հոտ), հոտոս (հոս), պատատուկ (բույս) (պաս), փաբաբել (փաթ):

5) Արմատական բաղաձայնների փոփոխություն (հերթագայություն, պարզեցում) բաղադրիչներից մեկում. բաբբափել (բ-փ), տաբտամ, կարկամ, առուս (բ-մ), բոբբոջ (բ-շ), խաբխափել, սաբսափ, սաբսափել (բ-փ), բոբբոբել, մարմաբել (բ-բ), հարհասել, կարկատել, կարկուտ, կրկիտ (կիտ), կրկուտ (կուտ) (բ-տ), բոբբոս (բ-ս), խաբխալ (բ-լ), նղնիմ (դ-մ), տաղուս (դ-կ), բոբբոջ (դ-ջ), կարկանն (դ-նն), ցնցուղ (ցունցուղ), ծանծաղ (ն-ղ), ֆնֆուշ (քունքուշ, ն-շ), զանգատ (ն-տ), զանցառ (ն-ռ), հեհեհ

(ն-բ), կաշկանդել (շ-նդ), կսկիծ (կիծկիծ), կսկուծ (կուծկուծ) (ծ-ս), կոշկոնել (ծ-շ), ֆաֆենել, ֆաֆանել (ս-ն), կոշկոն (շ-ո):

շ/ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆ: Իսկական են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են համադրական եղանակով երկու և ավելի հիմնական ձևույթներից (արմատներից) կամ արմատական բառերից, որոնց շարահյուսական կապը միմյանց է կամ ձևաբանորեն չի դրսևորված համապատասխան վերջավորություններով, երբ բաղադրիչները կորցնում են իրենց և՛ ձևական, և՛ իմաստային անկախությունը: Օր.՝ ջրշուն, ջրկիր, սրամիտ, ոսկեգոծ, մեծատուն, ֆաղաֆամայր, սրածայր, սրտաբուխ, սերմնացան, հիսաֆանչ, վայելչահասակ և այլն: Իսկական բարդություններ են նաև հայերեն որոշ անձնանուններ. ինչպես՝ Աստվածատուր, Խաչատուր, Տիրատուր, Նորայր, Յոլակ, Փոխիձամ, Հրամուշ, Հրաշյա, Սիրահուշ և այլն: >

(ա) Իսկական բարդությունների առանձնահատկությունները. ա) Իսկական բարդությունները ունեն մեկ ընդհանուր բառային շեշտ, որն ընկնում է բաղադրության վերջին վանկի վրա. օր.՝ հեռագի՛ր, սիրագո՛ւր՝վ, գրասե՛ր, գյուղաֆաղա՛ք, ֆաղաֆաբե՛ակ, ֆաղաֆաթի՛պ: >

բ) Բարդության բաղադրիչները հիմնականում կորցնում են իրենց իմաստային անկախությունը: Բաղադրության ընդհանուր իմաստն ավելի լայն է, քան նրա բաղադրիչների առանձին իմաստները. օր.՝ հացքուլիս—չի նշանակում հաց և թխել, այլ՝ հաց թխող մարդ՝ մասնագետ, նա՛ որ հաց է թխում, չրասեղան— ոչ թե զիր և սեղան, այլ՝ սեղան, որի վրա զիր են անում, զբաղվում են դրելով, ընթերցանությամբ, պարապում են: Այսպիսով, բաղադրությունն ամբողջությամբ առած՝ մեծ մասամբ արտահայտում է մի այնպիսի նոր իմաստ, որը չի բխում բաղադրիչների առանձին, անկախ իմաստներից կամ այդ նոր իմաստը չի ստացվում նրա բաղադրիչների բառային ինքնուրույն իմաստների մեխանիկական գումարից. օր.՝ վայափոք (թշուռնք) բառացի չի նշանակում փայտ փորող, մայրամուտ— ոչ թե մայր մտնելը, այլ՝ արևի մայր մտնելը. դասընկեր— միևնույն դասարանում սովորող, դիմախաղ— դեմքի մկանների միջոցով որոշակի զգացմունքներ և տրամադրություններ արտահայտելը և այլն: Կցական որոշ բարդություններում նույնպես կարելի է հանդիպել նման երևույթի, երբ բարդության ընդհանուր իմաստն ավելի լայն է, քան բաղադրիչների, բաղադրիչ-բառերի առանձին իմաստները. ինչպես՝ առուլիս, եռուզեռ, այլուծի, առևտուր, աղունաց, ելումուտ և այլն: Այս կարգի որոշ կցական բարդություններ վերաիմաստավորմամբ ձևոր են բերել



դարձվածքային իմաստ և իմաստի բնույթով մոտ են ինչպես գործվածքներին, այնպես էլ՝ իսկական բարդություններին: Սկզբունքորեն սրանք տարբերվում են իսկական բարդություններից նրանով, որ բաղադրիչ բառերը պահում են իրենց բառային ձևական անկախությունը, նրանց կապը ամուր չէ, կարող են բաժանվել և մի դեպքում կդառնան հարադրական բարդություններ (աս ու լիս, ես ու զեռ, այր ու ձի, առ և տուր, աղ ու հաց, ել ու մտա), մյուս դեպքում՝ դարձվածքներ (աղ ու հաց—երախտիք, բարեկամություն)։

Կան նաև ոչ մեծ թվով իսկական բարդություններ, որոնք իրենց բաղադրիչներից ավելի իմաստներ չեն արտահայտում: Նրանց ընդհանուր իմաստը (ինչպես հարադրական և կցական բարդություններում) բխում է բաղադրիչների իմաստներից, կազմվում է բաղադրիչների իմաստների հիման վրա, ավելի լայն չէ, քան՝ վերջիններիս իմաստները. օր.՝ մշտադալար, մշտաբթուն, ֆաջանմուտ, հեզանկուն, լայնարձակ, խառնաշփոթ, վայելչագեղ, տխրադալով, քախմանուշ, հերարձակ, ֆաղցրանուշ, լուսապայծառ, հուբախույր, մորախույր:

4) Իսկական բարդության բաղադրիչները միշտ միացած, միաձուլ են հանդես գալիս և հնարավոր չէ նրանց անջատումը, ինչպես, օրինակ՝ հաց և բուխ, ջր և կիր, սրտ և բուխ: Նախ, որպես բաղադրիչ հանդես եկող հիմնական ձևույթներ՝ ինքնուրույն, անկախ գործածություն չունեն: Եթե անգամ հնարավոր լինի այնպիսի իսկական բարդությունների, ինչպես՝ մայրաքաղաք, մեծատուն, գյուղաքաղաք բառերի՝ ըստ իրենց բաղադրիչների բաժանումը՝ մայր և քաղաք, մեծ և տուն, գյուղ և քաղաք, ապա նման մեխանիկական անջատումը կհանգեցնի բաղադրության իմաստի խախտման: Անիմաստ է բաժանահատ բաղադրության բաղադրիչները բաժանել բաժակ և ճառ բառերի:

5) Իսկական բարդությունների բաղադրիչների շարահյուսական կապը մթազնած է և ձևաբանորեն չի դրսևորվում. ինչպես՝ ուրվանկար, գոյատևել, նկարագրել, գիտածողով, ծաղրանկար, ծաղրածու, գվարթանայն: 7

6) Իսկական բարդության բնորոշ հատկանիշն է համարվում նաև բաղադրիչների հնչյունափոխությունը, որը կապվում է շեշտի տեղափոխման հետ. ինչպես՝ գրագետ, ջրկոտեմ, մշտատես, ուրվագծել:

7) Որպես կանոն՝ իսկական բարդության երկու բաղադրիչների միջև մտնում է ա(6) հոդակապը. ինչպես՝ գեղացիք, գորագունդ, միապետ, հեռագիր, հեռախոս, տիեզերագնաց, լուսնագնաց,

Մերագունդ, հողածին, գերեվարել, ծաղկեպսակ և այլն, թեև կան նաև անհոդակապ իսկական բարդություններ:

Բաղադրիչների մեջ հոդակապ չի մտնում, երբ երկրորդ բաղադրիչն սկսվում է ձայնավորով. օր.՝ քանաքանակ, գաղթօջախ:

Ա հոդակապի ծագումը<sup>12</sup> կապվում է բառահիմքի վերջին և ձայնավորի հետ: Հայերեն մի շարք բառերում ա ձայնավորը, սկզբնապես լինելով արմատական, հանդես է եկել բաղադրություններում. օր.՝ մեծատուն բառի մեջ: Այս բաղադրության առաջին բաղադրիչը նախապես ոչ թե մեծ ձևույթն է, այլ՝ մեծա: Հետագայում արմատական այդ ա ձայնավորի անկման հետևանքով մեծա քառարմատի ուղիղ ձևը դառնում է մեծ, և մեծատուն բարդության մեջ ա-ն այլևս չգիտակցվելով իբրև արմատական հնչյուն, ընդունվում է որպես հոդակապ, որը համաբանության մեջ տարածվում է հայերեն բաղադրյալ բառերի կազմության մեջ: Բառակազմության ժամանակ, որոշ դիրքերում ա հոդակապը միանալով նախորդ բաղադրիչի վերջնահնչյունն ի-ին, դառնում է ե. ինչպես՝ այգի-ա-գործ, այգեգործ: Հետագայում այդ կարգի ե-ն նույնպես գիտակցվում է որպես հոդակապ և համաբանության մտնում որոշ բաղադրությունների կազմության մեջ. ինչպես՝ երգեհոն, խաբեպառիք, ծաղկեպսակ, հաշվեհարդար, հաշվեմատյան, հաշվետուն, օրեկան և այլն: †

#### ԱՆՀՈԳԱԿԱԳ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իսկական բարդություններ կազմվում են նաև առանց հոդակապի. ինչպես՝ գրքաց, հացթուխ, հավկուր, ծալպակառ, թթխուր, ֆարուշ և այլն:

Անհոդակապ իսկական բարդությունները հիմնականում, ըստ երևույթին, ծագել և տարածվել են ժողովրդախոսակցական լեզվից և բարբառներից. ինչպես՝ անկից, դրկից, թերմաշ, գայլխնդ, ծալպակառ, երեսպարզ, նեղգիրտ, սևգիրտ, թթխուր, արևույտ, արևկող, արևող, ծամկալ, փլավֆամիկ, կրակֆաշ, հավֆաշ, կերկոխ և այլն:

Միաժամանակ որոշ իսկական բարդությունների հոդակապը դուրս է ընկել նաև նրանց ածանցման ժամանակ. ինչպես՝ ածաքասեր-արծաթսիրություն, սակավ(ա)ժամանակյա, ողջամիտ-ողջմտություն, լրջամիտ-լրջմտություն, պահապան-պահպանություն և այլն:

<sup>12</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 190—191:

Կան նաև նույն բաղադրիչներով կազմվող բարդության հոդակապով և անհոդակապ ձևերը. ինչպես՝ խրատու-խրատաու, հացթուխ-հացարուխ, փարկու-փարկու, փարհլած-փարհլած, տնկից-տնակից, շարկամ-շարկամ, թերխորով-թերխորով, թերխաշ-թերխաշ, թերմաշ-թերմաշ, գայլխնդ-գայլխնդ և այլն:

Նույն բաղադրիչներով կազմվող անհոդակապ և հոդակապով մի շարք բարդություններ իմաստային որոշակի տարբերություններ ունեցող, տարբեր բաներ են. ինչպես՝ հրձիգ և հրածիգ, փրտաշ և փրատաշ, փարվազ և փարավազ, փարկոփ և փարակոփ և այլն:

### ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԳՐԻՉՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒԹԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Իսկական բարդության բաղադրիչների շարահյուսական կապերի ոչ հատակ ձևավորումը բաղադրության բաղմիմաստության պատճառ է դառնում. այսպես՝ լավատես—1) լավ տեսնող, լավ բան տեսնող, 2) լավ տեսնող, ջրասուն—1) ջրով սնվող, 2) ջրի մեջ սնվող, ջրածին—1) ջուր ծնող, 2) ջրի մեջ ծնված, 3) ջրից ծնված, կովկիթ—1) կով կթող, 2) կաթի աման, 3) կթիչ և այլն. կամ՝ գիր արմատով բարդություններում այն հանդես է գալիս՝ գիր «տառ», «գրող» և «գիրք» իմաստներով. ինչպես՝ երկաթագիր, շղագիր, բոլորգիր (տառ), պատմագիր, մատենագիր, ժամանակագիր, տարեգիր (գրող), օրագիր, լրագիր, ամսագիր, տեղեկագիր (գրվածք, գրություն, գիրք). ջրատար (ջրից տարված), մաքրատար, բեռնատար (մարդ, բեռ տանող):

Սովորաբար իսկական բարդության բաղադրիչների հարաբերությունը ստորադասական է, անսովոր չէ նաև համադասական հարաբերությունը. ինչպես՝ տեղատարափ, ազգատուն, քննաշուծ, տխրուրախ, ամբակուտ, հիաստանչ, վայելչագեղ:

Բաղադրիչների հարաբերությունը ստորադասական լինելով, առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է, հետևաբար և իսկական բարդ բառի հիմնական նշանակությունը երկրորդ բաղադրիչն է արտահայտում. առաջին բաղադրիչը որևէ կողմով լրացնում է երկրորդի իմաստը. ինչպես՝ հացատուն, սևանոզ, մեծամիտ. գլխաբաց (հացի տուն, սև հող, մեծ սիրտ ունեցող, գլուխը բաց). կամ՝ մաքրասեր (մարդ սիրող), փաղափամայր (բաղաբերի մայր):

Քուն հայկական է համարվում այն իսկական բարդությունը, որի առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է, հակառակ դեպքում

այն կազմված է օտար լեզվի նմանողությամբ, այսպես՝ հայկական են՝ սիրաբան, պատվաբան, բանաստեղծ, բանասեր, փաղափամայր. հունաբան կազմություններ են՝ առժանապատիվ, առժանախաղ, ստեղծաբան, սիրաբան, մայրափաղափ:

Բարդության առաջին բաղադրիչ-գոյականը ստանում է զանազան հոլովների, կապերի արտահայտած իմաստներ, որոնք երկվում են փոխակերպման ժամանակ:

ա) Ուղղականի նշանակությամբ. արտամեռ (սիրտը մեռած), տիրամեռ, լեզպատառ, հյուղակոտոր, ալեկոծ, ձեռնհաս, անդամալույծ, հուսահատ, թեաթափ, ինքնակոչ, ինքնաբույս, խելամաղ (լինել):

բ) Հայցականի նշանակությամբ. մաքրասեր, մատենագիր, բարեգործ, ձկնորս, գիշերահած, խավարամուտ, երկնահաս, երկնապիչ:

գ) Սեռականի նշանակությամբ. ջրատար (ջրի տարած), արհայրդի, գայլակեր, առյուծասիրտ, անձեռաջուր, փաղափաղափ:

դ) Տրականի նշանակությամբ. գրավարժ (գրին վարժված), խավարասուլոր, երկնահույլ, ինքնահան, շափահաս, ուշաբերել:

ե) Բացառականի նշանակությամբ. հողածին (հողից ծնված), երկնահաս, երկրաբույս, երկրաբուխ, ուշագնաց, պաշտոնակ, մրտահան, խելահան (անել):

զ) Գործիականի նշանակությամբ. ալեզարդ (սպիտակ մազերով, ալիքով զարդարված), ձյունապատ, հուսալից, ձեռագործ, ջրաղաց, հողմնաղաց, ջրաբույծ:

է) Ներգոյականի նշանակությամբ. խավարաբնակ (խավարում բնակվող), խավարաշրջիկ, մոխրաքավալ և այլն:

Բարդության առաջին գոյական բաղադրիչը եղակի ուղղական հոլովով գրվելիս.

ա) Գրաբարյան հոգնակի է ունեցող աննդական բաների (կառ, փառ, խել, կյան, փիմ, միտ, մեղ, աչ) այդ վերջավորությունը բարդություններում սովորաբար դուրս է ընկնում. ինչպես՝ կառավարել, փառապանծ, փառահեղ, սևափառ, անփառունակ, խելառ, խելապակաս, փանահույլ, մտամուր, մտազբաղ, մեղապարտ, աչագեղ, կենակից, կենարար:

Ժամանակակից հայերենում այդ է-ն արդեն չի գիտակցվում որպես հոգնակի վերջավորություն, ուստի և կան նորակազմություններ, որոնցում այն պահպանվում է. ինչպես՝ խելապակաս, աչքացավ, աչքաբաց, պարտառեր (պարտատեր), գրասեր, գրակալ (գրակալ), կրծքաբաց, փառանայն, վառագրություն:

բ) Ժամանակակից հայերենում մի շարք բաներում դուրս է

ընկել գրաբարի բառավերջի և հնչյունը. ձեռն-ձեռ, մասն-մաս, ու- ուսումն-ուսում: Այդ կարգի բառերի և-ն բառակազմութիան ժա- մանակ մեծ մասամբ վերականգնվում է. ուսումնասեր, ուսումնա- սիրել, մատնահարված, մատնացույց, ձեռնասուն, ձեռնարկություն, ձեռնեբեցություն, մասնակցել, մասնահանել, կողմնացույց, ստեղ- նագործություն, ձկնաշատ, լեռնագնաց:

գ) Նույն երևույթն է կատարվել նաև և, ր, ղ վերջնահնչյուններ ունեցող բառերում, որոնք գրաբարում առնվում են սեռականի ձե- վերում՝ ան, եր, եղ. ինչպես՝ ականատես, ականակապ, ականակուտ, ականագարդ, անվանակոչ և ակնախառն, ակնակալություն (ակրն- կալություն), ակնակապին, ակնածե. սերմնաբաղ, սերմնացան, ստնակապ. կամ՝ աստեղագետ և աստղագետ, աստեղագարդ-աստ- ղագարդ, աստեղաբաշխ-աստղաբաշխ:

Գրաբարի հայցականի ձևով կազմված են մի շարք բառեր. ինչպես՝ կենսուսույց (կեանս), կենսածին, կենսարուխ, կենսասեր, կենսատու, կենսագործել, կենսագիր:

Գրաբարի հայցականի ձևը համաբանություններ անցել է այնպի- սի բառերի մեջ, որտեղ հայցական չպետք է լինի. ինչպես՝ կենսա- ծաղիկ, կենսատունկ, կենսուրախ, պետք է լինե՞ր՝ կենսածաղիկ, կե- նագործ, կենուրախ, մեղսապարտ և մեղապարտ. կամ օրենսգիրք և օրենագիրք:

Իսկական բարդության բաղադրիչները կարող են գտնվել են- թականի և ստորոգյալի (ինքնագնաց), առանձին բաղադրիչներ՝ ուղղի խնդրի (ինքնասեր), անուղղակի խնդիրների (ինքնախալստ- անջատման անուղղ. խնդ., ինքնապարծ—միջոցի անուղ. խնդ.) շարահյուսական տարրեր կապերի մեջ:

### ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

1) Գոյական (արմատ)+ գոյական (արմատ) կաղապարով կազմվում են.

ա) Գոյականներ. երկրորդ բաղադրիչը պահում է իր նշանա- կությունը, առաջին բաղադրիչն ունի սեռականի (հատկացուցիչ), ածական վերագրի և այլ նշանակություններ. արհայտողի, գանձա- տուն, ջրհոր, ծովեզր, անձրեկաչուր, երկնակամար, գետափ, անե- ձագ, անեհորդի, ձեռագործ, աղամախենձուր, արոտավայր, բանա- կոթիվ, առյուծասիրտ, բանածե, գոտեմարտ, ռազմահակատ, մայ- րաբաղախ:

բ) Կազմվում են նաև ածականներ. ինչպես՝ ձյունախալլ, գա- գանասիրտ, ֆարսիրտ, արյունբերան, շրջանածե:

2) Գոյական (արմատ, հիմք)+ ածական կաղապարով կազմը- վում են ածականներ. երկրորդ (ածական) բաղադրիչը պահում է իր հիմնական նշանակությունը, առաջին բաղադրիչը երկրորդի լը- բացումն է, շարահյուսական կապակցությամբ փոխակերպման դեպքում նրանց իմաստն արտահայտվում է հոլովածներով և նա- խաղրություններով ու ետաղրություններով, լուսալայծառ (լուսի պես՝ լույսով պայծառ), ոտնաքերթ (ոտից թեթև), մարդաշատ, լուսամուտ, հողաշատ, ջրառատ, ծալպակաս, երեսպարգ, ջրամոտ, հողախառն, մարդավայել, երկրամերձ, անդնդախոր, սանձարձակ, մտամոլոր, վաբալարմիր, ձյունասպիտակ, կատակախառն, սովե- րախիտ, ոսկրահաստ:

3) Գոյական (արմատ, հիմք)+ բայարմատ (կամ բայբուն) կաղապարով կազմում են գոյականներ ու ածականներ: Որոշ ածա- կաններ կարող են գործածվել նաև իբրև գոյական: Գոյականներ՝ անասնապահ, գրաշար, գրախոս, գրավանառ, ֆարսաշ, դասատու, հրացան, գնդացի, շարհացան, սերմնացան, գործակառու, տոմ- սավանառ, արևածագ, որմնադիր, մարդասպան, տեղակալ, դեղ- դիր, ֆուրհատ, հրծիգ, մթնշաղ, ածականներ՝ գրագետ, հրացայտ, լեղապատառ, հուսահատ, կարկառու, ջրատու, գլխակեր, շա- փահառ, սրսաբուխ, կավածեփ, վշտաբեկ, ուրբաբախոս, հայրա- սպան, մարդասեր, մարդախոյս: Երկրորդ (բայական) բաղադրիչը փոխակերպման դեպքում անորոշ դերբայ է, ձեռք է բերում վերացա- կան անվան կամ գործողության անվան նշանակություն. ենթակա- յական դերբայի դեպքում՝ գործող անձի անվան կամ անցյալ դեր- բայի նշանակություն: Բաղադրության առաջին բաղադրիչը երկ- րորդի լրացումն է: Հաճախ առաջին բաղադրիչը հնչյունափոխվում է՝ սրբասեր, մաքրասեր (սրբություն, մաքրություն սիրող), ազա- տաբաղձ—ազատություն բաղձացող, իմաստասեր և այլն:

Գործողության անվան կամ վերացական իմաստով գոյական- ներ. գերեզարձ (գերիների դառնալը), գինակոչ, այգեթաղ, այգեէտ, այգեփուր, խաղողաբաղ, խաղողուն, գործադուլ, ջրնեղել, սոնա- լոդ, գորտալոդ, փոքրող, երկրաշարժ, արևածագ, արևագալ, լու- տաբաց, ակնուրականչ, տերևաբախ, ծաղկախախ, լուսնահաչ, իմ- տես, ժամանց:

ա) Ուղղականի կամ հայցականի նշանակությամբ՝ սրտամեծ, տիրամեծ, լեղապատառ, տնայեն, ալեկոծ, ձեռնհաս, ձկնորս, մար- դասեր, մատենագիր, բարեգործ, գիշերաշրջիկ, խավարամուտ, երկ- նահաս, ծովասույզ, գրավանառ:

բ) Սեռականի կամ տրականի նշանակությամբ՝ ջրատու, գե- տատու, երկնահույ, երկնամերձ, չափահաս, ուշաբերել:

գ) Բացարձականի նշանակությամբ՝ երկրաբույս, հողածին, երկնահոս, մտահան, պաշտոնանկ, խելքանան (անել, լինել):

դ) Գործիականի նշանակությամբ՝ արեգաբ, ձյունապատ, ջրաղաց, ջրաբույժ, ականջալուր:

ե) Ներգոյականի նշանակությամբ՝ իսավարբեակ, տնասուն, մոխրաքավալ:

4) Ածական + գոյական կաղապարով կազմվում են. ա) գոյականների՝ կիսանդրի, կիսասոված, քերակղզի, նրբերանգ, սեանող, փափկամարմին, կիսագունդ, մոլախոտ, գեղարվեստ, շորքան, լուսաստղ, բրխմար, պաղսիրա, ներմակքարիկ, երկայնքարիկ. բ) ածականների՝ մեծահոգի, մեծագին, բքամիտ, գանգրահե, դեղնագույն, բնշարույր, քույակամ, ախորժահամ, ազատախոն:

5) Ածական + ածական կաղապարով կազմվում են ածականների՝ դեղնակալմիր, կարմրադեղին, կապտականաչ, վիթխարամեծ, ամրապինդ, բարեխառն, փառանախ, փառաղջ, փառածանոթ, փառմանախ, փառեկիրք:

6) Ածական + բայահիմք կաղապարով կազմվում են ածականների՝ բարձրահայաց, բարեկյաց, բարեկեցիկ, շարակամ, շարախոս, շատախոս, խորասույզ, կարնատև, երկարատև, բարեգուշակ:

7) Բայահիմք կամ բայ + գոյական կաղապարով կազմվում են հիմնականում գոյականներ, նաև ածականներ. իբրև գոյականի լըրացում առաջին բաղադրիչը կարող է հանդես գալ նաև դերբայական ձևով. վառելափայտ, ապրելակերպ, ապրելաձև, վարվելաձև, վարվելակերպ, հոսանյութ, փանյութ, հեղանյութ, խոսափող, ենջասենյակ, տեսակետ, դրդապատճառ, ցուցամատ, ածականների՝ խեղդամահ, տանջամահ, կառամահ:

8) Թվական + գոյական կաղապարով կազմվում են ածականների. երկսայրի, չորեկուսի, եռանդամ, քառանդամ, երկանդամ, քառակուսի:

9) Գերանուն + գոյական կաղապարով կազմվում են ածականների և գոյականների. մերակերպ, մերառիպ, մերանյութ, մերագգյա, միագումար, ինքնագույն, ինքնագործ, յուրառիպ, յուրատեսակ, յուրօրինակ, յուրահատուկ, գոյականների՝ ինքնագիր, ինքնաճանալիք:

10) Գերանուն + բայահիմք կաղապարով կազմվում են ածականների և գոյականների. ինքնահավան, ինքնասեր, ինքնանախատ, ինքնագոհ, ինքնամեծար, եսասեր, եսամոլ, ինքնագնաց, ինքնադրվատ, ինքնագով. (գոյականների)՝ ինքնաեռ, ինքնաթիռ, ինքնահոս:

11) Գերանուն + ածական (արմատ) կաղապարով կազմվում են

ածականներ. ինքնավատան, ինքնագույն, ինքնամիտ, յուրակերպ, յուրանման:

12) Մակբայ + բայահիմք կաղապարով կազմվում են ածականների. ա) Առաջին բաղադրիչները մակբայական կիրառություն ունեցող ածականական հիմքեր են. առատահոս, ներատաշ, շքեղագործ, քեթևատան, ծանրաշարժ, մեղմածուփ, լայնատարած, վաղամեռ:

բ) Արմատական մակբայներով կազմվում են ածականներ. հարաբույս, հարագվարք, հարագվարեն, հարափթիք, արագավագ, հեռագետ, հեռաձիգ, հեռահառ, հեռակա, հավերժախոս, հավերժաբույս, հավերժածուփ, հավերժանոս, մշտագնա, մշտաքով, գոյականների՝ ապագա, հեռագիր, հեռախոս, հեռատես:

13) Մակբայ + ածական կաղապարով կազմվում են ածականների. մշտադալար, մշտականաչ, մշտածալիտ, հառանման, հառադալար, վաղածանոթ<sup>13</sup>,

### ԵՐԵՔ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՂԱՎԻՏԵՆԵՐՈՎ ԿԱԶՄՎՈՂ ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԱԲԱՐԳ ԿԱՄ ԲԱԶՄՍԱՐԳ ԲԱՌԵՐ

Ժամանակակից հայերենում հարաբարդ կամ բազմաբարդ են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են երկուսից ավելի բաղադրիչներով<sup>14</sup>: Այդ կարգի բարդությունները մեծ թիվ չեն կազմում: Նման բաղադրությունների կաղապարները բաղադրության երկարության պատճառով կենսունակ չեն, թեև հայերենի բնականազմական հնարավորությունները չեն արգելում նրանց կազմությունը: Գրաբարում նույնպես եղել են նման սակավաթիվ բարդություններ, որոնք հազվագեղ կիրառություն են ունեցել: Ժամանակակից հայերենի հարաբարդ կամ բազմաբարդ բառերը հիմնականում նորակազմություններ են, որոնց որոշ մասը վերաբերում է մասնագիտական-տեղմիտական բնույթի բառապաշարին: Դժվար չէ նկատել նաև, որ երկուսից ավելի բաղադրիչներով կազմված բառերը կազմվում են երկբաղադրիչ բարդությունների՝ նախատիպերի հիման վրա. ինչպես՝ (հեռախոս)-ա-կայան, (երկաթուղ)-ա-ղիծ, (չուսամուտ)-ա-փեղկ, (օղանավ)-ա-կայան և այլն:

ա) Նորաբաղադրիչ կազմություններ. ազգագրագետ, արձանագրագետ, ապրանքաչափագրություն, երկաթուղագիծ, երկաթուղա-

<sup>13</sup> Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 18—25:

<sup>14</sup> Է. Աղայան, Հայոց լեզվի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1976: Ս. Գալստյան, նշվ. աշխատ., էջ 32—33:

կայարան, էլեկտրասահագ, էլեկտրատրանսպորտ, էլեկտրասարձակ-  
նություն, էլեկտրասրտագիր, էլեկտրալուսանկարիչ, լրագրավաճառ,  
լրագրակրպակ, լուսամուտափեղկ, հեռագրավար, հեռագրասյուն,  
հեռախոսակայան, հեռախոսագիր, վիճակագրագետ, վիճակագրա-  
տուն, տնտեսագիտություն, ֆաղափառնախոսություն, օդանավակա-  
յան, օդերևութաբանություն:

բ) Քառաբաղադրիչ կազմություններ. կինոլուսանկարահանում,  
կինոմատեյակերպ, կինոցուցադրահերթ, հեռագրասյունաշարք, է-  
լեկտրաբազմաբազմություն, էլեկտրագազառնակցում, էլեկտրա-  
մեխանիզմաբազմություն, էթիլածխաջրածին, էլեկտրաբազմաբազմ-  
ություն և այլն:

### ԱՇԱՆՑՈՒՄ: ԱՇԱՆՑԱՎՈՐ ԲԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենում նոր բառերի ստեղծման եղանակներից կամ միջոց-  
ներից մեկը ածանցումն<sup>15</sup> է: Ածանցումը բառարմատին կամ հիմ-  
քին ածանցի կամ ածանցների կցումով նոր բառերի կերտումն է: Օր.<sup>1</sup> ան-տուն, դժ-բախտ, ան-տն-ություն, դժ-բախտ-ություն, զին-  
վոր-ական-ություն, ան-հանաչ-ելի-ություն և այլն:

Ժամանակակից հայերենում ածանց է համարվում բառակազ-  
մական այն ձևույթը, որը կցվելով բառարմատին կամ հիմքին,  
փոխում է նրա իմաստը, կազմում է նոր բառ, նոր իմաստով: Այս-  
պիսով, ածանցը ինքնուրույն, անկախ գործածություն չունեցող,  
բառային իմաստ արտահայտող բառակազմական մասնիկ է, որ  
միանալով հիմքին կամ բառարմատին, փոխում է նրա իմաստը:  
Ածանցի բառային իմաստը դրսևորվում է միայն այն դեպքում, երբ  
այն կցվում է բառին (հիմքին) և դառնում է նրա մի մասը:

Ածանցի իմաստն արտահայտվում է բառերի մեջ այս կամ  
այն ածանցավոր բառի ձևեր բերած ընդհանուր ածանցային իմաս-  
տով: Ածանցի բառակազմական իմաստը նրանով կազմած բառե-  
րում դրսևորված բառային ընդհանուր իմաստն է: Օր.<sup>2</sup> տուն և ան-  
տուն, բախտ և դժբախտ. ան և դժ ածանցներով կազմում են բո-  
լորովին այլ նշանակությամբ բառեր՝ տուն և բախտ հիմքերի հա-  
մեմատությունը: Նույն ձևով նաև՝ ամառ և ամառանոց, գոգ և գոգ-

նոց, ֆաղափ և ֆաղափալարություն, ժամանակ և ժամանակավոր  
և այլն:

Բառերի նման ածանցները չինում են՝ մենիմաստ և բազմի-  
մաստ: Մենիմաստ են կոչվում այն ածանցները, որոնք կցվելով  
բառին՝ բերում են միայն ածանցային մեկ իմաստ: Օր.<sup>3</sup> հակ(ա)-  
նախածանցն ունի միայն՝ դեմ, ընդդեմ, հակառակ իմաստը. ինչ-  
պես՝ հակադիր, հակազգ, հակախաղ, հակաճեղափոխական, հա-  
կանիչ, հակակշռել, հակառանկային և այլն:

Բայց ածանցները հիմնականում բազմիմաստ են. օր.<sup>4</sup> ոց, նոց  
ածանցն ունի մոտ 7 իմաստ. 1) դպրոց, ծաղկոց, ծաղկանոց (ցույց  
և տալիս մի բանի տեղը), 2) ամառանոց, ձմեռանոց (այն տեղը,  
որտեղ անց են կացնում), 3) գիշերանոց, մատանոց, գոգնոց, ակ-  
նոց (հագուստ, առարկա, որ մարդ կրում է), 4) ութնոց, տասնոց,  
նարյուրանոց, հինգանոց, երեքանոց (դրամանիչ կամ խաղաթղթի  
թիվ), 5) խառնոց, սղոց, կտրոց, էտոց (կտրող գործիք), 6) փր-  
վարոց, խշխշոց, սուլոց (գործողության անուն, ձայն), 7 հավխո-  
սոյ, արևմտոց (ժամանակի անուն) և այլն: Խոսքային յուրաքան-  
չյուր կիրառության մեջ բոլոր ածանցներն էլ մենիմաստ են:

### ԱՇԱՆՑՆԵՐԻ ԽՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ժամանակակից հայերենի ածանցներն ըստ իրենց իմաստի և  
ձևի հարաբերության դասակարգվում են հավանուն, հումանիչ և  
հականիչ ածանցների, Որպես համաժամանակյա լեզվական կար-  
գեր. ածանցների համանունության, հոմանշության և հականշու-  
թյան համար հիմք են ծառայում միայն լեզվի զարգացման արդի  
փուլում, այսինքն՝ ժամանակակից հայերենում արտահայտած, ար-  
դի լեզվական ըմբռնողությամբ գիտակցվող բառակազմական ի-  
մաստները:

ա) Համանուն ածանցներ: Համանուն են կոչվում այն ածանց-  
ները (նախածանց, վերջածանց), որոնք թեև ունեն միևնույն հնչյու-  
նական կազմը, բայց նրանց արտահայտած ընդհանուր, ածանցա-  
յին իմաստները դուրս են գտնվում իմաստային մեկ ընդհանուր  
դատուից և արդի լեզվական ըմբռնողությամբ գիտվում են իբրև  
ապրրիք ածանց-միավորների: Ինչպես և բառային համանունները,  
համանուն ածանցները կա՛մ ծագել են նույն բազմիմաստ ածան-  
ցից, նրա իմաստների հետագա զարգացման և խիստ տարբերակ-  
ման շնորհիվ, կա՛մ էլ առաջացել են տարբեր ծագում ունեցող ա-  
ծանցների հնչյունական պատահական նմանությունից: Օրինակ՝

1. Ապ— (ժխտման իմաստով)— ապաբախտ, ապաշնորհ, ա-  
պօրինի, ապառդյուն.

<sup>15</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 5. 2, էջ 180—230. Գ. Սեպ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 172—182: Ա. Մալախյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 243—379: Ժամանակակից հայոց լեզու, 5. 1-ին, 1979, էջ 337—481, Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

2. Ապ— (հեռացման, բաժանման, ավարտման, կատարման իմաստներ) — ապացույց, ապաբարց:

1. Համ(ընդհանուր) — համալսարան, համագգեստ, համախոն.

2. Համ (ամբողջովին) — համբերել, համտեսել:

1. Վեր (վրա) — վերագրել, վերակացու, վերահսկել, վերադիր:

2. Վեր (կրկին, վերստին, նորից, երկրորդ անգամ) — վերադարձ, վերագնահատել, վերակենդանանալ:

1. Անի (շատ բան ունեցող, հարուստ, որևէ բան ունեցող) — գեղանի, ճազանի, լեզվանի, երկհարկանի, երկերեսանի, շոբոտանի, շոբոտանի, հինգհատարանի, շոբաշխանի:

2. Անի (ցույց է տալիս հավաքական իմաստ, միանման առարկաների ամբողջություն) — նամականի, առածանի, տեսականի:

բ) Հոմանիշ ածանցներ: Հոմանիշ են կոչվում տարբեր հընչյունական կազմ ունեցող այն ածանցները, որոնք ունեն մոտ կամ նույն ածանցային իմաստներ: Հոմանիշ ածանցները իրենց բառակազմական իմաստներով մոտ են կամ նույնական<sup>16</sup>:

ա) Հոմանիշ կարող են լինել և հոմանշային հարաբերության մեջ կարող են մտնել միայն նույն խոսքի մասեր կազմող ածանցները կամ ածանցների բառակազմական իմաստները. օր. —բար, —պես, —որեն՝ արդարբար, արդարպես, արդարորեն, —ական, —ային՝ անասնական, անառնային, եղեռնական-եղեռնային. — ակիկ-ույկ՝ տետրակ, մատենիկ, գրույկ և այլն:

բ) Նույն հիմքերից հոմանիշ ածանցներով կազմվող բաղադրությունները (բառերը) կազմում են բառային հոմանիշների շարքեր. ինչպես՝ հերոսաբար-հերոսապես-հերոսորեն. գողաբար-գողունի. անմեղաբար-անմեղորեն-անմեղուց, արտաքնաբար-արտաքստ. անձկագին-անձկալի. տխրագին-տխրավետ. հեշտագին-հեշտին. կամ՝ ոսկեգործ-ոսկերիշ. մրսկան-մրսկոտ. գործածական-գործածելի. լեռնական-լեռնցի. հանդերձանք-հանդերձեղեն. դրվատիք-դրվատանք-դրվատություն. հեծկտանք-հեծկտյուն-հեծկտաց և այլն:

գ) Տարբեր հիմքերից հոմանիշ ածանցներով կազմվող բառերում (բաղադրություններում) հոմանշությունը զրոսերվում է այդ ածանցների ընդհանուր իմաստներում. ինչպես, ցրինակ՝ —որդ, —իշ, —գործ, —արար. վարորդ, ցուկերիշ, լամպագործ, խոտահարար:

Ածանցների հոմանշությունն արտահայտվում է ինչպես երկանդամ, այնպես էլ՝ եռանդամ և բազմանդամ շարքերում: Ըստ որում, նույն ածանցը կարող է հոմանշային հարաբերության մեջ

մտնել և հանդես գալ տարբեր հոմանիշ ածանցների, ինչպես նաև նույն և տարբեր հիմքերի հետ, կազմելով առանձին շարքեր, ինչպես, օրինակ՝ (ա)բար, —(ա)կան, —ակի(երևութաբար-երևութական-երևոյթակի).

—(ա)բար, —(ա)պես, —որեն, (ակներևաբար —ակներևապես —ակներևորեն).

(ա)բար-ացի (հարեանաբար-հարեանացի).

(ա)բար-եցի (հայաբար-հայեցի).

(ա)բար, —(ա)վարի — գողաբար — գողավարի.

(ա)բար-ացի (հարեանաբար-հարեանացի).

(ա)բար-ուց (տարապարտաբար-տարապարտուց).

—անք, —իք, —ություն (դրվատանք-դրվատիք-դրվատություն).

արան—(ա)նոց—(ա)ստան (հանգստարան-գերեզմանոց, շիրմաստան, մահաստան):

գ) Հականիշ ածանցներ: Հականիշ են կոչվում այն ածանցները, որոնք ունեն հակադիր բառակազմական իմաստներ: Ինչպես և համանուններն ու հոմանիշները՝ հականիշ ածանցները նույնպես հակադրվում են միևնույն խոսքի մասերին պատկանող բաղադրություններում: Այս կարգի ածանցների մյուս առանձնահատկությունն այն է, որ հականշային հարաբերության մեջ կարող են մտնել միայն նախաածանցները: Հականշությունն ընդգրկում է ածանցների մի շնչին մասը միայն: Հականիշներ են հետևյալ ածանցները. արտներ, գեր-քեր, համ(հոմ)—հակ, վեր-ստոր. արտահանել-ներմուծել, արտագաղթ-ներգաղթ, արտալեզվական-ներլեզվական, գերակատարել-քերակատարել, գերաբույնություն-քերաբույնություն, գերածախս-քերածախս, գերասնել-քերասնել, գերան-քերան, վերերկրյա-առերկրյա, հակազգային-համազգային, հակադրություն-համադրություն, հականիշ-համանիշ, հոմանիշ, հակամիտ-համամիտ:

## ԱՅԱՆՑՆԵՐԻ ՄԱԳՈՒՄԸ

Ըստ ծագման ածանցները լինում են բնիկ և փոխառյալ՝ Բնիկ են կոչվում այն ածանցները, որոնք առաջացել են հայերենի զարգացման ընթացքում՝ լեզվի սեփական նյութի հիման վրա: Փոխառյալ են կոչվում տարբեր ժամանակներում այլ լեզուներից փոխառված ածանցները՝ որոնց թիվը խիստ սակավ է հայերենում:

Ժամանակակից հայերենի ածանցները ծագումով կամ առանձին բառեր, կամ էլ քերականական այլևայլ մասնիկների՝ ձևույթների են: Հայերենի բնիկ ածանցներն առաջացել են հետևյալ եզանակներով. բարդ բառերի բաղադրիչների իմաստների մթազման, հո-

<sup>16</sup> Ս. Գալստյան, նշվ. աշխատ., էջ 250—303:

լովական, խոնարհման, հոգնակի վերջավորութունների փոխարկման, ինչպես նաև պարզ բառերի արհեստական ձևափոխման միջոցով<sup>17</sup>:

Նկատելի է նաև, որ լեզվի զարգացման ընթացքում որոշ բազադրութուններ զրկվում են իրենց բաղադրիչների իմաստների պատճառաբանվածությունից, նրանց մեկ կամ ավելի բաղադրիչների հնչյունափոխվելով՝ կորցնում են իրենց ինքնուրույնությունը, այլևս չեն գիտակցվում իբրև ինքնուրույն միավորներ և ընկալվում են արդի լեզվական ըմբռնողությամբ իբրև պարզ կամ արմատական բառեր:

Ի լեզվի զարգացման ժամանակակից փուլում այլևս չեն գիտակցվում մի շարք ածանցներ. ինչպես, օրինակ՝ անդ (եռանդ, արգանդ, մարմանդ), ախ (շաղախ, ուրախ), աղ (կախաղան, փակաղակ) և այլն:

Ածանցների որոշ մասը առաջացել է ինքնուրույն բառերից, երբ վերջիններս կարգնելով իրենց բառական, կոնկրետ իմաստները՝ ձևեր են քերել ածանցաչին, ընդհանուր բառակազմական իմաստներ, զրկվում են բառային անկախությունից: Արմատական բառերի ածանցների փոխարկման գործընթացը կատարվում է նաև այժմ՝ լեզվի զարգացման արդի փուլում:

Ժամանակակից հայերենում որոշ արմատական բառերի ածանցման գործընթացը գեոռես չավարտվելով՝ լեզվում նրանք ունեն երկնակի գործածություն՝ իբրև ածանցներ և իբրև արմատական բառեր: Օր.՝ գործ ձևույթը գործածվում է և՛ իբրև անկախ բառ, և՛ իբրև ածանց. օր.՝ գործարան, գործադուլ, անգործ, ձեռագործ, որտեղ գործ-ը արմատ է, բայց՝ լամպագործ, կարիքագործ, հողագործ, կահույքագործ, որտեղ գործ-ը ածանց է:

Նույն ձևով նաև քերականական մի շարք ձևույթներ միաժամանակ գործածվում են նաև իբրև ածանցներ. ինչպես, օրինակ՝ սեռականի ի-ն (աղի, ջրի, տմառքի, մորթի, տնկի, խնձորի, կաղամախի), գործիականի ուվ, բ հոլովիչների (կաթնով, բանով, համով, զինով, զոռով, անձամբ, մասամբ, պատահմամբ), հարակատար և ենթակայական գերբայների ան, ող վերջավորությունները (խմած, հարբած, սիրած, կոտորած, հատված, առաջնորդող, ծնող, ծառայող, աշխատող, հորատող, ընտրող, ընթերցող, մատուցող):

Ի Արմատական բառերը ածանցների են փոխարկվում հնչյունափոխությամբ կամ առանց հնչյունափոխության:

Ի Որոշ արմատական բառեր բաղադրությունների մեջ հնչյունա-

փոխվելով՝ կորցրել են իրենց բառական անկախ նշանակությունը՝ և տարբեր բառերի մեջ հանդես են գալիս ձևական, ընդհանուր նշանակությամբ: Առանձին բառերի համաբանությամբ, դրանց կազապարնեղով հետազայում կազմվում են նորանոր բառեր: Օրինակ՝ վար(ալար) վերջածանցը ծագել է բեռ, բար (բ-ն երկու ձայնավորների միջև դարձել է վ), լուսաբեռ>լուսաբար>լուսավար (լուսա-տար): Բեռ(ել) արմատը ունի նաև՝ կրել, վրան կրել՝ ունենալ իմաստը: (ա)վոր ածանցը հետագայում դառնում է կենսունակ (արտադրողական) վերջածանց. ինչպես՝ զինվար, բանվար, գործադուլավար, փառավար, հեռավար, մտավար, որոնց մեջ արտահայտվում է մի բան ունեցող բառակազմական իմաստ: ՈՏ վերջածանցը ծագել է հոտ բառից. հիվանդհոտ>հիվանդոտ, ծխհոտ>ծխոտ. սըրանց համաբանությամբ հետագայում կազմվում են բազմաթիվ նոր բաղադրություններ. աղառա, մրոռ, յուղառ, ժանգոռ, ցեխառ և այլն: Առ վերջածանցը առաջացել է հառ (հատանել) արմատից. բեռհառ>բեռառ, փայտահառ>փայտառ (բարբառ. փետառ), գրլխահառ(ել)>գրլխառ(ել), ինչպես նաև՝ կոնատ, քրատ, պոչատ, երկառել, մասնատել և այլն:

Առանց հնչյունափոխության պարզ (արմատական) բառերը ածանցների են վերածվում, երբ բարդ բառի բաղադրիչներից մեկը կորցնելով իր բառային իմաստը, դադարում է գիտակցվել իբրև անկախ բառ, ստանում է ածանցաչին, ձևական, ընդհանուր նշանակություն, հանդես է գալիս նոր բառերի կազմության մեջ իր այդ բառակազմական իմաստով: Այսպես՝ արդ ածանցը, որ զիարդ գրաբարյան բաղադրության մեջ նշանակում է՝ ձև, կերպ, հորինվածք, կազմություն, որպես ածանց հանդես է գալիս հետևյալ բառերում՝ խորանարդ, կոեկարդ, զմբբարդ, սեղանարդ, բամբարդ:

Որոշ դեպքերում բարդ բառի բաղադրիչներից մեկը ածանցի է վերածվում ժամանակի ընթացքում նրա իմաստի աստիճանական փոփոխման շնորհիվ: Այսպես՝ հան հիմնական (արմատական) ձևվույթի ածանցի վերածման փուլերը որոշակիորեն նկատվում են հետևյալ բառերում. տնահան, տեղահան, գլխահան, խելահան, փետրահան, կոնահան (անել) բաղադրություններում պահպանվում է նրա արմատական, բառային ինքնուրույն իմաստը. միջին դիրք է զբաղում, անցման ձև է ներկայացնում՝ բարբառային արմատահան, տակոահան (անել), տակահան (փորել), արդեն ածանցի է վերածվել՝ տակահան (մոտանալ), գետահան (կտրել), ձևկահան (խրվել), զիշերահան, զիշերահանց, առավառահան, շապկահան (զուրս գալ) և այլ բաղադրություններում: Կամ՝ վար, վարի (հա-

<sup>17</sup> Մ. Արեղյան, Նշվ. աշխատ., էջ 180—193:

դաֆավարի, մարդավարի) ածանցն առաջացել է վար, արմատական ձևույթից. ինչպես՝ փարեղ, վարձ, վարմունք:

Հայերեն ֆաղաֆավարություն, ֆաղաֆավարել բառերը կազմվել են հունարենի նմանողությամբ, իբրև պոլիտեյա(պոլիս), պոլեառ բառերի թարգմանություն. ֆաղաֆավար նշանակում է՝ ֆաղաֆի վարիչ և ֆաղաֆացու ձևով վարվող. այդ վերջինի իմաստի համարանություն կազմվում է աշխարհավար(ել), աշխարհավարություն, գեղավար(ի), հայավար(ի), բուրժավար(ի), մարդավարի, տնավարի, տղավարի, գծավարի, մեծավարի, իշավարի, արջավարի, վայրենավարի:

Նույն եղանակով, բառային իմաստի մթազնման շնորհիվ առաջացել են՝ բար, օրեն, պես, գույն և այլ վերջածանցներն ու նախածանցները:

Վծանցներ են առաջանում նաև երկու ածանցների միացումից, երբ դրանք ստանում են նոր իմաստ (և ըմբռնվում են իբրև մեկ ամբողջություն, մեկ ածանց-միավոր) ու կ և ու ածանցների միացումից առաջացել է կոտ (ուկ+ոտ) ածանցը. ինչպես՝ վախկոտ, պարծենկոտ, ցախկոտ՝ կակ, կեկ, կիկ, կուկ ածանցները առաջացել են՝ կակ<ուկ+ակ, կեկ<կեակ<իկ+եակ, կիկ, կիկ<իկ+ակ. օր.՝ պատանեկիկ (<պատանեակ+իկ), սեկակ (<սեուկ+ակ, սեվիկ+ակ), մանրկեկ (<մանրիկ+եակ>մանրիկեակ>մանրիկեկ). ակի ակ+ի. թեթևակի, մասնակի, շեղակի, ուղղակի. աճ<ան+ք, նախերգանք, բերկրանք, վիրավորանք, վաժ<վաժ+ք, թխվաժք, պատմվաժք, հյուսվաժք. անակ<ան+ակ, գապանակ, ուժանակ, մրցանակ, շրջանակ և այլն:

Հայերեն ածանցների ծագման մյուս աղբյուրը քերականական ձևույթներն են՝ գրաբարի հոլովական և խոնարհման, դերբայական ձևերը, հոգնակի կազմության մասնիկները, որոնք արդի լեզվական ըմբռնողությամբ լինելով քարացած, մեռած ձևեր, ժամանակակից հայերենում վեր են ածվել ածանցների. այսպես՝ լգրաբարյան Է- հոգնակի կերտ մասնիկը արդի հայերենում գիտակցվում է իբրև ածանց. օր.՝ զիբք, վազք, հայրենիք, հավք:

Նույն ձևով՝ գրաբարի ումն վերջացող բառերի հոգնակի ուղղականի վերջավորությունը՝ մունք. բաժանմունք, մաժամունք, պաժամանունք: Գրաբարի անցյալ դերբայի վերջավորությունը՝ եալ յալ. անցյալ, մեռյալ, հանգուցյալ, կորուսյալ և այլն:

**ՓՈՒԱՌՅԱԼ ԱՄԱՆՑՆԵՐ**

Վծանցների փոխառությունը հազվադեպ երևույթ է: Հայերենում սակավ են այդ կարգի ածանցները: Նման ածանցները սովոր-

աբար նախ լեզվի մեջ են անցնում փոխառյալ բառերի կազմում: Սովորաբար փոխառյալ բառերի մեջ նրանք նախապես ածանց չեն գիտակցվում, որովհետև բառը փոխ է առնվում իր կառուցվածքային ամբողջությամբ: Հետագայում, եթե օտարազգի բառի ածանցը բառակազմական ունակություններ է ցուցաբերում փոխառու լեզվում, այսինքն՝ այդ ածանցով այդ լեզվում կազմվում են նորանոր բառեր, այդ դեպքում միայն ավելի ածանցը տարրերով և ըմբռնվում է իբրև ավելի լեզվի փոխառյալ գործուն ածանց: Վ

Գրաբարյան շրջանից հայերենում գործածական է պարսկերենից փոխառյալ -ունի ածանցը, որ ցույց է տալիս իգական սեռի անուն. ինչպես, օրինակ՝ բժշկունի, ընկերունի, ուսանողունի, աշակերտունի, ուսուցչունի, հայունի, վրացունի, ինչպես և հնից ժառանգած՝ թագունի, դժխունի, իշխանունի բառերում: Վ

Պարսկերենից գրաբարյան փոխառություն է նաև դծ- նախածանցը. դծբախտ, դծգոն և այլն, որը սակայն ժամանակակից հայերենում արտադրողական չէ: Վ

Հայերենի նորագույն փոխառությունների մեջ հաճախ հանդիպող իզմ, իսա, իա, (ա)ցիա ածանցները չի կարելի փոխառյալ համարել՝ որովհետև դրանք հայերենի բառակազմության մեջ որևէ դեր չեն խաղում, չեն մասնակցում ժամանակակից հայերենի բառակազմությանը. բացառություն կարող է կազմել միայն իսա ածանցը, որով կազմված են թառիսա, էյամանչիսա և նման մի քանի բառեր:

**ԱՄԱՆՑՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ**

Ժամանակակից հայերենում ածանցներն ըստ բառակազմական գործունեության լինում են կենսունակ (արտադրողական) և անկենսունակ (անարտադրողական):

**ԿԵՆՍՈՒՆԱԿ (ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ) ԱՄԱՆՑՆԵՐ**

Կենսունակ (արտադրողական) են կոչվում այն ածանցները, որոնք ժամանակակից հայերենում ակտիվորեն մասնակցում են ածանցմանը՝ նոր բառերի կերտմանը: Այդ առումով էլ այդ կարգի ածանցները համարվում են նաև արտադրողական, այսինքն՝ զրանցով կազմվում են մեծ թվով բառեր: Կենսունակ ածանցներն էլ ըստ իրենց բառակազմական ակտիվության աստիճանի լինում են՝ առավել կենսունակ և օտկավ կենսունակ: Գ

Առավել կենսունակ ածանցներ են՝ ա) նախածանցներից՝ աճ-



(անագատ, անագնիվ, անաղմուկ, անամոթ), **գեւ-** (գեւադաս, գեւ-  
 բաժախս(ել), գեւակաաբել, գեւրնական), **հակ-** (հակագրոհ, հա-  
 կադրույթ, հակադիր, հակահեղափոխական), **համ-** (համագլուխ-  
 ցի, համանիշ, համաբանություն, համագումար), **ներ-** (ներդեղ,  
 ներգաղթ(ել), ներագրել, ներգործել) *և այլն, բ) վերջածանցներից՝*  
**-ական** (ներափոխական, դպրոցական, աշակերտական, անային),  
**-յան** (ծննդյան, արևելյան, նախապատերազմյան, ազգամիջյան),  
**-ություն** (ագություն, մարդկություն, խիզախություն, հերոսու-  
 թյուն), **-ուհի** (աշակերտուհի, ուսանողուհի, հերոսուհի, երգչուհի),  
**-բար** (հերոսաբար, անգիտակցաբար, թյուրիմացաբար, մայրա-  
 բար), **-որեն** (անկեղծորեն, ծովորեն, շոայրորեն, ազանորեն), **-որդ**  
 (հանապարհորդ, դիմորդ, լողորդ, շմշկորդ), **-ացի** (խելացի, գյու-  
 դացի, աֆրիկացի, երևանցի) *և այլն: Համեմատաբար սակավ կեն-  
 սունակ ածանցներ են՝* -ածո (հանածո, շափածո, բրածո, դրածո),  
**-ոն** (կտրոն, բափոն, ծեփոն, գեղոն), **-ստան** (Հայաստան, Վրաս-  
 տան, Պարսկաստան, Ղազախստան) *և այլն:*

### ԱՆԿԵՆՍՈՒՆԱԿ (ԱՆԱՐՏԱԳՐՈՂԱԿԱՆ) ԱՄԱՆՅՆԵՐ

Քանկենսունակ (անարտադրողական) են կոչվում այն ածանց-  
 ները, որոնք լեզվի զարգացման ժամանակակից փուլում չեն մաս-  
 նակցում (կամ համարյա չեն մասնակցում) ածանցմանը, որ բա-  
 ռերի կերտմանը: Այս կարգի ածանցների առանձնահատկությունն  
 այն է, որ նրանցով թեև այժմ նոր բառեր այլևս չեն կազմվում,  
 բայց ժամանակակից լեզվաբանությունում դիտակցվում են իր-  
 րև ածանցներ:

Անկենսունակ (անարտադրողական) են՝ **դծ-** (դծբախտ, դծգոհ,  
 դծգույն), **-աշ** (մատղաշ, բրվաշ), **-անակ** (մրցանակ, գանձանակ,  
 զսպանակ), **-եմ** (նշանդեմ, ցորենեմ, խաչօրհնեմ), **-գաբ** (խե-  
 լագաբ, ցավագաբ, լեզվագաբ), **-կեկ** (լայնկեկ, հաստկեկ, մանր-  
 կեկ), **-կեն** (ծակտկեն, հյուսկեն, ցանցկեն), **-կուն** (դիմացկուն,  
 խաղաղկուն, ծիծաղկուն), **-ված** (ամպամած, խավարամած, մթա-  
 մած), **-դի** (մեծդի), **-ոտի** (հնոտի, սևոտի, օտարոտի), **-չյա**, **չեմ**  
 (ավետչյա, առնավաչյա, կարողչեմ, կարողչեմ), **-ույմ** (կանույմ,  
 պիտույմ, հանույմ), **-ունի** (ծերունի, տերունի, արհունի), **-ունչ**  
 (անտերունչ, անմտունչ), **-ունկ** (խորունկ) *և այլն:*

### ԱՄԱՆՅՆԵՐԻ ՁԵՎԱՐԱՆԱԿԱՆ ԳԱՍՅԱՐԳՈՒՄԸ

Ածանցների ձևաբանական դասակարգումը կատարվում է նը-  
 բանցով կազմված բաղադրությունների խոսքիմասային պատկա-

նելություն համաձայն, այսինքն տվյալ ածանցի՝ այս կամ այն խոս-  
 քի մասին պատկանող նոր բառեր կերտելու բառակազմական կա-  
 բողություն հիման վրա:

{Ժամանակակից հայերենի ածանցների բառակազմական ա-  
 ռանձնահատկությունն այն է, որ նրանք՝ հիմնականում մասնակ-  
 ցում են որոշակի խոսքի այս կամ այն՝ մասին պատկանող բա-  
 ղադրությունների կազմությանը: Ըստ այդմ էլ նրանք ստորաբա-  
 ժանվում են՝ զոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ *և*  
 բայականակերտ ածանցների:

Հատկանշական է, որ նույն ածանցը երբեմն կարող է մասնակ-  
 ցել մեկից ավելի խոսքի մասի պատկանող բաղադրությունների  
 կազմությանը: Այդ ածանցները սովորաբար ունենում են մեկ հիմ-  
 նական բառակազմական նշանակություն, մյուս դեպքերում նրանց  
 բառակազմական կիրառություններն ավելի սահմանափակ են: Հա-  
 ճախ այդ կարգի ածանցները, որոնք հանդես են գալիս տարբեր  
 խոսքի մասերին պատկանող բաղադրություններում, վեր են ած-  
 վում համանուն ածանցների: Անհրաժեշտ է նշել նաև, որ ածակա-  
 նակերտ որոշ ածանցներով կազմված բաղադրություններ ձևոք են  
 բերում նաև զոյականի խոսքիմասային իմաստ, կազմում զոյական-  
 ներ. ինչպես՝ երկաթուղային, հարվածային, դպրոցական *և այլն:*

Միայն մեկ խոսքի մասի պատկանող բաղադրություն կազմե-  
 լու մեզ կայունություն են հանդես բերում որոշ բայական, ինչպես  
 նաև որոշ մակբայական, զոյականական ածանցները:

ա) Գոյականակերտ ածանցներ: Գոյականակերտ են կոչվում  
 այն ածանցները, որոնք որովելով տարբեր հիմքերի վրա՝ կազմում  
 են զոյական անուններով Գրանք հիմնականում վերջածանցներ են.  
 -ալիք, -ելիք, խաղալիք, հավատալիք, ստանալիք՝ ըմպելիք, վառե-  
 լիք, -անակ, ժամանակ, շրջանակ, ցուցանակ, -անիք, հարսանիք,  
 արժանիք, մատանիք, -անք, կշտամբանք, հարգանք, լուգանք, -ա-  
 նոց, խոհանոց, զորանոց, վարսավիրանոց, -արան, լսարան, տպա-  
 բան, ննջարան, -արք, գործարք, մեծարք, լուծարք, -ենիք, հայրե-  
 նիք, ֆաղցրավենիք, -երք, սանդեք, լեղերք, հրավերք, -եք, ար-  
 մեք, ածօրհնեք, -իւ, կարթիւ, խաշիւ, -իւք, խմիչիք, բանիչիք, -իք,  
 գործիք, կեղծիք, շարիք, -մունք, ասումնք, հուզումնք, զգացումնք,  
 -լսիք, շարաբօրչակ, նախօրչակ, բազմանատրչակ, -յուն, բարախ-  
 յուն, մանչուն, ղողանչուն, -ոտիք, կնոտիք, փորոտիք, -ոց, էտոց,  
 սղոց, ձեռնոց, կապոց, -չեք, կարողչեք, ավետչեք, բանողչեք, -ված,  
 վածք, առեղծված, հավելված, այրվածք, գործվածք, -ույք, կա-  
 նույք, պիտույք, հանույք, -ունիք, արհունիք, -ունք, սկզբունք, ար-  
 բունք, ծաղկունք, -ություն, բազմություն, կազմություն, մարդկու-

բյուն, -ուհի, մարգունի, վարժունի, աշակերտունի, օսանողունի, -ուս, գործուղում, դրվագում, խոշտանգում, -ույթ, հենչույթ, բա-  
նույթ, ձևույթ, -ույկ, գրքույկ, -ույց, այտույց, կառամատույց, կա-  
նույց, -ցի(ացի)-եցի, լեռնցի, գյուղացի, տնեցի, -ք, հոսք, լիցք,  
խորք: Գոյական անուններից գոյական են կազմում -գործ, կարքի-  
դագործ, լամպագործ, -պան, ձիապան, ուխտապան, -ստան, աշ-  
գեստան, վարդապան, ինչպես նաև նվագական, փաղաքշական  
ածանցները՝ -ակ, տնակ, ծովակ, եավակ, -իկ, բույրիկ, մայրիկ,  
հայրիկ, -ուկ, թգուկ, հորթուկ և այլն:

բ) Ածականակերտ ածանցներ: Ածականակերտ են կոչվում այն  
ածանցները, որոնք դրվելով տարբեր հիմքերի վրա կազմում են  
ածական անուններ: Ալի, ելի, հիանալի, բաղձալիք բուծելի, գմայ-  
լելի, -անի, լեզվանի, երկերեսանի, միտտանի, -արիմ, -երիմ, հա-  
վատարիմ, մտերիմ, -գար, խելագար, մտագար, լեզվագար, -ե,  
մարմարե, կաուչուկե, բամբակե, -եղ, գորեղ, հանճարեղ, քիկնեղ,  
-զան, այլագան, գունագան, -կեն, ցանցկեն, հյուսկեն, -կոտ, վախ-  
կոտ, պահանջկոտ, պարծենկոտ- կուն, դիմացկուն, խաղացկուն,  
-յա, մետաղյա, արծաթյա, բրդյա, -ոտ, ժանգոտ, մագոտ, խան-  
դոտ, -վետ, սիզավետ, ծաղկավետ, շահավետ, -ունակ, պարզու-  
նակ, գոհունակ, գործունակ. նախածանցներից՝ ան-, անտուն, ան-  
արյուն, անմահ, ապ-, ապերշանիկ, ապերասան, դժ-, դժբախտ,  
դժգոհ: Ածական անուններից ածական են կազմում հետևյալ ա-  
ծանցները՝ -ժեռ (կարմրաժեռ, մթնաժեռ), -չիկ (թխիկ, կարելիկ,  
փափիկ), -որակ (ֆաղցրորակ, բարորակ, շարորակ), -վուն (հի-  
մարավուն, կլարավուն, երկարավուն):

Քվական անուններից դասական թվականներ են կազմում՝  
-բորդ, -երորդ ածանցները (երկրորդ, երրորդ, հինգերորդ, հա-  
զարերորդ), բաշխական և կոտորակային թվականներ է կազմում  
-ական ածանցը (մեկական, երկուական, տասական և երկու ե-  
րորդական, երեք շորորդական):

գ) Մակրայակերտ ածանցներ: Մակրայակերտ են այն վերջա-  
ծանցները, որոնք դրվելով տարբեր հիմքերի վրա՝ կազմում են  
մակրայաներ:|

-բեր, -պես, -որեն, միասնաբար, ապօրինաբար, ընկերաբար,  
կանոնավորապես, մասնավորապես, մոտավորապես, տրամագծո-  
րեն, հետևողականորեն, ստեղծագործորեն, -գին, կարոտագին,  
սպառնագին, ջերմագին, բանկագին, -իվ, խտաիվ, մեղմիվ, նըշ-  
աիվ, -ովին, հիմնովին, կամովին, գլխովին, -պատիկ, հնգապա-  
տիկ, բազմապատիկ, կրկնապատիկ և այլն:

դ) Բայական ածանցներ: Ժամանակակից հայերենի բայական

ածանցներն են՝ ա) սոսկածանցներ -ան- առաջանալ, բարկանալ,  
մարմնանալ, -են- (հագենալ, պարծենալ, մեհենալ), -ե- (գանել,  
մտնել, ելնել), չը- (փախչել, կառչել, թռչել), որոնցով կազմված  
են ինչպես շեղոր, այնպես էլ ներգործական սեռի բայեր (ժամ. հա-  
յկրենում գործուն չէ). բ) պատճառական ածանցներ -ացն- (խա-  
ղացնել, բարկացնել, առաջացնել), -եցն- (խաղաղեցնել, պարեց-  
նել, ֆենցնել), -ցն- (մտցնել, թոցնել, փախցնել), որոնցով կազ-  
մվում են պատճառական բայերը. գ) կրավորական -վ ածանցը  
(սպանվել, կրակվել, մորթվել, հագնվել, գանգառվել, զբաղվել),  
որով կազմվում են ինչպես կրավորական, այնպես էլ կրավորա-  
կերպ շեղոր բայերը, դ) -առ, -ոտ, -տ բաղմապատկական ածանց-  
ները (կտրատել, ցատկոտել, կտրտել): Ժամանակակից հայերենում  
պատճառական, կրավորական և բաղմապատկական ածանցները  
գործուն են:

### Մի ֆանի խոսքի մաս կազմող ածանցներ

Որոշ ածանցներ հանդես են գալիս մեկից ավելի խոսքի մա-  
սերի կազմության մեջ. այսինքն իրենց հիմնական խոսքիմասա-  
կերտ գործառույթից բացի՝ ունենում են նաև մեկ կամ մի քանի  
այլ գործառույթներ: Այդ կարգի ածանցները հիմնականում լինում  
են միաժամանակ գոյականակերտ ու ածականակերտ, ածակա-  
նակերտ ու մակրայակերտ, գոյականակերտ, ածականակերտ և  
մակրայակերտ:

ա) Գոյական ու ածական կազմող ածանցներ.

-ածո, շափածո, պահածո, դրածո, հալածո (օգտակար հա-  
նածո), բրածո, պեղածո, շինածո, -ածու, հավաքածու, ձեռնածու,  
բեկնածու, կատարածու, հոգածու, շինծու, -ակ, գնդակ, նոնակ,  
նեռակ, բաժակ, ազդակ (գոյական), գիտակ, միակ, ներդաշնակ,  
նախողակ (ածական), -ական (հիմնական, երկրորդական, գիտա-  
կան (հիմնականում՝ ածական), ազնվական, գաղթական, գիտե-  
կան, վկայական, վաճառական (գոյական), -ային, հյուսիսային,  
հարավային, ֆաղաֆային (հիմնականում՝ ածական), երկաթուղա-  
յին, հարվածային, կարգային (նաև՝ գոյական), -ան, դուրեկոտ,  
եզնդան, կոկոսան (ածական), իշխան, փական, խթան (գոյական),  
-ատ, բացատ, խրամատ, փայտատ, խոխորատ (գոյական), ծայ-  
րատ, տեհատ, թևատ (ածական), -ացի, ֆաղաֆացի, գյուղացի,  
երևանցի (գոյական), տառացի, բառացի, իրավացի (ածական),  
-ի, ծիրանի, տանձի, խնձորի, կաղնի (գոյական), բարի, երբեմնի,  
լոկի, հարգի (ածական), -իչ, հմայիչ, բուծիչ, մխիթարիչ, տպ-  
վորիչ, զովացուցիչ (ածական), կտրիչ, ցրիչ, սրիչ, սափրիչ (գոյա-  
կան), -մած, ամպամած, տխրամած, խավորամած (ածական),

տախտակամած, փայտամած (գոյական), -յալ, անցյալ, ածանց-  
յալ, միացյալ, հիշյալ (ածական), ննչեցյալ, հանգուցյալ, ախար-  
յալ, հեծյալ (գոյական), -ով, կաթնով, քանով (գոյական), համով,  
զինով (ածական), սիրով, շուտով (մական), -որդ, վարձող, սա-  
վառնորդ, առաջնորդ (գոյական), նախորդ, հաջորդ, ավելորդ (ա-  
ծական), -(ա)վոր, բանվոր, կրվոր, հայցվոր (գոյական) և բա-  
նավոր, գրավոր, դարավոր, շեշտավոր (ածական), -ու, վարձու,  
հատու, ազդու, կծու (ածական) և կատակերգու, կապալառու, վի-  
ժառու, բանասերու (գոյական), -ուկ, անուկ, թզուկ, հեղուկ (գո-  
յական), խղուկ, նորելուկ, սրամաշուկ (ածական), կտուկ, դի-  
պուկ, կամացուկ (մական), -ուն, զորձուն, հատուն, մնայուն, փայ-  
լուն (ածական), սողուն, ցողուն, զեռուն (գոյական), -ուչ, սրտա-  
ռուչ, վայելուչ (ածական), բնկալուչ, տեսուչ (գոյական), -ուտ,  
ավագուտ, քփուտ, հանհուտ, մոշուտ (գոյական), մկանուտ, ջլուտ  
(ածական), -ուտ, ապուտ, հագուտ, փախուտ (գոյական),  
արտաուտ, ներուտ (մական) և այլն:

բ) Ածական և մական (ինչպես և կապեր) կազմող ածանց-  
ներ՝ աղի, եզակի, հոգնակի, օրոշակի, կողմնակի (ածական), քե-  
թեակի, հանկարծակի, հանախակի (մական), -ին, դժվարին, դյու-  
րին, մթին, արտախին, ներին (ածական) և ամենեկին, տակավին,  
ինքնին (մական), -իվ, լիվ, նշտիվ, մեղմիվ (ածական, մական),  
առթիվ, շնորհիվ (կապ) և այլն:

գ) Գոյական, ածական և մական կազմող. -երեն, հայերեն,  
ռուսերեն, ֆրանսերեն:

### ԱՅՄԱՆՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԴՈՒՔԻ

Բառարմատի կամ հիմքի նկատմամբ գրաված տեղով, այսին-  
քըն՝ այն բանով, թե նրանք հիմքի որ մասին են կցվում, լածանց-  
ները բաժանվում են նախածանցների և վերջածանցների:

### Նախածանցներ

Նախածանցները բառակազմական այն ձևույթներն են, որոնք  
կցվում են հիմքի կամ բառարմատի սկզբից:

ժամանակակից հայերենի նախածանցներն են՝ ան, ապ, դժ,  
տ, չ, անդ, առ, արտ, բազ, բաց, գեր, դեր, ենթ, թեր, հակ, համ,  
հոմ, հար, մակ, նախ, ներ, շազ, շար, պար, ստոր, վեր(ա), տար,  
տրամ, փոխ:

Հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից 5—7-րդ դա-  
րերում հունարենի նմանողութամբ կազմվել են հայերենի՝ ապ,  
առ, արտ, բազ, բաց, գեր, դեր, ենթ, հակ, համ (հոմ), հար (յար),

մակ, նախ, ներ, շազ, շար, պար, ստոր, վեր(ա), տար, տրամ,  
փաղ, փար նախածանցները: Նախածանցները կազմվել են գրաբա-  
րի լեզվական նյութի հիման վրա, օգտագործվել են գրաբարի նախ-  
դիրները (առ, ըստ, ընդ), մականները (նախ, յար (հար), ստոր),  
մականական հիմքերը (արմատները) (արտ, բաց, ներ, վեր), գրա-  
բարյան մյուս խոսքի մասերին պատկանող արմատները (բաղ, գեր,  
հակ, մատ, շաղ, պար, տրամ), ինչպես նաև որոշ հնչյունային և  
իմաստային փոփոխություն կրած նախդիր-նախածանցները (ենթ<  
ընդ, հոմ<համ, փաղ<բաղ, փար<պար (հնչյունական), շաղ-սկապ,  
զոր, կցում՝ իմաստներից> սկից):

Նոր ածանցներ են կազմվել հիմնականում գրաբարյան բառե-  
րի կրճատման, հերձման միջոցով. ինչպես՝ արտ<արտաքս, բաց<  
բանամ և այլն:

Ժխտական նախածանցներն են՝ ան, ապ, դժ, տ, չ, որոնցով  
բացասվում է բառի հիմնական նշանակությունը: Դրանք ցույց են  
տալիս մի հատկություն, մի բան շունհնալը, մի բանից զուրկ լի-  
նելը:

Ան- կցվում է ածական, գոյական, բայական հիմքերին, կազ-  
մում է ածականներ՝ ժխտման, բացասման, մի բան, մի հատկու-  
թյուն չունեցող, մի բանից՝ հատկությունից զուրկ, առանց մի բա-  
նի ընդհանուր նշանակությամբ. կենսունակ նախածանցներից է.  
ինչպես՝ անազատ, անազնիվ, անախորժ, անաղմուկ, անամոթ, ա-  
նաշխատ, անարժան, անարդար, անզուր, անամպ, անասոված,  
անավարտ, անապագա, անհաջող, անբան, անբավարար, անբնակ,  
անգին, անգետ, անզուխ, անզարդ, անդեմ, անեզր, աներես, ան-  
զգա, անզգույշ, անզուպ, անէ, անընդհատ, անբառամ, անքիվ,  
անծայր, անխնամ, անխոս, անկասկած, անհիշաչար, անհաշակ,  
աննկուն, աննշան, անշուկ, անշուք, անորոշ, անչափ, անպակաս,  
անպայման, անպետք, անխալ, անվավեր, անվհար, անտեր, ան-  
ուրախ, անհուն: Մի բանի բառերում նրանով բաղադրված բառերն  
ստանում են գրական ընդհանուր իմաստ. ինչպես՝ անաչառ, ան-  
անձուկ, անանջատ, անհողորդ:

Ժողովրդայինսակցական լեզվում անորոշ դերբայի վրա գրվե-  
լով՝ կազմում է մականներ. անխարխուտել, անխարտել, անծալել,  
անծածկել, անծամել, անկապել, անկարել:

Ան- նախածանցով գոյականներից և բայահիմքերից կազմը-  
ված ածանցավոր ածականների վերջածանցները դուրս են ընկ-  
նում (ինչպես՝ զգայուն-անզգա, շարժուն-անշարժ, զորեղ-անզոր,  
մտավոր-անմիտ, ուժեղ-անուժ, հարգելի-անարգ, արժանի-անար-  
ժան, աշատու-անաշատ), եթե ունեն մի բան ունենալու իմաստ:

Ապ- բաղաձայնից առաջ՝ ապա- հունարանները գործածել են իբրև համարժեք հունարեն *ἀπο* ածանցին՝ բաց, տար, հետո նը- շանակութեամբ. ունի՝ 1) հեռացման կամ բաժանման, 2) ավարտման, կատարման, 3) հետադարձ շարժման, գործողութեան, վերադարձի, 4) ժխտման իմաստներ. կազմում է՝ ածականներ, գոյականներ, բայեր: Կրկնելով գոյականական, բայական և ածականական հիմքերի վրա՝ կազմում է ածականներ. ապօրինի, ապաբախտ, ապագով, ապագեն, ապաժամ, ապառոզը, ապաշնորհ, ապարդյուն, ապերախտ, ապերշունիկ, ապուշ, ապիկար, ապազգային, ապաղասակարգային և այլն: Դրվելով գոյականների վրա, կազմում է գոյականներ. ապարենո, ապագազորդ, ապաբույն, ապակենտրոն: Դրվելով բայերի և բայանունների վրա, կազմում է բայեր և բայանուններ. ապարենոացնել, ապազգայնացնել, ապազինել, ապազոդել, ապախոշորացնել, ապակազմել, ապակենտրոնացնել, ապանել, ապանորսացնել, ապամագնիսացնել, ապամոնտաժել, ապանեխել, ապ(ա)որակել, ապառագմականացնել, ապաստիհանել, ապատարել, ապասերել, ապարենոացում, ապազգայացում, ապագազում, ապախոշորացում և այլն: Օտարաբան (հունարան) կազմություններ են՝ ապարբաց, ապացույց: Այս նախածանցով կազմված գոյականների և բայերի հիմնական մասը տերմիններ են: |

Դժ- արտահայտում է ժխտական, բացասական, մի բանից զուրկ լինելու իմաստ. կազմել է սակավաթիվ ածականներ, արդի հայերենում կենսունակ չէ: դժբախտ, դժգոհ, դժկամ, դժկամակ, դժգույն, դժմիտ, դժպատեն, դժկերպություն: |

Տ- արտահայտում է ժխտման կամ բացասման իմաստ, կազմել է սակավաթիվ ածականներ. արդի հայերենում կենսունակ չէ. տգեղ, ագետ, ագույն, տխեղժ, տհան, տհաս, տկար, տձև, տմարդի, տմույն, տհնել, տհուն: |

Չ- արտահայտում է ժխտական, բացասական իմաստ: Դրվում է բայահիմքերի (նաև դերբայների) վրա և կազմել է հիմնականում սակավաթիվ ածականներ և գոյականներ. չկամ, չտես, չհաս, չբե, չգետ, չգոյ, չեղյալ, չնայած, չտեսնված, չէ (չլեանալ, չէություն), չմահավան, չնավան, չնավատ, չդատված, չաստված (հեթանոսական աստված), չփակ (դգեստ): |

Անդր- ցույց է տալիս՝ 1) մի բանից, մի վայրից այն կողմը, այն կողմում գտնվող, այն կողմի, դեպի այն կողմ, այնտեղ. 2) նորից, կրկին. 3) ծայրագույն, ծայրահեղ, հմնշ. գեր: կազմում է գոյականներ, ածականներ, բայեր. անդրբևեռաշրջան, անդրաշխարհ, անդրավարտիֆ, անդրադարձ, անդրադարձիչ, անդրադարձիկ, անդ-

րադառնալ, անդրադարձնել, անդրաձիգ, անդրաթոխչի, անդրաբեմ, անդրովկիանոսյան, անդրջրհեղեղյան, անդրգերեզմանային, անդրգերեզմանյան, անդրշիրիվյան, անդրժովյան, անդրաստեղյան, անդրկուլիսյան, անդրձայնային, անդրպատմական, անդրբևեռային, անդրլեռնային: Առանց հոդակապի կազմում է տեղանուններ, տեղանուններից կազմված նոր ածականներ. Անդրկովկաս, Անդրկարպատեն, անդրկովկասյան, անդրկովկասցի, անդրկարպատյան, անդրալպյան, Անդրալպեր, անդրկասպյան, անդրուրալյան, անդրհունոսյան: |

Առ- գրաբարյան նախդիր, իբրև նախածանց համապատասխանում է հունական *προς*, *προ*, *επι* ածանցներին, ունի՝ դեպի, մինչև, մտ իմաստները: կազմում է գոյականներ, ածականներ, բայեր. հակահիշ՝ բաց. առադրել, առադրություն, առգրություն, առակ, առաձիգ, առաձգական, առանել, առայսօր, առայժմ, առանձին, առավել, առափ, առափնյա, առափնյակ, առախում, առբերել, առբերիչ, առգին, առգրավել, առդիմել, առդիբ, առգրություն, առերեսել, առերեսում, առերեսույթ, առընդմիջտ, առընթանալ, առընթերագիր, առժամաբար, առժամանակ, առինհնել, առինհնում, առիշեղ, առլի, առլցել, առկա, առկախ, առկայծ, առկայծել, առկցել, առկցում, առնավասար, առնավառչյա, առնավեռ, առնարյուր (յուրաբանչյուր հարյուրից), առնոսել, առնգել, առնեռն, առնայնույթ, առմիշտ, առնչել, առնչություն, առնվազն, առողջ, առոյս: Իբրև քերականական տերմիններ գործածվում են՝ առագանություն, առաջադրություն: |

Արտ- արմատ գրք. «արտաքս» բառի, համապատասխանում է հուն. *εξ*, *ἐξ* ածանցին. համանիշ՝ բաց, տար, ապ, հակահիշ՝ ներ. նշանակում է շրտրս, դրսում, դեպի դուրս: կազմում է գոյականներ, ածականներ, մակբայներ. արտաբերդ, արտաբխել, արտաբնակ, արտաբնային, արտաբուրել, արտագալակախիկա, արտագալակտիկական, արտագաղթ, արտագաղթել, արտագավիթ, արտագնա, արտագնաց, արտագնացություն, արտագրել, արտագրություն, արտագրոհ, արտադասակարգային, արտադասարանային, արտադարձական, արտադատել, արտադատուկ, արտագորային, արտաբարել, արտաթոխչի, արտաժամանակային, արտաժամյա, արտաժայթել, արտաժողայական, արտաժին, արտաժել, արտակարգ, արտակենտրոն, արտակենտրոնային, արտահաված, արտահանել, արտահաստիքային, արտահերթ, արտահոսել, արտահոսագայթել, արտամթերություն, արտամղել, արտանախահաշվային, արտանկարել, արտաշխարհ, արտաշնչել, արտապլանային, արտասահման, արտասանողուլ, արտասովոր, արտասպել, արտարգան-

դային, արտացոլել, արտաբերել, արտաբերել, արտաբերել: Գործածական են իբրև քերականական տերմիններ՝ արտաբերել, արտաբերություն, արտաբերական, արտաբերում:

Բաղ—արտահայտում է «կից, միասին, իրար հետ» նշանակություններ, ցույց է տալիս՝ 1) գործողության համատեղություն, մասնակցություն, 2) հավաքականություն, 3) միաժամանակություն, 4) ավարտվածություն. հոմանիշ՝ համ, հար, պար, շաղ, փաղ, փար, համապատասխանում է հուն. οὐκ անցնի: Կազմել է ոչ մեծ թվով գոյականներ, ածականներ, բայեր. ոչ կենսունակ նախածանց, հանդես է դալիս հիմնականում տերմինակազմության մեջ. բաղադիր, բաղադրական, բաղադրամաս, բաղադրանյութ, բաղադրատար, բաղադրատոմս, բաղադրություն, բաղադրել, բաղադրիչ, բաղադրյալ, բաղադրույթ, բաղանայն, բաղանայնույթ, բաղանայնանհեց, բաղանայնանիչ, բաղանայնանաչորդ, բաղանայնավոր, բաղադրություն, բաղադրատեղան, բաղադրատել, բաղադրատեղան, բաղադրատեղանություն. իբրև հնարանություններ՝ բաղակից, բաղակցել, բաղակցություն, բաղակույտ, բաղկասել, բաղկասություն: 1

Կաց— ծագել է բնալ բալի արմատից՝ կամ գրբ. ի բաց մակբայից, համապատասխանում է հուն. αγω նակ՝ ք, անցնի: «հետո, մի կողմ, բացի, զուրա» նշանակությամբ. հոմանիշ՝ ապ, արտ, տար, հակահիշ՝ առ: Կցվում է բայահիմքերին, կազմել է բայեր, ածականներ, գոյականներ, մակբայներ. ոչ կենսունակ նախածանց. բացակա, բացակայել, բացակայություն, բացականել, բացականակալ, բացականություն, բացահայաց, բացահայտ, բացահայտել, բացահայտիչ, բացահայտյալ, բացահայտորեն, բացառար, բացառապես, բացառիկ, բացառյալ, բացասար, բացասական, բացասել, բացասել, բացասական, բացասություն, բացարկ, բացարձակ, բացարձակորեն, բացարձ, բացորոշել: 1

Վեռ— 1) վեր, ավելի, քան. 2) «գերազուրկ, բարձր աստիճանի, առավելազուրկ» նշանակությամբ. հոմանիշ՝ վեր, հակահիշ՝ թեր(ա), ստոր: Միանալով գոյական, ածական, բայական հիմքերին՝ կազմում է ածականներ, բայեր, մակբայներ, մասամբ նաև՝ գոյականներ. հանդես է գալիս հատկապես տերմինակազմության մեջ. գերաբարձել, գերաբեռնել, գերբեռնվածություն, գերազանձել, գերադրվատել, գերազնահատել, գերագրգիտ, գերադաս, գերազատելի, գերադրական, գերազանց, գերազանցել, գերազանցություն, գերազանցապես, գերազնիվ, գերածախս, գերածախսել, գերակատարել, գերակետիկ, գերակշիռ, գերակշռել, գերակշռություն, գերան, գերանել, գերանեծար, գերանոտ, գերանձն, գերաննատ, գերմարդ, գերաշխարհ, գերաշխարհիկ, գերաշնորհ, գերապայծառ, գերապա-

ալիվ, գերաբարձ, գերապարկ, գերավագ, գերավագուրդ, գերավելցուկ, գերաբարձ, գերաբարձություն, գերաբարձորեն, գերաբարձություն, գերբնական, գերբնակչություն, գերդիմացկան, գերզգա, գերզգայական, գերզգայուն, գերթթվություն, գերիշխանություն, գերիշխել, գերլարվածություն, գերլարում, գերկարն, գերկարնալիք, գերհագեցնալ, գերհագորդականություն, գերհագորդիչ, գերհզոր, գերձայնային, գերեշգրիտ, գերշահույթ, գերնուրբ, գերպլանային, գերօսնիչ, քերականական՝ գերադրական, գերակատար: 1

Վեռ— փոխարեն, փոխանակ նշանակությամբ. հուն. ἀντι (anti) նմանողությամբ. հոմանիշ՝ փոխ, թեր: Կցվելով գոյականներին՝ կազմել է հիմնականում մի քանի գոյականներ, որոնց հիմքերով կան նաև այլ խոսքի մասերի բառեր. դերանուն, դերբայ (դերանվանական, դերանվանարար, դերբայական, դերբայան), դերծովակալ, դերհյուպատոս (փոխհյուպատոս), դեր(ա)կոմս, դերանյութ, դերօձիք, դերնիշ (տպգր.), դերշաբար (թիմ.), դերասան, դերակատար, դերբիստոս: 1

Վեռ(ա)— (ընդ) նշանակում է տակը, տակի, ստորին. հոմանիշ՝ ստոր, ընդ, ցույց է տալիս ստորադասություն, աստիճանականություն: Կցվելով գոյական և բայական հիմքերին կազմում է գոյականներ (հիմնականում տերմիններ) և այլ խոսքի մասերի բառեր. ենթաախուրդ, ենթաբազմակերպություն (մասթ.), ենթաբաժին, ենթաբաժնակ (կենսաբ.), ենթաբառան, ենթակա, ենթաբառույթ, ենթաբաժնավ, ենթալեզու, ենթաբարբառ, ենթամեա (քերականական), ենթազանգ, ենթագիտակցություն, ենթածոճրակային, ենթազրտակցական, ենթադաստակ, ենթակզակ, ենթամաշկ, ենթամաշկային, ենթաորովայն, ենթաստամոսագեղձ, ենթաստամոսային, ենթաստամային, ենթափոր (բժշ.), ենթաթթվակ, ենթաթծժրուտ, ենթածծմբիտ, ենթօսնիչ (թիմ.), ենթագերատեսչական, ենթազուրկ, ենթազաս, ենթադրել, ենթադրություն, ենթաթեմա, ենթախումբ, ենթակայական, ենթակայություն, ենթակայալ, ենթակապալառու, ենթակապալային, ենթակարգ, ենթակեղև, ենթանամակարգ, ենթանյութային, ենթաշեռ, ենթաշրջան, ենթասպա, ենթավարձակալ, ենթավարպետ, ենթավերնագիր, ենթատեսակ, ենթատեսալ, ենթարկել, ենթացանկ: 1

Վեռ— նշանակում է՝ թերի, կիսատ, ոչ լրիվ. հակահիշ՝ գեր. բաղանայնից առաջ՝ ա հոդակապով՝ թերա: Կցվելով հիմնականում բայահիմքերին, ինչպես նաև ածական և գոյական հիմքերին, կազմում է բայեր, ածականներ և մի երկու գոյականներ. թերակղզի, թերօսնիչ, թերաբարձ, թերաբեռնել, թերաբումել, թերազանձել, թերազնահատել, թերազարգացած, թերաբուխ, թերախորով, թերա-



նախագաղափար, նախագիծ, նախահայր, նախահավ. տերմիններ՝ նախադասություն, նախադրություն, նախդիր, նախահարաշեշտ, նախահարաշեշտույր, նախապարույկ: V

Ներ- ցույց է տալիս ներսում, ներսը, դեպի ներս իմաստները, հակահիշ՝ արտ, տար: Կցվելով բայական, ածականական, գոյականական հիմքերին, կազմում է հիմնականում ածականներ, նաև բայեր և որոշ թվով գոյականներ: Գործոն է հատկապես տերմինակազմության մեջ. ներածական, ներածել, ներածություն, ներբող, ներբողական, ներբողել, ներգործել, ներգործություն, ներդաշնակ, ներդաշնակել, ներդաշնակություն, ներդիր, ներդրել, ներդնել, ներանել, ներգրավել, ներմուծել, ներխուժել, ներշնչել, ներարկել, ներարկիչ, ներագրել, ներատումային, ներգանգային, ներարտադրական, ներգաղթ, ներգաղթել, ներաշխարհ, ներկուսակցական, ներտաշիչ, ներտաշել, տերմիններ՝ ներկա, ներգործական: V

Նաղ- կապվում է սոսանձին անգործածական շաղ արմատի հետ՝ կապ, գող, կցում, կապակցում, միացում նշանակությամբ, հոմանիշ՝ բաղ, շար, համ, հար ածանցներին. այլևս կենսունակ չէ: Ժամանակակից հայերենում գործածվում են՝ շաղկապ, շաղկապել, շաղկապական, շաղկապային, շաղկապում և կազմախոսության մեջ՝ շաղկապենի: V

Նար- կապվում է շար արմատի հետ. շարվածք, կարգ, խումբ իմաստներով, հոմանիշ՝ շաղ, բաղ, համ, հար. կենսունակ չէ: Այժմ գործածական են այդ ածանցով կազմված սակավաթիվ բառեր, որոնց զգալի մասը տերմիններ են. շարակարգ, շարակարգել, շարադրել, շարադրանք, շարադրություն, շարադասություն, շարադասել, շարահյուսել, շարահյուսություն, շարահյուսույթ, շարահարել, շարակցել, շարակցենի, շարակցական (հյուսվածք): V

Նար- առաջացել է պար արմատից, ունի շուրջը, շուրջանակի, շուրս կողմը, շրջան, պտույտ իմաստները: Կենսունակ չէ, այժմ գործածական են նրանով կազմված սակավաթիվ բառեր. պարագա, պարագայական, պարբերություն, պարբերաբար, պարբերույթ (քերական. տերմիններ), պարագիծ, պարագլուխ, պարփակել, պարունակել, պարածածկել, պարապնդել և այլն: V

Ստոր- իբրև նախածանց ունի՝ 1) տակը, վերևից՝ ներքև, ցած, 2) լրիվ, ամբողջովին իմաստները, հոմանիշ՝ ենթ, ընդ, հակահիշ՝ վեր: Կազմում է ածականներ, բայեր, գոյականներ. տերմիններ՝ ստորակետ, ստորադասական (ապառնի), ստորոգել, ստորոգյալ, ստորոգելի, ինչպես նաև ստորադրյալ, ստորակա, ստորաբնակ, ստորագրել, ստորագրություն, ստորաքաժանել, ստորադասել, ստո-

րակարգ, ստորակարգել, ստորակարգություն, ստորաբարձ, ստորաբարձություն, ստորգետնյա, ստորերկրյա, ստորջրյա: V

Վեր-, վերա- կազմվել է համանուն բառից, հոմանիշ՝ վեր-, մակ-, հակահիշ՝ ստոր՝ կազմում է հիմնականում բայեր, ինչպես և գոյականներ, ածականներ: Կենսունակ է: Վերա տարբերակը զորվում է բաղաձայնով սկսվող բայական նախատիպերի վրա, ձայնավորով սկսվող նախատիպերը ստանում են վեր- ածանցը: Բաղադրություններում ունի հետևյալ իմաստները՝ 1) մի բանի վերևը՝ վրա (վերադիր, վերաբերել), 2) կազմում է բայեր՝ ցույց տալով (ս) գործողության ուղղվածությունը դեպի վեր (վերալսել, վերալսեցանք), բ) գործողության կրկնություն, կրկին, վերստին նշանակությամբ (վերամիավորել, վերաբացել), գ) գործողության կրկնություն և նախօրոք արվածի՝ եղածի՝ ստեղծվածի փոփոխություն, նորից նշանակությամբ (վերախմբագրել, վերակազմել). օրինակներ՝ վերաքաժանել, վերաքաշիւել, վերաբնակվել, վերագնել, վերագնահատել, վերակենդանացնել, վերադաստիարակել, վերականգնել, վերադասել, վերմղել, վերընթանալ, վերագրել, վերահսկել, վերակարգել, վերածել, վերգրել, վերաիմաստավորել. գոյականներ և ածականներ՝ վերակարգ, վերադարձ, վերադիր, վերահան, վերագրավ, վերակացու, վերամբարձ, վերամբարձիչ, վերապրուկ, վերաբերել, վերելք, վերընթացք, վերահաս, վերատեսուչ, վերանսկիչ, վերադաս, վերելակ, վերավերակություն, վերաբնակություն, վերաբնակիչ, վերաբնակություն, վերակենդանություն, վերապահություն, վերհանում, վերհիշում, վերլուծում, վերահաստատում, վերանվանում, վերընտրական, վերապատրաստական, վերգետնյա, վերերկրյա, վերծիգ և այլն:

Տար(տարա)՝ արմատն է օտար, ունի 1) հեռու, հեռավոր, 2) օտար, դուրս, գառ, բացի, արտառ, 3) այլ, տարբեր, ուրիշ իմաստները. հոմանիշ՝ բաց, հակ(ա), հակահիշ՝ բաղ, համ: շխմականում կազմում է ածականներ, ինչպես նաև գոյականներ ու բայեր. կենսունակություն է ցուցաբերում տերմինակազմության մեջ. տարածում, տարակազմ, տարակենտրոն, տարակարծիք, տարախոն, տարահակ, տարատեսակ, տարատրամաչափ, տարօրինակ, տարտրմատ, տարիմատ, տարածամահակյա, տարաբնակ, տարողնաց, տարադեպ, տարաջրիկ, տարագիր, տարահալած, տարաշխարհ, տարաշխարհիկ, տարերկրյա, տարափոխիկ, տարապայմուն, տարառեղել, տարոտոշել, տարասովորել, տարածել, տարամիտել, տարագրել, տարփողել, տարհամոզել, տարբերել, տարկուտում, տարանցում, տարանկում, տարփողում, տարագնացու-

թյուն, տարածայնություն, տարալեզվություն, տարանշատություն, տարածություն: ✓

Տրամ- արտահայտում է այս ու այն կողմից, մի ծայրից մյուսը, միջով իմաստները, ստեղծվել է հունարենի նշմասնիկի համապատասխան իմաստներն արտահայտելու պահանջով: ✓ Կենսունակ շէ, զործածական են սրանով կազմված սակավաթիվ բաղադրություններ, տրամագիծ, տրամագծորեն, տրամաշափ, տրամատ, տրամաբանուն, տրամաբանություն, տրամախոսություն, տրամալար, տրամախազել, տրամադրություն, տրամադրել և այլն: ✓

Փոխ(փոխ) - առաջացել է համանուն արմատից, վերջինիս ընդհանուր նշանակությամբ. հոմանիշ՝ ենթ, դեր: Յուզարեբում է բառակազմական կենսունակություն. արտահայտում է բառակազմական հետևյալ իմաստները՝ ա) բաղադրված բայերը ցույց են տալիս մի տեղից մի այլ տեղ կատարվող զործողություն, փոխադրել, փոխանցել, փոխաբեռնել, բ) այլ ձևով կատարել. փոխակերպել, փոխանակել, փոխարկել, գ) փոխաբեռնել, փոխադարձաբար կատարել. փոխմատուցել, փոխհարուցել: նման բայերից կազմված բաղադրությունները պահպանում են բառակազմական նշված իմաստները. փոխաբերություն, փոխաբերաբար, փոխադրական, փոխակերպություն, փոխանցիկ, փոխհատուցում, փոխզործողություն, փոխկախվածություն, փոխօգնություն, փոխազդեցություն, փոխզիջում, փոխըմբռնում. փոխհրահանգություն, փոխայց: Գոյական և այլ նախատիպերից փոխ- ածանցով բաղադրություններն ունեն փոխաբեռն, փոխաբեռնող, տեղի գրվող, տեղակալ, օգնական բառակազմական իմաստները. փոխաբեռ, փոխանախագան, փոխանուն, փոխազդեցապետ, փոխծովակալ, փոխնյութատու, փոխաբեռն, փոխանյութ: Իբրև քերականական տերմիններ են զործածվում՝ փոխանուն, փոխանունություն, փոխաբերություն, փոխակերպություն:

### Վերջածանցներ

Վերջածանց է կոչվում այն բառակազմական երկրորդական ձևությունը, որը կցվելով բառի (հիմքի, նախատիպի) վերջից և նրան նոր իմաստ կամ իմաստալին նրբերանգ տալով՝ կազմում է նոր բառ: Ժամանակակից հայերենի վերջածանցների հիմնական մասը զրարարչան ժառանգություն է, որոշ ածանցներ բարբառային ծագում ունեն և կրական լեզվին են անցել բարբառներից կամ ժողովրդախոսակցական լեզվից: Ինչպես զրարարչան, այնպես էլ բարբառներից անցած վերջածանցները ժամանակակից հայերենում ցուցաբերում են բառակազմական տարբեր կենսունակություն, ինչ-

պես նաև բառակազմական իմաստների տարբեր դրսևորումներ: Վերջածանցների բառակազմական նշանակության մեջ պարունակվում են ինչպես բառական, այնպես էլ խոսքիմասակերտ իմաստներ: նրանցով կազմվում են տարբեր խոսքի մասերին պատկանող բաղադրություններ: Հատկանշական է նաև, որ միևնույն վերջածանցով երբեմն կարող են կազմվել մեկից ավելի խոսքի մասի պատկանող բառեր: Ժամանակակից հայերենի լեզվաբանությունում քիմիական լեզվաբանության թիվը 180-ի է հասնում, որի գլխի մասը կենսունակ է նաև լեզվի զարգացման արդի փուլում: Ժամանակակից հայերենի վերջածանցներն են.

-Աբան, -բան, — գոյական հիմքերի վրա դրվելով՝ կազմում է գոյականներ: Յույց է տալիս «մի բանով զբաղվող, մի բանի մասնազետ» ընդհանուր իմաստ. լեզվաբան, սեբաբան, պատմաբան, սխառաբան, երկրաբան, մարդաբան, դեղաբան, մաշկաբան, մանկաբան, հեկաբան, մանրէաբան, հայկաբան, եգիպտաբան, լատինաբան, հունաբան: Ածանցավոր կազմություններ կարող են ընկալվել նաև, երբ հանդես են գալիս ոչ գոյական հիմքերի հետ. ինչպես՝ համառոտաբան, կառնաբան, հոռոմաբան, ավելաբան, դատարկաբան, հայհոյաբան, հեզնաբան, խրթնաբան, սակավաբան, լավելաբան, երկարաբան:

-Աբար, -բար, -ապետ, -պետ, -որեն, — հիմնականում ածական, գոյական, մակրաչական հիմքերին կցվելով՝ կազմում են մակրաչներ: Յույց են տալիս «եղանակով, ձևով, կերպով, նման» գործողության բառակազմական ընդհանուր իմաստ: Հանդես են բերում բառակազմական մեծ կենսունակություն. նկատվում է -(ա)պետ վերջածանցի կիրառության աստիճանական նվազման միտում, ի նշիվ -ա(բար), -որեն ածանցների բառակազմական հնարավորությունների աշխուժացման. կրաբարաբար, եղբայրապետ, ազնվաբար, ազնվապետ, ազնվորեն, հայրաբար, մայրաբար, բնագրաբար, բնագործեն, նենգաբար, նեղգորեն, անգրաբար, անգրորեն, ավանդաբար, ավանդորեն, հավերժաբար, հավերժորեն, գոեհկաբար, գոեհկորեն, համաբնակաբար, համաբնակորեն, խոնարհաբար, անկեղծաբար, պարբերաբար, ապոխեաբար, ներդաշնակաբար, ներդաշնակորեն, շապաբար, շապորեն, փոխադարձաբար, փոխազործորեն, արխաբար, գեղեցկաբար, գեղեցկորեն, մտերմաբար, մտերմորեն, աստիճանաբար, միակողմանիորեն, որոշակիորեն, համակողմանիորեն, ակերթաբար, իրավաբանորեն, հոգեբանորեն, պատմականորեն, կամայականորեն, սունականորեն, հապնեպորեն, բացանայտորեն, տրամագծորեն, գլխավորապետ, փառավորապետ,



հագեցեալ, նմանապես, ներհնապես, անմիջապէս, արմատապէս և այլն:

-(Ա)գար,— գոյական հիմքերից կազմված բաղադրութիւններում նշանակում է «հիվանդութիւն, ախտ ունեցող»։ կենսունակ չէ, պահպանված է մի քանի բառերում։ լեզվագար, խելագար, լքեղագար, շղագար, ցավագար, մտագար, մուլագար, գլխագար, աշագար:

-(Ա)գին, -գին,— ածական, գոյական և բայական հիմքերին կցվելով՝ կազմում է ածականներ ու մակբայներ՝ սաստկական նշանակութեամբ։ եռանդագին, ճիվանդագին, ողբագին, վշտագին, ցավագին, թախծագին, տրտմագին, անագին, ուժգին, լալագին, գայրագին, մոլեգին, կսկծագին, կաթոգին, հեշտագին, տաքագին, ֆեհագին, կարոտագին, տառապագին, ցնծագին, գորովագին, արմագին:

-(Ա)գործ,— գոյական հիմքերից կազմված գոյականական բաղադրութիւններում ձեռք է բերել «մի բանով զբաղվող, մի բանի մասնագետ» ածանցային իմաստը, հոմանիշ՝ (ա)բան, -որդ,

-(ա)պան, -ող, -իշ. ֆանդակագործ, բրդագործ, մսագործ, հացագործ, մորթեգործ, աղակեգործ, խեցեգործ, լամպագործ, արծաթագործ, երկաթագործ, ակնոցագործ, կահույնագործ, հրաշակագործ, թունելագործ, կաքելագործ, բետոնագործ, տեխնիկագործ, ֆիմիագործ, տրիկոտագործ և այլն:

-(Ա)գույն,— կազմում է ածականներ՝ տալով նրանց սաստկական, ամենից շատ կամ ավելի շատ ունեցող իմաստներ, կազմում է որակական ածականի գերադրական աստիճանը, այդ նշանակութեամբ հոմանիշ է ամենա- նախածանցին։ հնագույն, լավագույն, վատագույն, գերագույն, մեծագույն, նորագույն, փոքրագույն, նվազագույն, ծայրագույն, ներքագույն, առավելագույն, պարզագույն, գեղեցկագույն, վեհագույն, շքեղագույն, սրբազնագույն, առաջնագույն, ազնվագույն, խստագույն, կարևորագույն, նգորագույն, թշվառագույն և այլն:

-Ած,— բայարմատների վրա գրվելով՝ կազմում է ածականներ, որոնք ցույց են տալիս հիմնականում նախատիպ բայով բնորոշվող առարկայի վիճակ։ կատարած, ողորմած, երկյուղած, գրած, ֆնեած (ֆնաբարբախ, բմբած), սոված, փաղած, նիւած, խմած, հատած, վարկած, ցնդած, զինված։ Հիշյալ ածանցով կազմված բաղադրութիւնների որոշ մասը գոյականներ են կամ գոյականական կիրառութիւններ ունեն։ արարած, նշանած, սիրած, խորոված, արկած, կատարած։ Ժամանակակից հայերենում հարակատար դերբայի վերջավորութիւնն է:

-Ածո, -ածու, -ծու,— բայարմատների վրա գրվելով կազմում են՝ ա) ածականներ, որոնք ցույց են տալիս բայահիմքի գործողութեանը ենթարկված լինելու հատկանիշն ունեցող։ ծալածո, կտրածո, տաշածո, փորածո, հյուսվածո, մանվածո, կոփածո, թափածո, բարածո, շինծու, խնամածու, հոգածու, ակնածու, ձեռնածու, բ) գոյականներ, որոնք ցույց են տալիս բայահիմքի գործողութեան արդյունք և գործողի անուն։ շափածո, բրածո, պեղածո, դրածո, պահածո, հաւածո, ժողովածու, հավաքածու, կատարածու, ծաղրածու, ատրփածու:

-Ակ,— ա) գրվելով գոյական հիմքերի վրա՝ կազմում է գոյականներ, որոնք ունեն նվազական, փաղաքշական, ինչպես նաև նըվաստական իմաստներ։ նվազական՝ առվակ, գետակ, տեակ, դրոնակ, գյուղակ, հյուղակ, ծովակ, լեակ, բլրակ, ձորակ, նավակ, յուղնակ, վիսակ, թիակ, սայլակ. փաղաքշական՝ հոգյակ, որդյակ, աղավնյակ. նվաստական՝ գրչակ, իմաստակ, արվեստակ, լեզվակ. բ) բայական հիմքերի վրա գրվելով կազմում է գոյականներ՝ գործողի անվան ընդհանուր բառակազմական նշանակութեամբ, որոնք ցույց են տալիս գործողութիւն կատարող առարկա, գործիք, կատարող անձ. ոլբերգակ, կատակերգակ, եղերերգակ, նախերգակ, նվիրակ, սիրերգակ, խոսնակ (հաղարդավոր), բուծակ, սուզակ, պահուսնակ (պահող), կոչնակ, սողնակ, օսնակ, վերելակ, բռնակ, դիտակ. գ) կազմում է գոյականներ, որոնք ունեն նախատիպ ածականի հատկանիշը. ուժակ, փշակ, միջնակ, ներհնակ, դ) որոշ ածականների վրա գրվելով կազմում է ածականներ, սաստկացնելով և ձևափոխելով նրանց իմաստը. կլորակ, կապուտակ, խառնակ, աչքողակ, ձախողակ, անուշակ, ե) գոյականներից, ածականներից և բայահիմքերից կազմում է գոյականներ տարբեր նշանակութիւններով. փայլակ, կոլբակ, լծակ, ծծակ, սանդղակ, լողակ, փոփոխակ, օղակ, նոնակ, հետևակ, դասակ, ոտնակ, տոմսակ, պարոսակ, աղյուսակ, ավերակ, վարդակ, հարթակ, ցուցակ, երամակ:

-Ական, (-կան)— ածականակերտ ամենակենսունակ վերջածանցն է, հոմանիշ՝ այլին։ կազմում է նաև թվականներ և սակավաթիվ գոյականներ, բառակազմական ընդհանուր իմաստն է «մի բանի կամ մեկին վերաբերող» հատուկ, մեկին պատկանող կամ մի բան ունեցող»։ Այս ածանցով կազմված բաղադրութիւններում որպես նախատիպեր (հիմքեր) հանդես են գալիս ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ գոյական անունները, ածական և բայական հիմքերը.

ա) Գոյական հիմքերից կազմում է ածականներ. հայրական, մայրական, եղբայրական, որդիական, գյուղացիական, բանվորա-

կան, երեխայական, նկարչական, երաժշտական, մարմնական, հոգեկան, տանական, խմբական, դանձրեական, հուրայական, հայկական, պարսկական, վրացական, ռուսական, կոմունիստական, բուժական, իմպերիալիստական. բ) բայաճիմքերից կամ բայարմատներից կազմում է ածականներ. աղաչական, զարմացական, հիացական, վերացական, բերկրական, հրեմական, մխիթարական, ընտրական, ֆենական, գոչական. գ) ածական հիմքերից կազմում է ածականներ. նվաստական, նվազական, հավերժական, մտերմական, ներհակական, սաստկական, իգական. դ) թվականներից կազմում է՝ 1) բաշխական թվականներ. մեկական, երկուական, երեքական, երեսնական, ութսունական, վաթսունական, 2) կոտորակային թվականների հայտարարք. երկու երեքական, հինգ վեցերորդական. ե) —կան վերջածանցը (առանց հոգակայի) կազմում է որոշ թվով բաղադրություններ. ածականներ՝ լացկան, լալկան, մրսկան, խոռվկան, շխոսկան (գործածվում են ժողովրդախոսակցական լեզվում) և իբրև գոյականներ գործածվող՝ վարձկան, որսկան, մուրացկան, լծկան, ծենդկան, գուժկան, թխսկան. զ) հիշյալ ածանցով կազմված որոշ թվով բաղադրություններ դարձել են գոյական կամ գործածվում են գոյականաբար՝ «մի բան անող, մի բանի հետևորդ» ընդհանուր նշանակությամբ. դպրոցական, կուսակցական, պահպանողական, անապատական, օգնական, գրավական, ստացական, լուծողական, ծծողական, ախորական, անցվորական, դամբանական, գրախոսական, ընդդիմախոսական, մեղադրական, կենսագրական, պարբերական, վաճառական, գաղթական, փախստական, շինական, զորական, սիրելիական, ամսական, մանմեղական, հեգելական, կանտական, տոլստոյական, մառական:

-Ալի,— ա) ածական, բայական, գոյական հիմքերին միանալով կազմում է ածականներ և մակբայներ. կողմնակի, շուրջանակի, առանձնակի, անցողակի, մասնակի, հանկարծակի, շեշտակի, շեղակի, ուղղակի, որոշակի, լայնակի, երկայնակի, հանախակի, համառոտակի. բ) թվականներին կցվելով՝ բառին տալիս է բազմապատկական նշանակություն. եզակի, երկակի, կրկնակի, եռակի, միակի, հոգնակի, բազմակի:

-Այլն,— հոմանիշ՝ ական. արտահայտում է «մեկին կամ մի բանի վերաբերյալ՝ պատկանող, մի բանում գտնվող, կատարվող, մի բան ունեցող, մի բանով զբաղվող, մի բանից պատրաստված՝ առաջացած» ընդհանուր բառակազմական իմաստ: Ամենակենսունակ վերջածանցներից է. վերջին տասնամյակներում առավել կենսունակություն է դրսևորում հոմանիշ —ական վերջածանցի համե-

մատությունը: Կազմում է հիմնականում ածականներ, որոնց չընչին մասը դարձել է գոյականներ կամ գործածվում է հիմնականում նաև գոյականաբար. ինչպես՝ հարվածային, երկաթուղային, աշխարհագրային, նակատային, շարժային, պահեստային, կարգային, եզրային, կաղրային, մերային, յուրային, սևաբուրակային, ծանրաշային, արծաթուղային: Բառակազմական ունակություններով տարբերվում է հոմանիշ —ական վերջածանցից նրանով, որ կցվում է հիմնականում առարկաների անուններ նշանակող հասարակ գոյականներին: Բաղադրություններում դրսևորում է բառակազմական հետևյալ իմաստները.

ա) Մեկին կամ մի բանի վերաբերող՝ առնչվող. ֆաղափային, հողային, ջրային, ֆուտբոլային, արկածային, շրջանային, նմեռային, ամառային, աշնանային, տնային, սիրային, հեֆիաթային.

բ) Մի բան ունեցող, պարունակող, մի վայրում եղող՝ հանդիպող, կատարվող. անտառային, լեռնային, տափաստանային, ֆարային, հանձնային, ծովային, ցամաքային, դաշտային, կավային, անձրևային, հրաբխային, պղնձամուլիբդենային, ծծմբային. գ) մի բանից առաջացած, մի բանի նմանություն ունեցող. նյութային, հարավային, արեգակնային, օդային, եթերային, լուսային, հառազային, աստվածային, դրախտային, հրեշային, ամպրոպային:

-Այլն և —ական հոմանիշ վերջածանցներով կազմված նույնարմատ մի բանի բաղադրություններ ունեն իմաստային որոշակի տարբերություններ, ինչպես՝ խորհրդական և խորհրդային, ֆաղափական—ֆաղափային, դասական—դասային, ազգական—ազգային, լեռնական—լեռնային, անապատական—անապատային, գործարանական (օրգանական) և գործարանային:

-Այլն,— ժամանակակից հայերենում ոչ կենսունակ ածանց է, քարացած ձևով պահպանվել է մի բանի բառերում. միայն, միմիայն, համայն, միանգամայն, վաղորդայն, առժամայն, նույնժամայն, նույննեռայն, լեռնայն:

-Ան,— դրվում է բայական հիմքերի վրա և կազմում է հիմնականում գոյականներ, ինչպես և ածական անուններ: Բաղադրություններում արտահայտում է բառակազմական հետևյալ իմաստները՝ ա) գործող անձի անուն, գործով զբաղվող, որն է գործողություն կատարող. իշխան, դերասան, վիպասան, գովասան, նարտասան, սուտասան, փշան, նվան, վազան, կծան, խածան, գովգովան. բ) նախատիպի արտահայտած գործողությունը կրող և որպես արգասիք հանդես եկող անուն. խոտան, պատվիրան, կթան, կախան, թացան. գ) առարկա, իր, նյութ, գործիք, միջոց՝ գործողություն կատարելու կամ անելու համար. խրան, տափան, կռան, տա-

փան, լորան, փալկան, կալան, փարաթան, ըմպան, մխան, կալան, ծծան, ջնջան, զարկան, ձգան, հեծան, փոխան, մերան, ննջան, խցան, հորան, դ) նախատիպի ցույց տված ձայնական հատկանիշ ունեցող. գորգոռան, վնկվնկան, փնթփնթան, ծրտան, դրեգան, հվնվան, կշկշան, շխկշխկան, շրխկան. հ) գործողության տեղի ա- նուն. արգելան, ոլորան, կայան:

-Անակ (ան-ակ).— սակավ կենսունակ է, կազմում է գոյա- կաններ, ցույց է տալիս գործիք, առարկա, գործողության հետե- վանք. գլանակ, ըմպանակ, շրջանակ, նոնանակ, փրկանակ, հաղ- քանակ, մրցանակ, ցուցանակ, զսպանակ, ուծանակ, եղանակ:

-Անի<sup>1</sup>.— կազմում է ածականներ՝ գոյական, ածական, թվա- կան և մասամբ բայական հիմքերից, ցույց է տալիս մի բան ու- նեցող, մի բանով օժտված, մի բանի համար նախատեսված. ան- վանի, գեղանի, նագանի, հողանի, գլխանի, լեզվանի, պիտանի, ընտանի, հարկանի, միհարկանի, հինգհարկանի, փողանի, երկփո- դանի, միանդամանի, երկանդամանի, բազմանդամանի, միտանի, եռտանի, գլխտանի, մաշկոտանի, միթևանի, երկթևանի, երկե- բեսանի, միակողմանի, բազմակողմանի, համակողմանի, մեծքա- նի, հինգաչխանի, երկուղղանի, մատանի, հովանի, ամպհովանի, պատուանի, ընտանի:

-Անի<sup>2</sup>.— ցույց է տալիս հավաքական իմաստ, գրաբարի հա- վաքական հոդնակի մասնիկն է, որ պահպանվել է հիմնականում գրաբարից ժառանգված բառերում, կազմվել են նաև նորերը. ա- զատանի, ավագանի, նամականի, կանանի, առականի, առածանի, տեսականի, նմաչանի:

-Անոց, նոց, ոց.— գոյական և բայական հիմքերից կազմում է գոյականներ. հոմանիշ՝ առան: Ցուցաբերում է բառակազմական մեծ կենսունակություն: Բաղադրություններում հանդես է գալիս հիմնականում հետևյալ իմաստներով. ա) արտահայտում է տեղի ընդհանուր իմաստ՝ գոյական և բայական հիմքերից կազմված բաղադրություններում. գորանոց, հյուրանոց, ձերանոց, հիվանդա- նոց, ավագականոց, փայտանոց, աղբանոց, աշխատանոց, արգե- լանոց, արհեստանոց, երաժշտանոց, վանառանոց, ամառանոց, վարդանոց, ծաղկանոց, մեղվանոց, գերեզմանոց, խորովածանոց, խոհանոց, թռչնանոց, հորքանոց, կովանոց, դպրոց, բախտոց, ծաղկոց, նստոց, ամբոց, բարբառներում՝ խոտնոց, երգնոց, գդալ- նոց. բ) նշանակում է հագուստեղեն, գործիք, իր, առարկա. գիշե- րանոց, գլխանոց, կրծանոց, դնշանոց, լանջանոց, բազկանոց, հա- կատանոց, ձեռնոց, վզնոց, ուսնոց, գոգնոց, թիկնոց, կրկնոց, ակ- նոց, մատնոց, խարտոց, սղոց, էտոց, կտրոց, պրկոց, ջնջոց, սրփ-

ոց, դրոշմոց, կշոց, փակոց, հալոց, մխոց, օրոց, օրորոց. գ) կազմում է արժեք և շահի նշանակությամբ բաղադրություններ. կոպեկանոց, փքանոց, տոննանոց, լիարանոց, ռուբլիանոց, մեկա- նոց, հինգանոց, երեքանոց, հարյուրանոց, հիսունանոց և այլն. դ) բայահիմքերից կազմում է բնածայնական գոյականներ. խըշոց, բշշոց, ջնկչնկոց, շվշվոց, գվգվոց, շրխկոց, թրխկոց, փսփսոց և այլն:

-Անուտ (ան+ուտ).— ցույց է տալիս մի բան եղած՝ դարձած. բայահիմքերից կազմում է ածականներ, հանդես է գալիս սակա- վաթիվ բաղադրություններում. հոսանուտ (հոսող), հրանուտ (հուր դարձած), հոսանուտ, կիզանուտ, վիծանուտ (վիծող, վիծվող), շիջանուտ (մարող):

-Անե<sup>1</sup>.— բայական հիմքերից կազմում է գոյականներ, որոնք ցույց են տալիս գործողության առարկայացած անունը կամ գոր- ծողության արդյունքը: Բաղադրությունների զգալի մասն այլևս բայանվանական նշանակությամբ չի գործածվում: Գործուն մաս- նակցություն է ցուցաբերում տերմինակազմության մեջ. գրկանե, փրկանե, հեկեկանե, լլկանե, աբհամարհանե, թախանձանե, փայ- փայանե, դավանանե, հայհոյանե, հեզնանե, էծնանե, օրհնանե, խորչանե, զարչանե, հառաչանե, ներշնչանե, առապանե, տան- ջանե, պատկառանե, բամբասանե, զրոսանե, հոսանե, էլեկտրա- հոսանե, բիոհոսանե, սրտակրանե (կզմխս.) և այլն: Գոյականներ / կազմում են ոչ բայական հիմքերից, ինչպես՝ խղնմտանե, պե- նանե, ամոքանե, տեղանե:

Անե<sup>2</sup>.— գոյական հիմքերից սակավաթիվ հավաքական գո- յականներ է կազմում, որոնց մեծ մասը գործածվում է ժողովրդա- խոսակցական լեզվում և բարբառներում. վարդանանե, հանդեր- ձանե, անեռանե, ջոջանե, մեծունանե, աղբերանե:

-(Ա)պան, -պան.— գոյական հիմքերից կազմված բաղադրու- թյուններում հանդես է գալիս «որն է բանով դբաղվող, պաշտոն կատարող» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. ձիա- պան, խոզապան, շնապան, սալապան, կառապան, դոնապան, ջրաղացպան, մեղցապան, պանդոկապան, խանութպան, պարտա- պան, պահապան, բարապան, բուֆետապան, պարտիզպան, այգե- պան: Հիշյալ ածանցով կազմված որոշ բաղադրություններ ունեն հագուստի, հանդերձի ընդհանուր նշանակություն. անթապան, ասեմկապան, գլխապան, դատապան, թաթպան, ձեկապան, կր- ձապան, սոնապան, սրճապան:

-(Ա)պանակ, պան+ակ ածանցների միացումով կազմված (ա)- պանակ վերջածանցով են ստեղծվել մի շարք բաղադրություններ.

լանջապանակ, քրթապանակ, գրչապանակ, պանպանակ, գրեապանակ, դրամապանակ:

-(Ա)ստան,— գոյականներ է կազմում ա) երկրի, վայրի հատուկ անուններ. Հայաստան, Ռուսաստան, Վրաստան, Հունաստան, Հնդկաստան, Չինաստան, Ղազախստան, Թուրքմենստան, Աֆղանստան, Տանկաստան, բ) հասարակ գոյականներ՝ «մի բանով հարուստ» նշանակությամբ. ծառաստան, քարաստան, լեռնաստան, այգեստան, սեխաստան, պտղաստան, մրգաստան, վարդաստան, գ) այլ հասարակ գոյականներ, տեղի, հավաքական և այլ իմաստներով. հեռաստան, մեկաստան, տափաստան, շահաստան (շուկա), ձիաստան, անդաստան:

-(Ա)վարի,— կազմում է մակերայններ, որոնք կարող են գործածվել նաև իբրև ածականներ. մակերայնորում ունի ճեման, պես, կերպով, ձևով՝ բառակազմական նշանակություն. Բաղադրությունների ղզալի մասը գործածվում է գործառական «ցածր» ոճում. քաղաքավարի, մարդավարի, գծավարի, գողավարի, տեղավարի, գյուղավարի, աղայավարի (աղավարի), թուրքավարի, խոզավարի և այլն:

-Ավետ, -վետ,— կազմում է ածականներ, բույց է տալիս «մի բանի շատություն, առատություն, մի բանով հարուստ, առատ լինելը», երբեմն ունի նաև սաստկական նշանակություն. պտղավետ, կանաչավետ, սիգավետ, հոտավետ, երանավետ, հաճանչավետ, կոհակավետ, լուսավետ, շահավետ, օգտավետ, արդյունավետ, բլրավետ, թիկնավետ, կաթնավետ, ձկնավետ, հարմարավետ, փափկավետ, կալիքավետ, կարմրավետ:

-Ավոր, -վոր,— կազմում է ածականներ և գոյականներ. Կենսունակ է նաև տերմինակազմության մեջ: Դրսևորում է հետևյալ իմաստները. ա) մի բան ունեցող, պարունակող. բծավոր, շերտավոր, կոթավոր, ծծմբավոր, բլուրավոր, կծավոր, թևավոր, եղջերավոր, պոչավոր, գիսավոր, վարսավոր, բեղավոր, զունավոր, ծոպավոր, ալիքավոր, մրնավոր, լուսավոր, ծաղկավոր, կարիզավոր, ողկուզավոր, դմակավոր, կնդակավոր(ներ), սմբակավոր(ներ), թիթեռնա-ծաղկավոր(ներ), երկչաբխլավոր(ներ), թփուկավոր(ներ): Բաղադրությունների մի մասը գործածական է նաև իբրև գոյականներ՝ ձայնավոր, թոփախտավոր, ծյուրախտավոր, ողնախտավոր, բ) մի բանով օժտված, մի բան կրող, մի բանին վերաբերող՝ պատկանող. հոգևոր, մարմնավոր, երկրավոր, մեծավոր, կամավոր, բանավոր, գրավոր, մոռավոր, մեկավոր, հեռավոր, պատշաճավոր, հարմարավոր, զգուշավոր, կարևոր, հարկավոր, ժամանակավոր, հաճախավոր, նենգավոր, սգավոր, սզվոր (ժող. խոսկց.), կեղծա-

վոր, արծանավոր, հաշակավոր, խոհերդավոր, բազավոր, աղան-գավոր, հեղինակավոր. գ) ցույց է տալիս գործող անձ, մի բան անող, մի բանով զբաղվող. հիմնականում կազմում է գոյականներ. զինվոր, բանվոր, դատավոր, ջրվոր, ֆողվոր, կալվոր, հեծվոր, կրվոր, հայցվոր, զործադրուկավոր, գերանդավոր, կապավոր, երդնակավոր, հրետանավոր, ձիավոր, դահուկավոր, արհեստավոր, աշխատավոր, աղանդավոր, կրճավոր, սպասավոր. դ) թվական և ածական հիմքերից կազմում է ածականներ՝ դասի անվան, ինչպես և սաստկական նշանակությամբ. միավոր, տասնավոր, հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր, բյուրավոր, շատավոր, էջվոր:

-Ավուն,— ածական հիմքերից կազմում է ածականներ՝ «տեղակ, նման» նշանակությամբ, բաղադրությանը տալով մի փոքր նվազական իմաստ. կարնավուն, երկարավուն, հաստավուն, ֆող-րավուն, դառնավուն, տափակավուն, կյուրավուն, նոսրավուն, խեն-րավուն, հիմարավուն: Հատկապես զրվում է գույն ցույց տվող բա-սերի վրա. կարմրավուն, դեղնավուն, սպիտակավուն, ներմախ-ժան, կանաչավուն, կապտավուն, մուգավուն, շիկավուն, թխավուն:

-Ատ,— կազմում է ածականներ, գոյականներ և բայահիմքեր՝ «մի բանից զուրկ, մի բան չունեցող, մի բանից պակասեցված» ընդհանուր բառակազմական նշանակությամբ. ֆնատ, զլխատ, կոնուտ, պոչատ, ֆքատ, կենատ, պնչատ, ձեռնատ, շրթնատ, կր-նատ, զունատ, շեղատ, թեֆատ, հաղատ, ամորձատ, տերևատ, երկատ(ել), մասնատ(ել), տողատ(ել), իջատ(ել), փայտատ, ցա-նատ, թլվատ, բացատ, մորատ, հեղեղատ, խրամատ, խորխորատ, սկնատ, ջակատ:

-Ար, -արք,— կազմում է գոյականներ, բայահիմքեր «մի բան անող, անելը» բառակազմական ընդհանուր նշանակությամբ: Հան-դես է գալիս սակավաթիվ բառերում. կեպար, պայտար, ծար, կացար, փայլար, մոլար, ծաղաբղար, զարդար(ել), մեծար(ել), աստվածարել, լուծարել, լուծարք, գործարք, ստուգարք, մեծարք, նամբարք:

-Արան,— բայահիմքերից, ինչպես և գոյական ու ածական հիմքերից կազմում է գոյականներ հետևյալ իմաստներով. ա) տեղի, վայրի, պաշտոնավայրի ընդհանուր բառակազմական նշանակությամբ. ննջարան, բնակարան, կացարան, ռառմնարան, հա-մալսարան, լսարան, արգելարան, բնթեքարան, դատարան, կա-յուրան, ժողովարան, կազմարան, ձուլարան, գործարան, բանգա-րան, բնդունարան, խաչարան, թեյարան, սրնարան, հյուպատոսա-րան, պաշտիարան, վեհարան. բ) զանազան բովանդակության դրբի, մատյանի անուն. այբբենարան, երգարան, տաղարան, բժըշ-

կարան, սարմուսարան, գրուցարան, կտակարան, հիշատակարան, բառարան, տերմինարան. ց) դործիքի, սպասքի զանազան անուններ. նվագարան, պահարան, նստարան, լվացարան, մատուցարան:

-Արար, -բար, — գոյական, ածական և բայական հիմքերից կազմում է հիմնականում գոյականներ և ածականներ՝ «մի բան անող, մի բանով զբաղվող» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. գյուտարար, ներկարար, կազմարար, ծախսարար, լվացարար, բաժանարար, շինարար, հավաքարար, խառնարար, խռվարար, նորարար, առողջարար, ախորժարար, գեղեցկարար, փրկարար, կործանարար, սննդարար, գործարար, հաշտարար, կիսարար:

-Արդ, — ոչ կենսունակ ածանց, պահպանվել է մի քանի բաղադրություններում, «ձև, նման, կերպ» բառակազմական իմաստով. գմբեքարդ, կորեքարդ, խորեքարդ, սեղանարդ, ձվարդ, բամբարդ:

-Արեն, -երեն, — կենսունակ է -երեն վերջածանցը, ժողովուրդների, երկրների անունների հիմքերից կազմում է լեզուների անուններ. հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, լեհերեն, հունգարերեն, իսպաներեն, իտալերեն, հնդկերեն, վրացերեն (գրաբ.՝ Վիրք > վրաց), հրեերեն, եբրայերեն, կոբեերեն, եթովպերեն, հունարեն, շինարեն:

-Ացի<sup>1</sup>, -եցի, -ցի, — դրվելով երկրների, քաղաքների և այլ տեղանունների վրա՝ ցույց է տալիս «մի երկրի, տեղի, վայրի բնակիչ» բառակազմական ընդհանուր իմաստ. երևանցի, Եվրոպացի, անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, եթովպացի, եգիպտացի, մոլդավացի, մոլդավցի, ուրուպվայցի, վիետնամցի, սադանցի, իսրայելցի, փարսեցի, լոռեցի, գարիսեցի, սյունեցի, ջավախեցի, տալեցի, գյումրեցի, մշեցի, վանեցի, արթիկցի, սիսիանցի, գյուղացի, Բաղաբացի, տեղացի: Մի շարք բառերում ցույց է տալիս որևէ ուսմունքի կամ դավանության հետևորդ. մծղենացի, բոնդրակեցի, մանիֆեացի, փարիսեցի:

-Ացի<sup>2</sup>, ցի, — գոյական և ածական հիմքերից կազմում է ածականներ ու գոյականներ՝ որևէ ձևով՝ կերպով գործողություն կատարելու իմաստով. հարևանցի, նշանացի, տաղացի, տառացի, փաստացի, արդարացի, խելացի, կանացի, բերանացի, առնացի, բռնցի:

-Ացու, -ցու, — գոյական հիմքերից կազմված գոյական և ածական բաղադրություններում արտահայտում է «մի բանի համար սահմանված լինելը, մի բան դառնալու ենթակա» բառակազմական ընդհանուր իմաստ. մսացու, սերմացու, կախանացու, դեյրացու, աստառացու, երեսացու, շորացու, հարսնացու, փեսացու, մայրա-

ցու, Բույրացու, հայրացու, տիրացու, տերերացու, վերակացու, մահկանացու, խառնվածացու, տղամացու, Բյուֆուացու:

-Յ, -ի, -յա, — գոյական հիմքերից կազմում են ածականներ՝ որևէ նյութից պատրաստված՝ կազմված ընդհանուր բառակազմական նշանակությամբ. աղամանդե, աղամանդյա, բրոնզե, բրոնզի, բրոնզյա, ավազե, մազե, չքե, լուսե, սառցե, քաղիֆե, կաուչուկի, քղթե, հրե, ձյունե, բամբակե, բամբակյա, բրդե, բրդյա, բրդի, աղի, դափնե, դափնյա, երկաթե, երկաթյա, երկաթի, արծաթե, արծաթյա, գրանիտե, գրանիտյա, փայտե, փայտյա, փայտի, զմուխտե, զմուխտյա:

-Նդ, — գոյական հիմքերից կազմում է ածականներ՝ «մի բանից շատ ունեցող՝ եղող» ընդհանուր բառակազմական իմաստով, լուծանիշ՝ ավետ, -ավար, -առ. հյուսիեղ, մարմնեղ, հնչեղ, ձայնեղ, շնչեղ, մսեղ, ջիւղ, կոնֆեղ, թիկնեղ, ուժեղ, գունեղ, համեղ:

-Նղեն, — գոյական հիմքերից կազմում է ածականներ և գոյականներ, որոնք ցույց են տալիս այն նյութը, որից պատրաստված է այդ առարկան. գոյականները ցույց են տալիս նաև որոշ տեսակի ստարկաներ՝ հավաքական նշանակությամբ. հողեղեն, մամեղեն, հրեղեն, նյութեղեն, մարմնեղեն, լուսեղեն, բոցեղեն, օսկեղեն, կերպասեղեն, ներմակեղեն, կտորեղեն, բրդեղեն, բամբակեղեն, շքեղեն, երչիկեղեն, խմորեղեն, բանջարեղեն, մրգեղեն, կաթնեղեն, ամանեղեն, զարդեղեն, գոհարեղեն, հագուստեղեն:

-Ննի, — ա) ածական և գոյական հիմքերից կազմում է ածականներ՝ «մի բան ունեցող, մի բանին հատուկ՝ վերաբերող» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. հայրենի, մայրենի, վայրենի, Բաղրավենի, արփենի, նրբենի, Բաղբենի, Բ) կենդանիների մորթի կամ միս նշանակությամբ. աշխարհենի, խոզենի, այծենի, գառնենի, եղջերենի, կղբենի, աղվեսենի, գայլենի, վագրենի. Գ) հատկապես գործուն է բույսերի՝ ծաղիկների, թփերի, տունկերի, ծառերի անունների կազմության մեջ. խնձորենի, տանձենի, խաղողենի, դեղձենի, կեռասենի, նոնենի, քթենի, բզենի, սնձենի, բարդենի, արմավենի, հաճարենի, հացենի, փշատենի, շագանակենի, նշգարենի, թղկենի, մեխակենի, խորդենի, ընկուզենի:

-Ննե, -անե, -ոնե, — ա) կազմում է հավաքական հոգնակիի անկազական ձևեր. Տիգրանենե, Առնոդենե, Գրիգորենե, Պողոսյանենե, Կիրակոսյանենե, Վարդանենե, խնամոնե, Բեռոնե, որոնց մեծ մասը կամ հնացած է կամ էլ գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում. Բ) -ոնե, — վերջածանցը կցվում է նաև դերանունների, ինչպես՝ մեռոնե, ձերոնե, իմանե, Բոնոնե:

-Նստ, -իստ, -աստ, — կենսունակ չէ, հանդես է գալիս սա-

կազմաթիվ բաղադրություններում տարբեր իմաստներով. գովեստ, պանեստ, զգեստ, ուտեստ, հանգիստ, հագուստ, ապրուստ, բա-  
ֆուստ, գալուստ, էլուստ, պահուստ, կապուստ, կուրուստ: -Ուստ  
վերջածանցը բացառականի նշանակությամբ գործածական է՝ առ-  
տաֆուստ, ներֆուստ, վերուստ բառերում:

-ԾՐՈՐՂ, -ԲՐՈՐՂ, — քանակական թվականների հիմքերից կազ-  
մում է դասական թվականներ. երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգե-  
րորդ, տասներորդ, հարյուրերորդ, բասնիկգերորդ, հազարերորդ:

-ԾԲ, (ծագել է գրք. եայլ ձևից) ա) նշանակում է ձծխ, արա-  
րողություն, հանդես: Բաղադրությունների որոշ մասը հնացած է,  
խկ զգալի մասն էլ գործածվում է ժողովրդախոսակցական լեզ-  
վում. ջրօրհնեք, դոնբացեք, երեսբացեք, աղօրհնեք, գերեզմանօրհ-  
նեք, տնօրհնեք, խաչօրհնեք, հանդերձօրհնեք, ականջկալեք: Գրա-  
կան լեզվում գործածական է նշանդրեք. բ) բառակազմական այլե-  
այլ նշանակությամբ կազմված են մի քանի այլ բաղադրություն-  
ներ. արժեք, մատնեք, փորեք, կողպեք:

-Ի, — ա) կազմում է բուսանուններ, հոմանիշ՝ -ենի վերջա-  
ծանցին. կաղնի, թղկի, սոսի, բարդի, կաղամախի, հանարի, մայ-  
րի, նոնի, ծիրանի, դեղձի, տանձի, նշի, բալի, կեռասի. բ) նյութի  
անուն նշանակող գոյականներից կազմում է ածականներ՝ մի բա-  
նից պատրաստված՝ շինված իմաստով, հոմանիշ՝ -ե, յա. արծաթի,  
փայտի, պղնձի, երկաթի. գ) ածական և գոյական հիմքերից կազ-  
մում է ածականներ և մակբայներ՝ տարբեր բառակազմական ի-  
մաստներով, հիմնականում «մի բան պարունակող, մի բանով օժ-  
տրված, մի բանից կազմված, մի բանի համար սահմանված» ընդ-  
հանուր նշանակությամբ. աղի, ջրի, անալի, արժանի, հարգի, պի-  
տանի, մալի, կտրովի, հավաստի, կարի, վայրի, բռնի, արգի, վա-  
ղեմի, կատաղի, կթի, կնամարդի, ամարդի, հանիրազի, լավամար-  
դի, վատամարդի, փաթանակի, երկդիմի, բազմապիսի, այլազգի,  
երկուայրի. նույն իմաստներով գործիքների ժողովրդական անուն-  
ներ. փլավիճմի, նաննախի, գաթանախի, լավաշի, խնոցի. դ)  
կազմում է բաղադրություններ՝ որպես ժողովրդական պարեղա-  
նակների, մեղեդիների անուններ. պանմտացի, թանցի, աշխակա-  
պի, բոլորվանի, գողթանի, շիրակի, բաղդաղի, լենինականի. է)  
անորոշ դերբայի վրա զրվելով՝ կազմում է ածականներ տարբեր  
բառակազմական իմաստներով. ցանկալի, բաղձալի, հասկանալի,  
զարմանալի, հիանալի, անուրանալի, անդառնալի, անհուտալի, օս-  
կալի, ախորժեղի, հանդուրժեղի, անընդգրկելի, վիճարկելի, արոհն-  
լի, նախանձելի, բննազատելի, դատապարտելի, անգերագանցելի,

բացառելի, շոշափելի, հիշատակելի, խնկելի, գովելի, ծիծաղելի,  
նանելի, արեղի, այրելի, գարշելի, բուժելի:

-ԻԿ, — ա) գոյական հիմքերից կազմում է գոյականներ՝ նվա-  
րական, փաղաքշական նշանակությամբ. հայրիկ, մայրիկ, պապիկ,  
նույրիկ, տատիկ, մանկիկ, աշիկ, քաթիկ, ձկնիկ, եղնիկ, ծիտիկ,  
մկնիկ, կախավիկ: Այս կարգի հասարակ որոշ անուններ վեր են  
ածվել հատուկ անունների. Աստղիկ, Գառնիկ, Լուսիկ, Բնարիկ,  
Հուսիկ: Բաղադրություններ է կազմում նաև հատուկ անունների  
կրճատված մասերին զրվելով. Բենիկ (Բենիամին), Անիկ (Աննա,  
Անահիտ), Օնիկ (Հովհաննես), Եղսիկ (Եղիսաբեթ), Դեզիկ (Դեզ-  
դեմոնա), Խաչիկ (Խաչատուր). բ) մի քանի գոյական հիմքերից  
կազմում է ածականներ. աշխարհիկ, բնաշխարհիկ, տոհմիկ, ֆա-  
ջատոհմիկ, գ) սաստկացնում կամ թուլացնում, երբեմն նաև փա-  
ղաքշական իմաստ է տալիս ածականներին. մանրիկ, ցածրիկ, փոփ-  
րիկ, լավիկ, կարեիկ, կոկիկ, մեղմիկ, հեզիկ, մտտիկ, հանդարտիկ,  
հալցրիկ, անաշիկ, լոկիկ, մնջիկ. դ) բայահիմքերից կազմում է  
ածականներ և գոյականներ՝ «գործողություն կատարող՝ կատա-  
րած» ընդհանուր բառակազմական նշանակությամբ. շրջիկ, ուռու-  
ցիկ, ագուցիկ, բնբացիկ, մածուցիկ, մուրացիկ, փոխանցիկ, կա-  
ռուցիկ, պայթուցիկ, թռուցիկ, մածիկ, ընկեցիկ, է) կցվում է բարդ  
բառերին, երբ վերջին բաղադրիչը բայահիմք է. վաղամեռիկ, ջրա-  
հեղձիկ, ստանմիկ, ականջմտիկ, դարակազմիկ, բարեկեցիկ, զբո-  
սաշրջիկ, գիշերօթիկ, գորակաշիկ, նորակաշիկ, անլուսանցիկ, սի-  
րատարփիկ, քափառաշրջիկ. զ) ժողովրդախոսակցական որոշ բա-  
ղադրություններում -իկ ածանցից առաջ ավելանում է լ. սուտլիկ,  
սչլիկ, ձախլիկ, կարելիկ, ցածիկ, հատլիկ, կոկլիկ, շաղլիկ, հեզ-  
լիկ. է) կենսունակություն է ցուցաբերում նաև տերմինակազմու-  
թյան մեջ. արուսիկ, իշատառիկ, ղուռնիկ, պղպեղիկ, ոսկեթելիկ,  
կատվատոռիկ (բուսանուններ), հազարտոռիկ, լայնակտցիկ, կապ-  
տավզիկ, խալատտնիկ, լուսոռիկ, ոսկեփոռիկ (կենդանիների ա-  
նուններ), եղջերիկ, ծղիկ, խնձորիկ, բոխախորշիկ, հազարաթեր-  
թիկ (կազմախոսական տերմիններ):

-ԻՆ, — տարբեր խոսքի մասերից կազմում է ածական. ածա-  
կան հիմքերին զրվելով՝ տալիս է սաստկական իմաստ. առաջին,  
վերջին, հետին, ստորին, ներքին, արտաքին, տակավին, շեշին,  
անհնարին, ներքին, խորին, լոին, դյուրին, հեշտին, ինքնին, կրկին,  
նորին, ամենեին, ըստերևույթին, բավականին, խավարշտին, ազ-  
գովին, զլխովին, բոլորովին, կամովին, հիմնովին:

-ԻՆՔ, — տարբեր խոսքի մասերին պատկանող հիմքերից կազ-  
մում է գոյականներ, հոմանիշ՝ -ունք, այժմ ոչ կենսունակ, առա-

չացել է գրաբարի հոգնակի ուղղականի ձևից. քրտինք (գրբ. քիրտըն), նախատինք, բաժինք, դաշինք:

-Իշ,— տարբեր հիմքերից կազմում է գոյականներ և ածականներ, որոնք նշանակում են նախատիպի ցույց տված գործողությունը կատարող անձ, առարկա, գործիք, մեքենա և այլն. կենսունակություն է ցուցաբերում տերմինակազմության մեջ. ա) ածականներ՝ խորտակիչ, ավերիչ, կիզիչ, թովիչ, տպավորիչ, սնուցիչ, մխիթարիչ, սփոփիչ, լրացուցիչ, համագիչ, վարակիչ, փառատիչ և այլն. գոյականներ՝ սբիչ, շարժիչ, ֆերիչ, գրիչ, բրիչ, կտրիչ, երեսաբրիչ, գիշատիչ, օդափսխիչ, հաղորդիչ, կիսահաղորդիչ, ջերմահաղորդիչ, օդամղիչ, կլանիչ, կարգավորիչ, սրիչ, ոսկերիչ, ցրիչ, երգիչ, մեներգիչ, սափրիչ, տպագրիչ, թարգմանիչ, արարիչ, մարգիչ, կուակազմակերպիչ, մեկուսիչ, գլանիչ, խոտհնձիչ, կալսիչ, կործանիչ, ումբակոծիչ, համարիչ, որոշիչ, հատկացուցիչ, բաղադրիչ և այլն: Վերջիններիս ղզալի մասը կարող է գործածվել նաև իբրև ածական:

-Ի՛ք,— անորոշ դերբայի վրա և բայական հիմքերին գրվելով կազմում է բաղադրություններ, որոնք ցույց են տալիս՝ գործողության ենթակա առարկան, գործողության կատարման տեղը, դերբայի ցույց տված իմաստով գործողությունը կատարող գործիք, ինչպես նաև ունեն «գործողության անվան կամ հետևանքի» բառակազմական նշանակություն. ուտելիք, ծխելիք, վառելիք, օծանելիք, հասանելիք, առնելիք, սառնալիք, անելիք, ասելիք, խաղալիք, նաշակելիք, հոտոտելիք, տեսանելիք, շոշափելիք, նեմելիք, լսելիք, ծամելիք, ընթրիք, կեռիք, գործիք, գալիք, կեղծիք, ավետիք, հավաստիք, դրվատիք, երաշխիք, կարծիք:

-Կան,— բայարմատներից և բայահիմքերից կազմում է ածականներ՝ «գործողության կատարման հակում ունեցող, մշտապես կամ շուտ կատարող» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. բաղադրությունները գործածվում են հիմնականում գործառական «դարձ» ոճերում, ժողովրդախոսակցական լեզվում. վազկան, խոտկան, շխտկան, գրուցկան, լալկան, ֆնկան, խարկան, մրսկան, վարձկան, բարձկան. յձկան:

-Լոտ,— գոյական և բայական հիմքերից կազմում է ածականներ՝ «մի բանի տրամադիր՝ ունակ՝ հակում կամ մի բանից շատ ունեցող» բառակազմական ընդհանուր իմաստով. վախկոտ, ամաշկոտ, պարձենկոտ, պահանջկոտ, դանդաղկոտ, ցասկոտ, զբաղկոտ, ծիծաղկոտ, ալարկոտ, զայրացկոտ, երազկոտ, ֆնկոտ, վազկոտ:

-Մունք,— առաջացել է գրբ. ումն ածանցով կազմված բաղադրությունների հոգնակի ուղղական՝ մունք ձևից: Բայական հիմ-

քերից կազմում է գոյականներ՝ անեզական, ընդհանրական, վերացական ընդհանուր նշանակությամբ, ցույց է տալիս կատարված որևէ բան կամ գործողության անուն. ուսմունք, պաշտամունք, բաժանմունք, համագումունք, ցուցմունք, նախապաշարմունք, ասմունք, սխալմունք, պատահմունք, արարմունք, բուրմունք, զգացմունք, վարմունք, հիացմունք, մտածմունք, մտորմունք, հարցմունք, ավերմունք:

-Յա,— գոյականներից կազմում է ածականներ հետևյալ բառակազմական նշանակություններով. ա) մի բանից (նյութից) պատրաստված՝ կերտված. հոմանիշ՝ -ե, -ի. արծաթյա, ոսկյա, երկաթյա, փայտյա, աղամանդյա, փղոսկրյա, պղնձյա, բյուրեղյա, բրդյա, սպակյա, բ) որևէ ուսմունքի հետևորդ, մի բան անող, գործող, ունեցող. գործունյա, ֆրիտունյա, սյաշտունյա, գ) մի բան ունեցող. հրաշյա, սևաշյա, կապուտաշյա, քիսաշյա, եռուսնյա, երկուսնյա, կարևուսնյա. դ) «ժամանակին, տեղին հատուկ» նշանակությամբ. եռամսյա, միամսյա, երկամսյա, կիսամսյա, ֆառամյա, ստորյա, հեղամյա, տասնամյա, հարյուրամյա, հազարամյա, երկարամյա, ծովափնյա, ծովագրյա, ստորեկրյա, ստորջրյա, վերերկրյա, ալլերկրյա:

-Յալ,— (գրաբարի -եալ. անցյալ դերբայի ածանց) կազմում է ածականներ և գոյականներ, ցույց է տալիս ավարտված, կատարված գործողության արդյունք՝ «մի բան ունեցող, մի բան արած՝ արված, մի բանին վերաբերող» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. ածանցյալ, կարծեցյալ, հանդերձյալ, սառուցյալ, տառապյալ, հավելյալ, անիծյալ, որակյալ, կատարյալ, միջանկյալ, ծպտյալ, մեռյալ, բացառյալ, կորուսյալ, երդվյալ, կարոտյալ, տրվյալ, օխտյալ, դիտավարյալ, մոլորյալ, միացյալ, կոչեցյալ, սիրեցյալ, դարձյալ, հիշյալ, օրհնյալ, արհուրյալ, ամբաստանյալ, բանտարկյալ, մեղադրյալ, նկչեցյալ, հանգուցյալ, հավատացյալ, հեծյալ:

Քերականական տերմինակազմության մեջ գործածական են՝ ստորոգյալ, անցյալ, բացահայտյալ, որոշյալ, հարաբերյալ, բարդարյալ, միավարյալ, փոխառյալ:

-Յակ,— գոյական, մասամբ նաև բայական հիմքերից գոյականներ է կազմում՝ ա) նվազական, փաղաքշական, ինչպես և «մի բանին պատկանող» բառակազմական նշանակությամբ. լուսնյակ, սպասյակ, կղզյակ, հմայակ, խցյակ, խրձյակ, ամուսնյակ, աղավալյակ, հոգյակ, այլակ, ջորյակ, լողուղյակ, վազուղյակ. բ) որևէ նյութից պատրաստված՝ շինված, մի բանի համար նախատեսված. քաղյակ, կանյակ, մաշկյակ, դարձյակ, շրջյակ, փղյակ, ուղղյակ,

նավաղղյակ: Թվականներին և թվականներով բարդված բաղադրություններին դրվելով՝ կազմում է գոյականներ. 1) «միատեսակ առարկաների խումբ» նշանակությամբ. հնգյակ, եռյակ, տասնյակ, քառյակ, հարյուրյակ. 2) «նախատիպի ցույց տված ժամանակահատվածը ընդգրկող ժամանակի միավոր» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. երկամյակ, միամյակ, հնգամյակ, տասնամյակ, հարյուրամյակ, հիսնամյակ, հազարամյակ, շաբաթօրյակ, կիրակնօրյակ:

-Յան,— ա) կազմում է հայերեն ազգանուններ (ծագում է գրբ. սեռականից՝ եանց). Սուփասյան, Հարությունյան, Մարտիրոսյան, Գրիգորյան. բ) «որևէ անձի կողմից ստեղծված, որևէ ուսմունքի ուղղության հետևորդ՝ կողմնակից» բառակազմական նշանակությամբ. լեհիկյան, հեգեյան, կանոյան, դարվինյան, բալզակյան, բեդերակյան, մշակյան, բաբոսյան, եգուսյան, աֆիլեսյան, հերկուլեսյան, թորգոմյան. գ) «որևէ ժամանակում կատարված՝ կատարվող, որևէ բանին հատուկ՝ վերաբերվող մի բան ունեցող» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. վեցթևյան, հինգտերևյան, բազմազլխյան, երեխեզվյան, աշակողմյան, ձախակողմյան, նախաշեղեղյան, երեկոյան, հոխնաղաբյան, հեղաբյան, ազգամիջյան, դաշտամիջյան, սլովակյան, լատինատմերիկյան, բալկանյան, աֆրիկյան, օվկիանոսյան, կոկորդիլոսյան, հունվարյան, նոյեմբերյան, սեպտեմբերյան, ապրիլյան, աշխառհաբարյան, գրաբարյան, գալստյան, փախստյան, կոբստյան:

-Յուն,— բայական հիմքերից կազմում է գոյականներ: Յույց է տալիս բնածայնություն, գործողության անուն՝ հավաքական բառակազմական ընդհանուր նշանակությամբ. հնչյուն, գոչյուն, շաշյուն, շառաշյուն, մնշյուն, խոխոշյուն, բնդյուն, խխնշյուն, վրնշյուն, նողփյուն, նայթյուն, նարնատյուն, դոդանջյուն, լայլյուն, հաշյուն, հառաշյուն, կոշյուն, սրտնջյուն, ֆրմնջյուն, արծակյուն, ստյուն, բախյուն:

-Ո,— ա) պահպանվել է սակավաթիվ բառերում. արգո, հարգո, մեծարգո, հանո, մարգահանո, աստվածահանո, բ) հիմնականում հանդես է գալիս իբրև (ա)բար, -ած, -ված վերջածանցների բաղադրիչ, ինչպես՝ գազանաբարո, նենգաբարո, հեզաբարո, ավագալաբարո, կնաբարո, ազնվաբարո, խստաբարո, բեքաբարո, պահածո, հանածո, եփածո, հյուսածո, հողվածո, մանվածո. գ) անձնանունների կրճատմամբ կազմում է կոշական ձևեր, երբեմն նաև նվագական-փաղաքշական նշանակությամբ. Հայրապետ-Հայրա, Աստվածատուր-Աստ, Արշակ-Արշո, Մարգարիտ-Մարգո, Խաչատուր-Խաչո, Վարսենիկ-Վարսո, Կարապետ-Կարո. դ) ժողովրդա-

խոսակցական լեզվում տալիս է սաստական իմաստ. լոշտո, դրմբո, շոշո, գոնշո:

-Ող,— (ենթակայական դերբայի ածանց) բայական հիմքերի վրա դրվելով՝ կազմում է ածականներ և գոյականներ՝ «գործողի անուն կամ որևէ մասնագիտության պատկանող, որևէ բանով զբաղվող անձ» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. գործուն է նաև տերմինակազմության մեջ. հանդուրժող, անհանդուրժող, աշխատող, ուրացող, փշող, զիջող, սիրող, վանառող, ծառայող, դիտող, հեռուստադիտող, կինոդիտող, սովորող, ուրացող, հարբեցող, ընթերցող, մատուցող, հայեցող, պարող, սպառող, արդյունաբերող, նավթարդյունաբերող, հանձնարդյունաբերող, տեսակավորող, ֆոտոսիրող, կինոսիրող, լրագրող, առաջնորդող, ուսանող, գրող, ֆերթող, ծնող:

-Ոն,— ոնք,— բայական և գոյական հիմքերից կազմում է սակավաթիվ գոյականներ՝ «գործողության հետևանք» արդյունքը, գործողի անունը» բառակազմական նշանակությամբ. կտրոն, գողոն, լցոն, կռոն, բրդոն, շերտոն, ծղոն, մղոն, պարոն, որսոն, զլղոն, ջարդոն, բափոն, ծեփոն, ձյութոն, կրոն, բերբոն, գեղոն: Երևա սահմանափակ կիրառություն ունի -ոնք վերջածանցը, որ հանդես է գալիս մի բանի բաղադրություններում. մերոնք, ձերոնք, վարթոնք, շրջոնք:

-Ով,— իբրև ածանց սակավաթիվ բաղադրություններ է կազմում, որոնք հիմնականում գործածվում են ժողովրդախոսակցական լեզվում. զոռով, ուժով, երեսով, շնորհքով, ժամանակով, սրտով, հասակով, զինով, կարևով. ինչպես և՛ փութով:

-Ովի,— ա) կազմում է ածականներ՝ «որևէ ձևով կատարված կամ կատարվող» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. ցրովի, բնառովի, ծալովի, կայովի, բացովի, վարձովի, բերովի, լիսովի, կախովի, կարովի, վնարովի, շարովի, հավաքովի. իբրև գոյականներ են գործածվում՝ ֆաշովի, ֆամովի, բ) մի բանի բաղադրություններում նույնանում է -ովին ածանցին. յուրովի, տնովի, կիսովի, ընկերովի, կամովի:

-Ովին,— ածական և գոյական հիմքերից կազմում է մակբայների՝ գործողության հատկանշի բառակազմական ընդհանուր նշանակությամբ. ամբողջովին, հիմնովին, բոլորովին, կամովին, խլմովին:

-Ոտ,— տարբեր հիմքերից կազմվում են ածականներ՝ «մի բան սունցող, պարունակող, մի բանով հարուստ՝ առատ» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. աղտոտ, մրտոտ, ժանգոտ, յուրտ, բեփոտ, արյունոտ, տղմոտ, ցեխոտ, հողոտ, փշոտ, լեռնոտ,



Ֆարոս, մսոտ, ջրոտ, ոսկրոտ, խոպոտ, կակազոտ, հավակնոտ, երկչոտ, սրտոտ, եռանդոտ, նախանձոտ, բունոտ, կրճոտ, դարդոտ, դիվոտ, վավաշոտ, պագշոտ, կրոտ:

-Ուտի,— պահպանվել է մի բանի բառերում «մի բանին պատկանող, մի բան պարունակող» բառակազմական նշանակությամբ. հնուտի, սնուտի, ցնցուտի, օտարուտի:

-Ուրդ,— խիստ կենսունակ է, հանդես է դալիս տերմինակազմության մեջ. ա) գոյականներ է կազմում՝ «որն է մասնագիտությամբ զբաղվող, մի բան կատարող անձ, մի բան ունեցող» ընդհանուր բառակազմական նշանակությամբ. առաջնորդ, աստղաճառագր, սուզանավոր, նավոր, նախորդ, անդեռդ, սայլորդ, վարորդ, կշռորդ, գնորդ, շմշկորդ, հեծանվորդ, ծանրորդ, ըմբռորդ, գնդացուորդ, ինչպես նաև՝ ձայնորդ, ավելորդ, պակասորդ, ձախորդ, միջնորդ. բ) կես-, կիս(կես)-, ասան-, քառ- հիմքերին կցվելով ցույց է տալիս նրանց մասը. քառորդ, չորորդ, ասանորդ, կիսորդ.

-Ոց,— ա) բնաձայնական և բայական հիմքերից կազմում է գոյականներ. գոռգոռոց, վժժոց, դժժոց, ծվժվոց, կոկոռոց, գլցցոց, շրխկոց, քրխկոց, դրխկոց, ծղրտոց. ինչպես նաև՝ կարոց, ժայթոց, մեախոց, ործկոց, գոռոց, վայրահաչոց, կապոց, թրչոց, հիչոց, կրոակոց, խախացոց. կրկնվող արմատական հիմքերից՝ վազվզոց, հալհլոց, քաշքշոց, ծակծկոց, պաղպղոց, բ) գործիքների զանազան անուններ, որոնց զգալի մասը գործածվում է տերմինաբանության մեջ. դրոշմոց, էտոց, գրոց, խարտոց, գզոց, գտոց, այրոց, մանոց, հատոց, շափոց, խրոց, անշատոց, գոդոց, ցամփոց, սփոռոց, ջնջոց. գ) նշում է գործողության կատարման տեղը, որով նույնանում է անոց վերջածանցին. գրապահոց, նավթապահոց, աթարոց, դարմանոց, հնոց, հալոց, մթերոց, հարոց, ամբարոց, ծնոց, հավոց, ապաստանոց, դարբնոց, հյուսնոց, կոշկակարոց, գրաշարոց, եղեգնոց, ծաղկոց, վարդոց, թռչնոց, աղավնոց, մեղվոց, մկնոց, ձրկնոց, եզնոց, դ) մարմնի մասերի նշված տեղերի համար նախատեսված հագուստ, ձեռնոց, թիկնոց, անթոց, ակնոց, հակտոց, բագկոց, բերնոց, ե) ժողովրդախոսակցական լեզվում գործածական որոշ բաղադրություններ՝ հավխոսոց, արևտոց, նրագվառոց, աչհանսոց:

-Չյա,— չեմ,— կազմում են սակավաթիվ գոյականներ, որոնցից որական լեզվում առավել զորածական են՝ ավեսաշյա, առհավատաշյա, ժողովրդախոսակցական լեզվում՝ կարողչեմ, բանողչեմ, բերողչեմ, կարողչեմ, «գործողության կատարման վարձ» բառակազմական նշանակությամբ:

-Ված, -վածք,— ա) բայական հիմքերից կազմում են գոյա-

կաններ, որոնք ցույց են տալիս գործողության կրող կամ որպես սրբյունը ստացված առարկան, որպես գործողության հետևանք, կամ գործողության ձևը՝ կերպը. նատված, զանգված, հերձված, սրազված, հողված, հարված, դարձված(f), դիպված, հավելված, այլվածք, շինվածք, կտրվածք, խառնվածք, հյուսվածք, վնասվածք, կազմվածք, ստացվածք, գրվածք, պատմվածք, խոսվածք, կեցվածք. բ) -ված վերջածանցով կազմվում են անկաններ՝ «տվյալ գործողությանը ենթարկված, տվյալ վիճակում գտնվող» բառակազմական նշանակությամբ. կանխատեսված, հանաչված, սիրված, նվիրված, քափրվված, լլխտված:

-Ու,— հիմնականում բայական հիմքերից կազմում է անկաններ, որոնց մի մասը գոյականացել կամ գոյականական կիրառություն ունի. Համարանություն, գործող կաղապարով տարբեր հիմքերից կազմվում են նոր բաղադրություններ: Ունի «հիմքի ցույց սված գործողությունը կատարողի՝ գործողի անվան» բառակազմական ընդհանուր նշանակություն. ազգու, Լսու, հատու, կծու, ճախու, վաճու, էամահու, փոխառու, փորձառու, ակնառու, վրիժառու, ավարառու, թռչակառու, վաշխառու, կապալառու, քեկնաձու, ձեռնաձու, ժողովաձու, հավաքաձու, խնամաձու, վերակացու, վերահասու, ամառկու, խուզարկու, խնկարկու, բողբոսարկու, բանասարկու, ողբերգու, կատակերգու, օրհներգու, տաղերգու, բնաբերգու, եղբերգու, խաշու, փաղցու, խորովու, չարու, այցելու:

-Ուրյուն,— ամենակենսունակ գոյականակերտ վերջածանցներից է, կցվելով տարբեր խոսքի մասերին պատկանող հիմքերին գործուն մասնակցություն է ցուցաբերում տերմինակազմության մեջ: Կազմում է բաղադրություններ՝ «գործողության անուն, մի բան անելը՝ ինչն էլ, մի բանին պատկանելը» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. մեծուրյուն, լավուրյուն, գեղեցկուրյուն, հարմարուրյուն, հավասարուրյուն, մարդկուրյուն, ազգուրյուն, կարմրուրյուն, սպիտակուրյուն, բանկուրյուն, մեցուրյուն, ցնծուրյուն, գծուրյուն, գովերգուրյուն, բանակցուրյուն, գյուղացիուրյուն, ուսանողուրյուն, փաղափայցիուրյուն, լեզվաբանուրյուն, գրականագիտուրյուն, գրախոսուրյուն, դեսպանուրյուն, միևնուրյուն և այլն:

-Ուել,— տարբեր խոսքի մասերին պատկանող հիմքերից կազմում է՝ ա) գոյականներ՝ նվազական, փաղաքշական իմաստներով. նեկուկ, հորթուկ, գեղուկ, մաղուկ, թզուկ, գովուկ, հավուկ, իշուկ, գառնուկ, ձագուկ, ծերուկ, որբուկ, բ) գիտական տարբեր բնագավառների տերմիններ. բուսանուններ՝ շամբուկ, վառվառուկ, վտամիշուկ, գնձուկ, պղպեղուկ, սխտորուկ, լայնատերևուկ, բյու-

բաւեւեակ, աղբարդակ, կաղամբակ. հիվանդութիւններն անուն- նէր՝ կարմրակ, դեղնակ, խոզակ, ջրջրակ, ջրգոռակ, գ) սաստկաց- նում է ածականների իմաստները. տափակ, պաղակ, գիրակ, սե- վակ, խղնակ, երկարակ, դ) բայահիմքերից և բայարմատներից կազմում է ածականներ՝ «մի բան անող, նախատիպի հատկանիշն ունեցող» բառակազմական նշանակութեամբ. բաղադրութիւնների մի մասը գործածվում է իբրև գոյական. կամացուկ, թևանցուկ, վաղանցուկ, նեղնեղուկ, դիպուկ, կտրուկ, բանուկ, խուսափուկ, բալթփուկ, հերառուկ, վերապրուկ, անուկ, ձմերուկ, խաշմերուկ, ջերմուկ, մածուկ, բմբակ, արդուկ:

—Ունի,— գոյական հիմքերից կազմում է իգական սեռ ցույց տվող անձի անուններ՝ «աղջիկ, կին» բառակազմական ընդհանուր նշանակութեամբ. ա) հասարակ անուններից, բանվորունի, տան- արունի, ուսանողունի, բժշկունի, դերասանունի, աշակերտունի, ուսուցչունի, բարեկամունի, ֆարտուղարունի, մանկաբարձունի, դի- ցունի, իշխանունի, պարունի, սպասունի, երգչունի, թագունի, կայ- սրունի, բ) ածականներից. ազնվունի, գեղեցկունի, գեղունի, ա- վագունի, իսկունի, համեստունի, պարկեշտունի, օտարունի, գար- մանունի, երանունի, գ) ազգերի՝ ժողովուրդների անուններից, մա- սամբ նաև տեղանուններից. հայունի, արմենունի, ենդկունի, լեմ- ունի, վրացունի, ֆրանսունի, իտալունի, եթովպունի, գերմանունի, ամերկունի, եվրոպունի, փարիզունի, վանունի, դ) անձի հատուկ անուններից՝ Վարդանունի, Տիգրանունի, Պերնունի, Վարդուհի:

—Ում,— կազմում է բայանուններ՝ գործողութեան անվան ընդ- հանուր բառակազմական նշանակութեամբ. ա) էլ խոնարհման պարզ բայերի ներկայի հիմքից. բորբոխում, հուզում, ծագում, թա- դում, դրվագում, ձգում, ձգձգում, ռոտում, առևանգում, վերանո- րոգում, բ) ալ— խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքից. լվացում, գգացում, բացառութեամբ այդ կարգի բնաձայնական բա- յերի. ծվլում, նվնվում, գեղգեղում, գ) ան սոսկածանցավոր ալ խոնարհման, և, չ սոսկածանցավոր և պատճառական —ացն, եցն, ցն բայերի անցյալի հիմքից. գոհացում, խորթացում, մեծեցում, հեռացում, մոտեցում, յարացում, լվացում, հագեցում, մարմարե- ցում, կանխատեսում, անցում, հարցում, փլում, հատուցում, ու- սուցում, կառուցում: Կենսունակութիւն է ցուցաբերում տերմինա- կազմութեան մեջ. հոլովում, խոնարհում, գեղում, ֆմայնացում, շրթնայնացում, ածանցում (քերականական), բաժանում, հանում, գումարում, բազմապատկում (մաթեմատիկական), հրում, պոկում, սեղում (մարդական), գոլորշիացում, ֆլմիացում և այլն:

—Ույր,— կազմում է գոյականներ՝ հավաքական, վերացական

և այլ նշանակութիւններով, ցույց է տալիս գործողութեան անու- նը՝ արդունքը. բնույթ, սովորույթ, ավանդույթ, նորույթ, մշա- կույթ, մրցույթ, երևույթ, մակերևույթ, օդերևույթ, ասույթ, հաշ- կերույթ, հացկերույթ, հավաքույթ, երեկույթ, ցերեկույթ, շահույթ, ծածկույթ, արժույթ, գայույթ, ձանձույթ, հասույթ: Գործուն է հատկապես տերմինակազմութեան մեջ. հնչույթ, ձևույթ, բառույթ, իմաստույթ, շարահյուսույթ, պարբերույթ, բաղաձայնույթ, թեփույթ (քերականական), տիրույթ (մաթեմ.), հասույթ (տնտեսագ.):

—Ույց,— հանդես է գալիս մի շարք գոյական և ածական բա- ղադրութիւններում. սառույց, ագույց, զեկույց, կառույց, նորակա- ույց, համակառույց, հուշակառույց, կիսակառույց, թերակառույց, ամբակառույց, բարձրակառույց, հանգույց, հիդրոհանգույց, ռադիո- հանգույց, սուռույց, բկուռույց, փխուռույց, մատույց, կառամա- տույց, նավամատույց, դյուրամատույց, դժվարամատույց, անհե- տույց, պարտաճատույց, վարձաճատույց, երախտաճատույց, եր- գուսույց, պարուսույց, ինֆուսույց:

—Ույ՛ք,— կազմում է սակավաթիվ գոյականներ՝ հիմնականում գործիքի անուն, առարկայի անուն և այլ բառակազմական նշա- նակութիւններով. պիտույ՛ք, կահույ՛ք, գանույ՛ք, դրույ՛ք, խնջույ՛ք, հանույ՛ք, ֆմահանույ՛ք:

—Ուն,— կազմում է ածականներ՝ «գործողութիւնը իբրև հատ- կանիշ ունեցող, որևէ վիճակում գտնվող» բառակազմական իմաստ- ներով. գործուն, շարժուն, երեւուն, մպաուն, սիրուն, զգայուն, խռ- սուն, ծաղկուն, փայլուն, շողշողուն, կայուն, մնայուն, գնայուն, տոկուն, դիմացկուն, դողդոջուն, հնչուն, կարկաչուն, կպչուն. մի բանի գոյականներ կամ գոյականաբար գործածվող բաղադրութիւն- ներ. ստորուն, գեղուն, թռչուն, գիտուն, իմաստուն, կոթուն, մածուն, աղուն, ցողուն:

—Ունդ,— կազմում է սակավաթիվ բաղադրութիւններ՝ գործո- ղութեան արդունքը, առարկայի անունը բառակազմական ընդհա- նուր նշանակութեամբ. ծնունդ, սնունդ, սերունդ, ելունդ, ինչպես նաև՝ բաւեւեւունդ, վաղածնունդ, վերածնունդ:

—Ունի,— ա) կազմել է հին հայկական իշխանական տոհմին պատկանող ազգանուններ. Բագրատունի, Արծրունի, Արշակունի, Արշարունի, Ամատունի, Ռշտունի, բ) անվանական և բայական իմքերին զրկելով կազմում է տարբեր իմաստներով բաղադրո- լիւններ. ծերունի, արեգունի, տերունի, արեւունի, գոլունի, մե- ծունի, տխրունի, խնկունի, հավլունի:

—Ունէ,— կազմում է գոյականներ՝ հավաքական նշանակու- լիւմը, ծաղիկ է գրաբարի —ն վերջացող բառերի հոդնակի ուղղա-

կանի վերջավորությունից, համեմունք, հիմունք, սկզբունք, ախունք, բարձունք, իրավունք, պաշտամունք, ծաղկունք, մկանունք, կաշունք, փշրունք, ցցունք, սկզբունք, համագումունք, բաժանմունք, սամունք, արարմունք, վարմունք, հուզմունք, քիկունք, շրթունք:

—Ուշ,— հանդես է գալիս մի քանի բաղադրություններում՝ «առարկայի» գործողության անվանման, գործողության արդյունքի» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. տեսուշ, վերատեսուշ, ավտոտեսուշ, բնկալուշ, տնկալուշ, անտերունշ, վայելուշ, սրտառուշ:

—Ուտ,— հանդես է գալիս սակավաթիվ բաղադրություններիում. արտաճուտ, ներճուտ, վերճուտ, կոռուտ, էլուտ, բաճուտ, փախուտ, գալուտ:

—Ուտ,— ա) կաղմում է գոյականների՝ «տեղի, մի բանի առատություն» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. քիճուտ, ծառուտ, աղուտ, մացառուտ, եղեգնուտ, ավագուտ, փաբառուտ, փաբուտ, տղմուտ, զալարուտ, ծիրանուտ, տանձուտ, ծանձաղուտ, խուտ, հաննուտ, մաբուտ, ուտուտ, կաղնուտ, էղենուտ, կեշուտ, շլաբուտ, խնձորուտ, բեղուտ, բ) ածականներին տալիս է սաստկական իմաստ. դժվարուտ, լպրծուտ, հոսանուտ, հրանուտ, կիզահուտ, մկանուտ, մսուտ, ջրուտ, գ) կաղմում է գոյականների՝ տարբեր իմաստներով. օգուտ, քրվուտ:

—Ուրդ,— տարբեր խոսքի մասերին պատկանող հիմքերից կազմում է բաղադրություններ՝ «պորժոզի, գործողության անուն», ինչպես նաև հավաքական իմաստներով. ժողովուրդ, խորհուրդ, խառնուրդ, հագուրդ, հավաքուրդ, արձակուրդ, ահուրդ, նվազուրդ, դաշնուրդ, ուղեկցուրդ, պարապուրդ, լսուրդ, անկարուրդ, ցամաքուրդ, բազմախորհուրդ, շաբախորհուրդ և այլն:

—Ուց,— ա) ածական հիմքերից կաղմում է գոյականներ. դեղուց, սպիտակուց, նեղուց, ողնուց, գիրուց, քնթղուց, բ) տարբեր խոսքի մասերին պատկանող հիմքերից կաղմում է մակբայներ. վաղուց, մանկուց, հենուց, փոքուց, մառուց, շատուց, էգուց, առավառուց և այլն, որոնց ղգալի մասը գործածական է ժողովրդախոսակցական լեզվում:

—Ուք,— կաղմում է գոյականների՝ «գործողության արդյունք» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. մաղուք, փամուք, փուք, ալբուք, արևալբուք, փեռուք, սղոզուք, տալիուք, մալտուք, խշխշուք, սրտմալուք, գինարբուք, սրտխառնուք, հրվառուք, ծեծկրուք, նանկուք, փաշկուք, զգվառուք:

—Ք,— տարբեր խոսքի մասերին պատկանող հիմքերից կազմում է գոյականների՝ հիմնականում «գործողության անուն», ինչպես նաև «գործողության արդյունք, գործողության կատարման

տեղ» բառակազմական ընդհանուր նշանակությամբ. գիրք, տարիք, ծալք, խաղք, վագք, պարուք, շարք, տեսք, էջք, անցք, տուք, մուք, էլք, դիրք, բերք, զնացք, լվացք, արժանիք, արժունիք, հայրենիք, հումք, լայնք, հաշակելիք, տեսանելիք, ա) որոշ գոյական հիմքերին գրվելով՝ չի փոխում նրանց իմաստը. աշք, ձնոք, ուտք, միաք, մեղք, շնորհք, բ) որոշ հիմքերին կցվելով՝ փոխում է նրանց իմաստը. բաժին-բաժինք, տարի-տարիք, քե-քեք, տեղ(ի)-տեղիք, գիր-գիրք, հար-հարք, հավ-հավք, խաղ-խաղք, հետ-հետք, գ) որոշ հիմքեր գործածվում են միայն -լ- վերջածանցով. կառք, փառք, խելք, աղսք, կիրք, դեպք, բարք, վարք, կյանք, օրենք, վերք, աբարք, բարեառք, նշանառք, եզերք, զարք, ժամք:

### ՀԱՊԱՎԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հապավում, հապավական բարդություններ: Հապավումը բաղադրյալ բառերի կամ անվանումների կրճատված մասերի միացումով բաղադրություն կազմելու եղանակ է և այդ եղանակով կազմված բարդությունը<sup>16</sup>. ինչպես՝ բուն—բարձրագույն ուսումնական հաստատություն, ՍՍՀՄ—Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, կենտրոն—կենտրոնական կոմիտե, արհկոմ—արհմիութենական (արհեստակցական միություն) կոմիտե, փաղթուրդ—քաղաքական բյուրո, փաղթուրդ—քաղաքային սովետ, գյուղապետ—գյուղական սովետ, ՀամԿԿԵՄ—Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն, սոցմեցություն—սոցիալիստական մրցություն:

Հապավումներն առաջացել են համառոտագրությունների հիման վրա և սկզբնապես ներկայացրել են դրանց մի տեսակը: Հետագայում հապավումը հեռանալով և իր կապերը խզելով համառոտագրությունից, դարձավ բարդ բառերի կազմության եղանակներից մեկը: Համառոտագրություններն այժմ էլ շարունակում են իրենց գոյությունը, ինչպես՝ պրոֆ. (պրոֆեսոր), դոց. (դոցենտ), ընկ. (ընկեր), ք. (թիվ, թվական), օր. (օրինակ) և այլն, որոնք խոսքերություն հապավումների՝ նոր բառեր չեն կաղմում:

Հապավումների, իբրև նոր բառերի ստեղծման եղանակի, աշխուժացումն ու տարածումը սկսվում է հատկապես 20-րդ դարի երկրորդ տասնամյակից և շարունակվում է առայսօր: Նրանց անհատարձակ տարածումը պայմանավորված է ինչպես գործնական պահանջների (տեղի, ժամանակի խնայողության), այնպես էլ կյանքում կատարված հասարակական-քաղաքական գործունեություն, գի-

<sup>16</sup> Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, 1980, էջ 455—472: Ժամանակակից հայոց լեզու, 1-ին հ., 1979, էջ 351—377:

տատելանիկական առաջընթացով: Ժամանակակից հայերենի հապավական բաղադրությունների կազմության դործում մեր ժամանակներում հատկապես ուսանողների՝ իբրև ուղեցույց լեզվի դերն արտահայտվում է նրանով, որ այն հայերեն հապավական բաղադրությունների, բաղադրիչների իմաստների հիմնական աղբյուրն է ծանայում: Հայերենում հապավումներ կազմվում են հիմնականում ուսանողների փոխառված իմաստների հիման վրա, որոշ դեպքերում նաև ուսանողների կառուցվածքային նմանողություններ: Ռուսերենում տարածված իմաստների փոխառություններ կամ կառուցվածքային պատճենմամբ են կազմված, օրինակ՝ ՍՍՀՄ, ՍՄԿԿ, արագածմի-նիստարություն, ՄՍԿ, ԲՇԳ, բուն, կոլտեսեսություն, աշխօր, ինայ-դրամարկդ, պեաբանկ, պետավառեսույություն, Հայկական ՍՍՀ, բաղադրությունները: Ռուսերենից և ուսանողների միջոցով կատարվում են նաև հապավումների փոխառություններ:

Հապավական բաղադրության կազմում հապավված բաղադրիչը կոչվում է հապավույթ:

Հապավույթները լինում են՝ տառային և վանկային կամ բառամասային: Տառային հապավույթները կրճատված բաղադրիչների սկզբնատառերն են, ինչպես՝ Հայկական ՍՍՀ—Հայկական Ս(ովետական) Ս(ոցիալիստական) Հ(անրապետություն): Վանկային կամ բառամասային հապավույթները կազմվում են հիմնականում բառի առաջին մեկ կամ երկու վանկից. ինչպես՝ ֆաղթյուր, կենտկոմ, զինկոմ, աշխօր, աշխոկ, ֆաղթողկրքածվար, կոլտեսեսական, պրոֆանդամ, սենդառ, սոցմոցություն:

### ՀԱՊԱՎԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հապավական բաղադրությունները լինում են շորս տեսակ՝ տառային, վանկային (կամ բառամասային), վանկատառային և վանկաբառային:

1) Տառային հապավումները կազմվում են միայն տառային հապավույթներով. ինչպես՝ ՍՍՀՄ, ՍՄԿԿ, ՄՍԿ (միավորված ազգերի կազմակերպություն), բուն (բարձրագույն ուսումնական հաստատություն), ԲՇԳ (բնակարանային շահագործման գրասենյակ), սլապ (պատրաստ աշխատանքի և պաշտպանության), հօպ (հակաօդային պաշտպանություն): Տառային հապավումներից՝ միայն բաղաձայն հապավույթներով կազմվածները արտասանվում են ր հենարանով (ՄըՍըՀըՄը). բաղաձայնով կազմված հապավումների արտասանության ժամանակ բաղաձայնների հենարան են ծառայում ձայնավորները:

2) Վանկային (կամ բառամասային) հապավումները կազմը-

վում են միայն վանկային (կամ բառամասային) հապավույթներով. ինչպես՝ կենտկոմ (կենտրոնական կոմիտե), ֆաղկոմ (բաղաձային կոմիտե), կուսկոմ (կուսակցական կոմիտե), ժողկրքածվար (ժողովրդական կրթության բաժնի վարիչ):

3) Վանկատառային հապավումները կազմվում են վանկային և տառային հապավույթներով. ինչպես՝ ՀամԿԿՄ (Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն), ՍՍՀՄ կենտվիկվարչություն (Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական վիճակագրական վարչություն):

4) Վանկաբառային հապավումները կազմվում են վանկային հապավույթով և բառով. ինչպես՝ ժողդատարան (ժողովրդական դատարան), ինայդրամարկդ (ինայրդական դրամարկդ), կուսհամագումար (կուսակցության համագումար), սպառնալիցա (սպառնողական կոոպերացիա):

Ժամանակակից հայերենը ուսանողներից կամ ուսանողների միջոցով կատարում է նաև հապավական բաղադրությունների փոխառություններ: Ռուսերենից անմիջական փոխառություններ են՝ զագս (ЗАГС—Занксь Актон Гражданского состояния), Գեպ (НЭП—Новая Экономическая Политика), ՏԱՍՍ (ТАСС—Телеграфное Агентство Советского Союза), գլավլիտ (Главлит—Главное управление по делам литературы и издательства), ԴՕՍԱԱՖ (ДОСААФ—Добровольное Общество Содействия Армии, Авиации и Флоту), լավսան (Лавсан—Лаборатория Высших Органических Соединений): Հայերեն չեն թարգմանվում նաև մեծ մասամբ միութենական նշանակության տարբեր անվանումները. ինչպես՝ «Սպեցմեխբրետնոստրոյ», «Սպեցէլվատորմեյնոտած», «Պրոմգերնոպրոեկտ», «Ինտերբիտամաշ», «Տրանսէլիտգտելանիկա», «Դոնեցկուգուր» և այլն:

Ռուսերենի միջոցով է կատարվել նաև օտարլեզու մի շարք հապավումների փոխառությունը. ինչպես՝ ՅՈՒՆԵՍԿՈ (անգլ. UNESCO—United Nations Educational, Scientific and Cultural Organization, ռուս. ЮНЕСКО)— միավորված ազգերի կրթության, գիտության և կուլտուրայի կազմակերպություն: ՆԱՏՕ (անգլ. North Atlantic Treaty Organization, ռուս. НАТО)— Հյուսիս-Ատլանտյան դաշինքի կազմակերպություն: Լավեր (անգլ. light amplification stimulated emission of radiation)— լույսի ուժեղացում ստիմուլավորված ճառագայթման միջոցով (ռուս. лазер): ՖԻԻԵ (ֆրանս. Fédération internationale des échecs, ռուս. ФИДЕ— շախմատի միջազգային ֆեդերացիա):

ՀԱՊԱՎԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԹԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Որոշ հապավումների և հատկապես վանկային ու վանկաբառային հապավական բաղադրությունների մեջ առկա է մի քանի կամ բաղադրիչներից մեկի ղեղշում. ինչպես, օրինակ՝ Երբաղիննախագիծ—Երևանի քաղաքային շինարարության (պետական) նախագծային (ինստիտուտ), Երբաղննդառ—Երևանի քաղաքային սընընդի առևտրի (բաժին), մեխմար—մեխանիկամաթեմատիկական (ֆակուլտետ), Հայքմատ—Հայաստանի ջրային մատակարարման (տրեստ), Հայմառառ—Հայաստանի մատակարարման առևտրի (տրեստ)։

բ) Բառակազմական որոշակի արժեք են ներկայացնում և հապավման առանձին տեսակ են համարվում, այսպես կոչված, բառային հապավումները։ Բառային հապավումների առանձնահատկությունն այն է, որ նրա հապավված բաղադրիչը իր բառային տեսքը չի կորցնում՝ կրճատվում են ածանցներն ու վերջավորությունները։ Այսպիսի հապավական բաղադրությունը մոտենում է իսկական բարդությանը. ինչպես, օրինակ՝ պլանբաժին, գյուղխորհուրդ, գյուղմինխառուրյուն, ծնողկոմիտե, առևտարդյունաբերուրյուն, կենցաղկոմբինատ, կազմխորհուրդ, մեքողկաբինետ։

գ) Հապավական բաղադրությունների որոշ մասը կարող է ածանցման շնորհիվ նոր բառերի կազմության հիմք դառնալ. ինչպես՝ բուն—բունահան, միջբունահան, ներբունահան, խնայդամարկղ—խնայդամարկղային, զագո—զագասավորել, զագասավորում և այլն։

դ) Հապավական բաղադրությունները, որպես զերադանցապես տեղական, միութենական և նույնիսկ միջազգային նշանակության զանազան հիմնարկների, ձևոնարկությունների, միավորումների, կուսակցությունների, երկրների և այլն անվանումներ, հիմնականում աշխարհագրական ու հատուկ անուններ, անվանակարգային հասկացություններ են, հետևաբար և դուրս են մնում լեզվի բառային կազմից։ Նրանց չնչին մասն է միայն, որ իբրև լիարժեք բառ մուտք է գործել լեզվի համագործածական բառապաշարը։

Վերահիշյալ յուրահատկությունների հետևանքով հապավական բաղադրությունների քանակը լեզվում մշտական փոփոխման է ենթարկվում, անընդհատ կազմվում են նորերը, որոշ մասն էլ զանազան օրյակտիվ պատճառներով դուրս է մղվում ամենօրյա գործածությունից։

ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դարձվածաբանությունը՝ բառագիտության այն բաժինն է, որն ուսումնասիրում է դարձվածքները, լեզվի դարձվածքների հարստությունը, դարձվածքային համակարգը ժամանակակից վիճակում և պատմական զարգացման մեջ։ Դարձվածաբանությունը, մյուս կողմից, լեզվում առկա դարձվածքների ամբողջությունն է։

Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանվում է դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտուրյուն, հատուկ ոճ, որոշ դեպքերում նաև՝ իդիոմ<sup>2</sup> կամ իդիոմային արտահայտուրյուն։ Վերջինս արդի հայերենում գործածվում է ավելի նեղ իմաստով, որպես դարձվածքի մի տարատեսակը։ Արևմտահայ գրական լեզվում իդիոմի փոխարեն շրջանառության մեջ է դրված հատկաբանուրյուն բառը։

Դարձվածքների՝ որպես լեզվի ինքնուրույն իմաստային միավորների ուսումնասիրությունը հայ լեզվաբանության մեջ ուշադրության է արժանացել 30-ական թվականներից սկսած՝ Մ. Աբեղյանի կողմից։ Հետագայում դարձվածքների ուսումնասիրությունը կատարվել է, նախ, նրանց իմաստային և ոճական-կիրառական և, ապա՝ կառուցվածքային, բաղադրիչների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների և դարձվածքների ծագման տեսակետից։

Նեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա դարձվածքի կամ դարձվածաբանական միավորների տարբերակման, դարձվածաբանության ընդգրկման սահմանների վերաբերյալ։ Որոշ մասնագետներ դարձվածաբանության մեջ ընդգրկում են

<sup>1</sup> Դարձվածաբանությունը հայերեն տերմինը օտարազգի φρασεολογια բառի պատճենումն է։ Ռուսերեն φρασεολογια բառը կազմված է հունարեն phrasis—զարնվածք, բառացի՝ արտահայտություն և logos— ուսմունք, բառացի՝ գիտություն, հասկացություն բառերից։

<sup>2</sup> Իդիոմ տերմինը ծագում է հունարենից, idioma նշանակում է յուրահատուկ արտահայտություն, idiome— լեզու, բարբառ։

բոլոր կայուն կապակցութիւնները, ուրիշները սահմանափակվում են բառակապակցութիւնների որոշակի խմբով:

Դարձվածաբանութիւնի ամբողջ լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ ներգրավում են առածները, ասացվածքները, աֆորիզմները, թեւավոր խոսքերը, ոմանք անգամ՝ բոլոր հարադրութիւնները, բարդ հարադրական շաղկապները, բառակապակցական տերմինները և այլն, մյուսները՝ դարձվածաբանութիւնի ամբողջ նեղ ըմբռնման կողմնակիցները, հրաժարվում են վերոհիշյալից և հաճախ դարձվածքներ են համարում միայն իդիոմային արտահայտութիւնները (իդիոմները):

Դարձվածքների տարբերակման հարցում մասնագիտական գրականութիւնի մեջ որոշակիորեն ձևավորվել է երկու ուղղութիւն:

Լեզվաբանների առաջին խումբը (Բ. Ա. Լարին, Ս. Ի. Օժեգով, Ա. Գ. Ռուզնե, Ս. Վ. Կունին, Ա. Ի. Մուրտկով և ուրիշներ) դարձվածք է համարում բառին համարժեք բառակապակցական (հարադրյալ) այնպիսի իմաստային միավորը, որին հատուկ են վերաիմաստավորումը և փոխաբերականութիւնը: Այդ ուղղութիւնի ներկայացուցիչները դարձվածաբանութիւնից դուրս են թողնում առածները, ասացվածքները, թեւավոր խոսքերը, համարյա բոլոր բառակապակցական տերմինները, այսինքն՝ բոլոր այն բառային կապակցութիւնները, որոնք ղեռ չեն վերածվել բառային անբաժան արտահայտութիւնների, լիովին ղեռ չեն ստացել փոխաբերականընդհանրական իմաստ կամ բովանդակութիւն և ղեռ ամբողջապէս չեն դարձել վերաիմաստավորված կամ փոխաբերական իմաստ ունեցող կապակցութիւններ:

Դարձվածքային միավորների տարբերակման հարցում այլ սկզբունքներով է առաջնորդվում սովետական լեզվաբանների մյուս խումբը (Լ. Ա. Բուլախովսկի, Ա. Ա. Ռեֆորմատսկի, Ա. Ի. Նիկիտով, Ն. Մ. Գալիկինա-Ֆեդորով, Ն. Մ. Շանսկի և ուրիշներ). նրանք վերահիշյալ դարձվածքների հետ դարձվածաբանութիւնի մեջ մտցնում են նաև առածասացվածքային արտահայտութիւնները, թեւավոր խոսքերը, աֆորիզմները, պատկերավոր կամ փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցական տերմինները:

Դարձվածաբանութիւնի սահմանների որոշման, դարձվածքային միավորների ընդգրկման և ծավալի վերաբերյալ գոյութիւն ունեցող կարծիքների տարբերութիւններ էլ պայմանավորված է, անշուշտ, դարձվածքների սահմանման բազմազանութիւնը:

Դարձվածք կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակ-

ցութիւն է, որ խոսում վերառադրվում է իբրև լեզվական պարաստի միավոր:

Դարձվածքի մեջ առաջին հերթին առկա են փոխաբերականութիւնն ու պատկերավորութիւնը: Դարձվածքային միավորների տարբերակման շափանիշներ են համարվում նաև նրանց կայունութիւնը, իմաստային ամբողջականութիւնը, կառուցվածքային տարբերակների հնարավորութիւնը: Որպես լեզվի իմաստային ինքնութիւն միավոր դարձվածքը օժտված է բառային բոլոր հատկանիշներով՝ բառային իմաստով, քերականական ձևավորվածութիւնով ու կարգերով: Դարձվածքը, որպես խոսքում վերառադրվող պարաստի միավոր, բառերի վերաիմաստավորված կայուն կապակցութիւն է:

Դարձվածքի բնույթի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է այն համեմատութիւնի մեջ ղնել բառակապակցութիւնի և բառային միավորի հետ:

Դարձվածք և բառակապակցութիւն: Դարձվածքի, որպես լեզվական համակարգի երևույթի և լեզվի իմաստային միավորի, առանձնահատկութիւնը որոշելու համար այն պետք է հստակորեն տարբերակել, նախ, բառերի ազատ և կայուն կապակցութիւններից, սովորական հարադրութիւններից:

Ինչպես հայտնի է, հայոց լեզվում, առանձին բառերից բացի, գոյութիւն ունեն ավելի բարդ կազմութիւններ, երկու և ավելի բառերից կազմված կապակցութիւններ, որոնք կարող են լինել կամ կայուն բառակապակցութիւններ, կամ էլ ոչ կայուն, պարզապէս բառերի շարահյուսական կապակցութիւններ:

Բառերի շարահյուսական ոչ կայուն կապակցութիւնները (ինչպես, օրինակ՝ գիրք կարդալ, տուն գնալ, ջրով լի դուլ, մանկութիւն վաշտ, աշխարհի տխուրքիւն, հայրենիքի առավոտ, առավել գեղեցիկ, խոսել գործից և այլն) բառային ամբողջական արժեք չունեն, նախադասութիւնի մեջ շարահյուսական պաշտոն կատարելով և շարահյուսական արժեք ստանալով՝ կազմում են շարահյուսութիւնի ուսումնասիրութիւնի նյութը:

Դարձվածքները մեկից ավելի բառերի կապակցութիւն լինելով՝ տարբերվում են բառերի ազատ կապակցութիւններից: Հիմնական տարբերութիւնն այն է, որ բառերի ազատ կապակցութիւնները կազմվում են հաղորդակցման պրոցեսում (ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր), հետևաբար և կայուն ու մշտական չեն: Մինչդեռ դարձվածքները հաղորդակցման ընթացքում անմիջապէս չեն կազմվում, այլ հանդես են գալիս իբրև լեզվի իմաստային պարաստի միավոր:

ցաստի միավորներ և շատ զեպքերում ունեն իրենց բառային համանշանակները կամ հոմանիշները:

Ի տարբերություն բառերի ազատ կապակցությունների՝ դարձվածքները (բառերի նման) կայուն և ամբողջական են իրենց բաղադրիչների կազմով, հանդես են գալիս սովորաբար բաղադրիչների անփոփոխ կազմով, քերականական-չարահայտական որոշակի կաղապարներով: Օրինակ՝ աչքով անել—ակնարկել, աչք գցել, աչք դնել—մի բան հավանել, ցանկանալ ձեռք բերել, կարմիրը կապել—1) ամուսնացնել, 2) սպանել, ետևից կարմիր խճճուր ուղարկել—մեկին հրավիրել, հրավերք ուղարկել, կտուցը մեղր փել կամ փաղցրացնել—կաշտել, կաշառք տալ, ուղտի (կամ էջի) ականջում քրճած—1) անտեղյակ, անիրագոհ, 2) միամիտ, կյանքի ընկեր—ամուսին և այլն:

Գործվածք և բառերի կայուն կապակցություն: Բառերի կայուն կապակցությունն, ընդհակառակը, օժտված է բառային ամբողջական իմաստով, տրամաբանորեն հասկացություն է արտահայտում և, որպես բառային և իմաստային ավելի բարդ միավոր, կազմում է բառադիտության ուսումնասիրության նյութը:

Չնականորեն կայուն բառակապակցություն է նաև հարադրական բարդությունը, որ կազմվում է երկու կամ ավելի բառերի հարադրությունից: Կազմվելով մեկից ավելի բառերի հարադրությունից, այն արտահայտում է մեկ հասկացություն և գիտակցվում է իբրև մեկ բառ, թեև հարադրության մեջ մտնող բաղադրիչ բառերը պահպանում են իրենց բառային իմաստները, ինչպես նաև շեշտը: Ամբողջ հարադրության բառային իմաստը գոյանում է բաղադրիչ բառերից յուրաքանչյուրի բառային իմաստներից: Օր.՝ պար գալ—պարել, աղաչանք անել—աղաչել, պաղատանք անել—պաղատել:

Դարձվածքային միավորը կամ դարձվածքը նույնպես ձևով կամ ձևականորեն հարադրություն է: Դարձվածքների զգալի մասը հարադրական բարդություններին նույնանում են նրանով, որ դարձվածքը հիմնականում նույնպես ունի մեկ բառի արժեք, կազմված է մեկից ավելի բաղադրիչ բառերից, որոնք պահպանում են իրենց բառային շեշտը: Տարբերությունն այն է, սակայն, որ դարձվածքը ամբողջությամբ փոխաբերական իմաստ ունի, պատկերավոր արտահայտություն է, նրա դարձվածքային իմաստը չի բխում դարձվածքը կազմող բառերի (բաղադրիչների) բառային առանձին իմաստներից: Օրինակ՝ գլուխ տանել—ձանձրացնել, գլուխ բերել—հաջողիցնել, ձեռք փռել—հրոժարվել (մի բանից), աչքի տակով—թաքուն, ծածուկ, դադամի, աչքի փուշ—ատելի (մարդ), կզակը բռնել—անզողտնապահ, բերանբաց:

Որպես լեզվի իմաստային միավոր, դարձվածքի, հատկապես իդիոմատիկ արտահայտության մեջ, բառ-բաղադրիչները կորցնում են իրենց անկախ իմաստային արժեքը, դարձվածքի կազմության մեջ նրանց առկայությունը իրենց բառային իմաստով, ուրեմն և բառային արժեքով, փաստորեն, ձևական է դառնում: Հետևաբար, դարձվածքը իր քերականական և հատկապես իմաստային կառուցվածքով չի նույնանում ոչ կայուն և ոչ էլ ազատ բառակապակցություններին:

Դարձվածք և բառ: Բառերի նման դարձվածքները նույնպես չեն կազմվում հաղորդակցման պրոցեսում, այլ լեզվում հանդես են գալիս իբրև իմաստային պատրաստի միավորներ: Այս հատկանշով դարձվածքը մոտենում է բառին (ինչպես նաև կայուն կապակցություններին և հարադրություններին), բայց որոշակիորեն սահմանազատվում է բառերի ազատ կապակցություններից: -

Բառերի (և հարադրությունների) նման դարձվածքները կայուն են իրենց կազմով և կառուցվածքով: Մյուս կողմից՝ բոլոր այն դեպքերում, երբ դարձվածքը մեկ բառի արժեք է արտահայտում, իմաստային տեսակետից համարվում է բառի հետ միևնույն մակարդակի միավոր: Դարձվածքի և բառի ընդհանուր հատկանիշներից է նաև նրանց բառային իմաստն ու քերականական կարգը:

Դարձվածքի բառային իմաստի առկայությունը հաստատվում է ոչ միայն նրանով, որ այն կարելի է բացատրել, այլև նրանով, որ դարձվածքը և բառը իրենց բառային իմաստներով կարող են հարաբերակցվել իբրև հոմանիշներ. ինչպես, օրինակ՝ լեզուն կծել—լուր, երես առնել—լիտիանալ, երես ծնել—խնդրել, գլուխ տալ—լարել, գլուխը տալ—զոհվել, սատանի ձագ, սատանի ետ—խորամանկ, իժի ծնունդ—ենեզ, կենդուկի սիրտ—վախկոտ, Իթի ծակ—բանականություն, խելք, Իթի մազ—բժախնդիր, երեսի ջուր—ամոթ, պատկառանք: Եթե դարձվածքը, ինչպես և բառը, լեզվում շունի իր յտոռային հոմանիշները, այդ դեպքում նրանց արտահայտած հասկացությունը բացատրվում է նկարագրությամբ, ինչպես, օրինակ՝ աչքի առաջ (առջև)—1) մեկի ներկայությամբ, 2) հսկողությամբ, նկողության ներքո, 3) պարզ, տեսանելի, 4) մեկի գիտակցությամբ, թողալուցամբ, Դամակլեսի (կամ Դամոկլյան) սուր—մշտուպես սպառնացող վտանգ, Բավի կար, ծոխ կար, օձի կար—լնարյուղ, հազվագյուտ որևէ բան, օձի ծակ— շատ նեղ տեղ:

Դարձվածքների և բարդ բառերի ընդհանրությունն արտահայտվում է նաև նրանց իմաստային և ձևական անբաժանելիությամբ: Դարձվածքների մեծ մասը, ինչպես և բարդ բառերը, իմաստային և ձևական տեսակետից անբաժանելի են, կազմում են լեզվի ամ-

բողջական իմաստային-ձևաբանական միավորներ, որոնց բաղադրիչներին, սովորաբար, այլ բաների հավելումներ չեն արվում. ինչպես՝ կախողիլոսի արտասուք, գեղեցիկ սեռ, Եվայի դուստր, կյանքի գաբուն, կյանքի արշալույս, կյանքի աշուն, կյանքի ձմեռ, խելի ասպրակ, տան ճրագ, աչի լույս, աչի փուշ, դաբմանի տակի ջուր, շան ու գայլի բաժին, ասածու գառ, ասածու կրակ, բաբելոնյան աշաարակաշինութուն, գլխի ընկնել, գլխում նստել, ձեռք տալ, ձեռք առնել, ականջ անել, ականջ դնել:

Դարձվածք և համադրական բարդություն: Դարձվածքները ի տարբերություն իսկական բարդությունների՝ կազմված են ոչ թե հիմնական ձևություններից (կամ արմատներից), այլ ամբողջական բաներից՝ բառակազմական և բառափոխական բազմազան ձևերի իրենց դրսևորումներով: Այդ տեսակետից դարձվածքները կազմությամբ ձևականորեն նման են կցական բարդություններին:

Կցական բարդությունների նման՝ ոչ իդիոմային դարձվածքի բաղադրության մեջ մտնող բաներն ունեն իմաստային և հնչյունաձևաբանական որոշակի ինքնուրույնություն: Մյուս կողմից՝ ձևականորեն դժվար է տարբերակել բառը և իդիոմային դարձվածքը, որի մեջ բաները կորցնում են իրենց իմաստային ինքնուրույնությունը. ինչպես, օրինակ՝ երես առած, երես առնել, երեսը բրգի ջրով լվացած, երեսի ջուր, երեսից ընկած, թակից փախած, մի կըծած խնձոր, ծանր ականջ, իր գլխի, կապը կտրած, կատարը տաք, ծածկը պակաս, կրունկը ծակ և այլն:

Իդիոմային այս կարգի դարձվածքներին առանձնապես մոտ են այն կցական բարդությունները, որոնք կազմված են բառաշարահյուսական եղանակով. ինչպես՝ ծամկտրած, բացբերան, բերանբաց և այլն, որոնց բաղադրիչների շարահյուսական կապը չի մթաղանած և գիտակցվում է արդի լեզվամտածողությունում:

Կցական բարդությունը դարձվածքից տարբերելու համար վրձնորոշ դեր է խաղում ուղղագրությունը՝ բաղադրիչ-բաները միասին կամ առանձին գրվելու հանգամանքը, հնչերանգը և շեշտը:

Դարձվածքի իմաստ: Ըստ իրենց արտահայտած իմաստների՝ դարձվածքները բաժանվում են երկու խմբի:

Առաջին խումբը կազմում են այն դարձվածքները, որոնք տրամաբանորեն հասկացություն են արտահայտում և իրենց իմաստներով նույնանում կամ նմանվում են բառի բառային իմաստներին: Օրինակ՝ կուլիսներ է ետևում—գաղտնի. կարապի երգ—վերջին ստեղծագործություն (մահից առաջ). Եվայի զգեստով—մերկ, տրեչոր. կրիայի փայլերով—դանդաղ. ձեռքը պակաս—աղքատ, շրվիթր. գլուխ բերել— 1) ավարտել, ավարտին հասցնել, 2) հաշտեցնել.

խելքը տանել—գայթակղել: Այդպիսի բառային իմաստը դարձվածքի մեջ կարող է միակը լինել: Այդ դեպքում դարձվածքը մենիմաստ է: Ինչպես, օրինակ՝ ականջը գցել—հայտնել, իմաց տալ. ականքի տակ—շատ մոտ (լսելի). կյանքի թելը կտրել—սպանել, մեղցնել. սրտի խորում—ներքուստ, բաց սրտով—սրտաբաց, սիրտը կերպով, անկեղծությամբ:

Ժամանակակից հայերենի դարձվածքների զգալի մասը մենիմաստ է:

Դարձվածքը կարող է մեկից ավելի իմաստներ ունենալ: Այդ դեպքում դարձվածքը բազմիմաստ է: Դարձվածքի բազմիմաստությունը նրանում մեկից ավելի իմաստների առկայությունն է: Օրինակ՝ ասածու կրակ— 1) փորձանք, աղետ, պատիժ. 2) շատ ճարպիկ, շար, աշխույժ: Խելքը կտրել— 1) հասկանալ, գիտակցել. 2) մտածել, կարծել. 3) հասկացողությունը՝ կարողությունը կամ ցանկությունը համապատասխան լինել: Զեռեցր լվանալ— 1) շխտներով ոտն է գործի. 2) վատ բան կատարելով մի կողմ քաշվել, շքեղ ձևանալ. 3) պատասխանատվությունն իր վրայից գցել: Քրի տակ— 1) շատ մոտ (տեղով և ժամանակով). 2) անլսելի, հաղիվ լսելի. 3) աննկատելի, հաղիվ նկատելի. 4) մեկի գիտությունը, թողտվությունը. 5) ակնբախ կերպով, բացահայտորեն. 6) հեզանքով, քամահանքով: Աչքը բանալ (բացել, բաց անել)— 1) քնից արթնանալ. դարթնել. 2) հանկարծ իրեն տեսնել, ուշքի գալ, սթափվել. 3) ծնվել, ծնունդ առնել. 4) գիտակցության գալ, շարն ու բարին շտկանալ. 5) կյանք մտնել, կյանքը ճանաչել. 6) գլխի գցել, հասկացնել, խելամուտ դարձնել. 7) զգաստանալ, խելքը դուրսը հանել, ուշադիր՝ աշխույժ լինել. 8) դուրս գալ, ծագել:

Դարձվածքները նույնպես ունեն իմաստների այն բոլոր տիպերն ու տեսակները, որոնք հատուկ են ինքնուրույն բառային միավորներին: Բաների նման՝ վերոհիշյալ կարգի դարձվածքները նույնպես ունեն ուղղակի կամ անվանական, փոխաբերական, ընդունված կամ շեշտով, պատահական, բառարանային և այլ իմաստներ:

Առանձին խումբ են կազմում այն դարձվածքները, որոնք իրենց կազմությամբ և իմաստով համազոր են նախադասություն: Տրամաբանորեն գատողություն, շարահյուսորեն նախադասություն ներկայացնող այդ կարգի դարձվածքների իմաստը փոխաբերական է. պայմանավորված չէ նախադասության կազմի մեջ մտնող բաների բառային իմաստներով, այդ բաների բառային իմաստների սուկ գումարը չէ և չի բխում դրանց ընդունված, գործածական իմաստներից: Օրինակ՝ այսօր կա՝ վաղը չկա—1) ծերացել է, մահը



հոու չէ. 2) մեռնելու ենթակա է, մահկանացու է. 3) անցողիկ, ժամանակավոր է, ինչ եմ ասել — շատ լավն է (հիացական և զարմացական արտահայտություն): էլ մի առի (ասեմ) — ասելու, պատմելու բան չէ: Ասեղ գցես՝ գետին շի ընկնի — շատ մարդ կա, հոժ բազմություն է: Ասաված գիտե — հայտնի չէ, անհայտ է, ո՞վ գիտե: Եթե ասաված տա — 1) եթե հաջողվի, եթե ստացվի, 2) բախտը բերի: Ականջից կախ է — այսքան արժե, այսքան արժեք ունի: Ակոն տա՞նն է — հիմար է, ամեն ինչ տեղը չէ և այլն:

Կան նաև կազմություններ նախադասություններ կայացնող շատ դարձվածքներ, որոնց ընդհանուր իմաստը հաճախ համազոր է մեկ բառի իմաստին, այդ կարգի դարձվածքները մեկ բառի արժեք են՝ ձեռք բերել. օրինակ՝ աչքդ մինչև մի անգամ բաց ու խօսի անես — իսկույն, վայրկենաբար, մեկ ակնթարթում, կամ՝ աչկեդ սիբեմ, բալան կծեմ և այլն: ✦

### ԳԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՄԻԱԶՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՍԻՃԱՆԻ

Ռուսերեն դարձվածքների իմաստային դասակարգումը կատարել է ակադ. Վ. Վ. Վինոգրադովը, հիմք ընդունելով Ց. Բալլի ֆրանսերեն դարձվածքների սխեման: Վ. Վ. Վինոգրադովի դասակարգումը հետագայում լրացվել և ամբողջացվել է Ն. Մ. Շանսկու և ուրիշների կողմից:

Դարձվածքների իմաստային դասակարգման համար հիմնական շահանիշն է դարձվածքը կազմող բառ-բաղադրիչների միաձուլության աստիճանը: Բաղադրիչներից որևէ մեկի ինքնուրույնության աստիճանով էլ որոշվում է դարձվածքի տեղը իմաստային դասակարգման համակարգում:

Դարձվածքի ընդհանուր իմաստի և դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի մեջ գոյություն ունեցող հարաբերության տեսակետից հայերեն դարձվածքները բաժանվում են չորս խմբի՝ դարձվածքային սերտանում, դարձվածքային միասնություն, դարձվածքային կապակցություն և դարձվածքային առտանալություն:

ա) Դարձվածքային սերտանում, Այս խմբի մեջ են դասվում այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Դրանք իմաստային տեսակետից բառային անբաժանելի, անբալտ այնպիսի կապակցություններ են, որոնց մեջ բառերը, ամբողջապես կորցնելով հանրորեն ընդունված իրենց բառային իմաստները և տվյալ կառուցվածքում վերաիմաստավորվելով, դառնում են դարձվածքի սոսկ ընդհանուր, ամբողջական իմաստի բա-

ղադրատարր, լցուցաբերելով իրենց բառային և իմաստային ինքնուրույնությունը. ինչպես, օրինակ՝ աչքից գցել — ատել, այլևս չսիրել, գլուխ գալ — հաջողվել, գլուխը յուզել — համոզելով խաբել, գլուխը տանել — ձանձրացնել, անհանգստացնել (մեկին), գլուխը աղալ կամ աղ դնել — մեկին սպանել, մեջտեղից վերացնել, գլուխ դնել — 1) մեկով գրադվել, մեկի հետ գործ ունենալ կամ ասել-խոսել, 2) մեկի հետ լեզու գտնել, հարմարվել. 3) մեկի հետ վեճի բռնվել, վիճել, կռվել, խոսքի բռնվել, երեսի ջուր — ամոթ, պատկառանք:

Դարձվածքային սերտանման հիմնական հատկանիշը նրա բառային անբաժանելիությունն է, բաղադրիչների իմաստային բացարձակ սերտանումը, միաժամանակ, մեծ մասամբ համարժեք է բառին և համանշանակ բառերի հետ գտնվում է հոմանշային հարաբերության մեջ: Այս կարգի որոշ դարձվածքներում բառերի քերականական ձևերը և քերականական կապերը չեն կարող բացատրվել ժամանակակից հայոց լեզվի գործող օրինաչափություններով: Դրանք կամ գրաբարյան քարացած ձևեր են, կամ էլ՝ քերականական հնաբանություններ:

Այդ դարձվածքները որոշակի քերականական կարգերի (խոսքի մասերի) պատկանող բացարձակապես անբաժան, միաձույլ իմաստային միավորներ են: Նրանց բաղադրիչների մեջ կենդանի, գործող շարահյուսական կապի բացակայության պատճառով նախադասության մեջ հանդես են գալիս իբրև մեկ ամբողջական անբաժանելի անդամ:

Դարձվածքային սերտանման մեջ չի ընդունվում ինքնուրույն իմաստ ունեցող բառերի գոյությունը: Այսինքն՝ դարձվածքի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր բառ ոչ միայն չունի հանրորեն գիտակցված և ընդունված իր բառային իմաստը, այլ ընդհանրապես զուրկ է որևէ ինքնուրույն, առանձին բառային իմաստից: Այդ դեպքում բաղադրիչների հնչյունային կազմի նույնությունը համապատասխան բառերին դիտվում է իբրև համանունություն:

բ) Դարձվածքային միասնություն: Դարձվածքների այս խմբի մեջ մտնում են դարձվածքանական այնպիսի միավորներ, որոնք դարձվածքային սերտանումների նման իմաստաբանորեն նույնապես անբաժան են և ամբողջական, բայց ի տարբերություն նախորդների, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով: Այս դեպքում դարձվածքի իմաստը բխում է առանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից, նրանց իմաստների միությունից, բայց այն տար-

բերութեամբ, որ բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, դարձվածքը ամբողջապես ստանում է վերաիմաստավորված՝ ընդհանրացած բովանդակություն: Դարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը: Դարձվածքային միասնությունները հիմնականում պատկերավոր արտահայտություններ են, որով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցություններից: Դրանց մեջ պատկերավորությունն առաջանում է դարձվածքը կազմող առանձին բառերը (բաղադրիչները) փոխաբերական իմաստով գործածվելու հետևանքով: Օրինակ՝ աչք գցել (մի բանի վրա) — մի բան հավանել, դուր գալ, ցանկանալ ձեռք բերել կամ տիրանալ, գրվիսին տալ — հետազոտում զոչալ, գլխին նստել — մեկի վրա իշխել, մեկին իրեն ենթարկել, գլուխը սապնել — խաբել, բերանը բաց — 1) ապշահար, ապուշ կտրած, զարմացած, որևէ բանով տարված, 2) գաղտնիք չպահող, անգաղտնապահ, շաղակրատ, բերանը բույլ — 1) իր ասածը չպնդող, զիջող, 2) բերանը բաց, անգաղտնապահ, գաղտնիք չպահող. ոտը դուրս — 1) ընտանեկան՝ ամուսնական ուխտին անհավատարիմ, 2) ընտանեկան հարկից միշտ բացակայող. վիզ(ը) ծռել — ստորանալ մեկի առաջ, ստորանալով մեկից մի բան խնդրել:

Այս կարգի շատ դարձվածքներ, որպես սովորական բառակապակցություններ, ունեն իրենց զուգահեռ ձևերը, որոնցում բառերը հանդես են գալիս իրենց ուղղակի, անվանական իմաստներով, և կապակցությունն էլ զուրկ է, բնականաբար, վերաիմաստավորումից կամ փոխաբերական իմաստից, ինչպես, օրինակ՝ բերանը բաց — բերանը բաց արած, բերանը բացված վիճակում, գլխին նստել — գլխի վրա նստել՝ տեղ գրավել, գլխին տալ — գլխին զարկել՝ հարվածել, գլուխը սապնել — գլուխը սապոն քսել, ոտը դուրս — ոտքը մի տեղից դուրս լինելը, վիզ(ը) ծռել — վիզը շարժել աջուձախ, վիզը թեքել և այլն:

Դարձվածքային միասնությունների շարահյուսական կառուցվածքը, ինչպես նաև բաղադրիչների քերականական ձևերը կանխորոշված են և բխում են ժամանակակից լեզվում գործող օրինաչափություններից:

Բաղադրիչների իմաստային անբաժանելիության աստիճանով դարձվածքային միասնություն պետք է համարել բառակապակցական որոշ տերմիններ, որոնց բաղադրիչ բառերը, ինչպես և ամբողջական դարձվածքները փոխաբերական իմաստ են ստացել, ինչպես, օրինակ՝ լացող ուտի, կեսաբյուր հատում, սպիտակ ածուխ:

Միաժամանակ բառակապակցական որոշ տերմիններ՝ իրենց

ուղղակի, անվանական իմաստից բացի ձեռք բերելով փոխաբերական նոր իմաստներ, վեր են ածվել վերոհիշյալ կարգի դարձվածքների, ինչպես, օրինակ՝ առաջին ջուրակ, ծանրության կենտրոն, կուլխաների ետև(ում), կուլք ալիք:

Դարձվածքային սերտաճումը և դարձվածքային միասնությունը իբրև իմաստային տեսակետից անբաժանելի միավորներ և բառերի համարժեքներ, հաճախ միավորվում են մեկ խմբի մեջ և կոչվում են լիդամներ կամ իդիոմատիկ արտահայտություններ:

գ) Դարձվածքային կապակցություն: Իդիոմներից տարբերվում են դարձվածքային կապակցությունները և դարձվածքային արտահայտությունները, որոնք իմաստային տեսակետից անբաժան բառերի համանշանակներ չեն, այլ իմաստաբանորեն տարբարումովող դարձվածքներ, որոնց դարձվածքային ընդհանուր իմաստը բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստներից:

Դարձվածքային կապակցություններ են կոչվում դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ-բառերի իմաստներից: Դրանք՝ այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մասնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես էլ դարձվածաբանորեն կապված գործածություն: Այդ կարգի դարձվածքներում բաղադրիչները՝ դարձվածքը կազմող բառերը, հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով, այնուամենայնիվ, մընում են կախյալ վիճակում, բաղադրիչներից մեկը հաճախ հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Օրինակ՝ գլուխը կախ, գլուխը կախել, ճոճներ կիտել, ցեխն ընկնել, փթթ ջարդել, փթթ տրուել, նուրբ վիճակ, նուրբ հարց, ատամները (ակռաները) սրել, ատամները (ակռաները) ժնգժնգաղնել, խոսքերը փամուռ տալ, սիրտը կրծել, սիրտը մաշել, օղային ամրոց, ֆեֆին ֆեֆ չխառնել: Մրանց առանձնահատկությունն այն է, որ ունեն իրենց զուգահեռ ազատ կապակցությունները, դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչները հաճախ կարող են փոխարինվել հոմանիշ բառերով, ինչպես, օրինակ՝ ճոճներ կիտել և նորեր կիտել, սիրտը կրծել և սիրտը մաշել, քիթը ջարդել և քիթը տրուել, ատամները սրել և ակռաները սրել:

դ) Դարձվածքային արտահայտություն: Դարձվածքային արտահայտություն են համարվում այն կայուն դարձվածաբանական միավորները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն բաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից. դարձվածքի ընդհանուր իմաստը ամբողջապես կախված է և բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից,

դարձվածքի բառային կազմը և դարձվածքային իմաստը կայուն են: Դարձվածքների նախորդ տիպերի օրինակով իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ, դարձվածքային արտահայտությունները տարբերվում են բառերի ազատ կապակցություններից: Օրինակ՝ լինել թե չլինել, ծառերի ետևում անտառը շտեմել, կենդանի լիակ, պատենավոր մարդ, ոսկե միջակություն և այլն:

Ի տարբերություն նախորդ՝ դարձվածքային կապակցությունների, սրանց կազմում չկան դարձվածաբանորեն կապված, գործածությամբ սահմանափակ իմաստով բառեր, հնարավոր չէ բազադրիչների որևէ փոխարինում, որով որոշ շափով մոտենում են դարձվածքային միասնություններին և անգամ՝ դարձվածքային սերածումներին:

Այս կարգի դարձվածքների շարքն են դասվում.

1) Գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը, ինչպես նաև հեղինակային դիպուկ արտահայտությունները, զանազան ասույթները, որոնք թևավոր խոսք են դարձել և խզել են իրենց կապը նախնական բնազդից, նրանց առաջացման առիթ հանդիսացող կոնկրետ անձի կամ երևույթի հետ և ձեռք բերելով ընդհանրացնող իմաստ՝ լայն տարածում են գտել. ինչպես, օրինակ՝ ավզյալն ախոռ, դամալըլըլան սուր, կաբապի երգ, Քաջ Նազար, Զախորդ Փանոս, Դոն Բիշոտ, մի բաժակ ջրում փոթորիկ, Բամա ջրաղացի դեմկուովել, լինել թե չլինել, ձայն բարբառո հանապատի, ակն ընդ ական, ատավն ընդ ատաման, սանման Բաջաց՝ զենն յուրյանց:

2) Ժողովրդական խոսակցական անեծքները, մաղթանքները, օրհանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական իմաստ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝ մի բարձի ծեբանաֆ, գետիւնը մտնես, անունդ կտրվի, հողը դնեմ, հողեմ գլուխը:

3) Առածա-ասացվածքային արտահայտությունները, որոնք վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝ գայլի գլխին ավետարան կարդալ, երկաթը տաֆ-տաֆ ձեծել, նտերը աշնանը հաշվել և այլն:

Առածներն ու ասացվածքները, որպես ժողովրդական բանահյուսության տեսակներ, խոսքի մեջ նույնպես հանդես են գալիս իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ, այսինքն՝ ստեղծվում են ոչ թե անմիջապես հաղորդակցման ընթացքում, այլ ինչպես և մյուս դարձվածքները, փոխանցվում են պատրաստի վիճակում: Դրանք իրենց բովանդակությամբ և ժանրային առանձնահատկություններով արտահայտելով ժողովրդի դարավոր իմաստությունը, իրենց կառուցվածքով, լեզվական տեսակետից, փաստորեն, նախադասություններ են և տրամաբանորեն համապատասխանում

կն դատողությանը և հաճախ իմաստային միաձուլության տեսակետից ներկայացնում են իբրև դարձվածքներ, հատկապես՝ դարձվածքային արտահայտություններ: Ըստ ժանրային սահմանման՝ առածները խրատական, իսկ ասացվածքները ոչ խրատական բնույթի պատկերավոր դիպուկ արտահայտություններ են, կյանքի այլ կամ այն երևույթների ընդհանրացումը: Ժանրային ընդհանրության և նշված որոշ տարբերության զուգընթաց առածներն ու ասացվածքները իրարից տարբերվում են նաև իրենց քերականական կառուցվածքով:

Առածը սահմանվում է իբրև պատկերավոր ավարտուն ասույթ, որն ունի խրատական իմաստ և, սովորաբար, յուրահատուկ ուրիշ-մահանշունային ձևավորում: Ասացվածքը պատկերավոր, ալլաբանական արտահայտություն է և առածից տարբերվում է իր շարահյուսական անավարտվածությամբ: Առածն իբրև ավարտուն ասույթուն՝ իր կառուցվածքով նախադասություն է, չի ստեղծվում անմիջապես հաղորդակցման ընթացքում, այն հանդես է գալիս որպես լեզվի պատրաստի միավոր: Մյուս կողմից, առածը իմաստով երկուլանային է. ունի բովանդակության ուղղակի պլան, որը ճիշտ կերպով համապատասխանում է իր կազմի մեջ մտնող բառերի անվանական բովանդակությանը, այսինքն՝ նրանց բառային ուղղակի, անվանական իմաստներին: Միաժամանակ այն ունի նաև անուղղակի, ալլաբանական պլան, որը չի համապատասխանում սովյալ առած-նախադասությունը կազմող բառերի բառային իմաստների գումարին, այսինքն՝ առածի ընդհանուր իմաստը չի թխում նրա բազադրիչ բառերի իմաստներից: Իր ալլաբանական կողմով առածի բովանդակությունը մոտենում է դարձվածքային իմաստին:

Այլ է ասացվածքի կառուցվածքային բովանդակությունը, այն, որպես օրենք, միշտ մեկպլանային է, ունի միայն պատկերավոր երանդ և փոխաբերական իմաստ և դրանով էլ բոլոր հիմքերն ունի դասվելու դարձվածքների շարքը:

Այսպիսով, այն առածներն ու ասացվածքները, որոնք փոխաբերական-ընդհանրական իմաստ են արտահայտում, իրենց կառուցվածքով նախադասություն կամ բառակապակցություն են, տրամաբանորեն համապատասխանում են կամ դատողությանը, կամ հասկացությանը և դասվում են դարձվածքային արտահայտությունների շարքը: Այս դեպքում հաշվի են առնվում նրանց լեզվական հատկանիշները՝ կառուցվածքն ու ընդհանուր-փոխաբերական իմաստը, անտեսելով նրանց գիտական-բանահյուսական ժանրային և այլ առանձնահատկություններ:

Գարձվածքային արտահայտությունները, սովորաբար, բաժանվում են երկու խմբի՝ անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններ և հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ:

1) Անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններ: Անվանական (նոմինատիվ) բնույթի դարձվածքային արտահայտություններ են համարվում բառերի այն կապակցությունները, որոնք բառային արժեք ունեն, բառերի նման լեզվում անվանական դեր են կատարում և տրամաբանորեն համապատասխանում են հասկացությունները: Անվանական բնույթի դարձվածքային արտահայտությունների հիմնական խումբը կազմում են այն դարձվածքները, որոնք բառերի պատկերավոր և արտահայտչական (էքսպրեսիվ) համարժեքներն են. *ինչպես, օրինակ՝* ոսկե միջակայքում, կենդանի դիակ, ծառերի ետևում անտառը շտեմեկ, ձայն բարբառ հանապառի, լինել թե շինել, գլխին ձյուն նստել, ջուեղը տալ, ջուեղը փշել, պատերազմի նրձիգ, վերջին ժամ և այլն:

2) Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ: Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ են համարվում նախադասությունների համարժեք այն կապակցությունները, դարձվածքային արտահայտությունները, որոնք տրամաբանորեն համազոր են դատողությունները: Մրանք անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններից հիմնականում տարբերվում են նրանով, որ ստորոգում արտահայտելով՝ նախադասություններ են, տրամաբանորեն՝ դատողություններ, մինչդեռ անվանական բնույթի դարձվածքային արտահայտությունները բառերի կապակցություններ են, իմաստով համազոր են բառին, տրամաբանորեն հասկացություններ են:

Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ են, *օրինակ՝* դառը դատել՝ դատարկ նստել— շատ աշխատել, բայց քիչ ստանալ, երկաթը տախ-տախ կծեծեն— հարմար առիթը չպետք է բաց թողնել, ճիշտ խոսքը աչք կծակի— մարդիկ չեն սիրում, երբ ճշմարտությունը երեսին են ասում. մի ձեռքը ծափ չի տա— մի մարդու ձայնը ազդու չի լինի, անհատի հնարավորությունները շատ փոքր են, առանց ընկերոջ որևէ գործ չի հաջողվեցյալ կանգնի՝ գերան (կ)կտորի— 1) միասին աշխատանքը մեծ ուժ է, արդյունավետ է, 2) ժողովրդի միահամուռ կամքին ոչ մի ուժ չի կարող դիմանալ. էթից բռնես՝ հոգին կտա— բոլորովին թույլ՝ անզոր է. մի թել փաշես՝ հազար կարկառան կրավիլի— հագած շորերը շատ հին են:

Նույն կարգի դարձվածքային միավորներ են՝ էլը դատում է,

մին ուտում, խաչն իմն է՝ գործը լուրը ես գիտեմ, շան պաշը կրա-րես՝ ոչխար չի դառնա, մինչև չգա ետինը՝ չի ճիշդի առաջինը, մի ծաղիկով գարուն չի գա, լավ է կույր աչքով, փան կույր մտքով, այլն՝ այո է, ոչը՝ ոչ, ասոված մի արացե, ասոված շանի, կամ՝ սանման փաշազ գեներ յուրյանց, նման գնմանն սիրե, ձայն բարբառո հանապառի, ավա՞ղ փառացս անցավորի, ակն ընդ ակն, ատամն ընդ ատամն և այլն: Այս կարգի դարձվածքները լեզվում գործածվում են ինքնուրույնաբար, կամ էլ *Շինանյութն* են ծասայում ավելի բարդ կազմությամբ նախադասությունների մեջ:

Հաղորդակցական բնույթի դարձվածքները ըստ իրենց բնույթի բաժանվում են երկու խմբի.

ա) Առաջին խմբի մեջ մտնում են առածա-աֆորիզմային բնույթի հաղորդակցական դարձվածաբանական միավորները՝ թևավոր խոսքեր, դիպուկ արտահայտություններ, առածներ, անեծքներ, մաղթանքներ, օրհնանքներ և այլն:

1) *Թևավոր խոսքեր և դիպուկ արտահայտություններ.* ավելի լավ է մեռնել կանգնած, փան թե ապրել ծնկաչոփ, խոզի գլուխը խալիչային (գորգին) դրին գլուխը, ցած ընկավ, ոտներդ վերմա-կից չափ մեկնիր, գայլի գլխին ավետաբան կարգացին, ասաց՝ բոզև՝ ոչխարի հատն (սուրուն) անցավ, խուփը գլուխը (գլուխ) առավ պուտուկը:

2) *Անեծքներ, սպառնալիքներ.* գնաս շարով, չգաս բարով, ոտդ կտոր(վ)ի ջաղացի փարով,— գնալը լինի, գալը չլինի. գլուխը հոպիմ, գլուխը մեռնի, գետինը մանես,— մեռնես, թաղեմ (քեզ), լեզուդ կտորի— լոբր, մեծ (թիֆեն) կտորը ականջդ կթողնեմ— շարայար կսպանեմ, խոշտանգամա՛հ կանեմ:

3) *Օրհնանքներ, մաղթանքներ, փաղաքշական արտահայտություններ.* աչքի լույսով պառավես,— ծերության ժամանակ էլ դըժ-վարություն չկրես, Սիմվազն ծերունի դառնա,— շատ երկար ապրես, խոր ծերության հասնես, մի բարձի ծերանախ,— երջանիկ ամուսնական կյանք վարեք, գոգ լիքը (լիճի),— շատ զավակներ ունենաս, չոր փարին գնալիս՝ շոր փարն էլ կանաչի,— կյանքում Լախորդության չհանգիպես և այլն. անուկին (անուկիդ) մեռնեմ, սուկին (արևիդ) մեռնեմ, մատաղ լինեմ (մեկին),— զոհարեքվեմ մեկին՝ սիրո և նվիրվածության նշան, առհավատչյա. կամ՝ հոգուն մեռնեմ, ջանին մեռնեմ, շարը տանեմ, ցավը տանեմ և այլն,— նույն նշանակությամբ. աչքիս վրա տեղ ունես,— իմ ամենապատվովոր հյուրն ես, պատրաստ եմ քեզ միշտ ընդունելու. խոսքը շա-փարով կտրեմ,— ներողություն՝ խոսքը ընդհատելու համար. քե-

բանից կարի հոտ կամ կարի համ է գալիս,— դեռ անփորձ է, դեռ երեխա է:

բ) Երկրորդ խումբը կազմում են հաղորդակցական բնույթի այն դարձվածքային միավորները, որոնք իրենցից ներկայացնում են խոսակցական-կենցաղային կաղապարներ. *ինչպես, օրինակ՝ աստված գիտե— ոչ ոք չգիտե, հայտնի չէ. գրպանումս (գրպաններումս) մկներ են խաղում,— դրամ չունեմ, կամ՝ ախորժակը ուտելիս է բացվում,— մի բան ճաշակելով կամ մի բանի տիրելով՝ հասնելով՝ ազահորեն ավելի շատի ձգտելը. պատերն էլ ականջ (ականջներ) ունեն,— խոսակցությունն իմացվում է, լրտեսում են. լեռը երկնեց՝ մուկ ծնեց, մեկնաբանություններն ավելորդ են և այլն:*

### ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՎ ՀՈՄԱՆԻՇՆԵՐ

Դարձվածքային տարբերակներ: Հայերենում դարձվածքների մի զգալի մասը հանդես է գալիս իր մշտական, կայուն բառաբերականական միակ ձևով. *ինչպես, օրինակ՝ գլուխ տալ, գլխի ընկնել, գլխի գցել, աչքի լույս, աչք դնել, աչք գցել, աչքով անել, ականջ դնել, ականջը լցնել, սիրտ անել, սիրտը կտռել:*

Դարձվածքների մյուս մասը, սակայն, հանդես է գալիս մեկից ավելի բառաբերականական տարատեսակներով. *ինչպես, օրինակ՝ աստված չանի և աստված ոչ անի, գլուխը յուղել և գլուխը յուղ քրտել, աչքին շնավատալ և աչքերին շնավատալ:*

Դարձվածքի տարբերակներ են համարվում նույն իմաստը և բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմն ունեցող այն դարձվածքները, որոնց բաղադրիչները նույն բառի քերականական տարատեսակներն են՝ կամ բարրառային և կամ էլ փոխառյալ համազորներն ու համանշանակները:

Դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի հնչյունական տարբերակները դարձվածքի տարբերակի համար որևէ արժեք չեն ներկայացնում: Դարձվածքային տարբերակները, փաստորեն, դարձվածքը կազմող բառ-բաղադրիչների բառաբերականական փոփոխակներն են, որոնք որևէ ձևով չեն կարող ազդել դարձվածքի իմաստի, հուզաբարտահայտչական գունավորման, ոճական կիրառության, նրա բաղադրիչների իմաստային ձուլվածության աստիճանի վրա: Հիշյալ առանձնահատկությունների առկայությամբ էլ դարձվածքային տարբերակները տարբերվում են դարձվածքային հոմանիշներից և դարձվածքների հոմանիշ գործածությունից:

Դարձվածքային տարբերակներ պետք է համարել միևնույն դարձվածքի հետևյալ տարատեսակները.

1) Դարձվածքը կազմող բաղադրիչ բառի կամ բաղադրիչ բառերի քերականական տարբերակները.

ա) Բաղադրիչ բառերի հոլովական տարբեր ձևերն ու կիրառությունները. *ատամների արանքից և ատամների արանքով. գլուխը փակել տալ, գլուխը փակել տալ և գլուխը փակել տալ. արյունը գլուխը զարկել և արյունը գլխին զարկել և այլն:*

բ) Նույն բաղադրիչ բառի սեռական-տրական հոլովաձևով և սոճականական ձևով զուգահեռ կիրառությունը. *Բարբելնի աշտարակաշինություն կամ խառնակություն և բարբելնյան աշտարակաշինություն կամ խառնակություն, կոկորդիլոսի արտասուքներ և կոկորդիլոսյան արտասուքներ:*

գ) Միևնույն դարձվածքի որևէ բաղադրիչ բառի հոգով և անույն գործածությունը, երբ չի փոխվում դարձվածքի իմաստը, ուժական կիրառությունը և այլն. *վիզ ծոկ և վիզը ծոկ, գլուխ դնել և գլուխը դնել, բայց՝ գլուխ տալ (բարենել) և գլուխը տալ (զոհվել, սպանվել), որոնք տարբեր դարձվածքներ են:*

դ) Դարձվածքը կազմող նույն բաղադրիչ բառի եղակի և հոգուակի գործածությունը. *ինչպես՝ արյունը աչքն առնել և արյունը աչքերն առնել (մի բան անելու համար կյանքը վտանգի ենթարկել), աչքին շնավատալ և աչքերին շնավատալ (անակնկալ՝ անսպասելի բանից զարմանալ, ապշել, ապշահար լինել)՝ աչքիս վրա և աչքերիս վրա (1) շատ սիրով, ամենայն հոժարությամբ. 2) բարով, հպարտ բարի և այլն), աչքում յուղ լինել և աչքերում յուղ լինել (զեղչիկ՝ գրավիչ լինել), բերանի ջուրը գնալ (կամ վազել) և բերանի բուրբ գնալ (կամ վազել) (մի բան ձեռք բերելու կամ ճաշակելու մեծ ցանկություն ունենալ):*

ե) Երբ բայական բաղադրիչը արտահայտվում է պարզ և հարադիր ձևերով, *ինչպես նաև տարբեր ժամանակներով. օրինակ՝ գլուխը յուղել և գլուխը յուղ Լսել. բուք դանակը ձեռք կկտրի և բուք դանակը ձեռք է կտրում:*

2) Նույն դարձվածքի արևելահայերեն և արևմտահայերեն ձևերը, որոնց բաղադրիչները տարբերվում են գրական լեզվի այդ երկու տարբերակներին յուրահատուկ բառաբերականական ձևերով. *ինչպես՝ արևելահայերեն՝ գլխի գցել, արևմտահայերեն՝ գլխի ձգել. խելիք-մտիք դուրս և խելե-մտե դուրս, խելք գլխից կանել և խելք գլխեն հանել, պատերն էլ ականջ(ներ) ունեն և պատերն այլ ականջ(ներ) ունեն, մատով են հաշվում և մատով կնամո՞ւրիս, ատամներ կտրել և ակոսներ կտրել և այլն: Այս կար-*



որի մեջ հանդես է գալիս դարձվածքային այս կամ այն միավորը: Դարձվածքային հոմանիշներ են՝ ծալբ պակաս, — ծուծը բարակ, — ծուծը պակաս (պակասամիտ, թեթևուիկ), կապից փախած, — բուկից փախած, — կապը կտրած (լիրը, անամոթ, անպատկառ), երեսի ջուրը գնացած, — երեսի բողբ պատռած, — պատռած բեռան, — հազար մաղով անց կացած, — հազար մաղով հաց կերած (լիտի, լպիրշ, անպարկեշտ, անհամեստ) և այլն: Բերված հոմանիշ դարձվածքները առանձին շարքերում թեև միևնույն իմաստն ունեն, բայց ցանկացած համատեքստում հնարավոր չէ նրանց փոխադարձ փոխարինելիությունը:

Այսպիսով, հոմանիշ են այն դարձվածքները, որոնք՝ ա) իմաստով նույնն են կամ մոտ. բ) իրենց կազմով չեն նույնանում. գ) նույնն են իրենց բառաքերականական բնութագրմամբ:

Դարձվածքային հոմանիշների մեջ իրենց կապերի բնույթով իրարից որոշակիորեն տարբերվում են իզիոմատիկ և ոչ իզիոմատիկ դարձվածքների հոմանիշները:

1) Իզիոմատիկ հոմանիշները օժտված են իմաստային ամբողջականությամբ, և նրանց կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերը իմաստային տեսակետից անբաժանելի են, դարձվածքի ընդհանուր իմաստը պատճառարանված չէ բաղադրիչների առանձին, ինքնուրույն իմաստների տեսակետից՝ ոչ իզիոմատիկ դարձվածքների համեմատությամբ: Դրանք օժտված են նաև իմաստների փոխաբերականությամբ:

2) Իզիոմատիկ դարձվածքների հոմանշության մյուս կարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ այդ կարգի հոմանիշների շարքերի մեջ մտնող դարձվածքների իմաստների նրբերանգային տարբերությունները գլխավորապես կարելի է բացահայտել միայն նրանց բնագրային (կոնտեքստային) կիրառությունների ընթացքում: Այդ կարգի դարձվածքների հոմանիշների մեջ խիստ սակավ են իմաստային նույնությունները՝ նույնանիշ դարձվածքները:

3) Իզիոմատիկ դարձվածքային միավորները, պատկանելով լեզվի գործառական տարբեր ոճերին և գլխավորապես խոսակցական շերտին, ավելի օժտված են հուղաարտահայտչական բազմապիսի գունավորումներով, քան ոչ իզիոմատիկ դարձվածքները: Հետևաբար, իզիոմատիկ դարձվածքների հոմանիշների շարքերը ավելի հարուստ են ոճական-կիրառական և հուզաբարտահայտչական տարբերություններով և բազմազանությամբ, որոնցից համարյա զուրկ են կամ աղքատ՝ ոչ իզիոմատիկ դարձվածքային միավորների հոմանիշները:

4) Դարձվածքային հոմանիշները բառային հոմանիշներից հիմ-

նականում տարբերվում են նրանով, որ վերջիններիս իմաստների բնույթը պայմանավորված չէ կամ չի բխում տվյալ շարքի մեջ մտնող հոմանիշ բառերի ներքին կառուցվածքից: Դարձվածքային հոմանիշների բնույթը պայմանավորված է շարքի մեջ մտնող դարձվածքների իմաստների բնույթով՝ նրանց բաղադրիչների իմաստային միաձուլության և պատճառարանվածության աստիճանով:

Բառային հոմանիշների նման, դարձվածքային հոմանիշները նույնպես իրենց գոյությունը հաստատում են հոմանիշների շարքերի մեջ, որոնք կազմվում են երկու և ավելի հոմանիշ դարձվածքներից: Հոմանիշային հարաբերությունների մեջ են մտնում, հետևաբար և հոմանիշների շարքեր են կազմում մեծ մասամբ կառուցվածքային ընդհանրություն ունեցող դարձվածքները:

Որպես նախադասություն հանդես եկող և տրամաբանորեն ամբողջական դատողություն արտահայտող դարձվածքները հոմանիշային հարաբերության մեջ են մտնում ու կազմում հոմանիշային անկախ շարքեր:

Քանի որ դարձվածքային միավորները, բառերի նման, լինում են մեկիմաստ և բազմիմաստ, ըստ այդմ էլ հոմանիշային կապեր են հաստատում իրար հետ. բազմիմաստ դարձվածքը հոմանիշային տրաբերության մեջ կարող է մտնել իր մեկ կամ մի քանի իմաստներով:

Բառային արժեք ունեցող հոմանիշ դարձվածքային միավորներ: Դարձվածքային հոմանիշների մեջ իրենց ծավալով և կառուցվածքային առանձնահատկությամբ առանձին խումբ են կազմում բառային արժեք ունեցող կամ, ինչպես ընդունված է ասել, տրամաբանորեն հասկացություն արտահայտող դարձվածքային միավորները: Դրանք ծավալով ամենաբազմազանն են լեզվում: Սննհնալով բառային արժեք, այդ դարձվածքները փաստորեն օժտված են բառիմաստային, քերականական և ոճական այն բոլոր առանձնահատկություններով, որոնք հատուկ են բառային միավորներին:

Այս կարգի դարձվածքային միավորների հոմանիշային հարաբերությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ զբոսնք հոմանիշների շարքեր կարող են կազմել ինչպես իրար, այնպես էլ իրենց համարժեք բառերի հետ:

Վերոհիշյալ կարգի դարձվածքային հոմանիշները հիմնականում կարելի է բաժանել անվանական (գոյականական, ածականական, մակբայական) և բայական հոմանիշներ:

ա) Անվանական (գոյականական, ածականական, մակբայական) դարձվածքային հոմանիշներ.

1) Գոյականական և ածականական դարձվածքային հոմանիշներ, արկաղյան սոխակ և երկար ականջով, երկար ականջավոր (էշ, ավանակ), խաղողի արյուն, խաղողի ջուր, հիսուսական ջուր, կարմիր ջուր, ծերոց զավագան, ծերունյան կաթ (գինի), ձեռքը ծուռ, ձեռքից քաշ, աչքից ծարիր (սուրմա) բոցնող, աչքից մազ հանող (գող). ծալքը պակաս, տախտակը պակաս, կատարը դառարկ, վերնատունը դառարկ, վերին հարկը դառարկ, խելիքից բարակ, խելիքից բոբիկ, խելիքից պակաս, խելիքից ծարավ, խելիքի բուն (հեգն.), խելիքի տուպրակ (հեգն.), կուտը պակաս (ժող.), փայտի գլուխ (բրբ., գոհկր.), էշի (իշու) գլուխ, էշ՝ արածացնող, ասածու էշ, ասածու ավանակ, աղոթած էշ, Աղամի էշ, հորթի գլուխ, գունդ գլուխ, ջրի պուպուզ, տավարի ցավ (հիմար, ապուշ, անխելք). դարմանի տակի ջուր, մարմանը գետ, խուփ ու ծուփ, աչքով քար հափեցնող (տափեցնող), փորի օձերի հետ կովող, հոգին սատանային ծախած, սատանայի հետ սոխ ու սխտոր ուտող, սատանայից սխտորի հոտ առնող, սատանայից յոթ օր շուտ (կամ առաջ) ծնված, սատանայի ծնունդ, սատանային բնից հանող, ներքը սատանա՝ դուրսը քահանա, ներսից (ներսեն) սատանա՝ դրսից (դրսեն) սուրբ, սուրբ սրխտոր, օձից շապիկ հանող (քուս խոսքով), սանամորթ խաբող, ծուռ քամիով գնացող, գլխարկի տակ դեռ պահող (նենդ, խարդախ, խաբեբա). կամ՝ չոր փայտ, չոր ու ցամաֆ, միս ու ոսկոր, կաշի ու ոսկոր, տանձի կոթ, բահի կոթ, շամշի պոշ, մազն երեսին չորացած, ցամաֆ ձորի աղվես, օգոստոսի աղվես, կողերն իբար կպած, բարակ մանող, ասեղ կոպ տված, ասեղի ծակով անցնող, մատու քեզ օրինակ, փիթը բռնես՝ հոգին կտա, միսը գնացած՝ ոսկորները՝ մնացած, (գոհկր.)՝ մի ծամելու միս չունեցող, ասեղ կերած շուն, մեռելի զղաշի (բրբ.) (նիհար):

Ածականական դարձվածքային հոմանիշներին բնորոշ է կառուցվածքի բազմազանությունը, որ պայմանավորված է նրանց քանակով: Հիմնականում դրանք շրջասություններ, փոխաբերական իմաստ ունեցող նկարագրական կապակցություններ, բաղճուսական հարադրություններ, հարակատար կամ ենթակայական դերբայներով կազմված դարձվածքային միավորներ են: Հանդիպում են նաև ածականի բառային արժեք ունեցող ամբողջական նախադասություն-դարձվածքներ:

2) Մակբայական դարձվածքային հոմանիշներ: Սրանք լեզվում փոքրաթիվ լինելով՝ իրար նկատմամբ հազվադեպ դեպքերում են հոմանշային հարաբերության մեջ մտնում. օրինակ՝ մի

բերան, մի գլուխ (շարունակ, անընդհատ): Այս կարգի դարձվածքները հիմնականում հոմանիշ են և հոմանշային հարաբերությունների մեջ են մտնում իրենց համարժեք, համանշանակ բառերի հետ. ինչպես, օրինակ՝ աչքի վրա — սիրով, հոծարաբար, ձեռքի տակից կամ ձեռքի տակով — ծածուկ, դադտնի. կրիայի ֆայլերով — դանդաղ, դանդաղաբար, դանդաղորեն. երկու տերուղույն՝ մեկ ակելուխ — շտապ, հապճեպ, կիսատ-պոստ (կատարված գործ). երկու ֆայլի վրա — մոտ, էշի գատկին — երբեք:

3) Բայական դարձվածքային հոմանիշներ: Լեզվում այս կարգի դարձվածքային միավորների քանակային զերակշռության կապակցությամբ մեծ է նաև սրանց հոմանիշների բացարձակ քանակը, ինչպես նաև հարուստ ու բազմազան են դրանց հոմանշային կապերը ժամանակակից հայերենում: Բայական դարձվածքները նույնպես հոմանշային կապերի մեջ են մտնում ինչպես իրար, այնպես էլ իրենց համարժեք, համանշանակ բառի կամ բառերի հետ: Օրինակ՝ բերան ծռել, գլուխ ծռել, վիզ ծռել, շլիճք ծռել (բրբ.), գոտկից կախ ընկնել, դեմ ընկնել, երես դնել, երես գցել, երես ծրռել, երես մրել, երես սևացնել, երեսը քափել, երեսը բռնել, երեսը շինել, երեսը գոմշի կաշի շինել, երեսը պնդել, երեսը դեմ անել, երեսը դեմ տալ, լեզու ածել, լեզու քափել, լեզու հանել, ձեռք ու ոտք ընկնել, ոտներն ընկնել, (գոհկր.)՝ ոտքը լիզել, ոտքը պագնել, պոռոք գետին ֆսել, պոռոքը պատռել, փեշից կախ ընկնել, օձի լեզու քափել (խնդրել, աղաչել, թախանձել, աղերսել, պաղատել, աղաչել-պաղատել) կամ՝ բերանը բան գցել, բերանը ոսկոր գցել, շան բերանը ոսկոր գցել (ձգել), բերանը յուղոտել, բերանը յուղ ֆսել, բերանը բուն դնել, բուրբ բան դնել, բուրբ մի բան կոխել, կոտուցը մեկուտել, կոտուցը մեղք ֆսել, կոտուցը ֆազրացնել, աչքը կապել, տակը դնել, (բրբ.)՝ ուխտը բան գցել, ուխտը ոսկոր գցել — կաշառել. կամ՝ գլուխը լվալ կամ վանալ, երեսովը տալ, երեսին տփել (մեկի), երեսը ֆոռել, հուպ տալ (գոհկր.)՝ թուֆ ու մուր տալ, թուֆ տալ, կերածը բկովը ետ բերել, (խսկց.) կոթ տալ, գլխին բաղանիֆ սարֆել, գլխին լվացֆաջուր քափել կամ (ածել), գլխին շան լափ լափել (կամ ածել), կաժն ու կուլան գլխին կտարել, աչքը հանել, մուրը դաղել, փիթը շաբղել, փիթը տրոհել, բերանը ծեփել, գետինը մացնել, այնպես անել, որ շունը ձեռքից հաց չառնի. մի օրը դնել, որ..., հոր հարսանիքը միտքը բերել, պապի կնուճիքը միտքը բերել, (բրբ.) արուրը ֆոռել, շախ դնել, շախ տալ, ցից անել (հանդիմանալ, կշտամբել, նախատել, պարսազել):

Այս կարգի հարուստ հոմանշային կապերից բացի, հայերենի բայական դարձվածքների մյուս մասն էլ հոմանշային հարաբերու-



թյան մեջ է գտնվում համարժեք, համանշանակ բառերի հետ: Դը-  
յանք օժտված չեն այն հարուստ կապերով և ճշուղավորումներով,  
ինչ որ ունեն նախորդ կարգի բայական դարձվածքները: Օրինակ՝  
կանաչ-կարմիրը կապել—ամուսնացնել (տղային), կառնիկին հուպ  
տալ՝ չափել՝ չուր դնել—ստիպել, հարկադրել, կրակի վրա յուզ՝ ձեթ՝  
բեղզի՝ կրակ ածել կամ լցնել—գրգռել, հրահրել (մի բանի):

Իդիոմատիկ բայական դարձվածքների հիմնական առանձնա-  
հատկությունն այն է, որ նրանցում համեմատաբար փոքր թիվ են  
կազմում իմաստային նույնություն հիման վրա կազմված հոմանը-  
շային կապերը: Զգալի մասը, հետևաբար, իմաստների նրբերան-  
գային տարբերություններով կառուցված հոմանիշներ են: Միայն  
ոճական և ֆունկցիոնալ-կիրառական առանձնահատկություններով  
օժտված ոչ իդիոմատիկ դարձվածքների միջև հաստատված հոմանը-  
շային կապերը իմաստային նույնության և ոճական-կիրառական  
աննշան տարբերությունների վրա են հիմնված. ինչպես, օրինակ՝  
արյան բաղնիք և արյան ծով (արյունահեղություն), ողորմած հո-  
գի—ննչեցյալ, երկնային քաղաք, երկնային դատավար (աստ-  
ված), երկնային ջահ, երկնային լուսատու (արև), բահով փայտա-  
տուփ կարգալ իմացող (գիտցող) և գրի սեն ու սպիտակը ջոկող  
(կիսազրապետ):

Մրանք մեծ մասամբ պատկերավոր՝ արտահայտություններ,  
փոխաբերություններ և շրջաստություններ են և գտնվում են իդիոմա-  
տիկ արտահայտություններ դառնալու ճանապարհին:

Ուրպես նախադասություն հանդես եկող հոմանիշ դարձված-  
քային միավորներ:

Այս կարգի մեջ մտնում են ժամանակակից հայերենի դարձ-  
վածքային արժեք ունեցող առածները, ասացվածքները, թևավոր  
խոսքերը, դիպուկ արտահայտությունները, աֆորիզմները, անեծք-  
ները, օրհնանքները, մաղթանքները. գլուխով խուփը՝ գտավ (առավ)  
պուտուկը կամ՝ կնուր գլուխով՝ խուփն է գտել (ժող. խոսկց.),  
նման գնմանն սիրե, նման գնմանն գտանի (գրք.). (վատ մարդիկ  
իրար լավ են հասկանում, իրար շուտ են գտնում): Մի ծաղկով  
գաբուն չի գա, մի ծիծեռնակը գաբուն չի բերի, մի ձեռքը ծափ չի  
տա (մեկի՝ անհատի ջանքերով, մի եզակի օրինակով որևէ գործ  
կամ երևույթ չի իրականանա՝ հաջողությամբ չի սլակվի), աջ ես,  
թե՞ ձախ ե տղա՞ ես, թե աղջիկ (կամ աղջիկ ես, թե՞ տղա) (գործը  
հաջող է, թե անհաջող). կրակը գնացել՝ մնացել է մոխիրը և հայ-  
հայը գնացել՝ վայվայն է մնացել (խոսկց.), (այլևս առաջվանը  
չէ, ծեղաշել է, առույգությունը, կենսասխնդությունը կորցրել է),

բարև տաս՝ բարեկենդանին կգա և Երես տաս՝ աստաղ կուղի (անե-  
րեսի մեկն է):

Գարձվածքի հոմանշային գործածություն: Այն բոլոր դարձ-  
վածքները, որոնց բաղադրիչներից մեկը (կամ մի բանիսը) կարող  
են փոխարինվել որևէ հոմանիշով (կամ հոմանիշներով), սխալ է  
դարձվածքի հոմանշային գործածություն համարել, ինչպես, օրի-  
նակ՝ բերանում բան չի մնա և քերական լորի՝ սապ՝ սխալ չի քրջվի  
(բացբերան է, դադարիք պահել շղիտե), բոյիցդ էլ շես ամառում և  
բոյիդ մտի՛կ կամ բոյիդ նայի՛ր (հանդիմանական արտահայտու-  
թյուն՝ մեծ ես, շափահաս ես, քեզ վայել չէ այդպիսի բան անել).  
գետը շտեսած բորիկանալ կամ գետը շտեսած ոտները (ոտնաման-  
ները) հանել, գետը շտեսած տկլորանալ (առանց հիմքի կամ նա-  
խապայմանի սկսել գործել, առանց լուրջ հիմքի՝ ժամանակից շուտ  
ողտորվել). գլխին լափ կամ շան լափ քափել (լցնել, ածել), գլխին  
լվացաջուր քափել (լցնել, ածել) (մեկին նախատել, պարսպել),  
խոսք մեկ անել և խոսք մի աման դնել (իրար հետ համաձայ-  
նություն դալ, պայմանավորվել), կյանքի ձմեռ, կյանքի մայրա-  
մուտ, կյանքի վերջալույս (ծերություն, կյանքի վերջին շրջանը):

Այս կարգի դարձվածքները միջին դիրք են զբաղում դարձված-  
քային տարբերակների և դարձվածքային հոմանիշների միջև, դարձ-  
վածքային իմաստների նույնության պատճառով որոշակի համա-  
տեքատերում հնարավոր է դրանց ոչ ընդհանուր բաղադրիչների փո-  
խադարձ փոխարինությունը:

Որոշակի տարբերություններ կան հոմանիշ դարձվածքների և  
դարձվածքների հոմանշային գործածության միջև: Վերջինս դարձ-  
վածքների տարբերակների և հոմանիշների միջև մի երրորդ փեճակ  
ներկայացնելով՝ բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

ա) դարձվածքի հոմանշային գործածության ղեպրում հնարա-  
վոր է դարձվածքի փոփոխական բաղադրիչի փոխարինելիությունը.  
մինչդեռ հոմանիշ դարձվածքների բաղադրիչների փոխարինելիու-  
թյունը բացառվում է.

բ) հոմանիշ դարձվածքների համար հիմնական հատկանիշ չէ  
կառուցվածքային նույնությունը, մինչդեռ դարձվածքների հոմանը-  
շային գործածության դեպքում պարտադիր է նրանց կառուցված-  
քային նույնատիպությունը՝ նրանց բաղադրիչների փոխարինելիու-  
թյունը իրացնելու համար.

գ) հոմանիշ կիրառությամբ դարձվածքները հոմանիշ դարձ-  
վածքներին մոտ են իրենց ոճական-կիրառական նվազ կամ զգալի  
տարբերություններով, բայց հիմնականում տարբերվում են նրա-

նով, որ արտահայտում են միևնույն իմաստը, զուրկ են իմաստա-  
յին-նրբերանդային տարբերությունից:

### ԳԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒՄ

Գարձվածքային համանունությունը բառային համանունության համեմատությամբ բանականացնելով խիստ սահմանափակ է և տարած-  
վում է սահմանափակ թվով դարձվածքների վրա: Համառոտ են կոչվում այն դարձվածքները, որոնք բացարձակապես նույնն են իրենց հնչյունաբառային կազմով, ունեն տարբեր իմաստներ և ժա-  
մանակակից լեզվաբանությունով գիտակցվում են իբրև տար-  
բեր դարձվածքային միավորներ: Ինչպես, օրինակ՝ 1. Գլխով անց-  
նել— 1) մտածել, ծրագրել. 2) բաղձալ, տենչալ, ցանկանալ. 2. Գլխով անցնել— պատահել, հանդիպել:

1. Աչքերը փակել— մեռնել. 2. Աչքերը փակել— մեկին խա-  
բել, մոլորեցնել, մոլորության մեջ գցել. 3. Աչքերը փակել— շնորհ-  
տելու տալ, ուշադրություն չդարձնել:

Գարձվածքային համանունության առանձնահատկությունն այն է, որ այն հիմնականում ընդգրկում է բայական դարձվածքները: Հայերենի ավելի քան 20 հազար դարձվածքային միավորների մեջ խիստ սակավ են այլ խոսքի մասերին պատկանող համանուն դարձ-  
վածքները, ինչպես՝

1) Մի բերան— 1) մի փոքր, մի քիչ, մի պատառ (ուտել).  
2) մեկ անգամ (ասել):

2) Մի բերան— անվերջ, անդադար, նույն բանը կրկնելով:

3) Մի բերան— խոսքը մեկ արած, միահամուռ, միաձայն:

1) Սատանի բուրվառ— ծխախոտ: 2) Սատանի բուրվառ—  
բանասրկու, բամբասասեր (անձ):

1) Սև սատանա— սեամորթ, խափշիկ: 2) Սև սատանա— բան-  
ասրկու, խառնակիչ (մարդ):

Բառային համանունության նման, դարձվածքային համանուն-  
ների առաջացման աղբյուրներն ու ուղիները տարբեր են:

Ժամանակակից հայերենում նրանց առաջացման հիմնական ուղին դարձվածքի բազմիմաստությունն է, երբ բազմիմաստ դարձ-  
վածքի իմաստներից մեկը (կամ մի քանիսը) այնքան է հեռանում  
մայր դարձվածքի հիմնական, առարկայական իմաստից (կամ ի-  
մաստներից), որ խախտելով բազմիմաստ դարձվածքի իմաստա-  
յին-տրամաբանական կապը, ժամանակակից լեզվաբանությունով  
թյամբ նախկին իմաստը գիտակցվում և ընդունվում է իբրև ինք-  
նուրույն դարձվածք իր անկախ իմաստով. օր.

1. Գլխով անցնել— 1) մտածել, ծրագրել. 2) բաղձալ, տեն-  
չալ, ցանկանալ (մի բան):

2. Գլխով անցնել— պատահել, հանդիպել (կյանքում):

1. Ձեռք տալ— 1) մեկին դիպել, նեղացնել, վնասել. 2) խը-  
լել, յուրացնել:

2. Ձեռք տալ— 1) օգնել, սատարել. 2) ձեռքը սեղմել՝ ի նշան  
բարեկամության. 3) բարեկլ:

3. Ձեռք տալ— 1) ձեռնտու՝ շահավետ լինել. 2) փոխադարձ  
համաձայնության գալ:

Գարձվածքային համանունության առաջացման համար էա-  
կան նշանակություն կարող են ունենալ նաև դարձվածքի բաղադ-  
րիչների կամ բաղադրիչներից մեկի իմաստային, ինչպես նաև  
բաղադրիչների շարահյուսական-գործառական տարբերություննե-  
րը, որոնց շնորհիվ նույն բաղադրակազմն ունեցող դարձվածքային  
միավորները ձեռք են բերում տրամաբանորեն և ծագումնաբանո-  
րեն իրար հետ շատնչվող իմաստներ, հետևաբար և գիտակցվում  
են իբրև ձևով նույն, բայց բովանդակությամբ տարբեր դարձվածք-  
ներ: Օրինակ՝

1. Կուրծք տալ— 1) կրծքով կերակրել (երեխային). 2) սնել,  
սնունդ տալ:

2. Կուրծք տալ— դիմադրել, դիմագրավել, պաշտպան կանգնել:

1. Հացը կտրել— մեկին սեղանակից լինել, հյուրասիրվել մե-  
կի կողմից:

2. Հացը կտրել— մեկին ապրուստից զրկել, մեկի ապրուստի  
միջոցը խլել:

1. Գրպանը դնել (մեկին)— 1) մեկին գերազանցել, մեկի նը-  
կատմամբ բացարձակ առավելություն ունենալ. 2) խաբել:

2. Գրպանը դնել (մի բան)— յուրացնել, սեփականել, զըր-  
պանել:

1. Ձեռք փաշել— 1) մի բանից հրաժարվել. 2) մեկին՝ մի բան  
հանդիստ թողնել:

2. Ձեռք փաշել— ստորագրել:

Գարձվածքների բուն համանուններից էապես տարբերվում է  
նույն բաղադրակազմն ունեցող դարձվածքի և բառակապակցու-  
թյան՝ իբրև բառաիմաստային տարբեր միավորների, համանունու-  
թյունը, ինչպես, օրինակ՝

1. Երեսը բռնել— 1) շամաշել, հանդգնել. 2) շփանալ, երես  
առնել:

2. Երեսը բռնել— երեսը ծածկել՝ փակել:

1. Աչքը բացել— գիտակցության գալ. 2. Աչքը բացել— աչքը  
բաց անել:

1. Քար կտրել— 1) ապշել, ապշահար լինել. 2) անշարժանալ.
- 3) կարծրանալ:
2. Քար կտրել— քար(ը) հատել:
1. Ձեռք փաշել— 1) հրաժարվել. 2) մեկին՝ մի բան հանգիստ թողնել:
2. Ձեռք փաշել— մի բանի վրայից ձեռքը ետ տանել:

**ԳԱՐՁՎԱՄՔԱՅԻՆ ՀԱԿԱՆՈՒՇՆԵՐ**

Գարձվածքների հականշույթունը հումանշույթյան հակառակ երևույթն է:

Հականիշ են կոչվում այն դարձվածքները, որոնք ունեն հակառակ՝ հակադիր բառային իմաստներ:

Գարձվածքային հականշույթյան առանձնահատկությունն այն է, որ.

ա) հարաբերակցվում են միևնույն բառաբերականական կարգին պատկանող, նույն խոսքի մասին հարաբերակից դարձվածքները և հիմնականում բայական, մասամբ նաև՝ ածականական ու մակբայական դարձվածքային միավորները: Օր.՝ աչք բացել և աչք փակել. ձեռք բաց (առատաձեռն, շոպլ) և ձեռք փակ (ժլատ, կծծի):

բ) լեզվում իմաստային-տարբերակիչ հատկանշից բացի, ունեն ոճական-կիրառական արժեք:

Սովորաբար հականշային հարաբերության մեջ են մտնում նույն բառաբերականական կառուցվածքով այն դարձվածքները, որոնք ունեն բաղադրիչների նույնական կազմ, բացառությամբ մեկական բաղադրիչի՝ յուրաքանչյուր դարձվածքում: Այդ դեպքում դարձվածքային հականշույթուն առաջանում է տարբեր բաղադրիչ բառերի հականիշ իմաստների շնորհիվ:

Օր.՝ 1. Աչքը դռանը (ամուսնական ուխտին չզավաճանող, ամուսնական կյանքին հավատարիմ տղամարդ):

2. Աչքը դուրսը (ամուսնական ուխտին դավաճանող, ամուսնական կյանքին անհավատարիմ):

1. Ուրբ քեքս (զալուստը բարի, նյայստավոր) և 2. Ուրբ ծանր (զալուստը շարագուշակ՝ անբարեհաջող): 1. Ձեռք բաց (առատաձեռն) և 2. Ձեռք փակ (ժլատ): 1) Աչքի լույս (սիրելի, պաշտելի, թանկագին (անձ) և 2) Աչքի գրող— (ատելի, անտանելի):

1. Աստծու գառ (խելոք, հեզ) և 2. Աստծու կրակ (շար, անհանգիստ):

Ժամանակակից հայերենում դարձվածքային հականշույթյան

առաջացման միջոց կարող է համարվել նաև հնչերանգը: Տարբեր հնչերանգի շնորհիվ (գրական և հարցական) նույն դարձվածքի իմաստը կարող է բնկալվել կա՛մ գրական, կա՛մ միտական նշանակություններով: Օրինակ՝ գլխին խել (միտ) մնալ— և գլխին խել (միտ) մնա՞լ. Գլխում խել կա— գլխում խել կա՞: Ձեռքը փաշի տակին լինել— ձեռքը փաշի տակի՞ն լինել և այլն:

**ԳՐԱԿԱՆ ԼԵՉՎԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԴԱՐՁՎԱՄՔՆԵՐ**

Ժամանակակից հայոց լեզվի դարձվածքային կազմը բաղկացած է հիմնականում արդի գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների, բարբառների և գրաբարի դարձվածքներից: Այնուամենայնիվ, դարձվածքների հիմնական զանգվածը վերաբերում է գրական լեզվի արևելահայ տարբերակին: Որոշակի թիվ են կազմում նաև արևմտահայ և բարբառային դարձվածքները:

Արևելահայ գրական լեզվի դարձվածքները իրենց մեջ ներառում են հայերենի ինչպես բնիկ, այնպես էլ պատճենված դարձվածքների ամբողջությունը և գրական լեզվում չունեն զործածություն որևէ սահմանափակում:

Արևմտահայ գրական լեզվին են վերաբերում այն դարձվածքները, որոնք կազմված են արևմտահայերենի բառային կամ քերականական օրինաչափություններով:

Արևմտահայ գրական լեզվի դարձվածքներն ունեն տարբերակիչ հետևյալ հատկանիշները.

ա) Արևմտահայ գրական լեզվի քերականական տարբեր ձևերով կազմված դարձվածքներ: Սրա հիմքում ընկած է գրական լեզվի երկու տարբերակների թեքման ձևերի տարբերությունը: Օրինակ՝ արևմտահայերեն՝ խելե(ն)—մտե(ն) դուրս, արևելահայերեն՝ խելից—մտից դուրս. խելը պառկել և խելում պառկել, սրտին խորը (խորքը, խորին մեջ) և սրտի խորում, աչքն ու երեսն ինկած և աչքից ու երեսից ընկած, աստվածնիդ սիրեմ (կսիրեմ) և (թե) աստված(դ) կսիրես, աչքն ծածկել և աչքից ծածկել, գլխն հանել—գլխից հանել:

բ) նույն դարձվածքի կազմում բաղադրիչ բառերի տարբերություններ, որոնք արևմտահայերենում և արևելահայերենում նույն կամ մոտ իմաստներ ունեն: Օրինակ՝ աչքը գոց և աչքը փակ. աչք(ը) գոցել և աչք(ը) փակել. աչք նետել—աչք՝ գցել. ակոս սրել և ոտամ սրել. ակոսյին զարնել—ատամին տալ, ատամի տալ. աղեկ աչքով նայել—բարի աչքով նայել. ասղին—անղին ընկնել (իջնալ)—

այս կողմ այն կողմ ընկնել. գլուխը պաղ ջուր լցնել—գլուխը սառ ջուր լցնել. սևին ներմակ ըսել և սևին սպիտակ ասել:

գ) Միայն արևմտահայերենում գործածվող դարձվածքներ, որոնց մի մասը իր հոմանիշներն ունի արևելահայերենում. ինչպես, օրինակ՝ ամսական կապել—տոճիկ նշանակել, ապուր ուտել—հանցանք, անթույլատրելի բան կատարել, առավ-փախավին մեկը—ստահակ, սրիկա, արկածախնդիր, դաշնակ զարնել—դաշնամուր նվագել, դբամ կոխել—դրամ կտրել, դրամ պատրաստել, դբամ շինել—դրամ վաստակել, Քարուլին գալանոշ(ը)— 1) շափազանցեցված հյուրասիրություն, 2) մի բան զոռով մեկի վզին փաթաթելը, պզտիկ ընկնել կամ մնալ—ստորանալ, ամոթով մնալ, պրզտիկ թողալ կամ ձգել—ստորացնել, ամոթով թողնել, սլզտիկ մտախից հանել—մի բան անելը հեշտ լինել, լավ դիտենալ:

## ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բառարանագրությունը լեզվաբանության բաժիններից մեկն է, մտնում է բառագիտության մեջ, զբաղվում է բառարանների կազմությամբ, ինչպես նաև բառարանների տեսության հարցերով: Բառարանագրությունը բառարան կազմելու արվեստն է, ինչպես նաև տարբեր տիպի բառարանների կազմության ընդհանուր և մասնավոր տեսական հարցերի ուսումնասիրության գիտաճյուղը:

Բառարաններ կազմելու գործը՝ արվեստը դարերի պատմություն ունի, մինչդեռ բառարանների տեսական հարցերի ուսումնասիրությունը համեմատաբար երիտասարդ դիսցիպլին է և միայն վերջերս է ձևավորվել:

Բառարանագրի աշխատանքի առանձնահատկությունն այն է, որ նա գործ ունի արդեն հայտնի և ընդունված լեզվական փաստերի հավաքման, համակարգման և մեկնաբանման հետ:

Բառարանագրությունը սերտորեն առնչվում է լեզվաբանության այնպիսի բաժիններին, ինչպիսիք են՝ բառագիտությունը, իմաստաբանությունը, ստուգաբանությունը, ոճաբանությունը<sup>1</sup>:

ա) Բառաբանագրությունը և բառագիտությունը: Այս երկու գիտաճյուղերի՝ բառարանագրության և բառագիտության ուսումնասիրության ընդհանուր օբյեկտը բառն է՝ իր իմաստով և գործածությամբ: Ինչպես հայտնի է, բառագիտությունն ուսումնասիրում է լեզվի բառային կազմի՝ բառապաշարի և ընդհանրապես բառի ընդհանուր օրինաչափությունները, բառի և բառապաշարի տեսական հարցերը՝ ժամանակակից փուլում և պատմական զարգացման ընթացքում:

Բառարանագրությունը թեև նույնպես գործ ունի բառի և լեզվի բառապաշարի հետ, բայց որպես բառարաններ կազմելու արվեստ կիրառական գիտություն է, հետապնդում է բառի նկարա-

<sup>1</sup> Հայերեն բառարանագիտություն տերմինը կազմվել է лексикография բառի նմանազուգությամբ, որ ծագում է հունարեն lexicos— բառարանային, բառային և γραφῶ— գրում եմ բառերից:

<sup>1</sup> Кесарев X., Введение в современную лексикографию, М., 1958, 27—

գրութեան, նրա գործնական-կիրառական և բառապաշարի համակարգման ու յուրացման կոնկրետ նպատակներ, հիմնականում օգտագործում է բառագիրտութեան տեսական հարցերի ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված նվաճումները:

բ) **Բառարանագրութիւնը և իմաստաբանութիւնը:** Բառարանագրութիւնը սերտորեն առնչվում է իմաստաբանութեան հետ: Իմաստաբանութիւնն զբաղվում է լեզվի և մասնավորապես բառերի իմաստային ընդհանուր գործընթացների և նրանց դասակարգման հարցերով: Իմաստաբանութեան, որպէս տեսական գիտութեան, ուսումնասիրութեան նյութը բառի իմաստն է, նրա տեսակներն ու տիպերը, դրանց զարգացման արդի և անցյալ վիճակները, նրանց փոփոխութեան պատճառները, բառի ձևի և իմաստի փոխհարաբերութիւնը՝ հոմանշութեան, համանունութեան, հականշութեան հարցերը, վերջապէս իմաստաբանական վերոհիշյալ երևույթների օրինաչափութիւնները:

Բառարանագրութեան նպատակն է բառիմաստների բացահայտումն ու նկարագրութիւնը և որոշ դեպքերում նաև երկու և ավելի լեզուներում իմաստային համանշանակների որոնումն ու արձանագրումը:

Բառարանագրի աշխատանքը հնարավոր չէ պատկերացնել առանց իմաստաբանական օրինաչափութիւնների օգտագործման և իմաստաբանական ուսումնասիրութիւնների արդյունքների հաշվառման: Մյուս կողմից, իմաստաբանութիւնն իր հերթին, իբրև տեսական գիտութիւն, իր ուսումնասիրութեան, տեսական ընդհանրացումների համար որպէս հումք է օգտագործում բառարանագրի հավաքած, խմբավորած և համակարգման ենթարկած փաստական հարուստ նյութը:

Բառարանագրի աշխատանքի դժվարութիւնն այն է, որ բազմաթիվ համատեքստերի հիման վրա տալիս է լեզվի տասնյակ հազարավոր բառերի ընդհանուր գործածական իմաստների և նրբիմաստների տարբերակումը (որոնց ընդհանուր քանակը կարող է միլիոնի հասնել), ինչպէս նաև այդ իմաստների առանձին-առանձին մեկնութիւնն ու նկարագրութիւնը, կամ մեկ այլ լեզվի կամ մի քանի լեզուների համապատասխանութիւնները: †

գ) **Բառարանագրութիւնը և ստուգաբանութիւնը:** Ստուգաբանութիւնը որպէս բառերի ծագման, նրա ցեղակցական և փոխառական կապերի բացահայտման գիտութիւն, այն չափով է աղբյւրվում բառարանագրութեանը, որքանով նպաստում է բառարանագրին՝ յուրացնելու նրա հիմնական աշխատանքը: Բացառութեամբ ստուգաբանական հատուկ բառարանների, տարբեր տիպերի և տաս-

նյակ տեսակի բառարանների կազմութեան ընթացքում բառարանագիրը խիստ անհրաժեշտութեան դեպքում միայն կարող է օգտագործել ստուգաբանական ուսումնասիրութիւնների արդէն պատրաստի արդյունքները (հատկապէս՝ որոշ կարգի բացատրական և օտարազգի բառերի բառարաններում): Բառարանագրի աշխատանքի ընթացքում հաճախ հնարավոր է լինում բաղադրյալ բառերի բաղադրիչների (արմատների կամ ձևույթների) իմաստային տարրերի տարրալուծմամբ բացատրել որևէ բաղադրյալ բառի իմաստը, ինչպէս, օրինակ՝ միեւ—մյուս, ալծմ—այս ժամ, ովկէ—ով և է, ինչևէ— ինչ և է, հեռուստացոյց—հեռուստ-ա-ցոյց, շոբանոց—շոր-անոց, խորովածանոց—խորով-ած-անոց, գրատախտակ—գր-ա-տախտակ:

Մյուս կողմից, իմաստային տարրերի կամ բաղադրիչների տարրալուծման շնորհիվ բաղադրյալ բառերի վերծանման նման եղանակը հաճախ կարող է թյուրիմացութիւնների պատճառ ծառայել: Թրինակ՝ մեծատուն չի նշանակում մեծ-տուն, այլ՝ հարուստ: Նույն մեթոդով չի կարելի բացատրել մեղրամիս և այլ բառերը, ինչպէս նաև դարձվածաբանական միավորները: Բառի միայն ստուգաբանութեան հաշվառումով նրա բառային իմաստի մեկնութեան, հնարավոր սխալների և թյուրիմացութիւնների առաջացման օրինակները կարելի է շարունակել. այսպէս, օրինակ՝ երկրաբանութիւն, երկրաբաշխութիւն, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն բառերը պատմական դարգացման ընթացքում այնքան են հեռացել իրենց բաղադրիչների բառային իմաստներից, որ հնարավոր չէ դրանց յուրաքանչյուրի ընդհանուր իմաստը մակարբերել իրենց բաղադրիչների առանձին իմաստներից:

Մասնագետները գտնում են, որ ստուգաբանութիւնը բացատրական բառարաններում պետք է բավարարի հետևյալ երկու պահանջները. ա) պետք է հեռանալ բառիմաստի մեկնութեան անմիջական աղբյուրից, բ) բառարանում պետք է տրվեն միայն վերջնականապէս հաստատված ստուգաբանութիւնները: Ընդհանրապէս պետք է հրաժարվել բառի ստուգաբանութեան մասին եղած կարծիքների և վարկածների շարադրանքից, գ) անհրաժեշտ է ստուգաբանական աշխատանքը ընդհանրապէս առանձնացնել բառարանագրական աշխատանքներից, դ) միաժամանակ չի կարելի ամբողջովին հրաժարվել ստուգաբանութիւնից, անհրաժեշտ է որոշակի սահմանադրել ստուգաբանութեան տեղը բացատրական բառարաններում:

դ) **Բառարանագրութիւնը և ռեպրանութիւնը:** Բառագաղարի բնագավառում ռեպրանութեան խնդիրը բառերի գործածութեան գր-

նահատման ընդհանուր օրինաչափությունների բացահայտումն է, լեզվի արտահայտչական միջոցների վերլուծությունը:

Բառարանագրությունը, հիմնվելով ոճաբանության նշած և լեզվի կողմից ընդունված օրինաչափությունների վրա, գործնականորեն արձանագրում է դրանք լեզվի բառային կազմի մեջ մտնող յուրաքանչյուր բառի համար, նշում՝ բառին համարժեք իմաստային միավորների գործածության ձևերը, հանգամանքներն ու ուղորտները:

Բառարանագրին, փաստորեն, հետաքրքրում են ոչ թե անհատական ոճերը, այլ համաժողովրդական ազգային լեզվի ոճական օրինաչափությունները: Բառարաններում արձանագրվում են բառերի և դարձվածքային միավորների մեջ պարունակվող զգայական և պատկերավոր տարրերը, այսինքն՝ հուզարտահայտչականությունը, որն արտահայտվում է բառի մեջ համակրական կամ հակակրական, փաղաքշական կամ արհամարհական, հեգնական կամ կատակային և այլ երանգների ձևով, ինչպես նաև կատարվում է բառերի և դարձվածքների՝ ըստ գործածության տարբեր ուղորտների, լեզվի զարգացման տարբեր փուլերի, բառապաշարի տարբեր խմբերի դասակարգումն ու նկարագրությունը:

Այդ կապակցությամբ բառարաններում լեզվի բառային ընդհանուր կազմից հատակորեն, հատուկ նշումներով առանձնացվում են մի կողմից՝ հուզարտահայտչական որևէ երանգ ունեցող բառերն ու դարձվածքային միավորները, մյուս կողմից՝ բարբառային (զավառական), ժողովրդախոսակցական, գրքային, բանաստեղծական, կենցաղային, ժարգոնային, զբաղմունքային-տերմինաբանական, հնացած, հին և հազվադեպ գործածվող բառերը, որոնք հակադրվում են լեզվի շեղք կամ միջոցային բառապաշարներին:

Այս բոլորից հետևում է, որ բառարանագիրը պետք է օժտված լինի հանրագիտական ընդունակություններով, գիտական լայն մըտահորիզոնով: Այնուհետև, գործ ունենալով տասնյակ, հարյուր հազարավոր լեզվական փաստերի հետ, պետք է հավասարապես հմուտ լինի լեզվի գիտության համարյա բոլոր բաժիններում, հատկապես՝ բառագիտության, իմաստաբանության, ստուգաբանության, ոճաբանության, դարձվածաբանության, ինչպես նաև քերականության, ընդհանուր, համեմատական և համադրական լեզվաբանության մեջ, ընդհանուր գաղափար պետք է ունենա նաև գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերի, անգամ՝ արտադրության գործընթացների մասին:

Բառարանները բաժանվում են երկու մեծ տիպերի՝ ճանաչողական և բանասիրական (կամ լեզվաբանական):

✓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում նկարագրվում են իրույթները, պատմական փաստերը, տեղեկություններ են տրվում պատմական և ժամանակակից կարևոր դեպքերի, իրադարձությունների, դեմքերի, ինչպես նաև հատուկ և աշխարհագրական անունների մասին, բացատրվում են անհրաժեշտ գիտական և անվանակարգային հասկացությունները: Հանրագիտական բառարաններում սեղմ ձևով ներկայացվում է մարդկային գիտելիքների տվյալ վիճակը այն բոլոր բնագավառներում, որոնց համապատասխանող բառերը կամ անվանումները ընդգրկված են բառացանկերում:

Հանրագիտական բառարանները լինում են համընդհանուր և որևէ մասնաճյուղին վերաբերող:

Համընդհանուր հանրագիտական բառարանի օրինակ են ծանոցում՝ 50 հատորանոց «Սովետական մեծ հանրագիտարանը» և բաղմահատորանոց «Հայկական սովետական հանրագիտարանը»: Առանձին մասնաճյուղային հանրագիտարաններից են՝ «Թժշկական հանրագիտարանը», «Փիլիսոփայական բառարանը», Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» և այլն: ✓

ՀԱՅԵՐԵՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Հայերեն հանրագիտական բառարաններ կազմելու փորձեր են արվել դեռևս 18-րդ դարից սկսած, բայց, դժբախտաբար, այդ կարգի աշխատանքները կամ արդեն հնացել են, կամ կիսատ մնալով՝ այժմ կարող են որոշ շափով պատմական արժեք միայն ունենալ:

Այդ կարգի աշխատանքներից հիշատակության արժանի են՝ Լ. Առաքելյանի «Հանրագիտական բառարանը» (1915 թ., Թիֆլիս), որի առաջին հատորն է միայն լույս տեսել, Մ. Պոտուրյանի «Հայ հանրագիտարանը» (1938 թ., Բուխարեստ), անձնանունների և ուղանունների բառարաններից՝ Մ. Մաղախ-Թեոփիլյանցի «Կենսագրություն Երևելի արանց» (Վենետիկ, 1891 թ.), Ն. Ճիվանյանի «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական հատուկ անվանց» (Կ. Պոլիս, 1879 թ.) և այլն:

Հանրագիտական ընդհանուր բառարան կազմելու համար անհրաժեշտ են գիտատեխնիկական, քաղաքական-սոցիալական, նյութական որոշակի պայմաններ և նախագրյալներ:

Հայկական հանրագիտարանի<sup>2</sup> ստեղծումը հնարավոր դարձավ միայն սովետական իշխանության պայմաններում, հայ ժողովրդի պետականության վերականգնման, նրա ազգային և սոցիալական վերածննդի, տնտեսության, մշակույթի, դիտության, տեխնիկայի աննախընթաց զարգացման շնորհիվ:

Հանրագիտարանը նախատեսված է հրատարակել 12 հատորով. բառացանկն ընդգրկելու է շուրջ 50 հազար տերմինահոդված, յուրաքանչյուր հատոր պարունակելու է մոտ 1500 նկար, պատկեր, քարտեզ և դիագրամ:

Իրրև ազգային հանրագիտարան նրանում պատշաճ տեղ է տրված հայ ժողովրդի պատմական անցյալին, Սովետական Հայաստանի ստեղծման և զարգացման պատմությանը, նրա տնտեսության, արտադրության, գիտության, մշակույթի, արվեստի, գրականության նվաճումներին: Նրանում հանգամանորեն լուսարանվում են հայ ժողովրդի քաղաքական մտքի պատմությունը, հասարակական կյանքի իրադարձությունները, հիշարժան դեպքերն ու դեմքերը:

Բառարանում բաղմազան տեղեկություններ են տրվում հատկապես Սովետական Հայաստանի տնտեսության, արտադրության, հասարակական-քաղաքական կյանքի, բնության, բնական հարստությունների, բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ կենսագրական և այլ տվյալներ են բերվում գիտության, տեխնիկայի, մշակույթի, արվեստի, գրականության, սպորտի և այլ բնագավառների պետական ականավոր գործիչների, նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության մասին: Նրանում անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ են պարունակվում սփյուռքի հասարակական, մշակութային կազմակերպությունների, հայրենակցական միությունների և գիտության, մշակույթի և քաղաքական նշանավոր գործիչների մասին:

Բառարանում մեծ տեղ է հատկացված պատմական Հայաստանի տեղանուններին, ճարտարապետական հուշարձաններին, աշխարհագրական անուններին, բնակավայրերի նկարագրությանը: Հարուստ են բնակչության կազմի, թվի և զբաղմունքի մասին տրվյալները:

Բառարանում պատշաճ տեղ են գրավում արտադրության և տեխնիկայի այլևայլ բնագավառներում համաշխարհային և սովետական գիտության ձեռք բերած նվաճումներին վերաբերող հոդվածները: Նշված ընդհանուր կարգի հոդվածներում նույնպես հանախ պարունակվում են անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերաբերում են Հայաստանին կամ այդ կոնկրետ բնագավառի հայ ժողովրդի ներկայացուցիչներին: Հոդվածները ըստ ծավալի բաժանվում են երեք հիմնական խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն հոդվածները, որոնք բառարանային բնույթ ունեն, որտեղ տրվում է տվյալ տերմինի սահմանումը և համառոտ տվյալներ նրա մասին: Երկրորդ խումբը կազմում են պատմական իրադարձություններին, արտադրության և գիտության ավելի նեղ ճյուղերին, մեծ քաղաքներին, շրջաններին, ինչպես նաև գիտության ու մշակույթի ականավոր գործիչներին վերաբերող հոդվածները: Երրորդ խմբի մեջ են մտնում այն հոդվածները, որոնք վերաբերում են գիտության և արտադրության ամբողջական ճյուղերին, աշխարհի յստ երկրներին և ՍՍՀՄ միութենական հանրապետություններին:

Հայկական հանրագիտարանի կազմության և հրատարակության փաստը մշակութային, գիտական-քաղաքական խոշոր իրադարձություն է հայ ժողովրդի կյանքում:

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԸ»

Հայ բառարանագրության մեջ նոր երևույթ է Հ. Աճառյանի հինգ հատորանոց «Հայոց անձնանունների բառարանը»<sup>3</sup>: Այն կազմված է բանասիրական-լեզվաբանական և պատմական-հանրագիտական տեսանկյունով և, փաստորեն, իրենից ներկայացնում է բանասիրական (լեզվաբանական) և հանրագիտական բառարանների կազմության սկզբունքների միավորմամբ ստեղծված բառարանի մի նոր տիպ, որտեղ բերվում են հայերեն անձնանունների թե՛ լեզվաբանական-ստուգաբանական և թե՛ նրանց պատմական-մատենագիտական մանրամասն, անհրաժեշտ և կարևոր տվյալներ, տրվում բնութագրումներ:

Հեղինակի նպատակն է եղել հավաքել և բառարանագրական մշակման ենթարկել այն բոլոր անունները, որ պատմության ընթացքում որևէ հայ անհատ կրել է երբևիցե, անկախ նրա դիրքից ու աստիճանից:

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1—5 հատորներ, 1942—1962:

<sup>2</sup> «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1—6, 1974—1981:

Բառարանն ընդգրկում է 5—15-րդ դարը ներառյալ հայոց պատմութեան մեջ արձանագրված և ընդհանրապէս այս կամ այն առիթով հիշատակված հայոց բոլոր այն անձնանունները, որոնք մեզ են հասել գրավոր հուշարձանների միջոցով, որ հայտնի կամ մատչելի են եղել 2. Աճառյանին: 16—17-րդ դարերից առնված են միայն պատմական և զրական կարևոր կամ նշանավոր դեմքերը: Այն ընդհանրապէս պարունակում է մինչև մեր դարի 40—50-ական թվականները հայերի մեջ ընդհանուր գործածութիւն գտած անձնանունները:

Բառարանը բաժանվում է երկու հիմնական բաժինների. առաջին բաժինը լեզվաբանական-ստուգաբանական բնույթ ունի, երկրորդը՝ պատմական-հանրագիտական և աղբյուրագիտական-մատենագիտական:

Առաջին բաժնում տրվում է անձնանունը որպէս ղլխաբառ, նշվում սեռը, որին հետևում են այդ անվան ծագումը կամ ստուգաբանութիւնը և, եթէ անունը օտար է, նրա համապատասխան ձևվերը մի քանի հայտնի լեզուներով, ինչպէս նաև այդ անունով մի քանի նշանավոր դեմքեր օտար ազգերից և ժողովուրդներից: Այնուհետև բերվում են այդ անվան փաղաքշական կամ կրճատ ձևերը մեր բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում: Հատուկ նշումով զլխաբառ-անձնանվան սկզբից տրվում է նրա բնիկ՝ հայկական կամ օտար ծագումը:

Լեզվաբանական-ստուգաբանական այդ առաջին բաժինն հաջորդում է պատմական-հանրագիտական, աղբյուրագիտական, տեղեկատու-մատենագիտական բաժինը, որտեղ ժամանակագրական կարգով բերվում են այդ անունով հիշատակված բոլոր անձնավորութիւնները մինչև 1500 թ. անխտիր, իսկ դրանից հետո՝ միայն նշանավորները. ըստ որում տրվում է նրանց սեղմ և ամփոփ կենսագրութիւնը և այն բոլոր աղբյուրների մատենագիտական ցանկը, որոնցում տվյալ անձնավորութիւնը հիշատակվում է: Բերում ենք բառահոգովածների նմուշներ այդ բառարանից, որոշ կրճատուններով:

+ Աստուածատու, ար(ական) < հյ. Աստուած-տու բառերից իբրև «Աստուծո տվածը». հմմտ. Խաշատուր, Տիրատուր, Գրիգորատուր, Վիրապտուր, Քրիստոստուր: Համապատասխան ձևերը գործածված են եղել ուրիշ ազգերի մեջ էլ՝ սկսած շատ հին ժամանակներից, ինչպէս ասորեստանյան Ելի-Վանարա (Աստված է ավել), եբրայական Նարանայի, պարթևական Bagadāta (որից առաջացել է Բագարատ), միջին պարսկերեն Դնդատ..., նոր պարսկերեն Xudādāt կամ Vazdāndād, թրք. Tanriverdi, Xudāverdi կամ Allahver-

di (հմմտ. Ալահվերդի, այսինքն՝ Աստվածատուր), հուն. Θεόδοτος (որից ծագել է հյ. Փեդորոս և կրճատվամբ՝ Փորոս), լատ. Deodatus, ֆրանս. Daudet կամ Dieudonne, գերմ. Gottlieb, ռուս. Бордан:

Աստուածատու անունը մեր մեջ ձևափոխվելով ու կրճատվելով ստացել է զանազան ձևեր, այսպէս՝ Աստատուր, Ասվատուր, Ասպատուր, Ասատուր, Աստուր, Աստղիկ, Ասօ, Մատուր, Մատի, նաև՝ Տատուր և վերջապէս Տատ (ըստ Քեոդիկի): Այս ձևերը ավանդված են ԺԴ դարից սկսած...: Սրանցից էլ կազմված են Աստուծատրեան, Մատուրեան, Տատուրեան, Ասատուրեան, Ասոյան, Տատեան ազգանունները:

Այնուհետև տրվում է ժամանակագրական կարգով այդ անունով 192 անձանց համառոտ կենսագրութիւնը և գործունեութիւնը, նշվում՝ աղբյուրները, մատենագիտութիւնը:

\*Բարսեղ, ար.<հուն. Βαρσειος անունից, որ Βαρσειος «բազավոր» բառն է և իբրև անձնանուն գործածվում էր նաև հունաց մեջ: Հայտնի է, օրինակ՝ Ս. Բարսեղ Կեսարացի (331—379) նշանավոր հայրը, որի գործերից շատերն էլ թարգմանված են հայերենի: Գրված է նաև Բարսիղ: Այս բառը ձևափոխվելով դարձավ ավելի ուշ նոր հուն. Vasilii, որից ռուս. ВАСИЛИЙ: Հայերենում ունինք, բացի Բարսեղ ձևից, նաև Բասիլ, Բասիլոս և Վասիլ ձևերով: Համապատասխան ձևերն են արար. Melik, պրս. Xusrav (Խոսրով) և հյ. Արֆայ, Փագուր: Գործածական է մեր մեջ և դարից մինչև այժմ. սրանից ունինք Բարսեղեան ազգանունը:

Այնուհետև տրվում է այդ անունով 99 անձանց կենսագրութիւնը:

\*Արշակ, ար.<հայրս. Aršaka ձևից, որը նվազականն է arša «արջ» բառի. հմմտ. զնդ. areš a, սանս. r̥kša, հուն. αρκτος, լատ. ursus և հյ. արջ: Ըստ այսմ Արշակ նշանակում է բուն. «Արջուկ» և այս իմաստով համապատասխանում է ձիշտ լատ. Ursula «փոքրիկ արջ» անձնանվան: Ավելի հավանական է սակայն դնել arša «արու» բառից, այս դեպքում Արշակ համապատասխանում է Արսեն անվան: Այս Արշակ անունից ծագեց Արշակունի տոհմանունը, պարթևական թագավորական հարստութիւն, որի մի ճյուղը իշխեց Հայաստանում: Հնում գործածվում է մինչև ԺԱ. դար. այնուհետև լուծւմ է. վերակենդանացավ նոր շրջանում և այժմ շատ սովորական է:

Հայերեն անձնանունների ընդգրկման ծավալով, նրանց ստուգաբանական-լեզվաբանական բնութագրմամբ, ինչպէս նաև յու-



րաբանչյուր անձնանունին տրվող պատմական տեղեկություններով և մատենագիտական տվյալներով Հ. Աճառյանի բազմահատոր այս բառարանը դանձում է ոչ միայն լեզվաբանական-բանասիրական, այլև պատմական-աղբյուրագիտական, հանրագիտական բնույթի կարևոր տեղեկատու ձեռնարկ:

### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում, ելնելով կազմության սկզբունքներից, տրվում են կենսագրական տվյալներ տարբեր բնագավառի գործիչների մասին:

Կ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, երեք հատորով, հ. Ա, Ա—Բ, Երևան, 1973:

Բառարանն ունի տեղեկատու բնույթ և պարունակում է տրվյալներ մոտ 10 հազար հայ գործիչների կենսագրության մասին:

Աշխատանքում տեղ են գտել հիմնականում հայ մշակույթի գործիչները՝ գրողներ, արվեստագետներ, հրապարակախոսներ, գրականագետներ, լեզվաբաններ, թարգմանիչներ, կրթական գործիչներ և այլն: Վերոհիշյալ մասնագիտություններին պատկանող գործիչներից բացի, բառարանում տեղ են գտել նաև.

ա) Պետական, քաղաքական այն գործիչները, որոնք արժանացել են միջազգային կամ համամիութենական ճանաչման:

բ) Այն գործիչները, որոնք ծագումով հայ են, բայց համընդհանուր ճանաչում են ստացել օտար ժողովուրդների գրականության և արվեստի մեջ:

գ) Օտարազգի հայագետները, որոնց կենսագրականները զետեղվելու են երրորդ հատորի հավելվածում:

### ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում ներկայացվում, նկարագրվում, էրբեմն նաև ստուգաբանվում են տեղանուններն ու աշխարհագրական անունները: Հայ իրականության մեջ այս ուղղությամբ կատարված համարյա բոլոր աշխատանքները առայժմ թերի են մընացել կամ ընթացքի մեջ են: Հիշատակության արժանի են՝

1) Ս. Էփրեկյան, «Բնաշխարհիկ բառարան» (հ. 1—2, Վենետիկ, 1902—1907 թթ.): Հրատարակված հատորները պարունակում են Ա—Հ տառերը: Սա առաջին փորձն է հավաքելու և նկարագրելու Հայաստանի տեղանուններն ու աշխարհագրական անուն-

ները: Երկրորդ հատորից հետո ընդհատվել է այս կարևոր բառարանի հրատարակությունը:

2) Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների հանրագիտական բառարան: Հայաստանի տեղանունների և աշխարհագրական անունների լիակատար, բազմահատոր բառարան կազմելու գործին տասնամյակներ շարունակ ձեռնամուխ են եղել Երևանի պետական համալսարանի պրոֆեսորներ Ք. Հակոբյանը, Հ. Բարսեղյանը և Ս. Մելիք-Բախշյանը:

Տարածքային առումով բառարանն ընդգրկում է Պատմական Հայաստանը և սահմանակից երկրների մի շարք գավառները, որոնք այս կամ այն չափով առնչվել են հայ ժողովրդի պատմության և մշակույթի հետ:

Բառարանում տեղ են գտնում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը եղած և մեզ հասած տարբեր ծագման՝ բնիկ հայկական և օտար (խեթական, խուռիտական, ուրարտական, հայաստական, պարսկական, արաբական, վրացական, թուրքական, քրդական, ռուսական և այլն) պաշտոնական գրականության մեջ և քարտեզներում հիշատակվող բոլոր տեղանունները: Բնակավայրերի և վարչատերիտորիալ միավորների անունները ներկայացվում և բնութագրվում են Մոզեստական Միության մեջ մտնող տարածքների տեղանունների ժամանակակից վիճակով, իսկ մյուս պետությունների մեջ մտնող տարածքների նույնատիպ անունները՝ հիմնականում մինչև առաջին համաշխարհային պատերազմը եղած գրություններ:

Բառարանի անվանացանկում տեղ են գտել ավանների, դաստակերտների, գյուղերի, գյուղաքաղաքների, քաղաքների, առողջարանների, պատմական վայրերի, ճանապարհային կայանների, հատուկ անուն ունեցող կամուրջների, քարավանատների, քաղաքների թաղամասերի, վարչատերիտորիալ և քաղաքական միավորների, ինչպես նաև ֆիզիկաաշխարհագրական տարբեր անվանումների՝ լեռնաշղթաների, լեռնազագագաթների, աշխարհագրական շրջանների (ղաշտերի, հովիտների, սարահարթերի, դետերի ու գետակների, լճերի ու լճակների), հանքավայրերի, հատուկ անուն ունեցող հանքային աղբյուրների հիմնական անուններն ու նրանց բոլոր տարբերակները:

Բառաճոգվածի բովանդակությունը: Բառաճոգվածներում՝ զբոսաբանի տակ, տվյալ անվան մասին հաղորդվում են աշխարհագրական, պատմական, լեզվաբանական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ:

Բնակավայրերին վերաբերող բառաճոգվածներում տեղեկու-

թյուններ են արվում գրանց հիմնադրման ժամանակի, պատմության, բնակչության թվի ու զբաղմունքի, նարտարապետական հուշարձանների, աշխարհագրական պայմանների և այլնի մասին: Բոլոր խմբի օբյեկտների տեղը արվում է ըստ աշխարհագրական շրջանների և առավել հայտնի մոտակա վայրի նկատմամբ ունեցած դիրքի:

Բնակավայրի գոյության ժամանակները որոշակի դարձնելու նպատակով նշվում է այն վարչատերիտորիալ կամ քաղաքական միավորը, որտեղ գտնվում է տվյալ բնակավայրը:

Հայաստանի աշխարհագրական օբյեկտների և բնակավայրերի տարբեր ժամանակներում պատմական և ժամանակակից տերիտորիալ միավորների մասին ավելի կոնկրետ գաղափար կազմելու համար զետեղվում են մանրամասն քարտեզներ, ինչպես նաև բնական տեսարանների, բնակավայրերի և առանձին հուշարձանների ու կոթողների լուսանկարներ:

### ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ (ԿԱՄ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ) ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս տիպի բառարաններում, ըստ բառարանի տեսակի, տրվում են բառերի կամ դարձվածքների բացատրությունը, իմաստային համապատասխանությունը, ստուգաբանությունը, ուղղագրությունը, ուղղափոխությունը և կամ նրանց թարգմանությունը: Վերոհիշյալ յուրաքանչյուր սկզբունք հիմք ընդունելով՝ կազմվում է համապատասխան տեսակի բառարան:

Բանասիրական բառարանները բաժանվում են երկու մեծ խմբի՝ միայնեզվյալ և թարգմանական:

Միայնեզվյալ բառարանների շնորհիվ յուրացվում է մայրենի կամ որևէ մեկ այլ լեզվի բառերի, տերմինների, դարձվածքների իմաստային հարստությունը, բառերի ծագումը, կառուցվածքը, զրուցությունը, արտասանությունը և այլն: Թարգմանական բառարանների շնորհիվ յուրացվում է օտար լեզվի բառային և դարձվածաբանական հարստությունը:

Հայ բառարանագրության պատմությունը անցել է իր զարգացման ձևագիր և տպագիր բառարանների փուլերը: Հայ տպագիր բառարանագրությունը կարելի է ստորաբաժանել հնատիպ և նոր բառարանագրության:

Հայ տպագիր բառարանագրությունը ձևագիր բառարանագրության շարունակությունն է, նրա զարգացման և կատարելագործման աղբյուրը: †

### ՀԱՅԵՐԵՆ ՀՆԱՏԻՊ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Հայ տպագրությունը կազմակերպվում է 1512 թ. (Գյուտենբերգի տպագրության գյուտից 57 տարի հետո) Հայաստանից դուրս՝ հայկական գաղթօջախներում: Հայերեն տպագիր առաջին բառարաններն առնչվում են լատիներենին:

1621 թ. Միլանում լույս է տեսնում Յրանչեսկո Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն բառարանը», որ պարունակում է շուրջ 10 հազար ութ հարյուր բառ և բառակապակցություն: Սույն բառարանը 1633 թ. վերահրատարակվում է Փարիզում:

1695 թ. Հռոմում լույս է տեսնում լեհահայ Աստվածատուր Ներսեսովիչի «Լատիներեն-հայերեն բառարանը»: Այն բաղկացած է 596 երկսյուն էջերից և պարունակում է շուրջ 17500 բառահոլոված:

1714 թ. Նույնպես Հռոմում հրատարակվում է Հակոբ Վիլլոգի ընդարձակ «Լատիներեն-հայերեն նոր բառարանը»: Պարունակում է մոտ 25 հազար բառահոլոված: Ուշագրավ է այն, որ բառարանում տեղեկություններ են տրվում հայերենի քերականության վերաբերյալ:

Լատիներենին առնչվող վերոհիշյալ բառարանների հրատարակությունը նշանակալից երևույթ էր այդ դարերի հայ մշակութային կյանքում: Դրանք որոշակի արժեք են ներկայացնում նաև հայոց լեզվի պատմության, հատկապես ժամանակի կենդանի խոսակցական լեզվի ուսումնասիրության, աշխարհաբարի և բարբառների բառապաշարի մի շարք այլ հարցերի լուսաբանման համար:

### ՀԱՅ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ բառարանագրության նոր շրջանն սկսվում է 18-րդ դարի երկրորդ կեսից և շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ շրջանն իր մեջ առնում է նախասովետական և սովետական փուլերը: Այդ շրջանում գիտական հիմունքներով մշակվում և կատարելության է հասնում ժամանակակից բառարանագրությունը, գիտության մակարդակին համապատասխան զարգանում և կատարելագործվում են բառարանների հին տեսակները, ստեղծվում են նորերը:

18—19-րդ դարերի հայ բառարանագրության մեջ զգալի է Մխիթարյանների դերը: Նրանց ջանքերով են ստեղծվում բացառական (հին հայկազյան, նոր հայկազյան), թարգմանական, մասնագիտական-տերմինաբանական, հանրագիտական (կենսագրությունների, տեղանունների և այլն) մի շարք բառարաններ:

Նախասովետական շրջանի հայ բառարանագրությունը հիմնա-

կանում զարգանում է Հայաստանի սահմաններից դուրս, հայ զաղթ-  
օջախներում, Անդրկովկասի, Ռուսաստանի և Եվրոպայի հայաշատ  
ու հայաբնակ վայրերում:

Հայ բառարանագրությունը իր աննախընթաց զարգացումն է  
ապրում սովետական շրջանում, Հայաստանում սովետական կար-  
գեր հաստատվելուց հետո: Այդ շրջանում են ստեղծվում միալեզվ-  
յան, թարգմանական, մասնագիտական և հանրագիտական աչքի  
ընկնող բառարանները, ազգային գրական լեզվի բացատրական  
մեծ բառարանները, հրատարակ են գալիս արժատական-ստուգա-  
բանական, հոմանիշների, զարծվածաբանական, ուղղագրական,  
ուղղախոսական, երկլեզվյան-թարգմանական ընդհանուր և մաս-  
նագիտական-տեխնիկական մի շարք բառարաններ:

### ՄԻԱԼԵԶՎՅԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Բանասիրական բառարանները բաժանվում են երկու մեծ խում-  
բի՝ միալեզվյան և քաղցմանական: Միալեզվյան բառարանների  
մեջ առաջնակարգ տեղ են գրավում բացատրական բառարանները:  
Այս կարգի բառարաններում բացատրվում են լեզվի մեկ շրջանի  
կամ բոլոր շրջանների բառապաշարի մեջ մտնող բառերը, բերվում  
են իմաստները հաստատող օրինակներ, տրվում են քերականա-  
կան, սձական կիրառական բնութագրումներ և հանձնարարական-  
ներ:

Սովետական իշխանության տարիներին կազմվել են ուսերե-  
նի մի շարք բացատրական բառարաններ, այդ թվում՝ Ուշակովի  
բառահատոր, ՄՍՀՄ ԳԱ շորս և տասնյոթ հատորանոց բառարան-  
ները:

Հայտնի են անգլերենի 25 հատորանոց «Օքսֆորդյան բառա-  
րանը», որ պարունակում է մոտ 400 հազար բառ, ամերիկյան  
Վեբստերի բառարանը, որ ընդգրկում է 150 հազար բառ: Նկատելի  
է, որ հիշյալ բառարանների բառացանկը աճել է տեքստիկաբանա-  
կան բառերի հաշվին: Ֆրանսերենի համար գործածության մեջ է  
լարուսի բառարանը, որ ամեն տարի վերահրատարակվում է նույ-  
նությամբ և կամ որոշ հավելումներով: Գերմաներենի նույնատիպ  
բառարաններից հիշատակության արժանի է Գրիմ եղբայրների բա-  
ռարանը:

### ԳՐԱՐԱՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Հայ հին գրական լեզվին վերաբերող բացատրական բառա-  
րանները իրականում պատմական բառարաններ են:

### ՄԽԵԹԱՐ ՍԵՐԱՍԱՑՈՒ ԲԱՌԱՐԱՆԸ<sup>4</sup>

Այս բառարանը գրաբարի գիտական սկզբունքներով կազմված  
առաջին բացատրական բառարանն է. բանասիրության մեջ այն  
կոչվում է նաև Հին հայկազյան բառարան: Այն բաղկացած է եր-  
կու հատորից: Առաջին հատորը լույս է տեսել 1749 թ., երկրորդը՝  
1769 թ.:

Մխ. Սերաստացին (կամ Աբբան) բառարանի կազմության  
աշխատանքներին ձեռնամուխ է եղել 1727 թ. և ավարտել՝ 1745 թ.:  
Նա հավաքել է հայերեն տպագիր և անտիպ մատենագրական եր-  
կերը, հայաբնակ տարբեր վայրերում ծանոթացել կամ այդ կարգի  
վայրերից բերել է սովել տարբեր բովանդակության հայերեն ձեռ-  
գրեր, գանազան բնագրեր և դրանց ընձեռած նյութի, այսինքն՝ հին  
հայկական ինքնուրույն և թարգմանական գրականության տարբեր  
բովանդակություն ունեցող երկերի հիման վրա կազմել է բառա-  
րանի բառացանկը, տարբերակել բառերի իմաստները, գիտական  
սկզբունքներով կատարել է գրաբարյան բառերի իմաստաբանա-  
կան դասակարգումը, պարզել՝ բառերի քերականական ձևերը (հո-  
լովում, խոնարհում):

Առաջին հատորը ամբողջապես գրաբարի բացատրական բա-  
ռարանն է, պարունակում է 35—40 հազար բառ և կապակցություն:  
Բառահոլովածը կազմված է գլխաբառից, բերվում են քերականա-  
կան սվյալներ (նրա հոլովման կամ խոնարհման ձևերը, բայի սե-  
նոր, հաճախ բառի խոսքիմասային պատկանելությունը, եթե բառը  
փոխառված է, նշվում է փոխատու լեզուն): Այնուհետև տրվում է  
իմաստի բացատրությունը, որին հաճախ հետևում են գլխաբառի,  
աշխարհաբարյան (ոսմկորեն), սակավ ղեպքերում նաև թուրքերեն  
(տաճկերեն) համադրությունները: Վերջում նշվում է այն աղբյուրը, որ-  
տեղից վերցված է բառը:

Բառարանի երկրորդ հատորը բաղկացած է մի բանի մասերից,  
որոնցից յուրաքանչյուրը իրենից առանձին բառարան է ներկա-  
յացնում:

Առաջին մասը (1—263 երկսյուն էջ) պարունակում է առաջին  
հատորից դուրս մնացած բառերը:

Երկրորդ մասը (1—232) Աստվածաշնչի հատուկ անունների  
բառարան է: Բերվում են հատուկ անունները, տրվում է նրանց  
ստուգաբանությունը, բացատրությունը կամ մեկնությունը, նըշ-  
վում աղբյուրը:

<sup>4</sup> Մ. Սերաստացի, Բաղիրք հայկազան լեզուի, Վենետիկ, Ա հատոր, 1749,  
Բ հատոր, 1769:

Նորորդ մասը (233—371) հատուկ անունների ընդհանուր բառարան է, որտեղ ընդգրկված են հիմնականում հայոց պատմությանն առնչվող անձնանունները, Պատմական Հայաստանի տեղանունները և աշխարհագրական անունները, այլև հին և նոր քաղաքակրթություններին, հին և նոր աշխարհին վերաբերող նույնատիպ անունները: Բառարանում տրվում են մեկնություններ և համապատասխան հանրագիտական, կենսագրական, ստուգաբանական և այլ տվյալներ, հաճախ էլ նշվում են աղբյուրները:

Չորրորդ մասը (1—416) գրաբար-աշխարհաբար բառարան է: Բառարանում տրվում են մոտ 35 հազար գրաբար բառերի աշխարհաբարյան (հաճախ նաև թուրքական) համանշանակները:

Հինգերորդ մասը (417—700) աշխարհաբար-գրաբար բառարան է:

Վերջին երկու մասերը իրականում հոմանիշների բառարաններ են, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ավելի քան 40 հազար աշխարհաբար և գրաբար բառ, դարձվածքային միավոր կամ կապակցություն: Հոմանիշների շարքում հաճախ տրվում են նաև թուրքական համադրներ:

### ՆՈՐ ՀԱՅԿԱԳՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Նոր հայկազյան բառարանը<sup>5</sup> բաղկացած է երկու հատորից, պարունակում է մոտ 51 հազար բառահոգված, հեղինակներն են Կ. Ավետիսյանը, Խ. Սյուրմեյանը և Մ. Ավգերյանը, լույս է տեսել Վենետիկում, 1836—37 թթ.:

Բառարանի կազմության աշխատանքները տևել են մոտ 50 տարի: Տպագրության համար նյութական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով հեղինակները հարկադրված են եղել 12 հատորանոց ձեռագիր աշխատանքը համառոտել և վերածել երկու հատորի:

Բառարանը կազմված է գրաբարի համաբարբառ-բարտարանի հիման վրա, որն ընդգրկում է 5—17-րդ դարերի գրաբարյան բազմաբնույթ ձևագիր և տպագիր մատենագրական բոլոր հուշարձանները:

Բառարանը պատմական, ակադեմիական-նորմատիվ բնույթ ունի: Իբրև պատմական և նորմատիվ բառարան այն ընդգրկում է

հին գրական հայերենի՝ գրաբարի բառային կազմը և իմաստային համակարգի ողջ հարստությունը բառագործածության և բառիմաստների և քերականական ձևերի նորմատիվությամբ: Բառապաշարի և բառիմաստների ընդգրկման ծավալով և լիակատարությամբ իրենից ներկայացնում է գրաբարի հազվագյուտ բառարանգանձարան (Thesaurus): Գրաբարյան բառերի օտարազգի (հունարեն, լատիներեն, թուրքերեն) համանշանակների ընդգրկմամբ այն միաժամանակ թարգմանական-բազմալեզվյան բառարան է, իսկ որոշ բառերի համար տրվող ստուգաբանական տվյալներով դառնում է նաև ստուգաբանական:

Բառաձողվածի կազմությունը: Գլխաբառից հետո տրվում են տվյալ բառի գրությունները՝ հնչյունական տարբերակները, ապա՝ քերականական նշումները (հոլովման և խոնարհման ձևերը, քերականական կարգը, խոսքիմասային պատկանելությունը), այնուհետև՝ հունական և լատիական թարգմանական համանշանակները: Եթե բառը փոխառված է, նշվում են օտար աղբյուրները, բերվում է բառի ստուգաբանությունը, ապա տրվում է բառիմաստի կամ իմաստների բացատրությունը, հայերեն հոմանիշը և թուրքական համանշանակը, և ի վերջո ժամանակագրական կարգով հայ մատենագրությունից բերվում են համապատասխան ընտիր վկայություններ բառի յուրաքանչյուր իմաստը կամ իմաստային նրբերանգը, գործածության սահմաններն ու ոլորտները հաստատելու համար:

Գրաբարյան բառերի և դարձվածքային միավորների ընդգրկման ծավալով և լիակատարությամբ, իմաստների տարբերակմամբ և բացատրությամբ, քերականական և այլ նմուշներով, բառիմաստներին տրվող բնագրային օրինակներով, նոր Հայկազյան բառարանը գրաբարի արժանի հուշարձանն է և խոշոր երևույթ հայ բառարանագրության պատմության մեջ:

Համառոտելով նոր Հայկազյան երկհատոր բառարանը, Մ. Ավգերյանը կազմում և 1846 թ. Վենետիկում հրատարակում է «Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի» խորագրով մի նոր աշխատություն, որը բանասիրության մեջ ընդունված է կոչել Հայկազյան առձեռն բառարան: Նույնի ավելի կատարյալ երկրորդ հրատարակությունը լույս է տեսնում 1865 թ. Վենետիկում, և նախորդի համեմատությամբ պարունակում է ավելի քան 5 հազար նոր բառեր և մեծ քանակությամբ ոճեր ու կապակցություններ:

Հեղինակն առաջին հրատարակությունը նախապատրաստելիս համարյա նույնությամբ թողնում է նոր Հայկազյան երկհատոր բառարանի բառացանկը, կրճատում է միայն նրա գլխաբառին

<sup>5</sup> Նոր բառգիր Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երկց վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքաիօր՝ Հ. Գաբրիելի Աւետիկեան, Հ. Խաչատրոյ Սիրմեյան, Հ. Մկրտիչ Աւգերեան, հա. Ա, Բ, Վենետիկ, 1836, 1837:

տրվող քերականական, ստուգաբանական տվյալներն ու նշումները, համառոտում և հիմնովին վերափոխում է բառիմաստների բացատրությունը, համարակալում առանձին իմաստները, դուրս է թողնում բնագրային բոլոր օրինակները, ինչպես նաև հունական ու լատինական համադրանքները:

Բառարանի սկզբունքային նորությունը այն է, որ գրաբարյան բառերի և իմաստների բացատրությունը կամ մեկնությունը տրվում է արևմտահայ գրական լեզվով:

19-րդ դարում հրատարակված գրաբարի բառարաններից հիշատակության արժանի է Գ. Փեշտմալյանի «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատությունը, որի առաջին հատորը (Ա—Կ) լույս է տեսել 1844 թ., Կոստանդնուպոլսում: Բառապաշարի ընդգրկմամբ, բառահոդվածի կազմությամբ այն բնականաբար չի կարող մրցել նախորդ՝ նոր հայկազյան բառարանի հետ: Նկատվում է, սակայն, որ բառացանկում որոշ շահով տեղ են գտել աշխարհաբարյան, ժողովրդախոսակցական որոշ թվով բառեր:

## ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

### Ս. ԳԱԲԱՄԱՃՅԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Արևմտահայերենի առձեռն բառարան է համարվում Ս. Գաբամաճյանի «Նոր բառագիրք հայերեն լեզուի» աշխատությունը, որն առաջին հրատարակությամբ լույս է տեսել 1892 թ., երկրորդ ավելի կատարյալ և բարեփոխված հրատարակությամբ՝ 1910 թ. Կոստանդնուպոլսում:

Բառարանը պարունակում է մոտ 70 հազար բառ: Բառացանկն ընդգրկում է գրաբարի և աշխարհաբարի՝ հատկապես արևմտահայ գրական լեզվի, ինչպես նաև բարբառային (գավառական) բառերը: Բառահոդվածը կազմված է առձեռն բառարանի սկզբունքով տրվում են զլխաբառը և նրա հակիրճ բացատրությունը (կամ հոմանիշները), անհրաժեշտության դեպքում բերվում են նաև հատկանիշները, որոշ դեպքերում (եթե բառը նորաբանություն կամ տերմին է) տրվում են նաև ֆրանսերեն, լատիներեն համադրանքը կամ թուրքական համանշանակը: Գիտատեխնիկական, կենդանաբանական և բուսաբանական շատ տերմինների դիմաց բերվում է նաև նրանց նկարը կամ գծագիրը, որը նույնպես բացատրության եղանակներից մեկն է: Բանասիրական բացատրություններից բացի, որոշ բառերի վերաբերյալ բերվում են նաև հանրագիտական բնույթի տվյալներ: Աստղանիշով տրված են բոլոր այն նորաբանությունները, որոնք տեղ չեն գտել նախորդ բացատրական բառա-

րաններում: Հատուկ ուշադրություն է դարձվում զլխաբառերին տրվող քերականական բնութագրումների վրա: Հատկապես նշվում է բառի խոսքիմասային պատկանելությունը, բերվում են թեքման ձևերը՝ հոլովումն ու խոնարհումը: Չեն տրվում բառիմաստները հաստատող բնագրային օրինակներ:

Բառարանի առանձնահատկություններն ու աչքի ընկնող արժանիքները հետևյալն են.

ա) Այն արևմտահայ գրական լեզվի առաջին բառարանն է, որտեղ փորձ է արված գրաբարին զուգընթաց որոշ շահով ներկայացնելու նաև արևմտահայ գրական լեզվի բառապաշարը. ի տարբերություն մյուս բառարանների, բառերի բացատրությունները տրվում են արևմտահայերենով և ոչ թե գրաբարով:

բ) Բառարանի կազմության սկզբունքները մշակված են ժամանակի բառարանագրության նվաճումների հաշվառմամբ, որն արտահայտվել է բառացանկի ընտրության, բառիմաստների տարբերակման, նրանց բացատրության եղանակների, քերականական և այլ նշումների սկզբունքային հարցերում:

գ) Բառացանկում որոշ տեղ է հատկացվել նաև կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող տերմիններին, որով և խթանվել է հայ տերմինաշինարարական գործունեությունը:

դ) Առանձնապես որոշակի արժեք են ներկայացնում աստղանիշով առանձնացվող նորաբանությունները, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի արևմտահայ գրական լեզվի բառապաշարը, նրա զարգացման ընթացքն ուսումնասիրելու համար:

## ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Ստ. Մալխասյանցի բառահատոր «Հալերեն բացատրական բառարանը» լույս է տեսել 1944—45 թթ. և պարունակում է հայոց լեզվի բոլոր գրսևորումների՝ գրաբարի, միջին հայերենի, բարբառների, գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների մոտ 120 հազար բառ և դարձվածքային միավոր:

Բառերի և դարձվածքների ընդգրկմամբ, բառիմաստների տարբերակմամբ և բառերին տրվող ոճական ու քերականական նշումներով ու բնութագրումներով այն ոչ միայն ազգային գրական լեզվի առաջին ընդարձակ, այլև որոշ իմաստով պատմական բառարան է:

Նրանում համատեղված են ինչպես պատմական, այնպես էլ ժամանակակից գրական լեզվի բացատրական բառարանների

սկզբունքները: Այն արդի գրական լեզվի բառարան է իր ժամանակակից գրական հայոց լեզվի՝ արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարով, բառերի և դարձվածքների ժամանակակից իմաստների տարբերակմամբ, նրանց կիրառության ոլորտների, ոճական ու գործածության սահմանափակման վերաբերյալ բազմազան նմուշներով և հանձնարարականներով. պատմական է՝ դրաբարյան, միջին հայերեն և բարբառային բառապաշարի ընդգրկման ծավալով և շերտերով, ինչպես նաև բառիմաստի պատմական զարգացման տվյալներով, իմաստների դասակարգմամբ և տարբերակմամբ:

Բառարանի բառացանկը հեղինակը քաղել է հայերեն բոլոր կարևոր միալեզվյան՝ բացատրական, զավառական (բարբառային), ստուգաբանական, ինչպես նաև թարգմանական բառարաններից, մասամբ նաև գեղարվեստական ու գիտական գրականությունից, մամուլից, հրատարակատնությունից և ժողովրդախոսակցական լեզվից: Անհրաժեշտ է նշել, որ բառացանկը լիակատար է հայոց լեզվի պատմության գրաբարյան շրջանի բառապաշարի ընդգրկման տեսակետից, այն մեծ շափերով ներկայացնում է զավառական բառամթերքը, որոշ շափով նաև միջին հայերենը, բայց ժամանակակից գրական լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի բառային կազմը իր ամբողջական արտացոլումը չի գտել բառարանում: Այդ առումով մոտավոր հաշվումներով արդի գրական լեզվի 40—50 հազար բառային և դարձվածքային միավորներ տեղ չեն գտել բառարանում: Բառարանագրական մշակման շենթարկված հիշյալ բառային միավորների զգալի մասը կազմում են վերջին տասնամյակների նորաբանությունները, մնացածը՝ 19—20-րդ դարի հայ դասական գրականության, մամուլի, թարգմանական ու գիտահանրամատչելի գրականության մեջ և այլ աղբյուրներում սփռված բառերն ու դարձվածքները:

Որոշակի արժեք է ներկայացնում բառերի ու դարձվածքների իմաստաբանական դասակարգումը, առանձին իմաստների և նրբբիմաստների տարբերակումը և նրանց բնութագրումը: Այդ հարցում հեղինակը որդեգրել է պատմական սկզբունքը. բառահոլովածում արտահայտված է բառիմաստի և իմաստների զարգացման պատկերը լեզվի հնագույն շրջանից մինչև մեր ժամանակները: Բառիմաստների արձանագրման ու մատուցման այս եղանակով ակրնհայտ են դառնում իմաստային փոփոխությունների պատմական, բարդ գործընթացները, և, մյուս կողմից, կենդանի կապ է ստեղծվում հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերի միջև:

Բառարանում զգալի աշխատանք է կատարված նաև բառերի քերականական և ոճական բնութագրման ուղղությամբ: Արդի հայերենի քերականության, բառապաշարի ոճական կիրառության օրինակափոխությունների համաձայն՝ քերականական և ոճական բնութագրման շնորհիվ նորմավորման է ենթարկվել բառարանում ներկայացված հայոց լեզվի ամբողջ բառամթերքը: Հատուկ նշաններով և նշումներով տարբերակվում են նորաբանությունները, արևմտահայերեն, գրաբար, միջին հայերեն, բարբառային, հնացած և հազվագեպ գործածվող բառերը, ինչպես նաև հին և նոր փոխառությունները: Տրվում են նաև լեզվի տարբեր ոլորտներում, հասարակական-քաղաքական կյանքի, գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներում բառերի կիրառության վերաբերյալ հատուկ նշումներ: Բառահոլովածում հաճախ բերվում են նաև ստուգաբանական և այլ տվյալներ:

Ինքնատիպ եղանակով է լուծված բառիմաստին կամ իմաստներին տրվող ցուցադրական նյութի կամ վկայությունների հարցը: Նշված բնույթի վկայությունների, ցուցադրական նյութի աղբյուրը հիմնականում հեղինակն է: Խիստ սակավ են գրական սկզբնաղբյուրներից բերվող վկայությունները: Ընդհանուր առմամբ թեև հեղինակային օրինակները դիպուկ և մատչելի են, բայց իրենց վրա կրելով հեղինակի անհատականության կնիքը, չեն կարող բազմակողմանիորեն ներկայացնել արդի հայերենի բառային կազմի իմաստային բազմազանության և բառագործածության ու ոճական կիրառության ողջ հարստությունը:

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» հայ բանասիրության միակ գործն է, որ արժանացել է ՄՍՀՄ պետական առաջին կարգի մրցանակի:

### «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»

Հայկական ՄՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների ջանքերով կազմվել է բառահատոր «Ժամանակակից հայոց լեզվի բառարանը», որ հրատարակվել է 1969—1981 թթ. ընթացքում: Բառարանը պարունակում է արդի հայերեն գրական լեզվի ավելի քան 120 հազար բառ և դարձվածքային միավոր:

Հեղինակները նպատակ են դրել ներկայացնել բացառապես ժամանակակից հայոց գրական լեզվի՝ և. Արովյանից մինչև մեր օրերի բառապաշարը, ինչպես նաև գործածական դարձվածքներն ու տիպական բառակապակցությունները: Բառացանկը կազմվել է հիմնականում հայերեն միալեզվյան և թարգմանական բառարան-

ների՝ հատկապես Ստ. Մալխասյանցի քառահատոր բառարանի ընձեռած փաստական հարուստ նյութի, հիշյալ ինստիտուտի կազմած համաբարբառի և հայ գեղարվեստական գրականության և մամուլի ընտրովի քարտարանի հիման վրա: Բառարանը ձգտում է ընդգրկել հայ գեղարվեստական ու գիտական գրականության, մամուլի և հրապարակախոսության մեջ լայնորեն տարածված այն հին և նոր բառերը, ինչպես նաև բառերի նոր իմաստները, որոնք տարբեր պատճառներով տեղ չեն գրավել Ստ. Մալխասյանցի բառարանում:

Բառարանը նորմատիվ բնույթ ունի: Բառապաշարի ընտրությունը, բառերի ուղղագրության, բառիմաստների տարբերակման ու բացատրության, նրանց ոճական կիրառության, գործածության սահմանների և ոլորտների որոշման հիմքում ընկած են ժամանակակից հայերենի գործող նորմաներն ու կանոնները: Բառերի քերականական նորմավորման համար հիմք են ընդունված ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի գործող օրինաչափությունները:

Բառերի և դարձվածքային միավորների տարբեր իմաստներն ու նրբերանգները, նրանց գործածության սահմաններն ու ոլորտները հաստատելու համար բերվում են համապատասխան բնագրային օրինակներ, որոնք քաղված են նախասովետական և սովետական շրջանների հայ գեղարվեստական և մասնագիտական գրականությունից, դասագրքերից, մամուլից:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» իր րև գրական լեզվի նորմատիվ բառարան՝ կարևոր տեղեկատու ձևանար է ժամանակակից հայոց լեզվի բառային ու դարձվածքային հարստությունը ուսումնասիրելու և յուրացնելու համար:

#### ԷԴ. ԱՂԱՅԱՆԻ «ԱՐԳԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ»

Բառարանը լույս է տեսել 1976 թ. և պարունակում է մոտ 136 հազար բառ ու 10 հազար դարձվածաբանական միավոր: Այն հիմնականում ամփոփում է արդի հայ գրական լեզվի ակտիվ և պասիվ բառապաշարը: Բառացանկն ընդգրկում է հայ գեղարվեստական, թարգմանական, հանրամատչելի գիտական գրականության, հրապարակախոսության, կարևոր դասագրքերի, գրավոր այլևայլ աղբյուրների, ինչպես նաև բանավոր՝ խոսակցական լեզվի բառային ու դարձվածքային միավորները: Ընդհանուր գործածական բառապաշարից բացի՝ բառացանկում տեղ են գրավել նաև պասիվ բառապաշարի այն բառերը, որոնք վերաբերում են գրաբարյան,

միջին գրական հայերեն, բարբառային շերտերին, հին և նոր փոխառություններին, նորաբանություններին, ինչպես նաև մասնագիտական տերմինաբանությանը: Բառերի և դարձվածքային միավորների քանակով բառարանի բառացանկը գերազանցում է նույնատիպ բոլոր բառարանները:

Գիտական բարձր մակարդակով են կատարված բառահորվածի կազմությունը, համանունների առանձնացումը, գլխաբառին տրվող քերականական և ոճական այլևայլ նշումները, բառիմաստների տարբերակումն ու դասակարգումը, տարբերակված իմաստների բացատրությունը, զանազան սահմանումները, իմաստները հաստատող քննադրային որոշ օրինակների տեղադրումը:

Բառարանի նորմատիվությունը արտահայտված է բառապաշարի ընտրությամբ, բառերի, դարձվածքների և նրանց իմաստների ոճական, տարբեր կիրառությունների նորմավորման, ժամանակակից բառագործածության օրինաչափությունների որոշման, բառերի ուղղագրական տարբերակների, քերականական սխալ ձևերի ճշտման, զանազան հղումների և համապատասխան հանձնարարականների միջոցով:

#### ԳԱՎԱՌԱԿԱՆ (ԲԱՐԲԱՌԱՅԻՆ) ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում ընդգրկվում և բացատրվում են տվյալ բարբառի կամ լեզվի բոլոր բարբառների յուրահատուկ բառերն ու դարձվածքները, կամ համաժողովրդական գրական լեզվի այն բառերը, որոնք տվյալ բարբառում և մի շարք բարբառներում ունեն առանձին, այլ նշանակություն:

Հայտնի են Ս. Ամատունու, Հ. Աճառյանի և Կ. Գաբրիելյանի գավառական բառարանները:

1) Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանը» (Վաղարշապատ, 1912 թ.): Հեղինակի նպատակն է եղել գրական-գեղարվեստական երկերից և ազգագրական բանահյուսական աղբյուրներից, ինչպես նաև ժողովրդից հավաքել ու ներկայացնել ժողովրդի կյանքն ու կենցաղը պատկերող բառերը, դարձվածքները, անեծքները, մաղթանքները, առածներն ու ասացվածքները: Այդ կարգի բառերն ու դարձվածքները օժտված են վառ պատկերավորությամբ, արտահայտչականությամբ, հաճախ ունեն այլաբանական իմաստ: Գրանց հիմնական զանգվածը կենցաղային՝ առտնին գործածության առարկաների, նյութերի անվանումներ, ինչպես նաև գյուղատնտեսական գործիքներին, գյուղական մշակույթին, զբաղմունքին վերաբերող բառեր են, որոնք չեն ավանդվել գրաբարյան մատենա-

գրութիւններ և մեծ մասամբ շունեն իրենց իմաստասիրին համազորները ժամանակակից գրական լիզվում:

Բառարանը պարունակում է մոտ 16 հազար բառ և դարձվածքային միավոր: Բառացանկի կորիզն է կազմում հիմնականում Արարատյան (Նրեանի) բարբառի բառամթերքը, որը, սակայն, մասամբ համալրվել է այլ բարբառների որոշ բառերով ու դարձվածքներով:

Բառարանում ընդգրկված են.

ա) գլխավորապես Արարատյան և մասամբ նաև հայ մյուս բարբառների գավառական բառերը. ինչպես՝ արեղաձագ, ազգակ, ազապակ, ազունջ, անուկ, ակրատ, աղամախնձոր, աղամամուր, աղամուրդի, աթար, աթարանոց, ամրոց, խնձորալուծ, խնձորտուն, պանի, արատուն, արմաղ, ձարեմաղ, պխացել, ած, ածեր, ածաման, ածմձել, ախլիտել, ակնկոր, ականջրանուկ, ականջհաշուկ, ամպաղ, անեծձագ և այլն:

բ) Նոր Հայկազյան և Առձեռն Հայկազյան բառարաններում գրեթե ընդգրկված այն բառերը, որոնք ժողովրդի մեջ, բարբառներում գործածվում են տարբեր նշանակությամբ. օրինակ՝ ամել — ձու դնել, ամալ — գութանի առաջին լուծը, աննոց — գութանի մաս՝ սեպ, որ հազցնում են սայլի և գութանի սուռու երկու ծայրերի անցքերի մեջ:

գ) Այնպիսի բառեր, որոնք իրենց նախնական, հիմնական, առարկայական իմաստների հետ կենդանի ժողովրդական լիզվում գործածվում են նաև փոխաբերական իմաստով. ինչպես՝ աղվես — խորամանկ, գայլ — շատակեր գիշատիչ, աղջ — անճոռնի, անտաշ — խորամանկ և Առձեռն Հայկազյան բառարաններից

դ) Նոր Հայկազյան և Առձեռն Հայկազյան բառարաններից բաղված այն բառերը, որոնք կամ շունեն մատենագրական վկայություններ, կամ էլ վկայված են իբրև ուշ շրջանի բառեր. ինչպես, օրինակ՝ մեռիմ, ծաղաղաբար և այլն:

ե) Օտարազգի այն սակավաթիվ փոխառությունները, որոնք շունեն իրենց հայերեն համանշանակները և անհրաժեշտաբար գործ են ածվում լիզվում, կամ էլ այն բաղադրությունները, որոնք կազմված են օտարազգի և բնիկ հայերեն բաղադրիչներով. օրինակ՝ բեր, շանտ կամ՝ բաշաբափ, խամահանուկ, ծնկաշոփ:

զ) Իրենց կազմությամբ և գործածությամբ բարբառային ծագում ունեցող ժողովրդախոսակցական բառերը, մեծ մասամբ կրկնաձևով բարդությունների որոշ տեսակներ, ինչպես. օրինակ՝ ախառու բախտ, ախառ-ցախառ, աղել-մաղել, առո՛ւփ-առո՛ւփ, առան-տառան, ավալ-բավալ, անին-պանին, առակ-պառակ, ակլեզ-պկլեզ, աման շաման, ամբող-գամբող, ճիզ ու պիծ:

է) Բարբառային ծագում ունեցող ածանցներով բաղադրված

բառեր. ինչպես՝ քվածուրիկ, ընտրածուրիկ, փոխածուրիկ, խըռուկ, դայրուկ, թելուկ, կածուկ, խաչմերուկ, կախանացու:

ը) Գարձվածքներ՝ հիմնականում քաղված Արարատյան բարբառից:

Բառարանի կառուցվածք. բառահոդվածի կազմությունը: Այբուբենական կարգով տրվում է գլխաբառը, որին հետևում է այդ բառի գործածության վայրի կամ հեղինակի (աղբյուրի) նշումը: Բառի գործածության տեղը երբ հնարավոր չի եղել ճշտել, համապատասխան նշում չի տրված: Բոլոր հոմանիշ (նույնանիշ) բառերն ու դարձվածքները դրվում են իրար մոտ, որպես գլխաբառեր. ծանոթմակ, հոդու, հոն կամ՝ լակել, լվել, կեծանալ, կոնծել, փցել: Նույն եղանակով իրար մոտ են բերվում նաև սաստկություն և նվազություն ցույց տվող նմանահունչ բառերի կրկնակները, ինչպես՝ ժվալ, ժվժվալ, ժվալ, ժվժվալ, կոալ, կոկոալ և այլն:

Այնուհետև տրվում է բառի կամ դարձվածքի իմաստի կամ իմաստների բացատրությունը: Որոշ դեպքերում բառիմաստի մեկնությունից առաջ բերվում է տվյալ բառի գրական հոմանիշը: Բառերի իմաստը հաստատելու, ընթերցողին գյուրքմբռնելի դարձնելու նպատակով բացատրությունից հետո բերվում են օրինակներ, մեծ մասամբ գրավոր կամ ժողովրդական աղբյուրներից և որոշ դեպքերում նաև հեղինակի կազմած:

2) Հ. Անառյանի «Հայերեն գավառական բառարանը»: Բառարանը պարունակում է մոտ 30 հազար բառ և դարձվածքային միավոր: Բառարանում ընդգրկված են մի քանի տասնյակ հայ բարբառների գավառական բառերը և բարբառներում ու ժողովրդախոսակցական լիզվում տարածված դարձվածքները:

Բառահոդվածի կազմությունը: Որպես գլխաբառ բերվող յուրաքանչյուր գավառական բառի մոտ նշվում է նրա գործածման վայրը, որոշ բառերի համար նաև աղբյուրը: Բառերի հոմանիշներն ու կրկնակները, որոնք հայտնի են տարբեր բարբառներում, տրված են իրար մոտ, դրանց տարածման յուրաքանչյուր վայրի, շրջանի հիշատակությամբ, այս կամ այն բարբառի պատկանելության նշումով:

Բառերի իմաստները հաստատելու համար բերվում են նաև օրինակներ (մեծ մասամբ հեղինակի կազմած), որոշ դեպքերում կատարվում են բառակազմական և ստուգաբանական վերլուծություններ: Ստուգաբանվում են հատկապես արմատական այն ձևվերը, որոնք վկայված չեն գրաբարյան մատենագրությամբ:

3) Կ. Գաբրիլյանի բառարանը: Բառացանկի ընտրության և բառահոդվածի կազմության նման սկզբունքով է կազմված Կ. Գա-



բիկյանի «Բառգիրք սերաստահայ գավառալեզվի» (Երուսաղեմ, 1952) աշխատությունը:

Այն պարունակում է մոտ 15 հազար գավառական բառ, որ գործածվել է Սեբաստիայի հայերի ժողովրդախոսակցական լեզվում: Հատկանշական է այն իրողությունը, որ այս բառարանում գետեղված բառերի զգալի մասը նույնանում է նախորդ բառարաններում պարունակված գավառական բառերին և իմաստներին:

Գավառական այս բառարանների արժեքը մեծ է ոչ միայն գիտական, պատմական, այլև արդիական տեսակետից: Դրանք կարող են մտահանել աղբյուր ծառայել այդ կարգի բառերի ստրածման շրջանակները որոշելու, տարբեր խմբերին պատկանող բարբառների բառային կազմի փոխհարաբերություններն ուսումնասիրելու համար: Այդ բառարանների շնորհիվ հազարավոր բառեր, անհետ կորստից փրկվելով, լեզվական շրջանառության մեջ են մտել, մոտք են գործել ինչպես հայերեն միալեզվյան բոլոր բառարանները, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ և այդ ու այլ ճանապարհներով նաև՝ արդի հայերենի գրական լեզվի բառապաշարը:

#### ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում տեղադրվում են օտար ծագում ունեցող այն բառերը, որոնք լիովին չեն մերվել հայոց լեզվի համակարգում, որոշ շահով զգացվում է դրանց «օտարությունը», տրվում է դրանց բացատրությունը, ինչպես նաև ծագումը:

Հայտնի է Մարտ. Հարությունյանցի «Բացատրական բառգիրք օտարազգի բառերի և օտարազիր բառերի ու դարձվածքների, որոնք գործածական են հայոց գրականության մեջ» (Ալեքսանդրապոլ, 1912 թ.) աշխատությունը: Այն պարունակում է հիմնականում հայերեն գրական աղբյուրներում տեղ գտած օտարազգի մոտ 10 հազար այն բառերը, որոնց զգալի մասը սակավ գործածություն ունի հայերենում, և համեմատաբար ավելի հաճախադեպ գործածված այն բառերը, որոնք դեռևս վերջնականապես չեն յուրացվել լեզվի կողմից: Բառարանում ընդգրկված օտարազգի բառերը ծագումով վերաբերում են ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական լեզուներին: Ծվրոպական լեզուներին վերաբերող այդ կարգի բառերը հայերենին են անցել հիմնականում թարգմանական գրականության շնորհիվ, ինչպես անմիջականորեն՝ ծագումով սկզբնաղբյուր լեզուներից (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, իտալերեն, հունարեն, ռուսերեն և այլն), այն-

պես էլ միջնորդավորված՝ ռուսերենի միջոցով: Ասիական լեզուներին (պարսկերեն, արաբերեն, թուրքերեն) վերաբերող բառերի մի զգալի մասը գրականության մեջ է մտել անմիջապես հայ բարբառներից, մի շնչին մասն է միայն, որ անցել է սկզբնաղբյուր լեզուներից:

Բառարանի բառացանկում տեղ են գտել նաև բառեր, որոնք մեկ-երկու անգամ «պատահաբար» երևալով հայերեն աղբյուրներում, այնուհետև իսպառ մոռացության են մատնվել: Հանդիպում են նաև օտարազգի արմատական բազադրիչներով կազմված հայերեն բազադրություններ, ինչպես՝ արսալուտիստական, ալաուսիստական, աղայություն, անալիտիկական, անլոգիական, անդճում, անջիգյար, անվոզման, անօրգանական, ապրիորիական, աֆորիստական և այլն: Ավելորդ են նաև վաղ շրջանում կատարված այնպիսի փոխառությունները, ինչպես՝ ատղանա, ալխիա, Ամբիման, Ռմիզդ, աուուշան, բագին, ինչպես նաև միայն բարբառներում կամ խոսակցական լեզվում գործածվող փոխառյալ բառերը (ինչպես, թուրք-թաթարական՝ ալիշ-վերիշ, ալալ, աղլ, այիլ-մայիլ, այիլ-օյիլ, այվազ, էյվազ, անաչ, անշաղ, աուրգ, ախաչ, գոգրա, ռուսերեն՝ դարմոնդ, դերժավա, դանասիկ, դանաս, դանաս, դեժուրնի, դախոդ, գվարդեց, գոսուդար, գոնիչնայա, գուբրյակ):

Բառահաղվածի կազմությունը: Բերվում է գլխաբառը, հաճախ իր հնչյունական տարբերակով, փակագծերում նշվում է փոխատու լեզուն, տրվում է գլխաբառի հայերեն համանշանակը (կամ համանշանակները), որին հետևում է մեկնությունը, որը երբեմն գիտական բացատրության, անգամ հանրագիտական բնույթ է կրում:

#### ԴԱՐՁՎԱԾԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում ամփոփվում և բացատրվում են սովյալ լեզվի դարձվածքային միավորները, նշվում են նրանց գործածության ոլորտները, ռճական կիրառությունները, տրվում են նաև իմաստները հաստատող օրինակներ:

Ա. Սուխայանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածքանական բառարանը» (Երևան, 1975): Բառարանը պարունակում է մոտ 20 հազար դարձվածքային միավոր և ընդգրկում է ժամանակակից հայոց գրական լեզվի դարձվածքների ամբողջությունը, ինչպես նաև գավառական-բարբառային դարձվածքային այն միավորները, որոնք լայն շահերով թափանցել են գեղարվեստական գրականության մեջ կամ լայնորեն գործածվում են խոսակցական լեզվում:

Բառարանում բնագրկված են.

ա) Բառային արժեք ունեցող իդիոմատիկ արտահայտությունները (գլխի բնկենել, գլուխ դնել, աչքի լույս, աչք տալ, ատամները սրել, ձեռք տալ, գլխին նստել, գլխին տալ, սոխի գլուխ, բերանը թույլ) .

բ) ոչ իդիոմատիկ դարձվածաբանական միավորներից՝ դարձվածաբանական այն կապակցությունները, որոնք փոխաբերական իմաստ ունեն (կյանքի բնկեր, կյանքի առշալույս, կյանքի վերջալույս, նոթերը կիտել, գլուխը կախել) .

գ) հայ գեղարվեստական գրականության մեջ տեղ գտած, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվում տարածված դարձվածքի արժեք կամ բնույթ ունեցող որոշ ասացվածքներ, բարեմաղթություններ, օրհնանքներ, աննծրներ և այլն (գայլի գլխին ավետաբան կարգալ, հին դարմանը բամուռ տալ, հոնքը շինելու փոխաբեն աչքն էլ հանել, ոտքը իր վերմակի շափով մեկնել, գրողի ծոցը գնալ, գետինը մտնել, բարով մաշել, արևին մեռնել (մեկի), աչքի վրա տեղ ունենալ, խոսքը շափառով կտրել և այլն) :

Դարձվածային հոգվածի կազմությունը: Յուրաքանչյուր դարձվածային հոգված կազմված է գլխաբառ-դարձվածքից, նրա բացատրությունից, ոճական բնութագրումից և դարձվածքի իմաստը կամ իմաստներն հաստատող բնագրային կամ սակավ գեպքերում՝ հեղինակային օրինակներից: Դարձվածքային տարբերակները տրվում են դարձվածաբանական հիմնական միավորի հետ հավասար գործածվելու պայմանով: Գործածության անխրախուսելիության գեպքում տարբերակը բերվում է փակագծերում: Բառարանում տրվում են դարձվածաբանական միավորների՝ լեզվական տարբեր շերտերին (գրաբար, բարբառներ), արևմտահայ գրական լեզվին, գործառական տարբեր ոճերին (գրքային, խոսակցական, ժողովրդախոսակցական) պատկանելու, հուզաբարտահայտչական զանազան գունավորումներով օժտված լինելու, հազվադեպ գործածվելու և այլ համապատասխան նշումներ:

### ՀԵՂԻՆԱԿԱԿԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարանների նպատակն է ներկայացնել տվյալ հեղինակի օգտագործած բառապաշարը, ցույց տալ նրա ընդհանրությունը և տարբերությունները ժամանակակից լեզվի բառային կազմի հետ, ինչպես և այն մասնավորը, որ պատկանում է հեղինակին:

Հայ իրականության մեջ համաբարբառի սկզբունքով կազմը-

վել են ինչպես հեղինակի առանձին գործերի (օր.՝ Ավ. Խաճակյանի «Արու-լալա-մահարի» պոեմի), այնպես էլ բոլոր գործերի (օր.՝ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի) բառարանները:

Հեղինակային բառարանը կազմվում է բացատրական բառարանների կազմության սկզբունքով: Նրա բառացանկում ամփոփվում են հեղինակի օգտագործած բոլոր բառերը, բացատրվում այդ բառերի նրա գործածած իմաստները, այդ իմաստների համար բերվում են համապատասխան բնագրային օրինակներ և նշվում այն էջերը, որոնցում հանդիպում է տվյալ բառը այդ իմաստով:

Լ. Պետրոսյանի «Հովն. Քումանյանի գեղարվեստական երկերի բառարանը» (Երևան, 1976): Բառարանն ընդգրկում է Հ. Քումանյանի գեղարվեստական ստեղծագործությունների ամբողջ բառապաշարը՝ մոտ 9 հազար բառ:

Բառարանում տրվում են այդ ստեղծագործություններում հանդիպող բառերի բոլոր իմաստներն ու իմաստային նրբերանգները՝ քերականական ու ոճական նշումներով ու բնութագրումներով: Իմաստները հաստատելու համար բերվում են բնագրային մի քանի ընտիր օրինակներ և բոլոր այն էջերը, ուր հանդիպում է տրվյալ բառը այդ իմաստով: Բառահոգվածի վերջում տրվում են այդ բառով սկսվող դարձվածքներն ու կալուն արտահայտությունները: Առանձին բառահոգված են կազմում բառի բարբառային ձևերը և ժամանակակից ուղղագրական կանոններից շեղվող հնչյունական տարբերակները, ինչպես նաև այն հարադրությունները, որոնք դիտվում են իբրև բառային ինքնուրույն միավորներ:

Նույն սկզբունքով է կազմված Ա. Պապոյանի «Պարույր Սևակի չափածոյի բառարանը», որի առաջին հատորը լույս է տեսել 1981 թ.:

### ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում ընդգրկվում են լեզվի զարգացման որևէ փուլի կամ բոլոր փուլերի բառային կազմի մեջ մտնող բառերի (հաճախ նաև դարձվածքային միավորների) հոմանիշները: Բառարանում որպես ինքնուրույն բառահոգվածներ հանդես են գալիս հոմանիշների շարքերը, որոնք կազմվում են իմաստների մոտություն կամ նույնության սկզբունքով՝ համախմբված հիմնաբառի շուրջը:

1) Հ. Գայլայանի «Բառարան-գանձարան հայոց լեզվի հոմանիշներու» աշխատությունը (Կահիրե, 1938 թ.), որ պարունակում է հիմնականում արևմտահայերենի 15 հազար հոմանիշներ:

2) Ա. Սուխայանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (Երևան, 1967 թ.):

Քառարանը պարունակում է 83 հազար հոմանիշ բառ և դարձվածքային միավորու Այս բառարանում առանձնացվում են հոմանշային կապերով իրար հետ առնչվող բառերն ու դարձվածաբանական միավորները, տարբերակվում՝ ըստ իմաստային նրբերանգային տարբերության և ոճական-կիրառական գործածության, տրվում են հոմանիշների արտահայտած հուշարտահայտչական գունավորման համապատասխան բնութագրումներ, նշվում՝ նրանց ոճական տարբեր կիրառությունները և պատկանելությունը քերականական կարգերին, լեզվի տարբեր շերտերին և գործածության ոլորտներին:

Քառարանը նորմատիվ բնույթ ունի: Բառապաշարի ընտրության, բառիմաստների տարբերակման ու դասակարգման, հոմանիշների քերականական, ոճական-կիրառական և այլ նշումների ու հանձնարարականների հիմքում ընկած են արդի հայերենի գործող նորմաները:

Բառերի և դարձվածաբանական միավորների ընդգրկման ծավալով, նրանց իմաստային տարբերակման, իմաստների մասնակի բացատրման, ինչպես նաև ոճական-կիրառական և այլ նշումների շնորհիվ այն կարող է նաև ուղղագրական և հատկապես բացատրական բառարանի դեր կատարել:

### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս կարգի բառարաններում առանձնացվում են այս կամ այն մասնագիտությանը վերաբերող տերմինները, տրվում են նրանց մեկնությունը կամ բացատրությունը, երբեմն բերվում համապատասխան օրինակներ կամ հանրագիտական տվյալներ:

Հ. Պետրոսյանի, Ս. Գալստյանի և Թ. Ղաբազյույանի «Լեզվաբանական բառարանը» (Երևան, 1975 թ.):

Բառացանկն ընդգրկում է հայ լեզվաբանական-քերականագիտական գրականության մեջ գործածված տերմինները՝ սկսած 5-րդ դարից մինչև նորագույն ժամանակները, ընդհանրապես ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ ճանաչում գտած տերմինաբանությունը, աշխարհի լեզուների, նրանց գրատեսակների անվանումները:

Բառահոգվածն ունի հետևյալ կառուցվածքը.

Գլխաբառին կից, անկյունավոր փակագծերում նշվում է անցյալի (5-ից մինչև 19-րդ դարի կեսերը) հայ լեզվաբանական-քերականագիտական գրականության մեջ հանդիպող տերմինի առաջին (ամենավաղ) գործածողի անունը, աստղանիշով տրվում է

գործածությունից դուրս եկած տերմինը, այնուհետև նշվում են նաև ուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարժեքները կամ թարգմանությունները, առանձին հնից եկող տերմինների համար նաև լատիներեն և հունարեն համազորները: Օտարազգի համարժեքներից հետո՝ հաջորդ տողում բերվում են բառարանում այդ գլխաբառին հղված բոլոր տերմինները՝ դրանց հայերեն հոմանիշները: Այնուհետև տրվում են գլխաբառի բացատրությունը, մեկնությունը կամ նկարագրությունը: Բուն լեզվաբանական տերմինը սահմանվում է, որը հաճախ հաստատվում է օրինակներով:

Լեզուների անվանումներին վերաբերող բառահոգվածներում բերվում է տվյալ լեզվի բնութագրությունը, նշվում խոսող ժողովրդի անունը, տվյալներ են բերվում այդ ժողովրդի տարածքի, խոսողների թվի, գրի, բարբառների և այլնի մասին: Բառահոգվածի վերջում կա տեղեկատու բաժին, որտեղ թվարկվում են տրվյալ գլխաբառին վերաբերող և բառարանում տեղ գտած բաղադրյալ (բառակապակցական) տերմինները:

Էդ. Զրբաշյանի և Հ. Մախաչյանի «Գրականագիտական բառարան» (Երևան, 1972 թ., երկրորդ հրատ. 1980 թ.): Բառացանկում տեղ են գտել գրականագիտությանը առնչվող ավելի քան 500 տերմին և հասկացություն, որոնք վերաբերվում են գրականության տեսությանը և գեղագիտությանը, մասնավորապես՝ գրական սեռերին, ժանրերին, ուղղություններին, հոսանքներին, գրական ստեղծագործության կառուցվածքին, սյուժեին, տաղաչափությանը, լեզվին և ոճին: Հայերենում զուգահեռաբար գործածվող սեփական և օտարազգի (միջազգային) գրականագիտական տերմինների հարցում հեղինակներն հետևյալ մոտեցումն են ցուցաբերել: Առաջնությունը հայկական տերմինին է տրվում այն դեպքում, եթե այն ճիշտ է արտահայտում տվյալ հասկացության իմաստը, մյուս դեպքում որպես գլխաբառ բերվում է լեզվում լայն գործածություն ունեցող փոխառյալ տերմինը, ինչպես նաև նրա ստուգաբանությունը: Որպես գլխաբառ ընդունված հիմնական տերմինից անմիջապես հետո տրվում է նրա սակավ գործածական նույնանիշը:

### ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այդ կարգի բառարանները ընդգրկում են տվյալ լեզվի արմատական բառերը, նշվում է նրանց ծագումը կամ կապը ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ:

Ստուգաբանական բառարանները լինում են երկու տիպի:

Առաջինը արմատական բառարանի տիպն է: Այն պարունակում է լեզվի բոլոր արմատական բառերը, անկախ այն բանից, թե դրանց ստուգաբանությունը հայտնի է, թե ոչ:

Մյուս տիպը ընդգրկում է միայն լեզվի այն բառարմատները, որոնց ստուգաբանությունը հայտնի է (օր.՝ Բուլազակի «Հունարենի ստուգաբանական բառարանը», Վալդեի «Լատիներենի ստուգաբանական բառարանը» և այլն):

Հ. Աճառյանի ստուգաբանական բառարանը այդ երկու տիպի բառարանների ամփոփումն է:

Հ. Աճառյանի «Հայերենի արմատական բառարանը» (1-ին հրատ. 7 հատոր, 6 հատորները ապակետիպ, Երևան, 1926 թ., 7-րդ հատորը տպագիր, 1935 թ., 2-րդ հրատ. 4 հատորով, Երևան, 1971—1980 թթ.): Բառարանն ընդգրկում է մոտ 11 հազար (10998) բառարմատ, որից 2221 արմատ անվավեր է համարվում. մնացած 8775 արմատից ստուգաբանվում է 5095-ը, որից 927-ը բնիկ (հնդեվրոպական), 4015-ը փոխառյալ, 155-ը բնածայնական, 3680-ը՝ դեռևս չստուգաբանված:

Բառանոթվածի կազմությունը: Բառահոդվածը կազմված է հինգ բաժիններից: Առաջին բաժնում գլխաբառից հետո տրվում են նրա հոլովման կամ խոնարհման ձևերը, բառարմատը ենթարկվում է քերականական բնութագրման: Բառարմատի քերականական մշակմանը հետևում է բառիմաստի կամ իմաստների մեկնությունը, որի շահանիշը գրաբարյան իմաստներն են: Այդ հատվածում հաջորդականորեն նշվում են բառիմաստի զարգացման փուլերը՝ հնագույն շրջանից մինչև մեր ժամանակները, գրաբարից մինչև ժամանակակից հայոց լեզվի շրջանը ներառյալ:

Գլխաբառի և նրա իմաստների համար այնուհետև բերվում են վկայություններ հայ մատենագիտությունից: Բնագրային այդ օրինակները երկու նպատակ են հետապնդում՝ որոշել բառարմատների գործածության ժամանակը և ճշտել նրանց իմաստներն ու իմաստային նրբերանգները: Արմատի վկայությունից հետո բերվում են տվյալ արմատից կազմված կարևոր բառերը, որի նպատակն է, նախ, ցույց տալ այդ բառարմատի կենսունակությունը հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում և նշել բառակազմության մեջ արմատի կրած հնչյունական փոփոխությունները: Այնուհետև բերվում են բառարմատի տարբեր գրությունները, ուղղագրական այն տարբերակները, որոնք որոշակի արժեք են ներկայացնում՝ հասկանալու արմատի հնչյունական փոփոխության պատճառները, հատկապես հայերենի բարբառների ուսումնասիրման համար:

Բառահոդվածի առաջին ածինը իրենից ներկայացնում է բառարմատի բառագիտական իմաստաբանական և բառակազմական բազմակողմանի ուսում. ասիրություն, հնչյունափոխական օրինակափոխություններով և հնչյունական տարբերակներով հանդերձ:

Երկրորդ բաժինը բառարանի բուն ստուգաբանական մասն է: Այս բաժնում բնիկ հայերեն բառերի դիմաց գրվում է բառի հնդեվրոպական մայր ձևը, այնուհետև՝ նրանից առաջացած համապատասխան ձևերը քույր լեզուներում: Հնդեվրոպական մայր լեզուների հետ հիշատակվում են նաև նրանցից ծագած մերձավոր ցեղակից լեզուները: Այս հատվածը փաստորեն ներկայացնում է հայերենի և հնդեվրոպական քույր լեզուների ընդհանուր ծագմամբ բառերի համեմատական բառացանկ: Հայերեն փոխառյալ արմատները ստուգաբանելիս նշվում է այն լեզուն, որից հայերենը փոխ է առել տվյալ բառը, բերվում է փոխատու լեզվով այդ բառի գրությունը, ինչպես նաև նրա իմաստը այդ լեզվում: Վերջում հիշատակվում է այդ բառի ստուգաբանությունն առաջին անգամ առաջարկած հեղինակի անունը և աղբյուրը: Բոլոր այն բառերը, որոնք բնիկ հայերեն չեն կամ չեն կապվում որևէ այլ լեզվի հետ և փոխատուություն չեն համարվում, այսինքն՝ գիտականորեն չի հաստատվում նրանց ծագումը, համարվում են չստուգաբանված բառեր:

Երրորդ բաժինը վերաբերում է չստուգաբանված կամ կասկածելի ստուգաբանություն ունեցող բառարմատներին, այն բառերին, որոնք կա՛մ բոլորովին չեն ստուգաբանվում, կա՛մ էլ եղած ստուգաբանությունները չեն բավարարում գիտական արդի պահանջներին, հետևաբար և ընդունելի չեն: Այստեղ տրվում է այս կարգի արմատների մասին եղած ստուգաբանության պատմությունը, բերվում են առաջարկվող բոլոր ստուգաբանությունները, դրանց հեղինակները, ինչպես նաև աղբյուրները: Այս բաժինը տեղեկատու-մատենագիտական աղբյուր է մասնագետների համար տվյալ արմատի ստուգաբանության պատմությանը ծանոթանալու և հետազայում հնարավոր այդ կարգի և նման սխալներից խուսափելու համար:

Չարժող բաժնում, որ անվանվում է գավառական, տրվում են բառի կամ բառարմատի համապատասխանությունները հայերեն բարբառներում: Հ. Աճառյանը բերում է գլխավորապես բարբառներում դրանց հնչյունական տարբերակները, ինչպես նաև իմաստային փոփոխություններն ու բառակազմական ձևափոխությունները: Բառարմատի վերոհիշյալ լեզվական իրողությունները դիտվում են հայերենի 30-ից ավելի բարբառներում, որոնք բա-

ուարանի կազմության ժամանակ հիմնականում իր իսկ հեղինակի շնորհիվ հայտնի էին հայագիտությանը: Վերջին՝ հինգերորդ բաժնով եզրափակվում է բառահոգվածը, որում ընկնում է հայերենի աղբյուրությունն ուրիշ լեզուների վրա: Ամփոփվում են այլ լեզուների՝ հայերենից կատարած փոխառությունները, որոնք առանձնապես արժեքավոր են այն առումով, որ այդ ուղղությամբ հայագիտության մեջ համեմատաբար քիչ աշխատանք է կատարված:

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» բառարմատների ընդգրկման ծավալով, նրանց հնչյունական, քերականական, իմաստաբանական, բառակազմական, ստուգաբանական, ստուգաբանության պատմության, բարբառադիտական մշակմամբ և հանրագիտական-մասնագիտական այլևայլ տվյալների հարբստությամբ նշանակալից երևույթ է ոչ միայն հայ, այլև համաշխարհային բառարանագրության պատմության մեջ:

### ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԿՈՍԱԿԱՆ ՔԱՌԱՐԱՆՆԵՐ

Ուղղագրական բառարաններում ընդգրկվում են տվյալ լեզվի կամ դժվար ուղղագրություն ունեցող բառերը, կամ ընդհանրապես լեզվի ամբողջ բառապաշարը: Բառարանի նպատակը լեզվի ուղղագրության, բառերի ճիշտ գրության ուսուցումն ու յուրացումն է:

Ուղղախոսական բառարաններում տրվում է բառացանկում ընդգրկված բառերի նորմավորված գրական արտասանությունը: Բառարանի նպատակը բառերի ճիշտ արտաբերության, գրական արտասանության ուսուցումն ու յուրացումն է:

Ուսումնական-կրթական, դպրոցական, հրատարակչական գործին նպաստելու և ընդհանրապես ժողովրդի գրագիտության մակարդակը բարձրացնելու նպատակով սովետական շրջանում լույս են տեսել հայերեն մի շարք ուղղագրական և ուղղախոսական բառարաններ:

1922 թ. հայերենի բարեփոխված ուղղագրության սկզբունքներով կազմվել և հրատարակվել է Ն. Ալլախվերդյանի «Նոր ուղղագրական բառարանը» (Երևան, 1930 թ.), որ պարունակում է մոտ 4500 բառ, համապատասխան ուղղագրական կանոններով և գրծվարհասկանալի բառերի մասնակի բացատրությամբ:

Ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի 1940 թ. ուղղագրության մասնակի բարեփոխման կապակցությամբ հրատապ է դառնում ուղղագրական նոր բառարանի ըստեղծումը:

1940 թ. Ա. Ղարիբյանի հեղինակությամբ լույս է տեսել «Ուղ-

ղագրական համառոտ բառարանը», որը պարունակում է մոտ 5 հազար բառ:

Հետագայում այս բառարանը, ընդարձակվելով, վերջին տասնամյակների ընթացքում պարբերաբար լույս է տեսել մի քանի հրատարակությամբ:

1956 թ. լույս տեսած Ա. Ղարիբյանի և Գ. Պարսիսի «Ռպրոցական ուղղագրական բառարանին» կցված է նաև ուղղախոսական բառացանկ (մոտ 600 բառ), որով փորձ է արվում ներկայացնելու նաև արդի հայերենի ուղղախոսության նորմաները: Հայերենի ուղղախոսության բնագավառում գիտական-տեսական աշխատությունների, այդ հարցերում միասնական սկզբունքների բացակայության պատճառով այդ փորձը 50-ական թվականներին ընդունելության շարժանացավ:

Վերջին հրատարակությամբ 1968 թ. լույս տեսած Ա. Ղարիբյանի և Գ. Շեկյանի «Ռպրոցական ուղղագրական բառարանը» պարունակում է մոտ 18 հազար բառ: Բառերի քանակը հիմնականում աճել է ի հաշիվ նեղ մասնագիտական, տեղիքաբանական և մասամբ էլ օտարազգի բառերի և, փաստորեն, չի արտահայտում դպրոցականի բառապաշարը:

Ուղղագրական հիշյալ բառարանները, անշուշտ, որոշ գործ կատարել են՝ նպաստելով կրթական-դպրոցական կարիքներին:

Հ. Բաբուկյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տեղիքաբանական բառարանը» (Երևան, 1973 թ.): Պարունակում է ժամանակակից հայ գրական լեզվի ափելի քան 152 հազար բառ և մասնագիտական բառերի որոշ մասը: Բառացանկը կազմված է հայոց լեզվի բացատրական, թարգմանական ու մասնագիտական տասնյակ բառարանների, ինչպես նաև գրականությունից ու մամուլից հավաքված բառերի հիման վրա: Բառարանը գրական հայերենի լայն գործածական բառերից բացի՝ պարունակում է նաև հնացած, հին և բարբառային որոշ թվով բառեր, ինչպես նաև մասնագիտական տեղիքաներ, որոնք հանդիպում են գեղարվեստական, գիտական և գիտատեխնիկական գրականության մեջ: Բառացանկում տեղ են գտել նաև լայն գործածություն ունեցող հապավումները:

Բառերը բերվում են մեկ ընդունված ուղղագրությամբ: Հագվագյուտ զեպերում թույլատրված են բառերի արտասանական, բառակազմական և բառային, ինչպես և գրությամբ արտահայտված տարբերակներ (մանուշակ-մանիշակ, եթիկամետապ-եթիկամետապ, կիսակի-կիսեփ, արշառս-արջոս, ֆարահեֆ-ֆահահեֆ): Ճշտված, կրճատված և հնարավորության սահմաններում միօրի-

նակացված են ուղղագրական տարբերակները, երկգրություն ունեցող բառերը:

Առաջին անգամ նորմավորման է ենթարկվել ժամանակակից հայերենի ուղղախոսությունը: Այդ հարցում հեղինակն առաջնորդվել է, նախ, արդի հայերենի ուղղախոսության արդեն կայունացած նորմաներով, ապա՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի բառերի արտասանության որոշ կանոնների կարգավորման վերաբերյալ որոշումներով: Որպես միատեսակ և կայուն շեշտադրություն ունեցող լեզու, բառարանում չի տրվում բառերի շեշտը, բացառությամբ ընդհանուր կանոնից շեղվող մի քանի բառերի (գո՛նե, մի՛թե, ո՛րեւէ, ես՛յնպես, մա՛նավանդ և այլն):

Բառերին տրվում են քերականական և ոճական համապատասխան նշումներ:

Բառարանը տալիս է հատկապես տերմինների գործածության ոլորտներին, բառերի՝ հայերենի դարգացման տարբեր դրսևորումներին, գործառական զանազան ոճերին, հուզարտահայտչական տարբեր գունավորման պատկանելու բառագործածական-կիրառական այլևայլ նշումներ ու բնութագրումներ:

2. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» ընդգրկված բառերի քանակով, գլխաբառի ուղղագրական, ուղղախոսական մշակվածությամբ, բառերին տրվող քերականական, ոճական, բառագործածական նշումներով, բնութագրումներով և հանձնարարականներով վստահելի ձեռնարկ է ոչ միայն ժամանակակից հայերենի ուղղագրությունն ու ուղղախոսությունը, այլև բառերի և տերմինների ոճական-կիրառական հարստությունը յուրացնելու համար:

**ՀԱԿԱԳԱՐՁ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ ԿԱՄ ՀԱՆԳԱՐԱՌԱՐԱՆՆԵՐ**

Այս կարգի բառարանների հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանցում չի ընդունված բառերի այբբենական սովորական դասավորությունը, բառերը ըստ այբուբենի դասավորվում են ոչ թե բառի առաջին հնչյունի համեմատ, ձախից աջ, այլ հակառակ ուղղությամբ, աջից ձախ, բառի վերջին հնչյունի համաձայն:

Նախկինում այս տիպի բառարաններ կազմվել են, ըստ երկվայթին, բանաստեղծներին օգնելու նպատակով բանաստեղծության համապատասխան հանգ ունեցող բառեր ընտրելու համար: Մեր ժամանակներում այդ բառարանների կազմելու նպատակն է

նպաստել էլեկտրոնային հաշվիչ մեքենաների միջոցով թարգմանություններ կատարելու գործին:

Հանգաբառարանները լեզվաբանական որոշակի արժեք են ներկայացնում՝ լեզվի բառային կազմի կառուցվածքային, բառակազմական, բառերի բաղադրիչների, հատկապես վերջածանցների բնության և ուսումնասիրության համար:

Հայ իրականության մեջ տպագրված նույնատիպ բառարաններից հիշատակության արժանի են՝ 1) Խ. Գալֆայանի «Յանգարան կամ բառագիրը յանգաց հայկազեան լեզուի» (1862 թ., Քեդոսիա) աշխատությունը, որ պարունակում է մոտ 12 հազար բառ:

2) Պ. Խ. Թեբգյանի «Յանգարան նոյնաձայն և նոյնայնգ բառերու» (Պոլիս, 1905 թ.), որը ընդգրկում է հիմնականում արևմրտահայերեն նման և նույն հանգ ունեցող բառերը:

3) Խ. Արանալյանի «Հանգարանը» (Բեյրութ, 1961 թ.): Արդի գիտական սկզբունքներով է կազմված Հայկ. ՍՍՀ ԳԱ և պետհամալսարանի հաշվողական կենտրոնի «Հայոց լեզվի ճանգարառառնը» (Երևան, 1976 թ.):

Բառարանը պարունակում է մոտ 42 հազար բառ: Բառարանի վերջում զետեղված են անվանական և բայական թեքումների երկու հարացույցներ: Հանգաբառարանը կազմված է «Հայ-ռուսերեն բառարանի» (1960 թ.) հիման վրա, որի բառապաշարը ըստ հեղինակների վերանայվել է հիշյալ բառարանի որոշ բառերը դուրս թողնելու և հայերեն մյուս բառարաններից և այլ աղբյուրներից նորերը մուծելու շնորհիվ:

**ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ**

Այս կարգի բառարաններն ընդգրկում են երկու կամ ավելի լեզուների բառերի կամ դարձվածքների թարգմանական համապատասխանությունները, իմաստային համանշանակները, ըստ լեզուների ընդգրկման այդ բառարանները լինում են՝ երկլեզվյան, եռլեզվյան և այլն:

Թարգմանական բառարանները բաժանվում են երկու խմբի՝ բարգմանական ընդհանուր բառաբաններ և բարգմանական տերմինաբանական բառաբաններ:

Թարգմանական ընդհանուր բառաբաններ: Այս կարգի բառարաններում ամփոփվում են երկու կամ ավելի լեզուների բառային կազմի ընդհանուր գործածական բառերը (նաև դարձվածքները) և այդ լեզուներում նրանց իմաստային համապատասխանություններ:

ըր, մեկ լեզվի բառերի և դարձվածքների մեկ կամ մի քանի լեզուների թարգմանական համադրանքը:

Տարբեր ժամանակներում կազմվել են հայերենի եվրոպական կամ ասիական լեզուներին առնչվող մի շարք թարգմանական մեծ ու փոքր բառարաններ: Դրանցից հիշատակության արժանի են ռուսերենին, ֆրանսերենին, անգլերենին, գերմաներենին առնչվող բառարանները:

Ռուս-հայերեն և հայ-ռուսերեն ընդհանուր բառարաններից արժեքավոր են.

1) Հ. Դադրաշյանի «Լիակատար ռուս-հայերեն բառարանը» (Քիֆլիս, 1908 թ.), որ պարունակում է մոտ 125 հազար բառ:

2) Նույնի «Լիակատար հայ-ռուսերեն բառարանը» (Քիֆլիս, 1911 թ.), որ ընդգրկում է մոտ 70 հազար բառ, ինչպես նաև հազարավոր դարձվածքներ, ոճեր ու կալուն կապակցություններ: Հայերենի բառապաշարի ընդգրկման տեսակետից այն հայերենից մեկ այլ լեզվի ընդհանուր-թարգմանական ընդարձակ բառարաններից է:

3) Ք. Ավդալբեկյանի, Պ. Սոսնիկյանի, Ե. Տեր-Մինասյանի, Վ. Փոքեյանի երկհատոր «Ռուս-հայերեն նոր բառարանը» (1933—35 թթ.) պարունակում է մոտ 80 հազար բառ ու արտահայտություն: Բառերի այդ քանակությունը հիմնականում արտացոլում է այդ շրջանում ռուսերենի ընդհանուր գործածական բառապաշարը և իր հիմնական գծերով համընկնում է Գ. Ուշակովի 1935—1940 թթ. լույս տեսած ռուսաց լեզվի բառահատոր բացատրական բառարանի բառացանկին: Հեղինակները հնարավորության սահմաններում խուսափել են թարգմանության նկարագրական կամ բացատրական եղանակից և հետևել են ռուսերեն բառի դիմաց հայերեն բառ տալու սկզբունքին: Բառարանի հայկական բառացանկում զգալի թիվ են կազմում նորարանությունները:

4) Ե. Տեր-Մինասյանի, Վ. Փոքեյանի, Հ. Կուսիկյանի, Հ. Համբարձումյանի, Մ. Գեորգյանի բառահատոր «Ռուս-հայերեն բառարանը» (Երևան, 1954—1958 թթ.):

Բառարանը պարունակում է մոտ 100 հազար բառահոդված և ի տարբերություն սովետական շրջանում լույս տեսած նույնատիպ նախորդ բառարանների, ամենածավալուն է պարունակված բառերի ու դարձվածաբանական միավորների քանակով, իմաստների և իմաստային նրբերանգների բազմազանությամբ:

Վիճելի պետք է համարել այդ կարգի թարգմանական-ընդհանուր բառարանում թարգմանվող բառի իմաստը կամ իմաստ-

ները հաստատող բնագրային օրինակների և նրանց հայերեն թարգմանության առկայությունը:

5) Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը» (Երևան, 1968 թ.) պարունակում է մոտ 100 հազար բառ ու դարձվածաբանական միավոր: Ի տարբերություն քառահատոր «Ռուս-հայերեն բառարանի», հեղինակը ամբողջովին հրաժարվել է բառիմաստներից և արժող բնագրային օրինակներից և նրանց հայերեն թարգմանություններից. նախորդի համեմատությամբ, որոշ շափով կրճատվել է նաև բառարանի ծավալը:

6) «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանը» (1975 թ.) պարունակում է ռուսաց լեզվի շուրջ 5600 դարձվածք և 1600 տարբերակ ու փոփոխակ: Այն ռուսերենից ՍՍՀՄ մեկ այլ ազգային լեզվի դարձվածաբանական-թարգմանական ընդարձակ բառարանի առաջին փորձն է: Նրանում ամփոփված է ռուսաց և հայոց լեզուների դարձվածքային հարստությունը:

Եվրոպական լեզուներին առնչվող թարգմանական ընդհանուր բառարաններից հիշատակության արժանի են 1) Հ. Չազմազեյանի «Րեզարձակ բառարան անգլերեն-հայերեն» (Բոստոն, 1922 թ.), որ պարունակում է 125 հազար բառ և դարձվածքային միավոր: 2) Մ. Գուլումեյանի «Րեզարձակ բառարան հայերեն-անգլերեն» (Կահիրե, 1950 թ.): 3) Ն. Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերեն լեզուէ ի հայերեն» (Պոլիս, 1884 թ.): 4) Գ. Լուսինյանի «Նոր բառգիրք ֆրանսահայ» (1-ին հատ., Փարիզ, 1894—1903 թթ., 2-րդ հատ., Պոլիս, 1910 թ.): 5) Ա. Կոչյավ(յանի)ի «Բառգիրք գերմաներեն-հայերեն» (Վենետիկ, 1890): 6) Գ. Անդրեսայանի «Գերմաներեն-հայերեն բառարանը» (Երևան, 1976 թ.), որ պարունակում է 40 հազար բառ և դարձվածքային միավոր:

Թարգմանական-տերմինաբանական բառարաններ: Այս կարգի բառարաններն ընդգրկում են մեկ լեզվի, մեկ կամ մի քանի բնագավառների տերմինները և նրանց թարգմանությունները՝ համանշանակները մեկ կամ մի քանի լեզուներով:

Թարգմանական-տերմինաբանական բառարանի օրինակ կարող է ծառայել Մ. Գուլումեյ «Բառգիրք արուեստից, գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց» աշխատությունը (1-ին հատ. 1891 թ., 2-րդ հ., 1892 թ., Վենետիկ): Բառարանը բազկացած է երեք հատորից, ամփոփված երկու մեծագիր գրքերի մեջ: Առաջին և երկրորդ հատորներում տրված է արվեստի, գիտության, տեխնիկայի և մշակույթի զանազան բնագավառներին վերաբերող ֆրանսերեն (կամ լատիներեն) տերմինը, այնուհետև նրա հայերեն համազորը, որին հետևում է տվյալ տերմինի բացատրությունը, իսկ

որոշ գեպքերում նկարը կամ պատկերը Աշխատության երրորդ հատորը արվեստի՝ գիտական և տեխնիկական տերմինների հայ-ֆրանսերեն բառարանն է:

Ժամանակակից հայ հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինաբանության մշակման, կարգավորման և նոր էլուզերի ստեղծման գործում վճռական դեր են խաղացել սովետական շրջանի հայերեն տերմինաբանական-մասնագիտական տասնյակ բառարանները, որոնք բացառապես առնչվում են ուսերենին:

Հայ գիտական տերմինաբանության մշակման և կարգավորման գործում սկզբունքային նշանակություն է ունեցել Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը» (Երևան, 1925 թ.) և Մ. Աբեղյանը հսկայական աշխատանք է կատարել ոչ միայն հայ ռազմական տերմինաբանության ստեղծման, այլև բառարանի ուսսական բառացանկի ստեղծման ուղղությամբ:

Հայերեն տնտեսագիտական տերմինաբանության բնագավառում ուշագրավ է Թ. Ավզալբեգյանի «Տնտեսագիտական տերմինների ուս-հայերեն բառարանը» (Երևան, 1964 թ.), որ պարունակում է տնտեսագիտությանը և հարակից գիտություններին վերաբերող մոտ 35 հազար տերմին և տերմինային կապակցություն:

Հայերեն տեխնիկական տերմիններին վերաբերող ընդարձակ գործ է «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» (Երևան, 1957 թ.), որ պարունակում է գիտության և տեխնիկայի զանազան բնագավառներին վերաբերող մոտ 25 հազար բառահոդված:

Առանձնապես հարուստ ավանդույթներ ունի հայ բուսաբանական և բժշկական տերմինաբանությունը: Հիշատակության արժանի են՝ Ալիշանի, Արթիկյանի, Բեդլյանի բուսաբանական և Ռեստեհի, Տաղավարյանի, Տիգրանյանի բժշկական բառարանները:

Բժշկական մի շարք բառարանների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Վ. Արժունու «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական տերմինների բառարանը» (Երևան, 1-ին հրատ. 1924 թ., 2-րդ հրատ. 1956 թ.), որն ընդգրկում է մոտ 20 հազար բժշկական տերմին և տերմինային կապակցություն:

Կազմության սկզբունքներով նախորդից որոշ չափով տարբերվում է Մ. Աբեղյանի, Լ. Հովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի «Լատիներեն-ռուս-հայերեն բժշկական բառարանը» (Երևան, 1957 թ.), որ պարունակում է մոտ 25 հազար տերմին: Այն բնույթով տերմինաբանական բառարան է և տերմինի որևէ բացատրություն չի տալիս: Բառահոդվածում առաջին տեղում գրվում է լատիներենը, ապա՝ ուսերենը և վերջում՝ հայերեն համազորը:

ԲՈՎ Ա Ն Կ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն	3
Հնչյունաբանություն +	24
Արտասանվածքի վերլուծությունը	26
Վանկը հայերենում +	33
Վանկատման կանոնները	34
Հայերենի շեշտը +	35
Հնչյուններ +	38
Ձայնավորներ +	43
Բաղաձայններ +	47
Նրկարբառներ և երկհնչյուններ +	62
Հնչյունափոխություն	63
Ուղղագրություն	72
Ձայնավորների գրական արտասանությունը	74
Բաղաձայնների գրական արտասանությունը	78
Գրաբանություն	85
Հայերենի գրատեսակները +	89
Ուղղագրություն	91
Ժամանակակից հայերենի ուղղագրության կանոնները	92
Մեծատառերի գործածությունը	100
Բառերի գծիկով և անշատ գրություն +	102
Տողազարժի կանոնները	105
Ձայնընտանիքի մեջ առնվող անունների հոլովական վերջավորությունների և հոգերի գրությունը	107
Ժամանակակից հայերենի ուղղագրության բարեփոխման վերաբերյալ որոշումները	109
Բառագիտություն	113
+ Բառի ուսմունքը	115
Բառի գործառույթները	124
Բառի տարբերակները +	125
Լիիմաստ բառեր և սպասարկու բառեր	126
Բնածայնական բառեր	126
Բառի ներքին ձև	127
Իմաստաբանություն	128
Բառի բառային իմաստ. նրա տիպերն ու տեսակները	129
Բառիմաստի տեսակները	132
Բառի մեկիմաստությունն ու բազմիմաստությունը	136
Հայերենի բառային հոմանիշները	151
Հականիշները ժամանակակից հայերենում	173



Փամանակակից հայոց լեզվի բառապաշարը	176
Փամանակակից հայոց լեզվի բառապաշարը բառ հայերենի զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի	183
Փամանակակից հայոց լեզվի բառապաշարը բառ ակտիվ և պասիվ կազմի	200
Փամանակակից հայոց լեզվի նորաբանությունները	201
Հնաբանությունները ժամանակակից հայերենում	206
Փամանակակից հայոց լեզվի բառապաշարը իմաստային տարբերակման, սեռական կիրառության և հուզատրամադայության գունավորման տեսակետից	209
Փամանակակից հայոց լեզվի բառապաշարը բառ գործածության տարբեր սյուրանների	215
Ջրադուրերային և տերմինաբանական բառապաշար	215
Փամանակակից հայոց լեզվի բառապաշարը ըստ ծագման	231
Հնագույն ու հին փոխառությունները ժամանակակից հայերենում	246
Նոր և նորագույն փոխառությունները ժամանակակից հայերենում	260
Իմաստային և կառուցվածքային փոխառությունները	265
Փամանակակից հայոց լեզվի բառապաշարի զարգացումը սովետական հասարակարգում	268
Բառակազմություն	277
Ձևայիններ	279
Բառի կառուցը, նրա ձևային կազմը	282
Բառի բառակազմական վերլուծությունը	284
Բառի կառուցվածքային-ձևային բանաձևը	284
Բառի ստուգաբանական վերլուծությունը	286
Բառակազմությունն իբրև լեզվի բառապաշարի լրացման հիմնական աղբյուր	287
Ձայնգարձը և նոր բառերի ստեղծումը	288
Աճականը հայերենում	290
Բառերի տեսակներն ըստ կազմության	291
Բարդություն	292
Վերլուծական բարդություններ	292
Համադրական բարդություններ	303
1. Կցական բարդություն	303
2. Իսկական բարդություն	309
Երեք և ավելի բաղադրիչներով կազմվող բարդություններ: Հարաբարդ կամ բազմաբարդ բառեր	317
Ածանցում: Ածանցավոր բաղադրություններ	318
Ածանցների իմաստաբանական դասակարգումը	319
Ածանցների ծագումը	321
Փոխառյալ ածանցներ	324
Ածանցների դասակարգումը ըստ բառակազմական գործունեության	325
Կենսունակ (արտադրողական) ածանցներ	325
Անկենսունակ (անարտադրողական) ածանցներ	326
Ածանցների ձևաբանական դասակարգումը	326
Ածանցների դասակարգումը ըստ դիրքի	330
Հապավական բաղադրություններ	363
Դարձվածաբանություն	367
Դարձվածքների դասակարգումը ըստ իմաստային միաձուլության աստիճանի	374

Դարձվածքային տարբերակներ և հոմանիշներ	332
Դարձվածքային համանուններ	392
Դարձվածքային հակահիշներ	394
Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների դարձվածքներ	395
Բառաբանագրություն	397
Բառաբանների տիպերը	401
Հանրագիտական բառարաններ	401
Հայերեն հանրագիտական բառարաններ	401
Հայկական սովետական հանրագիտարան	402
Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը»	403
Կենսագրական բառարաններ	406
Տեղանունների և աշխարհագրական անունների բառարաններ	406
Բանասիրական (կամ լեզվաբանական) բառարաններ	408
Հայերեն հետախոյ բառարաններ	409
Հայ նոր բառարանագրություն	409
Միալեզվյան բառարաններ	410
Գրաբարի բացատրական բառարաններ	410
Միխիթար Սեբաստացու բառարանը	411
Նոր հայկազյան բառարանը	412
Աշխարհաբար գրական լեզվի բառարաններ	411
Ս. Գրամաճյանի բառարանը	414
Ստ. Մալխասյանցի բառարանը	415
«Փամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»	417
Էդ. Աղաջանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»	418
Գավառական (բարբառային) բառարաններ	419
Օտարազգի բառերի բառարաններ	422
Գարձվածաբանական բառարաններ	423
Հեղինակային բառարաններ	424
Հոմանիշներ բառարաններ	425
Մասնագիտական բառարաններ	426
Ստուգաբանական բառարաններ	427
Ուղղագրական և ուղղախոսական բառարաններ	430
Հակադարձ բառարաններ կամ հանդիմանականներ	432
Քարգմանական բառարաններ	433

ԱՇՈՏ  
ՄՈՒՐԱԿԻ  
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Հրատարակության է  
ներկայացրել  
Համալսարանի  
հայոց լեզվի  
ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝  
Գ. Հ. Աղամյան

Գեղարվեստական խմբագիր՝  
Ն. Ա. Քալմասյան

Տեխնիկական խմբագիր՝  
Յ. Գ. Տաևոյան

Վերստուգող սրբագրիչ՝  
Մ. Գ. Յավոյան

ԻԲ 374:

ՎՖ 06754, Պատվիր 1170, Տպարանակ 5000, Հանձնված է շարվածքի 16.11.1981 թ.: Ստորագրված է տպագրության 31.03.1982 թ.: Քուլթ № 1, լուսնը՝ 60x90<sup>1</sup>/<sub>16</sub>: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»:

Հրատարակչական 24,2 մամուլ: Տպագրական 28 մամուլ: Գինը՝ 95 կոպ.:

Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, Մոսկվայի փ. № 1:

Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի Համալսարանի տպարան, Երևան, Արտվյան փ. № 52:

Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.